ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Իրավագիտության ֆակուլտետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Ուսումնական ձեռնարկ

Ընդհանուր խմբագրությամբ՝

իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գ.Դանիելյանի

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ – 2012

ՀՏԴ 342.5 (479.25)
ԳՄԴ 67.99 (2Հ) 1

Երաշխավորված է տպագրության Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից

Ուսումնական ձեռնարկի հեղինակներ՝

Այվազյան Ն.Ա., իրավ. գիտ. դոկ., պրոֆ. գլխ. 9
Դանիելյան Գ.Բ., իրավ. գիտ. դոկ., պրոֆ. Նախաբան, գլխ. 13, 14, 15, 16, 18, 19, 20, 25
Եղյան Ռ.Հ., իրավ. գիտ. թեկ., դոց. գլխ. 1, 2, 3, 4, 5, 6, 7, 10, 11
Մուրադյան Մ.Վ., իրավ. գիտ. թեկ., դոց. գլխ. 8, 21 § 1, 5
Մուղնեցյան Գ.Ս., իրավ. գիտ. թեկ. գլխ. 17
Շաթիրյան Է.Է, իրավ. գիտ. թեկ., դոց. գլխ. 12, 21 § 2, 3, 4, 6, գլխ. 24
Ռաֆաելյան Վ.Վ., իրավ. գիտ. թեկ. գլխ. 22, 23

Հ 247 Հայաստանի Հանրապետության վարչական իրավունք: Ուսումնական ձեռնարկ / ընդհանուր խմբագրությամբ՝ Գ.Դանիելյանի. - Երևանի պետ. համալս. - ԵՊՀ. հրատ., 2012, 704 էջ:

Ուսումնական ձեռնարկը նվիրված է Հայաստանի Հանրապետության վարչական իրավունքի դասընթացի ծրագրային հարցերին, այն համարժեքորեն և անհրաժեշտ գիտագործնական խորությամբ լուսաբանում է իրավունքի նշված ճյուղի առանցքային ինստիտուտները, դրանց իրավական հիմքերն ու իրավակիրառ փորձը:

Գործնականում վարչական իրավունքը կիրառական ամենալայն շրջանակներ ունեցող և մեծաթիվ մարդկանց համար կենսական նշանակություն ունեցող իրավունքներին ու ազատություններին առնչվող իրավունքի ճյուղ է: Պետական իշխանության իրականացման ցանկացած ոլորտում վարչարարություն իրականացնելու իրավասությամբ օժտված յուրաքանչյուր հանրային ծառայող առնչվում է վարչական իրավունքի այս կամ այն ինստիտուտի կիրառման բարդությունների հետ, ինչը հաղթահարելու և արդյունավետ գործելու գրավականը իրավունքի այդ ճյուղի պատշաճ իմացությունն է:

Նախատեսված է իրավագիտության բուհերի և ֆակուլտետների ուսանողների, ասպիրանտների, դասախոսների, ինչպես նաև պետական կառավարման ոլորտի պաշտոնյաների և մասնագետների համար:

ՀՏԴ 342.5 (479.25)
ԳՄԴ 67.99 (2Հ) 1

Ուսումնական ձեռնարկը հրատարակվում է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի աջակցությամբ: Ուսումնական ձեռնարկի մեջ ամփոփված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները կարող են չհամընկնել ԵԱՀԿ-ի կամ ԵԱՀԿ երևանյան գրասենյակի տեսակետներին:

© Հեղինակային խումբ, 2012 թ.
ISBN 978-92-9235-852-5
© ԵԱՀԿ երևանյան գրասենյակ, 2012 թ.
ISBN 978-5-8084-1636-9
© ԵՊՀ հրատ., 2012 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....9

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԸ:
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

ԳԼՈՒԽ 1. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ 12
§1. Կառավարման հասկացությունը և բովանդակությունը 12
§2. Սոցիալական կառավարում 16
§3. Պետական կառավարում 22
§4. Գործադիր իշխանության հասկացությունը.....27
§5. Գործադիր իշխանության և պետական կառավարման փոխհարաբերությունը 35
ԳԼՈՒԽ 2. ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ԱՌԱՐԿԱՆ, ՄԵԹՈԴԸ ԵՎ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ.....44
§1. Վարչական իրավունքի հասկացությունը և տեղը ՀՀ իրավունքի համակարգում.....44
§2. Վարչական իրավունքի առարկան.....54
§3. Վարչական իրավունքի մեթոդը.....58
§4. Վարչական իրավունքի սուբյեկտները 65
§5. Վարչական իրավունքի գիտությունը.....70
ԳԼՈՒԽ 3. ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՆՈՐՄԵՐԸ ԵՎ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ.....83
§1. Վարչաիրավական նորմերի հասկացությունը և բովանդակությունը 83
§2. Վարչաիրավական նորմի տեսակները.....87
§3. Վարչական իրավունքի աղբյուրները 94
§4. Վարչական իրավունքի համակարգը.....98
ԳԼՈՒԽ 4. ՎԱՐՉԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 104
§1. Վարչաիրավական հարաբերությունների հասկացությունը և առանձնահատկությունները.....104
§2. Վարչաիրավական հարաբերությունների տեսակները 113
§3. Վարչաիրավական հարաբերությունների կառուցվածքը.....120
§4. Իրավաբանական փաստերը վարչական իրավունքում.....123

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ, ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՉԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ...127

§1. Ֆիզիկական անձանց վարչաիրավական կարգավիճակի հասկացությունը և բովանդակությունը 127

§2. ՀՀ քաղաքացիների հիմնական վարչաիրավական իրավունքներն ու պարտականությունները 139

§3. Երկքաղաքացիների վարչաիրավական կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում 151

§4. ՀՀ քաղաքացիների իրավունքների վարչաիրավական երաշխիքները 154

§5. Օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց վարչաիրավական կարգավիճակը 161

ԳԼՈՒԽ 6. ՀԱՆՐԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ 167

§1. Հանրային վարչարարություն իրականացնող մարմինների ... 167
հասկացությունը և տեսակները 167

§2. Գործադիր իշխանության մարմինները, դրանց տեսակները և վարչաիրավական կարգավիճակը 174

§3. Հանրապետության Նախագահի լիազորությունները գործադիր իշխանության բնագավառում 182

§4. Հայաստանի Հանրապետության կառավարությունը..... 187

§5. Գործադիր իշխանության հանրապետական մարմինները 202

§6. Տարածքային պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները 211

§7. Հանրային վարչարարություն իրականացնող մյուս մարմինները 224

ԳԼՈՒԽ 7. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐ 231

§1. Հանրային ծառայության հասկացությունը, կառուցվածքը և տեսակները 231

§2. Հանրային ծառայողների վարչաիրավական կարգավիճակը և դրա իրավական հիմքերը 237

§3. Հանրային ծառայության հիմնական սկզբունքները 249

§4. Հանրային ծառայության պաշտոնի հասկացությունը 257

§5. Պետական ծառայողներ հասկացությունը, տեսակները և համակարգը..... 264

§6. Հանրային ծառայության անցնելու կարգը, հանրային ծառայության ընթացքի վարչաիրավական կարգավորումը 269
ԳԼՈՒԽ 8. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ 281
§1. Կազմակերպությունների հասկացությունը և տեսակները 281
§2. Կազմակերպությունների պետական գրանցումը: Առանձին կազմակերպությունների գրանցման առանձնահատկությունները285
§3. Տնտեսական կազմակերպությունների գործունեության առանձին տեսակների լիցենզավորման վարչաիրավական կարգավորումը 290
ԳԼՈՒԽ 9. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՈՒՍԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.....297
§1. Հասարակական միավորումների վարչաիրավական կարգավիճակը 297
§2. Կուսակցությունների վարչաիրավական կարգավիճակը 304
§3. Կրոնական կազմակերպությունների վարչաիրավական կարգավիճակի առանձնահատկությունները.....311

ԲԱԺԻՆ ԵՐՐՈՐԴ
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՁԵՎԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ: ՀԱՏՈՒԿ ՎԱՐՉԱԻՐԱՎԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 10. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՁԵՎԵՐԸ 316
§1. Պետական կառավարման ձևի հասկացությունը.....316
§2. Պետական կառավարման ձևերի տեսակները 320
ԳԼՈՒԽ 11. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ 325
§1. Պետական կառավարման մեթոդի հասկացությունը 325
§2. Պետական կառավարման մեթոդների տեսակները 328
§3. Վարչական հարկադրանքի էությունը, հիմքերը և տեսակները334
ԳԼՈՒԽ 12. ՀԱՏՈՒԿ ՎԱՐՉԱԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԺԻՄՆԵՐ 343
§1. Հատուկ վարչաիրավական ռեժիմների հասկացությունը, իրավական հիմքերը և տեսակները.....343
§2. Արտակարգ դրության պետական կառավարման վարչաիրավական կարգավորման առանձնահատկությունները .347
§3. Ռազմական դրության պետական կառավարման վարչաիրավական կարգավորման առանձնահատկությունները .354

ԲԱԺԻՆ ՉՈՐՐՈՐԴ
ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 13. ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ 361

§1. Վարչական վարույթի հասկացությունը և կիրառման շրջանակները 361

§2. Վարչարարության հասկացությունը և փոխհարաբերությունը վարչական վարույթի հետ 365

§3. Վարչական վարույթի և վարչարարության հիմնարար սկզբունքները.... 367

§4. Գործերի ենթակայությունը, վարչական մարմինների փոխօգնությունը.... 377

ԳԼՈՒԽ 14. ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ 383

§1. Վարչական վարույթի և վարչարարության սահմանադրական հիմնադրույթները 383

§2. Վարչական վարույթի և վարչարարության օրենսդրական հիմքերը 387

ԳԼՈՒԽ 15. ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ....391

§1. Վարչական վարույթի փուլերը.... 391

§2. Վարչական վարույթի մասնակիցները և այլ անձինք, ներկայացուցչությունը վարչական վարույթում 403

§3. Վարչական մարմնի պաշտոնատար անձի կողմից գործը քննարկելու և լուծելու անհնարինությունը, բացարկ և ինքնաբացարկ հայտնելու հիմքերը և կարգը.... 406

§4. Վարչական վարույթի լեզուն 410

§5. Վարչական վարույթի վերաբերյալ գործերը վարելը և հաշվառելը, վարչական վարույթում արձանագրություն կազմելը 412

ԳԼՈՒԽ 16. ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԸ, ԴՐԱ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՁԵՎԵՐԸ: ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ....416

§1. Վարչական ակտի հասկացությունը և տեսակները.... 416

§2. Վարչական ակտի ձևերը.... 418

§3. Գրավոր վարչական ակտին ներկայացվող պահանջները, վարչական ակտի որոշակիությունը և հիմնավորումը 419

§4. Վարչական ակտ ընդունելը, դրա մասին իրազեկելը, վարչական ակտն ուժի մեջ մտնելը 422

§5. Առ ոչինչ վարչական ակտը, վարչական ակտն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու հիմքերը, կարգը և հետևանքները 426

§6. Բողոքարկման վարույթը 433
§7. Վարչական ակտի հարկադիր կատարումը և դրամական պահանջները կատարելը 440
ԳԼՈՒԽ 17. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՄԱՐ 444
§1. Վարչարարությամբ պատճառված վնասի համար պատասխանատվություն կրողը, պատասխանատվության հիմքերը և կարգը 444
§2. վնասի հատուցման եղանակները և չափերը 447
ԳԼՈՒԽ 18. ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ 457
§1. Վարչական պատասխանատվության հասկացությունը և իրավական հատկանիշները 457
§2. Վարչական պատասխանատվության սկզբունքները 464
§3. Վարչական իրավախախտում (զանցանք) 469
§4. Վարչական տույժի հասկացությունը, տեսակները և նշանակման կանոնները 475
ԳԼՈՒԽ 19. ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐՈՎ ՎԱՐՈՒՅԹԸ 487
§1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարույթի հասկացությունը և իրավական հիմքերը 487
§2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարույթի մասնակիցները 494
§3. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննությունը, որոշում ընդունելը, այն բողոքարկելը և կատարելը 499
ԳԼՈՒԽ 20. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ 512
§1. Պետական կառավարման ոլորտում կարգապահական վարույթի առանձնահատկությունները և իրավական հիմքերը 512
§2. Կարգապահական խախտում (զանցանք) 517
§3. Կարգապահական տույժի հասկացությունը և տեսակները 520

ԲԱԺԻՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՎԱՐՉԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

ԳԼՈՒԽ 21. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ 523
§1. Տնտեսության պետական կառավարումը 523
§2. Ֆինանսների պետական կառավարումը 540
§3. Գյուղատնտեսության պետական կառավարումը 550

§ 4.Տրանսպորտի և կապի պետական կառավարումը..... 554
§5. Քաղաքաշինության պետական կառավարումը..... 560
§6. Պետական գույքի կառավարումը..... 565
ԳԼՈՒԽ 22. ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ.....569
§1. Բնապահպանության պետական կառավարումը 569
§2. Կրթության և գիտության ոլորտների պետական կառավարումը576
§3. Մշակույթի պետական կառավարումը 581
§4. Սպորտի և երիտասարդության պետական կառավարումը 584
§5. Սոցիալական ապահովության պետական կառավարումը..... 587
§6. Առողջապահության պետական կառավարումը 590
ԳԼՈՒԽ 23. ՎԱՐՉԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ.....594
§1. Պաշտպանության պետական կառավարումը 594
§2. Ազգային անվտանգության պետական կառավարումը 602
§3. Ոստիկանության պետական կառավարումը..... 609
§4. Արդարադատության պետական կառավարումը 616
§5. Արտաքին գործերի պետական կառավարումը: Սփյուռքի գործերով պետական կառավարումը 620
ԳԼՈՒԽ 24. ՄԻՋՃՅՈՒՂԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ.....635
§1. Հանրային ծառայությունների պետական կառավարումը..... 635
§2. Տնտեսական մրցակցության պետական կառավարումը 640
§3. Անշարժ գույքի կադաստրի պետական կառավարումը 645
§4. Ազգային վիճակագրության պետական կառավարումը..... 650
§5. Պետական եկամուտների կառավարումը..... 655
§6. Տարածքային պետական կառավարումը 660

ԲԱԺԻՆ ՎԵՑԵՐՈՐԴ
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

ԳԼՈՒԽ 25. ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄԱԻՐԱՎԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ 666
§1. Վարչական իրավունքի ծագման ու ձևավորման պատմաիրավական նախադրյալները..... 666
§2. Արտասահմանյան երկրների վարչական իրավունքի հիմնական համակարգերը 671

ՆԱԽԱԲԱՆ

Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետն առաջին անգամ ձեռնամուխ է եղել Հայաստանի Հանրապետության վարչական իրավունքի դասընթացին նվիրված ամբողջական ուսումնական ձեռնարկ պատրաստելուն, որի հրատարակմանը ԵԱՀԿ երևանյան գրասենյակի կողմից աջակցելու համար ձեռնարկի հեղինակները խորին շնորհակալություն են հայտնում: Այսպիսով, իրավագիտության ֆակուլտետում ձևավորված բարի ավանդույթներին համահունչ փորձ է արվել մայրենի լեզվով և հիմնականում հայրենական պետահիրավական փորձի հետազոտության արդյունքներով հրատարակել ուսումնական նյութ, որը հնարավորություն է տալիս լիարժեք պատկերացում կազմելու իրավունքի առաջատար ճյուղերից մեկի՝ վարչական իրավունքի և դրան առնչվող բոլոր առանցքային իրավական հարցադրումների վերաբերյալ:

Հայրենական իրավունքի համակարգը թևակոխել է իրավաքաղաքական զարգացումների էությամբ միանգամայն նոր փուլ, որը բնորոշվում է որպես ինքնիշխան պետությանը հատուկ օրենսդրություն և ըստ այդմ էլ՝ իրավակիրառ փորձ ձևավորելու հավակնոտ նախաձեռնությամբ: Պետական անկախության ձեռքբերմամբ մեր երկրում հռչակվեց արդի միջազգային չափանիշներին համապատասխան պետականություն կառուցելու և բացառապես ժողովրդավարության ու համամարդկային արժեքներով թելադրված քաղաքակրթության սկզբունքներին համահունչ վարչարարություն իրականացնելու պետական քաղաքականություն:

Անխուսափելիորեն այդ հիրավի անհրաժեշտ ու արդարացի նկրտումները բախվեցին մի շարք խոչընդոտների, որոնց շարքում իրեն զգացնել տվեց նաև պահանջվող մասնագիտական ունակությունների համար բավարար հիմքերի ու պայմանների բացակայությունը: Ընդ որում, չէր կարող իրատեսական համարվել արմատապես վերափոխված հասարակությունում և վերջինիս առջև ծառացած տարաբնույթ մարտահրավերները հնարավորինս սեղմ ժամկետներում ու արդյունավետ հաղթահարելու հիմնախնդիրների համատեքստում հիրավի ինքնատիպ հայրենական իրավունքի համակարգ ստեղծելու և,

վերջին հաշվով, ժողովրդավարության ոգով ներծծված իրավաքաղաքական մշակույթ ձևավորելու ուղղությամբ համարժեք քայլեր կատարելը:

Ակնհայտ է, որ պետություն և անհատ փոխհարաբերությունների առնչությամբ իրավաքաղաքական հայացքների արմատական վերանայման առանցքային խնդիրներին համահունչ քաղաքականություն իրականացնելու գրավականը հենց այդ արդիական երևույթների ու իրավական ինստիտուտների վերաբերյալ համարժեք անհրաժեշտ խորությամբ գիտագործնական պատրաստվածությունն ու միջազգային իրավական չափանիշների առնչությամբ իրազեկվածությունն է:

Չափազանց դյուրին է խոսել խորհրդային մտածելակերպի հաղթահարման, ինչպես նաև խորհրդային իրավաքաղաքական համակարգն արմատապես վերանայելու և այն ժողովրդավարական հիմքերի վրա տեղափոխելու անհրաժեշտության մասին, սակայն գործնականում այդ ուղղությամբ կատարվող քայլերը կարող են խորիմաստ ու հիմնարար լինել միայն այն դեպքում, երբ հավուր պատշաճի գիտակցվում ու արհեստավարժության չափանիշներով ընկալվում են նշված իրարամերժ համակարգերի էությունը, դրանց դրական ու բացասական կողմերը, ակնկալվելիք բարդություններն ու դրանց հաղթահարման արդյունավետ եղանակները, հնի ու նորի անխուսափելի բախման ծանր հետևանքները հնարավորինս մեղմելու ուղիները և այլն: Նախկին իրավունքի համակարգի ցանկացած ինստիտուտ ու բաղադրիչ կուրորեն ժխտելու և դրան արժանիորեն փոխարինող լուծումներ գտնելու անընդունակ փորձերն էլ ավելի են խեղաթյուրում ժողովրդավարության ինստիտուտների վերաբերյալ հանրության պատկերացումները, ինչի արդյունքում հասարակության իրավագիտակցության մեջ անհարկի ի հայտ են գալիս անգամ անվիճելի ժողովրդավարական սկզբունքների նկատմամբ անթաքույց անվստահություն ու կարոտախտ հնի նկատմամբ:

Պետականության լիարժեք ձևավորման, արդի դարաշրջանում պետական իշխանության իրականացման առանցքում մարդուն, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքներն ու ազատությունները բարձրագույն արժեք հռչակելու համատեքստում մենք անխուսափելիորեն զգում ենք ոչ միայն զուտ իրավական, կազմակերպական, քաղաքական կամ տնտեսական երաշխիքների, այլև ցանկալի

իրավական մշակույթի անհրաժեշտություն, որի ուղիղ ճանապարհը պատշաճ իրավական գիտելիքներն ու գործնական հմտություններն են:

Այսպիսով, պետության և պետականության հանդեպ մարդկանց վերաբերմունքի ձևավորման գործընթացում վճռորոշ դեր ունի պետության իրավասու մարմինների կողմից իրականացվող վարչարարությունը: Յուրաքանչյուր մարդ անհամեմատ ավելի մեծ չափով ու շրջանակներով է առնչվում վարչարարություն իրականացնող մարմինների, քան օրենսդիր կամ դատական իշխանություն իրականացնելու իրավասությամբ օժտված մարմինների ու դրանց պաշտոնյաների հետ, ինչն էլ ընդգծում է վարչարարության նաև սոցիալական կարևոր նշանակությունը: Իսկ արդյունավետ և ժողովրդավարության սկզբունքներին համահունչ վարչարարության երաշխիքներից են հիմնավորված վարչական օրենսդրության առկայությունը և վարչական իրավունքի համարժեք իմացությունը:

Ի տարբերություն, իրավունքի մյուս ճյուղերի, վարչական իրավունքն առանձնանում է իրավական հիմքերի, ինչպես նաև դրանցով ամրագրված ինստիտուտների անհամեմատ լայն շրջանակով: Եթե որոշ իրավունքի ճյուղերի իրավական նորմերն իրենց ամրագրումն են ստանում հիմնականում մեկ հիմնարար օրենսդրական ակտում, ապա վարչական իրավունքի ճյուղի աղբյուրները չափազանց տարաբնույթ ու մեծաքանակ են: Այս իրավիճակում էլ ավելի է ընդգծվում մայրենի լեզվով և հայրենական պետահիրավական փորձի վերլուծությամբ պատրաստված վարչական իրավունքի ուսումնական ձեռնարկի անհրաժեշտությունը:

Սույն ուսումնական ձեռնարկում համարժեքորեն և հնարավորինս մատչելի ներկայացված են վարչական իրավունքի աղբյուրները, դրանց զարգացման միտումները, շրջանառության մեջ գտնվող օրինագծերը, գիտագործնական հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները:

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԸ: ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

ԳԼՈՒԽ 1.
ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

§1. Կառավարման հասկացությունը և բովանդակությունը

Վարչական իրավունքը ՀՀ իրավունքի համակարգի առաջատար ճյուղերից է և կարգավորում է պետական գործունեության հիմնական տեսակներից մեկի՝ կառավարման ոլորտում առաջացող հասարակական հարաբերությունները: Իրավունքի այս ճյուղը բնորոշելու համար առաջին հերթին անհրաժեշտ է պարզել ոչ միայն կառավարման ընդհանուր հասկացությունը, այլև՝ սոցիալական կառավարման և դրա տարատեսակների առանձնահատկությունները:

Կառավարումը, որպես սոցիալական երևույթ, մեթոդոլոգիական հիմք է հանդիսանում վարչական իրավունքի ձևավորման համար: Վերջինս կոչված է կարգավորելու յուրահատուկ հասարակական հարաբերություններ, որոնք անվանվում են կառավարման (կառավարչական): Ի դեպ, «վարչական» եզրույթը ծագել է Հին Հռոմում լատինական «administratio» («ադմինիստրացիա») բառից և թարգմանաբար նշանակում է կառավարում, ղեկավարում:

Հասարակության կենսագործունեության կառավարումը (ղեկավարումը), ըստ էության, ծագել է մարդկային հասարակության երևան գալու հետ միասին: Նախնադարյան հասարակության մեջ առաջնորդը՝ ցեղը (տոհմը) կառավարում էր բարոյական հեղինակության, սովորույթների, ինչպես նաև հնազանդեցման միջոցով: Կառավարման այդպիսի համակարգում առաջնային տեղ են զբաղեցրել այն նորմերը, որոնց օգնությամբ ապահովվել է հասարակական կապերի պատշաճ համաձայնեցվածություն կամ կարգավորվածություն: Այդպես են

առաջացել կառավարչական կամ վարչական իրավունքի նախադրյալները:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ կառավարումն ինքնանպատակ չէ, մարդկանց կողմից այն ստեղծվել է իրենց կենսագործունեության գիտակցական ինքնակարգավորման և շահերն ու պահանջմունքներն ապահովելու նպատակով: Կառավարումը յուրաքանչյուր պատմական ժամանակաշրջանում բնութագրվել և կատարելագործվել է հասարակության զարգացման մակարդակին համապատասխան:

Պետության ծագումից հետո էլ յուրաքանչյուր պետություն և հասարակություն մշտապես մեծ ուշադրություն են դարձրել հանրային գործերի կառավարմանը: Այն իրականացնելու համար անհրաժեշտ է եղել կազմակերպել, կարգավորել և կանոնակարգել մարդկանց վարքագիծը[1] (գործունեությունը) և սոցիալական այլ ինստիտուտների գործունեությունը: Դա այնպիսի գործողությունների ամբողջություն է, որոնք իրականացվում են հասարակական նշանակության նպատակին հասնելու համար: Այս առումով հասարակության անդամների կառավարումն ամբողջությամբ վերցրած հասարակության բնականոն գործունեության կարևոր պայմաններից է: Դրանից բացի, լինելով յուրաքանչյուր կազմակերպված համակարգի գործառույթ, ծառայում է կառավարման տարրերի (սուբյեկտի և օբյեկտի) արդյունավետ փոխգործողության շահերին, և իրականացվում է սուբյեկտի կողմից օբյեկտի նկատմամբ նպատակաուղղված կարգավորող ներգործության միջոցով:

Գիտության համակարգի տարբեր ոլորտներում «կառավարում» հասկացությանը տալիս են յուրովի մեկնաբանություններ: Այն ավելի լայն առումով է դիտվում կիբեռնետիկայի[2] կողմից՝ ընդգրկելով տեխ-

---

[1] «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի (03.04.02) 2-րդ հոդվածի համաձայն վարքագծի կանոնները «պարտադիր ճանաչման, պահպանության, պաշտպանության, կատարման կամ կիրառման ենթակա իրավունքներ, պարտականություններ, պատասխանատվություններ, սահմանափակումներ կամ այլ կանոններ» են:

[2] Կիբեռնետիկայի գաղափարը և սկզբունքները ձևավորել է ամերիկացի մաթեմատիկոս Նորբերտ Վիները՝ կիբեռնետիկայի վերաբերյալ 1948թ. հրատարակած աշխատության մեջ (Философский словарь, изд-во политической литературы. М., 1975, էջ 61):

նիկական, կենսաբանական և սոցիալական համակարգերը: Կիբեռնետիկան (հունարենից թարգմանաբար նշանակում է կառավարման արվեստ)[1] «կառավարում» հասկացությունը պարզաբանում է որպես կառավարման սուբյեկտների և օբյեկտների փոխգործողություն՝ ուղղակի և հակադարձ կապերի կառուցակարգերի միջոցով: Հետագայում ձևավորվեց նաև նոր գիտական ուղղություն՝ հասարակության գիտական կառավարում[2]:

Նշված մոտեցումները բավարար հիմք են հանդիսացել կառավարման նշանակությունն ու էությունը համարժեք պարզաբանելու համար: Ընդ որում, «կառավարում» հասկացության ընդլայնումը միաժամանակ կորցնում է դրա իրական իմաստը, քանի որ բացակայում է կառավարման հետ մարդու մշտական կապի գիտակցված գործոնը: Գործնականում բնական օրինաչափությունները և դրանց առաջացման ձևերը խստորեն տարբերվում են այն հարաբերություններից, գործընթացներից ու եղանակներից, որոնք ձևավորվում են մարդկանց կողմից իրենց մասնավոր և հատկապես հասարակական կյանքի շրջանակներում:

Տեսականորեն և գործնականում կառավարումը (ղեկավարումը) ունի իր բովանդակությունը և գործառութային նշանակությունը: Գործնական առումով, լինելով համապարփակ հասկացություն, «կառավարում» (ղեկավարում) եզրույթն իրավաբանական գրականության մեջ ունի բովանդակային տարբեր մեկնաբանություններ: Այսպես, լայն առումով կառավարել նշանակում է որևէ բան կամ որևէ մեկին ղեկավարել[3]: «Կառավարում» լայն առումով՝ տառացիորեն նշանակում է այս կամ այն օբյեկտի նկատմամբ նպատակաուղղված կարգավորող ներգործություն կամ այդ օբյեկտի գործողությունների

---

[1] Տե՛ս Советский энциклопедический словарь, изд-во «Советская энциклопедия». М., 1979, էջ 578:

[2] Տե՛ս Правовые проблемы науки управления. М., 1966. Афанасьев В.Г. Научное управление обществом. М., 1968, նույն հեղինակի Социальная информация и управление обществом. М., 1975: Бачило И.Л. Организация советского государственного управления. М., 1984: Атаманчук Г.В. Теория государственного управления. Курс лекций. М., 1997: Կարապետյան Լ.Մ. Հասարակության գիտական կառավարումը, Եր., 1977:

[3] Տե՛ս Алехин А.П., Кармолицкий А.А., Козлов Ю.М. Административное право Российской Федерации. Учебник. М., 1999, էջ 4:

ղեկավարում, ենթադրելով, որ այս կամ այն համակարգում պետք է առկա լինեն երկու կարևոր տարրեր՝ սուբյեկտ (կառավարող տարր) և օբյեկտ (կառավարվող տարր): Կառավարումը խարսխվում է սուբյեկտին օբյեկտի ենթակայության վրա[1]: Ինչպես իրավացիորեն նշել է Գ. Ատամանչուկը. կառավարումը մարդկանց նպատակամետ (գիտակցված, կանխամտածված, կշռադատված), կազմակերպված և կարգավորող ներգործությունն է իրենց հասարակական, կոլեկտիվ և խմբային կենսագործունեության նկատմամբ, որն իրականացվում է ինչպես անմիջականորեն (ինքնակառավարման ձևերով), այնպես էլ հատուկ ստեղծված կառուցվածքների միջոցով (պետություն, հասարակական միավորումներ, կուսակցություններ, ֆիրմաներ, ձեռնարկություններ և այլն)[2]:

Ներկայումս ընկալվող «կառավարում» հասկացության ձևավորումն արդյունաբերական հեղափոխության արդյունք է, որի շնորհիվ մեկտեղվեցին գիտությունը, տեխնիկան և մարդը: Կառավարման գիտության դասական Անրի Ֆայոլը (Ֆրանսիա) 1916թ. հրատարակած «Ընդհանուր և արդյունաբերական կառավարում» աշխատության մեջ շարադրել է գիտական կառավարման դասական բնորոշումը և ընդհանուր սկզբունքները, որոնք համակողմանի են և կիրառելի ինչպես բուն կառավարման, այնպես էլ տնտեսության ու մյուս բնագավառներում: Նա հիմնավորում էր, որ կառավարել նշանակում է ***կանխատեսել, կազմակերպել, կարգադրել, համակարգել*** և ***վերահսկել:***

Ըստ Ա. Ֆայոլի, ցանկացած կազմակերպության (այդ թվում՝ պետական հիմնարկի) կառավարումն ընդգրկում է վեց հիմնական խումբ գործառույթներ՝ տեխնիկական, առևտրային, ֆինանսական, ապահովագրական, հաշվառման և վարչական: Ի դեպ, վարչական գործառույթն ամենահիմնականն ու վճռորոշն է, քանի որ մյուս հինգ սկզբունքները հանդիսանում են վարչական գործառույթների խնդիրը[3]:

Վերը շարադրված մեկնաբանություններից կարելի է եզրահան-

---

[1] Տե՛ս Административное право: Учебник / Под ред. Ю.М. Козлова, Л.Л. Попова. М., 2000, էջ 18:

[2] Տե՛ս Атаманчук Г.В. նշված աշխ., էջ 29-30:

[3] Управление – это наука и искусство (А. Файоль, Г. Эмерсон, Ф. Тейлор, Г. Ферд. М., 1992, էջ 12:

գել, որ կառավարումը լայն առումով ենթադրում է դրա որևէ սուբյեկտի կողմից ինչ-որ բանի (կամ որևէ մեկի) նկատմամբ ներգործություն՝ վերջինիս նոր վիճակի բերելու նպատակով: Այս եզրահանգումից ելնելով, մասնագետները տալիս են կառավարման ընդհանուր հասկացության բնորոշ հիմնական գծերը.

- կառավարումը կազմակերպված տարբեր բնույթի (տեխնիկական, կենսաբանական, սոցիալական) համակարգերի և դրանց բաղադրամասերի փոխկապակցված գործառույթ է ընդհանուր նպատակին հասնելու համար,
- կառավարումը ենթադրում է այս կամ այն համակարգում երկու պարտադիր տարրերի՝ սուբյեկտի (կառավարող տարր) և օբյեկտի (կառավարվող տարր) առկայությունը,
- կառավարումը սուբյեկտի կողմից նպատակաուղղված կարգավորող ներգործությունն է օբյեկտի նկատմամբ,
- կառավարումը իրական է, եթե առկա է օբյեկտի (կառավարվող տարր) ենթակայությունը սուբյեկտին (կառավարող տարր):

Սրանք են կառավարման ընդհանուր հասկացության հիմնական բնորոշիչները, որոնք կիրառելի են նաև սոցիալական (հասարակական) կառավարման ոլորտում, հաշվի առնելով վերջինիս առանձնահատկությունները, որոնց մասին կնշվի ստորև:

§2. Սոցիալական կառավարում

Կառավարման ընդհանուր գծերը յուրահատուկ են նաև սոցիալական (հասարակական) կառավարմանը: Վերջինիս կարևոր առանձնահատկությունն այն է, որ կառավարչական կապերն իրականացվում են մարդկանց հարաբերությունների միջոցով: Այդ հարաբերություններում որպես սուբյեկտ և օբյեկտ հանդես են գալիս մարդիկ և դրանց միավորումները (ընտանիք, հասարակություն, պետություն, տարածքային կազմավորումներ, հասարակական միավորումներ, արտադրական և ոչ արտադրական օբյեկտներ և այլն):

Կառավարումը բառացիորեն սկսվում է այնպիսի հարաբերություններում, գործընթացներում, որտեղ առկա է մարդու գիտակցական գործոնը, շահը, գիտելիքները և գործողությունը, նպատակն ու կամքը:

Այս առումով ինչպես կառավարումն ընդհանրապես, այնպես էլ սոցիալական կառավարումը մասնավորապես, բավականին բարդ գործընթաց է. մարդկանց մտավոր և գործնական գործունեության դժվարին ու պատասխանատու ոլորտներից մեկը, որ գոյություն ունի մարդկանց փոխգործունեության շրջանակներում: Ի դեպ, անհատական և սոցիալական փոխադարձ կապերը վերաստեղծվում են անընդհատ՝ մարդկանց գիտակցության ուժով, պատշաճ վարքագծով և ակտիվ գործունեությամբ:

Սոցիալական կառավարումն ունի մի շարք գործառույթներ, այսինքն՝ գործունեության ուղղություններ: Այս առումով մասնագիտական գրականության մեջ սոցիալական կառավարմանը տրվել են բազմազան բնորոշումներ: Մասնավորապես, հանրագիտարանային աշխատանքներում սոցիալական կառավարումը բնորոշվում է որպես հասարակության նկատմամբ ներգործություն՝ այն կարգավորելու, որակական յուրահատկությունները պահպանելու, կատարելագործելու և զարգացնելու նպատակով[1]: Հայկական սովետական հանրագիտարանն ավելի համակողմանիորեն և ուրույն ձևով է մեկնաբանում սոցիալական կառավարման բովանդակությունը: Դրա էությունը պայմանավորում է արտադրական հարաբերությունների բնույթով, որը ենթադրում է մարդկանց միջև հարաբերությունների կարգավորման և համակեցության որոշակի կազմակերպում: Սոցիալական կառավարումն արտացոլում է հասարակության կամ նրա առանձին օղակների վրա ներգործության գործընթացը՝ դրանց բնականոն գործունեությունը, կատարելագործումը և զարգացումն ապահովելու նպատակով[2]: Սակայն սոցիալական կառավարումը պայմանավորել միայն արտադրական հարաբերություններով, կարծում ենք, իրական չէ և նեղացնում է սոցիալական կառավարման բուն իմաստը, քանի որ այն ընդգրկում է նաև ոչ արտադրական հարաբերությունները:

Ըստ Յու. Տիխոմիրովի. «Սոցիալական կառավարումը (հասարակական կառավարումը) ենթադրում է ներգործություն հասարակական կյանքի բոլոր, բազմաթիվ կամ առանձին ոլորտների, հասարակական գործընթացների կառավարման նկատմամբ»[3]: Ս. Ալեքսեևը

---

[1] Տե՛ս Советский энциклопедический словарь, էջ 1396:
[2] Հայկական սովետական հանրագիտարան, հ. 5, էջ 271:
[3] Тихомиров Ю.А. Курс административного права и процесса. М., էջ 44:

նշում է, որ սոցիալական բնագավառում կարգավորումը ենթադրում է մարդկանց և նրանց կոլեկտիվների վարքագծի սահմանում, դրա գործունեության և զարգացման ուղղության որոշում, որոշակի շրջանակների մեջ ներառում և նպատակադրված կանոնավորում[1]:

Ցանկացած բնույթի կառավարման մեջ, որպես առաջնային «կարգավորող» բաղադրամաս հանդես է գալիս մարդը, և այն ստեղծվում է մարդու շահերին ծառայեցնելու նպատակով: Սոցիալական կառավարման կարևոր պայմանն է, որպեսզի համատեղ գործունեություն իրականացնող անձինք ներդաշնակորեն համակցեն իրենց անհատական և ընդհանուր շահերը, հակառակ դեպքում այն հղի է փոխգործողության անկայունացմամբ: Փոխհամագործակցությունը հնարավորություն է ընձեռում համատեղ ուժերով հասնելու ընդհանուր նպատակին, որն անհասանելի է առանձին գործող անձանց:

Հիրավի, մարդկանց համատեղ գործունեությունն ինքնին չի կարող ապահովել նրանց պատշաճ համագործակցությունը՝ ընդհանուր նպատակին հասնելու համար: Դրա ապահովման համար անհրաժեշտ է հատուկ կառուցակարգ՝ կառավարման սուբյեկտ: Այդպիսի սուբյեկտների դերում հանդես են գալիս որոշակի խումբ անձինք՝ կառավարման (հասարակական կամ պետական) մարմնի ձևով կամ էլ դրա համար լիազորված առանձին անձ, որոնք սահմանում են համատեղ գործունեություն իրականացնող մարդկանց վարքագծի (գործունեության) շրջանակները:

Այսպիսով, յուրաքանչյուր նպատակաուղղված կոլեկտիվ գործունեություն կառավարման կարիք ունի: Կառավարումն անհրաժեշտ է այն դեպքում, երբ առաջանում է մի խումբ մարդկանց միջև գործողությունները բաժանելու և համաձայնեցնելու պահանջ: Առանձին անհատ ինքնակառավարվում է իր սոցիալական ակտիվությամբ: Բայց, որպեսզի մի խումբ մարդիկ կատարեն փոխհամաձայնեցված գործողություններ, արդեն հնարավոր չէ միատեղ չորոշել ընդհանուր նպատակները և դրանց իրականացումը չկապել խմբի յուրաքանչյուր անդամի համար համատեղ որոշված վարքագծի հետ[2]:

Այս առնչությամբ Կ. Մարքսը նշել է, որ ամեն տեսակի անմիջա-

---

[1] Տե՛ս Алексеев С.С. Теория права. М., 1994, էջ 30:
[2] Атаманчук Г.В., նշված աշխ., էջ 28:

կան հասարակական կամ համատեղ աշխատանք կարիք ունի մեծ կամ փոքր մակարդակի կառավարման, որը սահմանում է անհատական աշխատանքների միջև համաձայնություն և իրականացնում է ընդհանուր գործառույթ: Նա այդ միտքն արտահայտել է բավականին պատկերավոր. «Առանձին ջութակահարն ինքն է կառավարում իրեն, նվագախումբը՝ կարիք ունի խմբավարի»[1]: Շարունակելով այդ միտքը, հայտնի վարչագետ Բ. Լազարևը նշում է, որ սոցիալական կառավարումն անհնար է առանց հեղինակության, այսինքն՝ տիրապետող կամքի, անկախ նրանից, ներկայացված է նա մեկ անձով, թե՝ կոլեգիալ մարմնով: Այդպիսի կառավարում իրականացնելու համար անհրաժեշտ է իշխանություն ունենալ, այսինքն՝ մյուսների կամքը իր կամքին ենթարկելու իրական ունակություն[2]:

Կառավարումը կենսական գործընթացները լուծելու նպատակով մարդկանց կողմից մշակված և հարմարեցված հասարակական երևույթ է և կազմված է բազմազան տարրերից: Սրա գլխավոր առանձնահատկությունն այն է, որ դրանում որպես կառավարման սուբյեկտ և օբյեկտ հանդես է գալիս մարդը: Բնականաբար, կառավարման ոլորտում մշտապես գործում են մարդկանց շահերը, նպատակները, կամքը և բազմաթիվ այլ հոգեբանական տարրեր, որոնք հաճախ վճռորոշ նշանակություն ունեն ինչպես կառավարման բովանդակության, ձևի և արդյունավետության, այնպես էլ ամբողջությամբ վերցրած կառավարման համար:

Ի դեպ, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ «սոցիալական կառավարում» և «սոցիալական կարգավորում» հասկացությունները փոխադարձաբար կապված են միմյանց: Կառավարումը և կարգավորումն ընկալվում են որպես համընկնող կատեգորիաներ, սակայն կարգավորումը հասարակության համար ավելի լայն և ավելի բնահատուկ երևույթ է, քան կառավարումը[3]:

Սոցիալական կառավարումը որպես հասարակական կյանքի բնորոշ հատկանիշ գոյություն է ունեցել մինչև պետության առաջա-

---

[1] Տե՛ս Маркс К. и Энгельс Ф. Соч. Т. 23, էջ 342: Տե՛ս նաև Административное право. Под ред. Ю.М. Козлова, Л.Л. Попова, էջ 6:

[2] Տե՛ս Советское административное право: Учебник. Под ред. П.Т. Василенкова. М., 1990, էջ 4:

[3] Տե՛ս Алексеев С.С. նույն աշխ., էջ 30:

ցումը: Դրա ծագմանն ու զարգացմանը զուգընթաց սոցիալական կառավարման զգալի մասն սկսեց պետական բնույթ կրել: Սակայն արդի պայմաններում էլ դրանք գործում են զուգահեռ: Որպես բնական երևույթ, այն մարդկային քաղաքակրթության պատմության ամբողջ ընթացքում յուրահատուկ դեր է կատարել ամբողջությամբ վերցրած մարդկության համար:

Ընդ որում, երկրի սոցիալ-քաղաքական կարգից են կախված սոցիալական կառավարման բովանդակությունն ու շրջանակները, նպատակներն ու սկզբունքները, որոնք հասարակության կանոնավոր կենսագործունեության ու զարգացման կարևոր պայմաններից են: Այս առումով, ինչպես իրավացիորեն նշել է Ս. Ալեքսեևը, սոցիալական կյանքի զարգացմանը համեմատ, փոփոխվում է կարգավորող միջոցների ու կառուցակարգերի բարդությունը, նրբությունը, կատարելագործումը, դրանց աճող տարբերակումը և ինտեգրացիան[1]:

Ի դեպ, կառավարմանը և սոցիալական խնդիրներին յուրաքանչյուր պետություն և հասարակություն կարևոր նշանակություն են տվել: Այս կապակցությամբ տեղին է հիշատակել վարչական իրավունքի հանրահայտ մասնագետ Ն. Կորկունովի խոսքերը. «Եթե կառավարում ամենևին չլինի, չի լինի նաև պետություն...»: Պետությունը սոսկ այնքանով է գոյատևում, որքանով գործում, իշխում, կառավարում է: Որպեսզի պետությունը պահպանի իր գոյությունը, պետք է իրականացվի կառավարում[2]:

Անշուշտ, նշված խնդիրները հանրային բնույթ ունեն և արտահայտում են հասարակության անդամների շահերն ու պահանջմունքները: Դրանց լուծման համար անհրաժեշտ է կառավարել հասարակության անդամների վարքագիծը (գործունեությունը), պետության և սոցիալական ինստիտուտների գործունեությունը, սոցիալական գործընթացների ընդհանուր և միասնական կապը, հակառակ դեպքում հնարավոր չէ կազմակերպել, կարգավորել և ապահովել պետության և հասարակության բնականոն գործունեությունը:

Սոցիալական կառավարումը լայն առումով կարող է բնորոշվել որպես հասարակական կապերի կազմակերպման կառուցակարգ, ո-

---

[1] Նույն տեղում, էջ 31:
[2] Տե՛ս Коркунов Н.М. Указ и закон. СПб, 1874, էջ 30:

րի գործառույթներն ու խնդիրները գործնականում իրականացնում են ինչպես պետական մարմինները, այնպես էլ հասարակական միավորումները: Սոցիալական կառավարման համակարգը ներառում է նաև տեղական ինքնակառավարումը, որտեղ որպես կառավարման օբյեկտ հանդես է գալիս ամբողջ համայնքն իր հասարակական կապերով:

Ընդհանրացնելով վերոշարադրյալը կարող ենք ընդգծել դրա առավել բնորոշ հետևյալ գծերը՝

- սոցիալական կառավարումը գործում է միայն այնտեղ, որտեղ առկա է մարդկանց համատեղ գործունեությունը: Սոցիալական կառավարումը կազմակերպում է մարդկանց և նրանց կոլեկտիվները հենց համատեղ նպատակամետ գործունեության համար,

- սոցիալական կառավարումը կոչված է ապահովելու համատեղ գործունեության մասնակիցների նկատմամբ կարգավորող ներգործություն, որի նպատակն է կազմակերպել (պլանավորել, համակարգել, վերահսկել և այլն) համատեղ գործունեությունը՝ առաջադրված խնդիրներին համապատասխան,

- սոցիալական կառավարման կարգավորող ներգործության օբյեկտ է հանդիսանում համատեղ գործունեության մասնակիցների գիտակցված-կամային վարքագիծը (գործողությունը): Կառավարման մեջ մարդկանց վարքագծի (գործունեության) նկատմամբ իրականացվում է միջնորդավորված ղեկավարում,

- սոցիալական կառավարման բնորոշ գծերը ենթադրում են կարգավորող ներգործության իշխանական-կամային բնույթը, որն արտահայտվում է կառավարչական հարաբերության մյուս կողմի (մասնակիցների) կամքի համաստորադասությամբ: Կառավարման սուբյեկտն իրականացնում է իր «տիրապետող կամքը», իսկ կառավարման օբյեկտը գիտակցաբար ենթարկվում է դրան,

- սոցիալական կառավարումն իրականացվում է հատուկ մեխանիզմի՝ կառավարման սուբյեկտի միջոցով: Այդպիսի սուբյեկտների դերում հանդես են գալիս կառավարման (պետական կամ հասարակական) մարմինները կամ էլ դրա համար լիազորված առանձին անձինք:

§3. Պետական կառավարում

Պետական կառավարումը սոցիալական կառավարման տարատեսակներից է: Ինչպես սոցիալական, այնպես էլ պետական կառավարումը մարդկանց կազմակերպական գործունեությունն է, որն իրականացվում է որոշակի նպատակների հասնելու համար: Գիտական գրականության մեջ տարբերակվում են կառավարման մի շարք տեսակներ՝ հասարակության կառավարում, պետական կառավարում և մունիցիպալ (համայնքային) կառավարում, ճյուղային, տնտեսական ոլորտների կառավարում, կազմակերպությունների կառավարում և այլն:

Հասարակության սոցիալական կառավարումը բաժանվում է երկու խմբի՝ ա) պետական կառավարում (պետական գործերի կառավարում) և բ) ոչ պետական կառավարում (հասարակական միավորումների, մասնավոր և ոչ պետական այլ կազմակերպությունների գործերի կառավարում):

Հասարակության գործերի կառավարումն իրականացնում են ինչպես պետությունը, այնպես էլ հասարակական միավորումները և ոչ պետական այլ կազմավորումներ: Հասարակության գործերի կառավարումն ընդունված է բաժանել երկու խմբի՝ ա) պետական գործերի կառավարում և բ) հասարակական գործերի կառավարում: Պետական գործերի կառավարումն իրականացնում են բոլոր պետական մարմինները, ինչպես նաև անմիջականորեն ժողովուրդը՝ հանրաքվեների ու անմիջական ժողովրդավարության այլ ձևերով: Պետական գործերի կառավարումը ներառում է նաև պետական կառավարումը՝ որպես պետական գործունեության առանձնահատուկ տեսակ: Այս առնչությամբ Բ. Լազարևը նշում է, որ պետական կառավարումը պետական գործերի կառավարման տարատեսակ է, իսկ այն՝ հասարակության գործերի կառավարման տարատեսակ[1]:

Կառավարման նշված տեսակավորումը կապված է նաև դրանց սուբյեկտների բնույթով և առանձնահատկություններով:

Կառավարման տեսակների մեջ պետական կառավարումը հա-

---

[1] Տե՛ս Лазарев Б.М. Государственное управление на этапе перестройки. М., 1988, էջ 5:

տուկ տեղ է զբաղեցնում միայն իրեն յուրահատուկ որոշակի առանձնահատկություններով: Ի տարբերություն ոչ պետական կառավարման, պետական կառավարման սուբյեկտը (պետությունը) օժտված է հզոր իշխանական ուժով և հանդես է գալիս պետության անունից: Դրա նպատակաուղղված կարգավորող ներգործության օբյեկտն ամբողջությամբ վերցրած հասարակությունն է: Հետևաբար, պետական կառավարման կարգավորող ներգործությունը հենվում է պետական իշխանության վրա և այդ իսկ պատճառով տարածվում է ամբողջ հասարակության նկատմամբ: Այս առնչությամբ իրավաբանական գրականության մեջ նշվում է, որ պետական կառավարման սուբյեկտը չի կարող գոյություն ունենալ առանց կառավարման օբյեկտների և միայն միասին կարող են կազմել պետական կառավարման համակարգ[1]: Հասարակության կառավարման դեպքում կառավարման ներգործության սուբյեկտը՝ հասարակությունն ու դրա կառուցվածքներն են:

Պետական կառավարումը կառավարման մյուս տեսակներից տարբերվում է նաև նրանով, որ պետության մոտ է կենտրոնացված և ինքն է իրականացնում հասարակության անդամների նկատմամբ պետական իշխանությունը, որոնք գիտակցաբար կամ հարկադրված ճանաչում են այդ իշխանությունը:

Պետական կառավարման բովանդակությունն ամենաընդհանուր ձևով կարելի է բնորոշել որպես միասնական պետական իշխանության իրականացման գործադիր-կարգադրիչ գործունեություն, որն առաջին հերթին նպատակաուղղված է օրենքների, Հանրապետության Նախագահի ենթաօրենսդրական ակտերի կենսագործմանը: Ի կատարումն դրանց իրականացնում է կատարման համար պարտադիր կարգադրիչ գործունեություն (իրավական ակտերի միակողմ ընդունելու իրավունքը, դրանց պաշտպանումը պետական հարկադրանքի միջոցներով և այլն): Նշված հարցերը լուծելու նպատակով օժտված է պետական-իշխանական լիազորություններով: Ընդ որում, պետական կառավարումն իրականացվում է տնտեսական, սոցիալ-մշակութային և վարչաքաղաքական շինարարության ղեկավարման ընթացքում:

Այսպիսով, պետական կառավարումը պետական գործունեութ-

[1] Տե՛ս Атаманчук Г.В., նշված աշխ., էջ 92:

յան յուրահատուկ տեսակ է և տարբերվում է այդպիսի գործունեության մյուս դրսևորումներից: Այս առումով որպես գործունեության տեսակ իր գործառութային և իրավասության առանձնահատկություններով տարբերվում է ինչպես օրենսդիր և դատական գործունեությունից, այնպես էլ ոչ պետական կազմավորումների կառավարչական գործունեությունից: Միաժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ լայն առումով պետական կառավարում (պետական գործերի կառավարում) իրականացնում են բոլոր պետական մարմինները՝ օրենսդիր, գործադիր և արդարադատության գործունեության ձևերով: Վերջիններիս նպատակը պետության միասնական խնդիրների ու գործառույթների իրականացումն է՝ իրենց իրավասության առանձնահատկություններին համապատասխան:

ՀՀ Ազգային ժողովը, որպես օրենսդիր իշխանության մարմին, ընդունում է օրենքներ և որոշումներ, որոնցով կարգավորվում են կառավարման բնագավառի հասարակական հարաբերությունները և սահմանված կարգով վերահսկողություն է իրականացնում այդ ոլորտի գործունեության նկատմամբ: ՀՀ Ազգային ժողովն իրականացնում է միայն կառավարման ներկազմակերպական գործառույթներ իր մարմիններում և ծառայություններում:

Դատական իշխանության մարմիններն արդարադատություն իրականացնելուց բացի կատարում են նաև կառավարման գործառույթներ, որոնք, որպես կանոն, ներկառավարման բնույթ ունեն. մասնավորապես, ղեկավարում են դատարանի աշխատակազմը և համակարգի մյուս աշխատողներին:

Դատախազության մարմիններն իրենց հիմնական գործառույթներին զուգահեռ լուծում են ներկազմակերպական կառավարման հարցեր՝ ղեկավարում են դատախազության աշխատակազմի ու մյուս աշխատողների գործունեությունը:

Նշված մարմինների ղեկավարները, աշխատակազմի ղեկավարները, ղեկավարելով իրենց ենթակա մարմինները և աշխատողներին, հանդես են գալիս որպես հիմնարկի ղեկավարներ, վարչարարներ: Օրինակ, դատարանի նախագահը, կազմակերպելով դատարանի աշխատակազմի աշխատանքը, իրականացնում է ոչ թե արդարադատություն, այլ՝ կառավարում, այսինքն՝ վարչական իշխանություն:

Ոչ պետական կառավարումն իրականացվում է համապատաս-

խան ոչ պետական կազմավորման (հասարակական միավորումներ, մասնավոր և ոչ պետական կազմակերպություններ) անունից և դրանց սուբյեկտների լիազորությունները, որպես կանոն, տարածվում են միայն տվյալ ոչ պետական կազմավորման անդամների վրա: Ընդ որում, ոչ պետական կառավարման սուբյեկտների կարգադրագրերը, որպես կանոն, չունեն պետական-իշխանական բնույթ:

Ի տարբերություն ոչ պետական կառավարման, պետական կառավարումն իրականացվում է պետության անունից, որի համար դրա սուբյեկտներն օժտված են համապատասխան պետական-իշխանական լիազորություններով: Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ պետական կառավարումն իրականացվում է պետական մարմինների միջև և ոչ պետական կազմավորումների հետ փոխհարաբերության միջոցով, այսինքն՝ այդ մարմինների ներքին (ներկազմակերպական) և արտաքին՝ «պետություն-քաղաքացիական հասարակություն» հարաբերություններում:

Վերոհիշյալ հարցադրումների համադրումը ցույց է տալիս, որ կառավարչական գործունեություն իրականացնող հատուկ մարմիններ են համարվում պետական (գործադիր իշխանության) մարմինները: Դա պայմանավորված է նրանով, որ հենց այդ մարմիններն են որոշում ընդհանուր կառավարման հարցերը, ղեկավարում կառավարման ճյուղերը և ոլորտները, պետական կազմակերպություններն ու հիմնարկները, կառավարչական ներգործություն իրականացնում ոչ պետական կազմավորումների նկատմամբ:

Կառավարման գործընթացն իրականացվում է որոշակի հերթականությամբ և մի քանի հիմնական փուլերով՝ որոշման նախագծի մշակում և ընդունում, դրա կատարման կազմակերպում և կատարման նկատմամբ վերահսկողություն:

Խորհրդային իշխանության ժամանակաշրջանում և անկախությունից հետո ՀՀ օրենսդրության մեջ օգտագործվել և օգտագործվում են «պետական կառավարում», «պետական կառավարման մարմիններ» հասկացությունները: Դրանց զուգահեռ ներկայումս շրջանառվում են նաև «գործադիր իշխանություն», ինչպես նաև «գործադիր իշխանության մարմիններ» («գործադիր մարմիններ»), նախկին օրենսդրությամբ օգտագործված «գործադիր ու կարգադրիչ մարմիններ» եզրույթի փոխարեն:

Թերևս «պետական կառավարում» եզրույթի ամրագրումն արդի օրենսդրության մեջ, ենթադրում է, որ պետական կառավարումը չի դադարել գործելուց, պարզապես տեղի է ունեցել պետական իշխանության իրականացման կառուցակարգերի էական վերակազմավորում՝ պետական իշխանության բաժանման սկզբունքին համապատասխան:

Պետական կառավարումը լայն առումով պետական մարմինների գործունեության կազմակերպական և կարգադրիչ բնագավառն է, իսկ նեղ առումով՝ գործադիր իշխանության մարմինների, ըստ էության, կառավարման ապարատի գործունեությունն է[1]: Հեղինակային կոլեկտիվներից մեկը պետական կառավարումը լայն և նեղ առումով բնորոշել է մոտավորապես նույն ձևով. «Պետական կառավարումը լայն իմաստով պետական իշխանության բոլոր մարմինների կազմակերպական և կարգադրիչ գործունեությունն է, նեղ իմաստով՝ պետական մարմինների (պաշտոնատար անձանց) գործադիր-կարգադրիչ գործունեությունն է, որն ուղղված է գործադիր իշխանության խնդիրների իրականացմանը»[2]:

Բ. Լազարևը «պետական կառավարում» հասկացությունը ձևակերպել է որպես պետական գործերի կառավարման և սոցիալական կառավարման տարատեսակներ: Դրանով հեղինակն ընդգծել է պետական կառավարման հիմնական տարբերությունը պետական գործունեության մյուս տեսակներից: Պետական կառավարումը Բ. Լազարևն ամփոփ բնորոշել է որպես պետական մարմինների կազմակերպական, գործադիր-կարգադրիչ գործունեություն, որն իրականացվում է օրենքների հիման վրա և ի կատարումն դրանց ու կայանում է պետական գործառույթների ամենօրյա գործնական կատարման մեջ[3]...:

Բնականաբար, այնպիսի բարդ հասարակական ինստիտուտ և առանձնահատուկ սոցիալական երևույթ ինչպիսին պետական կառավարումն է, հնարավոր չէ սպառիչ բնորոշել, ուստի այդ պատճառով էլ վերը նշված բնորոշումները, որպես կանոն, պայմանական

---

[1] Տե՛ս Тихомиров Ю.А., նշված աշխ., էջ 45:
[2] Григорян С.А., Бровко Н.В., Соколова Ю.А. Административное право: 100 экзменационных ответов. М., 2002, էջ 6:
[3] Лазарев Б.М. Государственное управление на этапе перестройки. М., 1988, էջ 5-7:

բնույթ են կրում: Դա պայմանավորված է նրանով, որ այդ բնորոշումներում երբեմն անտեսվում են առանձին կարևոր տարրեր և փոխկապվածություններ: Տարբեր հեղինակների դիրքորոշումներն ու տեսակետները, այսուամենայնիվ, վարչահիրավական այդ ինստիտուտի զարգացման համար որոշակի նշանակություն ունեն: Չնայած դրանցում արտահայտված տարբեր մոտեցումներին, այսուհանդերձ, պետական կառավարման բնույթի ու բովանդակության հարցում դրանք մեծամասամբ համընկնում են:

Վերը նշված կարծիքների համադրումը հնարավորություն է տալիս առաջադրելու պետական կառավարման հետևյալ բնորոշումը. պետական կառավարումը կազմակերպական, ենթաօրենսդրական գործադիր գործունեություն է, որն իրականացվում է տնտեսական, սոցիալ-մշակութային և վարչաքաղաքական բնագավառների ղեկավարման ընթացքում նախատեսված նպատակներին հասնելու համար:

§4. Գործադիր իշխանության հասկացությունը

Չխախտելով պետական իշխանության միասնականության սկզբունքը, իշխանությունների բաժանումը համեմատաբար ինքնուրույն երեք ճյուղերի (օրենսդիր, գործադիր և դատական) օժտում է դրանց յուրահատուկ իրավաբանական-իշխանական լիազորություններով: Իշխանության յուրաքանչյուր ճյուղ (թև) իրականացնում է պետական իշխանության համապատասխան սուբյեկտը՝ մարմինը (կամ մարմինների համակարգը), որը կազմավորվում է որոշակի գործառութային և իրավասության հիմքերով: Ըստ էության, իշխանությունների տարանջատումը՝ լիազորությունների բաժանում է իշխանության երեք թևերի միջև, որոնք պետք է բավականաչափ ինքնուրույն և ուժեղ պետական ապարատի ենթահամակարգեր լինեն և համագործակցեն ու լրացնեն միմյանց, բայց միաժամանակ որոշակիորեն անկախ լինեն, հնարավորություն ունենան վերահսկելու միմյանց և փոխազդել իրար նկատմամբ:

Խորհրդային իշխանության փլուզումից հետո միայն իշխանությունների տարանջատման սկզբունքը Հայաստանի Հանրապետութ-

յունում առաջին անգամ օրենսդրորեն ամրագրվեց «Հայաստանի անկախության մասին» 1990թ. օգոստոսի 23-ի հռչակագրի 9-րդ հոդվածում. «Հայաստանի Հանրապետությունն իր տարածքում ապահովում է ... օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատում...»[1]: Այդ սկզբունքն արձանագրվեց նաև Հայաստանի երրորդ Հանրապետության առաջին Սահմանադրությամբ (5-րդ հոդված):

Իշխանությունների բաժանման սկզբունքը միաժամանակ սահմանում է օրենսդիր իշխանության գերակայությունը և գործադիր ու դատական իշխանությունների ենթաօրենսդրականությունը, այսինքն՝ վերջիններիս գործունեությունը հիմնականում կրում է իրավակիրառ բնույթ:

Ի տարբերություն օրենսդիր ու դատական իշխանության մարմինների, որոնց կառուցվածքը, լիազորությունները և գործունեության կարգը սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքներով (Սահմանադրության 62-րդ և 94-րդ հոդվածներ), կառավարության լիազորությունները՝ Սահմանադրությամբ և օրենքներով (85-րդ հոդվածի հինգերորդ մաս), կառուցվածքը՝ օրենքով, գործունեության կարգը՝ Հանրապետության Նախագահի հրամանագրով (85-րդ հոդվածի վեցերորդ մաս):

Այդ սկզբունքի հետևողական իրականացման շնորհիվ գործադիր իշխանությունը ձեռք է բերում նոր հատկանիշներ: Այն՝ հանձինս կառավարության, հանդես է գալիս որպես երկրորդային, ենթաօրենսդրական մարմին օրենսդիր մարմնի համեմատ, որը սահմանում է դրա կառուցվածքը և լիազորությունները (Սահմանադրության 85-րդ հոդվածի հինգերորդ և վեցերորդ մասեր): Թերևս, այս կապակցությամբ պետական իշխանության միասնական համակարգում գործադիր իշխանությունը կարելի է բնորոշել որպես ենթահամակարգ:

Գործադիր իշխանության հիմնական լիազորությունը ՀՀ օրենքների գործադրումը (կիրառումն) է: Գործադիր իշխանության մարմինների գործառույթների ենթաօրենսդրականությունը կայանում է նրանում, որ գործնականում կենսագործում է օրենքները և ղեկավարվում դրանցով, ինչպես նաև ի կատարումն այդ օրենքների և դրանց համապատասխան ընդունում է ենթաօրենսդրական ակտեր, որոնցով ման-

[1] Տե՛ս ՀՀ գործող օրենքների ժողովածու (1990-1995թթ.), Երևան, 1995, էջ 10:

րամասնվում և կոնկրետացվում են օրենքների դրույթները, լրացնելով Հանրապետության օրենսդրությունը: Ի դեպ, հիշյալ իրավական ակտերի կիրառումն անհնար է առանց գործադիր իշխանության մասնակցության: Այս հարցում առաջնային տեղ է զբաղեցնում գործադիր իշխանության կազմակերպական դերը, որի նպատակն է կարգավորել հասարակական կապերը տնտեսական, սոցիալ-մշակութային և վարչաքաղաքական բնագավառներում: Դրանում է արտահայտվում գործադիր իշխանության աշխատանքը նշված իրավական ակտերի կիրառման գործում: Վերջիններիս կիրառման համար անհրաժեշտ է կազմակերպական, համակարգման ու վերահսկողական գործունեություն և մարդկանց մշտական ու նպատակաուղղված կառավարում:

Գործադիր իշխանությունը պետական իշխանության միակ թևն է, որը միասնական ձևով իրականացնում է և՛ օրենքները, և՛ ենթաօրենսդրական ակտերը, և՛ վերահսկում դրանց կատարումը: Համակարգված գործառույթների իրականացումը գործադիր իշխանության առանձնաշնորհն է, ինչը պայմանավորված է նրանով, որ ՀՀ Սահմանադրությունը, ի տարբերություն ՀՀ Գերագույն Խորհրդի մասին 1991թ. նոյեմբերի 19-ի օրենքի (19-րդ հոդված)[1], օրենսդիր մարմնին օրենքների կատարման նկատմամբ վերահսկողական լիազորությամբ չի օժտել: Այսպիսով, գործադիր իշխանությունը մասնակցում է ոչ միայն իրավաստեղծ ու իրավակիրառ գործունեությանը, այլև օրենսդրության կատարման նկատմամբ իրականացնում է վերահսկողություն:

Փաստենք, որ օրենսդիր իշխանությունն է սահմանում գործադիր իշխանության իրավական կազմակերպման և գործունեության ձևերը: Այս առնչությամբ գործադիր իշխանությունն իր գործունեությունը պետք է համապատասխանեցնի օրենքներին և գործի դրանց սահմաններում: Սակայն այս հարցում գործադիր իշխանությունը, թվում է թե, գործում է առանց վերահսկողության: Իրականում սահմանադրաիրավական նորմերով ՀՀ Ազգային ժողովը լիազորված չէ վերահսկելու գործադիր իշխանության մարմինների կողմից օրենքների իրականացումը, բացառությամբ բյուջետային ոլորտի օրենքների: Դա

[1] Տե՛ս նույն տեղը՝ ՀՀ գործող օրենքների ժողովածու, էջ 194:

բխում է նրանից, որ ընդհանուր առմամբ Ազգային ժողովի հնարավորությունները՝ զգալիորեն ներգործելու պետական կառավարման ոլորտի նկատմամբ, բավականին սակավ են: Մինչդեռ գործադիր իշխանությունը, ի հակակշիռ օրենսդիր իշխանության, օժտված է տեսանելի լիազորություններով:

Կարևոր է նկատել, որ օրենսդիր իշխանության և գործադիր իշխանության մարմինները Սահմանադրությանը համապատասխան առանձին դեպքերում իրականացնում են փոխհարաբերվող գործունեություն՝

1) Ազգային ժողով օրինագծեր ներկայացնելու գործընթացում, կառավարությունը հանդես գալով որպես գործադիր իշխանության միակ սուբյեկտ (75-րդ հոդվածի առաջին մաս), իրականացնում է օրենսդրական նախաձեռնության իր իրավունքը,

2) կառավարությունը՝ որպես օրինաստեղծ գործընթացի մասնակից, կարող է սահմանել իր ներկայացրած օրինագծերի քննարկման հաջորդականությունը Ազգային ժողովում և պահանջել, որ դրանք քվերակության դրվեն միայն իր համար ընդունելի ուղղումներով (75-րդ հոդվածի երկրորդ մաս).

3) պետական բյուջեի եկամուտները նվազեցնող կամ ծախսերն ավելացնող օրենքների նախագծերն Ազգային ժողովն ընդունում է օրինաստեղծ գործընթացին կառավարության պարտադիր մասնակցությամբ՝ միայն վերջինիս եզրակացության համաձայն (75-րդ հոդվածի երրորդ մաս).

4) Ազգային ժողովի բացառիկ իրավասությանն է վերապահված կառավարությանն անվստահություն հայտնելու հարցի լուծումը (84-րդ հոդված):

Նկատի ունենալով գործադիր իշխանության կողմից կարգավորվող հասարակական հարաբերությունների ընդգրկուն բնույթը, ինչպես նաև վարչաիրավական գրականության վերլուծությունը, տարբեր տեսակետեր են հայտնվում գործադիր իշխանության մեկնաբանության և բնորոշման վերաբերյալ: Դա պայմանավորված է նաև նրանով, որ իրավաբանական գրականության և օրենսդրության մեջ, որպես իմաստով մոտ հասկացություններ, հոմանիշներ, շրջանառվում են «գործադիր իշխանություն», «պետական կառավարում», «վարչական իշխանություն», «պետական վարչակազմ» եզրույթները:

Օրինակ, Ա. Ագապովը գտնում է, որ գործադիր իշխանությունը լիազորված պետական մարմինների կազմակերպական գործունեությունն է օրենսդրության իրականացման և օրենքների ու ենթաօրենսդրական ակտերի կատարման նկատմամբ վերահսկողության ոլորտում[1]:

Վարչական իրավունքի մեկ այլ մասնագետ Ի. Բաչիլոն, գործադիր իշխանությունը համարում է ենթահամակարգ, պետական իշխանության ճյուղ, որն իրականացնում է գործադիր-կարգադրիչ գործունեություն ենթակա որոշակի ոլորտներում պետական-իշխանական լիազորությունների իրականացման նպատակով՝ հանրային և առավելապես վարչական իրավունքի մեթոդներով ու միջոցներով[2]:

Գործադիր իշխանությունը՝ պետական իշխանության ճյուղ է, արտահայտված գործադիր իշխանության մարմինների համակարգով, իրականացնում է հասարակության գործերի պետական կառավարում օրենսդրության հիման վրա և գործադրում գործադիր-կարգադրիչ բնույթի պետական-իշխանական լիազորություններ[3]:

Մեկ այլ հեղինակային կոլեկտիվ շատ հակիրճ է բնորոշել իշխանության այդ թևը. գործադիր իշխանությունը ենթաօրենսդրական ճյուղ է և նրա գործունեությունը կրում է իրավակիրառ բնույթ[4]:

Որոշ մասնագետներ, կարևորելով գործադիր իշխանության գործունեության կազմակերպական ուղղությունը, գտնում են, որ դրա խնդիրն է կատարելու ներկայացուցչական իշխանության կարգադրագրերը՝ ի դեմս օրենքների, հրամանագրերի և այլ իրավական ակտերի[5]:

Ի մի բերելով վերոշարադրյալը, ինչպես նաև վարչաիրավական գրականության մեջ գործադիր իշխանության վերաբերյալ արտահայտված տարաբնույթ բնորոշումներն ու կարծիքները, կարելի է տալ այդ իշխանության բնութագրիչ գծերը՝

---

[1] Տե՛ս Агапов А.Б., նշված աշխ., էջ 25:
[2] Տե՛ս Бачило И.Л., նշված աշխ., էջ 29:
[3] Տե՛ս Макарейко Н.В., Черенков В.А. Административное право в определениях и схемах: Учебное пособие. М., 2000, էջ 17:
[4] Տե՛ս Григорян С.А. և ուշներ, նշված աշխ., էջ 7:
[5] Տե՛ս Монохин В.М., Адушкин Ю.С., Багишаев З.А. Российское административное право. М., 1996, էջ 9:

1) գործադիր իշխանությունը Հանրապետության միասնական պետական իշխանության համեմատաբար ինքնուրույն ճյուղ է և սերտորեն փոխհամագործակցում է իշխանության մյուս երկու (օրենսդիր, դատական) ճյուղերի հետ: Համեմատաբար ինքնուրույնությունը պայմանավորված է նրանով, որ իշխանության և ոչ մի ճյուղ բացարձակ անկախ չէ և չի կարող լիովին ինքնուրույն գործել: Օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների փոխհամագործակցության, հավասարակշռման և միմյանց լրացնելու դեպքում է միայն հնարավոր լուծել միասնական պետական իշխանության առջև ծառացած խնդիրները: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ գործադիր իշխանությունը, լինելով պետական իշխանության երեք ճյուղերից մեկը, օժտված է պետական իշխանական համապատասխան լիազորություններով, պետության անունից և հանձնարարությամբ կատարում է նրա գործառույթներն ու խնդիրները, մշակում և գործնականում իրականացնում պետության ներքին քաղաքականությունը, իսկ արտաքին քաղաքականությունը մշակում և իրականացնում է Հանրապետության Նախագահի հետ համատեղ,

2) գործադիր իշխանության ինքնուրույնությունն արտահայտվում է միայն գործառութային-իրավասության ասպարեզում: Դրանից հետևում է, որ իրականացնելով գործադիր լիազորություններ, գործադիր իշխանությունը ՀՀ Սահմանադրության, միջազգային պայմանագրերի, օրենքների կամ Հանրապետության Նախագահի նորմատիվ ակտերի հիման վրա և դրանց կատարումն ապահովելու նպատակով ընդունում է որոշումներ, որոնք պարտադիր են կատարման Հանրապետության ամբողջ տարածքում: Ընդ որում, գործադիր իշխանության բոլոր մարմիններն օժտված են կարգադրիչ լիազորություններով, այսինքն՝ ընդունում են կատարման համար պարտադիր կառավարչական ակտեր:

Փաստենք, որ գործադիր իշխանության սկզբունքային հատկությունը և նշանակությունը իրավակիրառ գործունեությունն է: Այն իրականացնելու համար անհրաժեշտ է կազմակերպական բնույթի աշխատանքներ, որոնք կառավարման բովանդակությունն են կազմում և առաջնահերթ նշանակություն ունեն: Կազմակերպումը հիմնականում ենթադրում է գործադիր իշխանության համակարգի և բոլոր օղակների պատշաճ կազմակերպումը և դրանցից յուրաքանչյուրի լիազորություն-

ների հստակ սահմանումը, ինչպես նաև փոխհամագործակցության համաձայնեցվածությունը, օրենքների և մյուս իրավական ակտերի գործնական կատարումը: Հանրահայտ է, որ օրենքները բովանդակում են միայն վարքագծի մոդել, իսկ դրա իրականացման համար անհրաժեշտ է գործադիր մարմնի կազմակերպական գործողություններ: Հարկ է նշել, որ գործադիր իշխանությունն այդ գործունեությունն իրականացնում է անընդհատ և ամենուր, որտեղ գործում են մարդկանց կոլեկտիվներ: Նշված գործառույթներն առաջնային են համարվում գործադիր իշխանության համար և որպես միասնական պետական իշխանության համակարգի ենթահամակարգ դրանց համապատասխան օգտագործում է պետական իշխանական լիազորություններ,

3) գործադիր իշխանությունը, ստեղծվելով Սահմանադրության 5-րդ հոդվածով ամրագրված իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքին համապատասխան, և որպես միասնական պետական իշխանության անբաժան բաղադրամաս, մշտապես գործում է իշխանության մյուս թևերի հետ համատեղ: Իշխանությունների բաժանման սկզբունքի բացակայության դեպքում գործադիր իշխանությունը սահմանադրաիրավական նշանակությամբ չի կարող գործել,

4) գործադիր իշխանությունը՝ հնարավորություն և ունակություն է ընդունելու իշխանական ակտեր, կազմակերպելու աշխատանքներ և դրանց միջոցով որոշակի ներգործություն ունենալու վարքագծի (գործունեության) նկատմամբ, ինչպես նաև հնարավորություն և իրավունք կառավարելու որևէ մեկին կամ որևէ բան, իր կամքին ենթարկելու ուրիշներին: Այդ իշխանությունն իրականացվում է պետական-կազմակերպական տարբեր անհատական և կոլեկտիվ կազմավորումների հետ հարաբերություններում՝ համապետական մասշտաբով և որպես իրավակիրառ պետական գործառույթ: Գործադիր իշխանությունն իրականացվում է կառավարչական գործունեության ընթացքում և այս առումով այն հաճախ բնութագրվում է որպես վարչական իշխանություն,

5) գործադիր իշխանությունը նույնական չէ գործադիր գործունեության հետ: Վերջինս լինելով պետական գործունեության տեսակ, այլ ոչ թե հենց գործադիր իշխանություն, հանդիսանում է այդ իշխանության իրականացման սոսկ գործնական ձևը: Մինչդեռ, այդպիսի գործունեությունը չի կարող համարվել միասնական պետական իշխա-

նության գործադիր ճյուղի իշխանական գործունեություն: Փաստենք, որ իշխանությունն իրենից ներկայացնում է այդպիսի գործունեության, դրա գործառութային ուղղության, լիազորությունների որոշակիության էության արտահայտություն: Գործադիր իշխանության առանձնահատկություններից ելնելով, այն չի կարելի նույնացնել նաև պետական գործունեության տեսակի, ինչպես և պետական կառավարման հետ, քանի որ վերջինս միշտ բնութագրվել է որպես պետական-իշխանական գործունեության որոշակի տեսակ,

6) գործադիր իշխանությունն իր իրավակիրառ (իրավակատարման) գործունեությունն իրականացնում է հատուկ սուբյեկտների (մարմինների) միջոցով: Իշխանությունների բաժանման սկզբունքին համապատասխան, գործադիր իշխանությունն իր խնդիրներն ու գործառույթներն իրականացնում է գործադիր իշխանության մարմինների (սուբյեկտների) միջոցով, որոնք որոշակի գործառութային ուղղության գործունեություն են իրականացնում: Այդ կապակցությամբ վերջիններս օժտված են գործադիր լիազորություններով,

7) գործադիր իշխանությանն առանձնահատուկ է նաև այն, որ այդ իշխանությունն իրականացնող տարբեր սուբյեկտների (մարմինների) անմիջական տնօրինման տակ են գտնվում ինչպես ֆինանսական, տնտեսական, տեխնիկական, տեղեկատվական, գաղափարական, կազմակերպական հսկայական միջոցները, որոնցում կենտրոնացված է փաստորեն պետության հզորությունը, այնպես էլ բանակը և զինված այլ կազմավորումները, ներքին և արտաքին անվտանգության ծառայությունները, ոստիկանությունը, քրեակատարողական հիմնարկները, հարկադրանքի միջոցներ կիրառելու իրավասությամբ օժտված այլ մարմիններ և այլն:

Չնայած օրենսդիր իշխանության գերակայությանը և դրան որոշ չափով գործադիր իշխանության հաշվետու լինելուն, սահմանադրաիրավական դրույթներն ապահովում են Ազգային ժողովի և կառավարության լիազորությունների հավասարակշռությունը, բացառում դրանց կողմից կամայական որոշումների ընդունումը և ամբողջ իշխանության կենտրոնացումը դրանցից որևէ մեկի մոտ: Բացի այդ, իշխանության թևերի գործունեության հիմնական ուղղություններն ունեն ընդհանուր բնույթ, որն ապահովում է հասարակության բնականոն կենսագործունեությունը:

§5. Գործադիր իշխանության և պետական կառավարման փոխհարաբերությունը

Եթե ՀՀ Սահմանադրությունը մինչ փոփոխություններն օգտագործում էր միայն «գործադիր իշխանություն» հասկացությունը (5-րդ հոդվածի առաջին մաս) և սահմանում. «Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանությունը իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը» (85-րդ հոդվածի առաջին մաս), ապա 2005թ. նոյեմբերի 27-ին ՀՀ Սահմանադրության մեջ կատարված փոփոխությունների արդյունքում 85-րդ հոդվածից հանվել է այդ դրույթը:

Ի տարբերություն իշխանության մյուս ճյուղերի, որոնց վերաբերյալ ուղղակի ամրագրված է. «Հայաստանի Հանրապետությունում օրենսդիր իշխանությունն իրականացնում է Ազգային ժողովը» (62-րդ հոդվածի առաջին մաս), «Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները...» (91-րդ հոդվածի առաջին մաս), ապա Սահմանադրությամբ հստակեցված չէ, թե որ մարմինը կամ մարմիններն են իրականացնում Հանրապետության գործադիր իշխանությունը:

ՀՀ Սահմանադրության փոփոխված տեքստը հավասարապես օգտագործում է «գործադիր իշխանություն» (5-րդ հոդված առաջին մաս) և «գործադիր մարմիններ» (88[1]-րդ հոդվածի երկրորդ մաս) և «պետական կառավարում», «պետական կառավարման մարմիններ», (85-րդ հոդվածի առաջին և վեցերորդ մասեր) հասկացությունները: Սահմանադրահիրավական այս դրույթները անհրաժեշտ են դարձնում պարզաբանելու գործադիր իշխանության և պետական կառավարման հարաբերակցության հարցը:

Ի դեպ, «պետական կառավարում» և «պետական կառավարման մարմիններ» և դրա հետ նույնացվող «գործադիր ու կարգադրիչ մարմիններ», ինչպես նաև «գործադիր ու կարգադրիչ գործունեություն» եզրույթները լայնորեն օգտագործվում էին Հայկական ԽՍՀ 1978թ. Սահմանադրության[1], օրենսդրական այլ ակտերի և իրավաբանական գրականության մեջ:

---

[1] Տե՛ս, օրինակ, 81, 113, 116, 119, 120, 140 և այլ հոդվածներ:

Անհրաժեշտ է ընդգծել, որ Հանրապետության Հիմնական օրենքին և օրենսդրության համաձայն պետական կառավարումը սահմանադրահիրավական ինստիտուտ է: Բացի այդ, ինչպես արդեն հիշատակվել է, լայն առումով պետական կառավարում իրականացնում են պետական բոլոր մարմինները, առանց որի չի կարող գործել պետական-իշխանական կառուցակարգը: Այսպիսով, պետական կառավարումը կրում է բազմաբովանդակ բնույթ, որի ընթացքում գործնականում իրականացվում են պետության կարևորագույն գործառույթները՝ տնտեսական, սոցիալ-քաղաքական ու մշակութային և միջճյուղային բնագավառներում:

Պետական կառավարումը նախկին իմաստով կատարել է գործադիր ու կարգադրիչ գործունեություն, այսինքն՝ պետական կառավարում, իսկ արդի հասկացությամբ՝ նաև գործադիր իշխանության իրականացման գործունեություն: Դա, ըստ տեսաբանների, պայմանավորված է նրանով, որ ***«գործադիր»*** հասկացությունը ինչպես պետական կառավարման (***գործադիր*** ու կարգադրիչ գործունեության), այնպես էլ ***գործադիր*** իշխանության իրականացման համար նախահիմք է հանդիսացել: Ըստ այդմ, գործադիր իշխանությունն առավելապես քաղաքական-իրավական կատեգորիա է, իսկ պետական կառավարումը՝ կազմակերպական-իրավական: Հանրապետության Սահմանադրությունն առանց «խտրականության» որպես պետական-իրավական կատեգորիաներ օգտագործում է և՛ «պետական կառավարում», և՛ «գործադիր իշխանություն» հասկացությունները, և՛ դրանց բառակազմությունները:

Ինչպես արդեն նշվել է, գործադիր իշխանությունը չի կարելի նույնացնել պետական կառավարման հետ, քանի որ վերջինս մշտապես բնութագրվել է որպես պետական-իշխանական գործունեության որոշակի տեսակ: Իր նշանակությամբ պետական կառավարումը պետական գործունեության տեսակ է, որի շրջանակներում իրականացվում է գործադիր իշխանություն: Ընդ որում, այդ իշխանությունը գործնականում իրականցվում է պետական հատուկ ապարատի, ներկայումս՝ գործադիր մարմինների, իսկ ըստ էության պետական կառավարման մարմինների միջոցով: Առանձին գիտնական-վարչագետներ (օրինակ, Ա. Ալյոխինը, Ա. Կորենևը) պատահական չէ, որ պետական կառավարման մարմինները (առանձին դիտողություններով) համարում են գործադիր իշխանության մարմիններ:

Այս առումով գործադիր իշխանության բոլոր սուբյեկտները միաժամանակ պետական կառավարման համակարգի օղակներ են, սակայն որոշակի վերապահումներով, եթե նշված օղակներն այդպիսի սուբյեկտներ են հանդիսանում սահմանադրահիրավական իմաստով: Օրինակ, պետական հիմնարկի ու կազմակերպության վարչակազմը (ադմինիստրացիան), լինելով պետական կառավարման համակարգի օղակ, չի հանդիսանում գործադիր իշխանության սուբյեկտ այն պարզ պատճառով, որ չի ընդգրկվում Սահմանադրության 5-րդ հոդվածով ամրագրված իշխանությունների բաժանման սկզբունքի գործունեության շրջանակների մեջ:

Վերոշարադրյալի կապակցությամբ իրավաբանական գրականության մեջ կարծիք է հայտնվում, որ «պետական կառավարման մարմին» և «գործադիր իշխանության մարմին» տեսակային տարբերությունը պարզաբանվում է պետության կառուցվածքի էվոլյուցիայով, այսինքն՝ Խորհրդային պետության փլուզումով (1991թ.)[1]: Բնականաբար, տարբեր են նաև հետխորհրդային պետություններում պետական իշխանության մարմինների կազմավորման կարգերը:

Անհրաժեշտ է նշել, որ բովանդակային առումով «պետական կառավարում» հասկացությունն ավելի լայն է, քան «գործադիր իշխանություն»-ը: Այս առումով պետական կառավարումը գործունեության այնպիսի տեսակ է, որի նպատակն է գործնականում իրականացնել գործադիր իշխանությունը: Վերջինս գործառութային նշանակությամբ, ըստ էության, կազմում է պետական կառավարման գործունեության բովանդակությունը: Ի դեպ, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ պետական կառավարումը, որպես գործադիր ու կարգադրիչ գործունեություն, չի հակադրվում գործադիր իշխանության իրականացմանը:

Որոշ հեղինակներ, նկատի ունենալով, որ արդի հասկացությամբ գործադիր իշխանության իրականացման կառուցակարգերը լիովին համընկնում են պետական կառավարման հետ, այդ կապակցությամբ պետական կառավարումն իր նշանակությամբ համարում են պետական գործունեության իշխանական առանձնահատուկ տեսակ, որի բովանդակությունը գործադիր իշխանության գործնական իրականացումն է[2]:

---

[1] Տե՛ս Агапов А.Б., նշված աշխ., էջ 22:

[2] Տե՛ս Козлов Ю.М. Административное право в вопросах и ответах: Учебное пособие. М., 2000, էջ 16:

«Գործադիր իշխանություն» հասկացությունը և դրա բառակազմությունները բխում են ժողովրդավար երկրների սահմանադրություններում ամրագրված իշխանությունների տարանջատման սկզբունքից: Այն հիմնարար է նաև Հանրապետության քաղաքական-իրավական համակարգում: Փաստենք, որ պետության խնդիրների ու գործառույթների իրականացման բնագավառում «աշխատանքի բաժանումից» անցում է կատարվել Սահմանադրությամբ ամրագրված «իշխանությունների բաժանման»: Առանձին մասնագետներ եզրահանգում են, որ «աշխատանքի բաժանման» և «իշխանությունների բաժանման» եզրույթների միջև էական տարբերությունները գործնականում բացակայում են[1]: Թերևս, դա է ցույց տալիս նաև Հանրապետության գործադիր իշխանության գործունեությունը:

Ավելին, իրավաբանական գրականության մեջ նշվում է, որ «պետական կառավարում» եզրույթն անկախությունից հետո ընդունված սահմանադրություններում փոխարինվել է «գործադիր իշխանություն» հասկացությամբ: Գործադիր իշխանության խնդրի էությունը և հարաբերակցությունը պետական կառավարման հետ չպետք է հանգեցվի մեկ եզրույթը մյուսով փոխարինելուն: Ներկայումս իրավաբանական և գիտական գրականության մեջ միասնական տերմինաբանություն՝ պայմանավորված իշխանությունների տարանջատման սկզբունքին անցնելու հետ, դեռևս չի ձևավորվել[2]: Մեկ այլ հեղինակ՝ Դ. Բախրախը, գտնում է, որ ինչպես օրենսդրության, այնպես էլ իրավաբանական գրականության մեջ որպես էությամբ շատ մոտ օգտագործվում են «գործադիր իշխանություն», «պետական կառավարում...» հասկացությունները, որոնք ամենաընդհանուր ձևով վարչական իրավունք են՝ կառավարչական իրավունք[3]:

Իրականում դժվար է սպառիչ չափանիշներով սահմանազատել գործադիր իշխանությունը և պետական կառավարումը: Դեռևս, նոր ուսումնասիրություններն առաջընթաց չեն արձանագրել գործադիր իշխանության և պետական կառավարման հարաբերակցության հիմնախնդրի հասկացության ասպարեզում: Դա, թերևս, պայմանավորված է նաև նրանով, որ գործադիր իշխանության խնդիրներն գործնականում իրականացվում են պետական գործունեության այնպիսի տե-

---

[1] Տե՛ս Козлов Ю.М., Попов Л.Л., նշված աշխ., էջ 25:
[2] Տե՛ս Григорян С.А. և մյուսներ, նշված աշխ., էջ 6:
[3] Տե՛ս Бахрах Д.Н. Административное право. Часть общая. М., 1993, էջ 1:

սակի շրջանակներում, ինչպիսին պետական կառավարումն է: Բացի այդ, Հանրապետության Սահմանադրության համակարգում, ինչպես նշվել է, օգտագործվում է և՛ «պետական կառավարում», «պետական կառավարման մարմին», և՛ «գործադիր մարմին» հասկացությունները: «Գործադիր մարմին» («գործադիր իշխանության մարմին») նոր եզրույթը շատ դեպքերում նույնական է խորհրդային տարիներին շրջանառվող «պետական կառավարման մարմին» հասկացությանը:

Սահմանադրությամբ ամրագրված իշխանության յուրաքանչյուր թև ունի իր սուբյեկտը՝ ի դեմս դրա պետական մարմնի (Ազգային ժողով, կառավարություն, դատարաններ): Այդպիսի մարմիններ գործում էին նաև մինչև իշխանությունների տարանջատման սկզբունքի սահմանադրահիրավական ամրագրումը և անհրաժեշտ ուշադրություն էր դարձվում աշխատանքի այդ տեսակների հարաբերակցության նկատմամբ: Թերևս, պետք է համաձայնվել Դ. Բախրախի այն մտքի հետ, որին համապատասխան, գործադիր իշխանությունը՝ պետական (վարչական) իշխանությունն է՝ վերակազմավորված իրավական պետության պայմաններում: Շարունակելով այդ միտքը, նա եզրահանգում է. ժողովրդավարական ձևով կազմակերպված հասարակության պայմաններում, դառնալով երկրորդային և ենթաօրենսդրական, պետական (վարչական) իշխանությունը վերակազմվում է գործադիրի, որը վարչակազմի զարգացման առավել բարձր աստիճանն է[1]: Այս կապակցությամբ ֆրանսիացի գիտնական Ռ. Դրագոն շեշտել է, որ վարչակազմը կոչված է քաղաքական իշխանության ղեկավարությամբ ապահովել օրենքների իրականացումը և գործադրումը: Վարչակազմի նպատակները չեն կարող երբևէ առաջնային լինել, դրանք մշտապես երկրորդային են և կայանում են հիմնադիր պետական մարմինների կողմից նրան հանձնարարված խնդիրների կատարման մեջ[2]:

Գործադիր մարմինները, ըստ որոշ հեղինակների, հավաքական եզրույթ է, որով կարող են նշվել պետական-կառավարչական գործունեության բոլոր սուբյեկտները, ներառյալ գործադիր իշխանության սուբյեկտները, ինչպես նաև կառավարման այն մարմինները, որոնք գործում են գործադիր իշխանության գործնական իրականացման սահմաններից դուրս (օրինակ, տեղական ինքնակառավարման համակարգի գործադիր մարմինները, պետական հիմնարկների ու կազ-

[1] Տե՛ս Бахрах Д.Н., նշված աշխ., էջ 68:
[2] Драго Р. Административная наука. М., 1982, էջ 5-6:

մակերպությունների, հասարակական միավորումների, առևտրային կառուցվածքների կառավարման մարմինները): Սակայն անհրաժեշտ է նկատի ունենալ, որ տեղական ինքնակառավարման մարմինները, չներառվելով պետական մարմինների համակարգի մեջ, լուծում են գործադիր իշխանության առանձին հարցեր, որոնք վերապահվում են պետության կողմից: Առկա է նաև «գործադիր իշխանության սուբյեկտ» և «գործադիր իշխանության մարմին» հասկացությունների նույնականությունը[1]:

Նորանկախ պետությունների իրավաբանական գրականության մեջ որոշակիորեն շեշտվում է, որ իշխանությունների տարանջատման համակարգին անցնելու կապակցությամբ դեռևս միասնական տերմինաբանություն չի ձևավորվել: Սա ակնհայտորեն արտահայտված է նաև ՀՀ Սահմանադրության և Հանրապետության Նախագահի 2007 թ. հուլիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին» հրամանագրի 8-րդ կետում, որի համաձայն «հանրապետական գործադիր մարմիններ» են համարվում ՀՀ նախարարությունները և «կառավարությանն առընթեր ***պետական կառավարման մարմինները***» (ընդգծումն իմն է՝ ***Ռ.Ե.***): Այսինքն՝ «պետական կառավարման մարմին» հասկացությունը նույնացվում է «գործադիր մարմին» հասկացության հետ և «պետական կառավարման մարմինը» միաժամանակ «գործադիր իշխանության մարմին» է: Ի դեպ, հրամանագրի այլ կետերում օգտագործվող «հանրապետական գործադիր մարմիններ» հասկացությանը հավասար օգտագործվում է նաև «հանրապետական գործադիր իշխանության մարմիններ» հասկացությունը և դա այն դեպքում, երբ խոսքը վերաբերում է նույն մարմիններին՝ նախարարություններին և կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմիններին: Այս պարագայում ճիշտ կլիներ օգտագործել «հանրապետական գործադիր իշխանության մարմիններ», այլ ոչ թե՝ «հանրապետական գործադիր մարմիններ»՝ միասնական տերմինաբանությունն ապահովելու նպատակով: Բացի այդ պետք է նկատի ունենալ, որ «գործադիր մարմիններ» հասկացությունն ավելի լայն իմաստ ունի, քան՝ «գործադիր իշխանության մարմինները», քանզի վերջինս,

[1] Տե՛ս Алехин А.П. և ուրիշենը, նշված աշխ., էջ 18-19:

ըստ հրամանագրի, վերաբերվում է միայն պետական-կառավարչական գործունեություն իրականացնող մարմիններին:

Չնայած վերը նշված հասկացությունների նույնացումներին, այսուամենայնիվ, «պետական կառավարում» և «գործադիր իշխանություն» հասկացությունները չեն կարող փոխարինել մեկը մյուսին: Դա, թերևս, պայմանավորված է նրանով, որ արդի պայմաններում պետական կառավարչական գործունեությունը պահպանում է իր կենսունակությունը, քանի որ այդպիսի գործունեությունը մշտապես իրականացվում է և անհրաժեշտ է: Պետական կառավարումը՝ լայն առումով, պետական կառավարչական գործունեության հոմանիշն է և դրա բուն իմաստով՝ գործադիր իշխանության գործնական իրականացման ձևը, իսկ պետական կառավարման մարմինները՝ ոչ միայն գործադիր իշխանության սուբյեկտները, այլև այն մյուս օղակները, որոնք իրականացնում են պետական կառավարչական գործունեություն:

Թերևս անհրաժեշտ է հիշատակել, որ խորհրդային իշխանության տարիներին արտադրության միջոցների և ոչ արտադրական օբյեկտների սեփականության գերակայող բաժինն անմիջականորեն տնօրինում էր պետությունը և, հետևաբար, պետական-կառավարչական գործունեության շրջանակներն ավելի լայն էին: Արդի պայմաններում իրականացվող տնտեսական գործընթացները, շուկայական հարաբերությունների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման զարգացումը կտրուկ նեղացրել են նշված ոլորտներում (հատկապես տնտեսության բնագավառում) պետական անմիջական կառավարման սահմանները: Սակայն գործնական կյանքը պահանջում է ուժեղացնել պետության՝ որպես կառավարման հիմնական սուբյեկտի՝ ի դեմս գործադիր իշխանության, պետական-կառավարչական դերը հասարակական տարաբնույթ հարաբերությունների նկատմամբ: Անշուշտ, պետությունը չի կարող խորհրդային ժամանակաշրջանին յուրահատուկ անմիջական կառավարման գործառույթներ իրականացնել նշված բնագավառներում: Հետևաբար, գործադիր իշխանության մարմինները պետք է իրենց ուշադրությունը կենտրոնացնեն տնտեսական նոր քաղաքականության մշակման և կատարելագործման, կազմակերպական-իրավական հիմքերի ամրապնդման, պետության աջակցության և հատկապես կարգավորման վրա: Ընդ որում, պետական կարգավորումը պետական-կառավարչական գործունեության գործառույթներից է և պետական կարգավորման ու պետական կա-

ռավարման միջև նպատակային նշանակությամբ սկզբունքային տարբերություններ չկան: Վերջիններս իրենց հատկանիշներով լիովին համընկնում են, քանի որ պետությունը, կառավարելով միաժամանակ կարգավորում է, իսկ կարգավորելով՝ կառավարում է, այդպիսով՝ գործնականում իրականացնելով գործադիր իշխանություն:

Առանձին մասնագետներ պնդում են, որ չի կարելի գործադիր իշխանության թևը նույնացնել պետական գործունեության տեսակի հետ: Լուծելով այդ հարցը կարելի է եզրահանգել, որ գործադիր իշխանության խնդիրները լուծվում են գործադիր-կարգադրիչ գործունեության իրականացման միջոցով, որը կոչվում է պետական կառավարում[1]:

Եթե պետական կառավարումն ավանդաբար առնչվում է իր սուբյեկտներին ենթակա օբյեկտների հետ, ապա պետական կարգավորումը՝ առավելապես կազմակերպորեն ոչ ենթակա օբյեկտների նկատմամբ ներգործության հետ: Պետական կարգավորումը ենթադրում է որոշակի կարգուկանոնի հաստատումը, այս կամ այն գործունեության կարգավորումը, տնտեսական ներգործության մեթոդների՝ մաքսային, հարկային ու արտոնյալ պայմանների կիրառումը և այլն:

Բ. Լազարևը վերը նշված հարցի կապակցությամբ հստակ մեկնաբանել է, որ պետական կառավարումն ունի վառ արտահայտված կազմակերպական, գործադիր-կարգադրիչ բնույթ: Դրա գործադիր կողմը կայանում է օրենքների և ներկայացուցչական մարմինների այլ որոշումների իրականացման մեջ: Սակայն գործադիր այդ գործունեությունը հաճախ հանդիսանում է միաժամանակ նաև կարգադրիչ, քանի որ ենթադրում է պետական կառավարման մարմինների կողմից իշխանական ակտերի ընդունում, որոնք պաշտպանվում են պետական հարկադրանքով[2]:

Նշված հարցադրումներից ու կարծիքներից հետևում է, որ պետական կառավարման և գործադիր իշխանության հարաբերակցության գործընթացը վարչական իրավունքի բարդ հիմնահարցերից է և դեռևս համակողմանի ուսումնասիրության կարիք ունի:

---

[1] Տե՛ս Григорян С.А. և ուրիշներ, նշված աշխ., էջ 9:
[2] Տե՛ս Лазарев Б.М., նշված աշխ., էջ 5-7:

ԳԼՈՒԽ 2.
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ԱՌԱՐԿԱՆ, ՄԵԹՈԴԸ ԵՎ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ

§1. Վարչական իրավունքի հասկացությունը և տեղը ՀՀ իրավունքի համակարգում

Վարչական իրավունքը որպես ՀՀ իրավունքի համակարգի ինքնուրույն ճյուղ, կարգավորում է առանձնահատուկ հասարակական հարաբերություններ: Լինելով հանրային իրավունքի առանցքային ճյուղ, վարչական իրավունքը կարգավորում է գործադիր իշխանության (պետական կառավարման) բնագավառում առաջացած հասարակական հարաբերությունները, որոնք ամփոփ կոչվում են կառավարչական (կառավարման):

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ կառավարչական գործունեություն իրականացնում են, ինչպես արդեն նշվել է, և՛ պետական մարմինները, և՛ ոչ պետական կազմավորումները: Սակայն վարչական իրավունքը կարգավորում է այն հասարակական հարաբերությունները, որոնք առաջանում, փոփոխվում և դադարում են գործադիր իշխանության համակարգի կազմակերպման և գործունեության ընթացքում և անմիջականորեն արտահայտում են պետության շահերը:

Ոչ պետական կազմավորումների գործունեության ընթացքում առաջացող կառավարչական հարաբերություններն իրենց բնույթով ներկազմակերպական են և անմիջականորեն չեն արտահայտում պետության շահերը: Սակայն վարչական իրավունքը, օրենսդրությամբ սահմանված կարգով, իր նորմերով կարգավորիչ ներգործություն է իրականացնում ոչ պետական կազմավորումների գործունեության նկատմամբ: Վերջիններս պարտադիր կարգով ենթարկվում են պետական գրանցման, դրանց գործունեության նկատմամբ իրականացվում է պետական վերահսկողություն և հսկողություն, սահմանվում է դրանց փոխհարաբերությունները գործադիր իշխանության սուբյեկտների հետ և այլն:

Վարչական իրավունքի կարգավորիչ դերն առավելապես արտահայտվում է գործադիր իշխանության համակարգի գործունեության

մեջ: Դա կենսագործվում է ՀՀ Սահմանադրությամբ և այլ իրավական ակտերով գործադիր իշխանության սուբյեկտներին վերապահված գործառույթների, խնդիրների ու լիազորությունների իրականացման միջոցով: Այս կապակցությամբ վարչական իրավունքն իր իրավաբանական նշանակությամբ հանդես է գալիս որպես կառավարչական իրավունք կամ կառավարման իրավունք: Պատահական չէ, որ վարչական իրավունքն ընդհանուր առմամբ համարում են կառավարման իրավունք[1]:

Պրոֆեսոր Յու. Կոզլովը մատնանշում է վարչական իրավունքի հինգ գործառույթներ, որոնցում արտահայտվում է դրա կարգավորիչ գործառույթների բազմատեսակ բովանդակությունը՝ իրավակատարողական, իրավաստեղծ, կազմակերպական, համակարգման և իրավապահպան[2]:

Վարչական իրավունքի իրավաբանական ձևերի միջոցով են ապահովվում պետական կառավարման (գործադիր իշխանության) գործունեության առանձնահատուկ՝ գործադիր խնդիրների ու գործառույթների առավել արդյունավետ իրականացումը: Ելնելով գործադիր իշխանության իրականացման ոլորտում պետության և քաղաքացիների շահերից, վարչական իրավունքը կառավարչական հարաբերություններին տալիս է հանրային-իրավական բնույթ:

Այսպիսով, վարչական իրավունքն իրավունքի հիմնարար, կարևորագույն ճյուղերից է և սահմանադրական, քաղաքացիական ու քրեական իրավունքի հետ միասին առաջատար տեղ է գրավում հասարակական հարաբերությունների կարգավորման ասպարեզում:

Հիմք ընդունելով վերը նշված ելակետային դրույթները, ինչպես և վարչական իրավունքի առարկան համարժեք ըմբռնելու համար, հարկ է ներկայացնել վարչագետների մեծամասնության հավանությանն արժանացած իրավունքի այս ճյուղի իրական դերը՝ ՀՀ իրավունքի համակարգում՝

1) վարչական իրավունքն իր կարգավորիչ ներգործությունն իրականացնում է քաղաքացիների, նրանց միավորումների և հանրային տարբեր բնույթի այլ միավորումների մասնակցությամբ այնպիսի հա-

---

[1] Տե՛ս Бахрах Д.Н., նշված աշխ., էջ 1:
[2] Տե՛ս Козлов Ю.М., Попов Л.Л., նշված աշխ., էջ 39:

սարակական հարաբերությունների նկատմամբ, որոնք առաջանում են ոչ թե ինքնին կամ իրավունքի մյուս ճյուղերի նորմերի, այլ միայն այն հարաբերությունների ներգործությամբ, որոնց առաջացումն անմիջականորեն կապված է պետական կառավարչական գործունեության հետ,

2) վարչական իրավունքը՝ որպես հասարակական հարաբերությունների կարգավորիչ, անմիջականորեն իրեն դրսևորում է հատուկ՝ պետական կառավարման (գործադիր իշխանության) ոլորտում: Վերջինս առնչվում է քաղաքացիների անհատական ու խմբային շահերի ապահովման, ինչպես նաև տնտեսական, սոցիալ-մշակութային և վարչաքաղաքական գործընթացների կարգավորման հետ: Առանց գործադիր իշխանության մարմինների, դրանց պաշտոնատար անձանց (գործադիր իշխանության հատուկ սուբյեկտների) մասնակցության նշված հարաբերությունները չեն կարող դասվել վարչական իրավունքի առարկայի շարքը,

3) պետական կառավարման ոլորտում վարչական իրավունքը կարգավորում է այն հասարակական հարաբերությունները, որոնք առաջանում են ոչ միայն գործադիր իշխանության մարմինների և դրանց պատոնատար անձանց կողմից (հատուկ սուբյեկտներ) իրենց խնդիրներն ու գործառույթներն իրականացնելու կապակցությամբ, այլև՝ այդ գործառույթներն ու դրանց հետ կապված լիազորությունները գործնականում կատարելու հիմքով: Վերջին առանձնահատկության շնորհիվ նշված մարմինները և պաշտոնատար անձինք դիտվում են որպես գործադիր իշխանության սուբյեկտներ և օժտվում գործադիր-կարգադրիչ բնույթի հատուկ լիազորություններով,

4) վարչական իրավունքը կարգավորում է այնպիսի հասարակական հարաբերություններ, որոնցում սկզբունքորեն բացակայում է դրա մասնակիցների (կողմերի) իրավաբանական հավասարությունը: Դա պայմանավորված է նրանով, որ վարչահիրավական հարաբերություններում որպես պարտադիր կողմ հանդես է գալիս գործադիր իշխանության մարմինը (պաշտոնատար անձը), որն օժտված է այնպիսի լիազորություններով, որպիսիք չունի հարաբերության մյուս կողմը (մասնակիցը): Այս պարագան հիմք է հանդիսանում, որպեսզի վերջինիս կամքը ստորադասվի նշված մարմնի (պաշտոնատար անձի) միակողմ իրավաբանական-իշխանական կամաարտահայտությանը,

5) վարչական իրավունքի կարգավորիչ դերը հաճախ արտահայտվում է նաև իրավունքի այլ ճյուղերի նորմերի գործողության շրջանակներում: Ենթադրվում է, որ իրենց էությամբ կառավարչական կարող են լինել նաև այն հարաբերությունները, որոնք ընդգրկվում են իրավունքի մյուս ճյուղերի (աշխատանքային, ֆինանսական և այլ) առարկայի մեջ,

6) վարչական իրավունքը կարգավորում է պետական իշխանության մարմինների համակարգի մեջ չմտնող տեղական ինքնակառավարման գործադիր մարմինների և պետական կառավարման մարմինների (պաշտոնատար անձանց) փոխհամագործակցության կապակցությամբ առաջացող հարաբերությունները: Դրանք առավելապես արտահայտվում են այն դեպքերում, երբ տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակվում են իրականացնելու պետական իշխանության մարմինների առանձին լիազորություններ (Սահմանադրության 105-րդ հոդվածի երկրորդ մաս): Նշված պարագայում վարչական իրավունքով կարգավորվող հարաբերություններում գործադիր իշխանության սուբյեկտը (պետական իշխանության մարմինը) կարող է բացակայել, սակայն վերջինս փոխարինվում է իրավաբանական իմաստով հավասարազոր կողմով՝ տեղական ինքնակառավարման մարմնով և օժտվում իրավաբանական–իշխանական բնույթի անհրաժեշտ ծավալի լիազորություններով: Այս դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը հանդես է գալիս պետական իշխանության մարմնի անունից:

Գործադիր իշխանության մարմինների գործունեության պրակտիկան և վարչական իրավունքով կարգավորվող բազմազան կառավարչական հարաբերությունների մասնակիցների առանձնահատկությունների ուսումնասիրությունը հիմք է տալիս առանձնացնելու դրանց առավել բնորոշ հետևյալ տեսակները՝

1) գործադիր իշխանության սուբյեկտների և քաղաքացիների միջև,

2) գործադիր իշխանության սուբյեկտների և հասարակական միավորումների միջև,

3) գործադիր իշխանության սուբյեկտների և տարատեսակ ոչ պետական տնտեսական ու սոցիալ-մշակութային միավորումների, հիմնարկների, կազմակերպությունների միջև,

4) գործադիր իշխանության սուբյեկտների և տեղական ինքնակառավարման գործադիր մարմինների միջև,

5) գործադիր իշխանության սուբյեկտների և դրանց ենթակա պետական հիմնարկների, կազմակերպությունների միջև,

6) գործադիր իշխանության տարբեր մակարդակի սուբյեկտների միջև (վերադաս և ստորադաս, հանրապետական, տարածքային, ճյուղային, միջճյուղային, համաստորադաս և ոչ համաստորադաս և այլն),

7) գործադիր իշխանության մարմինների և դրանց ծառայողների միջև,

8) Հանրապետության գործադիր իշխանության մարմինների և միջազգային կազմակերպությունների, միավորումների միջև:

Վերը թվարկված պետական-կառավարչական հարաբերությունների մասնակիցների մեջ առավել լայն մասնակցություն ունեն քաղաքացիները: Այդ հարաբերության շրջանակներում գործադիր իշխանության մարմինները (պաշտոնատար անձինք) լայն գործունեություն են ծավալում պետական կառավարման բնագավառում քաղաքացիների իրավունքների, ազատությունների ու պարտականությունների իրականացման և նրանց շահերի պաշտպանության ուղղությամբ:

Անհրաժեշտ է նաև ընդգծել, որ թվարկված հարաբերությունների մեջ վարչական իրավունքը չի կարգավորում հարաբերությունները քաղաքացիների միջև, ինչպես նաև հասարակական միավորումների միջև, քանի որ դրանցում բացակայում է վարչական իրավունքով կարգավորվող գործադիր իշխանության հատուկ սուբյեկտը: Այս կարգի հարաբերությունները կարգավորվում են քաղաքացիական օրենսդրությամբ:

Վարչական իրավունքի իրավական ներգործության արդյունավետությունից ելնելով, անհրաժեշտ է հստակ առանձնացնել այն հասարակական հարաբերությունները, որոնք բնորոշ են իրավունքի այս կամ այն ճյուղին կամ հարակից են դրան և դրանցից սահմանազատել այն առաձնահատուկ հարաբերությունները, որոնք կարգավորվում են վարչական իրավունքով:

Իրավունքի տեսությանը համապատասխան վարչական իրավունքին, ի տարբերություն իրավունքի մյուս ճյուղերի, առանձնահատուկ են սուբյետ-օբյեկտային երկու տեսակի հարաբերություններ՝

1) այսպես կոչված, ***բացառիկ իրավական հարաբերություններ,*** որոնք կազմում են միայն վարչական իրավունքի առարկան և ամբողջովին, սպառիչ ձևով կարգավորվում են դրա կողմից (օրինակ, վարչական ակտերի նախապատրաստման և ընդունման կարգը, վարչական ռեժիմները, գործադիր իշխանության մարմինների կարգավիճակը և աշխատանքի կազմակերպումը, ապարատի ծառայողների իրավական վիճակը և այլն),

2) այսպես կոչված, ***հարակից հարաբերություններ,*** որոնք կազմում են վարչական իրավունքի առարկան, սակայն հաճախ կարգավորվում են հանրային իրավունքի մյուս ճյուղերի (սահմանադրական, ֆինանսական և այլ) նորմերով: Այս խմբի հարաբերությունները, հատկապես, շատ են վարչական իրավունքում, նկատի ունենալով վերջինիս կիրառման ամենաընդգրկուն շրջանակները: Դրանք կիրառվում են համատեղ՝ համաձայնեցված կարգով կամ ընդհանուր և մանրամասնող նորմերի շաղկապման միջոցով[1]:

Առանձին վարչագետներ ***վարչական իրավունքի սահմանումը*** շարադրում են հակիճ, մյուսները՝ ծավալուն: Դա պայմանավորված է նրանով, որ պետական կառավարչական հարաբերությունները խիստ հարափոփոխ են, ինչը վերաբերում է և՛ ծավալին, և՛ կիրառման ոլորտներին, ինչպես նաև բովանդակությամբ և իրականացման մեթոդներին: Բացի այդ, վարչական իրավունքի ինստիտուցիոնալ բնորոշման, ինչպես և հետխորհրդային պետություններում իրականացվող վերակառուցման ու կառավարման բարեփոխումների գործընթացների նկատմամբ որոշակիորեն ազդում են արտասահմանյան երկրների կառավարման տեսությունը և պրակտիկան: Նշենք դրանցից մի քանիսը:

Անկախությունց հետո հրատարակված վարչական իրավունքի առաջին համակարգված դասագրքում պրոֆեսոր Դ. Բախրախը վարչական իրավունքը սահմանում է որպես կառավարչական իրավունք, որը կարգավորում է պետական վարչակազմի կազմավորման և գործունեության գործընթացի հարաբերությունները[2]:

Ըստ պրոֆեսոր Յու. Կոզլովի. «Վարչական իրավունքը՝ իրավա-

---

[1] Տե՛ս Тихомиров Ю.А., նշված աշխ., էջ 76-77:
[2] Տե՛ս Бахрах Д.Н. Административное право. М., 1993, էջ 1-2:

կան համակարգի ճյուղ է և իրենից ներկայացնում է իրավական նորմերի ամբողջություն, կոչված կարգավորելու այնպիսի հասարակական հարաբերություններ, որոնք առաջանում են գործադիր իշխանության գործնական իրականացման կապակցությամբ և առիթով (լայն իմաստով՝ պետական կառավարչական գործունեության իրականացման ընթացքում)[1]»:

«Վարչական իրավունքը՝ իրավունքի ինքնուրույն ճյուղերից է և իրենից ներկայացնում է իրավական նորմերի ամբողջություն, որոնցով կարգավորվում են գործադիր իշխանության (պետական կառավարման) բնագավառի հասարակական հարաբերությունները». - նշում է Դ. Օվսյանկոն[2]:

Վարչական իրավունքը պրոֆեսոր Յու. Տիխոմիրովը սահմանում է հետևյալ ձևով. «Վարչական իրավունքը որպես իրավունքի ճյուղ, իրավական նորմերի համակարգ է, որոնք հրապարակվում են գործադիր իշխանության և մյուս մարմինների կողմից պետական կառավարման կազմակերպման ու գործունեության, գործառութային-իրավաբանական ռեժիմների կարգավորման, իրավազոր-պահպանական գործունեության և քաղաքացիների մասնակցության նպատակով»[3]:

Շարադրված բոլոր մեջբերումները բովանդակում են վարչական իրավունքի սահմանման ինչպես ընդհանուր, այնպես էլ առանձնահատուկ բնութագրական գծեր: Դրանցից նաև ենթադրվում է, որ վարչական իրավունքը, ըստ էության, գործադիր իշխանության (պետական կառավարման) կազմակերպման և գործունեության ընթացքում կարգավորում է այնպիսի առանձնահատուկ հասարակական հարաբերություններ, որոնք ընդգրկում են սուբյեկտների բազմազան սոցիալական ոլորտները կարգավորող գործառույթները: Դրանք ամբողջությամբ թվարկել հնարավոր չէ, իսկ մի քանիսի թվարկումը չի ամբողջացնում այդ գործառույթների բովանդակությունը: Մանրամասնել դրանք վարչական իրավունքի սահմանման մեջ, կարծում ենք, նպատակահարմար չէ: Մատնանշելով միայն, որ այդ հարաբերություններն առաջանում են գործադիր իշխանության (պետական

---

[1] Տե՛ս Алехин А.П., Козлов Ю.М. Административное право Российской Федерации. М., 1994, էջ 25, 1999, էջ 31:
[2] Տե՛ս Овсянко Д.М., Административное право, 1995, էջ 3:
[3] Տե՛ս Тихомиров Ю.А., նշված աշխ., էջ 79:

կառավարման) կազմակերպման և գործունեության ընթացքում և ամբողջությամբ ներառում է բազմաբնույթ այդ հարաբերությունների կարգավորիչ դերը, կարծում ենք, բավարար է: Ուստի, վարչական իրավունքը սահմանելիս, գտնում ենք, չպետք է այն ծանրաբեռնել դրանով կարգավորվող հասարակական հարաբերությունների թվարկմամբ, այլ պետք է շեշտը դնել հիմնականի վրա, որից բխում են դրանք:

Ընդհանրացնելով վարչական իրավունքի սահմանման վերաբերյալ արտահայտված տարաբնույթ կարծիքները, փորձենք տալ իրավունքի այդ ինքնուրույն ճյուղի դասագրքային բնույթի սահմանումը, չհավակնելով դրա անվիճելիությանը:

Վարչական իրավունքը՝ իրավական նորմերի ամբողջություն է, որոնք կարգավորում են գործադիր իշխանության (պետական կառավարման) կազմակերպման և գործունեության ընթացքում առաջացող հասարակական հարաբերությունները:

Վարչական իրավունքը, ինչպես նշվել է, ՀՀ միասնական իրավունքի համակարգի ինքնուրույն ճյուղ է և կարգավորում է յուրահատուկ հաարակական հարաբերություններ: Լինելով ՀՀ իրավունքի կառուցվածքի անբաժանելի մասը, վարչական իրավունքը դրա հետ հարաբերվում է, որպես մաս և ամբողջություն: Այս սկզբունքով վարչական իրավունքն իր էությամբ չի տարբերվում իրավունքի մյուս ճյուղերից: Դա պայմանավորված է նրանով, որ ինչպես վարչական իրավունքի, այնպես էլ իրավունքի համակարգի մյուս ճյուղերի նորմերը սահմանվում են դրա համար լիազորված պետական իշխանության մարմնի կողմից, ունեն համապարտադիր բնույթ և դրանց կատարումն երաշխավորվում է հարկադրանքի միջոցով:

Սակայն անհրաժեշտ է նշել, որ վարչական իրավունքն իրավունքի մյուս ճյուղերից տարբերվում է կարգավորման առարկայով և մեթոդով: Այդ յուրահատկությունը կայանում է նրանում, որ վարչական իրավունքի ճյուղը, հաշվի առնելով պետական-կառավարչական գործունեության առանձնահատկությունները, իր կարգավորիչ ներգործությամբ, ի տարբերություն իրավունքի մյուս ճյուղերի, ընդգրկում է հասարակական հարաբերությունների բավականին լայն շրջանակ, որոնք առաջանում են երկրի տնտեսական, սոցիալ-մշակութային և վարչաքաղաքական կյանքում: Այս կապակցությամբ վարչահիրավա-

կան նորմերը հաճախ թափանցում են իրավունքի մյուս ճյուղերի կարգավորիչ գործունեության ոլորտները: Նման երևույթների համար հիմք են հանդիսանում էությամբ փաստացի կառավարչական հարաբերությունների առկայությունն իրավունքի այն ճյուղերում, որոնք ենթակա են կարգավորիչ ներգործության: Հենց դրանում է արտահայտվում վարչահիրավական կարգավորման ձևերի բազմազանությունը:

Նշված առանձնահատկությունները կանխորոշում են վարչական իրավունքի՝ որպես իրավունքի ճյուղի, բովանդակությունն ու նշանակությունը: Միաժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ պետական կառավարման ոլորտում ևս գործում են իրավունքի այլ ճյուղերի նորմեր, որոնցով կարգավորվում են վարչական իրավունքով չընդգրկված, սակայն իրենց կողմից կարգավորման ենթակա ծագած հասարակական հարաբերություններ:

Իր բնույթով լինելով հիմնարար (ֆունդամենտալ) իրավունքի ճյուղ և սերտ փոխկապվածության մեջ գտնվելով իրավունքի մյուս ճյուղերի հետ, հաճախ հիմք են ծառայում արդեն իսկ ստեղծված և գործող կամ նոր ստեղծվող իրավունքի ճյուղերի համար (օրինակ, ֆինանսական, էկոլոգիական,մաքսային, հարկային, ծառայողական և այլն):

Հետևաբար, որպես կանոն, իրավունքի որևէ ճյուղ արդի պայմաններում գոյություն չունի առանց իրավունքի մյուս ճյուղերի հետ սերտ փոխհարաբերության, որը կարևոր նշանակություն ունի ինչպես իրավունքի մյուս ճյուղերի, այնպես էլ հատկապես վարչահիրավական կարգավորման բնույթի համար: Այս առնչությամբ ֆրանսիացի հայտնի վարչագետ Գ. Բրեբանը նշել է, որ չկա հասարակական կյանքի այնպիսի բնագավառ, որը ամբողջովին դուրս մնացած լինի «վարչահիրավական վերահսկողության» ոլորտից[1]:

Եթե իրավական համակարգի առանձին ճյուղեր համարվում են համեմատաբար ինքնուրույն (օրինակ, սահմանադրական, քաղաքացիական, միջազգային, քրեական) և կարգավորում են ստույգ շրջանակի հարաբերություններ, ապա վարչական իրավունքը չունի այդպիսի սահմանափակ խստիվ շրջանակներ: Այդ պատճառով էլ ներկայումս չկա այնպիսի յուրահատուկ հարց, որը կարող է զուտ վար-

[1] Տե՛ս Брэбан Г., նշված աշխ., էջ 21:

չահիրավական համարվել, քանզի դա շոշափում է նաև Հանրապետության միասնական իրավունքի համակարգի մյուս ճյուղերի շահերը: Կան նաև այնպիսի իրավունքի ճյուղեր, մասնավորապես, ֆինանսական, հողային, ջրային, որոնցում արտահայտվում են քաղաքացիաիրավական, քրեաիրավական և վարչաիրավական նորմերի փոխգործողությունը:

Հանրապետությունում իրականացվող պետական ինստիտուտների վերափոխումները, ինչպես նաև ապապետականացման և սեփականաշնորհման կապակցությամբ պետական հատվածի կտրուկ նվազումը, որի հետևանքով տարբեր օբյեկտներ դուրս են մնացել պետական կառավարման մարմինների ուղղակի կառավարման ներգործությունից, ամենևին չի ենթադրում, որ դրանք դուրս են մնացել նաև վարչաիրավական կարգավորիչ հարաբերությունների շրջանակներից: Պարզապես փոփոխվեն են պետական կառավարման իրականացման ձևերն ու մեթոդները:

Վերը հիշատակված պատճառներով չեն նվազել նաև վարչաիրավական նորմերի գործողության շրջանակները և կառավարչական ենթաօրենսդրական ակտերի քանակը: Ընդհակառակը, ավերացել է այդ կարգի իրավական ակտերի թվաքանակը: Հատկապես դա շոշափելի է իրավապահպան հիմանախնդիրների լուծման բնագավառում (օրինակ, 1993-2006թթ. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում կատարված մոտ վեց տասնյակ փոփոխություններն ու լրացումները, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը (18.02.04) և այլ վարչաիրավական ակտեր): Այս կտրվածքով վարչական իրավունքը հանդես է գալիս նաև որպես իրավունքի մյուս ճյուղերի հասարակական հարաբերությունների կարգավորիչ: Այսպես, վարչաիրավական կարգավորիչ նորմերն օգտագործվում են ապահովելու էկոլոգիական, աշխատանքային, հարկային, մաքսային և այլ հարաբերությունները (օրինակ, սահմանում է տարբեր ոլորտներում հսկողություն իրականացնող մարմինների որոշ լիազորությունները, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու կազմակերպական սկզբունքները, հանրային ծառայության ընդունման և դադարման, հարկերի և տուրքերի գանձման կարգը, ինչպես նաև դրանց պահպանման նկատմամբ պետական վերահսկողության կարգը և այլն):

ՀՀ իրավունքի համակարգում վարչահիրավական կարգավորման առանձնահատկությունների մասին նշվել է նաև սույն աշխատանքի առաջին և երկրորդ գլուխների համապատասխան պարագրաֆներում: Վարչական իրավունքի բնորոշ առանձնահատկություններից է նաև փոխառնչությունը ՀՀ իրավունքի համակարգի հարակից ճյուղերի հետ:

§2. Վարչական իրավունքի առարկան

Իրավունքի համակարգը բաղկացած է իրավունքի այնպիսի ճյուղերից, որոնք առաջին հերթին տարբերվում են իրավական կարգավորման առարկայով ու մեթոդով: Ընդ որում, իրավունքի յուրաքանչյուր ճյուղի առարկան այն հասարակական հարաբերություններն են, որոնք կարգավորվում են տվյալ ճյուղի նորմերով:

Վարչական իրավունքը, որպես իրավունքի ճյուղ, կարգավորում է առանձնահատուկ հասարակական հարաբերությունների ամբողջություն, որոնք առաջանում են պետական կառավարման, այսինքն՝ գործադիր իշխանության համակարգի կազմակերպման ու գործունեության ընթացքում: Ավելի կոնկրետ՝ դրանք գործադիր-կարգադրիչ մարմինների կազմակերպման և դրանց, ինչպես նաև ենթակա մի շարք կազմակերպությունների, պետական կառավարման մարմինների ղեկավարների կողմից ներկազմակերպական վարչական գործունեության կապակցությամբ առաջացող հարաբերություններն են: Այդ կարգի կառավարչական հարաբերություններում անմիջականորեն արտահայտվում են պետական շահերը և պետության կառավարչական կամքը: Հենց այս բնույթի հասարակական հարաբերություններն ընդունված է անվանել կառավարչական, որոնք և կազմում են վարչական իրավունքի առարկան:

Այսպիսով, վարչական իրավունքի առարկան ընդգրկում է երկու խումբ կառավարչական բնույթի հասարակական հարաբերություններ՝ ա) պետական կառավարման (գործադիր իշխանության) իրականացման հետ անմիջականորեն կապված հարաբերությունները (հիմնական խումբ) և բ) պետական մյուս մարմինների գործունեության ընթացքում առաջացող այլ՝ մասնավորապես ներկազմակերպական, հարաբերությունները (օժանդակ խումբ):

Այլ կերպ ասած, վարչական իրավունքի առարկան կազմում են այնպիսի կառավարչական հարաբերությունները, որոնք առաջանում, փոփոխվում և դադարում են գործադիր իշխանության գործնական իրականացման կապակցությամբ:

Թերևս, պետք է նկատի ունենալ, որ գործադիր իշխանության մարմինների մասնակցությամբ ոչ բոլոր հասարակական հարաբերություններն են ընդգրկվում վարչական իրավունքի առարկայի մեջ: Օրինակ, եթե գործադիր իշխանության որևէ մարմին քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով ձեռք է բերում գույք, ապա այդպիսի գործարքը չի հանդիսանում գործադիր իշխանության իրականացման գործողություն:

Միաժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել, որ ոչ բոլոր կառավարչական հասարակական հարաբերությունները կարող են լինել վարչական իրավունքի առարկա: Դա պայմանավորված է նրանով, որ կառավարչական գործունեություն իրականացնում են ոչ միայն պետական մարմինները, այլև՝ տարբեր տեսակի ոչ պետական կազմավորումները (օրինակ, հասարակական միավորումները, առևտրային կազմակերպությունները և այլն): Նշված ոչ պետական կազմավորումների հարաբերություններն իրենց բնույթով թեպետ կառավարչական են, սակայն առավելապես արտահայտում են համապատասխան կազմակերպության անդամների շահերն ու կամքը և կապված են սեփական գործերի կազմակերպման (ինքնակազմակերպման) հետ: Վերջիններս, ինչպես վարչական իրավունքի սուբյեկտները, հանդես չեն գալիս պետության անունից և չեն արտահայտում դրա շահերը: Չնայած դրան, ոչ պետական կազմավորումները պարտավոր են ենթարկվել պետական կառավարման բնագավառում սահմանված ընդհանուր իրավական ռեժիմին:

Վարչական իրավունքի առարկան ընդգրկում է նաև կառավարչական այնպիսի բազմազան հարաբերություններ, որոնք երբեմն գործում են իրավունքի մյուս ճյուղերի նորմերում (աշխատանքային, ֆինանսական, էկոլոգիական, ձեռնարկատիրական և այլն): Օրինակ, նշված ոլորտներում օրինականության ապահովման, բնական ռեսուրսների կառավարման կազմակերպման գործում գործադիր իշխանության մարմինների լիազորությունները և այլն:

Վարչական իրավունքի առարկային են վերաբերվում նաև վարչաիրավական կարգավորման այն հարցերը, որոնք առաջանում են ոչ միայն կառավարչական, այլև իրավունքի մյուս ճյուղերի կողմից կարգավորվող հասարակական հարաբերություններից: Նման դեպքերում վարչական իրավունքի առանձնահատկությունն արտահայտվում է նրանում, որ նշված հարաբերությունները պաշտպանելու համար իր տրամադրության տակ ունի իրավաբանական միջոցներ, հանձինս՝ վարչական պատասխանատվության:

Վարչական իրավունքի կարգավորիչ ներգործությունը տարածվում է նաև կազմակերպաիրավական հարաբերությունների վրա, որոնք առաջանում են մասնավորապես պետական իշխանության մյուս ճյուղերի մարմինների գործունեության ոլորտում (օրինակ, Ազգային ժողովի, դատական մարմինների ապարատների աշխատանքների կազմակերպման ընթացքում): Այս կարգի հարաբերությունները կազմում են վարչական իրավունքի առարկան:

Տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակազմերի գործունեության բնագավառում առաջացող կառավարչական հարաբերությունները նույնպես ներառվում են վարչական իրավունքի առարկայի մեջ:

Այսպիսով, վարչական իրավունքի առարկային են վերաբերվում կառավարչական հարաբերությունների այն հիմնական տեսակները, որոնք անմիջական կապված են պետական կառավարման, այսինքն՝ գործադիր իշխանության իրականացման հետ:

Իրավաբանական գրականության մեջ վարչական իրավունքի առարկայի, դրա բովանդակության և կառուցվածքի վերաբերյալ կան տարբեր մոտեցումներ և կարծիքներ: Օրինակ Կ. Բելսկին, անդրադառնալով ժամանակակից վարչական իրավունքի առարկային, այն դասակարգում է երեք ենթաճյուղերի՝ կառավարման իրավունք, ոստիկանական իրավունք և վարչական արդարադատության իրավունք[1]: Կարծում ենք, անտեսելով նշված ենթախմբերի բաժանման բովանդակությունն ու էությունը, ինչպես նաև դրա նպատակահարմարությունը և հիմնավորվածությունը, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ վարչական

[1] Տե՛ս Бельский К.С. К вопросу о предмете административного права// Государство и право, 1997 № 11, էջ 20:

իրավունքի բովանդակության հիմքում հիմնականում իրավապահական խնդիրների լուծումը դնելը խստորեն նեղացնում է վարչական իրավունքի կողմից կարգավորվող հասարակական հարաբերությունների սահմանները:

Պրոֆեսոր Դ. Բախրախը վարչական իրավունքի առարկան պայմանականորեն բաժանում է երկու խմբի՝ ներապարատային հարաբերություններ և գործադիր իշխանության փոխհարաբերությունները տարբեր կազմակերպությունների հետ[1], ապա հակիրճ նշում. «Վարչական իրավունքի առարկան հասարակական հարաբերությունների ամբողջություն է, որոնք առաջանում են գործադիր իշխանության կազմակերպման և գործունեության ընթացքում»:

Յու. Կոզլովը վարչական իրավունքի առարկան խարսխում է, որպես կանոն, պետական կառավարման (գործադիր իշխանության) ասպարեզում առաջացող հարաբերությունների վրա, որը կարծում ենք, նեղացնում է վարչական իրավունքի առարկայի շրջանակները: Անտեսվում են քաղաքացիների, հասարակական միավորումների կարգավիճակը, այդ սուբյեկտների փոխհարաբերությունները գործադիր իշխանության մարմինների հետ[2]:

Մի շարք հեղինակներ, ձևակերպման առումով որոշ չափով շեղվում են մեծամասնության կողմից արդեն իսկ ընդունված բնորոշումից, սակայն բովանդակության տեսանկյունից պահպանում են վարչական իրավունքի առարկայի հասկացությունը: Նրանց կարծիքով. «Վարչական իրավունքի առարկան են կազմում այն հասարակական հարաբերությունները, որոնք առաջանում, փոփոխվում կամ դադարում են գործադիր իշխանություն իրականացնելիս»[3]:

Վերը նշված տարաբնույթ եզրահանգումների ու կարծիքների պայմաններում, իշխանությունների բաժանման սկզբունքին անցնելու կապակցությամբ պետական իշխանության կառուցակարգերի կազմավորումը գործնականում էական կառուցվածքային փոփոխությունների չենթարկեց վարչական իրավունքի առարկան: Վերջինս իրավաբանական իմաստով դեռևս կարգավորում է պետական կառավար-

---

[1] Տե՛ս Бахрах Д.Н., նշված աշխ., էջ 1, 3:
[2] Տե՛ս Алехин А.П. և ուրիշներ, նշված աշխ., էջ 30-31
[3] Տե՛ս Григорян С.А. և ուրիշներ, նշված աշխ., էջ 12: Գրեթե նույն սահմանումն է տալիս պրոֆեսոր Յու. Կոզլովը (տե՛ս նշված աշխ., էջ 23):

ման ոլորտը (պետական-կառավարչական գործունեությունը), որն արդի պայմաններում սահմանադրորեն կոչվում է գործադիր իշխանության իրականացում:

Փաստենք նաև, որ հասարակության զարգացման արդի պայմանները չեն կարող չազդել վարչական իրավունքով կարգավորվող հասարակական հարաբերությունների բնույթի վրա, քանի որ դրանք տարերայնորեն չեն առաջանում և բնականաբար պահանջում են պետական կարգավորում:

Իրականում, պետությունը դեռևս չի կարող իրականացնել անմիջական կառավարման գործառույթ նշված հասարակական հարաբերությունների նկատմամբ, սակայն նկատվում են անցումային ժամանակաշրջանին համապատասխան պետական կառավարման համակարգերի անշտապ ստեղծում, կառավարման ձևերի ու մեթոդների փոփոխում և օրենսդրական կարգավորում:

Վերլուծելով և համադրելով վարչական իրավունքի առարկայի վերաբերյալ կարծիքներն ու բնորոշումները և չհավակնելով երևույթների լրիվ ընդգրկմանն ու ձևակերպման անվիճելիությանը, փորձենք տալ դրա սահմանումը: ***Վարչական իրավունքի առարկան՝ գործադիր իշխանության (պետական կառավարման) ոլորտում հասարակական հարաբերությունների ամբողջություն է, որոնք կարգավորվում են վարչական իրավունքի նորմերով:***

§3. Վարչական իրավունքի մեթոդը

Իրավունքի համակարգի յուրաքանչյուր ճյուղ իրեն յուրահատուկ հասարակական հարաբերությունները կարգավորելիս օգտագործում է տարբեր մեթոդներ: Մասնագիտական գրականության մեջ իրավական կարգավորման մեթոդների բովանդակության հիմնախնդիրը դեռևս վիճարկելի է. հայտնվում են իրարամերժ կարծիքներ: Մասնագետների մի մասը գտնում է, որ իրավունքի բոլոր ճյուղերը կարգավորիչ նպատակներով օգտագործում են իրավունքի միասնական միջոցներ, որը պայմանավորում է հենց իրավունքի էությունը: Մասնագետների մյուս մասն այն կարծիքին է, որ իրավունքի յուրաքանչյուր ճյուղ բացի առարկայից ունի նաև իր սեփական մեթոդը:

Թվարկված տեսակների մեջ նախընտրությունը հեղինակների կողմից տրվում է առաջինին[1]:

Ի հիմնավորումն այդ տեսակետի նշվում է, որ իրավունքի բոլոր ճյուղերը որպես իրավական կարգավորման միջոցներ օգտագործում են ***կարգադրության, արգելքի*** և ***թույլտվության*** եղանակները: Իրավաբանական այս երեք եղանակների ամբողջությունը կազմում է հասարակական հարաբերությունների նկատմամբ իրավական ներգործության միջոցների համալարգը: Անշուշտ, իրավունքի ճյուղերը, ելնելով իրենց առարկայի բովանդակության առանձնահատկություններից, այսինքն՝ կարգավորող հասարակական հարաբերություններից, նշված եղանակները գործնականում կարող են օգտագործել փոքր կամ մեծ ծավալով:

Կարգադրությունը՝ իրավական նորմով սահմանված պահանջների շրջանակում գործելու իրավաբանական ուղղակի պարտականություն է: Ի դեպ, յուրաքանչյուր իրավական նորմ որևէ կարգադրություն (գործելու կարգ) է բովանդակում, որը, սակայն, ելնելով իրավունքի ճյուղից, կարող է բնույթով տարբեր լինել:

Արգելքը՝ իրավաբանական ուղղակի պարտականություն է ձեռնպահ մնալու որոշակի գործողություններ կատարելուց կամ անգործություն դրսևորելուց, որոնք նախատեսված են իրավական նորմի պայմաններով: Ինչպես երևում է, արգելքը փաստորեն նույնպես կարգադրագիր է, սակայն բովանդակային ուղղվածությամբ այլ բնույթ ունի:

Թույլտվությունը՝ իրավական նորմով նախատեսված հնարավորություն է ինքնուրույն ընտրելու վարքագծի այս կամ այն տարբերակը, սակայն դուրս չգալով դրա պայմաններից: Փաստենք, որ թույլտվությունը հարաբերության կողմին գործունեության լիազորություն չի ընձեռում, այլ տալիս է միայն համապատասխան իրավական նորմով սահմանված վարքագծի տարբերակի ընտրության հնարավորություն:

Նշված իրավական կարգավորման երեք հիմնական միջոցների

---

[1] Տե՛ս Алехин А.П. և ուրիշներ, նշված աշխ., էջ 31-32: Козлов Ю.М., Попов Л.Л., նշված աշխ., էջ 31: Алексеев С.С., նշված աշխ., էջ 156-157: Габричидзе Б.Н. և ուրիշներ, նշված աշխ., էջ 32-33:

(կարգադրագիր, արգելք և թույլտվություն) պարզաբանումները ցույց են տալիս, որ դրանց տարբերակումը պայմանավորված է իրավական նորմով սահմանված պահանջների բնույթով:

Իրավունքի համակարգի տարբեր ճյուղերի կարգավորիչ մեթոդի բովանդակության ուսումնասիրությունն ու համեմատությունը ցույց են տալիս, որ դրանց միջև էական առանձնահատկություններ կան և անտեսել դրանք հնարավոր չէ: Օրինակ, եթե համեմատենք ՀՀ իրավունքի համակարգի երկու ճյուղերի՝ վարչական իրավունքի և քաղաքացիական իրավունքի կարգավորիչ մեթոդները, ապա դրանք բովանդակությամբ խիստ տարբերվում են միմյանցից: Մասնավորապես, վարչական իրավունքի մեթոդն օրենսդրորեն առանձնանում է կառավարչական հարաբերությունների կարգավորման յուրահատուկ բնույթով, գործադիր իշխանության էությամբ, որն իրականացվում է հատուկ տեսակի պետական մարմինների կողմից: Հաճախ առանձնանում է նաև վերջիններիս ստորակարգային (հիերարխիկ) բնույթը: Ավելին, վարչահրավական հարաբերություններում կողմերից մեկը հանդես է գալիս կառավարողի դերում, իսկ մյուսը՝ կառավարվողի, և այս առումով հիմնականում բացառվում է կողմերի իրավահավասարությունը և այլն: Հետևաբար, այս կարգի միակողմ-իշխանական, գլխավորապես ոչ իրավահավասար հարաբերությունները յուրահատուկ են միայն վարչական իրավունքին:

Մինչդեռ, քաղաքացիական իրավունքը, կարգավորելով գույքային և դրա հետ կապված, ինչպես նաև չկապված այլ հարաբերություններ, ի տարբերություն վարչական իրավունքի, սահմանում է կողմերի (մասնակիցների) իրավաբանական հավասարություն, որը ամրագրվում է կողմերի կամքն արտահայտող պայմանագրի մեջ: Ընդ որում, վերջինս հաճախ կնքվում է կողմերի կամաարտահայտությամբ, փոխհամաձայնեցված ժամկետով և փոխադարձ իրավունքներով ու պարտականություններով: Այս առնչությամբ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքն ամրագրում է, որ մեկ կողմի՝ մյուսի վարչական կամ այլ իշխանական ենթակայության վրա հիմնված գույքային՝ ներառյալ հարկային, ֆինանսական և վարչական հարաբերությունների նկատմամբ քաղաքացիական օրենսդրությունը և այլ իրավական ակտերը չեն կիրառվում, եթե այլ բան չի նախատեսված օրենսդրությամբ (1-ին հոդվածի 6-րդ կետ):

Հետևաբար, վարչական իրավունքն իր կարգավորիչ գործառույթներն իրականացնելիս, կառավարչական հասարակական հարաբերությունների և դրանց մասնակիցների (կողմերի) վարքագծի նկատմամբ, ի տարբերություն քաղաքացիական իրավունքի, ներգործում է ոչ թե դատական կարգով, այլ արտադատական առանձնահատուկ մեթոդներով: Բացի այդ, վարչաիրավական և քաղաքացիաիրավական հարաբերություններում օգտագործվում են էապես տարբեր կարգավորիչ մեթոդներ, որոնք արտահայտում են դրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունները:

Այսպիսով, իրավական համակարգի յուրաքանչյուր ճյուղ՝ անկախ նրանից, թե կարգավորվում է իրավահավասար կամ ոչ իրավահավասար կողմեր ունեցող հասարակական հարաբերություններ (առարկա), օգտագործում է իրավական համակարգի բոլոր ճյուղերի համար միասնական իրավական կարգավորիչ միջոցներ (մեթոդներ), որոնք տարբերվում են միայն կարգավորող մեթոդի բնույթով: Չպետք է միաժամանակ մոռանալ այն, որ վարչական իրավունքը կարգավորում է նաև հորիզոնական հարաբերություններ, որի կողմերն իրավահավասար են: Հենց նշված առանձնահատկություններով է պարզաբանվում վարչաիրավական մեթոդը:

Որպես ՀՀ իրավունքի համակարգի ինքնուրույն ճյուղ՝ վարչական իրավունքն օգտագործում է իրեն յուրահատուկ բազմազան ու բազմաբնույթ մեթոդներ: Ինչպես ցույց է տալիս պրակտիկան, վարչական իրավունքը, իբրև վարչաիրավական կարգավորման մեթոդներ, հիմնականում օգտագործում է կարգադրագրերը և արգելքները, սակավ դեպքերում՝ թույլտվությունը: Ի դեպ, քաղաքացիաիրավական կարգավորման համար առաջնային նշանակություն ունի թույլտվության մեթոդը, քրեաիրավականի համար՝ արգելքները և այլն:

Վարչական իրավունքի առարկան և կարգավորիչ մեթոդները կարևոր դեր են խաղում նաև ՀՀ իրավունքի համակարգի առանձին ճյուղերի կողմից հարակից, երբեմն էլ համընկնող հասարակական հարաբերությունները սահմանազատելիս, մասնավորապես, բնապահպանության, գույքային և այլ հարաբերությունների ոլորտում:

Վերը նշված հասարակական հարաբերությունների իրավական կարգավորումն էլ կոչվում է վարչական իրավունքի (վարչաիրավական) մեթոդներ:

Նկատի ունենալով վերոշարադրյալը, մասնագիտական գրականության մեջ արտահայտված կարծիքները, ինչպես նաև պետական կառավարչական գործունեության և վարչական իրավունքի առարկայի էությունը՝ կարելի է ձևակերպել վարչաիրավական կարգավորման հարաբերությունների առանձնահատկությունները:

Նախ, վարչական իրավունքի մեթոդը ենթադրում է ***վարչաիրավական հարաբերության կողմերի (մասնակիցների) անհավասարությունը:*** Դա պայմանավորված է նրանով, որ կարգավորիչ հարաբերության կողմերից մեկն օժտված է որոշակի ծավալի իրավաբանական-իշխանական բնույթի լիազորություններով, որն արտահայտվում է իշխանություն-ենթակայություն հարաբերակցությամբ և հասցեագրվում է կարգավորվող հարաբերության մյուս կողմին և պարտադիր է վերջինիս համար: Նշված բանաձևից հետևում է, որ այդ կարգի լիազորություններ չեն կարող վերապահվել հարաբերության երկու կողմին և հետևաբար մի կողմի կամաարտահայտությունը հավասարազոր չէ մյուս կողմի կամաարտահայտությանը:

Երկրորդ, վարչական իրավունքի մեթոդն առավել ցայտուն է արտահայտվում կարգադրիչ բնույթի իրավական միջոցների, այսինքն՝ ***կարգադրագրերի*** (այդ թվում արգելքների) ***մեջ:*** Ընդ որում, այդպիսի միջոցների ձեռնարկումը վերապահված է կարգավորվող հասարակական հարաբերությունների պարտադիր մասնակցին (կողմին)՝ գործադիր իշխանության մարմնին (պաշտոնատար անձին):

Երրորդ, վարչական իրավունքի մեթոդը կոնկրետ կառավարչական հարաբերություններում (կառավարողի և կառավարվողի միջև) մի դեպքում արտահայտվում է այնպես, որ կառավարողն օժտվում է ***իրավաբանական-իշխանական լիազորություններով,*** մինչդեռ կառավարվող կողմն օժտված չէ և չի կարող օժտվել այդպիսի լիազորություններով (օրինակ, հասարակական կազմակերպությունը, քաղաքացին), իսկ մյուս դեպքում՝ կառավարող կողմն ունի ավելի լայն շրջանակի լիազորություններ, քան կառավարվող կողմը (օրինակ, գործադիր իշխանության ստորադաս մարմինը, ենթակա պաշտոնատար անձը):

Չորրորդ, վարչական իրավունքի մեթոդը, վարչաիրավական կարգավորման ոլորտում առավելապես լինելով իշխանական և միակողմանի, անհրաժեշտության դեպքում չի բացառում նաև այնպիսի ի-

ռավական միջոցների օգտագործումը, որի արդյունքում կողմերի համար կարող են առաջանալ ***հավասար կառավարչական հարաբերություններ*** (օրինակ, նախարարությունների միջև, ՀՀ կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինների միջև):

Ի մի բերելով վերը շարադրվածը, կարող ենք ընդգծել, որ վարչական իրավունքի մեթոդի էությունը հիմնականում կարող է արտահայտվել հետևյալում՝

1) պետական կառավարման բնագավառում վարչաիրավական համապատասխան նորմով (կարգադրագրով) ***որոշակի գործողության կատարման կարգի սահմանում:*** Օրինակ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի[1] 8-րդ հոդվածը սահմանում է, որ վարչական իրավախախտում կատարած անձը ենթակա է պատասխանատվության իրավախախտումը կատարելու ժամանակ և վայրում գործող օրենսդրության հիման վրա: Նշված կարգը չպահպանելու դեպքում իրավախախտողի նկատմամբ վարչական պատասխանատվության միջոցներ կիրառելն իրավաչափ չէ: Կամ նույն օրենսգրքի համաձայն՝ վարչական տույժ նշանակելու մասին որոշումը կատարման ենթակա չէ, եթե այն ի կատար չի ածվել կայացման օրվանից երեք ամսվա ընթացքում, իսկ առանձին դեպքերում՝ մեկ տարվա ընթացքում (302-րդ հոդված).

2) ***որոշակի գործողությունների կատարման արգելում***՝ սպառնալով կիրառել իրավաբանական պատասխանատվության միջոցներ (օրինակ, կարգապահական, վարչական և այլն): Այսպես, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» 2004թ. փետրվարի 18-ի ՀՀ օրենքին համապատասխան, իրավաբանական և ֆիզիկական անձինք վարչական մարմիններ կեղծ տվյալներ, տեղեկություններ ներկայացնելու դեպքում ենթակա են պատասխանատվության (10-րդ հոդված),

3) վարչաիրավական ակտով սահմանված ***պատշաճ վարքագծի տարբերակներից մեկի ընտրության հնարավորության տրամադրում*** (թույլտվության «կոշտ» տարբերակ): Ի դեպ, այս տարբերակի թույլտվությունը, որպես կանոն, ունի պաշտոնատար անձանց վարքագիծը կարգավորելու նպատակ: Բացի այդ, վերջինս իրավասու չէ

[1] Այսուհետ՝ Վարչ. օր.:

շրջանցելու վերապահված սպառիչ ընտրության տարբերակը: Օրինակ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 15-րդ և 21-րդ հոդվածներին համապատասխան, վարչական տույժեր նշանակելու իրավունք ունեցող մարմինները (պաշտոնատար անձինք) կարող են այդպիսի տույժեր նշանակելու փոխարեն իրավախախտման վերաբերյալ նյութերը հանձնել համապատասխան մարմիններին՝ մեղավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելու համար: Եթե կատարված վարչական զանցանքը նվազ նշանակություն ունի, ապա նույն մարմինները (պաշտոնատար անձինք) կարող են իրավախախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ,

4) վարչաիրավական նորմով սահմանված որոշակի պայմանների դեպքում ***իր հայեցողությամբ գործելու հնարավորության տրամադրում*** (թույլտվության «մեղմ» տարբերակ): Թույլտվության այս տեսակը հիմնականում վերաբերում է քաղաքացիներին՝ նրանց սուբյեկտիվ իրավունքներին: Օրինակ, տասնութ տարին լրացած ՀՀ քաղաքացիներն անմիջականորեն պետական կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունք ունեն (Սահմանադրության 30-րդ հոդված): Սակայն քաղաքացին ինքն է որոշում այդ իրավունքից օգտվելու կամ չօգտվելու հարցը:

Այսպիսով, վարչական իրավունքի կարգավորող ներգործության յուրաքանչյուր միջոց (կարգադրագիր, արգելք, թույլտվություն), անկախ արտահայտման ձևից, բովանդակում է իշխանական (հրամայական) բնույթ: Այս կարգի կառավարչական հարաբերությունները տեսության մեջ հաճախ բնութագրվում են որպես ***իշխանահարաբերություններ:*** Սակայն վերջինս արտահայտվում է ոչ միայն վարչաիրավական կարգավորման, այլև իրավական համակարգի մյուս ճյուղերի (ֆինանսական, էկոլոգիական, քրեական և այլն) իրավական կարգավորման ոլորտում:

§4. Վարչական իրավունքի սուբյեկտները

Սույն աշխատանքի նախորդ հարցերը շարադրելիս որոշ չափով անդրադարձել ենք «գործադիր իշխանության սուբյեկտ» («կառավարման սուբյեկտ») նշանակությանն օբյեկտների հետ փոխհարաբերություններում:

Իրավաբան-գիտնականների մեծամասնության կարծիքով ***վարչական իրավունքի սուբյեկտ է հանդիսանում անձը կամ կազմակերպությունը, որը վարչական իրավունքի նորմերին համապատասխան կարող է կառավարչական հասարակական հարաբերությունների մասնակից (կողմ) լինել:***

Իրավաբանական գրականության մեջ նաև ավելի հակիրճ է սահմանվում այդ հասկացությունը՝ վարչաիրավական հարաբերության սուբյեկտ է հանդիսանում նա, ով օժտված է վարչական իրավունքներով ու պարտականություններով[1]:

Վարչական իրավունքի սուբյեկտները բազմազան են և այդպիսիք են համարվում ՀՀ քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք. պետական մարմինները, դրանց կառուցվածքային ստորաբաժանումները, ինչպես նաև հիմնարկները և պետական այլ կազմակերպությունները, հասարակական միավորումները, հանրային (պետական և համայնքային) ծառայողները, այն հասարակական կազմավորումների ներկայացուցիչները, որոնք ունեն վարչական պարտականություններ և իրավունքներ: Ի դեպ, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ վարչաիրավական հարաբերությունների սուբյեկտներ են հանդիսանում ոչ թե պետական կազմակերպությունները, հիմնարկները, հասարակական և այլ միավորումները, այլ դրանց կառավարման մարմինները՝ ադմինիստրացիան (վարչակազմը, կառավարչությունը):

Նշված սուբյեկտներին միավորում է մեկ ընդհանուր առանձնահատկություն՝ վարչական իրավասուբյեկտություն՝ վարչական իրավունակություն և վարչական գործունակություն ունենալը: Միայն իրավական այս առանձնահատկությունների դեպքում անձը կամ կազմակերպությունը կարող է դառնալ վարչաիրավական հարաբերության սուբյեկտ:

---

[1] Տե՛ս Коренев А.П., նշված աշխ., էջ 54-55, Бахрах Д.Н., նշված աշխ., էջ 21-22:

Վարչական իրավունակությունը՝ ընդհանուր իրավունակության արտահայտությունն է, այսինքն՝ տվյալ սուբյեկտի հնարավորությունն է մտնելու տարբեր տեսակի իրավահարաբերությունների մեջ, ունենալու սուբյեկտիվ իրավունքներ և պարտականություններ:

Վարչական գործունակությունը՝իրավական պարտականությունների և իրավունքների համապատասխան համալիր ձեռք բերելու և դրանց իրականացման համար պատասխանատվություն կրելու ունակություն է:

Եթե իրավունակությունը նախապայման է տվյալ սուբյեկտի մասնակցությամբ իրավահարաբերության առաջացման համար, ապա այդ բնագավառում պարտականություններ և իրավունքներ ունեցող յուրաքանչյուրը դիտվում է որպես վարչական իրավունքի սուբյեկտ:

Հետևաբար, եթե անձը կամ կազմակերպությունը վարչաիրավական նորմերով օժտված է այդ ոլորտում պարտականություններով և իրավունքներով, համարվում է վարչական իրավունքի սուբյեկտ: Սակայն, լինելով վարչական իրավունքի սուբյեկտներ, դրանք կարող են վարչաիրավական հասարակական հարաբերությունների սուբյեկտներ դառնալ միայն վարչական իրավունքի նորմերով սահմանված պայմանների պահպանման դեպքում:

Այս առնչությամբ չի կարելի միայն արտաքուստ իրար նման վարչական իրավունքի սուբյեկտները նույնացնել վարչաիրավական հարաբերության սուբյեկտների հետ: Դրանց էական տարբերությունն արտահայտվում է հենց վարչական իրավունակության և վարչական գործունակության միջև: Վարչական իրավունքի սուբյեկտները դառնում են վարչաիրավական հարաբերության սուբյեկտներ, երբ ունեն կոնկրետ վարչաիրավական հարաբերություններում գործնական ունակություն իրականացնելու վարչական գործունակությունը: Անտարակույս, վարչական իրավունքի սուբյեկտները վարչաիրավական հասարակական հարաբերությունների սուբյեկտներ են դառնում, երբ ունենում են վարչական գործունակություն: Այսպիսով, վերջինս հանդիսանում է անձի, կազմակերպության վարչաիրավական կարգավիճակի կարևորագույն տարրերից մեկը՝ նրանց տալով վարչական իրավունքի սուբյեկտների հատկություն: Ընդ որում, խոսքը վերաբերվում է դրանց գործնական ունակությանը կոնկրետ վարչաիրավական

հարաբերության շրջանակներում գործնականում իրականացնելու իրենց վարչական իրավունակությունը կառավարչական գործունեության ասպարեզում: Այս կապակցությամբ դրանք պետք է ունենան վարչական գործունակություն:

Հետևաբար, վարչական գործունակությունը ենթադրում է սուբյեկտի ունակությունն իր գործողություններով ձեռք բերելու իրավունքներ, ինչպես նաև ունենալու իրավաբանական պարտականություններ և պատասխանատվություն կրելու սեփական գործողությունների համար:

Չնայած գործնականում միշտ չէ, որ հնարավոր է հստակ սահմանազատել վարչական իրավունակությունը և վարչական գործունակությունը, այնուամենայնիվ, վարչաիրավական կարգավորմանը բնորոշ են վարչական իրավասուբյեկտության երկու տարրերի՝ վարչական իրավունակության և վարչական գործունակության հստակ տարանջատման մի շարք դեպքեր: Դա պայմանավորված է նրանով, որ նշված երկու տարրերը, ի տարբերություն քաղաքացիական իրավունքի, հաճախ ծագում են միաժամանակ: Գործնականում դա հիմնականում վերաբերվում է կառավարման մարմիններին: Վերջիններիս վարչական իրավունակությունը և վարչական գործունակությունը ծագում են միաժամանակ՝ այդ մարմինների ստեղծմամբ և իրավասության սահմանմամբ: Այդ իրավասության մեջ արտահայտվում է դրանց վարչական իրավունակությունը, իսկ վերապահված լիազորությունների մեջ վարչական գործունակությունը (ունակությունը մասնակցելու վարչաիրավական հարաբերություններին): Այսպես, ՀՀ Սահմանադրության 89-րդ հոդվածը սահմանում է կառավարության լիազորությունները և դրանց համապատասխան իրավասությունը, որոնք միասին արտահայտում են կառավարության՝ որպես վարչական իրավունքի սուբյեկտի և՛ իրավունակությունը, և՛ գործունակությունը:

Իրավունքի ընդհանուր տեսության մեջ իրավունքի բոլոր սուբյեկտները բաժանվում են երկու խմբի՝ ***քաղաքացիներ*** և ***կազմակերպություններ:*** Վարչական իրավունքի առանձնահատկություններից ելնելով, դրանք կարող են լինել՝ 1) ***անհատական սուբյեկտներ*** և 2) ***կոլեկտիվ սուբյեկտներ:***

Վարչական իրավունքի ***անհատական սուբյեկտներ են համարվում՝*** ՀՀ քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, քաղաքա-

ցիություն չունեցող անձինք, ինչպես նաև ***հատուկ անհատական սուբյեկտները***՝հանրային ծառայողները (պետական և համայնքային ծառայողները), այդ թվում պաշտոնատար անձինք, ոչ պետական տարբեր տեսակի առևտրային կառուցվածքների ղեկավարները: Հատուկ անհատական սուբյեկտների առանձնահատկությունը կայանում է նրանում, որ նրանք իրենց լիազորություններն իրականացնելիս գործում են ոչ թե որպես անհատներ, այլ՝ որպես մարմին, կազմակերպության ներկայացուցիչ: Այս առնչությամբ իրենց հատուկ իրավական կարգավիճակով վերջիններս տարբերվում են վարչական իրավունքի մյուս անհատական սուբյեկտներից: Քանի որ հատուկ անհատական սուբյեկտի գործողությունը կազմակերպության համար առաջացնում է իրավաբանական հետևանքներ, ուստի նրանք պետք է ճանաչվեն կազմակերպության գործողություններով: Նման պայմաններում որպես իրավահարաբերության սուբյեկտ հանդես է գալիս ինքը՝ կազմակերպությունը, այլ ոչ թե դրա անունից գործող պաշտոնատար անձը:

Վարչական իրավունքի ***կոլեկտիվ սուբյեկտները***՝ քաղաքացիների տարբեր բնույթի պետական և ոչ պետական միավորումներն են:

Վարչական իրավունքի ***պետական սուբյեկտների*** թվին են դասվում՝ գործադիր իշխանության (պետական կառավարման) մարմինները, դրանց կառուցվածքային այն ստորաբաժանումները, որոնք օժտված են անհատական իրավասությամբ, պետական հիմնարկները և պետական այլ կազմակերպությունները:

Վարչական իրավունքի ***ոչ պետական սուբյեկտներ*** կարող են լինել տեղական ինքնակառավարման գործադիր մարմինները, համայնքային կազմակերպությունները, հասարակական միավորումները (կուսակցությունները, հասարակական կազմակերպությունները, միությունները և այլն), առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունները, արտասահմանյան ոչ պետական կազմակերպությունները և այլն:

Որպես վարչական իրավունքի սուբյեկտներ կարելի է քննարկել Հայաստանի Հանրապետությունը, պետական և ոչ պետական արտադրական կազմակերպությունները և հիմնարկները: Չնայած դրանք օժտված են վարչական իրավունակությամբ, սակայն կոնկրետ վարչաիրավական հարաբերություններին չեն մասնակցում, քա-

նի որ վարչական գործունակությունը պատկանում է դրանց ներկայացնող գործադիր իշխանության կամ կառավարման մարմիններին:

Վարչական իրավունքի սուբյեկտների վերը նշված դասակարգումը նպատակ ունի խմբավորելու դրանք՝ վերապահված պետական-իշխանական լիազորությունների հատկանիշներին համապատասխան:

Ինչպես նկատում ենք, վարչական իրավունքի սուբյեկտների համակարգն ավելի բարդ է, քան ցանկացած իրավունքի ճյուղի սուբյեկտների համակարգը:

Վարչական իրավունքի սուբյեկտների վերաբերյալ քննարկվող հարցի կարևոր պայմանը վարչական իրավունակության և վարչական գործունակության ծագման պահն է: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիների վարչական իրավունակության և գործունակության ծագման պահերը՝ որպես վարչական իրավունքի և վարչահիրավական հարաբերությունների սուբյեկտների, չեն համընկնում: Այս պարագան բնութագրական է քաղաքացիների վարչահիրավական կարգավիճակի համար: Նրանց իրավունակությունն առաջանում է ծննդյան պահից, իսկ գործունակությունը, որոշ դեպքերում 16 տարեկանից, առանձին դեպքերում ավելի վաղ տարիքից,[1] իսկ ամբողջ ծավալով՝ 18 տարեկանից:

Գործադիր մարմինների և դրանց պաշտոնատար անձանց համար վարչահիրավական հասարակական հարաբերություններին մասնակցելը նրանց ուղղակի պարտականությունն է և վերապահված լիազորությունների գործնական իրականացման, հետևաբար՝ նաև իրավունակության հիմնական ձևը: Նույն ձևով է հարցը լուծվում նաև պետական և ոչ պետական կազմակերպություններում, հիմնարկներում ու կազմակերպություններում:

Իրավաբանական անձանց վարչական իրավունակությունը և վարչական գործունակությունը ծագում է դրանց պետական գրանցման պահից: Համանման ձևով է կարգավորվում տարբեր տեսակի ոչ պետական բնույթի առևտրային կազմավորումների հարցը: Հասարակական միավորումների համար պետական գրանցումը պարտադիր է

[1] Տե՛ս «Հասարակական կազմակերպության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի երկրորդ մաս:

համարվում միայն իրավաբանական անձի կարգավիճակ ձեռք բերելու համար, այլապես՝ այդ միավորումների վարչական իրավունակությունը և վարչական գործունակությունը ծագում է դրանց կազմակերպման պահից:

§5. Վարչական իրավունքի գիտությունը

Վարչական իրավունքը, կարգավորելով լայն շրջանակի հասարակական հարաբերություններ, հանդես է գալիս որպես իրավունքի ճյուղ, որպես իրավունքի գիտության ճյուղ և որպես ուսումնական դասընթաց: Եթե վարչական իրավունքը՝ որպես փոխկապակցված իրավական նորմերի համակարգ, կարգադրագրում է պատշաճ վարքագիծ, ապա վարչական իրավունքի գիտությունը հետազոտում, դասակարգում և համակարգում է այդ նորմերը, միավորում է դրանք՝ ըստ իրավական ինստիտուտների, և ներկայացնում որոշակի համակարգով:

Լինելով մարդկային գործունեության ոլորտ, վարչական իրավունքի գիտությունը՝ որպես իրավաբանական գիտություն, մասնագետների միջոցով ուսումնասիրում, պարզաբանում է վարչաիրավական երևույթները: Ճյուղի գիտությունն ընդգրկում է նաև վարչական իրավունքի նորմերի, ինստիտուտների, հասկացությունների և կատեգորիաների վերաբերյալ կուտակված և համակարգված գիտելիքները, որոնք մշակելու և կշռադատված տեղեկատվություն դարձնելու նպատակով օգտագործվում են մեթոդոլոգիական համապատասխան միջոցներ: Այս միջոցներն էլ կազմում են վարչական իրավունքի գիտության կազմը (բաղկացությունը), որը ներառում է նաև գիտության առարկան, մեթոդը և համակարգը, գիտական տերմինաբանությունը, գիտության կատեգորիան (տեսակը), ինչպես նաև ճյուղային մատենագիտությունը և գիտության պատմությունը: Միաժամանակ, նշված կազմի հիմքն են հանդիսանում գիտության առարկան, մեթոդը և համակարգը:

Վարչական իրավունքի գիտության առարկան բնութագրելու հարցում տարբեր կարծիքներ են հայտնվում: Յու. Տիխոմիրովը գտնում է, որ վարչական իրավունքի գիտությունը՝ վարչաիրավական ոլորտի

կարգավորման հարցերի վերաբերյալ հայեցակարգային ու հանձնարարական բնույթի տեսական և մեթոդոլոգիական ուսումնասիրություններ, վերլուծություններ և մշակումներ են[1]: Ա. Կորենևի կարծիքով վարչական իրավունքի գիտությունն իրենից ներկայացնում է գիտական տեսակետների և պատկերացումների, գիտելիքների ու տեսական դրույթների համակարգ՝ վարչական իրավունքի և դրա կարգավորման առարկայի մասին[2]:

Գիտնականների մեծամասնությունը պնդում է, որ վարչական իրավունքի գիտության առարկան գործող վարչական իրավունքն է: Սակայն վերջինս վարչական իրավունքի համաձայն ունի իր բաղադրամասերը՝ վարչաիրավական նորմերը, վարչաիրավական կատեգորիաները և վարչական իրավունքի նորմերի կիրառումը:

Վարչական իրավունքի նորմերը համակարգվում և միավորվում են ինստիտուտների, ենթաճյուղերի մեջ և համակարգվում: Ուսումնասիրվում են նաև այդ նորմերից ծագող վարչաիրավական հարաբերությունները, դրանց կողմերը (մասնակիցները), իրավաբանական փաստերը, նյութական և ընթացակարգային (վարութային), ներկազմակերպական և արտաքին կազմակերպական հարցերը և այլն:

Կարևոր նշանակություն ունեն վարչական իրավունքի նորմերի վերաբերյալ գիտելիքները: Միայն ծանոթությունը գործող վարչական իրավունքի հետ չի կարող պատշաճ գիտելիքներ տալ գործադիր իշխանության (պետական կառավարման) ոլորտում հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման վերաբերյալ: Այդ գիտելիքների թվին են դասվում այնպիսի կատեգորիաներ, ինչպիսիք են «գործադիր իշխանություն» (պետական կառավարում), «գործադիր իշխանության մարմիններ» (պետական կառավարման մարմիններ), «հանրային ծառայություն», «պաշտոնատար անձ», «վարչական հարկադրանք» և այլն: Թվարկված կատեգորիաներում արտահայտվում է այն էականը, որը բնութագրում է իրավունքի համակարգի այդ ճյուղը և որոնց կազմակերպման ու զարգացման հարցերին անմիջական ուշադրություն է դարձնում վարչական իրավունքի գիտության առարկան:

---

[1] Տե՛ս Тихомиров Ю.А., նշված աշխ., էջ 79:
[2] Коренев А.П., նշված աշխ., էջ 61:

Վարչական իրավունքի գիտության առարկայի կարևոր բաղադրամասերից է պետական կառավարման պրակտիկան, ինչպես նաև գործադիր իշխանության (պետական կառավարման) մարմինների, դրանց պաշտոնատար անձանց իրավակիրառ գործունեությունը: Վարչական իրավունքի գիտությունը վարչաիրավական նորմերը և դրանց կիրառման պրակտիկան ուսումնասիրում է ինչպես կառավարման մարմինների (պաշտոնատար անձանց), այնպես էլ քաղաքացիների և շահագրգիռ կազմակերպությունների հետ: Վարչաիրավական նորմերի գործնական իրականացման ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում վարչական իրավունքի գիտությանը գիտականորեն հիմնավորված առաջարկություններ ներկայացնելու իրավասու մարմիններին (պաշտոնատար անձանց)՝ համապատասխան վարչաիրավական նորմերի անարդյունավետության, փոփոխման, լրացման կամ վերացման, ինչպես նաև իրավասու մարմինների գործունեության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կառուցվածքային փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

Այսպիսով, վարչական իրավունքի գիտության առարկան են հանդիսանում գործադիր իշխանության (պետական կառավարման), այդ ոլորտում ծագող հասարակական հարաբերությունների և դրանք կարգավորող վարչաիրավական նորմերի հետազոտումը և գործնական իրականացման վերլուծությունը, ինչպես նաև հասարակական հարաբերությունների վարչաիրավական կարգավորման ընդհանուր և բնորոշ օրինաչափությունների բացահայտումը և ուսումնասիրությունը:

Ինչպես իրավունքի գիտության մեթոդը, այնպես էլ ***վարչական իրավունքի գիտության մեթոդը*** գիտելիքների համակարգ է, որոնք օգտագործվում են իրավունքի տվյալ ճյուղի գիտության մեջ և կազմում են դրա մեթոդոլոգիական հիմքը: Վարչական իրավունքի գիտության մեթոդը ցույց է տալիս, թե համապատասխան օբյեկտն ինչպիսի եղանակներով ու միջոցներով է հետազոտվում և ուսումնասիրվում:

Իրավունքի այս ճյուղի գիտությունն ուսումնասիրում է տնտեսական, սոցիալ-մշակութային և վարչաքաղաքական բնագավառների կառավարման լայն շրջանակի հասարակական հարաբերություններ և այդ երևույթների էությունը հետազոտելու նպատակով հենվում է ամբողջական համակարգի մեթոդների վրա: Ընդ որում, վարչական ի-

ռավունքի գիտությունը կապված է իրավունքի բազմաթիվ ճյուղերի գիտությունների՝ պետության և իրավունքի տեսության, պետության և իրավունքի պատմության, սահմանադրական իրավունքի հետ, քանի որ վերջիններս իրավունքի բոլոր ճյուղերի գիտությունների համար բովանդակում են ելակետային տեսական դրույթներ:

Վարչական իրավունքի գիտության մեթոդոլոգիական հիմքն են կազմում բազմազան մեթոդներ՝ ***հատուկ-իրավաբանական, կոնկրետ-սոցիոլոգիական, իրավահամեմատական, պատմահամեմատական*** և այլն:

Հատուկ-իրավաբանական մեթոդը հետազոտում է վարչական իրավունքի դոգման, այսինքն՝ որպես անառարկելիորեն ընդունվող իրավունքի ճյուղը: Վարչական իրավունքի գիտության մեթոդի միջոցով նկարագրվում և վերլուծվում են վարչաիրավական նորմերը և իրավահարաբերությունները, դրանց դասակարգումը և համակարգումը:

Հետազոտման տրամաբանական այդ եղանակները հնարավորություն են տալիս համեմատելու վարչաիրավական հասկացություններն ու երևույթները և պատկերացումներ կազմելու դրանցից յուրաքանչյուրի և ընդհանուրի վերաբերյալ: Վարչական իրավունքի գիտության կողմից իրականացվող միջոցների ու եղանակների արդյունքում վարչաիրավական գիտելիքներն ընդունված է բաժանել երկու համակարգի՝ կառուցակարգային և ճյուղային, որոնցից յուրաքանչյուրը կազմված է վարչաիրավական ինստիտուտներից ու ենթաինստիտուտներից և ունեն իրենց բնութագիրն ու գիտական սահմանումը: Վարչական իրավունքի գիտությունը վերը նշված իրավաբանական մեթոդներով կարող է պետական կառավարման գործնական գործունեությունն ապահովել գիտականորեն հիմնավորված առաջարկություններով ու հանձնարարականներով:

Կոնկրետ-սոցիոլոգիական հետազոտման մեթոդն իրականացվում է ինչպես քաղաքացիների բանավոր կամ գրավոր հարցումների, հարցազրույցների և անկետավորման, այնպես էլ պաշտոնատար անձանց հետ հարցազրույցների, կառավարման մարմինների (պաշտոնատար անձանց) գործունեության վերադիտման և գործնականում իրենց արդարացրած այլ եղանակներով ու միջոցներով: Այս ճանապարհով ստացված տեղեկությունները և փաստերն առաջնային և

էական նշանակություն ունեն վարչական իրավունքի գիտության համար: Դրանք հիմք են հանդիսանում ավելի խորն ըմբռնել կառավարչական հարաբերությունների իրավական կարգավորման հիմնախնդիրները, վարչահիրավական նորմերի կիրառման արդյունավետությունը:

Կոնկրետ-սոցիոլոգիական հետազոտման մեթոդը, հետազոտելով գործադիր իշխանության (պետական կառավարման) մարմինների գործնական գործունեությունը, չի բավարարվում միայն դրանով, այլ այդ մարմինների գործունեության ուսումնասիրման ընթացքում կարևոր նշանակություն է տալիս իշխանության մյուս երկու թևերի հետ փոխգործողությանը և փոխհամագործակցությանը: Հետազոտման ընթացքում վարչական օրենսդրության գործնական արդյունավետության վերաբերյալ արվում են առաջարկություններ և հանձնարարականներ, որոնք կարող են անդրադառնալ այդ օրենսդրության հետագա կիրառման վրա:

Կոնկրետ-սոցիոլոգիական հետազոտման մեթոդը ներառում է նաև գործադիր իշխանության (պետական կառավարման) գործունեության հետազոտման ընթացքում ստացված տվյալների վիճակագրական մշակումը, որի արդյունքների հիման վրա ճյուղի գիտությունը կարող է անել առաջարկություններ և հանձնարարականներ համապատասխան պետական մարմիններին:

Իրավահամեմատական հետազոտման մեթոդի միջոցով ուսումնասիրվում են այլ երկրների տարբեր վարչահիրավական ինստիտուտներ (օրինակ, գործադիր իշխանության մարմինների, հանրային ծառայության, վարչական պատասխանատվության և այլն)՝ համեմատվում են իրար հետ և պարզում դրանց տարբերություններն ու ընդհանրությունները: Իրավական-համեմատական հետազոտություններն օգտակար են ինչպես տեսական, այնպես էլ գործնական տեսակետներից: Դրա միջոցով տեղի են ունենում փորձի փոխանակումներ, վարչահիրավական համապատասխան ինստիտուտների կատարելագործման և զարգացման նպատակով փոխառություններ: Ընդ որում, իրավական-համեմատական մեթոդը դրանով իսկ բացահայտում, վերլուծում է նաև այլ երկրների պետական կառավարման ուշադրության արժանի հիմնախնդիրները, դրանց առանձին առավելությունները և ստեղծագործաբար փոխառման նպատակահարմարությունը

հայրենական իրավահամակարգի համար: Նշված մեթոդի արդյունավետ օգտագործումը կհարստացնի վարչական իրավունքի գիտությունը:

Պատմահամեմատական մեթոդը պատմական առումով հետազոտում, վերլուծում ու գնահատում է պետական կառավարման (գործադիր իշխանության) և վարչական իրավունքի այլ ինստիտուտների հիմնահարցերը: Ինչպես իրավունքի յուրաքանչյուր ճյուղի գիտությունը, այնպես էլ վարչական իրավունքի գիտությունը չի կարող անտեսել այն դրականը և արժեքավորը, որը կուտակել է օրենսդրությունը: Ճյուղի գիտության խնդիրն է ամփոփել, վերլուծել դրանք և անհրաժեշտության դեպքում պատմության ընթացքում քննություն բռնած համանման ինստիտուտները շրջանառելու համար ներկայացնել եզրակացություններ ու հանձնարարականներ, ինչպես նաև կատարել կանխատեսումներ:

Չնայած վարչական իրավունքի գիտության մեթոդների բազմազանությանը, այնուամենայնիվ, դրանք ունեն ընդհանուր առարկա (օբյեկտ), որն ուսումնասիրվում և հետազոտվում է: Այդ կապակցությամբ վարչական իրավունքի գիտության կողմից վերը թվարկված հետազոտման մեթոդները փոխկապված են և դրանցից մեկի առանձին կիրառումը կարող է տեղի ունենալ մյուսների զուգակցմամբ, հակառակ դեպքում այն կարող է տալ ոչ լիարժեք պատկերացում:

Իրավունքի համակարգի յուրաքանչյուր ճյուղի գիտություն ունի իր համակարգը, որը համապատասխանում է դրա բովանդակությանը: Անտարակույս, ***վարչական իրավունքի գիտության համակարգը*** նույնպես որոշվում է դրա բովանդակությամբ և կառուցվում է վարչական իրավունքի ինստիտուտների միջև առկա ներքին կապերի հիման վրա:

Ինչպես իրավունքի ամեն մի գիտության ճյուղի համակարգ, այնպես էլ վարչական իրավունքի գիտության համակարգը համընկնում է համապատասխան ճյուղի համակարգի հետ: Այս առնչությամբ վարչական իրավունքի գիտության համակարգը երբեմն շփոթում են վարչական իրավունքի համակարգի հետ: Սակայն նշված համակարգերն իրենց ծավալով չեն համընկնում: Դա պայմանավորված է նրանով, որ վարչական իրավունքի գիտության համակարգն ավելի լայն շրջանակի հարցեր է ընդգրկում, քան վարչական իրավունքի համակարգը: Վարչական իրավունքի գիտությունը հետազոտում է ինչպես բազմա-

թիվ իրավական նորմերով սահմանված հսկայածավալ հասարակական հարաբերությունները, այնպես էլ տեսական այլ խնդիրներ: Դրա հետ մեկտեղ վարչական իրավունքի գիտության համակարգը ենթադրում է վարչական իրավունքի համակարգի վերլուծությունը և դրա դասավանդման համակարգը: Վերջինս իր արտահայտությունն է գտնում վարչական իրավունքի ուսումնական ձեռնարկների ու դասագրքերի մեջ:

Ինչպես արդեն նշվել է, վարչական իրավունքի գիտությունը վարչական իրավունքի վերաբերյալ կուտակված և բանական գիտելիքների ամբողջություն է: Այդ գիտելիքներից օգտվելը մատչելի, տեսանելի և հասկանալի դարձնելու նպատակով դրանք բաժանվում են խմբերի, համակարգվում կամ կարգի են բերվում: Դրանցից յուրաքանչյուրը կազմում է վարչաիրավական ինստիտուտ և ստեղծվում է ներդաշնակ համակարգված ու ներքին բովանդակությամբ իրար հետ կապված վարչական իրավունքի նորմեր:

Քանի որ վարչաիրավական նորմերը կարող են դասակարգվել տարբեր հիմունքներով, ուստի հնարավոր են նաև վարչական իրավունքի տարբեր համակարգեր: Սակայն, մասնագետների կարծիքով, վարչական իրավունքի գիտությունը ճանաչում է երկու հիմնական համակարգ՝ ***կառուցակարգային*** և ***ճյուղային:***

Կառուցակարգային համակարգն իրավական նորմերի գերակշիռ մասն առաջին հերթին խմբավորում է պետական-կառավարչական հարաբերությունների գլխավոր սուբյեկտների շուրջ: Այդպիսի սուբյեկտներ են համարվում քաղաքացիները, գործադիր իշխանության (պետական կառավարման) մարմինները, հասարակական միավորումները: Կառուցակարգային (ինստիտուցիոնալ) համակարգի շրջանակներում կազմավորված իրավական ինստիտուտները՝ օրինակ, գործադիր իշխանության (պետական կառավարման) մարմինները, հանրային ծառայությունը, վարչական հարկադրանքը, ընդգրկում են համանման հասարակական հարաբերությունները կարգավորող իրավական նորմերը:

Ճյուղային համակարգը վարչաիրավական նորմերը խմբավորում է՝ ելնելով բացառապես պետական կառավարման ճյուղային տեսանկյունից: Այդպիսի իրավական ինստիտուտներ են համարվում, օրինակ. «ֆինանսների և վարկի կառավարումը», «առողջապահութ-

յան բնագավառի կառավարումը», «ազգային անվտանգության բնագավառի կառավարումը» և այլն: Իրավական ինստիտուտների նշված և համանման նորմերը կարգավորում են ճյուղային կառավարչական հարաբերություններ:

Չնայած վարչական իրավունքի և վարչական իրավունքի գիտության հիմնական իրավական ինստիտուտները սկզբունքորեն համապատասխանում են միմյանց, այնուամենայնիվ, ընդհանուր առմամբ ճյուղի գիտության համակարգը որոշակի բնորոշ գծեր ունի՝

1) այն ամբողջական գիտելիքներ է բովանդակում վարչական իրավունքի և դրա ինստիտուտների, ինչպես նաև ճյուղի ընդհանուր հասկացությունների (օրինակ, առարկայի և մեթոդի սկզբունքների, վարչաիրավական նորմերի ու հարաբերությունների) վերաբերյալ,

2) ամբողջություն չկազմող և խառը նյութերը համակարգում է տրամաբանորեն կազմավորված վարչաիրավական ինստիտուտների մեջ, որը հեշտացնում է դրանց վերաբերյալ իրազեկությունը, դրանից օգտվելը և ներգործում է վարչաիրավական նորմի համակարգի նկատմամբ,

3) ամբողջացնում է վարչական իրավունքի կառուցակարգային, ճյուղային և ընթացակարգային (վարութային) համակարգի վերաբերյալ տվյալները վարչական իրավունքի մասին գիտելիքների միասնական համակարգի մեջ:

Վարչական իրավունքի գիտության համակարգն ընդհանուր առմամբ պետք է բովանդակի ցանկացած բնույթի գիտելիքներ վարչաիրավական ինստիտուտների և ամբողջությամբ վերցրած վարչական իրավունքի վերաբերյալ:

Հանրապետությունում իրականացվող քաղաքական և տնտեսական վերափոխումները, ժողովրդավարության սկզբունքների կիրառումը և այլ գործընթացներ գործադիր իշխանության (պետական կառավարման) հարաբերություններում օբյեկտիվ անհրաժեշտություն են ստեղծել նորովի քննարկելու վարչական իրավունքի հասկացությունը և առարկան, հմտորեն օգտագործելով նախկինում մշակված կայուն գիտական հետազոտությունները և արտասահմանյան երկրների փորձը: Անտարակույս, այդ փոփոխությունները կատարվելու են նաև առաջիկայում, հաշվի առնելով պետական իշխանությունների սահմանադրական բաժանումը, կատարելագործումը և զարգացումը,

ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետության ամրապնդումը, ինչպես նաև կառավարման ձևերի ու մեթոդների, դրա տեսության ու պրակտիկայի փոփոխությունները: Նշված գործընթացների առնչությամբ էականորեն նորացվելու ու բարեփոխվելու է Հանրապետության իրավունքի համակարգը, այդ թվում՝ նաև վարչական իրավունքը:

Վարչական իրավունքի գիտության համար անցումային ժամանակաշրջանի կարևոր գործընթացներից է տնտեսության պետական կառավարման հիմնախնդրի վերանայումը: Անցումը միասնական արտադրական-տնտեսական համալիրից, այսինքն՝ պլանային համակարգից, բազմատեսակ տնտեսական հարաբերություններին, առաջադրել են լուրջ խնդիրներ: Դեռևս լիովին և հստակ լուծված չեն շուկայական տնտեսության անցման իրավական հիմքերը: Նախկինում գործող տնտեսության վերաբերյալ բացարձակ իշխանական մեթոդները փոխվել են կառավարման օբյեկտների նկատմամբ առավելապես մեղմ և ճկուն մեթոդներով: Բացի այդ, տնտեսության նկատմամբ կիրառվում է ոչ թե ուղղակի, այլ անուղղակի կառավարչական ներգործություն:

Հանրապետությունում շուկայական հարաբերությունների իրականացման պարագայում պետական կառավարման հիմնահարցը, կարծես, իմաստազրկվել է: Պատրանք է ստեղծվում, որ առանձին երկրների հետ Հանրապետության փոխհարաբերությունների բարելավումը և ցույց տրվող օգնությունները մեխանիկորեն կնպաստեն բարեփոխումների բնականոն ընթացքին: Մինչդեռ, ինչպես իրավացիորեն նշում է պետության գիտական կառավարման հայտնի տեսաբան Գ. Ատամանչուկը, երրորդ հազարամյակում ցանկացած գործընթացի լուծումը չի կարող կենսագործվել առանց կառավարման, կառավարման շրջանցումով և հակառակ կառավարման[1]:

Գործնական կյանքը ցույց է տալիս նաև, որ գործադիր իշխանության (պետական կառավարման) մարմինների գործունեության արդյունավետությունն իբր բարձրացնելու նպատակով նոր մարմինների ստեղծումը, վերակազմավորումը, վերացումը, դրանց թվաքանակի ավելացումը կամ պակասեցումը, հաստիքացուցակների փոփո-

[1] Տե՛ս Атаманчук Г.В., նշված աշխ., էջ 14:

խությունները, ինչպես նաև դրանց ղեկավարներին զուտ կուսակցական սկզբունքով նշանակելը, ցանկալի արդյունք չեն տալիս:

Մինչդեռ, կառավարման նկատմամբ գիտական նոր մոտեցումները կարող են հասարակության զարգացման իրական շարժիչ ուժ դառնալ, եթե այն ղեկավարեն կառավարչական պատշաճ գիտելիքներ ու հմտություններ ունեցող, ձեռնհաս, բարոյական և համաշխարհային արտադրական և կառավարչական փորձին լավատեղյակ արհեստավարժները: Կարծում ենք, տեղին կլինի վերհիշել Դեմոկրիտի այն միտքը, որ պետության քաղաքացիների բարօրությունը կախված է կառավարման որակից:

Արդի ժամանակաշրջանում պետական կառավարումը պետք է օբյեկտիվորեն արտահայտի տնտեսական, սոցիալական, վարչաքաղաքական և այլ ոլորտների արդյունավետ կառավարման ու տեղեկատվական նորագույն տեխնոլոգիաների օգտագործման պահանջմունքները, որը, ինչպես ցույց է տալիս զարգացած երկրների փորձը, տեսանելի առավելություններ ունի: Այս առնչությամբ առաջիկայում ուժեղանալու է վարչական իրավունքի գործառութային-կարգավորող դերը և այն կոչված է կատարելու հետևյալ հիմնական գործառույթները՝ ա) պետական կառավարման կազմակերպումը և իրականացումը, բ) պետական կարգավորումը, գ) հանրային շահերի պաշտպանությունը և դ)պետական կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը մասնակցելու քաղաքացիների իրավունքների ինքնաիրականացումը:

Պետական կառավարման բնագավառում իրականացվող գործառույթները կարելի է առանց վարանելու դարձնել առավել ժողովրդավարական, մասնավորապես, օրենքների և մյուս իրավական ակտերի նախագծերի հրապարակումը և համաժողովրդական քննարկումները՝ որպեսզի իրենց շահերը շոշափող ֆիզիկական և իրավաբանական անձինք հնարավորություն ունենան նախագծերի վերաբերյալ հայտնել իրենց կարծիքը, ինչպես նաև ընդունված իրավական ակտերի մատչելիությունը: Հասարակական կարծիքը հաշվի առնելն իրավաստեղծ գործունեության հիմնարար սկզբունքներից է, որը նպաստում է նաև բնակչության վարչական իրավագիտակցության զարգացմանը և իրավաստեղծ ու իրավակիրառ ասպարեզում հզոր լծակների ստեղծմանը:

Պետության գործունեության կազմակերպումն անմիջականորեն առնչվում է հանրային ծառայողների հետ, որոնք կարևոր դեր են խաղում տնտեսության, սոցիալ-մշակութային և վարչաքաղաքական ոլորտների խնդիրների լուծման գործում: Չնայած Հանրապետությունում ընդունվել և գործում են հանրային տարբեր ծառայությունների վերաբերյալ օրենքներ, այնուամենայնիվ, դրանց գործնական կիրառման ընթացքում առաջանում են բազմաբնույթ հիմնահարցեր, որոնց մի մասն օրենսդրության բացերից են, իսկ մյուսները՝ կիրառողների[1]: Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ այդ ծառայությունների հիմնական սկզբունքները, թափուր պաշտոններն զբաղեցնելու, ատեստավորման, վերապատրաստման կարգերը, համայնքային ծառայողների իրավական վիճակը և այլ դրույթներ էապես չեն տարբերվում միմյանցից: Տարօրինակ է նաև այն, որ հանրային ծառայության համակարգում միայն քաղաքացիական ծառայության բնագավառում է ստեղծվել հատուկ հանրապետական մարմին՝ հանձինս քաղաքացիական ծառայության խորհրդի: Հանրային մյուս բոլոր ծառայություններում ծառայողական հարաբերությունները կարգավորվում են ՀՀ կառավարության կամ լիազորված մարմնի սահմանած կարգով: Կարծում ենք նաև, հանրային ծառայության տարբեր ծառայություններում միասնական պետական քաղաքականություն իրականացնելու, դրանք ղեկավարելու և կազմակերպելու համար նպատակահարմար է ստեղծել հանրային ծառայության մեկ միասնական հանրապետական անկախ մարմին:

Պետական կառավարման լծակների թուլացման պատճառով աճել է քաղաքացիների, իրավաբանական անձանց անպաշտպանվածությունն իրավախախտումներից և ապարատի կամայականություններից, որոնց պաշտպանությունը կոչված են իրականացնելու իրավապահպան մարմիններն ու հատկապես վարչական դատարանը[2]: Ի դեպ, հասարակական կարգի և հասարակական անվտանգության պահպանումը սերտորեն կապված են հանրային տնտեսական կար-

---

[1] Ավելի մանրամասն տե՛ս Եղյան Ռ.Հ. Քաղաքացիական (պետական) ծառայությունը Հայաստանի Հանրապետությունում: Երևան, 2004, էջ 89-90:

[2] Ավելի մանրամասն տե՛ս Դանիելյան Գ.Բ. Վարչական արդարադատության ինստիտուտի անտեսման բացասական հետևանքները: «Օրինականություն», Երևան, 2002, № 8(46), էջ 10-13:

գի հետ և դա (ձեռնարկատիրական գործունեություն, տարբեր տեսակի սեփականության զարգացում և այլն) հնարավոր է, եթե ապահովվի ամուր հասարակական կարգ և հասարակության անվտանգություն:

Չնայած 1985թ. ընդունված և ներկայումս գործող Վարչ. օր-ում կատարվել են բազմաթիվ փոփոխություններ ու լրացումներ, այնուամենայնիվ, այն անմխիթար վիճակում է գտնվում: Վարչական օրենսդրության կատարելագործումը և զարգացումն ընթանում է չափազանց դանդաղ և, երբեմն էլ՝ իրարամերժ լուծումներով: Դա պայմանավորված է նաև նրանով, որ իրավական հարցերի վերաբերյալ բարեփոխումները չեն նախատեսում վարչական օրենսդրության զարգացման հայեցակարգ: Վարչաիրավական նորմերը՝ վարչական իրավունքի աղբյուրները, կարգավորելով բազմաբնույթ հասարակական հարաբերություններ, ՀՀ իրավունքի համակարգի մյուս ճյուղերի համեմատ գտնվում են քառսային վիճակում[1]:

Կարծում ենք, վարչական պատախանատվության վերաբերյալ օրենսդրության հետագա զարգացումն ու կատարելագործումը պետք է ընթանա վարչական զանցանքներ սահմանող բոլոր իրավական նորմերը մեկ օրենսդրական ակտի (օրենսգրքի) մեջ ներառելու սկզբունքով: Ներկայումս այն կազմված է նշված օրենսգրքից և դրան զուգահեռ գործող բազմաթիվ օրենքներից, որոնք պատշաճորեն համակարգված չեն և հանգեցնում են որոշակի հակասությունների, տարակարծությունների, մեկնաբանությունների ու բարդությունների: Այս կապակցությամբ անհրաժեշտ է ստեղծել նշված ակտերի հստակ համակարգում՝ վերջիններիս ինկորպորացիայի (միավորման) կամ փոխհամաձայնեցման-համակարգման միջոցով: Անհրաժեշտություն է առաջանում պատշաճ կոդիֆիկացիայի ենթարկել վարչաիրավական ակտերը:

ՀՀ վարչական իրավունքի գիտության զարգացման համար կարևոր նշանակություն ունի նաև այլ երկրների վարչական իրավուն-

---

[1] Ավելի մանրամասն տե՛ս Դանիելյան Գ.Բ. Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության բարեփոխումների հայեցակարգային խնդիրները, «Օրինականություն», Երևան, 1999, № 8, էջ 1-6: Եղյան Ռ.Հ. Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության կատարելագործման և զարգացման հեռանկարները, «Իրավագիտության հարցեր», Երևան, 2000, №1-2, էջ 6-18:

քի գիտության ուսումնասիրությունը: Նկատենք, որ տեղի է ունենում տարբեր երկրների իրավական համակարգերի մերձեցում և համեմատական իրավագիտությունն ավելի լայն բնույթ է կրում: Սակայն, երբեմն մեխանիկորեն, աղավաղումներով ընդօրինակվում են տարբեր երկրների կառավարման որոշ առանձնահատկությունները, վարչական օրենսդրությունը, հաշվի չառնելով, որ դրանք չեն կարող համապատասխանել իրականացվող գործընթացներին, պահանջներին, ընդհանուր իրավիճակին, ինչպես նաև վարչաիրավական ոլորտի ներքին օրինաչափություններին: Արդյունքում, դրանք գործնականում որոշակի դժվարություններ են ստեղծում և սկսվում է դրանցում անվերջ փոփոխություններ կատարելու գործընթացը:

Ամենաընդհանուր գծերով սրանք են Հանրապետության վարչական իրավունքի գիտության հիմնախնդիրներն առաջիկայում, որոնք արդիական նշանակություն ունեն և փոխկապված են միմյանց:

ԳԼՈՒԽ 3.
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՆՈՐՄԵՐԸ ԵՎ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

§1. Վարչաիրավական նորմերի հասկացությունը և բովանդակությունը

Վարչական իրավունքը, ինչպես և իրավունքի համակարգի յուրաքանչյուր ճյուղ, կազմված է բազմաթիվ իրավական նորմերից, որոնք մեծամասամբ ներառված են համապատասխան խոշոր խմբերի մեջ և կազմում վարչաիրավական ինստիտուտներ: Նշված նորմերն իրենցից ներկայացնում են ընդհանուր բնույթի կանոններ, ինչպես նաև որոշակի ծավալի վարքագծի կանոններ, որոնք սահմանվում և պաշտպանվում են պետության կողմից:

Բնականաբար, վարչաիրավական նորմերին հիմնականում ներհատուկ են այն բոլոր առանձնահատկությունները, որոնք յուրահատուկ են իրավունքի մյուս ճյուղերի նորմերին: Սակայն, վերջիններից տարբերվում են նրանով, որ կարգավորում են այնպիսի հասարակական հարաբերություններ, որոնք առաջանում են գործադիր ոլորտում, ինչպես և դրանց վարչաիրավական կարգավորման առարկայի առանձնահատկություններով: Բացի այդ, վարչաիրավական նորմերը տարբերվում են նաև ոչ միայն մեկ իրավական ակտում, այլև տարբեր մարմինների ակտերում առավել փոխկախվածությամբ, որը պայմանավորված է այդ նորմերի ենթաօրենսդրականության և ստորակարգության (հիերարխիկ) սկզբունքով:

Վարչաիրավական նորմերի միջոցով արտահայտվում է վարչական իրավունքի ***կարգավորիչ դերը,*** որն օգտագործվում է հետևյալ նպատակներով՝

1) ապահովել գործադիր իշխանության (պետական կառավարման) միասնական համակարգի և դրա առանձին մարմինների կազմակերպման և գործունեության պատշաճ կարգավորվածությունը և դրանց արդյունավետ փոխգործողությունը,

2) ապահովել ինչպես քաղաքացիների, այնպես էլ նրանց միավորումների հիմնական իրավունքների, ազատությունների ու պարտա-

կանությունների արդյունավետ իրականացումը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման բնագավառներում,

3) որոշել իրավական պետության շահերին համապատասխան բոլոր ֆիզիկական, իրավաբանական անձանց և քաղաքացիների ոչ պետական միավորումների պատշաճ վարքագիծը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման ոլորտներում,

4) սահմանել և ապահովել օրինականության և պետական կարգապահության խստիվ ռեժիմ այն հասարակական հարաբերություններում, որոնք առաջանում են պետական կառավարչական գործունեության ընթացքում,

5) հիմնականում արտահայտել ոչ թե մասնավոր, այլ՝ հանրային-իրավական շահերը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման ոլորտներում:

Այսպիսով, վերոնշյալից բխում է, որ վարչահիրավական նորմերն արտահայտում են իշխանության գործադիր թևի էությունը՝ գլխավորապես կատարելով ու կենսագործելով ՀՀ Սահմանադրության և օրենքների պահանջները:

Վարչահիրավական նորմերն ունեն իրենց բնորոշ մի շարք առանձնահատկություններ՝

1) ի տարբերություն իրավունքի համակարգի մյուս ճյուղերի, վարչական իրավունքի նորմերն ունեն իրավաբանական պաշտպանության իրենց միջոցները՝ այդ նորմերով կարգավորվող հասարակական հարաբերությունների նկատմամբ հնարավոր ոտնձգությունների դեպքերում: Անհրաժեշտ է ընդգծել, որ վարչահիրավական նորմերը բովանդակում են համապարտադիր վարքագծի կանոններ, որոնք առաջին հերթին վերաբերում են գործադիր իշխանության (պետական կառավարման) սուբյեկտներին: Այդ նորմերի պահանջները չկատարելը կամ անբարեխիղճ կատարելն առաջացնում է վարչական հարկադրանքի (պատասխանատվության) միջոցների կիրառում, իսկ աշխատանքային-ծառայողական հարաբերությունները կարգավորող նորմերը նշված ձևով խախտելու դեպքում՝ կարգապահական պատասխանատվություն: Ի դեպ, վերջինիս կիառման շրջանակներն ավելի նեղ են, քան վարչական պատասխանատվությանը: Գործնականում վարչական պատասխանատվության միջոցով են ապահովվում և պաշտպանվում նաև իրավունքի համակարգի մյուս ճյուղերի բազմա-

թիվ նորմեր (օրինակ, ֆինանսական, էկոլոգիական, աշխատանքային, հողային և այլն),

2) վարչաիրավական նորմերը շատ դեպքերում կարող են հանդես գալ իրավունքի այլ ճյուղերի առարկան կազմող հասարակական հարաբերությունների կարգավորիչներ, որոնց օգնությամբ ապահովվում և պաշտպանվում են այդ հարաբերությունները կարգավորող նորմերի պահանջները: Վարչաիրավական նորմերով են կարգավորվում, օրինակ, հարկերի գանձման կարգը, հարկային, բնապահպանական օրենսդրության պահպանման նկատմամբ պետական վերահսկողությունը, քաղաքաշինական, ձեռնարկատիրական գործունեության կազմակերպական հիմնական սկզբունքների սահմանումը և այլն, որոնք վերաբերվում են ֆինանսական, հարկային, բնապահպանական, քաղաքաշինության և այլ բնագավառների հարաբերություններին,

3) վարչաիրավական նորմերը հաճախ սահմանվում են գործադիր իշխանության (պետական կառավարման) անմիջական իրականացման ընթացքում և նպատակով՝ դրա անմիջական սուբյեկտների կողմից:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ վարչաիրավական նորմերն իրավաստեղծ գործունեության արդյունք են և այս կապակցությամբ օրենսդրությամբ համապատասխան գործադիր մարմիններին իրավունք է վերապահված ինքնուրույն սահմանելու իրավական նորմեր, այսինքն՝ իրականացնելու վարչական նորմաստեղծ գործունեություն: Վարչաիրավական նորմերին առանձնահատուկ է նաև այն, որ ունեն ինչպես իրավակիրառ և իրապաշտպան, այնպես էլ իրավաստեղծ բնույթ: Հիրավի, գործադիր մարմինների հիմնական գործառույթն իրավակիրառ գործունեությունն է և վարչաիրավական նորմերն, ըստ էության, ծառայում են իրավակիրառ, այսինքն՝ ***կատարման*** նպատակներին: Այս առնչությամբ օրենսդրությունն ամրագրում է, որ գործադիր իշխանության (պետական կառավարման) մարմինների նորմատիվ ակտերն ընդունվում են օրենքները կատարելու համար և այդ կտրվածքով դրանք կոչվում են ենթաօրենսդրական ակտեր:

Միաժամանակ, վերոշարադրյալից չի կարելի ենթադրել, որ վարչաիրավական նորմեր սահմանում են միայն գործադիր իշխանության սուբյեկտները: Այդպիսի նորմեր են բովանդակում ՀՀ Սահմանադ-

ությունը, օրենքները, Հանրապետության Նախագահի հրամանագրերը և այլն: Իրենց իրավաբանական ուժով թվարկված նորմատիվ ակտերը հավասարազոր չեն և այդ առնչությամբ դրանք ստորադասվում են ենթակարգության (հիերարխիայի) սկզբունքով՝ սահմանադրական նորմեր, օրենսդրական նորմեր, Հանրապետության Նախագահի հրամանագրեր և գործադիր (կառավարման) սուբյեկտների կողմից սահմանված նորմեր:

Նշված առաջին երեք տեսակի նորմատիվ ակտերն առաջնային են գործադիր իշխանության սուբյեկտների սահմանած նորմերից և վերջիններս երկրորդային (ստորադաս) են: Մասնավորապես, օրենքով սահմանված վարչաիրավական նորմերը սովորաբար չեն գործում ուղղակիորեն (անմիջականորեն), չնայած դրանք ընդունված է այդպես բնութագրել: Հարցը նրանում է, որ օրենքի նորմերը սովորաբար չեն սահմանում դրանց գործնական կիրառման առանձնահատկություններն ու պայմանները, քանի որ գործնական լուծումը ոչ թե օրենսդիր մարմնի, այլ գործադիր իշխանության (պետական կառավարման) մարմնի գործառույթն է:

Այսպես, «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքը (04.12.01թ.) կարգավորում է քաղաքացիական ծառայության հիմնական սկզբունքները, պաշտոնի նշանակման ու ազատման, քաղաքացիական ծառայողների ատեստավորման, վերապատրաստման և իրավական վիճակի հարցերն ու դրանց հետ կապված այլ հարաբերությունները: Սակայն օրենքի կարգավորման շրջանակներից դուրս են մնացել բավականին ծառայողական հարաբերություններ (օրինակ, քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու, ատեստավորման, վերապատրաստման, կադրերի ռեզերվում գրանցելու և դրանից հանելու, ծառայողական քննություն անցկացնելու կարգերը և այլն): Այս կապակցությամբ քաղաքացիական ծառայության խորհուրդը (այդ ծառայության ղեկավարման և կազմակերպման մարմինը) ընդունել է թվով 19 որոշումներ, որոնց ծավալը շուրջ 4,5 անգամ գերազանցում է նշված օրենքի ծավալը:

Իրավաբանական գրականության մեջ վարչաիրավական նորմի բնորոշման վերաբերյալ գոյություն ունեն զանազան տարբերակներ, նկատի ունենալով դրանց առանձնահատկությունները և գործողության լայն շրջանակները:

Նույն հարցի վերաբերյալ որոշակի նմանություններով ու տարբերություններով կարծիքներ են հայտնել նաև պրոֆեսորներ Բ. Լազարևը, Վ. Մանոխինը, ընդգծելով, որ վարչաիրավական նորմը պետության կողմից սահմանված և պետական հարկադրանքի միջոցներով ապահովված կանոն է պետական կառավարման ոլորտում: Ընդ որում, հեղինակների մի մասն ավելի ծավալուն է բնորոշում վարչաիրավական նորմը, իսկ մյուս մասը՝ հակիրճ, սակայն դրանով վարչաիրավական նորմի բովանդակությունն էապես չի փոխվում:

Ելնելով վերը նշված բնորոշումների բովանդակությունից և նկատի ունենալով այդ կապակցությամբ արտահայտված կարծիքները, հնարավոր ենք համարում տալ վարչաիրավական նորմի հետևյալ բնորոշումը, անտարակույս, հնարավոր են նաև այլ տարբերակներ:

Վարչաիրավական նորմը պետության կողմից սահմանված և պաշտպանվող վարքագծի կանոն է, որը կարգավորում է գործադիր իշխանության (պետական կառավարման) ոլորտի հասարակական հարաբերությունները:

Այսպիսով, վարչաիրավական նորմերի կարգավորիչ դերը բավականին լայն շրջանակներ ունի և այն՝ որպես գործադիր իշխանության (պետական կառավարման) գործնական իրականացման ձև, բխում է պետական կառվարչական գործունեության էությունից և նշանակությունից: Քանի որ նշված նորմերը հրամայական (իմպերատիվ) են, ուստի միակողմանիորեն արտահայտում են լիազորված մարմինների կամաարտահայտության համապարտադիր բնույթը: Ընդ որում, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ վարչաիրավական նորմերը չեն կարգավորում քաղաքացիների միջև հարաբերությունները:

Հիմնականում սրանք են վարչաիրավական նորմերի առանձնահատկությունները:

§2. Վարչաիրավական նորմի տեսակները

Վարչաիրավական նորմերն ամենաբազմազանն են իրավունքի մյուս ճյուղերի նորմերի համեմատ, որը պայմանավորված է հասարակական հարաբերությունների կարգավորման լայնությամբ և հարաշարժությամբ (դինամիզմով): Վարչաիրավական նորմերն այս առումով տեսական և գործնական առանձնահատուկ նշանակություն ունեն:

Իրավաբանական գրականության մեջ գոյություն ունեն վարչաիրավական նորմերի տարբեր դասակարգումներ: Սակայն բազմաթիվ գիտական աշխատություններում, հաշվի առնելով վարչաիրավական նորմերի բավանդակությունը և կարգավորման առարկան, դրանք առավելապես առանձնացվում են երկու հիմնական տեսակների՝ ***նյութական*** և ***ընթացակարգային*** (վարութային): Նյութական և ընթացակարգային նորմերի տարբերակումը կարևոր նշանակություն ունի ինչպես վարչական իրավունքի, այնպես էլ իրավունքի բազմաթիվ ճյուղերի համար:

Նյութական նորմերը, որոնք նաև անփոփոխ նորմեր են անվանվում, ընթացակարգային նորմերի համեմատ, մեծամասնություն են կազմում: Դրանք իրավաբանորեն սահմանում են վարչաիրավական, այսինքն՝ կառավարչական հարաբերությունների մասնակիցների (կողմերի) իրավունքները, պարտականություններն ու պատասխանատվությունը, այսինքն՝ մասնակիցների վարչաիրավական կարգավիճակը:

Նյութական նորմում արտահայտվում է որոշակի իրավական ռեժիմ, որի շրջանակներում իր գործունեությունը պետք է իրականացնի գործադիր իշխանության (պետական կառավարման) միասնական համակարգը: Այդ կարգի վարչաիրավական նորմերը սահմանում են գործադիր իշխանության (պետական կառավարման) մարմինների կառուցվածքը, իրավական վիճակը, լիազորությունները, գործունեության կազմակերպման կարգը:

Նշված նորմերն ամրագրում են նաև գործադիր իշխանության (պետական կառավարման) սուբյեկտների և քաղաքացիների փոխգործողության հիմունքները, այդ մարմինների գործունեության նկատմամբ վերահսկողությունը և դրանց պատասխանատվությունը քաղաքացիների ու հասարակության առջև, տարբեր տեսակի օբյեկտների, ինչպես նաև տարբեր տեսակի և մակարդակի գործադիր իշխանության (պետական կառավարման) մարմինների հետ փոխադարձ կապը:

Ընթացակարգային նորմերը կանոնակարգում են գործադիր իշխանության (պետական կառավարման) մարմինների գործունեության շարժընթացը (դինամիկան) և դրա հետ կապված ու դրանով պայմանավորված հասարակական հարաբերությունները: Ավելի հստակ՝

ընթացակարգային վարչաիրավական նորմերը կանոնակարգում են վարչական իրավունքի նյութական նորմերով նախատեսված պարտականությունների և իրավունքների իրականացման կարգը (արարողակարգը)՝ կարգավորվող կառավարչական հարաբերությունների շրջանակներում:

Վարչաընթացակարգային նորմերը կարող են նյութական նորմերի հետ միասին շարադրվել նույն իրավական ակտի մեջ: Օրինակ, Վարչ. օր.-ը բովանդակում է և՛ նյութական, և՛ ընթացակարգային նորմեր: Ընթացակարգային նորմերը շարադրված են օրենսգրքի բազմաթիվ գլուխներում (վարչական ակտեր ընդունելու վարույթը, վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթը, վարչական տույժ նշանակելու մասին որոշումների կատարումը, վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննությունը և այդ կապակցությամբ կայացված որոշումները գանգատարկելն ու բողոքարկելը և այլն):

Իրավունքի տեսության մեջ և պրակտիկայում հաճախ օգտագործվում է «պրոցես (ընթացակարգ)» և «պրոցեսուալ (ընթացակարգային) գործունեություն» հասկացությունները: Այս պարագայում պետք է ուշադրություն դարձնել առավելապես դրանց իրավաբանական էության վրա: Այս առնչությամբ կարելի է առանձնացնել ***վարչաիրավազոր նորմերը,*** որոնք սահմանում են տարբեր տեսակի վարչաիրավական վեճերն արտադատական կարգով քննելու և լուծելու կարգը, այսինքն՝ լիազորված կառավարման մարմինների (պաշտոնատար անձանց) լիազորությունները՝ վարչաիրավազոր նորմերն իրականացնելու ոլորտում:

Գործադիր մարմինների գործունեության բնագավառում կարևոր է նաև կառավարչական որոշումների նախագծերի նախապատրաստման և դրանց ընդունման գործընթացը, որը նույնպես ***ընթացակարգային*** գործունեություն է: Այսպես, Հանրապետության վարչական (գործադիր) մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեությունն ավարտվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ...[1]: Այս կապակցությամբ գործադիր մարմնի ապարատի

[1] Տե՛ս «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» 2004թ. փետրվարի 18-ի ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը:

ամենօրյա գործունեությունը վարչական իրավունքի տեսությունը փոխկապակցում է հատուկ խմբի՝ ***վարչաընթացակարգային նորմերի*** հետ: Այդպիսի նորմ է համարվում, մասնավորապես, Հանրապետության Նախագահի 2007թ. հուլիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին» թիվ ՆՀ-174-Ն հրամանագիրը[1]:

Վարչահիրավական նորմերը դասակարգվում են կոնկրետ ***իրավաբանական բովանդակությունից*** ելնելով, նկատի ունենալով կառավարչական հարաբերությունների կարգավորման մեթոդների տարբերակները: Այս սկզբունքին համապատասխան առանձնանում են հետևյալ վարչահիրավական նորմերը՝ ***պարտավորեցնող, արգելող, լիազորող, խթանիչ և հանձնարարական:***

1. ***Պարտավորեցնող*** վարչահիրավական նորմերը նախատեսում են պարտադիր կարգով կատարելու որոշակի գործողություններ տվյալ նորմի պահանջներին համապատասխան: Օրինակ, վարչական գործի վերաբերյալ որոշման պատճենը երեք օրվա ընթացքում հանձնվում կամ ուղարկվում է այն անձին, որի վերաբերյալ դա ընդունվել է (Վարչ. օր.-ի 283-րդ հոդված). քաղաքացիների միավորումները պարտավոր են գրանցվել ՀՀ արդարադատության նախարարությունում, կամ որոշակի աշխատանքներ կատարելու համար պետք է ստանալ պաշտոնական թույլտվություն (լիցենզիա) և այլն:

2. ***Արգելող*** վարչահիրավական նորմերն արգելում են կատարելու որոշակի գործողություններ այն պայմաններում, որոնք սահմանված են տվյալ նորմով: Օրինակ, որսորդության իրավունքից զրկում չի կարող կիրառվել այն անձանց նկատմամբ, որոնց համար որսորդությանը գոյության հիմնական աղբյուրն է (նշված օրենսգրքի 29-րդ հոդված): Ոստիկանության ծառայողին արգելվում է լինել որևէ կուսակցության, հասարակական (բացառությամբ գիտական, մշակութային, մարզական, որսորդական և այլ կազմակերպությունների), այդ թվում՝ կրոնական, արհեստակցական կազմակերպության անդամ, ինչպես նաև կազմակերպել գործադուլներ, հանրահավաքներ,

[1] Տե՛ս ՀՀ ՊՏ, 2007, № 37 (561), 25.07.07:

երթեր, ցույցեր կամ մասնակցել դրանց[1]:

3. ***Լիազորող*** կամ ***թույլատրող*** (դիսպոզիտիվ) վարչաիրավական նորմերը հնարավություն են նախատեսում սեփական հայեցողությամբ գործելու տվյալ նորմի պահանջների սահմաններում: Սա փաստորեն թույլտվություն է, որը հնարավորություն է տալիս ընտրելու գործողության (անգործության) ցանկացած տարբերակը, սակայն նորմով սահմանված իրավական ռեժիմի շրջանակներում: Այսպես, 18 տարին լրացած ՀՀ քաղաքացիներին հնարավորություն է վերապահված ինքնուրույն որոշելու պետական կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունքի իրականացման հարցը (Սահմանադրություն 30-րդ հոդված): Կամ յուրաքանչյուր ոք իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմելու կամ առաջարկություններ ներկայացնելու իրավունք ունի (Սահմանադրության 27.1-րդ հոդված): Ի դեպ, նշված օրինակները քաղաքացու սուբյեկտիվ իրավունքներից է և նա կարող է իր հայեցողությամբ դրանցից օգտվել կամ չօգտվել:

Վարչաիրավական նորմի վերը նշված տեսակը, ի տարբերություն քաղաքացիների, իրավաբանական բովանդակությամբ որոշակիորեն փոխվում է առանձին անձանց նկատմամբ, ելնելով նրանց կարգավիճակի առանձնահատկություններից: Օրինակ, հետիոտների և ճանապարհային երթևեկության մյուս մասնակիցների կողմից (բացառությամբ տրանսպորտային միջոցների վարորդների) ճանապարհային երթևեկության կարգավորման ազդանշաններին չենթարկվելը, ճանապարհային նշանների կամ ճանապարհի երթևեկելի մասի գծանշման պահանջները խախտելն առաջացնում է տուգանքի նշանակում (Վարչ. օր.-ի 131-րդ հոդված):

Այս դեպքում լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) իր հայեցողությամբ, կարող է ընտրել նշված տույժի տեսակներից որևէ մեկը, որը, իր կարծիքով, առավել արդյունավետն է: Գործելով տվյալ նորմի սահմաններում, լիազորված մարմինը (պաշտոնատար անձը)

---

[1] «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի (03.07.02) 39-րդ հոդված, 08.08.02թ.:

գտնվում է առավել խիստ շրջանակների մեջ, քանի որ, ի տարբերություն քաղաքացու, նրա վրա դրված է որոշակի պարտականություններ՝ նշված լիազորություններն իրականացնելու համար:

4. ***Խթանիչ (խրախուսական)*** վարչաիրավական նորմերը խրախուսում են կատարելու որոշակի գործողություններ: Այդ կապակցությամբ նյութական ներգործության կամ բարոյական խթանիչ լծակների միջոցով ապահովվում են վարչաիրավական հարաբերության մասնակիցների պատշաճ վարքագիծ: Օրինակ, որոշակի առավելություններ ու արտոնություններ են սահմանվում հանրային ծառայության համակարգում, կամ հարկային, մաքսային, վարկավորման և այլ բնագավառներում:

5. ***Հանձնարարական*** վարչաիրավական նորմերը, որպես կանոն, օգտագործվում են գործադիր իշխանության (պետական կառավարման) մարմինների և ոչ պետական կազմավորումների միջև փոխհարաբերություններում և սովորաբար չունեն իրավաբանական պարտադիր բնույթ:

Դրանք հասցեագրվում են, օրինակ, առևտրային կազմակերպություններին, ձեռնարկատերերին, զանազան ոչ պետական միավորումներին: Սակայն, հանձնարարական նորմերի օգնությամբ երբեմն կարգավորվում են գործադիր իշխանության (պետական կառավարման) սուբյեկտների միջև փոխհարաբերությունները: Օրինակ, վերադաս և ստորադաս մարմինների (պաշտոնատար անձանց) միջև կամ նրանց սուբյեկտների և դրանց ենթակա տնտեսական կազմակերպությունների, հիմնարկների միջև: Այս պարագայում ստորադաս օղակներին և ենթակա կազմավորումներին հնարավորություն է ընձեռվում գտնելու նպատակահարմար տարբերակ՝ հանձնարարական նորմով նախատեսված հարցը լուծելու համար: Նման փոխհարաբերություններում երբեմն հանձնարարականներն ունեն իրավաբանական պարտադիր բնույթ:

Վարչական իրավունքի տեսությանը համապատասխան, ճյուղի նորմերը կարող են դասակարգվել՝ ըստ հասցեատերերի: Այս առնչությամբ կարող են առանձնացվել այնպիսի վարչաիրավական նորմեր, որոնք կանոնակարգում են՝

1) քաղաքացիների վարչաիրավական կարգավիճակը,

2) գործադիր մարմինների կազմակերպումն ու գործունեությունը,

3) հանրային ծառայողների վարչաիրավական կարգավիճակը,

4) հասարակական միավորումների վարչաիրավական կարգավիճակը,

5) պետական հիմնարկների, կազմակերպությունների կազմակերպման ու գործունեության կարևոր հարցերը,

6) տարբեր տեսակի առևտրային կազմակերպությունների (այդ թվում մասնավոր) գործունեության առանձին կողմերը:

Հանրապետության կառուցվածքին համապատասխան վարչաիրավական նորմերը դասակարգվում են ըստ գործունեության մասշտաբի՝

1) հանրապետական վարչաիրավական նորմերի,

2) տարածքային կամ տեղական (մարզային, համայնքային) վարչաիրավական նորմերի:

Ըստ կարգավորման ծավալի վարչաիրավական նորմերը լինում են ***ընդհանուր, միջճյուղային*** և ***ճյուղային:***

Ընդհանուր վարչաիրավական նորմերն իրենց գործողությունը տարածում են պետական կառավարման բոլոր ոլորտների ու ճյուղերի վրա և կանոնակարգում են գործադիր իշխանության (պետական կառավարման) իրականացման առավել կարևոր կողմերը: Ընդհանուր բնույթի վարչաիրավական նորմեր են հաճախ բովանդակում ՀՀ օրենքները, Հանրապետության Նախագահի հրամանագրերը, կառավարության որոշումները:

Միջճյուղային վարչաիրավական նորմերը կանոնակարգում են գործադիր իշխանության (պետական կառավարման) գործունեության այս կամ այն կողմերը, որոնք ընդհանուր կամ սահմանակից են պետական կառավարման բոլոր կամ բազմաթիվ ճյուղերի համար և ունեն առանձնահատուկ բնույթ: Այդպիսի նորմեր են բովանդակում միջճյուղային գործադիր մարմինների (օրինակ, բնապահպանության, ֆինանսների նախարարություններ) կանոնադրությունները, ինչպես նաև շուկայում մենաշնորհը կամ գերիշխող դիրքի չարաշահման և անբարեխիղճ մրցակցության արգելման վերաբերյալ օրենսդրությունը և այլն:

Ճյուղային վարչաիրավական նորմերը կանոնակարգում են ճյուղային իրավասության գործադիր իշխանության (պետական կառավարման) մարմիններին ենթակա ոլորտում առաջացող կառավարչա-

կան հարաբերությունները: Ճյուղային իրավասության մարմիններ են, օրինակ, գյուղատնտեսության, էներգետիկայի և բնական պաշարների, մշակույթի նախարարությունները:

Վարչական իրավունքի տեսության մեջ գոյություն ունեն վարչաիրավական նորմերի դասակարգման այլ խմբեր: Օրինակ՝ ***համապարտադիր*** և ***ներհամակարգային: Համապարտադիր*** վարչաիրավական նորմերի գործողությունը տարածվում է կարգավորվող հասարակական հարաբերությունների բոլոր մասնակիցների վրա, իսկ ***ներհամակարգային*** նորմերինը՝ գործադիր իշխանության (պետական կառավարման) ստորադաս օղակների վրա:

§3. Վարչական իրավունքի աղբյուրները

Կառավարչական բազմատեսակ և բազմաբնույթ հասարակական հարաբերությունները նորմատիվ եղանակով կանոնակարգվում են տարբեր պետական և լիազորված այլ մարմինների կողմից և դրանով է պայմանավորված վարչական իրավունքին բնորոշ աղբյուրների մեծաքանակությունը: Այնպիսի բարդ բնագավառի՝ ինչպիսին կառավարումն է, վարչաիրավական կանոնակարգումը պահանջում է մեծաքանակ օրենքներ և ենթաօրենսդրական նորմատիվ ակտեր: Ընդ որում, վարչաիրավական նորմեր են բովանդակվում ոչ միայն գործադիր գործունեություն իրականացնող մարմինների վարչական իրավունքի ակտերում, այլև տարբեր բնույթի և նշանակության իրավական ակտերում՝ ՀՀ Սահմանադրության, օրենքների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի ու կարգադրությունների, միջպետական համաձայնագրերի մեջ և այլն: Թվարկված իրավական նորմերի մեծամասնությունը միաժամանակ բովանդակում է և՛ իրավական համակարգի տարբեր ճյուղերի նորմեր (սահմանադրական, քաղաքացիական, քրեական, ֆինանսական իրավունքի և այլն), և՛ վարչական իրավունքի նորմեր:

Իրավաբանական գրականության մեջ տարբեր ձևերով են բնորոշվում վարչական իրավունքի աղբյուրները: Հիմնականում այն տեսականորեն բնորոշվում է որպես վարչաիրավական նորմերի արտահայտման արտաքին ձև, իսկ գործնականում՝ տարբեր պետական մարմինների իրավաբանական ակտեր, որոնք բովանդակում են վարչաիրավական նորմեր:

Քանի որ վարչաիրավական նորմեր բովանդակող իրավական ակտեր են ընդունում ոչ միայն պետական, այլև տեղական ինքնակառավարման մարմինները, ուստի, կարծում ենք, նպատակահարմար է այն բնորոշել հետևյալ խմբագրությամբ. ***վարչական իրավունքի աղբյուր են համարվում ներկայացուցչական և գործադիր մարմինների այն իրավական ակտերը, որոնք բովանդակում են վարչաիրավական նորմեր:***

Հաշվի առնելով, թե ում կողմից են ընդունվում վարչաիրավական նորմեր բովանդակող իրավական ակտերը և դրանց իրավաբանական ուժը, վարչական իրավունքի աղբյուրների շարքն են դասվում՝

1) ***ՀՀ Սահմանադրությունը,*** որը լայն առումով Հանրապետության ամբողջ իրավական համակարգի և դրա առանձին ճյուղերի հիմնական աղբյուրն է: Սահմանադրությամբ ամրագրված բազմաթիվ դրույթներ իրենց բնույթով հանդիսանում են վարչական իրավունքի աղբյուր: Օրինակ, սահմանադրական այն նորմերը, որոնք ամրագրում են քաղաքացիների հիմնական իրավունքների, ազատությունների և պարտականությունների իրականացումն առավելապես պետական կառավարման ոլորտում (16-րդ, 18-րդ, 23-25-րդ, 27.1-րդ, 28-30-րդ, 30.2-րդ, 33.1-րդ հոդվածներ), սահմանում են գործադիր իշխանության (պետական կառավարման) մարմինների կազմավորման և գործունեության հիմունքները (55-րդ հոդվածի 4-րդ կետ, 85-90-րդ հոդվածներ) և այլն.

2) ***ՀՀ օրենքները,*** որոնցով սահմանված վարչաիրավական նորմերը գործում են ամբողջ Հանրապետության տարածքում: Օրինակ, Վարչ. օր.-ը (1985թ.)[1], «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» (2004թ.)[2], «Քաղաքացիական ծառայության մասին» (2001թ.)[3], «Հանրային ծառայության մասին» (2011 թ.) և ծառայության վերաբերյալ մյուս օրենքները, ինչպես նաև «Լիցենզավորման մասին» (2001թ.)[4], «Պետական կառավարչական հիմարկների մասին» (2001թ.)[5] և այլ օրենքներ:

---

[1] ՀՍՍՀ ԳՍՏ, 1985, № 23:
[2] ՀՀ ՊՏ №18(317), 31.03.04:
[3] ՀՀ ՊՏ, №1(176), 09.01.02:
[4] ՀՀ ՊՏ, №26(158), 08.08.01:
[5] ՀՀ ՊՏ, №37(169), 03.12.01:

Բացառապես ՀՀ օրենքներով են սահմանվում վարչահիրավական նորմեր բովանդակող ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակումները, նրանց պարտականությունները, պատասխանատվության ենթարկելու կարգը, հարկադրանքի միջոցներն ու դրանք կիրառելու կարգը, ինչպես նաև նշված անձանց, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող ֆիզիկական անձանց գործունեության նկատմամբ հսկողության և վերահսկողության կարգը, վարչական, կարգապահական պատասխանատվության ենթարկելու դեպքերը, կարգը, պայմանները, վարչական ակտերի հարկադիր կատարման կարգը և այլն (Սահմանադրության 83.5-րդ հոդված):

Սահմանադրությանը համապատասխան, կառավարության կառուցվածքը վերջինիս առաջարկությամբ սահմանվում է օրենքով (85-րդ հոդված),

3) ***Հանրապետության Նախագահի նորմատիվ հրամանագրերը,*** որոնք ենթակա են կատարման ՀՀ ամբողջ տարածքում (Սահմանադրության 56-րդ հոդված): Այս առնչությամբ հարկ է առանձնացնել Հանրապետության Նախագահի 2007թ. հուլիսի 18-ի թիվ ՆՀ-174-Ն վերոհիշյալ հրամանագիրը և այլն: Հանրապետության Նախագահն իր նորմատիվ բնույթի հրամանագրով կարող է կասեցնել կառավարության որոշումների գործողությունը մեկ ամիս ժամանակով և Սահմանադրությանը դրանց համապատասխանության հարցը պարզելու նպատակով դիմել սահմանադրական դատարան (86-րդ հոդված),

4) ***ՀՀ կառավարության նորմատիվ որոշումները:*** Սահմանադրությանը համապատասխան, կառավարությունը ՀՀ հիմնական օրենքի, միջազգային պայմանագրերի, օրենքների կամ Հանրապետության Նախագահի նորմատիվ ակտերի հիման վրա և դրանց կատարումն ապահովելու նպատակով ընդունում է համապարտադիր որոշումներ, որոնք ենթակա են կատարման ՀՀ ամբողջ տարածքում (85-րդ հոդված). օրինակ՝ «ՀՀ-ում աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզավորման կարգը հաստատելու մասին» (2002թ.), «Առևտրի իրականացման վայրի (տոնավաճառ, շուկա և այլն) կազմակերպիչների կողմից այդ վայրում առևտրական գործունեություն իրականացնողների վերաբերյալ հարկային մարմիններ տեղեկություններ ներկայացնելու մասին» (2002թ.), «Հարկային ծա-

ռայողի վարքագծի կանոնները հաստատելու մասին» (2002թ.)[1], «Համայնքային ծառայողի ծառայողական քննություն անցկացնելու կարգը հաստատելու մասին» (2006թ.)[2] և այլն:

Կառավարությունը հաստատում է նաև հանրապետական գործադիր (պետական կառավարման) մարմինների կանոնադրությունները,

5) ***ՀՀ նախարարությունների, կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինների նորմատիվ իրավական ակտերը.*** օրինակ, «Ընտրությունների ժամանակ քվեարկության օրվա, տեղի ու ժամանակի մասին ընտրողներին ծանուցելու կարգը սահմանելու մասին» ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի և ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության պետի համատեղ հրամանը, ՀՀ առողջապահության նախարարի հրամաններով հաստատված նախարարության համակարգի պետական ոչ առևտրային կազմակերպության և 100 տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների ընտրության (նշանակման) մրցութային և ատեստավորման հանձնաժողովների ձևավորման կարգերը և ընթացակարգերը[3],

6) ***տարածքային պետական կառավարման մարմինների (մարզպետների) նորմատիվ իրավական ակտերը.*** մասնավորաբար, մարզպետների նորմատիվ կամ անհատական որոշումները և անհատական կարգադրությունները[4],

7) ***տեղական ինքնակառավարման մարմինների նորմատիվ իրավական ակտերը:*** Տեղական ինքնակառավարման մարմիններն այդպիսի ակտեր կարող են ընդունել նաև այն դեպքում, եթե Սահմանադրության 105-րդ հոդվածի երկրորդ մասին համապատասխան օրենքով նրանց վերապահվել են պետական իշխանության մարմինների որոշ լիազորություններ,

8) ***ՀՀ միջազգային այն պայմանագրերն ու համաձայնագրերը,*** ո-

---

[1] ՀՀ ՊՏ №12(187), 12.04.02:
[2] ՀՀ ՊՏ, №43 (498), 09.08.06:
[3] ՀՀ ԳՏ, №17(226) 03.07.06:
[4] Տե՛ս «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի (03.04.02) 19-րդ հոդվածի 5-րդ մասը (ՀՀ ՊՏ, №15(190) 21.05.02):

րոնք բովանդակում են վարչահիրավական նորմեր: Օրինակ, ԱՊՀ անդամ-պետությունների միջև կնքված համաձայնագրերը, կամ միջազգային ակտերով կարգավորվող մաքսային վերահսկողության և ճանապարհային երթևեկության հարցերը,

9) դեռևս վարչական իրավունքի աղբյուր են հանդիսանում նախկին ***ՍՍՀ միության և ՀԽՍՀ բարձրագույն և կենտրոնական մարմինների իրավական ակտերը,*** պայմանով, եթե չեն ընդունվել ՀՀ համապատասխան ակտեր և եթե չեն հակասում ՀՀ օրենսդրությանը (օրինակ, 1985թ. ընդունված Վարչ. օր.-ը):

§4. Վարչական իրավունքի համակարգը

Վարչական իրավունքը, լինելով ՀՀ իրավունքի համակարգի անբաժան և անհրաժեշտ բաղադրամասը, դրա հետ մեկտեղ ունի իր ներքին համակարգը: Վարչական իրավունքը՝ փոխկապակցված առանձին իրավական նորմերի ու ինստիտուտների համակարգ է, որոնց միավորում է կարգավորման առարկան, սկզբունքները, մեթոդը և նպատակները:

Առհասարակ իրավունքի տեսության տեսակետից իրավունքի յուրաքանչյուր ճյուղի համակարգ ունի հետևյալ կառուցվածքը՝ իրավունքի ճյուղ, ենթաճյուղեր, իրավական ինստիտուտներ և իրավական նորմեր: Ինչպես իրավունքի մի շարք հիմնարար ճյուղեր, այնպես էլ վարչական իրավունքը Խորհրդային տարիներին, և՛ ներկայումս բաժանվում է երկու մասի՝ Ընդհանուր և Հատուկ, երբեմն էլ Առաջին և Երկրորդ մասերի կամ էլ Առաջին և Երկրորդ բաժինների:

Անհրաժեշտ է նշել, որ չնայած թվարկված համակարգերը սահմանված չեն իրավական նորմերով և կրում են պայմանական բնույթ, այնուամենայնիվ, այն որպես տեսական իմաստավորման արդյունք օգտագործվում է գիտական-ուսումնական նպատակներով:

Ներկայումս էլ վարչական իրավունքի դասագրքերում և ուսումնական ձեռնարկներում պահպանվում են վարչական իրավունքի ավանդական բաժանումը Ընդհանուր և Հատուկ մասերի[1]: Փաստենք

[1] Տե՛ս օրինակ, Бахрах Д.Н., նշված աշխ., էջ 9: Козлов Ю.М., Попов Л.Л., նշված աշխ., էջ 51: Агапов А., նշված աշխ., էջ 43-44: Габричидзе Б.Н. և ուրիշներ, նշված աշխ., էջ 41-42: Григорян С. և ուրիշներ, նշված աշխ., էջ 17-18:

միայն, որ յուրաքանչյուր մաս ընդգրկում է մի քանի վարչաիրավական ինստիտուտներ (ենթաճյուղեր): Մասնավորապես՝

Ընդհանուր մասը միավորում է հետևյալ իրավական ինստիտուտները (ենթաճյուղերը)՝ վարչական իրավունքը երկրի իրավունքի համակարգում, վարչական իրավունքի սուբյեկտները, վարչաիրավական ձևերն ու մեթոդները, պատասխանատվությունն ըստ վարչական իրավունքի և այլն:

Հատուկ մասն ընդգրկում է հետևյալ իրավական ինստիտուտները (ենթաճյուղերը)՝ կառավարումը տնտեսության ոլորտում, կառավարումը սոցիալ-մշակութային ոլորտում, կառավարումը վարչաքաղաքական բնագավառում:

Այս կարգի համակարգման շրջանակում են գտնվում վարչաիրավական այն նորմերը, որոնք առավելապես են արտահայտում վարչական կարգավորման առանձնահատկությունը և ինքնատիպությունը:

Վարչական իրավունքի ***ընդհանուր բնույթի ինստիտուտներ*** են համարվում, օրինակ, քաղաքացիների, նրանց միավորումների վարչաիրավական կարգավիճակը, հանրային-ծառայողական հարաբերությունները, գործադիր իշխանության մարմինների վարչաիրավական կարգավիճակը, վարչական պատասխանատվությունը և այլն:

Ելնելով կառավարման առանձնահատկություններից ***հատուկ բնույթի վարչաիրավական ինստիտուտներ*** են հանդիսանում՝ տնտեսական, սոցիալ-մշակութային և վարչաքաղաքական ոլորտների կառավարումը:

Ինչպես ընդհանուր, այնպես էլ հատուկ բնույթի վարչաիրավական ինստիտուտներն իրենց հերթին բաժանվում են ավելի փոքր ինստիտուտների՝ ենթաինստիտուտների: Օրինակ, գործադիր իշխանության մարմինների վարչաիրավական կարգավիճակը բաժանվում է՝ կառավարության, նախարարությունների, կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինների կարգավիճակի և այլն, իսկ կառավարումը վարչաքաղաքական ոլորտում՝ պաշտպանության, արտաքին գործերի, արդարադատության բնագավառների կառավարման և այլն:

Անհրաժեշտ է հիշատակել, որ իրավաբանական գրականության մեջ տարբեր մոտեցումներ կան վարչական իրավունքի համակարգի

վերաբերյալ: Պրոֆեսոր Յու. Տիխոմիրովը գտնում է, որ պետք է հրաժարվել վարչական իրավունքի համակարգի վերը նշված ավանդական բաժանումից, նկատի ունենալով դրանց նորմատիվ թույլ կառուցվածքը: Նրա կարծիքով վարչական իրավունքի ճյուղը հնարավոր է բաժանել հետևյալ ենթաճյուղերի՝

1) նորմատիվ-կարգավորիչ (վարչական իրավունքի առարկան, կարգավորման ոլորտները, սկզբունքները, նորմերը և իրավախախտումները),

2) գործադիր իշխանության մարմիններ,

3) պետական ծառայություն,

4) վարչաիրավական ռեժիմներ,

5) վարչական ընթացակարգ (վարույթ), օրինականությունը կառավարման ոլորտում,

6) պետական կառավարման կազմակերպում,

7) տեղեկատվական իրավունք,

8) նորմատիվների իրավական կարգավորում[1]:

Առանձին դասագրքերում հրաժարվել են ընդհանուր և հատուկ մասերի բաժանումից, դրանք համապատասխանաբար փոխարինելով առաջին մաս (վարչական իրավունքի էությունը և հիմնական ինստիտուտները) և երկրորդ մաս (տնտեսության, սոցիալ-մշակութային և վարչաքաղաքական ոլորտների կառավարման վարչաիրավական կազմակերպումը): Ըստ առանձին մասնագետների, առաջիկայում նախատեսվում է ավելացնել ևս մեկ մաս՝ «Վարչաընթացակարգային (վարութային) իրավունք» վերնագրով[2]:

Պրոֆեսոր Կ. Բելսկին, ինչպես արդեն նշվել է, վարչական իրավունքի համակարգը բաժանում է երեք գլխավոր ենթաճյուղերի՝ 1) կառավարչական իրավունք, 2) ոստիկանական իրավունք և 3) վարչական արդարադատության իրավունք[3]:

Պրոֆեսոր Ա. Կորենևը վարչական իրավունքի համակարգը բաժանում է երեք մասի՝ առաջին (ընդհանուր) մաս (ընդհանուր բնույթի կառավարչական հարաբերությունները կարգավորող նորմեր), երկ-

---

[1] Տե՛ս Тихомиров Ю.А., նշված աշխ., էջ 71 և 88:
[2] Տե՛ս Алехин А.П. և ուրիշներ, նշված աշխ., էջ 43:
[3] Տե՛ս Бельский К.С. О системен административного права// Государство и право. 1998, №3, էջ 8:

որոշ (հատուկ) մաս (կառավարման այս կամ այն բնագավառում կամ ճյուղում հասարակական հարաբերությունները կարգավորող նորմեր), երրորդ մաս (վարչահիրավազորիչ գործունեության ասպարեզում հասարակական հարաբերությունները կարգավորող նորմեր): Ընդ որում, յուրաքանչյուր մաս ներառում է մի քանի վարչահիրավական ինստիտուտներ[1]:

Նկատի ունենալով, որ մասնագիտական գրականության մեջ մի շարք տարբերակներ են առաջարկվում վարչական իրավունքի համակարգի (կառուցվածքի) վերաբերյալ, ուստի վերը թվարկված բաժանումները չեն կարող անվիճելի լինել:

Վարչական իրավունքով կարգավորվող վերը նշված կառավարչական լայն շրջանակները, ինչպես նաև ճյուղի առարկան ցույց են տալիս, որ վարչական իրավունքը ՀՀ իրավունքի համակարգի ամենախոշոր և բարդ ճյուղերից է: Գործնականում չկա պետական, հասարակական կենսագործունեության որևէ բնագավառ, ուր այս կամ այն չափով չիրականացվի գործադիր (կառավարչական) գործունեություն:

Չնայած Հանրապետությունում իրականացվող տարբեր ոլորտների վերափոխումներին, որի հետևանքով փոփոխվել է նաև վարչահիրավական կարգավորման աստիճանը, իսկ հատկապես տնտեսության բնագավառում այն բավականին նեղացել է (պայմանագրային, քաղաքացիահիրավական հարաբերությունների զարգացման կապակցությամբ), այնուամենայնիվ, գործադիր իշխանության և վարչական իրավունքի դերն ինչպես և նախկինում՝ զգալի է: Վարչական իրավունքի՝ որպես իրավունքի համակարգի կարևոր ճյուղի, դերը պայմանավորված է նրանով, որ գործադիր իշխանությունը կարևոր տեղ է զբաղեցնում պետության բնականոն գործունեության մեջ:

Հաշվի առնելով վարչահիրավական նորմերի ընդգրկուն բնույթը, որոնցով կարգավորվում են կառավարչական բազմապիսի և տարբեր ծավալի հասարակական հարաբերություններ, անհրաժեշտություն է առաջանում դրանք համակարգել, խմբավորել ըստ համանման կառավարչական հարաբերությունների կարգավորման առանձնահատկությունների: Դա հնարավորություն է տալիս ընդգծելու ինչպես վար-

[1] Տե՛ս Коренев А.П., նշված աշխ., էջ 32:

չափրավական առանձին նորմերի նպատակային յուրահատկությունները, այնպես էլ ապահովելու վարչական իրավունքի համակարգի ամբողջականությունը:

Նկատի ունենալով վարչական իրավունքի համակարգի զարգացման և կատարելագործման միտումները, ինչպես նաև մասնագետների հիմնականում համանման կարծիքները և սույն ձեռնարկի բովանդակությունը, գտնում ենք, որ ՀՀ վարչական իրավունքի համակարգը կարելի է բաժանել վեց բաժինների՝

1) ***Վարչական իրավունքի հասկացությունը և համակարգը: Վարչական իրավունքի գիտությունը*** (կառավարում, պետական կառավարում, գործադիր իշխանություն, վարչական իրավունքի հասկացությունը, առարկան, մեթոդը և սուբյեկտները, նորմերը և աղբյուրները, ինչպես նաև վարչաիրավական հարաբերությունները),

2) ***Վարչական իրավունքի սուբյեկտները*** (ՀՀ քաղաքացիների, երկքաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց վարչաիրավական կարգավիճակը, հանրային վարչարարություն իրականացնող մարմինները, հանրային ծառայողները, կազմակերպությունների վարչաիրավական կարգավիճակը, կուսակցությունների և հասարակական մյուս միավորումների վարչաիրավական կարգավիճակը),

3) ***Պետական կառավարման ձևերն ու մեթոդները: Հատուկ վարչաիրավական դրությունները*** (պետական կառավարման ձևերը և մեթոդները, հատուկ վարչաիրավական դրությունները),

4) ***Վարչական վարույթ և վարչավարություն*** (վարչական վարույթի և վարչարարության հասկացությունը, վարչական վարույթի իրավական հիմքերը և համակարգը, վարչական ակտը, դրա տեսակները և ձևերը: Բողոքարկման վարույթ, պատասխանատվությունը վարչարարությամբ պատճառված վնասի համար, վարչական պատասխանատվությունը, վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարույթը և պետական կառավարման ոլորտում կարգապահական վարույթը),

5) ***Պետական կառավարման առանձին ոլորտների վարչաիրավական կարգավորումը*** (տնտեսության և ֆինանսների, վարչաքաղաքական ոլորտի և միջճյուղային պետական կառավարումը, սոցիալ-մշակութային ոլորտի կառավարման վարչաիրավական կարգավորումը).

6) ***Վարչական իրավունքն արտասահմանյան երկրներում*** (արտասահմանյան երկրների վարչական իրավունքի ձևավորման պատմաիրավական նախադրյալները և հիմնական համակարգերը)[1]:

Իրավաբանական գրականության մեջ կարծիք է հայտնվել նաև, որ առաջիկայում, ամենայն հավանականությամբ, էական փոփոխության կենթարկվի վարչական իրավունքի հատուկ մասը: Մասնավորապես, այն կընդգրկի ծառայողական իրավունքը, ոստիկանական իրավունքը, մունիցիպալ, շինարարական և այլ իրավունքներ: Այնուամենայնիվ, վարչական իրավունքի ուսումնական ձեռնարկում հանրային ծառայությունը, կարծում ենք, կքննարկվի որպես արդի վարչաիրավական ինստիտուտ: Սակայն, լինելով վարչական իրավունքի ինստիտուտներից, հանրային ծառայությունն իր իրավական կարգավորմամբ և կատարելագործմամբ որոշակիորեն անդրադառնում է վարչական իրավունքի կառուցվածքի վրա[2]:

Ամեն դեպքում, անկախ վարչական իրավունքի համակարգի բաժանման քանակից և տեսակներից (մաս, բաժին, ենթաճյուղ) դրանցից յուրաքանչյուրն ընդգրկում է մի քանի վարչաիրավական ինստիտուտներ: Վարչական իրավունքը՝ որպես իրավունքի համակարգի հիմնարար մաս, բովանդակում է այնպիսի ընդգրկուն, ելակետային դրույթներ, կառավարման մեթոդներ, որոնք այս կամ այն չափով օգտագործվում են իրավունքի մյուս ճյուղերի կողմից և այդ առումով գլխավորում, խմբավորում է իրավունքի մի շարք ճյուղեր (ֆինանսական, էկոլոգիական, հողային և այլն):

---

[1] Տվյալ դեպքում վերջին 6-րդ բաժնի առկայությունը պայմանավորված է դասընթացի նյութը հնարավորինս ամբողջական ներկայացնելու նպատակահարմարությամբ: Այդ բաժնում, զուտ անհրաժեշտ իրավահամեմատական նյութ ապահովելու նկատառումով, լուսաբանված են արտասահմանյան վարչական իրավունքի հիմնական համակարգերը, իսկ առավել հանգամանորեն դրանք ներկայացված են առանձին դասընթացով:

[2] Տե՛ս, օրինակ, Старилов Ю.Н. Служебное право. Учебник.М., 1996, էջ XI:

ԳԼՈՒԽ 4.
ՎԱՐՉԱՀԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§1. Վարչահիրավական հարաբերությունների հասկացությունը և առանձնահատկությունները

Վարչահիրավական հարաբերությունները՝ գործադիր իշխանության (պետական կառավարման) ոլորտում հասարակական հարաբերությունները կարգավորող վարչահիրավական կառուցակարգի կարևոր բաղադրամասերից են: Վարչահիրավական հարաբերություններն ընդհանուր իրավական հարաբերությունների տարատեսակներից են, ուստի և օժտված են մյուս իրավական հարաբերություններին (քաղաքացիական, ֆինանսական, աշխատանքային և այլն) յուրահատուկ բոլոր ընդհանուր հատկանիշներով (կարգավորող իրավական նորմի առաջնությունը, մասնակիցների (կողմերի) վարքագծի կանոնակարգումն իրավական նորմով և այլն):

Վերոհիշյալ ընդհանուր իրավական հարաբերությունների հատկանիշների հետ միասին, վարչահիրավական հարաբերություններն ունեն իրենց հատուկ էական յուրահատկություններ: Այդ առանձնահատկությունների էությունը կայանում է նրանում, որ վարչահիրավական հարաբերություններն առաջանում, փոփոխվում և դադարում են կառավարման ոլորտում՝ տնտեսական, սոցիալ-մշակութային և վարչաքաղաքական բնագավառների անմիջական գործունեության իրականացման և կառավարչական այլ հարաբերությունների բնագավառում: Ի դեպ, նշված առանձնահատկությունները բավականին էական են և վարչահիրավական հարաբերությունների բովանդակության նկատմամբ որոշիչ ազդեցություն ունեն:

Հաշվի առնելով վարչահիրավական հարաբերությունների առանձնահատկությունների բազմազանությունը և ընդգրկուն բնույթը, մասնագետները տարամետ կարծիքներ են հայտնել այդ առնչությամբ, սակայն դրանք, ըստ էության, էապես չեն տարբերվում: Հեղինակների մի մասն այն շարադրում է համեմատաբար հակիրճ, իսկ մյուսները՝ ընդգրկուն բովանդակությամբ:

Այսպես, պրոֆեսոր Դ. Բախրախը վարչահիրավական հարաբե-

ությունները բնորոշում է որպես վարչական իրավունքի նորմերով կարգավորված հասարակական հարաբերություններ, որոնք առաջանում են գործադիր իշխանության գործունեության բնագավառում[1]: Ավելի հակիրճ են սահմանում վարչահիրավական հարաբերությունների հասկացությունը Բ. Գաբրիչիձեի և Ս. Գրիգորյանի գլխավորությամբ հեղինակային կոլեկտիվները՝ դրանք դիտարկելով որպես վարչական իրավունքի նորմերով կարգավորված հասարակական հարաբերություններ[2]:

Մեկ այլ հեղինակային կոլեկտիվ այն սահմանում է հետևյալ բովանդակությամբ՝ վարչահիրավական հարաբերությունները վարչական իրավունքի նորմերի հիման վրա ծագող կառավարչական հարաբերություններ են, որոնց մասնակիցները օժտված են սուբյեկտիվ իրավունքներով և պարտականություններով[3]:

Վարչահիրավական հարաբերություններն ավելի լայն և միատեսակ են բնորոշում հեղինակային երկու կոլեկտիվ՝ այն իրենից ներկայացնում է վարչահիրավական նորմով կարգավորված կառավարչական հասարակական հարաբերություն, որի կողմերը հանդես են գալիս որպես վարչահիրավական նորմով սահմանված և երաշխավորված փոխադարձ իրավունքներ ու պարտականություններ կրողներ[4]:

Այսպիսով, վերը շարադրված կարծիքների մեջ ակնհայտորեն արտահայտվում է վարչական իրավունքի նորմերով կարգավորվող կարևոր առանձնահատկություններից մեկը, այն, որ դրանք ոչ թե ուրիշ բնույթի հարաբերություններ են, այլ կառավարչական հասարակական հարաբերություններ, որոնք ունեն վարչահիրավական յուրահատուկ բովանդակություն և ծագում են գործադիր իշխանության (պետական կառավարման) բնագավառում:

Վարչահիրավական հարաբերությունների առանձնահատկությունների հիմնախնդիրը վիճարկվում է նաև ներկայումս, պայմանա-

---

[1] Տե՛ս Бахрах Д.Н., նշված աշխ., էջ 20: Նույն կարծիքին են նաև Ա. Կորենևը (Коренев А.П., նշված աշխ., էջ 54), Դ. Օվսյանկոն (Овсянко Д.М., նշված աշխ., էջ 21):

[2] Габричидзе Б.Н. և ուրիշներ, նշված աշխ., էջ 54: Григорян С. և ուրիշներ, նշված աշխ., էջ 30:

[3] Макарейко М.В., Черенков Е.А., նշված աշխ., էջ 35:

[4] Տ ե՛ս Алехин А.П. և ուրիշներ, նշված աշխ., էջ 70: Козлов Ю.М., Попов Л.Л., նշված աշխ., էջ 68:

վորված անցումային ժամանակաշրջանի յուրահատկությունների հետ: Մինչդեռ, հարցի նկատմամբ գիտական և գործնական մոտեցումները կարևոր են ինչպես ամբողջությամբ վերցրած վարչական իրավունքի, այնպես էլ վարչաիրավական կարգավորման միջոցների էության ճիշտ ըմբռնման համար: Այս առնչությամբ փորձենք նշել վարչաիրավական հարաբերություններին բնորոշ այն հիմնական առանձնահատկությունները, որոնք տեղ են գտել մասնագիտական գրականության մեջ:

1. Վարչաիրավական հարաբերությունները՝ որպես կառավարչական հասարակական հարաբերություններ, ծագում, փոփոխվում և դադարում են պետական կառավարման լայնածավալ ոլորտում և նպատակաուղղված են գործադիր իշխանության (պետական կառավարման) պրակտիկ գործունեության իրականացմանը: Գործունեության այդ ծավալը պատկերացնելու համար, թերևս, կարելի է հիշատակել Սահմանադրության 85-րդ և 89-րդ հոդվածները, որոնցում ընդհանուր գծերով սահմանվում են Հանրապետության գործադիր իշխանության մարմինների համակարգի բարձրագույն օղակի՝ Հանրապետության կառավարության, գործունեության հիմնական ուղղությունները: Մասնավորապես, կառավարում է պետական սեփականությունը, իրականացնում Հանրապետության ներքին քաղաքականությունը, ֆինանսատնտեսական, վարկային, հարկային միասնական և տարածքային զարգացման պետական քաղաքականությունը, ինչպես նաև այդ քաղաքականության իրականացումը գիտության, կրթության, մշակույթի, առողջապահության, սոցիալական ապահովության և բնության պահպանության բնագավառներում: Ապահովում է Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության և արտաքին քաղաքականության իրականացումը, հասարակական կարգի պահպանությունը, միջոցներ է ձեռնարկում օրինականության ամրապնդման, քաղաքացիների իրավունքների ու ազատությունների ապահովման ուղղությամբ և այլն: Բացի այդ, պետական կառավարման բոլոր այն հարցերը, որոնք օրենքով վերապահված չեն այլ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, ենթակա են Հանրապետության կառավարության իրավասությանը:

Վերը նշված կառավարչական գործունեության հիմնական շրջանակները՝ տնտեսական, սոցիալ-մշակութային և վարչաքաղա-

քական ոլորտներում ներառում են հարյուրավոր պետական և ոչ պետական մարմիններ, արտաղրական և ոչ արտաղրական կազմակերպություններ, քաղաքացիներ և այլն, դրանով իսկ լայն պայմաններ ստեղծելով վարչահիրավական հարաբերությունների համար: Այդ հարաբերությունների մեջ արտահայտվում են պետական կառավարչական գործունեության բոլոր հիմնական հատկությունները:

2. Ներառելով պետական կառավարչական գործունեության հիմնական յուրահատկությունները, վարչահիրավական հարաբերությունները, ի տարբերություն իրավունքի մյուս ճյուղերի կողմից կարգավորվող հասարակական հարաբերությունների (օրինակ, քաղաքացիահրավական), բնութագրվում են որպես իշխանական հարաբերություններ (իշխանահարաբերություններ): Վերջիններս կազմավորվում են «իշխանություն-ենթակայություն» սկզբունքով, պայմանավորված նրանով, որ վարչահիրավական հարաբերություններում բացակայում է կողմերի (մասնակիցների) իրավաբանական հավասարությունը: Իրականում, որպես վարչահիրավական հարաբերության պարտադիր կողմ (մասնակից) հանդես է գալիս գործադիր իշխանության (պետական կառավարման) մարմինը (պաշտոնատար անձը) և օժտված է այնպիսի լիազորություններով, որը չունի այդ հարաբերության մյուս կողմը (ստորադաս մարմինը, քաղաքացիները և այլն): Այս սկզբունքը հանդիսանում է պետական կառավարչական գործունեության էական գերակայությունը: Ի դեպ, դա առանձնահատուկ է նաև հարկային, բնապահպանական, ձեռնարկատիրական, ֆինանսական և այլ ոլոտներում ծագող հասարակական հարաբերություններին:

Հարկ է նշել, որ չնայած քաղաքացիահիրավական հարաբերություններում կողմերը նույնպես գործում են իրավական նորմերի կարգավորիչ ներգործությամբ, այնուամենայնիվ, իրավունքի տեսության մեջ դրանց իրավահավասարությունը դասական օրինակ է համարվում:

3. Պետական կառավարման ոլորտի գործնական գործունեությունը ցույց է տալիս, որ դրա սահմաններում հաճախ ծագում են նաև այլ տեսակի իրավահարաբերություններ, մասնավորապես, ֆինանսական, բնապահպանական, ձեռնարկատիրական և նույնիսկ՝ քաղաքացիահիրավական: Դա պայմանավորված է նրանով, որ վարչահիրավական հարաբերությունները կարող են ծագել նաև ինչպես պե-

տական կառավարման այլ բնագավառներում (օրինակ, իշխանական ենթակայության վրա հիմնված գույքային հարաբերությունները), այնպես էլ անմիջական պետական կարգավորման կամ կառավարման ընթացքում (օրինակ, ֆինանսական, բնական ռեսուրսների, դրանց պահպանության և այլն):

Այսպիսով, վարչական իրավահարաբերություններին յուրահատուկ է նաև այն, որ իրավունքով նախատեսված դեպքերում մասնակցում են (տվյալ դեպքում՝ վարչաիրավական մասով) իրավունքի մյուս ճյուղերի առարկային վերաբերող հասարակական հարաբերություններին: Օրինակ, աշխատանքային իրավահարաբերությունների ծագումը՝ անձին աշխատանքի ընդունելու կապակցությամբ, ձևակերպվում է համապատասխան կազմակերպության, հիմնարկի կառավարչության (ադմինիստրացիայի) վարչական ակտով:

4. Ինչպես նկատեցինք, գործադիր իշխանության (պետական կառավարման) ոլորտում կարող են ծագել բազմատեսակ և բազմաբնույթ հասարակական հարաբերություններ: Ընդ որում, դրանք ընդգրկում են տնտեսական, սոցիալ-մշակութային և վարչաքաղաքական բավական լայն շրջանակներ, սակայն վարչաիրավական հարաբերությունների ծագման համար անհրաժեշտ են որոշակի պայմաններ:

Այդպիսի պայմաններից է, նախ, այն, որ նշված հարաբերությունները ծագում են անմիջականորեն գործադիր մարմիններին վերապահված գործադիր-կարգադրիչ գործառույթների իրականացման գործնական գործունեության ***կապակցությամբ:*** Պատահական չէ, որ գործադիր իշխանության (պետական կառավարման) սուբյեկտը՝ գործադիր (կառավարման) մարմինը, պաշտոնատար անձը, առաջին հերթին, ինչպես գործառութային, այնպես էլ իրավասության առումով իրեն դրսևորում է հենց այդպիսի հատկությամբ: Ամեն դեպքում, գործադիր մարմինների գործադիր-կարգադրիչ գործունեության դրսևորումները չեն վերաբերում գույքային գործարքների կնքմանը և չեն արտահայտում գործադիր իշխանության իրականացման կառուցակարգերի գործողությունը: Նման գործողությունների դեպքում գործադիր մարմինը (պաշտոնատար անձը) հանդես չի գալիս որպես կառավարման սուբյեկտ: Միաժամանակ, անհրաժեշտ է նկատի ունենալ՝ սոսկ գործադիր իշխանության սուբյեկտի առկայությունը հիմք չէ պնդելու, որ տվյալ հասարակական հարաբերությունը վարչաիրավական կարգավորման

կարիք ունի: Օրինակ, ՀՀ կառավարության և Ազգային ժողովի սահմանադրական փոխհարաբերությունները սահմանադրահիրավական են, այլ ոչ թե վարչահիրավական:

Երկրորդ պայմանը, որի հիման վրա նույնպես ծագում են վարչահիրավական հարաբերություններ՝ գործադիր իշխանության (պետական կառավարման) մարմինների (պաշտոնատար անձանց) կողմից ոչ թե որևէ, այլ բացառապես կառավարչական գործառույթներ (իրավաբանական-իշխանական լիազորություններ) իրականացնելու անմիջական ***առիթով:*** Անշուշտ, նշված պայմանների բացակայության դեպքում գործադիր իշխանության (պետական կառավարման) մարմինը չի կարող լինել գործադիր իշխանության (պետական կառավարման) սուբյեկտ և իրականացնել կառավարչական գործառույթներ:

5. Էությամբ վարչահիրավական հարաբերությունները ***կազմակերպական*** բնույթ ունեն: Այն ուղղակիորեն կապված է գործադիր իշխանության (պետական կառավարման) գործառույթների իրականացման՝ առաջին հերթին, իրավակատարման կազմակերպման հետ: Նշված գործառույթներն ապահովվում են վարչահիրավական հարաբերությունների շրջանակներում տարբեր կառուցակարգերի միջոցով, ինչպես նաև նյութական, կադրային և այլ միջոցներով: Առանց կազմակերպական այդ միջոցների իշխանության օղակները չեն կարող արդյունավետ իրականացնել իրավակատարման գործառույթը: Այս առնչությամբ մասնագետների կողմից շրջանառության մեջ է դրվել պետության «անմիջական կազմակերպական» գործունեության կառավարման տեսությունը: Դրան համապատասխան, վարչահիրավական հարաբերությունները դառնում են կազմակերպական հարաբերությունների տարատեսակ և կազմում մեկ ամբողջություն պետական կառավարչական ոլորտում:

Վարչահիրավական հարաբերությունները կազմակերպական առումով բաժանվում են երկու խմբի՝ «***ինքնակազմակերպում***» և «***կազմակերպում***»:

Ինքնակազմակերպումը ենթադրում է ամբողջ գործադիր ապարատում սեփական աշխատանքի կազմակերպումը, որն իրականացվում է վարչահիրավական հարաբերությունների շրջանակներում գործադիր մարմինների համակարգի տարբեր օղակների միջև: Մասնա-

վորապես, հանրապետական գործադիր մարմնի ղեկավարը ղեկավարում, համակարգում և վերահսկում է այդ համակարգի մեջ մտնող օղակների ընթացիկ գործունեությունը[1]:

Կազմակերպումը, ի տարբերություն ինքնակազմակերպման հարաբերությունների, ընդգրկում է ավելի լայն շրջանակներ՝ ներգրավելով պետական կառավարման ոլորտի հետ այս կամ այն չափով առնչվող այլ կոլեկտիվներ ու անձինք (օրինակ, հասարակական միավորումների գրանցումը, ոչ պետական կազմավորումներին լիցենզիա տալը, հասարակական կարգի պահպանության ապահովումը և այլն): Նշված հարաբերությունների սահմաններում գործադիր իշխանությունը հնարավորություն է ձեռք բերում ներգործելու մասնակիցների վարքագծի (գործունեության) նկատմամբ:

6. Վարչաիրավական նորմով սահմանված իրավազորությունը կամ պարտականությունները միակ պայմանն է, որի պահպանման դեպքում յուրաքանչյուրը կարող է նախաձեռնել վարչաիրավական հարաբերությունների ծագումը կամ դադարեցումը: Այդպիսի հարաբերությունները «բաց են» և կարող են ծագել ***կողմերից (մասնակիցներից) յուրաքանչյուրի նախաձեռնությամբ*** (գործադիր մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, պետական և ոչ պետական կազմակերպությունների, քաղաքացիների և այլն):

Սակայն, ի տարբերություն, օրինակ, քաղաքացիական իրավահարաբերությունների, վարչաիրավական հարաբերությունները կարող են ծագել ինչպես երկրորդ կողմի (մասնակցի) ***համաձայնությամբ,*** այնպես էլ նրա ***ցանկությանը հակառակ:***

Վարչաիրավական հարաբերությունների նշված առանձնահատկությունը կանխորոշված է նրանով, որ այդպիսի հարաբերություններում որպես պարտադիր կողմ մասնակցում է իշխանությամբ օժտված սուբյեկտը՝ գործադիր մարմինը, դրա պաշտոնատար անձը: Ընդ որում, վարչական իրավունքի նորմերի պահանջներին համապատասխան, այդ սուբյեկտը՝ իր նախաձեռնությամբ, պարտավոր է կատարելու այնպիսի գործողություններ, որոնք առաջացնում են կոնկրետ վարչաիրավական հասարակական հարաբերություններ, այսինքն՝ իրավաբանա-

---

[1] Տե՛ս Հանրապետության Նախագահի 18.07.07 հրամանագրի 136-րդ կետի 1-ին ենթակետը (տե՛ս ՀՀ ՊՏ 2007 № 37(561), 25.07.07):

կան հետևանքներ: Վարչաիրավական հարաբերության մյուս կողմի համար նշված գործողությունները պարտադիր են, քանի որ վերջինիս համար ծագում են պարտադիր վարքագծի (գործողության) կանոններ: Հետևաբար, գործադիր մարմինը, դրա պաշտոնատար անձը (իշխող սուբյեկտը) հիշյալ հարաբերություններում գործում է իշխանության գործադրմամբ, իսկ դրա գործողությունը կամ ընդունած կարգադրագիրը պարտադիր է կատարման՝ անկախ հարաբերության մյուս կողմի համաձայնության կամ անհամաձայնության: Օրինակ, գործադիր իշխանության (պետական կառավարման) վերադաս մարմինը (պաշտոնատար անձը) տալիս է ստորադաս մարմնի (պաշտոնատար անձի) համար պարտադիր կարգադրագիր: Կամ լիազորված գործադիր մարմնի (պաշտոնատար անձի) և վարչական զանցանք կատարած անձի միջև ծագում է վարչաիրավական այնպիսի հարաբերություն, որ լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) դրա շրջանակներում իրավախախտողի նկատմամբ կիրառում է վարչաիրավական նորմով սահմանված վարչական պատասխանատվության միջոցներ:

Վարչաիրավական հարաբերությունները, ինչպես արդեն նշվեց, ծագում են հարաբերության կողմերի նախաձեռնությամբ և, հետևաբար, միշտ չէ, որ իշխանություն գործադրող սուբյեկտը (գործադիր մարմինը, դրա պաշտոնատար անձը) հանդես է գալիս իշխանության կիրառմամբ: Մասնավորապես, եթե քաղաքացին դիմում է գործադիր մարմին (դրա պաշտոնատար անձին), ապա վարչաիրավական հարաբերությունն առաջանում է քաղաքացու նախաձեռնությամբ և այդ կապակցությամբ տվյալ մարնի (պաշտոնատար անձի) համար ծագում են համապատասխան վարչաիրավական նորմով սահմանված պարտականություններ դիմողի առջև: Ի դեպ, վերջինս կարող է դիմումը քննարկող մարմնին (պաշտոնատար անձին) ներկայացնել իրավական բնույթի պահանջներ:

7. Գործնականում վարչաիրավական հարաբերության կողմերի միջև հնարավոր են վեճեր: Այդպիսի վեճերը, որպես կանոն, լուծվում են ***վարչական,*** այսինքն՝ արտադատական կարգով: Ենթադրվում է, որ դրանց լուծման հիմնական ձևը դեռևս դուրս չի գալիս գործադիր իշխանության (պետական կառավարման) ոլորտի շրջանակներից: Դրա էությունը կայանում է նրանում, որ գործադիր իշխանության (պետական կառավարման) լիազոր մարմինը վեճը լուծում է վարչաի-

րավական կարգավորման միջոցով, ընդունելով իրավաբանական-իշխանական որոշում:

Վարչաիրավական տարբեր վեճեր լուծելու համար օրենսդրությամբ սահմանված է որոշակի կարգ: Մասնավորաբար, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը (18.02.04թ.) սահմանում է վարչական բողոք բերելու հիմքերը և կարգը: Դրան համապատասխան, յուրաքանչյուրն իրավունք ունի բողոքարկելու վարչական ակտերը: Այն կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով: Վարչական կարգով բողոքը կարող է ներկայացվել ակտն ընդունած վարչական մարմին և դրա վերադասին (69-70-րդ հոդվածներ):

Ինչպես քաղաքացիները, այնպես էլ վարչաիրավական հարաբերության մյուս կողմերը վերը նշված հարցերը լուծելու համար օգտագործում են ***վարչական բողոքարկման*** ինստիտուտը:

Եթե ակտը բողոքարկվել է վարչական և դատական կարգով միաժամանակ, ապա բողոքը ենթակա է դատական քննության, որի որոշումը վերջնական է: Այս կարգի ակտերի լուծումը դատական կարգով (որի շրջանակները միտում ունեն ընդլայնվելու) ամրապնդում է օրինականության ապահովման երաշխիքները:

8. Ի տարբերություն, օրինակ, քաղաքացիաիրավական հարաբերությունների, որոնց համար բնորոշ է հարաբերության մի կողմի պատասխանատվությունը մյուսի առջև, վարչական իրավունքը սահմանում է վարչաիրավական հարաբերության կողմերի (մասնակիցների) պատասխանատվության այլ կարգ: Վարչաիրավական նորմերի խախտման դեպքում հարաբերության մի կողմի (ֆիզիկական կամ իրավաբանական անձ) պատասխանատվությունն առաջանում է ոչ թե երկրորդ կողմի, այլ անմիջականորեն պետության առջև՝ հանձինս դրա լիազորված մարմնի (պաշտոնատար անձի): Այդպիսի խախտումը որակվում է որպես հանրային-իրավական շահերի դեմ ուղղված գործողություն և լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) միակողմ կարգով մեղավոր կողմի նկատմամբ կիրառում է վարչական պատասխանատվության միջոց:

§2. Վարչաիրավական հարաբերությունների տեսակները

Վարչական իրավունքի համար տեսական և կիրառական կարևոր նշանակություն ունի վարչաիրավական հարաբերությունների տեսակների բնութագրման ու դասակարգման հարցը: Այն իրավաբանական գրականության մեջ տարամետ, երբեմն էլ հակասական մեկնաբանությունների տեղիք է տալիս: Դրանք պայմանավորված են գործադիր իշխանության (պետական կառավարման) ոլորտի բազմազանությամբ, որի շրջանակներում էլ ծագում են բովանդակությամբ, բնույթով և ուղղվածությամբ տարբեր վարչաիրավական հարաբերություններ:

Վերոհիշյալից ելնելով վարչաիրավական հասարակական հարաբերությունները կառավարվողների նկատմամբ կարող են սահմանել ***խիստ*** (օրինակ, տարերային աղետների դեպքում) և ***մեղմ*** (օրինակ, խթանիչ նորմեր) ներգործության միջոցներ: Կառավարչական պրակտիկան ցույց է տալիս, որ վարչաիրավական հարաբերությունները միշտ չէ, որ ուղղակի արտահայտում են պետական-կառավարչական իշխանական բնույթը, քանի որ այդ կարգի հասարակական հարաբերությունները կարող են ծագել կողմերի (մասնակիցների) հավասարության սկզբունքով: Այս կապակցությամբ պետք է նկատի ունենալ, որ վերջին տարիներին որոշակի զարգացման միտում է նկատվում ***պայմանագրային*** (համաձայնագրային) տեսակի վարչաիրավական հարաբերությունների կտրվածքով:

Սակայն, ի տարբերություն վերը թվարկվածների, առաջատարի դերը պահպանում են այն վարչաիրավական հասարակական հարաբերությունները, որոնք անմիջականորեն կապված են գործադիր իշխանության (պետական կառավարման) մարմինների, դրանց պաշտոնատար անձանց կողմից այս կամ այն օբյեկտների նկատմամբ կառավարչական կամ կարգավորիչ ներգործության գործնական իրականացման հետ: Այսինքն՝ նկատի են առնվում այն կառավարչական կապերը, որոնց շրջանակներում արտահայտվում են նշված հարաբերությունների վարչաիրավական կարգավորման հիմնական առանձնահատկությունները:

1. Վարչական իրավունքի տեսության մեջ պայմանականորեն առանձնացվում են ***հիմնական*** և ***ոչ հիմնական վարչաիրավական հարաբերությունները,*** որոնք արտահայտում են կառավարման էությունը:

Հիմնական վարչաիրավական հարաբերությունները կարևոր տեղ են զբաղեցնում գործադիր իշխանության (պետական կառավարման) իրականացման մեխանիզմում, քանի որ անմիջականորեն արտահայտում են «սուբյեկտ-օբյեկտ» կամ «հրաման-կատարում» կառավարչական ներգործության հիմնական բանաձևը: Փաստորեն այդ իշխանահարաբերությունն արտահայտում է պետական կառավարչական գործունեության իշխանական բնույթը, նկատի ունենալով դրա առավելագույն առնչությունը կարգավորիչ ներգործության հետ:

Նշված բանաձևն արտահայտում է նաև կառավարմանը ներհատուկ ավտորիտարության, այսինքն՝ կառավարման սուբյեկտի կամաարտահայտության առավելությունը: Այդպիսի վարչաիրավական հարաբերություններ են առաջանում վերադաս և ստորադաս մարմինների (պաշտոնատար անձանց) միջև՝ գործադիր իշխանության (պետական կառավարման) գործնական իրականացման ընթացքում, ինչպես նաև նույն մարմինների (պաշտոնատար անձանց) և որոշակի վարչաիրավական պարտականություններ կրող քաղաքացիների միջև և այլն:

Ոչ հիմնական վարչաիրավական հարաբերությունները դուրս են «սուբյեկտ-օբյեկտ» փոխգործողության շրջանակներից, այսինքն՝ չեն ընդգրկվում անմիջական կառավարչական ներգործության շրջանակների մեջ, սակայն օրգանապես կապված են այդպիսի ներգործության իրականացման հետ: Այս կարգի վարչաիրավական հարաբերություններն առաջանում են կառավարման ոչ ենթակա կողմերի (մասնակիցների) միջև: Նման հարաբերություններում կողմերն իրավահավասար են և դա արտահայտվում է «սուբյեկտ-սուբյեկտ» բանաձևով: Օրինակ, երկու կամ ավելի նախարարություններ կամ կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմիններ կարող են անհրաժեշտությունից ելնելով համատեղ իրավական ակտ ընդունել, համաձայնեցնել փոխադարձ կառավարչական հարցեր կամ գործել փոխօգնության շրջանակներում: Գործունեության այդպիսի ձևերը բազմաբնույթ են և անհրաժեշտ՝ գործադիր իշխանության (պետական կառավարման) իրականացման նպատակով բնականոն պայմաններ ստեղծելու համար:

Ի տարբերություն հիմնական վարչաիրավական հարաբերությունների, ոչ հիմնական վարչական հարաբերություններն օժանդակ

նշանակություն ունեն և իշխանահարաբերության կազմակերպական-իրավական նախադրյալներ են հանդիսանում:

2. ***Արտաքին և ներկազմակերպական վարչաիրավական հարաբերություններ:***

Արտաքին վարչաիրավական հարաբերությունները ծագում են կառավարման արտաքին ոլորտների շրջանակներում: Այն առաջանում է կառավարվող օբյեկտների նկատմամբ կառավարման գործառույթների անմիջական իրականացման ընթացքում:

Ներկազմակերպական վարչաիրավական հարաբերությունները ծագում են կառավարման մարմնի ներքին գործունեության շրջանակներում: Այդպիսի հարաբերություններ են համարվում, օրինակ, կառավարման համապատասխան մարմնի կառուցվածքային և կադրային հարցերի լուծումը, ապարատի աշխատողների միջև պարտականությունների բաշխումը և այլն:

Արտաքին և ներկազմակերպական վարչաիրավական հարաբերություններն իրենց նշանակությամբ և որպես կառավարչական կառուցակարգ ինչպես արտաքին, այնպես էլ ներկազմակերպական ոլորտներում, ապահովում են նպատակային կառավարչական ներգործություն: Հետևաբար, և՛ արտաքին, և՛ ներքին վարչաիրավական հարաբերությունների շրջանակներում իրականացվում է պետական կառավարում: Գործնականում, առանց ներքին պատշաճ կազմակերպվածության հնարավոր չէ արդյունավետ գործել տվյալ կազմակերպության շրջանակներից դուրս և լուծել կառավարման մարմինների առջև ծառացած խնդիրները:

3. ***Ենթակարգության և համակարգման վարչաիրավական հարաբերություններ:***

Ենթակարգության վարչաիրավական հարաբերությունները կառուցված են կառավարման սուբյեկտի ավտորիտար (իշխանական) կամաարտահայտության վրա: Դրանք իրենց էությամբ հենց վարչական են համարվում:

Համակարգման վարչաիրավական հարաբերությունները ենթադրում են այնպիսի հարաբերություններ, որոնցում, որպես կանոն, բացակայում է կառավարման հարցերի ավտորիտար (իշխանական) իրավաբանական կամաարտահայտությունը (օրինակ, ոչ ենթակա կառավարման մարմինների միջև հարաբերությունները): Անհրաժեշտ է

նկատի ունենալ, որ համակարգման հարաբերությունները միանշանակ չեն մեկնաբանվում: Մի դեպքում համակարգումը (համաձայնեցումը) կապված չէ ենթակայության հետ, սակայն չունի իշխանական բնույթ: Օրինակ, պետական կառավարման մարմինների և ոչ պետական կազմակերպությունների, հիմնարկների միջև համակարգումը կարող է արտահայտվել փոխհամագործակցության ապահովման ձևով, ուր բացակայում են կառավարման իրավաբանական յուրահատկությունները: Մի այլ դեպքում, ի դեպ, դրանք ավելի բնորոշ են համակարգման վարչաիրավական հարաբերություններին, արտահայտվում են կառավարման իրավաբանական յուրահատկություններով, այսինքն՝ որպես կառավարչական գործունեություն: Այսպես, Սահմանադրության համաձայն վարչապետը համակարգում է նախարարների աշխատանքը (87-րդ հոդված), իսկ մարզպետը՝ սահմանված դեպքերում գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը (88.1-րդ հոդված): Բնականաբար, այս կարգի համակարգման լիազորությունները, որպես կանոն, լուծվում են համապատասխանաբար՝ վարչապետի և մարզպետի ակտերով, որոնք ունեն պետական կառավարմանը հատուկ իրավաբանական-իշխանական բնույթ: Ընդ որում, դա վերաբերում է և՛ համաստորադաս (վարչապետ և նախարարներ), և՛ ոչ համաստորադաս՝ (մարզպետ և գործադիր մարմինների տարածքային ծառայություններ) մարմինների փոխհարաբերություններին:

Նշված օրինակները ցույց են տալիս, որ, ըստ էության, համակարգումը կարող է նաև լինել ենթակարգության (սուբորդինացման) բնույթի: Հետևաբար, վերը շարադրվածը միաժամանակ հիմք է տալիս ենթադրելու, որ վարչաիրավական հարաբերությունների դասակարգումն՝ ըստ ենթակարգության (սուբորդինացման) և համակարգման (կոորդինացման), պայմանական է:

4. ***Վարչաիրավական հարաբերության*** մասնակիցների (կողմերի) փոխգործողության իրավաբանական բնույթին համապատասխան դրանք լինում են ***ուղղահայաց*** և ***հորիզոնական:***

Ուղղահայաց վարչաիրավական հարաբերությունները մշտապես ծագում են համաստորադաս մասնակիցների (կողմերի) միջև և բացառում են դրանց իրավական հավասարությունը: Այս կարգի հարաբերություններում, որպես իշխանական կողմ, պարտադիր մասնակ-

ցում է համապատասխան գործադիր մարմինը (պաշտոնատար անձը)՝ օժտված անհրաժեշտ ծավալի իրավաբանական-իշխանական լիազորություններով: Ի տարբերություն հարաբերության առաջին կողմի, երկրորդ կողմը՝ թեկուզ կարող է լինել գործադիր մարմին (պաշտոնատար անձ), չունի այդ ծավալի լիազորություններ (օրինակ, կառավարությունը և կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինները), կամ էլ ընդհանրապես չունի իրավաբանական-իշխանական լիազորություններ (օրինակ, քաղաքացիները, հասարակական միավորումները և այլն): Նշված պայմանները հնարավորություն են ընձեռում ուղղահայաց վարչաիրավական հարաբերության առաջին կողմին (պարտադիր մասնակցին) անմիջականորեն իրականացնելու կառավարչական ներգործություն թեկուզև կազմակերպորեն ոչ ենթակա մյուս կողմի նկատմամբ (օրինակ, քաղաքացու, հասարակական միավորման և այլն): Այսպիսով, ուղղահայաց վարչաիրավական հարաբերություններն ընդգծում են վարչաիրավական կարգավորման ուղղակի բնույթը և կառավարման սուբյեկտի ու օբյեկտի միջև ենթակայության կապը:

Չնայած վարչաիրավական հարաբերություններում կառավարչական ուղղահայացության աստիճանը երբեմն տարբերակվում է, այնուամենայնիվ, ամեն դեպքում, պահպանվում է ուղղահայաց հարաբերության տրամաբանական էությունը՝ կողմերի իրավաբանական անհավասարության սկզբունքը: Դրանից բխում է ուղղահայաց վարչաիրավական հարաբերության հիմնական բանաձևը՝ մի կողմի ենթակայությունը մյուսին: Ի դեպ, ենթակայությունն արտահայտվում է տարբեր ձևերով՝ կազմակերպական ենթակայության (օրինակ, վերադաս և ստորադաս գործադիր մարմինների միջև կապերը և այլն) և ոչ կազմակերպական ենթակայության (օրինակ, քաղաքացիների, նրանց միավորումների և գործադիր մարմինների միջև կապերը): Անկախ ենթակայության ձևերից, ուղղահայաց վարչաիրավական հարաբերություններում մշտապես գործում է «իշխանություն-ենթակայություն» բանաձևը, այսինքն՝ ենթակայության բացակայությունը չի բացառում կողմերի միջև այդպիսի հարաբերության ծագման հնարավորությունը:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ միջճյուղային կառավարման ընթացքում իրականացվում է իշխանական համակարգման գործու-

նեություն կազմակերպորեն ոչ համաստորադաս մարմիններում (օրինակ, ֆինանսների նախարարությունը վերահսկողություն է իրականացնում ֆինանսական գործառնությունների նկատմամբ նաև կազմակերպորեն ոչ համաստորադաս տարբեր օբյեկտներում), որը համարվում է համակարգման ենթակայություն: Ոստիկանությունը նույնպես վարչական հսկողություն է իրականացնում կազմակերպորեն ոչ ենթակա կազմավորումներում, որոնք չնայած դրան, կոչվում են հսկողության ենթակա օբյեկտներ և ոստիկանության կարգադրագրերն իրավաբանորեն պարտադիր են, այսինքն՝ դրսևորվում է փաստացի ենթակայություն:

Հորիզոնական վարչաիրավական հարաբերություններում բացակայում է մի կողմի իրավական-իշխանական կարգավորիչ ներգործության պարտադիր լինելը մյուս կողմի համար: Դա պայմանավորված է վարչաիրավական հարաբերության շրջանակներում կողմերի (մասնակիցների) փաստական և իրավական հավասարությամբ: Վարչաիրավական հարաբերության այս տեսակը որոշակի տարակարծությունների տեղիք է տալիս, նկատի ունենալով այդ հարաբերությունների կարգավորիչ յուրահատկությունները:

Իրավաբանական գրականության մեջ այս կապակցությամբ նշվում է, որ առաջին հերթին պետք է առկա լինի վարչաիրավական հարաբերության մասնակիցների իրական, այլ ոչ թե զուտ ձևական իրավական հավասարությունը: Միաժամանակ անհրաժեշտ է, որպեսզի բացառվի որևէ ձևով արտահայտված դրանց համաստորադասությյունը: Գիտնականների կարծիքով հորիզոնական հարաբերությունները հանել վարչաիրավական հարաբերությունների ընդհանուր զանգվածից բավականին դժվար է: Իբրև օրինակ նրանք նշում են, որ գործադիր մարմինների աշխատանքում համանման պաշտոնների հանրային ծառայողների միջև շփումների արդյունքում՝ առանց պարտադիր ցուցումների, ուղղակի կապ է ստեղծվում տվյալ մարմնի կառավարչական գործունեության հետ (օրինակ, համապատասխան նյութերի, տեղեկանքների,որոշումների նախագծերի մշակման և այլ նպատակով):

Այդպիսի հարաբերություններ կարող են ստեղծվել նաև ոչ համաստորադաս կառավարման մարմինների միջև, մասնավորապես,

համատեղ կառավարչական միջոցառումների համաձայնեցման, միջգերատեսչական խորհրդակցական մարմիններ ստեղծելու, համատեղ նորմատիվ ակտերի նախագծեր մշակելու կապակցությամբ և այլն: Ի դեպ, այս կարգի հարաբերությունները նախորդում են անմիջական կառավարչական ներգործությանը, այսինքն՝ պայմաններ են ստեղծում ուղղահայաց վարչաիրավական հարաբերությունների ծագման՝ միակողմ իրավաբանական- իշխանական անհրաժեշտ որոշումներ ընդունելու համար:

Նշված միակողմ ընդունված որոշումների արդյունավետ իրականացման նպատակով կառավարչական ներգործության հետևանքով առաջանում են համանման հարաբերություններ (օրինակ, միջգերատեսչական հանձնաժողովների ստեղծում, համատեղ ստուգումների անցկացում և այլն): Մասնագետները վերը նշված երկու խումբ վարչաիրավական հարաբերությունները դասում են ***վարչաարարողակարգային հարաբերությունների*** շարքը:

Բովանդակությամբ հորիզոնական վարչաիրավական հարաբերություններ են համարվում նաև վարչաընթացակարգային (վարչական վարույթի) հարաբերությունները, որոնք առաջանում են վարչաիրավական վեճերի հետևանքով և կողմերին վերապահվում է ընթացակարգային հավասար վիճակ, ինչպես նաև՝ վարչապայմանագրային բնույթի առանձին հարաբերություններ:

Ընդհանրացնելով հորիզոնական վարչաիրավական հարաբերությունների վերաբերյալ նյութը, հարկ է ընդգծել, որ բոլոր համատեղ գործողությունները, որոնք արտահայտվում են «սուբյեկտ-սուբյեկտ» բանաձևով, վերաճում են ուղղահայաց վարչաիրավական հարաբերությունների (օրինակ, համատեղ կառավարչական ակտերի ընդունում, վարչական իրավախախտում կատարած անձի նկատմամբ լիազորված մարմնի (պաշտոնատար անձի) միակողմ կարգով ընդունած որոշումը և այլն): Այս առնչությամբ հորիզոնական վարչաիրավական հարաբերություններն ունեն ժամանակավոր և օժանդակ բնույթ:

§3. Վարչաիրավական հարաբերությունների կառուցվածքը

Վարչաիրավական հարաբերությունները՝ որպես կառավարչական հարաբերություններ, ունեն իրենց յուրահատուկ կառուցվածքը: Այս առումով դրանք բաժանվում են երեք խմբի՝ ***կառավարման սուբյեկտ, կառավարման օբյեկտ և իրավահարաբերության բովանդակություն***: Ընդ որում, կառավարման նպատակն է զարգացնել ինչպես կառավարող համակարգը (կառավարման սուբյեկտը), այնպես էլ կառավարվող համակարգը (կառավարման օբյեկտը):

Կառավարման սուբյեկտը՝ վարչական իրավունքի կողմից կարգավորվող կառավարման հարաբերության այն կողմն է, որի մոտ է կենտրոնացված իշխանությունը, իսկ ***կառավարման օբյեկտը***՝ կառավարման հարաբերության մյուս կողմի կամքի ենթակայությունը: Վարչաիրավական ***հարաբերության բովանդակությունն*** իր հերթին տարբերակվում է երկու մասի՝ ***նյութական*** և ***իրավաբանական:*** Նյութականն ընդգրկում է սուբյեկտների վարքագիծը, իսկ իրավաբանականը՝ սուբյեկտիվ իրավաբանական իրավունքներն ու պարտականությունները:

Վարչական իրավունքի գիտությունը վարչաիրավական հարաբերությունների սուբյեկտները բաժանում է երկու խմբի՝ քաղաքացիներ (անհատներ) և կազմակերպություններ (կոլեկտիվներ), որոնք իրենց կարգավիճակով տարբերվում են միմյանցից: Բացի այդ, վարչաիրավական հարաբերություններում հաճախ որպես սուբյեկտ հանդես են գալիս պաշտոնատար անձինք, սակայն նրանք այդ կարգավիճակով հանդես են գալիս տվյալ կազմակերպության անունից և իր գործողությունն իրավաբանական հետևանքներ է առաջացնում հենց կազմակերպության համար:

Ի տարբերություն իրավունքի մյուս ճյուղերի, վարչական իրավունքն առանձնահատուկ է նաև նրանով, որ իրավասուբյեկտությամբ է օժտում հասարակական հարաբերության լայն շրջանակի մասնակիցների, որի հետևանքով վարչական իրավունքի սուբյեկտների համակարգը բավականին բարդ բնույթ ունի:

Իրավաբանական գրականության մեջ կառավարման սուբյեկտի և օբյեկտի բնորոշման վերաբերյալ կան տարբեր մոտեցումներ: Մաս-

նավորաբար, Յու. Տիխոմիրովը կառավարման սուբյեկտ է համարում կազմակերպորեն կառուցված սոցիալական ընդհանրությունը, որն իրականացնում է ղեկավարման գործառույթներ և ներգործում օբյեկտի վրա՝ նոր վիճակի փոխադրելու նպատակով, իսկ կառավարման օբյեկտն այնպիսի սոցիալական ընդհանրության կառուցվածք է, որը գործում է սուբյեկտի կողմնորոշիչ ներգործության ներքո՝ կառավարման համակարգի ընդհանուր նպատակին հասնելու համար[1]:

Դ. Օվսյանկոն գտնում է, որ սուբյեկտը գործադիր իշխանության ոլորտում իրավահարաբերության կողմ է՝ օժտված համապատասխան պետական-իշխանական լիազորություններով, իսկ օբյեկտը՝ իրավահարաբերության մյուս կողմը, որը կարող է գործադիր իշխանության ոլորտում օժտված լինել իրավունքներով ու պարտականություններով, բայց որպես կառավարվող կողմ[2]:

Մասնագետների մի խումբ այն կարծիքին է, որ վարչաիրավական հարաբերության օբյեկտը հանդիսանում է կամքը, գիտակցությունը և դրանցով միջնորդավորված վարքագիծը (գործողությունը), որոնք կառավարվում են գործադիր իշխանության (պետական կառավարման) իրականացման ոլորտում: Նշված պայմաններով օբյեկտի դերում կարող են հանդես գալ պետական մարմինները, պետական և ոչ պետական կազմակերպությունների, հիմնարկների կառավարման մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, արտասահմանյան կազմակերպությունները, քաղաքացիները, հանրային ծառայողները:

Որոշ հեղինակներ վարչաիրավական հարաբերության որպես միակ օբյեկտ համարում են գործողությունները, մարդկանց վարքագիծը[3], իսկ մյուսներն առանձնացնում են ոչ միայն գույքային հարաբերությունների օբյեկտը (նյութական առարկաները և իրերը) այլև ոչ գույքային հարաբերությունների օբյեկտը (գործողությունները, մարդկանց վարքագիծը)[4]:

---

[1] Տե՛ս Тихомиров Ю.А., նշված աշխ., էջ 46:
[2] Овсянко Д.М., նշված աշխ., էջ 21:
[3] Козлов Ю.М. Административные правоотношения. М., 1976. Халфина Р.О. Общее учение о правоотношении. М., 1974.
[4] Петров Г.И. Советское административное право. Часть Общая. ЛГУ, 1961, էջ 85-86 և ուրիշներ:

Հեղինակների մեծամասնությունը գտնում է, որ վարչաիրավական կարգավորման է ենթարկվում ոչ թե իրը, առարկան, այլ մարդու վերաբերմունքն իրի, առարկայի նկատմամբ: Այսպես, երթևեկության կանոնների խախտման դեպքում օբյեկտ է հանդիսանում ոչ թե տրանսպորտային միջոցը, ճանապարհը, այլ՝ մարդու վարքագիծը (գործողությունը):

Որպես վարչաիրավական հարաբերության անհրաժեշտ տարրեր՝ սուբյեկտը և օբյեկտը գտնվում են փոխադարձ սերտ կապի մեջ: Օրինակ, վերլուծությունների հետևանքով օբյեկտի մեջ կատարվող անհրաժեշտ փոփոխություններն առաջացնում են նաև փոփոխություններ սուբյեկտի կառուցվածքի, գործառույթների և այլ ասպարեզներում:

Վարչաիրավական հարաբերություններում, ուր միջնորդավորվում է գործադիր իշխանությունը (պետական կառավարումը), անպայման պետք է ունենա այդպիսի կողմ՝ հանձինս սուբյեկտի: Անտարակույս, վերջինս պետք է օժտված լինի իշխանությամբ և այդ իշխանությունը գործնականում կիրառելու հնարավորությամբ: Սովորաբար այդպիսի սուբյեկտներ են հանդիսանում՝ վարչաիրավական նորմերով սահմանված գործադիր իշխանության (պետական կառավարման) մարմինները (պաշտոնատար անձինք), որոնք օժտված են որոշակի ծավալի իշխանական լիազորություններով՝ գործադիր իշխանության (պետական կառավարման) գործառույթներն իրականացնելու նպատակով: Սուբյեկտի այդպիսի հատուկ կարգավիճակի ամբողջության միջոցով արտահայտվում է «միասնական կառավարող կամքը», որը, արդեն իսկ, իրական առավելություն է հարաբերության մյուս կողմի (մասնակցի) նկատմամբ: Սուբյեկտի իրավական վիճակը հնարավորություն է ընձեռում նրան մյուս կողմի նկատմամբ ձևավորելու համապատասխան կամաարտահայտություն, որը դրսևորվում է «իշխանություն-ենթակայություն» սկզբունքով: Որոշակի դեպքերում վարչաիրավական հարաբերության սուբյեկտի դերում կարող է հանդես գալ դատարանը (դատավորը):

Վարչաիրավական հարաբերության վերը թվարկված առանձնահատկություններն ուղղակիորեն կապված են պետության կառավարչական գործունեության ապահովման հետ և դրանցում արտահայտվում է պետության կամքը և շահերը, այսինքն՝ հանրային-իրավական

շահերը: Այդպիսի պարտադիր կողմ՝ սուբյեկտ, կարող է լինել միայն նա, ով հանդես է գալիս պետության անունից և օժտված է պետական-իշխանական լիազորություններով: Այդ է պատճառը, որ, ինչպես արդեն նշվել է, այդպիսի հարաբերությունները չեն կարող ծագել ինչպես քաղաքացիների միջև, այնպես էլ ոչ պետական կազմակերպությունների միջև:

Պետական-կառավարչական հարաբերությունների էական առանձնահատկությունն այն է, որ մշտապես ենթադրվում է կամքի համաստորադասության սկզբունքը, այսինքն՝ կարգավորվող կառավարչական հարաբերության մասնակիցների (օբյեկտի) կամքի ստորադրումը (ենթարկումը) միասնական կառավարող կամքին (սուբյեկտին): Վերջինս, օժտված լինելով իշխանական լիազորություններով, վարչաիրավական նորմի շրջանակներում կամովին կարգավորում է կառավարչական գործընթացները: Այս գործընթացի մասնակիցները (մարդիկ), ունենալով կամք ու գիտակցություն, հենց իրենք են կատարում վարչաիրավական նորմով նախատեսված որոշակի գործողություններ կամ ձեռնպահ են մնում դրանցից:

§4. Իրավաբանական փաստերը վարչական իրավունքում

Վարչաիրավական հարաբերությունների ծագման, փոփոխման կամ դադարման համար անհրաժեշտ է վարչական իրավունքի նորմերով նախատեսված համապատասխան հանգամանքների առկայությունը (դրանց վրա հասնելը): Այդպիսի հանգամանքներ են համարվում իրավաբանական փաստերը, որոնք, իբրև կանոն, հանդես են գալիս որպես ***գործողություն,*** իսկ առանձին պարագաներում՝ ***դեպքեր:*** Մասնագիտական գրականության մեջ «իրավաբանական փաստեր» հասկացության վերաբերյալ կան տարբեր կարծիքներ, որոնք միջև էական տարբերություններ գրեթե չկան:

Այսպես, Յու. Կոզլովի կարծիքով, իրավաբանական փաստերը հանգամանքներ են, որոնց առկայության դեպքում համապատասխան վարչաիրավական նորմով սահմանված պահանջների համաձայն, կողմերի միջև պետք է (կամ կարող է) ծագեն կոնկրետ հարա-

բերություններ[1]:

Իրավաբանական փաստերը՝ փաստացի հանգամանքներ են (գործողություն, դեպք), որոնց առկայության հետ իրավական նորմերը կապում են վարչահիրավական հարաբերությունների ծագումը, փոփոխումը և դադարումը, նշում է Դ. Օվսյանկոն[2]:

Ըստ Ա. Կորենևի, իրավաբանական փաստերը վարչահիրավական հարաբերությունների ծագման, փոփոխման կամ դադարման հիմք են հանդիսանում, այսինքն՝ դրանք այնպիսի փաստեր են, որոնց առկայությունն օրենսդիրը կապում է իրավական հարաբերությունների ծագման, փոփոխման և դադարման հետ[3]:

Հեղինակների մի խումբ գտնում է, որ իրավաբանական փաստերը՝ դրանք կոնկրետ հանգամանքներ են, որոնց վրա հասնելը վարչահիրավական նորմը կապում է վարչական իրավահարաբերությունների ծագման, փոփոխման կամ դադարման հետ[4]:

Հեղինակների մեկ այլ խումբ նշում է. իրավաբանական փաստերը՝ կենկրետ իրավական հանգամանքներ են, որոնք ներգործում են իրավահարաբերությունների ծագման, փոփոխման կամ դադարման վրա[5]:

Հեղինակների երրորդ խումբն իրավաբանական փաստերը համարում է հանգամանքներ, որոնց առկայության դեպքում տվյալ նորմի պահանջներին համապատասխան կողմերի միջև պետք է ծագեն կոնկրետ իրավահարաբերություններ[6]:

Իրավաբանական փաստերը նախատեսված են վարչահիրավական նորմերում. ***ուղղակի հիպոթեզում, անուղղակի դիսպոզիցիայում*** և ***սանկցիայում:***

Ինչպես արդեն նշվեց, վարչական իրավունքում իրավաբանական փաստերը կամային հատկանիշներով բաժանվում են ***գործողությունների և դեպքերի***:

---

[1] Козлов Ю.М., Попов Л.Л., նշված աշխ., էջ 76: Алехин А.П. և ուրիշներ, նշված աշխ., էջ 82:
[2] Овсянко Д.М., նշված աշխ., էջ 21:
[3] Коренев А.П., նշված աշխ., էջ 55:
[4] Григорян С. և ուրիշներ, նշված աշխ., էջ 33:
[5] Макарейко М.В., Черенков Е.А., նշված աշխ., էջ 35:
[6] Габричидзе Б.Н. և ուրիշներ, նշված աշխ., էջ 58:

Դեպքերն այնպիսի իրավաբանական փաստեր են, որոնք առաջանում են մարդկանց կամքից ու գիտակցությունից անկախ (օրինակ, մարդու ծնունդը կամ մահը, չափահաս դառնալը, տարերային աղետները և այլն):

Գործողություններն այն իրավաբանական փաստերն են, որոնց վրա հասնելը կախված է մարդկանց կամքից ու գիտակցությունից, այսինքն՝ գործողությունը սուբյեկտի ակտիվ կամաարտահայտության արդյունք է: Գործողությունները կարող են լինել ***իրավաչափ*** և ***ոչ իրավաչափ:***

Իրավաչափ գործողությունները լիովին համապատասխանում են վարչական իրավունքի նորմերով սահմանված պահանջներին (օրինակ, քաղաքացիների, ոչ պետական կազմավորումների, ինչպես նաև վարչաիրավական հարաբերության այլ կողմերի (մասնակիցների) իրավաչափ գործողությունները): Ավելի պարզ՝ իրավաչափ գործողությունները համապատասխանում են վարչաիրավական նորմերով սահմանված վարքագծի կանոններին: Իրավաչափ գործողության օրինակ կարող է ծառայել այն իրավաբանական փաստը, երբ քաղաքացին համապատասխան մարմին է ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթեր իրեն որպես ձեռնարկատեր գրանցելու համար: Այս փաստը կոնկրետ վարչաիրավական հարաբերություն է առաջացնում տվյալ մարմնի և քաղաքացու միջև:

Իրավաբանական փաստեր՝ իրավաչափ գործողություններ են համարվում, նաև պետական կառավարման մարմինների (պաշտոնատար անձանց) անհատական իրավական ակտերը, որոնք առաջացնում են համապատասխան վարչաիրավական հարաբերություններ: Այսպես, վարչական տույժի ենթարկելու վերաբերյալ լիազորված մարմնի (պաշտոնատար անձի) որոշումը հիմք է համարվում կատարողական վարույթի համար: Քաղաքացուն պաշտոնի նշանակելու կամ պաշտոնից ազատելու վերաբերյալ վարչական ակտը համապատասխանաբար առաջացնում է հանրային-ծառայողական հարաբերություններ կամ դադարեցնում է այդ հարաբերությունները:

Որպես իրավաբանական փաստ ***ոչ իրավաչափ*** են համարվում այն գործողությունները, որոնք չեն համապատասխանում վարչաիրավական նորմերի պահանջներին: Այդպիսի գործողություններով խախտվում են կառավարչական ոլորտներում սահմանված վարքագծի

կանոնները: Դրանք կառավարչական ոլորտին բնորոշ կարգապահական զանցանքներ կամ վարչական իրավախախտումներ են, որոնք առաջացնում են վարչաիրավազոր հարաբերություններ: Ոչ իրավաչափ իրավաբանական փաստ է համարվում նաև ***անգործությունը*** (օրինակ, պաշտոնատար անձի կողմից իր ծառայողական պարտականությունները չկատարելը և այլն):

Ի մի բերելով վերոշարադրյալ կարծիքները, կարելի է եզրահանգել, որ վարչաիրավական հասարակական հարաբերությունների ծագման, փոփոխման և դադարման համար նախադրյալներ են հանդիսանում իրավունքի նորմերը, իրավաբանական փաստերը և իրավասուբյեկտությունը (իրավունքի սուբյեկտների իրավունակությունը և գործունակությունը):

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 5.
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ, ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՉԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

§1. Ֆիզիկական անձանց վարչաիրավական կարգավիճակի հասկացությունը և բովանդակությունը

Վարչական իրավունքի սուբյեկտների մեջ առանձնահատուկ տեղ են գրավում ֆիզիկական անձինք: Իրավաբանական իմաստով այդպիսիք են համարվում ՀՀ քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք: Թվարկված ֆիզիկական անձանցից բացի, վարչական իրավունքի անհատական սուբյեկտների շարքին կարող են դասվել նաև հանրային ծառայողները, սակայն վերջիններս ունեն այլ կարգավիճակ և համարվում են վարչական իրավունքի ինքնուրույն սուբյեկտներ:

Ինչպես տեսականորեն, այնպես էլ օրենսդրությանը համապատասխան, վարչական իրավունքի առաջնային սուբյեկտն են հանդիսանում ոչ թե պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, այլ՝ քաղաքացիները: Դա պայմանավորված է նրանով, որ պետությունը կարող է հզոր լինել, իսկ դրա կառավարումը արդյունավետ՝ միայն պետության նկատմամբ քաղաքացիների վստահության դեպքում և, եթե պետության շահերի ապահովումն իրականացվի յուրաքանչյուրի և ամբողջությամբ հասարակության շահերի ներդաշնակ հավասարակշռմամբ: Պետությունը, դրա մարմինները և պաշտոնատար անձինք կոչված են ծառայելու հասարակությանը, դրա յուրաքանչյուր անդամին: Այս փոխհարաբերության համատեքստում վճռորոշ իրավական նշանակություն ունի նաև մարդկանց նկատմամբ պետության պարտավորությունների առնչությամբ

սահմանադրական կարգի հիմունքներն ամրագրող հիմնադրույթը. «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են: Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխան: Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք» (ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի):

Քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք, անկախ կացության կարգավիճակից, մշտապես գտնվում են պետության գործունեության ոլորտում: Սակայն, տվյալ պետության հետ իրավական կապին համապատասխան, իրավական ակտերում ամրագրված անձի (մարդու) և Հանրապետության քաղաքացու իրավունքներն ու պարտականությունները տարբերակվում են, դրանք նույնական չեն: Մասնավորապես, ՀՀ քաղաքացու կարգավիճակն ավելի լայն է, քան ՀՀ տարածքում բնակվող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակը: Միաժամանակ, որպես վարչական իրավունքի սուբյեկտ, յուրաքանչյուր քաղաքացի ունի իր կարգավիճակը:

Իրականացման հնարավորության աստիճանից ելնելով, քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները բաժանվում են երկու խմբի՝ ***բացարձակ*** (անվերապահ) և ***հարաբերական***:

Բացարձակ են համարվում այն իրավունքները, որոնցից անձն օգտվում է սոսկ իր կամքով (հայեցողությամբ): Օրինակ, պետական կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը մասնակցելը, դրանց մարմիններին դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելը, բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում կրթություն ստանալը և այլն): Այս կարգի իրավունքներն իրականացնելու համար իշխանության մարմինները պարտավոր են ստեղծել համապատասխան պայմաններ և պաշտպանել այդ իրավունքները:

Հարաբերական են կոչվում այնպիսի իրավունքները, որոնց իրականացման համար անհրաժեշտ է ոչ միայն անձի կամաարտահայտությունը, այլև կառավարման համապատասխան մարմնի ակտը (օ-

ռինակ, որոշակի գործունեությամբ զբաղվելու լիցենզիան, հանրային ծառայության պաշտոնի նշանակելու ակտը և այլն):

Բացարձակ վարչաիրավական պարտականությունները կապված չեն որևէ կոնկրետ պայմանի հետ և դրանք անվերապահ դրվում են յուրաքանչյուրի վրա (օրինակ, Սահմանադրությունը և օրենքները, կամ ճանապարհային երթևեկության կանոնները պահպանելը):

Հարաբերական պարտականությունները, ելնելով դրանց բովանդակությունից, առաջանում են իրավաչափ գործողությունից (օրինակ, հողի կամ տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ, կամ ուսանողի պարտականությունը) և ոչ իրավաչափ գործողությունից (օրինակ, նշանակված վարչական կամ կարգապահական տույժը կրելու պարտականությունը):

Քաղաքացիների վարչաիրավական կարգավիճակը ՀՀ Սահմանադրությամբ, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» 1995թ. նոյեմբերի 6-ի օրենքով[1] և այլ իրավական ակտերով ամրագրված նրանց ընդհանուր իրավական կարգավիճակի բաղկացուցիչ մասն է: Այս առումով, վարչաիրավական կարգավիճակը քաղաքացու կարգավիճակի տարատեսակներից է:

Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված ՀՀ քաղաքացիների իրավական կարգավիճակը պայմանավորված է նաև վավերացված կամ հաստատված միջազգային իրավական նորմերով, որոնք կազմում են ՀՀ իրավունքի համակարգի բաղկացուցիչ մասը: Օրինակ, ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1948թ. դեկտեմբերի 10-ին ընդունած մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» 1966թ. դեկտեմբերի 16-ի միջազգային դաշնագիրը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 1950թ. նոյեմբերի 4-ի եվրոպական կոնվենցիան, «Պետական ծառայության մեջ աշխատանքային հարաբերությունների մասին» 1978թ. հունիսի 27-ի թիվ 151 կոնվենցիան և այլն:

Այսպիսով, մարդու և քաղաքացու վարչաիրավական կարգավիճակի բովանդակությունն են կազմում վարչաիրավական նորմերով

---

[1] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու» (1995-1999թթ.), Գիրք - Ա, էջ 61:

նախատեսված իրավունքների, ազատությունների ու պարտականությունների ամբողջությունը, ինչպես նաև դրանց իրականացման երաշխիքները: Քաղաքացին, որպես վարչական իրավունքի առաջնային սուբյեկտ, տնտեսական, քաղաքական և սոցիալ-մշակութային տարբեր բնույթի հասարակական հարաբերություններում հանդես է գալիս իբրև մասնակից (կողմ), ունենալով որոշակի իրավունքներ ու պարտականություններ:

Քաղաքացու վարչաիրավական կարգավիճակը բազմակողմանի և բազմատեսակ բովանդակություն ունի և ընդգրկում է սահմանադրաիրավական, քաղաքացիաիրավական, ֆինանսական, աշխատանքային և իրավունքի այլ ճյուղերի նորմեր: Այս առումով, լինելով բարդ իրավաբանական կազմավորում, ունի մի շարք առանձնահատկություններ:

Մարդու և քաղաքացու վարչաիրավական կարգավիճակի բովանդակությունը կազմող իրավունքներն ու պարտականությունները հիմնականում բխում են Սահմանադրությամբ ամրագրված հիմնական իրավունքներից ու պարտականություններից և մանրամասնվում են առանձին օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով: Ընդ որում, ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված մարդու և քաղաքացու կարգավիճակի վերաբերյալ դրույթները մի դեպքում կրում են ***համընդհանուր***, մի այլ դեպքում՝ ***արտահայտված վարչաիրավական բնույթ***:

Համընդհանուր բնույթի սահմանադրաիրավական նորմերն ու դրույթներն իրավական նշանակություն ունեն ողջ իրավական համակարգի պարագայում, և բովանդակում են կարևոր տարրեր նաև վարչաիրավական կարգավիճակի հետ: Այդպիսիք են, օրինակ. բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև (14.1-րդ հոդված), յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք, մարդուն ազատությունից կարելի է զրկել օրենքով սահմանված դեպքերում ու կարգով (16-րդ հոդված) և այլն:

Արտահայտված վարչաիրավական բնույթի սահմանադրական նորմեր և դրույթներ են բովանդակում, օրինակ հետևյալ սահմանումները՝ յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ և պաշտոնատար ան-

ձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքը (27.1-րդ հոդված), քաղաքացիների՝ անմիջականորեն և իրենց ներկայացուցիչների միջոցով պետական կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունքը (30-րդ հոդված), քաղաքացիների՝ օրենքով սահմանված ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության ընդունվելու իրավունքը (30.2-րդ հոդված) և այլն:

Սակայն, վերը շարադրվածից չպետք է ենթադրել, որ մարդու և քաղաքացու բոլոր իրավունքներն ու պարտականությունները ծագում են նրանց սահմանադրական կարգավիճակից: Սահմանադրությամբ ամրագրվում են այն հիմնական իրավունքներն ու պարտականությունները, որոնք մարդու և քաղաքացու, ինչպես նաև հասարակության և պետության կենսագործունեության համար առավել կարևոր նշանակություն ունեն: Բնականաբար, կան այնպիսի իրավունքներ ու պարտականություններ, որոնք գործում են Սահմանադրությամբ ամրագրված նշված կարգավիճակի շրջանակներից դուրս: Դրանք կանոնակարգվում են Հանրապետության իրավունքի համակարգի մյուս ճյուղերի նորմատիվ իրավական ակտերով: Օրինակ, ճանապարհային երթևեկության կանոնները վարորդների և հետիոտների կողմից պահպանելու պարտականությունը, քաղաքացիների կողմից զենք ձեռք բերելու և պահելու իրավունքներն ու պարտականությունները, մաքսային, հարկային ծառայողների իրավունքներն ու պարտականությունները և այլն: Նշված դրույթները բխում են Սահմանադրության 42-րդ հոդվածից, որին համապատասխան, Սահմանադրությամբ ամրագրված մարդու և քաղաքացու կարգավիճակից բացի օրենքներով և միջազգային պայմանագրերով կարող են սահմանվել այլ իրավունքներ ու պարտականություններ: Այդ պարտականությունները, հատկապես վարչաիրավական, չեն կարող հակասել մարդու սահմանադրաիրավական կարգավիճակին, ավելին՝ պետք է բխեն դրանից:

Կարևորելով քաղաքացիների իրավունքների, ազատությունների, պարտականությունների ու պատասխանատվության հարցերը կարգավորելու խնդիրը և այդ բնագավառում օրենքների առաջնային նշանակությունը, ՀՀ Սահմանադրությունն էապես բարձրացրել է օրենքների դերը: Այդ են վկայում Սահմանադրության այն դրույթները, որոնց համաձայն բացառապես օրենքներով են սահմանվում ֆիզի-

կական և իրավաբանական անձանց իրավունքներն իրականացնելու և պաշտպանելու պայմաններն ու կարգը, իրավունքների և ազատությունների սահմանափակումները, նրանց պարտականությունները, ինչպես նաև ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող անձանց գործունեության նկատմամբ հսկողություն ու վերահսկողություն իրականացնելու, անձին իրավաբանական պատասխանատվության ենթարկելու դեպքերը, պայմանները և կարգը, վճարվող հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների տեսակները, չափը, վճարման կարգը և այլն (83.5-րդ հոդված):

Վերը շարադրվածը համապատասխան օրենքներով ամբողջացրել է նաև քաղաքացու վարչաիրավական կարգավիճակը տնտեսական, քաղաքական և սոցիալ-մշակութային ոլորտներում, ինչպես նաև դրանց համահունչ՝ նրանց իրավունքները, ազատությունները պաշտպանելու հարցում օրենքների, դատարանի և մյուս կառուցակարգերի դերի բարձրացումը:

Բացի Սահմանադրությունից և կոնկրետ օրենքներից, մարդու և քաղաքացու վարչաիրավական կարգավիճակի վերաբերյալ նորմեր կարող են պարունակել ինչպես հատուկ իրավական ակտերը (օրինակ, «Հավաքների ազատության մասին» 2011թ. ապրիլի 14-ի ՀՀ օրենքը), այնպես էլ համալիր իրավական ակտերը (օրինակ, սեփականության, շրջակա միջավայրի վերաբերյալ):

Տեղական ինքնակառավարման մարմինները, օրենքով նախատեսված լիազորությունների շրջանակներում, իրավասու են հրապարակելու այնպիսի իրավական ակտեր, որոնք կարող են ազդեցություն ունենալ մարդու և քաղաքացու իրավունքների, ազատությունների նկատմամբ: Այսպես, Սահմանադրության 106-րդ հոդվածի համաձայն համայնքներն իրենց կողմից մատուցվող ծառայությունների դիմաց կարող են սահմանել վճարներ:

ՀՀ Սահմանադրությունը, կտրուկ բարձրացնելով օրենքի դերը քաղաքացիների վարչաիրավական կարգավիճակի ամրագրման բնագավառում, միաժամանակ, դրա ձևավորման և հատկապես իրականացման գործում կարևորում է ինչպես պետական կառավարման մարմինների, այնպես էլ տեղական ինքնակառավարման մարմինների նշանակությունը: Օրենքի առաջատար դերն այս բնագավառում պետական կառավարման մարմինների իրավական գործառույթին

հիմնականում վերապահել է իրավակիրառ և ապահովման բնույթ: Մինչդեռ, գործնականում պետական կառավարման մարմիններն առաջնային կարգով անմիջականորեն ընդունում են նաև վարչաիրավական բնույթի որոշումներ: Միաժամանակ, չպետք է անտեսել այն, որ Սահմանադրությամբ, օրենքներով և միջազգային պայմանագրերով ամրագրված քաղաքացիների իրավունքներին ու պարտականություններին առնչվող մի շարք հարաբերություններ կարգավորվում են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ընդունած իրավական ակտերով: Տվյալ դեպքում հիմնական նախապայմանն այն է, որ չխախտվեն ՀՀ Սահմանադրության 83.5. հոդվածով ամրագրված դրույթները, որոնք սպառիչ սահմանում են բացառապես օրենքով կարգավորման ենթակա հարցերի շրջանակը:

Իրավակիրառ և ապահովման գործունեության բնագավառներում այդ մարմինները, մասնավորապես, կազմակերպում են քաղաքացիների վարչաիրավական կարգավիճակին վերաբերող օրենքների կատարումը, իրականացնում են պետության քաղաքականությունը, լուծում են հանրապետական և տեղական նշանակության հարցեր, միջոցներ են ձեռնարկում քաղաքացիների իրավունքների և օրինական շահերի, ինչպես նաև հասարակական կարգի պահպանության ապահովման ուղղությամբ և այլն: Բացի այդ, քաղաքացիների իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ վարչաիրավական ակտերի հիման վրա ինչպես պետական կառավարման, այնպես ել տեղական ինքնակառավարման մարմինները լուծում են բազմաթիվ անհատական գործեր (օրինակ, պաշտոնի են նշանակում և ազատում իրենց ենթակա աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում են կարգապահական տույժի միջոցներ, իսկ վարչական զանցանք կատարած անձանց նկատմամբ՝ վարչական տույժի միջոցներ, քննարկում և լուծում են քաղաքացիների առաջարկություններն ու դիմումները և այլն):

Քաղաքացիների վարչաիրավական կարգավիճակը կարգավորող իրավական նորմերը մի դեպքում կարող են բովանդակել միայն իրավունքներ (օրինակ, յուրաքանչյուր ոք ունի խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք, կամ վարչական իրավախախտում կատարած քաղաքացին իրավունք ունի ներկայացնելու բացատրություններ և դիտողություններ), մի այլ դեպքում՝ միայն պարտականութ-

յուններ (օրինակ, քաղաքացին պարտավոր է հարգել այլոց իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը կամ տրանսպորտային միջոցների վարորդների և հետիոտների կողմից ճանապարհային երթևեկության կանոնների պահպանումը): Երբեմն նշված նորմերը միաժամանակ բովանդակում են և՛ իրավունքներ, և՛ պարտականություններ (օրինակ, վարչական իրավախախտման համար տույժի ենթարկված անձն իրավունք ունի այդ կապակցությամբ կայացված որոշումը բողոքարկելու և դրան զուգահեռ պարտավոր է կատարելու նույն որոշմամբ նշանակված տույժը, ինչպես նաև մուծելու վարչական իրավախախտում կատարելու տեղում գանձվող տուգանքը): Անհրաժեշտ է նշել նաև, որ վարչահիրավական նորմերով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները կարող են վերաբերվել բոլորին (օրինակ, յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք, կամ յուրաքանչյուր ոք պարտավոր է պահպանելու Սահմանադրությունը և օրենքները), կամ վերաբերվել կոնկրետ քաղաքացիների (կենսաթոշակառուներին, զինծառայողներին և քաղաքացիություն չունեցող անձանց):

Վարչահիրավական նորմի բովանդականությունը երբեմն կախված է լինում անձի ցանկությունից (օրինակ, յուրաքանչյուր ոք ունի այլ անձանց հետ միավորումներ կազմելու և դրանց անդամագրվելու իրավունք), իսկ երբեմն էլ հակառակ նրա ցանկության (օրինակ, քաղաքացուն տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկելը կամ իրավախախտումը կանխելու, դրա վերաբերյալ արձանագրություն կազմելու և խախտողի անձը պարզելու համար նրան ոստիկանություն բերման ենթարկելը):

Քաղաքացիների վարչահիրավական կարգավիճակի ընդհանուր բնորոշումը տրվել է պրոֆ. Յու. Տիխոմիրովի կողմից. քաղաքացու վարչահիրավական կարգավիճակն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված քաղաքացու իրավունքները, պարտականությունները և պատասխանատվություն են, որոնք ապահովում են նրա մասնակցությունը պետական կառավարմանը և պետական մարմինների գործունեության հետևանքով բավարարում հանրային ու անհա-

տական շահերը[1]:

Քաղաքացու վարչաիրավական կարգավիճակի բաղկացուցիչ մասն են կազմում ***իրավասուբյեկտությունը*** և վարչաիրավական նորմով սահմանված նրա իրական իրավունքներն ու պարտականությունները: Իրավասուբյեկտությունը ներառում է ինչպես իրավունքներ ունենալու և պարտականություններ կրելու ունակությունը (իրավունակություն), այնպես էլ ինքնուրույն այդ իրավունքները ձեռք բերելու ու պարտականություններն ստանձնելու և դրանք իրականացնելու ունակությունը (գործունակություն): Իրավաբանական գրականության մեջ երբեմն իրավասուբյեկտությունը կոչում են իրավագործունակություն[2]: Ամեն դեպքում կառավարման ոլորտում քաղաքացիների իրավունքները սահմանող ելակետային ինստիտուտը վարչական իրավասուբյեկտությունն է:

Քաղացու վարչական իրավունակություն հասկացության հարցում իրավաբան-գիտնականներն սկզբունքորեն չտարբերվող բնորոշումներ են տվել: Դրանցից մեջբերենք միայն երկուսը: Պրոֆ. Ա. Ալյոխինի կարծիքով՝ քաղաքացու վարչական իրավունակությունն օրենքով ճանաչված նրա հնարավորությունն է լինելու վարչական իրավունքի սուբյեկտ, ունենալու վարչաիրավական բնույթի իրավունքներ ու պարտականություններ[3]: Ըստ. պրոֆ. Դ. Բախրախի՝ վարչական իրավունակությունն ունակություն է՝ ունենալու վարչական իրավունքի նորմերով ամրագրված իրավունքներ ու պարտականություններ[4]:

Վարչական իրավունակությունը ծագում է քաղաքացու ծննդյան պահից և դադարում է նրա մահով: Ծնված պահից նա ունի բժշկական օգնություն և սպասարկում ստանալու, կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական ապահովության և այլ իրավունքներ: Չնայած Սահմանադրության համաձայն, քաղաքացիներն սկզբունքորեն իրավահասար են, այնուամենայնիվ, նրանց վարչական իրավունակությունը միանման չէ: Վերջինիս բովանդակությունը սահմանվում և փոփոխվում է ինչպես Սահմանադրությամբ, օրենքներով, այնպես էլ վարչաիրավական տարբեր ակտերով: Բացի այդ, դրա ծավալը կախ-

---

[1]Տե՛ս Ю. А. Тихомиров, նշված աշխ., էջ 345-346:
[2] Տե՛ս Алексеев С. С. Общая теория права. Т.2. М., 1982, էջ 129:
[3] Տե՛ս Алехин А. և ուրիշներ, նշված աշխ., էջ 97:
[4] Տե՛ս Бахрах Д. Н., նշված աշխ., էջ 30:

ված է սեռից, տարիքից, լեզվից, առողջական վիճակից, կրթությունից, քաղաքացիությունից և այլ հանգամանքներից (օրինակ, զինապարտությունը, հանրային ծառայությունները և այլն): Սակայն, նշված ցենզերն առնչվում են այն իրավունքներին, որոնք ձեռք են բերվում վարչական իրավունակության իրականացման ընթացքում և որևէ ձևով չեն խախտում քաղաքացիների հավասարության սկզբունքը, քանի որ դա վերաբերում է ոչ թե կոնկրետ անձանց այլ՝ բոլոր քաղաքացիներին: Միաժամանակ քաղաքացիների հավասար վարչական իրավունակությունից չի հետևում, որ նրանք անխտիր օժտված են կոնկրետ սուբյեկտիվ իրավունքներով ու պարտականություններով: Այսպես, քաղաքացիներն ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնելու իրավունք ունեն, բայց իրականում այդ պաշտոնները սահմանափակ են և բոլորը չեն կարող զբաղեցնել դրանք: Անհրաժեշտ է նաև նկատի ունենալ, որ քաղաքացիների հավասարության սկզբունքն ինչպիսի մանրամասնությամբ էլ կանոնակարգվի Սահմանադրությամբ և օրենքներով, այնուամենայնիվ, իրականում հնարավոր չէ բացառել հստակ վարչաիրավական կարգավիճակ առանձին խումբ անձանց համար (օրինակ, երկրորդ համաշխարհային պատերազմի և արցախյան պատերազմի մասնակիցներ, հաշմանդամներ):

Քաղաքացիների վարչական իրավունակությունը չի կարող օտարվել կամ փոխանցվել: Առանձին քաղաքացիների համար դրա ծավալը կարող է փոփոխվել, այդ թվում՝ Սահմանադրության 43-րդ և 44-րդ հոդվածներին համապատասխան օրենքով սահմանափակվել կամ ժամանակավորապես սահմանափակվել: Այսպես, ՀՀ քր. օր. 52-րդ հոդվածի համաձայն որոշ հանցագործությունների համար անձը կարող է մեկից յոթ տարի ժամկետով զրկվել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, կազմակերպություններում որոշակի պաշտոններ զբաղեցնելու իրավունքից: Միաժամանակ, հանրային ծառայությունների վերաբերյալ ՀՀ օրենքները սահմանում են, որ այդ կարգի անձինք հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք չունեն[1]:

Բացի այդ, Վարչ. օր.-ի 23-րդ հոդվածը նույնպես նախատեսում է

[1] Տե՛ս «Քաղաքացիական ծառայության մասին» և «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքների 12-րդ հոդվածները (ՀՀ ՊՏ № 1(176), 09.01.02, № 7(379), 26.01.05):

առանձին վարչական իրավախախտումների համար քաղաքացուն տրված հատուկ իրավունքից՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից, որսորդության իրավունքից ժամանակավորապես զրկում՝ տասնհինգ օրից մինչև երեք տարի ժամկետով:

Քաղաքացիների վարչական իրավունակությունը սերտորեն կապված է նրանց պարտականությունների հետ: Ընդ որում, քաղաքացիների վարչական իրավունակության կարևոր առանձնահատկությունն այն է, որ հիմնականում իրագործվում է գործադիր իշխանության գործառույթներ իրականացնող կազմավորումների հետ վարչահիրավական փոխհարաբերություններում (պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ, դրանց պաշտոնատար անձինք, ինչպես նաև պետական և ոչ պետական կազմակերպությունների, հիմնարկների վարչահիրավական բնույթի լիազորություններով օժտված կազմակերպություն կամ դրա ներկայացուցիչ և այլն):

Քաղաքացիների վարչական իրավունակության բովանդակության, ինչպես և իրականացման նկատմամբ ազդում են նաև այնպիսի իրական հանգամանքներ, որոնք առաջացնում են որոշակի սուբյեկտիվ իրավունքներ ու պարտականություններ: Օրինակ, պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ենթակա քաղաքացին իրավունք ունի անցնելու այլընտրանքային ծառայության, եթե առկա են օրենքով սահմանված պայմանները[1]:

Քաղաքացիների վարչական գործունակության համար հիմք է հանդիսանում նրանց վարչական իրավունակությունը: Վարչական գործունակությունն անհրաժեշտ պայման է ոչ միայն քաղաքացիների վարչական իրավունակության, այլև համապատասխան վարչահիրավական հարաբերություններում նրանց իրավունքների ու պարտականությունների իրականացման համար:

Քաղաքացու վարչական գործունակության ծագման համար օրենքով կոնկրետ տարիք չի սահմանված և այն անորոշ է: Դրա մասնակի ծագումը և հետագա ընդլայնումը կապված է անձի տարիքի հետ: Ամեն դեպքում քաղաքացու վարչական իրավունակությունն ավելի վաղ է ծագում, քան վարչական գործունակությունը: Ընդ որում,

[1] Տե՛ս «Այլընտրանքային ծառայության մասին» 2003թ. դեկտեմբերի 17-ի ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը (ՀՀ ՊՏ № 6(305), 29.01.04):

նշված իրավունքներն ու պարտականությունները քաղաքացիները սահմանված կարգով կարող են ձեռք բերել իրենց օրինական ներկայացուցիչների միջոցով (ծնողներ, նրանց փոխարինող անձինք, խնամակալ և այլն), իսկ որոշները ձեռք բերել և իրականացնել միայն անձամբ (զինապարտություն, պետական կառավարմանը ու տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունք և այլն):

Չնայած ՀՀ Սահմանադրության համաձայն, քաղաքացիների գործունակությունն ամբողջ ծավալով, որպես կանոն, ծագում է 18 տարեկանից, այնուամենայնիվ, այն մասնակի կարող է ծագել ավելի վաղ տարիքում, օրինակ, նախադպրոցական և դպրոցական հասակում: Վերջիններս ինքնուրույն կարող են դիմել բուժօգնության, իրականացնել իրենց կրթության իրավունքը, նրանց նկատմամբ կարող են կիրառվել կարգապահական ներգործության որոշակի միջոցներ և այլն: Սահմանադրությամբ մինչև 16 տարեկան երեխաներն օրենքով սահմանված կարգով կարող են ժամանակավոր աշխատանքի ընդունվել (32-րդ հոդված), իսկ 16 տարեկանից՝ մշտական աշխատանքի: Դրա հետևանքով, նշված անձինք ձեռք են բերում մասնակի իրավագործունակություն, այսինքն՝ որոշ առումով մտնում են աշխատանքային հարաբերությունների մեջ: Վարչական պատասխանատվության սուբյեկտ են հանդիսանում մինչև վարչական իրավախախտում կատարելու պահը 16 տարին լրացած անձինք (Վարչ. օր.-ի 12-րդ հոդված):

Սահմանադրությամբ քաղաքացիներն ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության ընդունվելու, իսկ 18 տարին լրացած քաղաքացիներն անմիջականորեն պետական կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունք ունեն, դրանով իսկ, որպես կանոն, սահմանելով հավասար ընդհանուր վարչական գործունակություն ՀՀ քաղաքացիների համար: Սակայն, ելնելով կառավարչական հարաբերությունների առանձնահատկություններից, հաշվի են առնվում հանրային ծառայության պաշտոնների հավակնողների համապատասխան գիտելիքների ու աշխատանքային ունակությունների տիրապետման մակարդակը, աշխատանքի կազմակերպման և ղեկավարման, որոշումներ կայացնելու և այլ պահանջներ:

Բնականաբար, քաղաքացիների գործունակության սահմանափակման (հոգեկան հիվանդություն, տկարամտություն և այլն) ընդ-

հանուր պայմանները հիմք են հանդիսանում նաև վարչական գործունակության սահմանափակման համար:

Հանրապետության որոշ օրենքներ սահմանափակում են առանձին անձանց վարչական գործունակությունը, նկատի ունենալով որոշ հիվանդություններ: Այսպես, հանրային ծառայության վերաբերյալ օրենքները սահմանում են այն անձանց շրջանակը, ովքեր նշված ծառայությունում պաշտոններ զբաղեցնելու իրավունք չունեն (դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձինք, ինչպես նաև նրանք, ովքեր տառապում են այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել ծառայողական պարտականությունների կատարմանը և լիազորությունների իրականացմանը)[1]:

Գործունակ քաղաքացիները, մտնելով համապատասխան վարչաիրավական գործունեության մեջ, դրանով իսկ իրականացնում են իրենց սուբյեկտիվ իրավունքներն ու պարտականությունները պետական կառավարման և տեղական ինքնակառավարման բնագավառներում: Եթե խմբավորենք ինչպես քաղաքացիների, այնպես էլ նշված բնագավառների մարմինների նախաձեռնությամբ ծագող հարաբերությունները, ապա դրանք առաջանում են՝ ա) քաղաքացիների կողմից իրենց իրավունքներն իրականացնելիս ու պարտականությունները կատարելիս, բ) պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների (պաշտոնատար անձանց) կողմից քաղաքացիների իրավունքներն ու օրինական շահերը խախտելիս և գ) քաղաքացիների կողմից իրենց վարչական պարտականությունները խախտելիս:

§2. ՀՀ քաղաքացիների հիմնական վարչաիրավական իրավունքներն ու պարտականությունները

Քաղաքացիների հիմնական իրավունքների, ազատությունների ու պարտականությունների իրականացման համար անհրաժեշտ են ոչ միայն վարչաիրավական որոշակի կառուցակարգեր, այլև պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ողջ համակարգի մասնակցությունը: Կառավարման ոլորտում իրենց

[1] Տե՛ս ՀՀ ՊՏ №1 (176), 09.01.02, №7 (379), 26.01.05 և այլն :

իրավունքները, ազատություններն ու պարտականություններն իրականացնելիս քաղաքացիները վարչաիրավական հարաբերությունների մեջ են մտնում կառավարման տարբեր մարմինների, դրանց կառուցվածքային ստորաբաժանումների, պաշտոնատար անձանց, ինչպես նաև վարչական իրավունքի այլ սուբյեկտների հետ:

Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման բնագավառում քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները ածանցյալ են Սահմանադրությամբ ամրագրված նրանց հիմնական իրավունքներին, ազատություններին ու պարտականություններին: Թերևս, վարչաիրավական նորմերում դրանք ավելի են կոնկրետացվում ու մանրամասնվում: Քաղաքացիների սահմանադրական իրավունքների ու պարտականությունների իրականացման նկատմամբ վարչաիրավական նորմերը ներգործում են տարբեր կերպ, քանի որ դրանց մի մասն իրականացվում է համապատասխան մարմինների, կազմակերպությունների հետ վարչաիրավական հարաբերությունների մեջ մտնելու միջոցով, իսկ որոշ մասը՝ այդպիսի հարաբերություններից դուրս:

Հանրապետության Սահմանադրությունը, օրենքները, դրանցում կատարված փոփոխություններն ու լրացումները զգալիորեն փոխել են նաև մարդու և քաղաքացու վարչաիրավական կարգավիճակը, նրանց իրավունքների, ազատությունների ու պարտականությունների իրականացման երաշխիքները պետական կառավարման և տեղական ինքնակառավարման ոլորտում:

Ներկայումս պետական կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը մասնակցելու քաղաքացիների վարչական իրավունքներն ու պարտականությունները հիմնականում կարգավորվում են օրենքներով, ինչպես նաև Հանրապետության կառավարության որոշումներով: Սակայն, մանրամասնելով և լրացնելով քաղաքացիների սահմանադրական իրավունքները, ազատությունները և պարտականությունները, ինչպես նաև Հանրապետության իրավական համակարգի մյուս ճյուղերի նորմերը գործադիր ոլորտում, վարչաիրավական նորմերը լրացնում են նրանց իրավական կարգավիճակի բովանդակությունը իրավունքներով, ազատություններով ու պարտականություններով և դրանց իրականացման երաշխիքներով:

Չնայած քաղաքացիների վարչաիրավական կարգավիճակը բո-

վանդակությամբ որոշակիորեն ընդլայնվել է քաղաքական, տնտեսական և սոցիալ-մշակութային ոլորտներում, այնուամենայնիվ, դեռևս սահմանափակ է քաղաքացիների մասնակցության շրջանակը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող գործառույթային և այլ խնդիրների լուծմանը, անտեսվում է հասարակական կարծիքը: Դեռևս ցածր է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց հասարակական հեղինակությունը: Նշված և այլ պատճառներով ավելանում են հակասությունները բնակչության և պետական մարմինների միջև: Վերջիններիս և քաղաքացիների միջև առկա փոխհարաբերությունները հարթելու նպատակով, անհրաժեշտ է զարգացնել պետական և տեղական ինքնակառավարման գործերի կառավարմանը քաղաքացիների քաղաքական մասնակցության ժողովրդավարական սկզբունքների իրականացումը, ինչպես նաև պետական և հասարակական ինստիտուտների համակարգման ուժեղացումը:

Պետական գործերի կառավարմանը մասնակցելու մարդու և քաղաքացու իրավունքի իրականացման առումով դրանք կարելի է բաժանել սերտորեն իրար հետ կապված երկու խմբի՝ ***անձնական*** և ***քաղաքական*** իրավունքների, ազատությունների ու պարտականությունների: Ընդ որում, անձի մի շարք իրավունքներ ու ազատություններ առաջնահերթ և էական նշանակություն ունեն նրա քաղաքական իրավունքների, ազատությունների ու պարտականությունների իրականացման համար՝

1) ***յուրաքանչյուրի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը*** (Սահմանադրության 16-րդ հոդված): Հանրապետության հիմնական օրենքն ամրագրում է, որ մարդուն կարելի է ազատությունից զրկել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով, սպառիչ թվարկելով դրանք: Ընդ որում, եթե անձը ձերբակալման պահից 72 ժամվա ընթացքում դատարանի որոշմամբ չի կալանավորվում, ապա նա անհապաղ պետք է ազատ արձակվի: Ընդհանրապես արգելվում է զրկել ազատությունից, եթե նա ի վիճակի չէ կատարելու քաղաքացիաիրավական պարտավորությունները:

Բնականաբար, յուրաքանչյուր ոք կարող է սահմանված կարգով և դեպքերում զրկվել Սահմանադրությամբ ամրագրված անձեռնմխե-

լիության իրավունքից, եթե կատարել է իրավախախտում: Վարչ. օր.-ի նշված հոդվածներով նախատեսված պայմաններն ապահովելու նպատակով նրա նկատմամբ կարող են կիրառվել ֆիզիկական և հարկադրանքի այլ միջոցներ: Ի դեպ, ազատությունից ապօրինի զրկելու կամ ապօրինի խուզարկության դեպքում յուրաքանչյուր ոք օրենքով սահմանված հիմքերով ու կարգով պատճառված վնասի հատուցման, ինչպես նաև ազատությունից զրկելու կամ խուզարկության օրինակությունն ու հիմնավորվածությունը վերադաս դատական ատյան բողոքարկելու իրավունք ունի,

2) ***յուրաքանչյուր ոք ունի բնակարանի անձեռնմխելիության իրավունք*** (Սահմանադրության 24-րդ հոդված): Սահմանադրական այս դրույթը ենթադրում է, որ արգելվում է մուտք գործել մարդու բնակարան նրա կամքին հակառակ: Դրա հետ մեկտեղ, հակառակ մարդու կամքի թույլատրվում է մուտք գործել նրա բնակարան՝ բացառապես օրենքով սահմանված դեպքերում: Մասնավորապես, ոստիկանության աշխատակիցներին իրավունք է վերապահվում հանցագործության մեջ կասկածվող անձին հետապնդելու, տվյալ բնակարանում կատարված կամ կատարվող հանցագործության, դժբախտ պատահարների և այլ դեպքերում: Այդպիսի իրավունքով են օժտված նաև հարկային մարմինների աշխատակիցներն այն դեպքերում, եթե անձը տվյալ բնակարանում զբաղվում է ձեռնարկատիրական գործունեությամբ, իսկ հրդեհի դեպքում՝ հակահրդեհային ծառայության աշխատակիցները: Նման դեպքերը կանոնակարգված են Հանրապետության համապատասխան օրենքներով: Մարդու կամքին հակառակ նրա բնակարան ապօրինի մուտք գործելը, դրա համար բռնություն գործադրելով կամ գործադրելու սպառնալիքով, ինչպես նաև պաշտոնական դիրքն օգտագործելով, արգելվում է (ՀՀ քր. օր.-ը սահմանում է տարբեր պատժատեսակներ՝ 147-րդ հոդված):

Սահմանադրությամբ ամրագրված է նաև, որ մարդու բնակարանը կարող է խուզարկվել միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Ի դեպ, «բնակարան» եզրույթը շատ լայն հասկացություն է և ընդգրկում է այն տարածքը, որտեղ մշտապես կամ ժամանակավորապես ապրում է մարդը,

3) ***ազատ տեղաշարժվելու իրավունքը*** ենթադրում է, որ ՀՀ-ում օրինական հիմունքներով գտնվող յուրանքանչյուր ոք դրա տարած-

քում ոչ միայն ազատ տեղաշարժվելու, այլև՝ բնակավայր ընտրելու իրավունք ունի (Սահմանադրության 25-րդ հոդված): Բնականաբար, առանձին իրավական ակտերով կարող են նշված իրավունքները սահմանափակվել, հաշվի առնելով անձնագրային ռեժիմի պահանջները և այլ հանգամանքներ (սահմանամերձ, փակ, զինվորական, բնական և տեխնոլոգիական վթարների շրջաններ և այլն):

ՀՀ-ում օրինական հիմունքներով գտնվող յուրաքանչյուր անձ ունի Հանրապետության տարածքից դուրս գալու իրավունք: Նշված իրավունքը նույնպես կարող է ժամանակավորապես սահմանափակվել մի շարք դեպքերում, եթե մեկնողը տիրապետում է պետական գաղտնիք համարվող տեղեկությունների, նրա նկատմամբ հարուցված է քրեական հետապնդում, քաղաքացիական հայց, խուսափում է իր վրա դատարանի կողմից դրված պարտականությունների կատարումից, ենթակա է զորակոչի, գտնվում է վարչական հսկողության տակ և այլն:

ՀՀ վերադառնալու իրավունք ունի ոչ միայն Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի, այլև՝ ՀՀ-ում բնակվելու իրավունք ունեցող յուրաքանչյուր օտարերկրյա քաղաքացի և քաղաքացիություն չունեցող անձ:

Վերը թվարկված անձնական իրավունքներն ու ազատությունները երաշխիք են հանդիսանում նաև պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և կառավարչական այլ կազմավորումների հետ փոխհարաբերություններում առաջին հերթին իրականացնելու հետևյալ քաղաքական իրավունքները, ազատություններն ու պարտականությունները՝

1) ***պետական կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունքը***: Նշված իրավունքը քաղաքացիների կողմից իրականացվում է ինչպես անմիջականորեն, այպես էլ կամքի ազատ արտահայտությամբ ընտրված իրենց ներկայացուցիչների միջոցով (Սահմանադրության 30-րդ հոդված):

Քաղաքացին կարող է կառավարչական գործունեության մասնակից կամ անմիջական սուբյեկտ դառնալ, իրականացնելով հանրաքվեներին մասնակցելու իր իրավունքը, ինչպես նաև ընտրելու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ և ընտրվելու այդ մարմիններում: Ընտրությունների հարցում որոշակի առանձնա-

հատկություններ են սահմանվում ՀՀ երկքաղաքացիների համար (ավելի մանրամասն տես սույն գլխի 3-րդ պարագրաֆում): Ի դեպ, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին և տեղական հանրահավաքներին ՀՀ քաղաքացիներին համահավասար՝ օրենքով սահմանված կարգով, մասնակցելու իրավունք ունեն ՀՀ քաղաքացիություն չունեցող անձինք (խոսքը վերաբերում է ՀՀ-ում փախստականի կարգավիճակ ունեցողներին): Բացի այդ, համայնքի գործերի կառավարմանը համայնքի անդամները կարող են ուղղակիորեն մասնակցել՝ համայնքային նշանակության հարցերը տեղական հանրաքվեով լուծելու միջոցով (Սահմանադրության 107-րդ հոդված):

Սահմանադրության 30.2-րդ հոդվածին համապատասխան, քաղաքացին կարող է անմիջականորեն մասնակցել կառավարչական մարմինների գործունեությանն օրենքով սահմանված ընդհանուր հիմունքներով՝ հանրային ծառայության ընդունվելու միջոցով: Որպես հանրային ծառայության ինքնուրույն տեսակներ՝ պետական ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք ունեն ՀՀ քաղաքացիները: Համայնքային ծառայության պաշտոն՝ ՀՀ քաղաքացիների հետ միասին կարող են զբաղեցնել նաև ՀՀ-ում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք,

2) ***միավորումներ կազմելու իրավունքը***: Սահմանադրության համաձայն յուրաքանչյուր ոք այլ անձանց հետ միավորումներ կազմելու, այդ թվում արհեստակցական միություններ, իսկ քաղաքացիները՝ կուսակցություններ ստեղծելու և դրանց ազատորեն անդամագրվելու և դրանցից ազատորեն դուրս գալու իրավունք ունեն (28-րդ հոդված): Այդ միավորումների փոխհարաբերությունները մարդու և քաղաքացու, պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ կարգավորվում են «Արհեստական միությունների մասին» 2000թ. դեկտեմբերի 25-ի, «Հասարակական կազմակերպությունների մասին» 2001թ. դեկտեմբերի 4-ի, «Կուսակցությունների մասին» 2002թ. հուլիսի 3-ի օրենքներով: Միավորումներ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքները ՀՀ Սահմանադրության համաձայն օրենքով սահմանված կարգով կարող են սահմանափակվել առանձին մարմինների աշխատողների համար (ավելի մանրամասն տես սույն աշխատանքի 9-րդ գլուխը),

3) ***հավաքներ անցկացնելու իրավունքը***: Խաղաղ, առանց զենքի

հավաքներ անցկացնելու իրավունքը ՀՀ Սահմանադրությամբ վերապահված է յուրաքանչյուրին՝ անկախ քաղաքացիությունից (29-րդ հոդված):

ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածին համապատասխան, «Հավաքների ազատության մասին» 2011 թ. ապրիլի 14-ի օրենքը[1] (այսուհետև սույն գլխում՝ Օրենք) սահմանում է հավաքների ազատության սահմանափակման հիմքերն ի շահ պետական անվտանգության և հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, ինչպես նաև հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանության: Բացի այդ, հավաքների ազատությունը սահմանափակվում է նաև այն դեպքում, երբ դա օգտագործվում է սահմանադրական կարգը բռնի տապալելու, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելու, բռնություն կամ պատերազմ քարոզելու նպատակով (5-րդ հոդված):

Օրենքի 8-րդ հոդվածը կանոնակարգում է նաև հավաքներին մասնակցելու և հավաքներ կազմակերպելու սահմանափակումները: Մասնավորապես, հավաքներին մասնակցելիս սահմանադրական դատարանի անդամները և դատավորները, զինված ուժերում, ոստիկանության մարմիններում ծառայողները պետք է քաղաքական չեզոքություն և զսպվածություն ցուցաբերեն, միաժամանակ, իրավունք չունեն կազմակերպելու այնպիսի հավաքներ, որոնք կարող են կասկածի տակ դնել իրենց քաղաքական չեզոքությունը: Բացի սահմանադրական դատարանի անդամներից և դատավորներից, նշված մյուս մարմինների ծառայողներն իրավունք չունեն ծառայողական համազգեստով մասնակցելու հավաքին: Ընդ որում, պետական և տեղական ինքնակառավարման մարմինները (պաշտոնատար անձինք) իրենց գործողություններում պարտավոր են ղեկավարվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով նախատեսված համաչափության և վարչարարության մյուս հիմնարար սկզբունքներով: Նշված մարմիններն իրավունք չունեն խոչընդոտելու օրենքով սահմանված կարգով անցկացվող հավաքներին կամ միջամտելու դրանց (4-րդ հոդված):

Օրենքին համապատասխան, հավաք անցկացնելու մասին կազ-

[1] Տե՛ս նույն տեղը, 23 (826), 22.04.11:

մակերպիչներն այդ մասին գրավոր իրազեկում են դրա անցկացման վայրի համայնքի ղեկավարին, իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետին: Եթե այն երթի ձևով է անցկացվում, ապա պետք է իրազեկվեն դրա անցկացման տարածքների լիազոր մարմինները: Հավաքի անցկացման վերաբերյալ լիազոր մարմնի որոշումը կարող է բողոքարկվել դատարան՝ ՀՀ վարչ. դատ. օր.-ով սահմանված կարգով,

4) ***դիմումներ և առաջարկություններ ներկայացնելու իրավունքը***: Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ ու պաշտոնատար անձանց գրավոր կամ բանավոր դիմելու մարդու և քաղաքացու անօտարելի ու չսահմանափակվող իրավունքը պետական կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը մասնակցելու ժողովրդավարական անմիջական ձևերից է և կարևոր միջոց անձնական ու հասարակական շահերի, ինչպես նաև իրենց իրավունքների ու ազատությունների պաշտպանության բնագավառում: Դրա հետ միասին, դիմումներ, առաջարկություններ ու բողոքներ (այսուհետ՝ դիմումներ) ներկայացնելն օժանդակում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու բնակչության միջև կապի ամրապնդմանը:

Դիմումներ, ներկայացնելու իրավական ինստիտուտն արդյունավետ միջոց է ժողովրդավարական, իրավական ու սոցիալական պետության կառուցման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց գործունեության արդյունավետության բարձրացման ու կատարելագործման համար:

Անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց դիմումներ ներկայացնելու յուրաքանչյուրի իրավունքը (ՀՀ Սահմանադրության 27.1-րդ հոդված) մարդու և քաղաքացու վարչաիրավական կարգավիճակի հիմնարար տարրերից է: Իրենց իրավունքների և ազատությունների պաշտպանության խնդրով յուրաքանչյուրը կարող է դիմել անխտիր բոլոր մարմիններ, պաշտոնատար անձանց և կազմակերպություններ, որոնք պարտավոր են սահմանված ժամկետում ու կարգով քննարկել դիմումները և հիմնավորված պատասխանել դրանց:

Դիմումներ ներկայացնելու, քննարկելու հարցերը կարգավոր-

վում են ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ միջազգային պայմանագրերով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» 2004թ. փետրվարի 18-ի օրենքով, այլ իրավական ակտերով, ինչպես նաև մասամբ «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները քննարկելու կարգի մասին» 1999թ. նոյեմբերի 24-ի օրենքով, որը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 113-րդ հոդվածի համաձայն, ներկայումս գործում է միայն քաղաքացիների առաջարկությունների մասով:

Ընդհանուր վարչական բողոքի կարգով անձինք իրենց իրավունքները պաշտպանելու նպատակով կարող են վարչական ակտերը, վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը բողոքարկել ինչպես տվյալ մարմին, այնպես էլ դրա վերադաս վարչական մարմին: Բացի այդ, դիմողը կարող է բողոքով դիմել դատարան, եթե գտնում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց և կազմակերպությունների ոչ օրինաչափ գործողություններով (որոշումներով) խախտվել են իր իրավունքներն ու ազատությունները:

Հատուկ վարչական բողոքը նույնպես անձի իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու միջոցներից է և չի մրցակցում ընդհանուր վարչական բողոքի իրավունքի հետ, այլ լրացնում է վարչաիրավական այդ ինստիտուտը: Հատակ վարչական բողոքի էությունն առանձնանում է նրանով, որ դրա հիմքերը, քննարկման և լուծման կարգը կանոնակարգվում են վարչական իրավունքի հատուկ ակտերով: Դրանք են՝ Վարչ. օր.-ը և ՀՀ մաքսային օրենսգիրքը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը, Զինված ուժերի կարգապահական կանոնագիրքը, ՀՀ ոստիկանության կարգապահական կանոնագիրքը և այլ իրավական ակտեր: Նշված օրենսդրական ակտերը բովանդակում են հստակ նորմեր, որոնք վերաբերվում են վարչական բողոքներին:

Առաջարկությունները տրվում են պետական և տեղական ինքնակառավարման այն մարմիններին, դրանց պաշտոնատար անձանց, կազմակերպություններին, որոնց անմիջական տնօրինությանն է վերապահված տվյալ հարցի լուծումը:

Օրենքով սահմանվում է նաև, որ առաջարկությունների քննարկ-

ման սահմանված կարգի խախտման համար մեղավոր պաշտանատար անձինք պատասխանատվություն են կրում օրենսդրությանը համապատասխան:

Մարդու և քաղաքացու դիմելու իրավունքը և դրանում բարձրացված հարցերին հիմնավորված պատասխանելու պետական, տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց պարտականությունն ի զորու է լուծելու բազմազան սոցիալական սուր վեճեր և կանխելու հնարավոր սոցիալական դժգոհությունները: Բացի այդ, դիմումների միջոցով դիմողները ներգործում են նշված մարմինների ու պաշտոնատար անձանց նկատմամբ, դրանով իսկ վերջիններիս գործունեությունը պահելով վերահսկողության տակ,

5) ***տեղեկություններ ստանալու, տարածելու ազատության իրավունքը***: Տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը (ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդված) յուրաքանչյուրի խոսքի ազատության իրավունքի, ինչպես նաև իրավական պետության և քաղաքացիական հասարակության անբաժանելի մասն է կազմում: Անհատի և ամբողջությամբ վերցրած հասարակության տեղեկացվածությունը նպաստում են երկրի տնտեսության, սոցիալական և մշակութային առաջընթացին: Ընդ որում, նշված իրավունքն իրականացվում է տեղեկատվական ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից: ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված է նաև, որ յուրաքանչյուր անձ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում իրեն վերաբերող տեղեկություններին ծանոթանալու, ինչպես նաև դրանց շտկման և վերացման իրավունք ունի (23-րդ հոդված): Պետությունը երաշխավորում է լրատվամիջոցների և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը, ինչպես և տեղեկատվական բնույթի հաղորդումների բազմազանությունը:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ դրույթներին համապատասխան, տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատության իրավունքի իրականացման հարցերը կանոնակարգված են «Տեղեկատվության ազատության մասին» 2003թ. սեպտեմբերի 23-ի, ինչպես նաև «Զանգվածային լրատվության մասին» նույն թվականի դեկտեմբերի 13-ի օրենքներով: Տեղեկատվություն

ստանալու և տարածելու ազատության իրավունքը կարող է սահմանափակվել պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման և օրենսդրությամբ նախատեսված այլ նպատակներով: Դրանք պետական և ծառայողական այն տեղեկություններն են, որոնք պաշտպանվում են պետության կողմից, և դրանց տարածումը կարող է ծանր հետևանքներ առաջացնել Հանրապետության անվտանգության համար: Այդ հարաբերությունները կարգավորվում են «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» 1996թ. դեկտեմբերի 3-ի ՀՀ օրենքով: Վերջինս միաժամանակ սահմանում է, որ պետական և ծառայողական գաղտնիքին իրազեկ լինելու իրավունք կարող է վերապահվել ՀՀ քաղաքացիներին, օտարերկրացիներին, քաղաքացիություն չունեցող, ինչպես նաև պաշտոնատար անձանց՝ կառավարության կողմից նախատեսված կարգով:

Մանրամասնելով իրավունքի մյուս ճյուղերի նորմերը (սահմանադրական, ֆինանսական, հարկային և այլն) կառավարման ոլորտում, վարչահիրավական նորմերը ֆիզիկական և իրավաբանական անձանց համար նախատեսում են ոչ միայն նոր իրավունքներ ու պարտականություններ, այլև դրանց իրականացման և ոտնձգություններից պաշտպանության միջոցներ:

Հանրապետության Սահմանադրությունը մարդուն և քաղաքացուն վերապահելով իրավունքներ ու ազատություններ, միաժամանակ նրանց վրա դնում է իրավաբանական պարտականություններ: Ընդ որում, Հանրապետության քաղաքացիների համար սահմանվում են հավասար իրավունքներ, ազատություններ ու պարտականություններ: ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված պարտականությունները բավականին սահմանափակ են՝ մասնավորապես, սեփականության իրավունքի օգտագործումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը (31-րդ հոդված), անձամբ և այլոց հետ համատեղ պահպանել և բարելավել շրջակա միջավայրը (33.2-րդ հոդված), օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել պարտադիր այլ վճարումներ (45-րդ հոդված), օրենքով սահմանված կարգով մասնակցել Հանրապետության պաշտ-

պանությանը (46-րդ հոդված), պահպանել ՀՀ Սահմանադրությունը և օրենքները, հարգել այլոց իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը (47-րդ հոդված):

Ինչպես մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքներն ու ազատությունները, այնպես էլ նրանց սահմանադրական պարտականությունները մանրամասնվում են վարչաիրավական նորմերում: Որպես վարչական իրավունքի սուբյեկտներ նրանք պարտավոր են ոչ միայն պահպանելու այդ նորմերը, այլև կատարելու դրանցով սահմանված կառավարչական մարմինների (պաշտոնատար անձանց) պահանջները:

Վարչաիրավական նորմերը սահմանում են նաև տնտեսական, սոցիալական, մշակութային տարբեր ոլորտների, ինչպես նաև հասարակական կարգի և հասարակական անվտանգության, իրավախախտումների կանխման, հանրության առողջության և բարոյականության պաշտպանության կարգավորմանը վերաբերող համապատասխան իրավական ռեժիմ, որի պահպանումը մարդու և քաղաքացու կարևոր պարտականություններից է:

Վերը հիշատակված պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը կարող է առաջ բերել իրավական ներգործության միջոցների կիրառում: Ի դեպ, Վարչ. օր.-ով հատկապես լիազորված պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները (պաշտոնատար անձինք) կարող են դրանցում մեղավոր անձանց նկատմամբ կիրառել տարբեր տեսակի վարչական տույժի և իրավաբանական պատասխանատվության այլ միջոցներ:

Մարդու և քաղաքացու կողմից իրավունքների ու ազատությունների բարեխիղճ իրականացումը և պարտականությունների պատշաճ կատարումը կարևոր նախադրյալներ են օրինականության, պետական կարգապահության և իրավակարգի ամրապնդման համար: Նշված իրավաչափ, ինչպես նաև վարչական օրենսդրությամբ նախատեսված ոչ իրավաչափ գործողությունները (անգործությունը) առաջացնում, փոփոխում կամ դադարեցնում են համապատասխան վարչաիրավական հարաբերություններ:

§3. Երկքաղաքացիների վարչաիրավական կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում

Հանրապետության 1995 թ. խմբագրմամբ ՀՀ Սահմանադրությանը համապատասխան, ՀՀ քաղաքացին միաժամանակ չէր կարող լինել այլ պետության քաղաքացի (14-րդ հոդվածի երկրորդ մաս): Այս սկզբունքը համահունչ էր նաև բազմաքաղաքացիության դեպքերի կրճատման և բազմաքաղաքացիության դեպքերում զինվորական պարտականությունների վերաբերյալ Եվրոխորհրդի 1963 թ. դաշնագրում սահմանված դրույթին, որի համաձայն յուրաքանչյուր անձ պետք է ունենա մեկ երկրի քաղաքացիություն: Սակայն, քաղաքացիության վերաբերյալ 1997 թ. դեկտեմբերի 6-ի եվրոպական կոնվենցիան, նկատի ունենալով, որ տարբեր պետություններ իրավական ակտերով վերանայել են իրենց դիրքորոշումները բազմաքաղաքացիության և քաղաքացիության հետ կապված այլ հարցերում, որոշեց վերանայել նախորդ որոշումը և արդյունքում երկքաղաքացիությունն այլևս չդիտվեց որպես մերժելի պետաիրավական ինստիտուտ:

Հանրապետության Սահմանադրության 2005 թ. փոփոխությունների ժամանակ Հիմնական օրենքը լրացվեց 30.1-րդ հոդվածով և ՀՀ քաղաքացիներին իրավունք վերապահվեց ձեռք բերելու այլ պետության (պետությունների) քաղաքացիություն, իսկ վերջիններիս՝ միաժամանակ ՀՀ քաղաքացիություն: Այդ առնչությամբ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքը (23.10.95) լրացվեց 13.1-րդ հոդվածով: Վերջինս, նախ, սահմանեց երկքաղաքացիության ընդհանուր հասկացությունը, ապա Հայաստանի Հանրապետության երկքաղաքացու հասկացությունը: Նշված հոդվածին համապատասխան ընդհանուր առմամբ երկքաղաքացի է համարվում մեկից ավելի պետությունների քաղաքացիություն ունեցող անձը, իսկ Հայաստանի Հանրապետության երկքաղաքացի, այն անձը, որը ՀՀ քաղաքացիությունից բացի, ունի նաև այլ պետության (երկրների) քաղաքացիություն: Ընդ որում, ՀՀ երկքաղաքացին Հայաստանի Հանրապետության համար ճանաչվում է միայն որպես ՀՀ քաղաքացի:

ՀՀ երկքաղաքացին ունի վարչաիրավական այն բոլոր իրավունքներն ու կրում է բոլոր պարտականությունները և պատասխա-

նատվությունը, որոնք նախատեսված են ՀՀ քաղաքացու համար, բացառությամբ ՀՀ միջազգային պայմանագրերով կամ օրենքով սահմանված դեպքերի: Սահմանադրական այս դրույթը հուշում է, որ երկքաղաքացիություն ունեցող անձանց վարչաիրավական կարգավիճակն ամբողջ ծավալով չի համընկնում միայն ՀՀ քաղաքացիություն ունեցող անձի կարգավիճակին: Բացի այդ, ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածը սահմանում է, որ 30.1-րդ հոդվածով նախատեսված հիմնական իրավունքներն ու ազատությունները բացարձակ չեն և կարող են սահմանափակվել 43-րդ հոդվածով ամրագրված դեպքերում:

ՀՀ երկքաղաքացիների վարչաիրավական կարգավիճակի առանձնահատկությունը ներառում է նրանց իրավունքների մի շարք սահմանափակումներ, որոնք նախատեսված են Հանրապետության օրենսդրությամբ: Մասնավորաբար, նկատի ունենալով, որ ՀՀ ընտրություններն անցկացվում են միայն ՀՀ տարածքում, ՀՀ երկքաղաքացիները կարող են այդ ընտրություններին մասնակցել միայն այն դեպքում, եթե գտնվում են ՀՀ տարածքում և ունեն հաշվառում: Բացի այդ, նրանք չեն կարող առաջադրվել և գրանցվել ՀՀ Նախագահի թեկնածու և Ազգային ժողովի պատգամավորի թեկնածու, մասնակցել հանրաքվեներին, բացառությամբ ՀՀ ընտրական օրենսգրքով, ինչպես նաև հանրաքվեի վերաբերյալ օրենքով սահմանված դեպքերի[1]:

ՀՀ երկքաղաքացիները չեն կարող նշանակվել առանձին պաշտոններում կամ զբաղվել որոշակի աշխատանքային գործունեությամբ, եթե Հանրապետության օրենսդրությամբ այդ պաշտոնները և զբաղմունքը կապված են ՀՀ քաղաքացիության պատկանելիության հետ: Օրինակ, «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածին համապատասխան, եթե տվյալ մարմնի ծառայողը ՀՀ քաղաքացիության հետ միաժամանակ ձեռք է բերում այլ պետության քաղաքացիություն, ապա նա արձակվում է ծառայությունից, իսկ «Ոստիկանությունում ծառայության մասին օրենքի 45-րդ հոդվածն այդ սահմանափակումը նախատեսում է միայն ոստիկանության բարձրագույն խմբի ծառայողների համար:

[1] Տե՛ս ՀՀ ընտրական օրենսգրքի 79-րդ հոդվածի չորրորդ մասի 3-րդ կետը և 107-րդ հոդվածի առաջին մասը:

Նշված սահմանափակումների վերաբերյալ պատշաճ տեղեկատվություն ունենալու համար, որպեսզի անձը ժամանակին և սահմանված կարգով ազատվի զբաղեցրած պաշտոնից և չնշանակվի նոր պաշտոնում, քաղաքացիության վերաբերյալ նշված օրենքի 13.1-րդ հոդվածը սահմանում է, որ ՀՀ քաղաքացին այլ պետության քաղաքացիություն ընդունելու կամ ստանալու դեպքում պարտավոր է մեկամսյա ժամկետում այդ մասին ՀՀ կառավարության 2007 թ. սեպտեմբերի 20-ի թիվ 1110 որոշմամբ հաստատված կարգով հայտնել ՀՀ կառավարության լիազոր մարմին:

Երկքաղաքացիները ՀՀ տարածքում սովորաբար ենթակա են վարչական պատասխանատվության ՀՀ քաղաքացիների հետ ընդհանուր հիմունքներով, բացառությամբ այն անձանց, ովքեր օգտվում են անձեռնմխելիության իրավունքից: Մասնավորապես, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի երկքաղաքացիության վերաբերյալ 13.1-րդ հոդվածի պահանջների խախտումն առաջացնում է քրեական կամ վարչական պատասխանատվություն: Վարչ. օր.-ի 195.2-րդ հոդվածը սահմանում է, որ ՀՀ քաղաքացու կողմից այլ պետության քաղաքացիություն ընդունելու կամ ստանալու դեպքում ՀՀ կառավարության լիազոր մարմնին չհայտնելն առաջացնում է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

Երկքաղաքացիների զինապարտության հարցը կանոնակարգվում է Հանրապետության «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի (16.09.98) 3.1-րդ հոդվածով: Դրան համապատասխան, այլ պետության քաղաքացիություն ընդունած ՀՀ քաղաքացին չի ազատվում պարտադիր զինվորական ծառայությունից, անկախ նրանից՝ ծառայել է այլ պետության զինված ուժերում, թե՝ ոչ: Բացի այդ, նա չի ազատվում զորահավաքից և վարժական հավաքից: Մինչդեռ, ՀՀ քաղաքացիություն ընդունած քաղաքացին ազատվում է պարտադիր, զինվորական ծառայությունից, եթե մինչև ՀՀ քաղաքացիություն ընդունելը ոչ պակաս, քան 12 ամիս ծառայել է այլ պետության զինված ուժերում կամ այլ պետությունում ոչ պակաս, քան 18 ամիս անցել է այլընտրանքային զինծառայություն, բացառությամբ ՀՀ կառավարության սահմանած պետությունների:

§4. ՀՀ քաղաքացիների իրավունքների վարչաիրավական երաշխիքները

Մարդու և քաղաքացու իրավական կարգավիճակի իրական բովանդակությունը որոշելու համար անհրաժեշտ է ոչ միայն նրանց իրավունքների, ազատությունների ու պարտականությունների, այլև դրանց հուսալի պաշտպանության երաշխիքների ամրագրումն օրենսդրությամբ:

ՀՀ Սահմանադրությանը համապատասխան բոլոր պետական ու տեղական ինքնակառավարման մարմինները, դրանց պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են ՀՀ Սահմանադրությամբ կամ օրենքներով (5-րդ հոդված): Այս հիմքով նշված մարմիններին ու պաշտոնատար անձանց օրենքի նկատմամբ առաջնություն վերապահելը կարող էր միայն թուլացնել քաղաքացիների իրավունքների ու ազատությունների իրականացման երաշխիքները: Դա պայմանավորված է նրանով, որ պետական ու տեղական ինքնակառավարման մարմինները և դրանց պաշտոնատար անձինք պարտավոր են օրենսդրությանը համապատասխան պայմաններ ստեղծել յուրաքանչյուրի իրավունքների ու ազատությունների իրականացման ու անվերապահ ապահովման համար: Բացի այդ, գործնական կյանքը ցույց է տալիս, որ մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատություններն առավելապես ոտնահարվում են հենց կառավարման մարմիններում և դրանց պաշտոնատար անձանց կողմից: Պատահական չէ նաև, որ օրենսդրությամբ սահմանվում է մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների խախտման, ինչպես և դրանց պաշտպանության նպատակով միջոցներ չձեռնարկելու համար դրանում մեղավոր պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց իրավաբանական պատասխանատվություն:

Կարծում ենք, վերը նշված սկզբունքի նկատմամբ այլ մոտեցումը կշրջանցի ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի այն հիմնադրույթը, որի համաձայն մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեք են ու դրանց պաշտպանությունը ոչ միայն պետությունն ապահովում է միջազգա-

յին իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան, այլև սահմանափակված է դրանցով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման, ինչպես նաև հասարակական կյանքի մյուս ոլորտներում մարդու և քաղաքացու իրավունքների, ազատությունների իրականացման ու պարտականությունների կատարման իրական ապահովումը կապված է երկրի սոցիալ-տնտեսական և այլ պայմանների հետ: Այս առնչությամբ իրավունքների, ազատությունների ու պարտականությունների երաշխիքներն ընդունված է բաժանել չորս խմբի՝ ***տնտեսական***, ***քաղաքական***, ***կազմակերպական*** և ***իրավաբանական***:

Տնտեսական երաշխիքները պայմանավորված են երկրի տնտեսության ճյուղերի՝ հատկապես արդյունաբերության, արդյունավետ ու կայուն աշխատանքով, ինչպես նաև ֆինանսական, աշխատավարձի, կենսաթոշակների և նպաստների ժամանակին վճարման հաստատուն համակարգով, բնակչության կենսամակարդակի աճով և բազմաթիվ այլ գործոններով: Դրանք նյութական հիմք են հանդիսանում մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների իրական իրականացման համար, որը նաև սոցիալական, իրավական պետության կարևոր խնդիրն ու գործառույթներն են: Նշված գործոններին պետք է համապատասխանեն Հանրապետության օրենքները, հակառակ դեպքում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման ոլորտներում քաղաքացիների իրավունքների ու պարտականությունների տնտեսական երաշխիքները կլինեն նվազ արդյունավետ:

Մարդու և քաղաքացու իրավունքների ու պարտականությունների ***քաղաքական երաշխիքները*** բխում են ՀՀ Սահմանադրության հիմնադրույթներից: Դրանցով սահմանվում են մարդու և քաղաքացու առաջնայնությունը պետության ու հասարակության մեջ, և այս առումով պետության բոլոր մարմիններն իրավապարտ են ոչ միայն պետության և հասարակության, այլև առաջին հերթին՝ քաղաքացիների առջև: Այդ իրավունքներն ու ազատությունները կանխորոշում են օրենսդիր ու գործադիր իշխանությունների գործունեության բովանդակությունը:

Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման բնագավառում քաղաքացիների իրավունքների ու պարտականությունների ***կազմակերպական երաշխիքները*** ենթադրում են պետական իշխանության համակարգի միասնություն, դրա մարմինների միջև լիազորությունների հստակ սահմանում, պետական իշխանություններին բաժանում, ինչպես նաև պետական ու հասարակական կազմակերպական կառուցվածքների ամենօրյա գործունեություն, որոնք գործնականում ապահովում են մարդուն և քաղաքացուն օրենքներով վերապահված իրավունքների ու պարտականությունների կենսագործումը: Այդ կարգի կազմակերպական կառուցվածքներ են համարվում դատական, դատախազական, ոստիկանության, նոտարական, վերահսկիչ-վերստուգիչ մարմինները, տեսչությունները և այլն:

Իրավաբանական երաշխիքները ՀՀ Սահմանադրության և ամբողջ օրենսդրության, այդ թվում՝ վարչահիրավական նորմերի համակարգն է, որը սահմանում է ինչպես մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների իրականացման կարգը և պայմանները, այնպես էլ դրանց պահպանման և պաշտպանության միջոցները: Իրավաբանական երաշխիքները Հանրապետության օրենսդրության սկզբունքներից ելնելով կարելի է բաժանել երկու խմբի՝ ***արտադատական*** և ***դատական***:

Նախ, ՀՀ Սահմանադրությանը համապատասխան, յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների ու ազատությունների դատական և պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք (18-րդ հոդված): Նշված իրավունքների և ազատությունների պաշտպանության առաջնային երաշխավորը պետությունն է (14-րդ հոդված), որն ապահովում է դրանք միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան (3-րդ հոդված):

Երկրորդ, մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների իրավաբանական երաշխիքների համար առաջնային և կարևոր նշանակություն ունեն օրենքները, և պատահական չէ, որ բացառապես օրենքներով են սահմանվում նշված անձանց իրավունքներն ու ազատություններն իրականացնելու և պաշտպանելու պայմաններն ու կարգը, դրանց սահմանափակումները, պարտականությունները, իրավաբանական պատասխանատվության ենթարկելու դեպքերը,

կարգը, պայմանները,ինչպես նաև դատական և վարչական ակտերի հարկադիր կատարման կարգը (ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 6-րդ կետեր):

Երրորդ, մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները կարող են սահմանափակվել բացառապես օրենքով և միայն ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված պայմանների առկայության դեպքերում՝պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց հիմնական իրավունքների ու ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար (43-րդ հոդված): Առանձին հիմնական իրավունքներ ու ազատություններ կարող են օրենքով ժամանակավորապես սահմանափակվել ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ (44-րդ հոդված):

Չորրորդ, ՀՀ Սահմանադրության 43-րդ և 44-րդ հոդվածները միաժամանակ ամրագրում են մարդու և քաղաքացու այն հիմնական իրավունքներն ու ազատությունները, որոնք ընդհանրապես սահմանափակման ենթակա չեն: Մասնավորապես, կյանքի, ինչպես նաև արժանապատվության հարգման, իրավունքների ու ազատությունների իրավական պաշտպանության միջոցների, խախտված իրավունքների վերականգման, իրավաբանական օգնություն ստանալու իրավունքները և այլն (15-րդ, 17-22-րդ, 42-րդ հոդվածներ):

Հինգերորդ, նկատի ունենալով, որ վավերացված միջազգային պայմանագրերը ՀՀ իրավական համակարգի մասն են կազմում (6-րդ հոդված), մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել ՀՀ միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները, ինչպես նաև պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում (43-րդ և 44-րդ հոդվածներ):

Պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև հանրային ծառայության համակարգերն, ըստ էության, կոչված են ապահովելու մարդու ու քաղաքացու կողմից իրենց իրավունքների, ազատությունների իրականացմանը և պարտականությունների կատարմանը: Նշված մարմիննե-

ը և պաշտոնատար անձինք պարտավոր են կազմակերպական, նյութական և իրավական անհրաժեշտ պայմաններ ստեղծել այն մարմինների, կազմակերպությունների և հիմնարկների համար, որոնք անմիջականորեն զբաղվում են քաղաքացիների իրավունքների ու ազատությունների, ինչպես նաև անհատական վարչահիրավական վեճերի լուծման հարցերով: Նրանք պարտավոր են սահմանված կարգով վերականգնել քաղաքացիների խախտված իրավունքները և ներգործության համապատասխան միջոցներ կիրառել դրանում մեղավոր անձանց նկատմամբ: Այս առնչությամբ կարևոր երաշխիք է նաև մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները խախտող կամ դրանց իրականացմանը խոչընդոտող պաշտոնատար անձանց իրավաբանական պատասխանատվությունը:

Մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպանության երաշխիքների համակարգում էական է նաև ***մարդու իրավունքների պաշտպանի*** դերը: Վերջինս քննարկում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց կողմից ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով, ՀՀ միջազգային պայմանագրերով, միջազգային իրավունքի սկզբունքներով և նորմերով ամրագրված մարդու և քաղաքացու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման վերաբերյալ բողոքները[1]: Նշված հարցերով մարդու իրավունքների պաշտպանին կարող են դիմել ինչպես ֆիզիկական և իրավաբանական անձինք, այնպես էլ դրանց շահերը ներկայացնող անձինք:

Որպես մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների երաշխիք հանդես են գալիս նաև տարբեր կազմավորումներ, հանձնաժողովներ և հասարակական միավորումներ:

ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածները, երաշխավորելով մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պետական պաշտպանությունը, նրանց իրավունք են վերապահում օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրենց իրավունքներն ու ազատությունները: ՀՀ միջազգային պայմանագրերին համապատասխան, նրանք իրավունք ունեն իրենց իրավունքների ու ազատությունների պաշտպանության հարցով դիմել մարդու իրավունքնե-

[1] Տե՛ս ՀՀ ՊՏ 2003 № 58 (293):

րի ու ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին: Բացի այդ, իրենց խախտված իրավունքները վերականգնելու, ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար ունեն անկախ և անկողմնակալ ***դատարանի կողմից*** իրենց գործի հրապարակային քննության իրավունք:

Վերոհիշյալ սահմանադրական, այդ թվում՝ վարչահիրավական երաշխիքները, կարևոր կողմնորոշիչ նշանակություն ունեն մարդու և քաղաքացու իրավունքների, ազատությունների ու պարտականությունների դատական և արտադատական երաշխիքներն իրականացնող պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց համար: Բնականաբար, այս ոլորտում դատական իշխանության մարմինների՝ որպես մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների երաշխավորի, դերն առաջնային նշանակություն ունի, որը յուրաքանչյուրի համար ապահովվում է արդարադատության իրականացմամբ: Այս կապակցությամբ ինչպես ՀՀ Սահմանադրությունը, այնպես էլ օրենքները հետևողականորեն ընդլայնում են մարդու իրավունքներին ու ազատություններին առնչվող ամենատարբեր գործերի քննության հնարավորությունները դատական կարգով:

Ահավասիկ. Հանրապետության դատական օրենսգրքին համապատասխան, յուրաքանչյուր ոք իր իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության իրավունք ունի և ոչ ոք չի կարող զրկվել հավասար պայմաններում և արդարադատության պահանջների պահպանմամբ իրավասու, գործի հրապարակային քննության իրավունքից (7-րդ հոդված): Ընդ որում, ցանկացած հարցի՝ դատարանի իրվասությանը ենթակա լինելը որոշում է դատարանը՝ օրենքի հիման վրա (5-րդ հոդված): Այս համատեքստում պատահական չէ նաև Հանրապետությունում վարչական դատարանի՝ որպես մասնագիտացված դատարանի ստեղծումը, որը քննում է հանրային իրավահարաբերություններից ծագող լայն շրջանակի գործեր, որոնք նախատեսված են ՀՀ վարչ. դատ. օր-ով:

Դատարանները, քննելով քաղաքացիական, քրեական և վարչական գործեր, դրանով իսկ վերահսկողություն են իրականացնում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց կողմից մարդու և քաղաքացու

իրավունքների ու ազատությունների պահպանման նկատմամբ: Համատասխան հիմքերի առկայության դեպքում քրեական կամ վարչական գործերով դատարանը դատավճռի, վճռի կամ որոշման հետ միաժամանակ պարտավոր է լրացուցիչ որոշում կայացնել և պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի, համապատասխան պաշտոնատար անձի ուշադրությունը հրավիրել դատաքննության ժամանակ ի հայտ եկած այն էական խախտումների վրա, որոնք թույլ են տրվել քրեական կամ վարչական գործով մինչդատական վարույթի ընթացքում: Լրացուցիչ որոշումն ուղարկվում է խախտում թույլ տված պաշտոնատար անձի վերադասին, իսկ այդպիսին չլինելու դեպքում՝ խախտում թույլ տված պաշտոնատար անձին, որն այն ստանալուց հետո մեկամսյա ժամկետում պարտավոր է քննարկելու:

Պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման ոլորտներում մարդու և քաղաքացու իրավունքների, ազատությունների ու պարտականությունների իրականացման դատական երաշխավորների շարքում առանձնահատուկ դերակատարություն ունի ***սահմանադրական դատարանը:*** Վերջինս համապատասխան մարմինների, պաշտոնատար անձանց դիմումներով (ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդված) ՀՀ օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կառավարության, վարչապետի, տեղական ինքնակառավարման մարմինների ինչպես նորմատիվ, այնպես էլ անհատական բնույթի իրավական ակտերի վերաբերյալ որոշում ընդունելիս պարզում է վիճարկվող ակտի կամ դրա առանձին դրույթների համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը՝ մասնավորապես, հաշվի առնելով մարդու և քաղաքացու՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների ու ազատությունների ապահովման և պաշտպանության ազատ իրականացման անհրաժաշտությունը, դրանց սահմանափակումների թույլատրելիությունը («Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 1-ին և 7-րդ մասեր):

Քննարկելով քրեական կամ վարչական պատասխանատվության վերաբերյալ օրենքի համապատասխան դրույթի մասին գործեր, և այդ դրույթը ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու վերաբերյալ որոշում ընդունելու դեպքում նշված դրույթն իրավաբանական ուժը կորցնում է որոշման ուժի մեջ մտնելու պահից: Այդ

դրույթի կիրառման մասին սահմանադրական դատարանի որոշումն ուժի մեջ մտնելուն նախորդող ժամանակահատվածում ընդունված դատական և վարչական ակտերն օրենքով սահմանված կարգով ենթակա են վերանայման («Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 13-րդ մաս):

ՀՀ Սահմանդրության համաձայն, սահմանված կարգով սահմանադրական դատարան կարող է դիմել նաև յուրաքանչյուր ֆիզիկական և իրավաբանական անձ՝ կոնկրետ գործով, եթե առկա է ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկվում է այդ ակտով իրենց նկատմամբ կիրառված ՀՀ Ազգային ժողովի ընդունած կամ հանրաքվեով ընդունված օրենքի դրույթի սահմանադրականությունը (101-րդ հոդվածի 6-րդ կետ): Ի դեպ, օրենքի վիճարկվող դրույթը սահմանադրական դատարանի կողմից Սահմանդրությանը հակասող և անվերեր ճանաչելու վերաբերյալ որոշում ընդունվելու դեպքում դիմողի նկատմամբ կիրառված վերջնական դատական ակտն օրենքով սահմանված կարգով ենթակա է վերանայման:

§5. Օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց վարչաիրավական կարգավիճակը

Օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց (այսուհետ՝ օտարերկրացիներ[1]) իրավական վիճակը կարգավորվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ միջազգային պայմանագրերով, «Օտարերկրացիների մասին» 2006թ. դեկտեմբերի 25-ի (այսուհետ սույն պարագրաֆում՝ Օրենք), «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» 1995թ. նոյեմբերի 6-ի օրենքներով և այլ իրավական ակտերով:

ՀՀ Սահմանադրության բազմաթիվ հոդվածներ, հատկապես դրանում կատարված փոփոխություններին համապատասխան, ամ-

[1] Օտարերկրացիներ՝ ՀՀ քաղաքացի չհամարվող այն անձինք, ովքեր ունեն այլ պետության քաղաքացիություն (օտարերկրյա քաղաքացիներ) կամ չունեն որևէ պետության քաղաքացիություն (քաղաքացիություն չունեցող անձինք), տես՝ «Օտարերկրացիների մասին» օրենքի 2-րդ հոդվածը (ՀՀՊՏ 2007 №6 (530), 24.01.07):

ռագրում են ՀՀ քաղաքացիություն չունեցող անձանց իրավական վիճակը ՀՀ-ում:

Նշված փոփոխություններով բավականին ընդլայնվել են օտարերկրացիների իրավունքներն ու ազատությունները: Մասնավորապես, նրանց Օրենքով վերապահվել է ՀՀ տարածքում ազատ տեղաշարժվելու, բնակավայր ընտրելու, Հանրապետություն վերադառնալու (25-րդ հոդված), խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու (29-րդ հոդված), աշխատանքի ընտրության, տնտեսական, ինչպես նաև սոցիալական և աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով գործադուլի (32-րդ հոդված), իրենց և իրենց ընտանիքների համար բավարար կենսամակարդակի, այդ թվում բնակարանի, ինչպես նաև կենսապայմանների բարելավման (34-րդ հոդված), ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու, գործազրկության և օրենքով նախատեսված այլ դեպքերում սոցիալական ապահովության (37-րդ հոդված), կրթության (39-րդ հոդված) և այլ իրավունքներ: Ի դեպ, թվարկված իրավունքները մինչ ՀՀ Սահմանադրության փոփոխությունները վերապահված էին միայն ՀՀ քաղաքացիներին:

Վերոհիշյալ սահմանադրական դրույթները, ինչպես նաև համապատասխան օրենքները և միջազգային իրավական ակտերն իրավաբանական հիմք են վարչական իրավունքով կարգավորվող օտարերկրացիների իրավունքների, ազատությունների և պարտականությունների համար:

Օրենքին համապատասխան, օտարերկրացիները ՀՀ-ում ունեն Հանրապետության քաղաքացիներին հավասար իրավունքներ, ազատություններ և պարտականություններ, եթե ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով և միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ: Նրանք ազատ են կատարելու այն, ինչն արգելված չէ օրենքով և չի խախտում այլոց իրավունքները և ազատությունները:

Բացի վերը նշված իրավունքներն ու ազատությունները, նրանք կրում են ՀՀ քաղաքացիների համար սահմանված սահմանադրական պարտականություններ, բացառությամբ ՀՀ պաշտպանությանը մասնակցելու պարտականությունից: Նրանք պարտավոր են պահպանելու ՀՀ Սահմանադրությունը և օրենքները, իրավական այլ ակտերը, հարգելու այլոց իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը, ազգային սովորույթներն ու ավանդույթները:

Օտարերկրացիների ՀՀ մուտք գործելու, դրա տարածքում գտնվելու և բնակվելու, տարանցիկ երթևեկելու, Հանրապետությունից ելքի և այլ իրավունքներին առնչվող հարաբերությունները կարգավորվում են օտարերկրացիների վերաբերյալ նշված օրենքով: Ընդ որում, Օրենքի գործողությունը չի տարածվում ՀՀ-ում օտարերկրյա պետությունների դիվանագիտական ներկայացուցչություններում, հյուպատոսական հիմնարկներում, միջազգային կազմակերպություններում կամ դրանց ներկայացուցչություններում աշխատելու նպատակով ՀՀ ժամանող կամ գտնվող օտարերկրացիների և դրանց ընտանիքների անդամների վրա: Օրենքի գործողությունը նշված անձանց վրա տարածվում է այնքանով, որքանով նրանց հետ առնչվող հարաբերությունների առանձնահատկությունները սահմանված չեն ՀՀ միջազգային պայմանագրերով:

Օրենքը չի տարածվում նաև ՀՀ-ում փախստականի կարգավիճակ կամ քաղաքական ապաստան հայցող օտարերկրացուն ապաստան և համապատասխան կարգավիճակ տալու կամ մերժելու, կորցնելու հիմքերի հետ կապված հարաբերությունների վրա: Նշված անձանց իրավական վիճակը կարգավորվում է «Փախստականների մասին» 1999թ. մարտի 3-ի և «Քաղաքական ապաստանի մասին» 2001թ. սեպտեմբերի 26-ի ՀՀ օրենքներով:

Օտարերկրացիները Հանրապետություն են մուտք գործում համապատասխան փաստաթղթերի հիման վրա և սահմանային հսկողություն իրականացնող ՀՀ կառավարության լիազոր պետական կառավարման մարմնի թույլտվությամբ, եթե այլ կարգ չի սահմանված օրենքով կամ ՀՀ միջազգային պայմանագրով: Առանց համապատասխան փաստաթղթերի մուտքը Հանրապետություն թույլատրվում է, եթե նրանք ժամանել են փախստականի կարգավիճակ կամ քաղաքական ապաստանի իրավունք հայցելու նպատակով: Միաժամանակ, ՀՀ կառավարությունը փոխադարձության սկզբունքի հիման վրա կամ անհրաժեշտության դեպքում նաև միակողմանիորեն որոշ պետությունների քաղաքացիների համար կարող է սահմանվել առանց մուտքի վիզայի այցելությունների ռեժիմ կամ որոշ անձանց ազատել մուտքի վիզա ձեռք բերելու պահանջից: ***Մուտքի վիզաների*** տրամադրման կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը: Ընդ որում, ***այցելության մուտքի*** և ***տարանցիկ մուտքի վիզաները*** տրամադրում և երկարաձգում են ՀՀ ոստիկանության բնագավառում լիազորված պետական կառավարման

մարմինը, իսկ ***պաշտոնական մուտքի*** և ***դիվանագիտական մուտքի վիզաները***՝ արտաքին գործերի բնագավառում լիազորված պետական կառավարման մարմինը:

Օտարերկրացուն ՀՀ այցելելու իրավեր կարող են տալ ՀՀ-ում բնակվող Հանրապետության քաղաքացին, ՀՀ-ում կացության ***կարգավիճակ ունեցող օտարերկրացին, ՀՀ-ում գրանցված իրավաբանական անձինք, ինչպես նաև ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, ՀՀ-ում հավատարմագրված դեսպանությունները, հյուպատոսական հիմնարկները և միջազգային կազմակերպությունները կամ դրանց ներկայացուցչությունները:***

Օտարերկրացիները ՀՀ-ից կարող են դուրս գալ անհրաժեշտ փաստաթղթերի առկայության դեպքում, եթե այլ կարգ չի նախատեսված օրենքով կամ միջազգային պայմանագրերով: Ի դեպ, օտարերկրացու ելքը ՀՀ-ից արգելվում է, եթե օրենքով սահմանված կարգով նրա նկատմամբ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին՝ մինչև գործի վարույթի ավարտը կամ քրեական հետապնդման դադարեցումը, նրա նկատմամբ սահմանվել է այնպիսի պատիժ, որի կրումը հնարավոր է միայն ՀՀ-ում մինչև պատիժը կրելու ժամկետի ավարտը կամ պատիժը կրելուց ազատվելը:

ՀՀ-ում օտարերկրացիների համար սահմանվում է կացության երեք կարգավիճակ՝ ***ժամանակավոր***, ***մշտական*** և ***հատուկ***:

Ժամանակավոր կացության կարգավիճակը տրվում է մինչև մեկ տարի ժամկետով և յուրանքանչյուր անգամ կարող է երկարաձգվել նույն ժամկետով՝ ուսման, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու և այլ համգամանքներով, իսկ ***մշտական կացության կարգավիճակը՝*** հինգ տարի ժամկետով և յուրաքանչյուր անգամ նույնքան ժամկետով երկարաձգմամբ՝ ՀՀ-ում մերձավոր ազգականներ ունեցողներին, բնակարանով և գոյության միջոցներով ապահովված անձանց և այլն: Կացության նշված կարգավիճակներ տալու կամ մերժելու, ինչպես նաև կացության կարգավիճակ ունեցող անձանց հաշվառումն իրականացնում է ՀՀ ոստիկանության բնագավառում լիազորված պետական կառավարման մարմինը՝ կառավարության սահմանած կարգով:

Հատուկ կացության կարգավիճակը տրվում է տաս տարի ժամկետով և կարող է երկարաձգվել մեկից ավելի անգամ՝ ծագումով հայ օ-

տարերկրացիներին, ինչպես նաև ՀՀ-ում տնտեսական կամ մշակութային գործունեություն իրականացնող այլ օտարերկրացիների: Այդ կարգավիճակն ստանալու վերաբերյալ դիմումի քննարկման կարգը հաստատում և այն տալու կամ մերժելու որոշումը կայացնում է ՀՀ Նախագահը: Նշված որոշումը վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Օրենքն սպառիչ սահմանում է այն հիմքերը, որոնց առկայության դեպքում կարող է մերժվել օտարերկրացուն կացության կարգավիճակ տալու դիմումը (19-րդ հոդված): Կացության կարգավիճակ ստանալու կամ երկարաձգելու վերաբերյալ դիմումի մերժումը (բացառությամբ հատուկ կարգավիճակի) կարող է բողոքարկվել դատական կարգով:

Կացության կարգավիճակ տալու վերաբերյալ որոշումն ուժը կորցրած ճանաչելու, կացության կարգավիճակը երկարաձգելու մասին դիմումը մերժելու հիմքերը և պատճառները նույնպես սպառիչ նախատեսված են Օրենքի 21-րդ հոդվածով:

Օտարերկրացիներն իրավունք ունեն տնօրինելու իրենց աշխատանքային ունակությունները, ընտրելու մասնագիտության և գործունեության տեսակը, զբաղվելու ՀՀ օրենսդրությամբ չարգելված տնտեսական գործունեությամբ՝ պահպանելով Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված սահմանափակումները: Սակայն, օտարերկրացի աշխատողին աշխատանքի թույլատրելիս օտարերկրացիների աշխատանքի և զբաղվածության ոլորտում ՀՀ լիազորված պետական կառավարման մարմինը հաշվի է առնում ՀՀ աշխատանքի շուկայի կարիքները և զարգացումները: Այս առնչությամբ լիազորված մարմինն օտարերկրացուն կարող է աշխատանքի թույլատրել կամ մերժել՝ կառավարության սահմանած կարգով և ժամկետներում (Օրենքի 25-րդ հոդված):

Եթե լրացել է օտարերկրացու մուտքի վիզայի կամ կացության կարգավիճակի վավերականության ժամկետը, մուտքի վիզան ուժը կորցված է ճանաչվել, մերժվել է նրա կացության կարգավիճակ ստանալու կամ ժամկետը երկարաձգելու դիմումը, զրկվել է կացության կարգավիճակից, ապա նա պարտավոր է կամավոր հեռանալ ՀՀ-ից (Օրենքի 30-րդ հոդված): Հակառակ դեպքում ՀՀ ոստիկանության բնագավառում լիազորված պետական կառավարման մարմնի

արտաքսման վերաբերյալ հարուցված գործի հիման վրա դատարանը կայացնում է համապատասխան որոշում: Ընդ որում, ելնելով մարդասիրական սկզբունքներից, Օրենքը սահմանում է այն հանգամանքները, որոնց առակայության դեպքում արգելվում է օտարերկրացիների արտաքսումը (32-րդ հոդված):

Օտարերկրացիների հանձնումը և ազատազրկման ձևով հետագա պատիժը կրելու համար փոխանցումն իրենց ծագման պետություն իրականացվում է ՀՀ միջազգային պայմանագրերով սահմանված կարգով: Օրենքը միաժամանակ սահմանում է օտարերկրացիների հանձնումը բացառող հանգամանքները (եթե նրա կատարած արարքի համար նախատեսվում է մահապատիժ, կամ լուրջ հիմքեր կան կասկածելու, որ նա կարող է ենթարկվել խոշտանգումների, դաժան, անմարդկային կամ նվաստացնող պատժի կամ վերաբերմունքի):

Օտարերկրացիների համար սահմանված իրավաբանական երաշխիքներն ընդգրկում են նաև նրանց իրավունքների և պարտականությունների խախտման համար պատասխանատվությունը: Օրենքը խախտելու համար սահմանված կարգով պատասխանատվություն են կրում ոչ միայն օտարերկրացիները, այլև նրանց հրավիրողները և գործատուները (43-րդ հոդված): ՀՀ-ում գտնվող օտարերկրացիները նույն հիմունքներով, ինչպես և Հանրապետության քաղաքացիները, ենթակա են վարչական պատասխանատվության, բացառությամբ այն օտարերկրացիների, ովքեր օգտվում են անձեռնմխելիության իրավունքից: Վերջիններիս հարցը լուծվում է դիվանագիտական ճանապարհով:

Ի դեպ, օտարերկրացիների նկատմամբ կիրառվող վարչական հարկադրանքի միջոցները սահմանված դեպքերում առաջացնում են իրավաբանական հետևանքներ: Օրինակ, օտարերկրացուն կացության կարգավիճակ տալու մերժման հիմք կարող է հանդիսանալ, եթե նա արտաքսվել է Հայաստանի Հանրապետությունից կամ նախկինում զրկվել է կացության կարգավիճակից (Օրենքի 19-րդ հոդված):

Վերը նշված օրենսդրական դրույթները բավարար հիմք են՝ օտարերկրացիերի ոչ միայն ընդհանուր, այլև վարչաիրավական կարգավիճակի մասին անհրաժեշտ պատկերացում կազմելու համար:

ԳԼՈՒԽ 6.
ՀԱՆՐԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

§1. Հանրային վարչարարություն իրականացնող մարմինների հասկացությունը և տեսակները

Հանրային վարչարարություն իրականացնող մարմինների հասկացությունը վիճարկելի իրավական ինստիտուտներից է, նկատի ունենալով ինչպես մասնագետների տարաբնույթ բնորոշումները, այնպես էլ կառավարչական գործունեության հարափոփոխ գործընթացները: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքին համապատասխան, վարչական մարմինների՝ հանրային իրավունքի բնագավառում իրականացվող ցանկացած գործունեության վրա տարածվում է սույն օրենքի գործողությունը: Ընդ որում, վարչական մարմինների լիազորությունները սահմանվում են օրենքով կամ դրանով նախատեսված դեպքերում՝ իրավական այլ ակտերով:

Նշված օրենքը միաժամանակ անդրադառնում է վարչարարության հասկացությանը, հիմնարար սկզբունքներին և վարչական մարմինների մեկնաբանությանը: Մասնավորապես, սահմանում է վարչարարության հիմունքները, վարչարարությամբ հասցված վնասի հատուցման հետ կապված վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջև ծագած հարաբերությունները (1-18-րդ և 95-111-րդ հոդվածներ):

Օրենքին համապատասխան, Հանրապետության հանրային վարչարարություն իրականացնող մարմինների (վարչական մարմինների) շարքն են դասվում՝

1) գործադիր իշխանության հանրապետական մարմինները: Այդպիսիք են համարվում նախարարությունները, կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինները և Հանրապետության ողջ տարածքում վարչարարություն իրականացնող պետական այլ մարմինները,

2) տարածքային կառավարման մարմինները՝ մարզպետները,

3) տեղական ինքնակառավարման մարմինները՝ համայնքի ավագանին, համայնքի ղեկավարը, քաղաքապետը՝ քաղաքային համայնքում, գյուղապետը՝ գյուղական համայնքում,

4) վերը թվարկված մարմիններից բացի, վարչարարություն իրականացնող պետական այլ մարմինները, որոնք նշված օրենքի իմաստով համարվում են վարչական մարմիններ (օրինակ, հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովը և այլն):

Ինչպես հիշյալ օրենքը, այնպես էլ Հանրապետության Նախագահի 2007թ. հուլիսի 17-ի ՆՀ-174-Ն հրամանագիրը ՀՀ կառավարությունը չեն դասում ՀՀ գործադիր իշխանության հանրապետական մարմինների շարքը, իսկ որպես վարչական մարմին կարող է վարչարարություն իրականացնել միայն այն դեպքում, երբ որոշակի գործառույթի առնչությամբ ընդունում է վարչական ակտ (օրինակ, պաշտոնի նշանակելու կամ պաշտոնից ազատելու կամ պարտադիր զինծառայությունից տարկետում տալու վերաբերյալ որոշումը և այլն):

Հանրապետության հանրային վարչարարությունը (վարչական գործունեություն) իրականացնող մարմինները, ՀՀ Սահմանադրությամբ վերապահված լիազորություններին համապատասխան, տարանջատվում են երեք խմբի՝ համապետական տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման, իսկ հանրային կառավարումն ընդգրկում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, այդ թվում նաև՝ հասարակական միավորումները և լրատվամիջոցները:

Բազմաթիվ երկրներում «գործադիր իշխանություն» և «պետական կառավարում» հասկացությունները մեկնաբանվում են որպես «վարչական իշխանություն» և վարչական գործունեությունը (վարչարարությունը) երկրորդական է համարվում գործադիր իշխանության նկատմամբ: Այն իրականացնում է ոչ միայն օրենքի դրույթները, այլև՝ գործադիր մարմինների ցուցումները: Այս համատեքստում հանրային կառավարչության (ադմինիստրացիայի) ամենօրյա գործունեության մեջ երբեմն որոշիչ դեր է կատարում գործադիր իշխանությունը:

Ըստ որոշ հեղինակների, հանրային վարչակազմը ենթարկվում է քաղաքական իշխանությանը և հանրային վարչակազմը դիտվում է,

որպես հանրային գործերի կառավարման ապարատ, որն զբաղվում է քաղաքական իշխանության կողմից նախատեսված նպատակների իրականացմամբ[1]: Առանձին տեսաբաններ հանրային վարչակազմը համարում են «կառավարական մեքենա, որի օգնությամբ իրականացվում է քաղաքականությունը»[2]:

Պետական վարչարարությունը՝ որպես քաղաքական որոշումների կատարման ապահովման գործունեություն, իրականացվում է պետական կառավարման (գործադիր իշխանության) ոլորտներում գործող հստակ պատրաստված մարդկանց կողմից: Նշված մարմինների և դրանց ծառայողների գործունեության ձևերն ու ակտերն ամփոփվում է «հանրային վարչակազմ» հասկացությամբ: Ամեն դեպքում վարչական մարմինները հիմնականում ներառվում են գործադիր իշխանության շրջանակի մեջ: Հետևաբար, կարելի է բնորոշել, որ հանրային վարչակազմն այնպիսի մարմինների, հիմնարկների և կազմակերպությունների ամբողջություն է, որն իրականացնում է վարչական գործառույթներ:

Հանրապետության վերը նշված օրենքը տալիս է միաժամանակ վարչարարության հասկացությունը. այն վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեություն է, որը եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ, ինչպես նաև գործողություն կամ անգործություն, որը ֆիզիկական կամ իրավաբանական անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ (3-րդ հոդված):

Հանրային իշխանությունը՝ որպես պետության գործունեության և զարգացման կարևոր տարր, ի դեմս իր մարմինների, պետության գործառույթների ու խնդիրների հիմնական կրողն է: Այս համատեքստում պետության կենսունակությունը մեծամասամբ արտահայտվում է հանրային վարչարարություն իրականացնող մարմինների՝ հատկապես գործադիր իշխանության մարմինների, գործունեության մեջ:

Ընդհանուր առմամբ պետական մարմնի, այնպես էլ գործադիր (պետական կառավարման, վարչական) մարմնի վերաբերյալ իրա-

---

[1] Տե՛ս Административное право зарубежных стран, Учебник / Под ред. А.Н. Козырина и М.А. Штатиной. М.: Спарк, 2003, էջ 29:
[2] Տե՛ս նույն տեղը, էջ 29:

վաբանական գրականության մեջ տարբեր կարծիքներ են հայտնվել, քանի որ դրանցից յուրաքանչյուրն իրենից ներկայացնում է բարդ սոցիալական օրգանիզմ և հետաքրքրությունը դրանց նկատմամբ մշտապես աճում է: Բացի այդ, օրենսդրությունն իր հերթին չի տալիս այդ մարմիններից յուրաքանչյուրի հստակ հասկացությունը: Այս առնչությամբ վերջին տարիներին նշված մարմինների հասկացության վերաբերյալ տեսական հիմքեր են առաջադրվել, հաշվի առնելով դրանց հասկացության արդի բովանդակությունը, գործունեության շրջանակները և լիազորությունների առանձնահատկությունները: Չնայած դրան, այնուամենայնիվ, հանրային վարչարարություն իրականացնող մարմինների վերաբերյալ տեսության հիմնահարցերը դեռևս բավարար չափով չի մշակված, թերևս նկատի ունենալով քաղաքական և սոցիալ-տնտեսական այն էական փոփոխությունները, որոնք կատարվել են երկրում: Մինչդեռ, գործադիր իշխանության մարմինը, լինելով պետական իշխանության մարմինների տարատեսակ և գործադիր իշխանության սուբյեկտ՝ ապահովում է բովանդակությամբ և մեթոդներով յուրահատուկ պետական գործունեություն՝ պետական կառավարում: Նկատենք նաև, որ արդի վարչական տերմինաբանությանը համապատասխան, «գործադիր իշխանության մարմին» և «գործադիր իշխանության սուբյեկտ» հասկացությունները նույնական են:

Հանրապետությունում հանրային վարչարարություն իրականացնող մարմնի (մարմինների) անվանումը, ինքնուրույնությունը և անկախությունը, ի տարբերություն օրենսդիր և դատական իշխանության մարմինների, սահմանադրորեն անորոշ է արտահայտված: Ավելին՝ պետական կառավարման մարմինների համակարգի իրավական կարգավիճակը սահմանադրական նորմերով ընդգրկված է մասնակիորեն: Բացի այդ, ամբողջական չեն բնութագրվում գործադիր իշխանության համակարգի և օգտագործվող «գործադիր իշխանության մարմին», «պետական կառավարման մարմին», «պետական կառավարման այլ մարմիններ» հասկացությունները:

ՀՀ 1995 թ. խմբագրմամբ Սահմանադրությունը որոշ նորություններ մտցրեց պետական մարմինների վերաբերյալ տեսության մեջ, դասակարգելով դրանք ըստ իրականացվող գործառույթների: Սահմանվեց, որ ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ինչպես

անմիջականորեն, այնպես էլ Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով (2-րդ հոդված), և դրանք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով (5-րդ հոդված): Բաժանելով պետական իշխանությունները երեք թևի, սահմանադրորեն ամրագրվեց, թե պետական որ մարմիններն են իրականացնում օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունները (62-րդ, 85-րդ, 91-րդ հոդվածներ և այլն): Մինչև Սահմանադրության 2005 թ. նոյեմբերի 27-ի փոփոխությունները 85-րդ հոդվածը սահմանում էր, որ «Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»: Սակայն փոփոխություններով այս դրույթը հանվել է և ներկայումս սահմանադրորեն ի տարբերություն իշխանության մյուս երկու թևերի մարմինների, ամրագրված չէ, թե Հանրապետությունում որ պետական մարմինը (մարմինները) է (են) իրականացնում Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանությունը: Ի դեպ, Սահմանադրության նույն հոդվածում սոսկ ներկայացվում են կառավարության գործառույթները կառավարման տարբեր ոլորտներում:

Հանրապետությունում օրենսդրորեն չեն տարբերակվում «գործադիր մարմին» և «գործադիր իշխանության մարմին» հասկացությունները: Այս համատեքստում, չնայած տարօրինակ է, բայց օրենսդրորեն «գործադիր մարմին» հասկացությունն ընդգրկում է «գործադիր իշխանության մարմին», «պետական, կառավարման մարմին», «պետական այլ մարմիններ» հասկացությունները, տվյալ դեպքում և՛ ՀՀ նախարարությունները, և՛ ՀՀ կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինները, և՛ ՀՀ ողջ տարածքում վարչարարություն իրականացնող այլ մարմինները: Անհրաժեշտ է այս առումով նկատի ունենալ, որ պետական իշխանության մարմինները, մասնավորապես, նախարարությունները և կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմիններն օժտված են պետական-իշխանական լիազորություններով, և օրենսդրորեն դրանք պետք է ընդգրկվեն «գործադիր իշխանության մարմին» ավելի նեղ հասկացության մեջ, իսկ ոչ պետական և պետական համակարգի մարմինները, որոնք չունեն այդպիսի լիազորություններ՝ «գործադիր մարմին» ավելի լայն հաս-

կացության մեջ: Օրինակ, համայնքի ղեկավարը համայնքի գործադիր մարմին է, այլ ոչ թե՝ գործադիր իշխանության մարմինը:

Այդպիսիք են նաև պետական կազմակերպությունների ու հիմնարկների, հասարակական միավորումների գործադիր մարմինները, որոնք պետական-կառավարչական գործունեության շրջանակներից դուրս գործող կառավարչական գործառույթներ իրականացնող, ներքին հարցերը կառավարող մարմիններ են: Միաժամանակ, արդի վարչաիրավական տեսությունը հնարավոր է համարում «գործադիր մարմիններ» հավաքական եզրույթի օգտագործումը՝ պետական-կառավարչական բոլոր սուբյեկտներին շեշտելու իմաստով[1]:

Վերջապես, «գործադիր իշխանության մարմին» հասկացությունը սահմանադրորեն ածանցվում է պետական իշխանությունների բաժանման սկզբունքի հետ և, բնականաբար, դրա բովանդակությունը որոշվում է գործադիր իշխանության առանձնահատկություններով: Անհերքելի է նաև այն, որ գործադիր իշխանությունը՝ գործադիր իշխանության գործառույթներ իրականացնող պետական մարմինների համակարգ է (կառավարություն, նախարարություններ և այլն)[2]:

Կարծում ենք, վերը նշված հարցերում առկա անորոշությունները մասամբ հարթելու առնչությամբ նպատակահարմար է օրենսդրորեն հստակ սահմանել Հանրապետության գործադիր իշխանության գործառույթներ իրականացնող մարմինների ցանկը: Ներկայումս Հանրապետությունում գործում են իրավական ակտերով ստեղծված այնպիսի կազմավորումներ, որոնց վերապահվել է պետական մարմնի կարգավիճակ և իրականացնում են կառավարչական բնույթի գործառույթներ: Օրինակ, ՀՀ օրենքներով ստեղծված մշտապես գործող մարմիններ (Կենտրոնական ընտրական հանձնաժողով, հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով և այլն), հանրապետական գործադիր իշխանության մարմինների գործակալություններ ու տեսչություններ կամ վերջիններիս կառավարման ոլորտում գործող պետական մարմիններ (Գիտության պետական կոմիտե և այլն): Սակայն նշված գործառույթները հիմք չեն հանդիսանում այդ մարմինները գործադիր իշխանության մարմինների շարքը

[1] Տե՛ս, օրինակ, Ю.М. Козлов, Л.Л. Попов նշված աշխ., էջ 147:
[2] Տե՛ս Советский энциклопедический словарь. М., 1980, էջ 516:

դասելու համար, դա կարող է արվել սոսկ պայմանական՝ միայն այդ իշխանությանը կամ այն ստեղծած հանրապետական գործադիր իշխանության մարմնին պատկանելու իմաստով:

Հանրապետական գործադիր իշխանության մարմիններն իրենց գործունեության սահմանված ոլորտում հիմնականում հանդես են գալիս որպես քաղաքական ղեկավարման մարմիններ: Դա պայմանավորված է նրանով, որ Սահմանադրությունն առաջին հերթին ամրագրում է պետության հիմնական մարմինների քաղաքական և պետական-իրավական բնութագիրը: Վերջիններիս պետական կառավարման գործառույթները Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սկզբունքորեն առանձնացված են տնտեսության և այլ գործունեության կառավարման գործառույթներից: Այսպես, ՀՀ կառավարությունը, սահմանված կարգով մշակում և իրականացնում է ներքին և արտաքին քաղաքականությունը, նրա իրավասությանը ենթակա են պետական կառավարման նախատեսված բոլոր հարցերը:

Գործադիր մարմինների միասնականությունը բխում է Հանրապետության Սահմանադրության դրույթներից և պետական իշխանության մյուս ճյուղերի հետ փոխհարաբերություններից: ՀՀ պետական կառուցվածքն անմիջականորեն ազդում է նաև գործադիր իշխանության մարմինների համակարգի միջև աշխատանքի և լիազորությունների բաժանման վրա, որոնք իրականացվում են հենց այդ իշխանության գործառույթների կազմակերպման ընթացքում: Այս իմաստով էլ գործադիր իշխանության մարմինների համակարգը մեկնաբանվում է որպես դրանց ամբողջություն և փոխհարաբերության համակարգ՝ նշված մարմինների միջև իրավասության սահմանազատման հիման վրա:

Հանրապետության գործադիր իշխանության մարմինների համակարգը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության՝ որպես պարզ (ունիտար) պետության կառուցվածքով: Դրան համապատասխան, ՀՀ գործադիր իշխանության մարմինների միասնական համակարգն ընդգրկում է՝ ա) գործադիր իշխանության հանրապետական մարմինները և բ) տարածքային պետական կառավարման մարմինները:

Միասնական համակարգում ընդգրկված նշված մարմինների ի-

րավասությունը, փոխհարաբերությունները, ինչպես նաև դրանց ենթակայության և լիազորությունների սահմանները կարգավորվում են նորմատիվ-իրավական ակտերով: Ընդ որում, գործադիր իշխանության հանրապետական մարմինների օրինական ակտերը պարտադիր են տարածքային պետական կառավարման մարմինների համար, իսկ վերջիններիս օրինական իրավական ակտերը պետք է պահպանվեն առաջինների կողմից:

Վերը հիշատակված մարմինների իրավասության, այսինքն՝ տնօրինությանը ենթակա առարկաների, իրավունքների ու պարտականությունների սահմանման և փոփոխման հարցերը ձևակերպվում են նորմատիվ ակտերով: Հիմնականում դրանք ամրագրվում են Սահմանադրությամբ, օրենքներով և գործադիր իշխանության ենթաօրենսդրական ակտերով, պայմանագրերով, ինչպես նաև պատվիրակման միջոցով: Ներկայումս, սակայն, գործադիր իշխանության մարմինների միասնական համակարգի հասկացության, կազմակերպման և գործունեության, ինչպես նաև դրանում ընդգրկված կառուցակարգերի վերաբերյալ որոշակի օրենսդրական ակտ չի ընդունվել:

§2. Գործադիր իշխանության մարմինները, դրանց տեսակները և վարչահիրավական կարգավիճակը

Կառավարության քաղաքականությունն առանձին ոլորտներում մշակում և իրականացնում են հանրապետական գործադիր իշխանության մարմինները և պատասխանատու են դրա համար, ղեկավարում են իրենց համակարգի պետական և այլ մարմինները: Ինչպես վարչապետը, այնպես էլ նախարարները զբաղեցնում են քաղաքական պաշտոն:

Գործադիր իշխանության մարմինների հասկացությունը և յուրահատկությունները պարզաբանելու համար, հենվելով կայուն գիտական մշակումների վրա, անհրաժեշտ է նկատի ունենալ հետևյալ սկզբունքային հիմքերը՝

1) Սահմանադրությամբ կանոնակարգված բոլոր պետական մարմինները ներառվում են սկզբունքորեն իրարից բաժանված պետական իշխանության երեք թևերից որևէ մեկի մեջ: Այս առումով գործադիր

իշխանության մարմինը գործադիր իշխանության մարմինների միասնական համակարգի անբաժանելի մասն է:

Չնայած, ՀՀ Սահմանադրությամբ հստակ սահմանված չէ թե որ մարմիններն են համարվում գործադիր իշխանության մարմիններ, այնուամենայնիվ, սահմանադրական իմաստով ենթադրվում է, որ այդպիսիք է հանդիսանում պետական մարմինների այն համակարգը, որը պետական իշխանությունների բաժանման կառուցվածքում գործում է հիմնականում օրենսդիր և դատական իշխանության մարմիններին զուգահեռ և իրականացնում է գործադիր գործառույթներ,

2) գործադիր իշխանության մարմիններն ստեղծվում, վերակազմակերպվում և լուծարվում են օրենսդրությամբ սահմանված կարգով (օրինակ, հանրապետական գործադիր իշխանության մարմիններն ստեղծվում, վերակազմակերպվում և լուծարվում են վարչապետի առաջարկությամբ՝ Հանրապետության Նախագահի հրամանագրով),

3) գործադիր իշխանության մարմինը պետության կողմից սահմանված կարգով ձևավորված աշխատավորական կոլեկտիվ է: Այն իր նպատակային նշանակությանը համապատասխան, ունի կազմակերպական կառուցվածք, հաստիքներ, պետական ծառայողների միջև՝ իրենց ծառայողական կարգավիճակի ծավալին համապատասխան լիազորությունների ու պարտականությունների բաժանում, ֆինանսանյութական միջոցներ և այլն: Հենց այդ ծառայողների միջոցով է գործադիր իշխանության մարմինն իրականացնում իր խնդիրներն ու գործառությունները: Բացի այդ, պետության անունից գործնականում հանդես են գալիս, և կառավարչական հարաբերություններում ներկայանում են որպես այդ մարմնի պաշտոնատար անձինք: Վերջիններս ինքնին չեն կարող համարվել գործադիր իշխանության մարմին,

4) գործադիր իշխանության մարմինն օժտված է օպերատիվ ինքնուրույնությամբ: Նշված մարմնի լիազորություններին համապատասխան դրա իրավական կարգավիճակն ամրագրվում է Սահմանադրությամբ ու օրենքներով (օրինակ, կառավարությունը), և այլ իրավական ակտերով (օրինակ, նախարարությունները, կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինները, մարզպետները): Թվարկված իրավական ակտերով սահմանվում են այդ մարմին-

ների լիազորությունները, խնդիրները, պարտականությունները և պատասխանատվությունը,

5) գործադիր իշխանության մարմինը, լինելով պետական ապարատի բաղադրամասը, օրենսդրությամբ սահմանված կարգով գործնականում իրականացնում է գործադիր իշխանության խնդիրներն ու գործառույթները՝ տնտեսության և սոցիալ-մշակութային ոլորտներում,

6) գործադիր իշխանության մարմիններն իրենց իրավասության սահմաններում օժտված են որոշակի ծավալի պետական-իշխանական (իրավաբանական-իշխանական) լիազորություններով: Վերջիններիս համապատասխան, որպես ենթաօրենսդրական մարմիններ՝ գործադիր իշխանության մարմիններն ի կատարումն օրենքների, ընդունում են ենթաօրենսդրական իրավական ակտեր, այդ թվում՝ վարչական հարկադրանքի միջոցներ, և ապահովում դրանց կատարումը: Ընդ որում, այդ մարմիններից յուրաքանչյուրը ՀՀ կառուցվածքին համապատասխան, ունի օրենսդրությամբ սահմանված գործունեության տարածքային սահմաններ (օրինակ, կառավարությունը, մարզպետները, տեղական ինքնակառավարման մարմինները),

7) գործադիր իշխանության մարմինները՝ որպես պետական կազմակերպության տարատեսակ, էապես տարբերվում են նույն համակարգի մեջ մտնող, սակայն պետական-իշխանական լիազորություններ չունեցող պետական կազմակերպություններից և հիմնարկներից (օրինակ, արտադրական կազմակերպություն, հիվանդանոց և այլն): Սակայն, դրանցում գործում է կառավարչական կազմավորում (վարչակազմ՝ ադմինիստրացիա): Պետական կազմակերպությունների, հիմնարկների բնականոն աշխատանքը կազմակերպելու նպատակով վարչակազմը (տնօրենը) օժտված է որոշակի իրավական-իշխանական լիազորություններով (համակարգում է աշխատողների աշխատանքը և վերահսկում այն, անհրաժեշտության դեպքում կիրառում է կարգապահական տույժի միջոցներ և այլն):

Վարչահիրավական գրականության մեջ գործադիր իշխանության մարմնի բնորոշման հարցում տարբեր կարծիքներ են հայտնվել: Կարծում ենք, ամենահակիրճ և հստակ բնորոշումը տրվել է պրոֆ. Ա. Ալյոխինի կողմից. *գործադիր իշխանության մարմինը՝ որպես պետական իշխանության թև, քաղաքական հիմնարկ է և ստեղծվում է այդ իշ-*

խանության գործառույթների իրականացմանը մասնակցելու համար և այդ նպատակով օժտված է պետական-իշխանական բնույթի լիազորություններով:

Այսպիսով, գործադիր իշխանության մարմիններն իրականացնում են հատուկ տեսակի պետական գործունեություն, որը կրում է գործադիր և կարգադրիչ բնույթ: Նշված մարմիններն անմիջականորեն կատարում են Հանրապետության ներկայացուցչական մարմնի՝ ՀՀ Ազգային ժողովի, ընդունած իրավական ակտերը, ՀՀ Նախագահի հրամանագրերը և կարգադրությունները, կազմակերպում են այդ ակտերի կատարումը կամ իրենց որոշումներով ապահովում են դրանց կատարումը: Գործադիր իշխանության մարմիններն իրենց իրավական ակտերն ընդունում են ՀՀ Սահմանադրության, օրենքների, Հանրապետության Նախագահի նորմատիվ հրամանագրերի, վերադաս գործադիր իշխանության մարմինների որոշումների հիման վրա և ի կատարումն դրանց:

Գործադիր իշխանության մարմինների համակարգը տեսակային առումով բազմազան է: Այս կապակցությամբ երբեմն օրենսդրությամբ, ինչպես նաև վարչահիրավական գրականության մեջ նշված մարմինների համակարգը մի շարք հատկանիշներով դասակարգվում են սկզբունքային նշանակություն ունեցող որոշակի խմբերի: Դրա համար հիմք են հանդիսանում առանձին հիմնարար չափանիշներ՝ ***պետության կառուցվածքը, այդ մարմինների կազմավորման ձևերը, իրավասության բնույթը, դրանց կողմից ենթակա հարցերը լուծելու կարգը:***

ՀՀ պետական կառուցվածքին համապատասխան, գործադիր իշխանության մարմինների միասնական համակարգում առանձնանում են՝

1) ***հանրապետական գործադիր իշխանության մարմինները*** (նախարարություններ, կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմիններ, ինչպես նաև ՀՀ ողջ տարածքում վարչարարություն իրականացնող պետական այլ մարմիններ (օրինակ, ՀՀ օրենքներով ստեղծված մշտապես գործող մարմիններ, մասնավորապես, հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը և այլն): Թվարկված մարմիններն իրենց գործունեությունը տարածում են Հանրապետության ամբողջ տարածքի վրա և պատասխանատ-

վություն են կրում ՀՀ-ում հանձնարարված բնագավառի գործերի վիճակի համար:

Ինչպես Հանրապետության Սահմանադրությունը, այնպես էլ մյուս օրենսդրական ակտերը չեն կարգավորում գործադիր իշխանության մարմինների համակարգի և կառուցվածքի հիմնահարցերը, իսկ Հանրապետության տարբեր իրավական ակտերի միջև այդ առնչությամբ հակասություններ են ստեղծվել: Օրինակ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» 2004 թ. փետրվարի 18-ի օրենքի 3-րդ հոդվածը «գործադիր իշխանության հանրապետական մարմիններ» հասկացությանն ավելի լայն և անորոշ մեկնաբանություն է տալիս և դրանց շարքն է դասում նախարարությունները և Հանրապետության ողջ տարածքում վարչարարություն իրականացնող պետական այլ մարմինները: Վերջիններս կոնկրետ որ մարմիններն են պարզ չէ, իսկ ՀՀ Նախագահի 2007 թ. հուլիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին» թիվ ՆՀ-174-Ն հրամանագրի 8-րդ կետը հանրապետական գործադիր մարմիններ է համարում միայն ՀՀ նախարարությունները և կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինները: Ընդ որում, նշված օերնքում դրանք անվանվում են «հանրապետական գործադիր իշխանության մարմիններ», իսկ հրամանագրում՝ «հանրապետական գործադիր մարմիններ»: Կարծում ենք, հիշատակված իրավական տարբերությունները վերացնելու և այդ մարմինների համակարգում հստակություն մտցնելու համար անհրաժեշտ է ընդունել առանձին օրենսդրական ակտ:

Նկատենք նաև, որ անկախ օրենսդրական կանոնակարգումից, վարչահիրավական գրականության մեջ ***երկրի կառավարությունն անվանվում է գործադիր իշխանության բարձրագույն մարմին***՝ հաշվի առնելով դրա հստակ կարգավիճակը, յուրահատուկ փոխհարաբերությունները պետական մյուս մարմինների հետ և ղեկավար դերն ու տեղը գործադիր իշխանության մարմինների համակարգում:

Նախարարություններն ու գերատեսչությունները տեսականորեն կոչվում են գործադիր իշխանության կենտրոնական մարմիններ: Իրավաբանական գրականության մեջ և իրավական ակտերում օգտագործվում է «գերատեսչություն» հասկացությունը, որը մի օրենքում

ընդգրկում է և՛ նախարարությունները, և՛ պետական կառավարման մյուս մարմինները, իսկ մի այլ դեպքում, բացի նախարարություններից, մյուս բոլոր պետական կառավարման մարմինները (կոմիտեներ, ծառայություններ, վարչություններ և կառավարությանը ենթակա պետական կառավարման այլ մարմիններ): Վերջիններս նախարարություններից տարբերելու համար անվանվում են հատուկ գերատեսչություններ:

2) ***տարածքային պետական կառավարման մարմինները*** գործում են ՀՀ որոշակի տարածքում, այսինքն՝ Հանրապետության տարածքի մի մասում և օրենսդրությամբ սահմանված շրջանակներում իրականացնում են կառավարության տարածքային քաղաքականությունը նախատեսված բնագավառներում (մարզպետներ): Տարածքային մարմիններ են նաև հանրապետական գործադիր մարմինների կողմից ստեղծված տարածքային ծառայությունները (օրինակ, ոստիկանության, ազգային անվտանգության տարածքային ծառայությունները):

Կազմակերպական-իրավական ձևերով տարբերակվում են գործադիր իշխանության հետևյալ մարմինները՝

1) կառավարությունը,

2) նախարարությունները,

3) պետական կոմիտեները,

4) պետական ծառայությունները,

5) գլխավոր վարչություններն ու վարչությունները,

6) ՀՀ ողջ տարածքում վարչարարություն իրականացնող պետական այլ մարմիններ և այլն:

Կազմավորման հիմքերով գործադիր (պետական կառավարման) մարմինները բաժանվում են այնպիսի խմբերի, որոնց՝

1) կազմավորումը նախատեսված է Սահմանադրությամբ (օրինակ, կառավարություն, մարզպետներ),

2) կազմավորման համար հիմք են հանդիսանում ընթացիկ օրենքները և ենթաօրենսդրական ակտերը: Այսպես, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը կազմավորվում է օրենքի հիման վրա, իսկ որոշ մարմիններ ստեղծվում են Հանրապետության Նախագահի հրամանագրերով: Սակայն բոլոր դեպքերում այդ մարմինների ստեղծման իրավական հիմքը պետք է նախատեսված

լինի Սահմանադրությամբ՝ թեկուզ օրենսդրական կարգով ստեղծելու դրույթ ամրագրելու տեսքով:

Իրավասության բնույթով գործադիր իշխանության մարմինները բաժանվում են ընդհանուր, ճյուղային, միջճյուղային և ներճյուղային իրավասության մարմինների.

1) ***ընդհանուր իրավասության մարմինները*** (օրինակ, կառավարությունը, մարզպետները) ղեկավարում են իրենց ենթակա տարածքում բոլոր ճյուղերը և կառավարման ոլորտները կամ դրանց մեծամասնությունը, համակարգում են դրանց գործունեությունը, ապահովում սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացումն ու պատասխանատու են գործերի վիճակի համար,

2) ***ճյուղային իրավասության մարմիններն*** իրենց գործառույթներն իրականացնում են ենթակա ճյուղերի նկատմամբ (օրինակ գյուղատնտեսության, կրթության և գիտության, քաղաքաշինության նախարարությունները): Ըստ ճյուղերի դրանք բաժանվում են հետևյալ խմբերի՝ ա) տնտեսության արտադրական ճյուղերի (արդյունաբերություն, գյուղատնտեսություն, շինարարություն), բ) արտադրական ենթակառուցվածքների ճյուղերի (էներգետիկա, տրանսպորտ, կապ) և գ) սոցիալական ենթակառուցվածքային ճյուղերի (առողջապահություն, կրթություն, գիտություն, մշակույթ),

3) ***միջճյուղային իրավասության մարմիններն*** իրենց հանձնարարված գործունեության ոլորտում իրականացնում են ընդհանուր մասնագիտացված գործառույթներ կառավարման բոլոր ճյուղերի և ոլորտների կամ դրանց մեծամասնության համար (օրինակ, բնապահպանության, ֆինանսների, արդարադատության և, այսպես կոչված, ուժային նախարարությունները, պետական եկամուտների կոմիտեն):

Վարչական գրականության մեջ ճյուղային և միջճյուղային իրավասության մարմինների ամբողջությունը կոչվում են նաև ***հատուկ իրավասության մարմիններ,*** որոնք իրականացնում են ճյուղային կամ միջճյուղային՝ կամ խառը (գործառութային) կառավարում կամ միաժամանակ և՛ մեկը, և՛ մյուսը: Այսպես, ՀՀ առողջապահության նախարարությունը ղեկավարում է իրեն ենթակա առողջապահության մարմիններն ու հիմնարկները և միաժամանակ միջճյուղային կառավարում է իրականացնում պաշտպանության նախարարության, ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության և

ՀՀ ոստիկանության բուժծառայությունների նկատմամբ,

4) ***Ներճյուղային իրավասության մարմինները*** տվյալ ճյուղի շրջանակներում ղեկավարում են իրենց հանձնարարված աշխատանքի բնագավառը (օրինակ, հանրապետական գործադիր իշխանության մարմինների՝ ազգային անվտանգության ծառայության, ոստիկանության, պաշտպանության, կապի, էներգետիկայի և այլ տարածքային ծառայությունները:

Ենթակա հարցերը լուծելու կարգին համապատասխան գործադիր մարմինները լինում են կոլեգիալ և միանձնյա: Վերջիններս գործադիր մարմինների կառուցվածքի և գործունեության կազմակերպական ձևերից են.

1) ***գործադիր մարմնի կոլեգիալ կառուցվածքը*** ենթադրում է, որ այն ղեկավարում է կա՛մ կոլեգիան (անձանց խումբ), կա՛մ ունի կոլեգիա, սակայն վերջինս չի ղեկավարում այդ մարմինը: Կոլեգիալ գործադիր մարմինը մի խումբ անձանց կազմակերպական-իրավական միավորում է, որին իրավունք է վերապահված տվյալ մարմնի իրավասությանը ենթակա բոլոր հարցերի վերաբերյալ ընդունել որոշումներ:

Հանրապետությունում իրենց կազմով և աշխատանքի մեթոդներով կոլեգիալ մարմիններ են համարվում ՀՀ կառավարությունը, կենտրոնական ընտրական, հանրային ծառայությունները կարգավորող և այլ հանձնաժողովները: Օրինակ, ՀՀ կառավարությունն իր որոշումներն ընդունում է միայն մի խումբ անձանց (կառավարության անդամների) միջոցով: Որոշումն ընդունված է համարվում, եթե դրա օգտին քվեարկել է նիստին մասնակցող կառավարության անդամների (ՀՀ վարչապետ և նախարարներ) կեսից ավելին,

2) ***միանձնյա ղեկավարման գործադիր մարմինն*** իրեն ենթակա հարցերը լուծելիս վճռական դեր է տալիս տվյալ մարմնի ղեկավարին (նախարարին, կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմնի ղեկավարին և այլն): Վերջիններս իրենց ոլորտի կառավարմանը վերաբերող բոլոր հարցերի քննարկումը և լուծումը կազմակերպում են միանձնյա ղեկավարման ու խորհրդակցական կոլեգիալության զուգորդումն սկզբունքի հիման վրա: Դա պայմանավորված է նրանով, որ այդ մարմինները կոլեգիայի նիստերում քննարկում են իրենց գործունեության ու զարգացման հիմնական հարցերը, կարևորագույն հրամանների նախագծերը և այլ հիմնահարցեր: Օրինակ,

հանրապետական գործադիր իշխանության մարմինների կոլեգիան (խորհուրդը) խորհրդակցական մարմին է, որի կազմը հաստատվում է վարչապետի կողմից՝ համապատասխան մարմնի ղեկավարի ներկայացմամբ: Դրա կազմում ընդգրկվում են տվյալ մարմնի ղեկավարը (կոլեգիայի նախագահ), նրա տեղակալները՝ ի պաշտոնե, համակարգի և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավար աշխատողները, երբեմն մասնագետներ: Կոլեգիայի որոշումները, որպես կանոն, կենսագործվում են համապատասխան գործադիր իշխանության մարմնի ղեկավարի հրամաններով:

Կոլեգիալությունը հնարավորություն է ընձեռում առավել համակողմանիորեն ուսումնասիրելու, վերլուծելու և ընդունելու հիմնավորված որոշումներ: Հիմնախնդիրների լուծման միանձնյա ղեկավարման և կոլեգիալության սկզբունքների զուգորդումն օժանդակում են ինչպես դրանց մանրազննին քննարմանը, այնպես էլ օպերատիվ լուծմանը:

Կոլեգիալության բացասական կողմն ընդունվող իրավական ակտերի որոշակի «դիմազրկությունն» է՝ պակասում է անհատական պատասխանատվությունը, իսկ միանձնյա ղեկավարման դեպքում՝ այն ավելի բարձր է: Ընդ որում, խոսքը ոչ միայն իրավական պատասխանատվության, այլև սոցիալական պատասխանատվության մասին է. պաշտոնյան առավել պատասխանատու է իրեն զգում միանձնյա որոշումներ կայացնելի և, որպես կանոն, դրևսորում է առավել մեծ շրջահայեցություն: Աշխատատարության առումով հարցերի կոլեգիալ լուծումն ավելի շատ ժամանակ է պահանջում, քան դրա միանձնյա լուծումը:

§3. Հանրապետության Նախագահի լիազորությունները գործադիր իշխանության բնագավառում

ՀՀ Սահմանադրությանը համապատասխան, Հանրապետության Նախագահը պետության գլուխն (ղեկավարն) է: Չնայած Հանրապետության Նախագահը կազմակերպորեն չի ընդգրկվում պետական իշխանության որևէ թևի մեջ և ապահովում դրանց բնականոն գործունեությունը, այնուամենայնիվ, նրա՝ որպես պետության գլխի, կարգավիճակը զգալիորեն պայմանավորված է իշխանության երկու թևերի՝

օրենսդիր ու գործադիր իշխանության մարմինների հետ փոխհարաբերություններով: Ընդ որում, իրենց յուրահատկություններով հատկապես առանձնանում են Հանրապետության Նախագահի և գործադիր իշխանության մարմինների փոխհարաբերություններն ու փոխհամագործակցությունը:

Թեպետ ՀՀ Սահմանադրության 2005 թ. փոփոխությունները որոշ չափով նեղացրին Հանրապետության Նախագահի և ՀՀ կառավարության իրավասության շրջանակը՝ հօգուտ վերջինիս, այնուամենայնիվ, պետության գլխի դերը, գործառույթները և լիազորություններն այդ բնագավառում բավականին էական են: Ընդհանուր առմամբ Հայաստանի Հանրապետությանը բնորոշ է երկրի Նախագահի ակտիվ և լայն մասնակցությունը վարչաիրավական ոլորտում, չնայած նա այդ ոլորտի մեջ է մտնում որպես սահմանադրական իրավունքի սուբյեկտ: Օժտված լինելով երկմիասնական կարգավիճակով ու հաշվի առնելով նրա լիազորությունների սահմանները և դրանց բնույթը, կարելի է նշել, որ Հանրապետության Նախագաը դասվում է նաև գործադիր իշխանության հատուկ սուբյեկտների շարքը: Հանրապետության Նախագահը գործում է վարչական իրավունքի նորմերին համապատասխան, իրականացնելով գործադիր բնույթի կոնկրետ գործառույթներ ու փոխհարաբերություններ գործադիր իշխանության մարմինների հետ: Այս առումով Հանրապետության Նախագահի բազմաթիվ լիազորություններ կամ անմիջականորեն ունեն գործադիր բնույթ, կամ էլ զգալիորեն մոտեցված են գործադիր իշխանությանը:

Գործադիր իշխանության բնագավառի Հանրապետության Նախագահի սահմանադրական լիազորությունները վերաբերում են ինչպես այդ մարմինների կազմավորմանը, այնպես էլ դրանց գործունեությանը: Այդ առումով Հայաստանի Հանրապետության Նախագահն օժտված է մի շարք լիազորություններով՝

1) Սահմանադրությամբ նախատեսված կարգով կազմավորում է ՀՀ կառավարությունը: Ազգային ժողովում պատգավորների մեծամասնության վստահությունը վայելող անձին, իսկ դրա անհնարինության դեպքում՝ առավել թվով պատգամավորների վստահությունը վայելող անձին նշանակում է վարչապետ: Վերջինիս առաջարկությամբ պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում կառավարության անդամներին (55-րդ հոդվածի 4-րդ կետ), կառավարությանն առընթեր

հանրապետական գործադիր իշխանության առանձին մարմինների (ՀՀ ազգային անվտանգության ծառայության, անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, պետական եկամուտների կոմիտեի, ՀՀ ոստիկանության) ղեկավարներին, իսկ մյուսներին՝ Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության և պետական գույքի կառավարման վարչության ղեկավարներին և դրանց տեղակալներին՝ ՀՀ վարչապետը:

Հանրապետության Նախագահն անմիջականորեն պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում հանրապետական գործադիր իշխանության մարմինների՝ պաշտպանության նախարարի, ազգային անվտանգության ծառայության տնօրենի տեղակալներին, իսկ արտաքին գործերի նախարարի տեղակալներին՝ վարչապետի առաջարկությամբ, ՀՀ ոստիկանության պետի տեղակալներին՝ պետի առաջարկությամբ: Խրախուսում և կարգապահական ներգործության միջոցներ է կիրառում իր կողմից նշանակված հանրապետական գործադիր իշխանության մարմինների ղեկավարներին և նրանց տեղակալներին:

Վերը շարադրվածից նկատում ենք, որ ՀՀ կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինների ղեկավարների ճնշող մեծամասնությանը և նախարարի տեղակալներին ՀՀ Նախագահը պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում այն կարգով, ինչպես ՀՀ նախարարներին, այսինքն վարչապետի առաջարկությամբ, իսկ առանձին մարմինների ղեկավարների տեղակալներին՝ ինքնուրույն, առանց որևէ մեկի առաջարկության կամ տվյալ մարմնի ղեկավարի առաջարկությամբ: Վերջին տասնամյակներում գործող այս միտումների հիմնական հետևանքն այն է, որ այդ կարգի նախարարությունների և կառավարությանը ենթակա գերատեսչությունների ղեկավարման նկատմամբ որոշակիորեն նեղացվում են կառավարության լիազորությունները և այդ մարմինների գործունեության վերահսկողությունը,

2) ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված դեպքերում և կարգով ընդունում է կառավարության հրաժարականը և հանձնարարում կառավարության անդամներին շարունակելու իրենց պարտականությունների կատարումը մինչև նոր կառավարության կազմավորումը: Հրաժարականն ընդունելուց հետո տասնօրյա ժամկետում նշանա-

կում է վարչապետ, իսկ վերջինիս նշանակումից հետո քսանօրյա ժամկետում և առաջարկությամբ կազմավորում է կառավարություն (55-րդ հոդվածի 4-րդ կետ):

Հանրապետության Նախագահը նախարարներից մեկին կարող է վարչապետի առաջարկությամբ նշանակել փոխվարչապետ, որը վարչապետին փոխարինում է նրա բացակայության ժամանակ (85-րդ հոդված),

3) ՀՀ վարչապետի ներկայացմամբ իր հրամանագրով սահմանում է ինչպես ՀՀ կառավարության, այնպես էլ նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը (85-րդ հոդված),

4) վարչապետի առաջարկությամբ ստեղծում, վերակազմակերպում և լուծարում է հանրապետական գործադիր մարմինները, որոնք առանձին բնագավառներում մշակում և իրականացնում են կառավարության քաղաքականությունը,

5) կարող է հրավիրել և վարել կառավարության նիստեր, սակայն միայն սահմանափակ հարցերով՝ արտաքին քաղաքականության, պաշտպանության և ազգային անվտանգության (86-րդ հոդված),

6) ՀՀ կառավարությունը Հանրապետության Նախագահի նորմատիվ ակտերի հիման վրա և դրանց կատարումն ապահովելու նպատակով ընդունում է որոշումներ, որոնք պարտադիր են կատարման ՀՀ ամբողջ տարածքում (85-րդ հոդված),

7) վավերացնում է մարզպետներ նշանակելու և ազատելու վերաբերյալ կառավարության որոշումները (88.1-րդ հոդված),

8) կարող է մեկ ամիս ժամկետով կասեցնել կառավարության որոշումների գործողությունը և Սահմանադրությանը դրանց համապատասխանության հարցը պարզելու նպատակով դիմել սահմանադրական դատարան (86-րդ հոդված):

9) Հանրապետությունը ներկայացնում է միջազգային հարաբերություններում: Կառավարության հետ համատեղ մշակում և իրականացնում է ՀՀ արտաքին քաղաքականությունը, ինչպես նաև այդ քաղաքականության ընդհանուր ղեկավարումը, կնքում է միջազգային պայմանագրեր,

10) նշանակում և հետ է կանչում օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններին առընթեր ՀՀ դիվանա-

գիտական ներկայացուցիչներին: Ընդունում է օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների դիվանագիտական ներկայացուցիչների հավատարմագրերը և հետկանչագրերը,

11) որպես զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատար համակարգում է պետական մարմինների գործունեությունը պաշտպանության բնագավառում: Նշանակում և ազատում է զինված ուժերի և այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմը, իսկ պատերազմի ժամանակ կարող է նշանակել և ազատել զինված ուժերի գլխավոր հրամանատարին,

12) Հանրապետության վրա զինված հարձակման, կամ դրա անմիջական վտանգի առկայության, ինչպես նաև պատերազմ հայտարարվելու դեպքերում հայտարարում է ռազմական դրություն և կարող է հայտարարել ընդհանուր կամ մասնակի զորահավաք, որոշում է ընդունում զինված ուժերի օգտագործման վերաբերյալ.

13) Հանրապետության սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի դեպքում, խորհրդակցելով Ազգային ժողովի նախագահի և ՀՀ վարչապետի հետ, հայտարարում է արտակարգ դրություն և իրականացնում իրավիճակից թելադրվող միջոցառումներ և այդ կապակցությամբ ուղերձով դիմում է ժողովրդին.

14) նկատի ունենալով Հանրապետության Նախագահի և գործադիր իշխանության սահմանադրական լիազորությունների հարցում դրանց փոխհարաբերությունները և կարևորությունը, պետության բնականոն գործունեությունն ապահովելու համար, Սահմանադրությունն արգելում է որոշ լիազորությունների իրականացումն այն դեպքում, երբ ՀՀ Նախագահի պաշտոնը թափուր մնալու պարագայում նրա պարտականությունները կատարում է Ազգային ժողովի նախագահը կամ վարչապետը: Այդ ժամանակահատվածում արգելվում է նշանակել վարչապետ, նշանակել և ազատել զինված ուժերի և այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմը (բացառությամբ ռազմական դրության ժամանակ), օրենքով նախատեսված դեպքերում նշանակումներ կատարել ոստիկանության և ազգային անվտանգության մարմինների պաշտոններում և այլն (60-րդ հոդված):

Գործադիր իշխանության (պետական կառավարման) բնագավառում Հանրապետության Նախագահի սահմանադրական լիազորությունների հակիրճ թվարկումն անգամ ցույց է տալիս, թե որքան

ընդգրկուն ու բազմազան են դրանք, ինչպես նաև կարևոր գործադիր իշխանության համակարգի արդյունավետ գործունեության համար:

Գործադիր իշխանության ոլորտում Հանրապետության Նախագահի աշխատանքի կազմակերպման և սահմանադրական լիազորությունների իրականացման հարցում կարևոր դեր ունի ՀՀ Նախագահի աշխատակազմը, ինչպես նաև ՀՀ Նախագահի վերահսկողական ծառայությունը, գլխավոր ռազմական տեսչությունը, արտաքին կապերի, հասարակայնության և տեղեկատվության միջոցների հետ կապերի վարչությունները և այլ կառուցվածքային ստորաբաժանումներ:

§4. Հայաստանի Հանրապետության կառավարությունը

1. ***ՀՀ կառավարության վարչաիրավական կարգավիճակի հիմունքները:*** Սահմանադրական իրավունքի տեսաբանները կառավարությունը բնութագրում են որպես պետության վարչական (գործադիր ու կարգադրիչ) գործունեությունը ղեկավարող ընդհանուր իրավասության կոլեգիալ մարմին[1]:

ՀՀ Սահմանադրության 1995 թ. խմբագրմամբ կառավարությունն իրականացնում էր Հանրապետության գործադիր իշխանությունը, սակայն Հիմնական օրենքի 2005թ. փոփոխություններով կառավարությունն այլևս օժտված չէ այդպիսի կարգավիճակով[2]: Բացի այդ, կառավարությունը չի համարվում հանրապետական գործադիր իշխանության մարմին[3]:

Միաժամանակ պետք է փաստել, որ ՀՀ կառավարությունն ամբողջովին զրկված չէ հանրապետական գործադիր իշխանության մարմնին յուրահատուկ լիազորություններից: Որոշ դեպքերում կառավարությունը հանդես է գալիս որպես վարչական՝ հանրապետական գործադիր իշխանության մարմին, երբ իրականացնում է վարչարա-

---

[1] Տե՛ս Конституционное (государственное) параво зарубежных стран. Общая часть. Учебник. В 4-х томах. Т. 1-2. Отв. ред. Б.А. Страшун – М; 1996, էջ 593:

[2] Տե՛ս 1995 թ. և 2005 թ. խմբագրմամբ ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածը:

[3] Տե՛ս «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» 18.02.04թ. օրենքի 3-րդ հոդվածը և Հանրապետության Նախագահի 2007թ. հուլիսի 18-ի թիվ ՆՀ-174-Ն հրամանագրի 8-րդ կետը:

ղություն՝ այնպիսի գործառույթ, որի արդյունքում ընդունում է վարչական ակտ, այսինքն՝ կառավարության որոշում[1]:

Գուցե ՀՀ կառավարության այդ կարգավիճակը, ինչպես արդեն նշվեց, պայմանավորում են նրանով, որ այն տնտեսության օպերատիվ կառավարումից դարձել է տնտեսական քաղաքականություն իրականացնող մարմին[2]:

Հանրապետության կառավարությունն ըստ գործունեության ոլորտի, լինելով ընդհանուր իրավասության գործադիր իշխանության մարմին, գլխավորում է ՀՀ գործադիր իշխանության մարմինների համակարգը և ապահովում դրանց փոխհամաձայնեցված գործունեությունը:

Կառավարությունը Հանրապետության վարչական իրավունքի կարևորագույն սուբյեկտն է և դա պայմանավորված է այդ մարմնի կողմից վարչական իրավունքի նորմերի օգտագործման ու իրականացման, այդպիսի նորմերի ստեղծման յուրահատուկ մեծածավալությամբ, ինչպես նաև պետության մեջ և գործադիր իշխանության համակարգում գրաված բարձր դիրքով: Իր բնույթով, լինելով ամբողջ կառավարման համակարգի կենտրոնը, կառավարության գործունեությունն ընդգրկում է նաև Հանրապետության իրավունքի համակարգի այլ ճյուղերի նորմեր, սակայն, այդ շարքում առանձնահատուկ նշանակություն ունեն կառավարության կազմավորման և գործունեության ոլորտները կարգավորող վարչահրավական նորմերը:

Առաջին հերթին, ունենալով սահմանադրահրավական կարգավիճակ, Հանրապետության կառավարությունը լիազորված է լուծելու ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով իր իրավասությանը ենթակա պետական կառավարման բոլոր հարցերը, եթե դրանք վերապահված չեն պետական այլ մարմինների կամ տեղական ինքնակառավարման մարմինների:

ՀՀ կառավարության կարգավիճակի հիմքն են կազմում ՀՀ Սահմանադրության այն դրույթները, որոնք խտացված տեսքով կարելի է

---

[1] Տե՛ս Հարցեր և պատասխաններ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի վերաբերյալ, Եր., 2007, էջ 20-21:

[2] Տե՛ս ՀՀ Նախագահ Ռ. Քոչարյանի 2002 թ. օգոստոսի 27-ի ելույթը Հայաստանի համայնքների միության համագումարում, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը, ձեռնարկ, Եր., 2003 թ. էջ 5:

ձևակերպել հետևյալ եղանակով՝ վարչապետի նշանակման, կառավարության կազմավորման և դրա անդամների նշանակման կարգը, կառավարության հրաժարականի ընդունման հիմքերն ու կարգը (55-րդ հոդվածի 4-րդ կետ), ինչպես նաև կառավարության և վարչապետի լիազորությունների կարգավորման ու կառավարության որոշումների բնույթը (85-90-րդ հոդվածներ):

Կառավարության գործունեության իրավական հիմքն են կազմում ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ միջազգային պայմանագրերը, ՀՀ օրենքները, ՀՀ Ազգային ժողովի և սահմանադրական դատարանի որոշումները, Հանրապետության Նախագահի հրամանագրերը, այդ թվում նաև՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին» Հանրապետության Նախագահի 2007 թ. հուլիսի 18-ի թիվ ՆՀ-174-Ն հրամանագիրը, կարգադրությունները և կառավարության որոշումները: Հիշյալ հրամանագիրն ամրագրում է Սահմանադրությամբ և օրենքներով կառավարությանը վերապահված լիազորությունների իրականացման կազմակերպական հիմունքները, դրա նիստերի նախապատրաստման և հրավիրման, որոշումների ընդունման և կատարման ապահովման կարգը:

Իր լիազորությունների սահմաններում կառավարությունը կազմակերպում է վերը նշված իրավական ակտերի կատարումը, կանոնավոր վերահսկողություն է իրականացնում գործադիր իշխանության և տարածքային պետական կառավարման մարմինների կողմից դրանց կատարման նկատմամբ, միջոցներ է ձեռնարկում օրենսդրության խախտումների վերացման, ինչպես նաև այդ մարմինների համակարգի, աշխատանքի ձևերի ու մեթոդների կատարելագործման ուղղությամբ:

ՀՀ կառավարությունը որպես պետական կառավարման բարձրագույն կոլեգիալ մարմին, կազմված է կառավարության անդամներից՝ Հանրապետության վարչապետից և նախարարներից: Հանրապետության կառավարության կազմավորման պրակտիկան ցույց է տալիս, որ սկզբունքորեն հնարավոր է դրա կազմում նշանակել նաև դասական իմաստով նախարարի պաշտոն չզբաղեցնող անձանց՝ նրանց օժտելով ՀՀ նախարարի կարգավիճակով: Տեսության մեջ այդ

կարգի նախարարներն անվանվում են «անպորտֆել նախարարներ» և, որպես կանոն, դրանց գործունեության շրջանակները սահմանափակվում է վարչապետի հանձնարարություններով:

Նկատի ունենալով Հանրապետության վարչապետի առանձնահատուկ դիրքը կառավարության կազմում և լիազորությունների սահմանները, նրա պաշտոնի նշանակման և ազատման կարգը բավականին կոշտ է (55-րդ հոդվածի 4-րդ կետ): Եթե Հանրապետության Նախագահը ցանկանում է այս կամ այն պատճառով պաշտոնից ազատել վարչապետին, ապա նա կառավարությանն անվստահություն հայտնելու վերաբերյալ որոշման նախագիծ պետք է ներկայացնի ՀՀ Ազգային ժողով: Նույնպիսի որոշման նախագիծ կարող է ներկայացնել նաև ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը: Այդ հարցը լուծվում է ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ (ՀՀ Սահմանադրության 84-րդ հոդված):

Կառավարության կառուցվածքի և կազմավորման հարցերում ՀՀ վարչապետն օժտված է յուրահատուկ կարգավիճակով: Նրա առաջարկությամբ Հանրապետության Նախագահը կազմում, վերակազմակերպում և լուծարում է Հանրապետության նախարարությունները և կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինները, նշանակում և ազատում է կառավարության անդամներին, նույն սկզբունքով նախարարներից մեկին կարող է նշանակել փոխվարչապետ: Կառավարության որոշմամբ պաշտոնի են նշանակվում և պաշտոնից ազատվում մարզպետները: Վարչապետի ներկայացմամբ Հանրապետության Նախագահի հրամանագրով սահմանվում է ՀՀ կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը:

Հանրապետության Նախագահի վերը նշված 2007 թ. հուլիսի 18-ի հրամանագրով որոշակի առանձնահատկություններ են սահմանված կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինների ղեկավարների, դրանց և նախարարների տեղակալների պաշտոնի նշանակման և ազատման հարցերում:

2. ***ՀՀ կառավարության լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքներով:*** ՀՀ կառավարությանը վերապահված լիազորությունները բավականին լայն ու բազմազան են և կազմում են

նրա վարչաիրավական կարգավիճակի կարևոր բաղադրամասը: Այս առնչությամբ կառավարությունը բնութագրվում է որպես պետության վարչական (գործադիր ու կարգադրիչ) գործունեությունը ղեկավարող և իրականացնող ընդհանուր իրավասության բարձրագույն մարմին:

Կառավարության լիազորությունների կազմակերպական ղեկավարումն իրականացնում է վարչապետը: ՀՀ Սահմանադրությանը համապատասխան (87-րդ հոդված) վարչապետը ղեկավարում է կառավարության գործունեությունը և համակարգում ՀՀ նախարարների և կառավարությանն ենթակա պետական կառավարման այլ մարմինների ղեկավարների աշխատանքը: Հանրապետական գործադիր մարմինների ղեկավարներն իրենց առջև դրված խնդիրների և գործառույթների կենսագործման համար պատասխանատու և հաշվետու են ինչպես Հանրապետության Նախագահին, այնպես էլ կառավարությանը և վարչապետին: Հաստատում է այդ մարմինների, ինչպես նաև օրենսդրությանը համապատասխան դրանց և համակարգի մեջ մտնող պետական մարմինների և կազմակերպությունների կանոնադրությունները և կառուցվածքը, դրանց համակարգի մեջ մտնող պետական մարմինների և կազմակերպությունների գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվություններն ու տարեկան հաշվեկշիռը: Օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատվում է հանրապետական գործադիր մարմինների համակարգի աշխատողների թիվը:

Կառավարությունը սահմանում է ՀՀ պաշտպանության, արտաքին գործերի նախարարությունների, կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության և ոստիկանության աշխատողների թվաքանակը, ինչպես նաև հանրապետական գործադիր մարմինների ղեկավարների խորհրդականների, օգնականների, ռեֆերենտների, մամուլի քարտուղարի և նախարարի տեղակալների օգնականների թվաքանակները:

Իր գործունեության վերաբերյալ խնդիրների լուծման, առանձին իրավական ակտերի նախագծերի, ներկայացված այլ հարցերի նախապատրաստման և քննարկման կամ որոշակի իրադարձությունների և փաստերի մասին առաջարկություններ, եզրակացություններ, տեղեկանքներ ներկայացնելու համար կառավարությունը կարող է ստեղծել հանձնաժողովներ:

Կառավարության ընդհանուր լիազորություններից են նաև

տնտեսական, սոցիալ-մշակութային և վարչաքաղաքական ոլորտների կարգավորումը, ներքին և արտաքին քաղաքականության մշակումը և իրականացումը, իրեն վերապահված օրենսդրական նախաձեռնության իրավունքի իրացումը, ինչպես նաև ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված այլ լիազորությունների իրականացումը: Նշված լիազորությունների մեջ առաջնային նշանակություն ունի երկրի սոցիալ-տնտեսական տարբեր բնագավառների կայացումը և զարգացումը, որը պետության կարևորագույն գործառույթներից է: Այս գործընթացների առնչությամբ կառավարությունն իր կազմավորումից հետո 20-օրյա ժամկետում ՀՀ Ազգային ժողովի հավանությանն է ներկայացնում իր ծրագիրը (Սահմանադրության 74-րդ հոդված):

Տնտեսության ոլորտում պետական կառավարման նպատակն է ապահովել ՀՀ էկոնոմիկայի զարգացումը, հաշվի առնելով կառավարման ճյուղային և տարածքային արդյունաբերության, գյուղատնտեսության, քաղաքաշինության, ինչպես նաև տնտեսական ինքնուրույնության և նախաձեռնության սկզբունքները: Ապահովում է տնտեսության բնագավառում միասնական քաղաքականությունը և գործունեության ազատությունը:

Պետական բյուջեի ձևավորման և կատարման բնագավառում ՀՀ կառավարությունն Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացնում բյուջեի նախագիծը: Քննարկմանը մասնակցում են կառավարության անդամները և կառավարության կողմից նշանակված ներկայացուցիչները: Կառավարությունը կարող է ընդունել կամ մերժել քննարկումների արդյունքում արված առաջարկությունները, ապահովում է բյուջեի կատարումը և այդ կապակցությամբ իրականացնում է վերահսկողություն ու պատասխանատու է դրա կատարման համար: Ազգային ժողովի քննարկմանն ու հաստատմանն է ներկայացնում բյուջեի կատարման հաշվետվությունը և այլն:

ՀՀ կառավարությունը, Սահմանադրությանը համապատասխան, կառավարում է պետական սեփականությունը, տիրապետում, օգտագործում և տնօրինում է այն: Կանոնակարգում է պետական սեփականության օբյեկտների սեփականաշնորհման և ապապետականացման ծրագրերը և վերջիններիս կատարման վերաբերյալ տարեկան հաշվետվություն է ներկայացնում Ազգային ժողով: Վերահսկողութ-

յուն է իրականացնում պետական սեփականության պահպանման նկատմամբ և այլն:

ՀՀ կառավարությունն իրականացնում է ֆինանսատնտեսական, վարկային և հարկային միասնական պետական քաղաքականությունը, որն նպատակաուղղված է Հանրապետության տնտեսության զարգացմանը: Միջոցներ է ձեռնարկում դրամական, վարկային համակարգի ամրապնդման, Հանրապետության ու օտարերկրյա պետությունների միջև ղեկավարում է արտարժութային և վարկային հարաբերությունները: Ընդհանուր ղեկավարություն է իրականացնում Հանրապետության միասնական մաքսային քաղաքականության բնագավառում, կարգավորում է հարկային հարաբերությունները:

Տարածքային զարգացման պետական քաղաքականության ոլորտում կառավարությունը համակարգում, միավորում և վերահսկում է տարածքային պետական կառավարման մարմինների կողմից պետական քաղաքականության իրականացումը, միջոցներ է ձեռնարկում դրանց աշխատանքի ձևերն ու մեթոդները կատարելագործելու ուղղությամբ:

ՀՀ կառավարությունն իրականացնում է պետական քաղաքականությունը գիտության, կրթության, մշակույթի, առողջապահության, սոցիալական ապահովության և բնության պահպանության բնագավառներում: Նշված ոլորտներում կառավարությունն ապահովում է պետության միասնական քաղաքականության կիրառումը:

Կառավարությունը քննարկում է միասնական գիտատեխնիկական քաղաքականության հայեցակարգի մոտեցումները, մշակում է գիտության զարգացման պետական ծրագրերը, միջոցներ է ձեռնարկում ապահովելու գիտատեխնիկական առաջադիմության արագացումը, գիտական հետազոտությունների արդյունավետության բարձրացումը և այլն: ՀՀ կառավարությունը միջոցներ է ձեռնարկում մշակույթի և հոգևոր արժեքների պահպանության, օգտագործման և զարգացման ավանդույթների պահպանման ուղղությամբ:

ՀՀ կառավարությունն առողջապահության ոլորտում միջոցներ է ձեռնարկում այդ համակարգի կազմակերպական, իրավական, տնտեսական և նյութատեխնիկական բազայի զարգացման, բնակչության առողջության պահպանման ուղղությամբ: Կառավարությունն ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը, վերար-

տադրությունը և բարելավումը, մշակում է մթնոլորտային օդի պաշտպանության համալիր ծրագիր:

Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության և արտաքին քաղաքականության իրականացման ապահովումը կառավարության առաջնային գործառույթներից է: Այդ կապակցությամբ կառավարությունը մշակում և հաստատում է ռազմական քաղաքականության հիմնախնդիրները, սահմանում է ՀՀ օդային տարածքի օգտագործման կարգը, որոշում է ՀՀ սահմանային ռեժիմը և պետական սահմանի պաշտպանության կանոնները: Օտարերկրյա պետությունների հետ բանակցություններ է վարում պաշտպանության հարցերով:

Արտաքին քաղաքականության բնագավառում կառավարությունն այն մշակում և իրականացնում է Հանրապետության Նախագահի հետ միասին:

ՀՀ կառավարությունն ապահովում է հասարակական կարգի պահպանությունը, միջոցներ է ձեռք առնում օրինականության ամրապնդման, քաղաքացիների իրավունքների ու ազատությունների ապահովման ուղղությամբ: Մասնակցում է օրինականության պահպանման ու ամրապնդման պետական քաղաքականության մշակմանը և իրականացմանը: Քաղաքացիների իրավունքների ու ազատությունների, օրինական շահերի և անվտանգության ապահովման նպատակով իրականացնում է միջոցներ:

Հանրապետության Սահմանադրության 89-րդ հոդվածով նախատեսված և վերը հակիրճ շարադրված լիազորություններից բացի, ՀՀ կառավարությունն իրականացնում է օրենսդրական ակտերով սահմանված այլ լիազորություններ:

3. ***ՀՀ կառավարության գործունեության կազմակերպումը:*** ՀՀ կառավարության վերաբերյալ սահմանադրական դրույթները և մյուս իրավական ակտերը կարևորում են կառավարության գործունեության կազմակերպման հիմնախնդիրները: Կառավարությունն իր գործունեությունը կազմակերպում է կառավարության ամենամյա ծրագրին համապատասխան, որը մշակվում և հաստատվում է կառավարության կողմից, ելնելով Հանրապետության տնտեսական զարգացման իրավիճակից, հեռանկարներից, առանձին տարածքների զարգացման անհրաժեշտությունից և այլ պարագաներից: Տարեկան գործունեութ-

յան ծրագիրը մշակում է կառավարության աշխատակազմը՝ ՀՀ նախարարների, կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինների ղեկավարների, մարզպետների (Երևանի քաղաքապետի) առաջարկությունների հիման վրա: Ծրագրի կատարման ապահովումը վերահսկում է կառավարության աշխատակազմը, որը ընթացիկ տարվա ավարտից հետո դրա կատարման վերաբերյալ տեղեկանք է ներկայացնում կառավարություն: ՀՀ կառավարության գործունեության կազմակերպման գործում կարևոր դերակատարություն ունի վարչապետը, որը Սահմանադրությանը համապատասխան ղեկավարում է կառավարության գործունեությունը, համակարգում նախարարների աշխատանքը և այդ գործունեության կազմակերպմանն առնչվող հարցերով ընդունում է որոշումներ:

ՀՀ վարչապետը վերահսկում է Հանրապետության գործադիր իշխանության մարմինների գործունեությունը, ինքը կամ նրա հանձնարարությամբ կառավարության աշխատակազմի ղեկավարը պարբերաբար քննության է առնում տարածքային կառավարման մարմինների կողմից Նախագահի, կառավարության և վարչապետի իրավական ակտերի, հանձնարարականների կատարման վիճակը և ձեռնարկում միջոցներ դրանց կատարման թերությունները վերացնելու համար: Պարբերաբար լսում է նշված մարմինների ղեկավարների հաշվետվությունները՝ կառավարության և իր որոշումների, հանձնարարությունների կատարման և ձեռնարկված միջոցների մասին: Սահմանված կարգով խրախուսում և կարգապահական ներգործության միջոցներ է կիրառում վերը նշված անձանց նկատմամբ:

Սահմանում է կառավարության և իր որոշումների, հանձնարարականների կատարման նկատմամբ վերահսկողության կարգը: Օրենքով նախատեսված կարգով կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում գերատեսչական նորմատիվ ակտերը:

Արտաքին հարաբերությունների ոլորտում ՀՀ վարչապետն օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով ստորագրում է ՀՀ միջազգային պայմանագրերը, տալիս է միջկառավարական պայմանագրեր ստորագրելու լիազորություն և հանձնարարականներ, ինչպես նաև կառավարության և վարչապետի անունից հանդես գալու լիազորագրեր: Ներկայացնում է կառավարությունն օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններում, նշանա-

կում է միջազգային և միջկառավարական մարմիններում կառավարության ներկայացուցիչներ: Իրականացնում է Սահմանադրությամբ, օրենքներով և մյուս իրավական ակտերով նախատեսված այլ լիազորություններ:

Կառավարությունն իր գործունեության կազմակերպումն իրականացնում է **նիստերի** միջոցով, որոնք հրավիրվում են, որպես կանոն, յուրաքանչյուր հինգշաբթի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև այլ օրերին:

Կառավարության հերթական նիստերը հրավիրում և վարում է վարչապետը, իսկ արտաքին քաղաքականության, պաշտպանության և ազգային անվտանգության հարցերով այն կարող է հրավիրել և վարել Հանրապետության Նախագահը: Վերջինիս կամ վարչապետի նախաձեռնությամբ, կամ էլ կառավարության որոշմամբ անհրաժեշտ դեպքերում հրավիրվում են կառավարության ***արտահերթ,*** իսկ Հանրապետության Նախագահի նախաձեռնությամբ՝ իրեն վերապահված հարցերով, կամ վարչապետի նախաձեռնությամբ կարող են անցկացվել կառավարության ***արտագնա*** նիստեր: Նիստերի նախապատրաստումը և անցկացումն ապահովում է կառավարության աշխատակազմը:

Վարչապետը հաստատում է կառավարության նիստերի ժամանակացույցը և օրակարգը: Օրակարգում փոփոխություններ կարող են կատարել Հանրապետության Նախագահը՝ իրեն վերապահված հարցերով, վարչապետը, ինչպես նաև կառավարության անդամները՝ կառավարության նիստը վարողի համաձայնությամբ:

ՀՀ կառավարության քննարկմանը հարցեր են ներկայացնում Հանրապետության Նախագահը՝ իրեն վերապահված հարցերով, վարչապետը, ինչպես նաև նախարարները: Վերջիններիս բացակայության դեպքում՝ նրանց համապատասխան տեղակալը: կառավարության քննարկմանը հարցեր կարող են ներկայացնել նախարարությունների կառավարման ոլորտում գործող պետական մարմինները, նախարարությունների կազմում գործող առանձնացված ստորաբաժանումները, ինչպես նաև տարածքային կառավարման մարմինները՝ տվյալ բնագավառի գործունեությունը համակարգող նախարարի, իսկ ՀՀ կառավարությանն առընթեր պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինները, օրենքով ստեղծված

մշտապես գործող հանձնաժողովները (խորհուրդները, ծառայությունները) և այլ պետական մարմիններ՝ վարչապետի միջոցով:

Կառավարության քննարկմանը հարցերը ներկայացվում են ՀՀ օրենքների, ՀՀ Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի ու կարգադրությունների, կառավարության որոշումների նախագծերի ձևով և որպես կառավարության կարծիքին ներկայացված՝ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների օրենսդրական նախաձեռնություններ: Ի դեպ, նշված հարցերով, բացառությամբ կառավարության որոշումների նախագծերի, ինչպես նաև օրենսդրական և ենթաօրենսդրական լուծում չպահանջող հարցերի (հաշվետվություններ, զեկուցագրեր, առաջարկություններ և այլն) վերաբերյալ կառավարությունն ընդունում է արձանագրային որոշում: Կառավարության քննարկմանը ներայացվող ՀՀ օրենքների, ՀՀ Ազգային ժողովի նորմատիվ բնույթի որոշումների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, կառավարության և վարչապետի որոշումների նախագծերը համաձայնեցվում են ՀՀ արդարադատության նախարարի և շահագրգիռ նախարարների, իսկ մարդու իրավունքների ու ազատությունների վերաբերյալ օրենքների նախագծերը նախքան կառավարություն ներկայացնելն ուղարկվում են կարծիքի ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին: Վերը նշված համաձայնությունները կատարում է հարցը ներկայացնողը:

Կառավարության քննարկմանը ներկայացվում են Սահմանադրությամբ ու օրենքներով նրա իրավասությանը վերապահված հարցեր և բխում են կառավարության հաստատած գործունեության միջոցառումների ծրագրից ու գերակա խնդիրներից:

ՀՀ կառավարության նիստերը, որպես կանոն, անցացվում են դռնբաց, սակայն առանձին դեպքերում դրանք անցկացվում են դռնփակ, եթե քննարկվում են պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ տեղեկություններին առնչվող, ինչպես նաև Հանրապետության Նախագահի՝ իր լիազորությունների կատարման անհնարինության վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարան կամ ՀՀ Ազգային ժողով դիմելու հարցեր:

Կառավարության նիստերին կառավարության անդամների մասնակցությունը պարտադիր է: Կառավարության անդամը անձամբ կա-

ղող է չմասնակցել միայն հարգելի, ինչպես նաև պաշտոնը թափուր լինելու դեպքերում կամ վարչապետի համաձայնությամբ: Կառավարության նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում է կառավարության անդամների կեսից ավելին:

Կառավարության նիստերին (նաև՝ դռնփակ) խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում են Հանրապետության Նախագահի և ՀՀ կառավարության աշխատակազմերի ղեկավարները, ինչպես նաև կառավարությանը ենթակա գերատեսչությունների ղեկավարները: Նույն իրավունքով կառավարության նիստին կարող են մասնակցել նաև ՀՀ օրենքներով ստեղծված մշտապես գործող հանձնաժողովների (ծառայությունների, խորհուրդների) ղեկավարները, ՀՀ գլխավոր դատախազը, կենտրոնական բանկի նախագահը, ՀՀ ԳԱԱ նախագահը և այլ անձինք:

ՀՀ կառավարության գործունեության կազմակերպման, կառավարությանն ու վարչապետին վերապահված լիազորությունների արդյունավետ իրականացումը, ինչպես նաև կառավարության բնականոն գործունեությունն ապահովում է կառավարության աշխատակազմը: Վերջինս այս առնչությամբ գործադիր իշխանության մարմիններից պահանջում է անհրաժեշտ փաստաթղթեր, տալիս է հանձնարարականներ: Մշակում է կառավարության գործունեության միջոցառումների ծրագիրը և վերահսկում դրա կատարումը, ապահովում է կառավարության նիստերի նախապատրաստման ամբողջ աշխատանքը և նիստերի անցկացումը, նախապես քննության է առնում կառավարություն կամ վարչապետին ներկայացված փաստաթղթերը, կազմակերպում է ՀՀ գործադիր իշխանության մարմինների կողմից կառավարության և վարչապետի որոշումների ու հանձնարարությունների կատարումը, ստորագրում է այդ որոշումների հավելվածները:

ՀՀ կառավարության աշխատակազմը կազմակերպում է քաղաքացիների ընդունելություն, սահմանված կարգով քննարկում է նրանց դիմումները, բողոքները և առաջարկությունները, պարբերաբար ստուգում է դրանց քննարկման ուղղությամբ հանրապետական գործադիր մարմինների աշխատանքը, վերլուծում, ամփոփում է դրանք և այդ մասին տեղեկություն ներկայացնում վարչապետին, ինչպես նաև այդ աշխատանքի վիճակի առնչությամբ կառավարության նիստերում քննության են առնվում գործադիր իշխանության մարմինների հաշվետվությունները:

Կառավարության աշխատակազմը ղեկավարում է աշխատակազմի ղեկավարը: Աշխատակազմի կանոնադրությունը և կառուցվածքը հաստատում է կառավարությունը, աշխատողների թվաքանակը՝ վարչապետը, իսկ հաստիքացուցակը՝ աշխատակազմի ղեկավարը: Աշխատակազմի ղեկավարը, օրենսդրությամբ սահմանված կարգով պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում քաղաքացիական ծառայողներին և այլ անձանց:

ՀՀ կառավարությունն իր լիազորությունները վայր է դնում Սահմանադրության 55-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված դեպքերում (նորընտիր Ազգային ժողովի առաջին նիստի, ՀՀ Նախագահի կողմից իր պաշտոնն ստանձնելու, Ազգային ժողովի կողմից կառավարությանն անվստահություն հայտնվելու, կառավարության ծրագրին հավանություն չտալու, վարչապետի կողմից հրաժարական ներկայացնելու կամ վարչապետի պաշտոնը թափուր մնալու օրը): Այս կապացությամբ Հանրապետության Նախագահն ընդունում է կառավարության հրաժարականը:

4. ***ՀՀ կառավարության և վարչապետի իրավական ակտերը:*** Հանրապետության կառավարությունը և վարչապետը Սահմանադրությամբ և օրենքներով իրենց վերապահված լայն լիազորություններն իրականացնում են իրենց կողմից ընդունվող իրավական ակտերի՝ որոշումների միջոցով:

Պետական կառավարման համակարգի մարմինների կողմից ընդունվող իրավական ակտերի մեջ կառավարության և վարչապետի որոշումներն օժտված են իրավաբանական բարձր ուժով և այդ մարմինների ընդունած ակտերը պետք է համապատասխանեն կառավարության ու վարչապետի որոշումներին:

Հանրապետության կառավարությունը որոշումներ է ընդունում Հանրապետության Սահմանադրության, ՀՀ միջազգային պայմանագրերի, օրենքների, Հանրապետության Նախագահի նորմատիվ իրավական ատերի հիման վրա և դրանց կատարումն ապահովելու նպատակով: Կառավարության որոշումները ենթակա են կատարման ՀՀ ամբողջ տարածքում: Որոշումն ընդունվում է բաց քվեարկությամբ և դրան վճռական ձայնի իրավունքով մասնակցում են միայն վարչապետը և ՀՀ նախարարները: Որոշումն ընդունված է համարվում, եթե դրա օգտին քվեարկել է նիստին մասնակցող կառավարության անդամների կեսից ավելին: Ձայների հավասարության դեպքում վարչապետի ձայնը վճռորոշ է:

ՀՀ կառավարության որոշումները ստորագրում է վարչապետը, սակայն միայն ՀՀ Սահմանադրության 88.1-րդ հոդվածին համապատասխան, մարզպետներ նշանակելու և ազատելու վերաբերյալ կառավարության որոշումները վարչապետը ստորագրում և ներկայացնում է Հանրապետության Նախագահի վավերացմանը:

Վարչապետի պաշտոնը թափուր մնալուց հետո կառավարության դեռևս չստորագրված որոշումների առկայության դեպքում՝ մինչև վարչապետի նշանակումը դրանք ստորագրում է փոխվարչապետը, իսկ վարչապետ նշանակվելուց հետո՝ վարչապետը: Եթե վերջինս հրաժարվում է ստորագրել կառավարության ընդունած որոշումը (բացառությամբ նորմատիվ որոշման), ապա հարցը ներկայացվում է կառավարության քննարկմանը:

Կառավարության աշխատակազմի ղեկավարի սահմանած ցանկին համապատասխան կառավարության ստորագրված որոշումներն առաքվում են պետական մարմինների աշխատակազմերին:

Կառավարության որոշումները հրապարակվում և ուժի մեջ են մտնում օրենքով սահմանված կարգով, իսկ այն որոշումները, դրանց առանձին կետերը կամ մասերը, որոնք բովանդակում են ՀՀ պետական, ծառայողական, ինչպես նաև օրենքով պահպանվող այլ գաղտնիք, հրապարակման ենթակա չեն:

Վարչապետը որոշումներ է ընդունում ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով Հանրապետության Նախագահի հրամանագրերով կարգադրություններով և կառավարության որոշումներով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում, ինչպես նաև Հանրապետության կառավարության գործունեության կազմակերպմանն առնչվող հարցերով, որոնց գործողությունը տարածվում է ՀՀ ամբողջ տարածքի վրա:

ՀՀ վարչապետը որոշում է ընդունում իր նախաձեռնությամբ կամ կառավարության անդամների առաջարկությամբ: Իր իրավասությանը ենթակա առանձին հարցերի քննարկումը, նպատակահարմարությունից ելնելով, վարչապետը կարող է կազմակերպել կառավարության նիստում: Վարչապետի ընդունած որոշումներն ստորագրում է վարչապետը, որոնք հրապարակվում և ուժի մեջ են մտնում օրենքով սահմանված կարգով:

Հանրապետության կառավարության և վարչապետի նորմատիվ

որոշումներն ուժի մեջ են մտնում դրանցում նշված ժամկետներում, եթե օրենքով այլ բան չի նախատեսված, իսկ անհատական որոշումները՝ դրանց ընդունմանը հաջորդող օրվանից, եթե այլ բան չէ նախատեսված տվյալ անհատական ակտով կամ օրենքներով: Կառավարության և վարչապետի որոշումների ընդունման, դրանց հրապարակման, ուժի մեջ մտնելու, կատարման ապահովման և այդ ոլորտի մյուս հարաբերությունները մանրամասնվում են «Իրավական ակտերի մասին» 2002 թ. ապրիլի 3-ի ՀՀ օրենքով և Հանրապետության Նախագահի վերը նշված հրամանագրով: Կառավարության և վարչապետի որոշումները հրապարակվում են «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում»:

5. ***ՀՀ կառավարությունը և օրենսդրական գործընթացը:*** Հանրապետության կառավարությունը ՀՀ Սահմանադրության 75-րդ հոդվածին համապատասխան, օրենսդրական նախաձեռնության իրավունք ունի: Ի տարբերություն ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների, ՀՀ կառավարությունն այդ իրավունքը կարող է իրականացնել միայն օրենսդրությամբ իրեն վերապահված իրավասության շրջանակում:

Օրենսդրական նախաձեռնության իրավունքի իրականացման նպատակով կառավարությունն իր նիստերում քննարկում է նաև Հանրապետության օրենքների կամ ՀՀ Ազգային ժողովի որոշումների նախագծեր և հավանության արժանանալուց հետո դրանք ներկայացնում ՀՀ Ազգային ժողով:

Հանրապետության կառավարությունն ՀՀ Ազգային ժողովի օրենսդրական գործունեությանը մասնակցում է օրենքների, դրանցում փոփոխություններ ու լրացումներ կատարելու վերաբերյալ նախագծեր ներկայացնելու, ինչպես նաև դրանց ընդունման հետ կապված այլ իրավական ակտերի նախագծեր ներկայացնելու միջոցով: Դրա հետ մեկտեղ կառավարությունը եզրակացություն է տալիս ՀՀ Ազգային ժողովից կառավարություն ուղարկված օրինագծերի վերաբերյալ:

Անհրաժեշտ է փաստել, որ ՀՀ Սահմանադրության 75-րդ հոդվածը կառավարության օրենսդրական նախաձեռնության իրավունքի իրականացման հարցում սահմանում է որոշակի ընթացակարգ: Մասնավորապես, կառավարությունը կարող է սահմանել ՀՀ Ազգային ժողով իր ներկայացրած օրինագծերի քննարկման հաջորդականությունը և պահանջել, որ դրանք քվեարկության դրվեն միայն իր համար

ընդունելի ուղղումներով, և այդ առնչությամբ կարող է դնել իր վստահության հարցը: Ի դեպ, եթե ՀՀ Ազգային ժողովը հերթական նստաշրջանի երեք ամսվա ընթացքում որոշում չի կայացնում կառավարության որոշմամբ անհետաձգելի համարվող օրենքի նախագծի վերաբերյալ, ապա Հանրապետության Նախագահը՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի կամ վարչապետի առաջարկությամբ, կարող է արձակել ՀՀ Ազգային ժողովը (74.1-րդ հոդված): Հանրապետության Նախագահը ՀՀ Ազգային ժողովն արձակում է նաև այն դեպքում, երբ ՀՀ Ազգային ժողովը երկու անգամ անընդմեջ երկու ամսվա ընթացքում հավանություն չի տալիս կառավարության ծրագրին:

Նույն նստաշրջանի ընթացքում կառավարությունն օրենքի նախագծի առնչությամբ իր վստահության հարցը կարող է դնել ոչ ավելի, քան երկու անգամ (75-րդ հոդված): Նույն սկզբունքով կառավարությունը կարող է պահանջել, որ պետական բյուջեի նախագիծն իր կողմից ընդունված ուղղումներով ՀՀ Ազգային ժողովում քվեարկության դրվի, մինչև բյուջետային տարին սկսվելը 90-օրյա ժամկետում և այդ կապակցությամբ կարող է դնել իր վստահության հարցը (90-րդ հոդված):

Կառավարության և Ազգային ժողովի փոխհարաբերությունները կարգավորվում են նաև Ազգային ժողովի կանոնակարգով:

§5. Գործադիր իշխանության հանրապետական մարմինները

Նորանկախ Հայաստանի պատմության կարճ ժամանակահատվածում բազմաթիվ փոփոխություններ են կատարվել գործադիր իշխանության հանրապետական մարմինների՝ նախարարությունների և գերատեսչությունների համակարգում, որոնք, կարծում ենք, պայմանավորված են ոչ այնքան պետական կարգավորման մեթոդների կատարելագործման գործնական նպատակներով, որքան քաղաքական-իրավական գործոններով:

Գործադիր իշխանության հանրապետական մարմինների հասկացության և որոշակիացման վերաբերյալ ինչպես մասնագիտական գրականության, այնպես էլ օրենսդրության մեջ դեռևս միասնական կարծիք չկա: Մասնավորապես, Սահմանադրության հիման վրա ըն-

դունված ՀՀ Նախագահի 2007 թ. հուլիսի 18-ի նշված հրամանագիրն ամրագրում է գործադիր իշխանության հանրապետական մարմինների համակարգը, դրանում ընդգրկելով միայն նախարարությունները և կառավարությանը ենթակա պետական կառավարման մարմինները (գերատեսչությունները) (8-րդ կետ): Մեկ այլ օրենսդրական ակտ՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» 2004 թ. դեկտեմբերի 13-ի ՀՀ օրենքը բավականին ընդլայնում է այդ մարմինների ցանկը՝ ներառելով ինչպես նախարարությունները, այնպես էլ Հանրապետության ողջ տարածքում վարչարարություն իրականացնող պետական մյուս մարմինները: Վերջիններս ընդգրկում են ոչ միայն կառավարությանը ենթակա պետական կառավարման մարմինները, այլև ՀՀ օրենքներով ստեղծված մշտապես գործող մարմինները (հանձնաժողովներ, խորհուրդներ), իսկ առանձին դեպքերում նաև՝ կառավարությունը (3-րդ հոդվածի «ա» կետ):

Հրամանագրին համապատասխան հանրապետական գործադիր մարմինները մշակում և իրականացնում են կառավարության քաղաքականությունն առանձին բնագավառներում: Դրանք, ինչպես արդեն նշվել է, ստեղծվում, վերակազմակերպվում և լուծարվում են Հանրապետության Նախագահի կողմից՝ վարչապետի առաջարկությամբ: Այդ մարմիններն իրենց գործունեությունն իրականացնում են ՀՀ օրենսդրությանը, ՀՀ միջազգային պայմանագրերին և այլ իրավական ակտերին համապատասխան ու դրանցով վերապահված լիազորությունների շրջանակներում:

Գործադիր իշխանության հանրապետական մարմինները կազմակերպական-իրավական առումով համեմատաբար ինքնուրույն են ինչպես համանման մյուս մարմինների, այնպես էլ իշխանության այլ թևերի մարմինների հետ փոխհարաբերություններում:

Հանրապետական գործադիր մարմնի կանոնադրությունը և կառուցվածքը հաստատում է կառավարությունը: Կանոնադրությամբ սահմանվում են կառավարման ոլորտները և խնդիրները, կառավարման և ղեկավարման կազմակերպումն ու ղեկավարների լիազորությունները, կառուցվածքային ստորաբաժանումների հիմնական խնդիրները, պետական գույքի տնօրինման, տիրապետման և օգտագործման կարգը, ինչպես նաև գործունեության կազմակերպման վերաբերյալ էական այլ դրույթներ:

Չնայած հանրապետական գործադիր մարմիններ են համարվում և՛ նախարարությունները, և՛ կառավարությանը ենթակա պետական կառավարման մարմինները, այնուամենայնիվ, դրանք իրենց գործունեության առանձնահատկություններից ու վերապահված լիազորությունների շրջանակներից ելնելով, համակարգային կառուցվածքով տարբերվում են իրարից[1]:

Նախարարության համակարգը կազմված է նախարարից, նրա տեղակալներից, խորհրդականներից, մամուլի քարտուղարից, օգնականներից, ռեֆերենտներից, նախարարության աշխատակազմից, տարածքային ստորաբաժանումներից, նախարարության կառավարման բնագավառում գործող պետական մարմիններից և նախարարության ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպություններից: Իր համակարգում ընդգրկված պետական մարմինների և կազմակերպությունների նկատմամբ վերադաս մարմինը նախարարությունն է:

Հանրապետության կառավարությանը ենթակա պետական կառավարման մարմնի համակարգը կազմված է տվյալ մարմնի ղեկավարից, ղեկավարի տեղակալներից, աշխատակազմից, տարածքային ստորաբաժանումներից և այդ մարմնի ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպություններից:

Ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ, ՀՀ միջազգային պայմանագրերով և այլ իրավական ակտերով, հանրապետական գործադիր մարմնի ղեկավարը գլխավորում է տվյալ մարմինը, կառավարում, համակարգում և վերահսկում է դրա համակարգում ընդգրկված պետական մարմինների և կազմակերպությունների գործունեությունը և այդ առնչությամբ կառավարության հաստատմանն է ներկայացնում տարեկան հաշվետվություններն ու տարեկան հաշվեկշիռը, իսկ անհրաժեշտության դեպքում նշված հիմնախնդիրների վերաբերյալ համապատասխան առաջարկություններ է ներկայացնում կառավարություն: Վերահսկում է իր ղեկավարած գործադիր մարմնի կողմից պետական գույքի տնօրինման, տիրապետման և օգտագործման նկատմամբ:

Հանրապետական գործադիր մարմնի ղեկավարը պատասխանա-

[1] ՀՀ ՊՏ № 24(548) 10.05.07:

տու է վերապահված խնդիրների ու գործառույթների լիազորված բնագավառներում քաղաքականության մշակման և իրականացման, տիրող իրավիճակի հեռանկարային զարգացման ապահովման համար և հաշվետու է Հանրապետության Նախագահին, կառավարությանն ու վարչապետին: Վերապահված իրավասության շրջանակներում կառավարում է հանրապետական գործադիր մարմնի աշխատակազմը, սահմանում է դրա կառուցվածքային ստորաբաժանումների իրավասության սահմանները, կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև, կարող է կազմավորել աշխատանքային խմբեր և հանձնաժողովներ:

Կառավարության հաստատմանն է ներկայացնում հանրապետական գործադիր մարմնի և դրա համակարգի մեջ մտնող պետական մարմինների և կազմակերպությունների կանոնադրություններն ու կառուցվածքները, իսկ կառավարության կամ վարչապետի հաստատմանը՝ գործադիր մարմնի համակարգի աշխատողների թիվը: Օրենսդրությամբ սահմանված կարգով ու դեպքերում պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում համակարգի աշխատողներին, շնորհում է դասային և հատուկ կոչումներ, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցներ:

Հանրապետական գործադիր մարմնի ղեկավարն իր լիազորությունների սահմաններում կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում աշխատակազմի ղեկավարի, աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումների ղեկավարների, ինչպես նաև գործադիր մարմնին ենթակա պետական ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների հրամանները, հրահանգները, հանձնարարագրերը, կարգադրությունները և ցուցումները, եթե դրանք հակասում են ՀՀ օրենսդրությանը:

Հանրապետական գործադիր մարմնի ղեկավարն իր իրավասության շրջանակներում ընդունում և օրենքով սահմանված կարգով հրապարակում է գերատեսչական իրավական ակտեր, արձակում է հրամաններ, տալիս ցուցումներ առանց լիազորագրի հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության կամ տվյալ մարմնի անունից, ինչպես նաև տալիս է դրանց անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր և իրականացնում է օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

Հանրապետական գործադիր մարմնի ղեկավարի բացակայության դեպքում, վերջինիս հանձնարարությամբ, ղեկավարի պարտականությունները կատարում է տեղակալներից մեկը, որը համակարգում է իրեն հանձնարարված բնագավառներում վերապահված քաղաքականության իրականացումը և դրա ապահովման նպատակով համակարգի պետական մարմինների և դրա կառավարման ոլորտում գործող կազմակերպությունների միջոցով իրականացնում է անհրաժեշտ աշխատանքներ: Իրեն հանձնարարված ոլորտներում համակարգի մարմիններին տալիս է ցուցումներ, հանձնարարականներ, առաջադրանքներ և վերահսկում դրանց կատարումը: Հանձնարարված բնագավառներում իրավիճակի վերաբերյալ պարբերաբար տեղեկատվություն է ներկայացնում գործադիր մարմնի ղեկավարին, ապահովում է վերջինիս հրամանների ու ցուցումների կատարման նկատմամբ վերահսկողությունը և արդյունքների մասին տեղեկացնում նրան, իրականացնում է նաև այլ լիազորություններ:

Ի տարբերություն ՀՀ կառավարությանը ենթակա պետական կառավարման մարմինների ղեկավարների, Սահմանադրությունը ՀՀ կառավարության անդամների գործունեության նկատմամբ որոշակի սահմանափակումներ է նախատեսել: Մասնավորապես, նրանք չեն կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, զբաղեցնել իրենց պարտականությունների հետ չկապված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ առևտրային կազմակերպություններում, կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից (88-րդ հոդված):

Հանրապետական գործադիր մարմնի ղեկավարի, նրա տեղակալի նկատմամբ Հանրապետության Նախագահը կամ վարչապետը կարող է կիրառել կարգապահական տույժեր (նկատողություն, խիստ նկատողություն, պաշտոնից ազատում) պաշտոնական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար, իսկ այդ պարտականությունները բարեխիղճ և օրինակելի կատարելու դեպքում՝ խրախուսանքի միջոցներ: Որպես կարգապահական տույժ՝ պաշտոնից ազատումը, կիրառում է միայն պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը՝ օրենսդրությամբ նախատեսված կարգով:

Ներկայումս Հանրապետության կառավարությանը ենթակա գործում են հետևյալ գործադիր իշխանության հանրապետական մարմինները՝ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն, Պետական եկամուտների կոմիտեն, Ազգային անվտանգության ծառայությունը, Ոստիկանությունը, Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը և Պետական գույքի կառավարման վարչությունը:

Պետական կոմիտեները՝ որպես գործադիր իշխանության հանրապետական մարմիններ, իրենց վերապահված հարցերով իրականացնում են միջճյուղային համակարգում և գործառութային կարգավորում գործունեության որոշակի ոլորտում: Պետական կոմիտեն ղեկավարում է կոմիտեի նախագահը, որին առընթեր ստեղծվում է խորհրդակցական մարմին՝ կոլեգիա: Կոմիտեի կառավարման հարցերը քննարկվում և լուծվում են կոլեգիալության և միանձնյա ղեկավարման սկզբունքների զուգակցման հիման վրա:

Ծառայությունները, վարչությունները կառավարությանը ենթակա հանրապետական գործադիր իշխանության մարմիններ են: Չնայած դրանք, ըստ էության, իրականացնում են ճյուղային բնույթի գործառույթներ, սակայն յուրահատուկ են նաև գործադիր, կարգավորող, վերահսկիչ և հատուկ այլ գործառույթներ: Ծառայությունը, վարչությունը ղեկավարում է տնօրենը (օրինակ, Ազգային անվտանգության ծառայությունը) կամ պետը:

Ի դեպ, պետական կոմիտեների, տարբեր տեսակի ծառայությունների և նախարարությունների գործունեության միջև ներկայումս էական տարբերություններ չկան, երկուսն էլ իրականացնում են նաև համակարգման բնույթի գործառույթներ աշխատանքի որոշակի ոլորտներում: Պատահական չէ, որ ինչպես ցույց է տալիս գործնական կյանքը, հաճախ նախարարությունները վերակազմակերպվում են կառավարությանը ենթակա պետական կոմիտեների, ծառայությունների և հակառակը:

Լինելով պետական կառավարչական հիմնարկ, հանրապետական գործադիր մարմնի աշխատակազմը կարևոր դեր է խաղում տվյալ մարմնի գործառույթների իրականացման ասպարեզում: Հիշյալ մարմնին օրենսդրությամբ վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը և քաղաքացիական իրավահարաբերություններին նրա մասնակցությունն ապահովում է աշ-

խատակազմը: Վերջինս կազմված է կառուցվածքային ստորաբաժանումներից (վարչություն, բաժին, քարտուղարություն), ինչպես նաև առանձնացված ստորաբաժանումներից (գործակալություն, տեսչություն): Կառավարությունը սահմանում է դրանց ներկայացվող պահանջները:

Գործակալությունը օրենքով, իսկ առանձին դեպքերում՝ նաև օրենսդրությամբ սահմանված ծառայություններ մատուցելու գործառույթներ իրականացնող պետական կառավարչական հիմնարկի առանձնացված ստորաբաժանում է:

Տեսչությունը օրենքով, իսկ առանձին դեպքերում՝ նաև օրենսդրությամբ սահմանված վերահսկողական գործառույթներ իրականացնող և պատասխանատվության միջոցներ կիրառող պետական կառավարչական հիմնարկի առանձնացված ստորաբաժանում է:

Գործակալություններն ու տեսչությունները ստեղծվում, վերակազմակերպվում և դրանց գործունեությունը դադարեցվում է կառավարության որոշմամբ: Այդ մարմինները գործում են իրենց կանոնադրություններին համաձայն, որը համապատասխան նախարարի ներկայացմամբ հաստատում է կառավարությունը: Դրանց լիազորությունները սահմանվում են օրենքներով, ՀՀ միջազգային պայմանագրերով, Հանրապետության Նախագահի հրամանագրերով ու կարգադրություններով, ինչպես նաև կառավարության որոշումներով, իսկ գործունեությունն իրականացվում է օրենսդրությանը և այլ իրավական ակտերին համապատասխան: Օրենքներով կամ այլ իրավական ատերով սահմանված դեպքերում իրավունք ունեն Հանրապետության անունից ձեռք բերելու և իրականացնելու գույքային և ոչ գույքային իրավունքներ, կրելու պարտականություններ, ինչպես նաև դատարանում հանդես գալու հայցվոր կամ պատասխանող:

Գործակալությունների նպատակներն ու խնդիրներն են իրենց ոլորտի զարգացմանն ուղղված ծրագրերի մշակումը և դրանց հիման վրա պետական քաղաքականության իրականացման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը: Աջակցում են իրենց ոլորտի զարգացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների ստեղծման և դրանց գործունեության ապահովման աշխատանքներին, նպաստում տվյալ ոլորտում միջազգային և միջպետական համաձայնագրերով ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարմանը, ինչպես նաև

ինտեգրման գործընթացների կազմակերպմանը, գործարար և ներդրումային միջավայրի բարելավմանը: Գործակալությունն իր խնդիրներն ու գործառույթներն իրականացնում է գործակալության կառուցվածքային ստորաբաժանումների, տարածքային մարմինների, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իր ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպությունների միջոցով:

Նշված նպատակների ու խնդիրների լուծման համար օրենսդրությամբ նախատեսված կարգով գործակալություններն ու տեսչությունները իրականացնում են համապատասխան գործառույթներ: Մասնավորապես, իրենց ոլորտի զարգացման հիմնական ուղղությունների վերաբերյալ նախարարին ներկայացնում են առաջարկություններ և դրանց իրականացման կառուցակարգեր, շուկայավարման ու գործունեության մեջ նորագույն սարքավորումների և տեխնոլոգիական նորամուծությունների ներդրման գործում տնտեսավարող սուբյեկտներին մասնագիտական և տեղեկատվական աջակցության ցուցաբերում: Կարգավորել ոլորտի զարգացման, արդիականացման, օտարերկրյա ներդրումների ներգրավման, արտադրանքի արտահանման և ներմուծման խնդիրները, իրականացնել ոլորտի զարգացման նպատակային, ինչպես նաև տարածաշրջանային ծրագրեր և միջոցառումներ: Իր լիազորությունների շրջանակներում աջակցել ոլորտի մասնագետների պատրաստման համար մասնագիտական կրթական ծրագրերի մշակմանն ու իրականացմանը:

Գործակալությունը և տեսչությունը կառավարում է համապատասխան նախարարը, իսկ անմիջական ղեկավարությունն իրականացնում է գործակալության, տեսչության պետը: Վերջինիս՝ որպես հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձ, պաշտոնի է նշանակվում և պաշտոնից ազատվում է նախարարի կողմից:

Գործակալության և տեսչության պետն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Սահմանադրությամբ, օրենքներով, ՀՀ միջազգային պայմանագրերով, նախարարության և գործակալության կանոնադրություններով և այլ իրավական ակտերով: Գործակալության պետը պատասխանատու է ոլորտի զարգացման բնագավառում մատուցվող ծառայությունների որակի, իսկ տեսչության պետը՝ համապատասխան ոլորտի բնագավառում վերահսկողական գործառույթների իրականացման և պատասխանատվության միջոցների կի-

րառման և դրանց՝ օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխանության համար, հաշվետու են վարչապետին, նախարարին, իսկ հանրային ծառայության վերաբերյալ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև նախարարության աշխատակազմի ղեկավարին:

Գործակալության, տեսչության պետը առաջարկություններ է ներկայացնում նախարարին գործակալության կառուցվածքի, աշխատողների թվի և խորհրդակցական մարմիններ ստեղծելու վերաբերյալ, ապահովում է նախարարի հրամանների, ցուցումների, հանձնարարականների ու առաջադրանքների կատարումը և արդյունքների, ինչպես նաև գործակալության կողմից իրականացվող աշխատանքների մասին տեղեկացնում է նախարարին: Նախարարության և գործակալության, տեսչության կանոնադրություններին համապատասխան սահմանում է գործակալության, տեսչության կառուցվածքային ստորաբաժանումների և տարածքային մարմինների իրավասությունը, լսում է դրանց գործունեության վերաբերյալ հաշվետվությունները և ստուգման արդյունքները: Սահմանում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև: Առաջարկություններ է ներկայացնում նախարարության աշխատակազմի ղեկավարին՝ գործակալության, տեսչության աշխատողների նկատմամբ խրախուսանքի կամ կարգապահական տույժի միջոցներ կիրառելու վերաբերյալ: Իր իրավասության շրջանակներում արձակում է կարգադրություններ և տալիս ցուցումներ, առանց լիազորագրի հանդես է գալիս Հանրապետության և գործակալության, տեսչության անունից, տալիս է գործակալության, տեսչության անունից հանդես գալու լիազորագրեր և վերալիազորման իրավունքով լիազորագրեր: Իր լիազորությունների սահմաններում կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում ենթակա պետական ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների հրամանները, հրահանգները, կարգադրությունները և ցուցումները, եթե դրանք հակասում են ՀՀ օրենսդրությանը: Համագործակցում են պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ և իրականացնում այլ լիազորություններ: Գործակալության, տեսչության պետի բացակայության դեպքում վերջինիս ներկայացմամբ և նախարարի հանձնարարությամբ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ նախարարի անմիջական հանձնարարաութ-

յամբ պետի պարտականությունները կատարում է նրա տեղակալներից մեկը:

Օրենսդրությամբ գործակալությանը, տեսչությանը վերապահված լիազորությունների արդյունավետ իրականացումը և քաղաքացիական իրավահարաբերություններին նրա մասնացությունն ապահովում է նախարարության աշխատակազմը:

Գործունեության առանձնահատկություններից ելնելով տեսչության հիմնական գործառույթն է օրենսդրական հսկողության և վերահսկողության համապատասխան ոլորտի իրավական ակտերի կիրառման ու պահպանման նկատմամբ: Այս առնչությամբ տեսչությունը համագործակցում է իրավապահ մարմինների, հսկողության և վերահսկողության իրավասություն ունեցող հանրապետական գործադիր մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ պետական և հասարակական կազմակերպությունների հետ, սահմանված կարգով առաջարկություններ է ներկայացնում իրավական ատերի կիրառման կատարելագործման վերաբերյալ: Բացահայտված խախտումների պատճառների առնչությամբ կատարում է վերլուծություններ և դրանց վերացման համար ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ, իսկ օրենքով նախատեսված դեպքերում կիրառում է վարչական ներգործության միջոցներ: Ստուգումների արդյունքում հանցագործության հատկանիշներ պարունակող իրավախախտումների վերաբերյալ նյութերը ներկայացնում է իրավապահ մարմիններ: Տեսչության պետը միաժամանակ համարվում է իր կողմից ղեկավարվող բնագավառի ՀՀ գլխավոր պետական տեսուչը:

§6. Տարածքային պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները

Հայաստանի Հանրապետության միասնական գործադիր համակարգի մարմինների անբաժանելի մասն են կազմում մարզպետները: Վերջիններս գործադիր իշխանության հանրապետական մարմինների և Երևանի քաղաքապետարանի, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների հետ համարվում են վարչական մարմիններ և իրականացնում են վարչարարություն (վարչական գործունեություն):

ՀՀ Սահմանադրության 88.1-րդ հոդվածին համապատասխան, մարզպետները պաշտոնի են նշանակվում և պաշտոնից ազատվում կառավարության որոշմամբ, որը վավերացնում է Հանրապետության Նախագահը: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ դա կառավարության միակ իրավական ակտն է, որ վավերացվում է ՀՀ Նախագահի կողմից:

Սահմանադրությունն ամրագրում է նաև, որ մարզերում կառավարության տարածքային քաղաքականությունն իրականացնում են մարզպետները: Վերջիններս այդ կապակցությամբ համակարգում են գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի: Մարզպետը պետական կառավարումը մարզում իրագործում է իր գլխավորած մարզպետարանի միջոցով, որն ապահովվում է մարզպետի կողմից կառավարության տարածքային քաղաքականության իրականացման և գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեության համակարգման միջոցով: Մարզպետը վերջիններիս, ինչպես նաև մարզպետարանի աշխատակազմի և տեղական ինքնակառավարման մարմինների համատեղ ու փոխհամաձայնեցված գործունեության կազմակերպման միջոցով իրականացնում է իր առջև ծառացած խնդիրներն ու գործառույթները:

Մարզպետների լիազորություններն ու գործունեության կարգը սահմանվում են ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով, Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» հրամանագրով, կառավարության և վարչապետի որոշումներով, ինչպես նաև կառավարության կողմից հաստատված մարզի կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով: Նշված հրամանագրին համապատասխան, պետական կառավարումը մարզերում իրականացվում է պետական և համայնքային շահերի ներդաշնակման, մարզպետների ու հանրապետական գործադիր մարմինների և դրանց տարածքային ծառայությունների համագործակցության ու գործողությունների փոխհամաձայնեցման հիման վրա (հրամանագրի 1.4-րդ կետ): Մարզպետարանի գործունեությունն իրականացվում է մարզպետի տեղակալի, մարզպետի նշանակած իր խորհրդականների օգնականների և մամուլի քարտուղարի, ինչպես նաև մարզպետարանի աշխատակազմի և

մարզային ենթակայության կազմակերպությունների միջոցով:

Մարզպետի տեղակալին պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում վարչապետը՝ մարզպետի առաջարկությամբ: Մարզպետի տեղակալը փոխարինում է մարզպետին նրա բացակայության ժամանակ և իրականացնում է մարզպետարանի կանոնադրությամբ իրեն վերապահված, ինչպես նաև մարզպետի հանձնարարությամբ այլ լիազորություններ: Մարզպետարանի կառուցվածքը հաստատում է կառավարությունը, իսկ աշխատակազմի թվաքանակը՝ վարչապետը:

ՀՀ Սահմանադրության 89-րդ հոդվածի համաձայն Հանրապետությունում տարածքային զարգացման պետական քաղաքականությունն իրականացնում է կառավարությունը: Մարզպետն այդ քաղաքականությունը մարզի տարածքում իրականացնում է իր իրավասության շրջանակներում հետևյալ բնագավառներում՝ ֆինանսների, քաղաքաշինության, բնակարանային և կոմունալ տնտեսության, տրանսպորտի և ճանապարհաշինության, գյուղատնտեսության և հողօգտագործման, ինչպես նաև կրթության, առողջապահության, սոցիալական ապահովության, մշակույթի, բնության և շրջակա միջավայրի և այլն (1.2-րդ կետ):

Նշված քաղաքականությունն այդ ոլորտներում մարզպետն իրականացնում է մարզպետարանի աշխատակազմի և մարզային ենթակայության կազմակերպությունների, ինչպես նաև ոստիկանության, ազգային անվտանգության ծառայության, պաշտպանության, կապի, էներգետիկայի, հարկային, արտակարգ իրավիճակների քաղաքացիական պաշտպանության և այլ բնագավառներում հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեության համակարգման միջոցով: Մարզպետն իրավասու է ոստիկանության, ազգային անվտանգության ծառայության, զինապարտների հաշվառման, զորակոչի, զորահավաքի և վարժական հավաքների կազմակերպման, ինչպես նաև այլ խնդիրների կապակցությամբ հրավիրել համապատասխան տարածքային ծառայությունների ղեկավարների խորհրդակցություն և նրանց ուշադրությունը հրավիրել ծագած խնդիրների լուծման անհրաժեշտության վրա: Մարզի տարածքում հասարակական կարգի պահպանման և ամրապնդման նպատակով մարզպետն իրավասու է ոստիկանության և ազգային անվտանգության ծառայության, ինչպես նաև արտակարգ իրավի-

ճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառի տարածքային ծառայությունների ղեկավարներին՝ հանձնարարականներ տալ և կարգադրություններ անել, իսկ կապի, էներգետիկայի ոլորտների տարածքային ղեկավարներին՝ պարտադիր կատարման համար կարգադրություններ անել (1.21-րդ, 1.22-րդ և 1.23-րդ կետեր): Նշված խնդիրների լուծման առնչությամբ մարզպետն օժանդակում է տարածքային ծառայությունների գործունեությանը և ապահովում դրանց համագործակցությունը համայնքների բնակչության հետ (1.24-րդ կետ):

Իր լիազորությունների սահմաններում մարզպետն ապահովում է օրենքների, Նախագահի, կառավարության, վարչապետի և այլ նորմատիվ իրական ակտերի կատարումը, ընդհանրացնում է օրենսդրության կիրառման պրակտիկան և դրա կատարելագործման մասին առաջարկություններ է ներկայացնում կառավարություն, խորհրդակցական ձայնի իրավունքով կարող է մասնակցել կառավարության նիստերին: Սահմանված կարգով տարածքային կառավարման նախարարի միջոցով կառավարության և վարչապետի քննարկմանն է ներկայացնում դրանց իրավասությանը վերապահված հարցերը, սահմանված կարգով առաջարկություններ է ներկայացնում կառավարություն՝ մարզում պետական կառավարման իրականացման համար պետական բյուջեից անհրաժեշտ ամենամյա հատկացումների վերաբերյալ, մասնակցում է պետական բյուջեի նախագծի, ինչպես նաև կառավարության տարածքային քաղաքականության մշակման աշխատանքներին, ամենամյա հաշվետվություններ է ներկայացնում կառավարություն՝ իր գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական վիճակի մասին, իսկ ընթացիկ հաշվետվությունները՝ վարչապետին (1.5-րդ կետ):

Մարզպետը համագործակցում է հանրապետական գործադիր մարմինների հետ և դրանց քննարկմանն է ներկայացնում վերջիններիս իրավասությանը վերաբերող մարզին առնչվող հարցեր, պարտադիր քննության է առնում դրանց կողմից մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների և դրանց ղեկավարների աշխատանքի վերաբերյալ առաջարկությունները և սահմանված ժամկետում այդ մարմիններին տեղեկացնում ձեռնարկված միջոցների մասին, սահմանված կարգով տեղեկություններ է տալիս այդ

մարմիններին իր կողմից տվյալ բնագավառում կառավարության տարածքային քաղաքականության իրականացման մասին (1.5-րդ կետ): Համապատասխան հանրապետական գործադիր մարմնի ղեկավարի կողմից մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանման գործունեությունը բարելավելու վերաբերյալ ուղարկված առաջարկությունը մարզպետը պարտավոր է քննարկել և մեկամսյա ժամկետում տեղեկացնել արդյունքների մասին (1.9-րդ կետ):

Տարածքային ծառայության ղեկավարին պաշտոնի նշանակելու և պաշտոնից ազատելու մասին համապատասխան հանրապետական գործադիր մարմնի ղեկավարը եռօրյա ժամկետում տեղեկացնում է մարզպետին: Վերջինս կարող է տվյալ մարմին առաջարկություն ներկայացնել տարածքային ծառայության գործունեության, ինչպես նաև դրա ղեկավարի զբաղեցրած պաշտոնին անհամապատասխանության մասին՝ նրա նշանակվելուց վեց ամիս հետո: Այդ առաջարկությանը համապատասխան մարմինը պարտադիր քննարկում և արդյունքների մասին մեկամսյա ժամկետում հայտնում է մարզպետին:

Հանրապետական գործադիր մարմինների և մարզպետի միջև վերը նշված հարցերով ծագած տարաձայնությունները լուծվում են վարչապետի կողմից (1.9-րդ և 1.25-րդ կետեր):

Մարզպետը քաղաքացիական ծառայության խորհրդի հաստատմանն է ներկայացնում մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը, սահմանված կարգով պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում քաղաքացիական ծառայության բարձրագույն պաշտոններում, իսկ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով՝ մարզային ենթակայության կազմակերպությունների ղեկավարներին: Մարզպետների աշխատակազմն իրականացնում է օրենսդրությամբ և մարզպետարանի կանոնադրությամբ սահմանված գործառույթներ և լիազորություններ:

Օրենսդրությամբ սահմանված կարգով մարզպետը վերահսկում է մարզի համայնքներին պատվիրակված, ինչպես նաև պարտադիր լիազորությունների կատարումը, վերացնում կամ կասեցնում է մարզային ենթակայության կազմակերպությունների՝ օրենսդրության հակասող իրավական ակտերը: Մարզպետի՝ օրենսդրությանը հակասող

որոշումները և կարգադրությունները ուժը կորցրած են ճանաչվում վարչապետի կամ դատարանի կողմից (1.6-րդ կետ):

Հանրապետության վարչապետը կամ նրա հանձնարարությամբ կառավարության աշխատակազմի ղեկավարը պարբերաբար քննության են առնում մարզպետարանի կողմից կառավարության և վարչապետի իրավական ատերի և հանձնարարականների կատարման արդյունքները, իսկ վարչապետը այդ կապակցությամբ պարբերաբար լսում է մարզպետի հաշվետվությունները (129-րդ և 130-րդ կետեր):

Մարզպետի կատարած աշխատանքները գնահատվում են կառավարության որոշմամբ սահմանված կարգով: Պաշտոնեական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու դեպքում մարզպետը կամ նրա տեղակալը կարող են ենթարկվել կարգապահական տույժի (նկատողություն, խիստ նկատողություն, պաշտոնից ազատում): Այդ տույժերից առաջին երկուսը կիրառում են Նախագահը, վարչապետը և տարածքային կառավարման նախարարը, իսկ պաշտոնից ազատումը՝ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պետական մարմինը կամ պաշտոնատար անձը (1.6.1-րդ, 1.6.3-րդ և 1.7.1-րդ կետեր):

Մարզպետարանի ու տեղական ինքնակառավարման մարմինների համաչափ գործունեությունն ապահովելու և կազմակերպական այլ հարցեր լուծելու նպատակով մարզպետին կից ստեղծվում է խորհրդակցական մարմին՝ մարզի խորհուրդ, որը կազմվում է համայնքների ղեկավարներից և մարզպետից: Խորհրդի նիստերին մարզպետը համայնքների ղեկավարներին ծանոթացնում է օրենքներին, Հանրապետության Նախագահի, կառավարության, վարչապետի և իր իրավական ակտերին ու դրանցից բխող՝ տեղական ինքնակառավարման մարմինների խնդիրներին, ծանոթանում է համայնքներում տարվող աշխատանքների ընթացքին ու ծագած խնդիրներին: Լսում է համայնքների ղեկավարների առաջարկություններն ու դիտողությունները մարզպետարանի, վերջինիս ենթակա կազմակերպությունների գործունեության մասին: Քննարկման է ներկայացնում կառավարությանը և վարչապետին ներկայացվող իր հաշվետվությունները մարզի վիճակի և իր գործունեության վերաբերյալ, իր առաջարկությունները մարզի սոցիալ-տնտեսական զարգացման տարեկան և երկարաժամկետ ծրագրերի, ինչպես նաև պետական բյուջեի նախագծի՝ մարզին վերաբերող հատվածի և պետական բյուջեից համայնքների բյուջենե-

րին կատարվող հատկացումների վերաբերյալ: Խորհրդի նիստերին կարող են մասնակցել հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների ղեկավարները և այլ անձինք:

Տարածքային կառավարման ոլորտում որոշակի առանձնահատկություններ ունի Երևան քաղաքը: Դրանք ամրագրված են «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով (26.12.08), որի համաձայն մայրաքաղաքում տարածքային կառավարումն իրականացնում է ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը, իսկ որոշ գործառույթներ կառավարության որոշմամբ կարող են փոխանցվել գործադիր իշխանության հանրապետական այլ մարմինների: Ընդ որում, օրենսդրությամբ մարզպետներին վերապահված լիազորությունները նախարարությունն իրականացնում է այնքանով, որքանով դրանք չեն հակասում Երևանի վերաբերյալ նշված օրենքին (9-րդ հոդված):

Երևանում արդյունավետ տարածքային կառավարում իրականացնելու նպատակով քաղաքապետը հարաբերությունների մեջ է մտնում ինչպես գործադիր իշխանության հանրապետական մարմինների, այնպես էլ դրանց՝ Երևանի տարածքային ծառայությունների հետ: Վերջիններիս անհրաժեշտության դեպքում ներկայացնում է առաջարկություններ և հրավիրում է դրանց ղեկավարների խորհրդակցություններ՝ Երևանին առնչվող խնդիրների վերաբերյալ: Քաղաքապետն իրավազոր է գործադիր իշխանության հանրապետական մարմինների առաջարկությամբ ներկայացնել մայրաքաղաքում դրանց տարածքային ծառայությունների գործունեության մասին:

Քաղաքապետը խորհրդակցական ձայնի իրավունքով կարող է մասնակցել կառավարության նիստերին, ավագանու ընդունած Երևանի գլխավոր հատակագծի նախագիծը ներկայացնում է կառավարության հաստատմանը, առաջարկություններ է ներկայացնում կառավարության տարեկան գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների նախագծի մշակման վերաբերյալ, քաղաքի բյուջեն կազմելու և կատարելու նպատակով կարող է կառավարության սահմանած կարգով թողարկել պարտատոմսեր և համայնքային արժեթղթեր, կազմակերպում ու ղեկավարում է պետության պատվիրակած լիազորությունների իրականացումը և այլն (նշված օրենքի 52-րդ, 55-րդ, 71-րդ, 73-րդ, 84-րդ հոդվածներ):

Իրենց վերապահված լիազորությունների սահմաններում ՀՀ վերահսկիչ պալատը և կառավարությունը վերահսկողություն են իրականացնում Երևանի բյուջեի կատարման նկատմամբ (81-րդ հոդված):

Երևանում փոխհամաձայնեցված տեղական ինքնակառավարում և տարածքային կառավարում իրականացնելու նպատակով քաղաքապետը պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում մայրաքաղաքի վարչական շրջանների ղեկավարներին, որոնք գործում են նրա անունից և քաղաքապետը պատասխանատու է նրանց գործունեության համար (նշված օրենքի 86-րդ, 89-րդ և 91-րդ հոդվածներ):

Երևանի քաղաքապետի և ավագանու լիազորությունների նկատմամբ հսկողությունն իրականացնում է ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը, նորմատիվ իրավական ակտերի իրավական հսկողությունը՝ ՀՀ արդարադատության նախարարությունը և իսկ պատվիրակված լիազորության նկատմամբ՝ մասնագիտական հսկողության համապատասխան բարձրագույն մարմինը (105-րդ հոդված):

Համայնքը պետական համակարգի ժողովրդավարական հիմքը և ուղիներից է, որի սահմաններում համայնքի բնակիչներն անմիջականորեն կամ ընտրովի մարմինների՝ համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի միջոցով իրականացնում են տեղական ինքնակառավարում:

Ընդ որում, ինչպես ընտրովի պետական մարմինների, այնպես էլ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններն անցկացվում են նույն սկզբունքներով: Համայնքի ավագանին համայնքի ներկայացուցչական մարմին է, իսկ համայնքի ղեկավարը՝ գործադիր մարմինը և պաշտոնապես ներկայացնում է համայնքն իր տարածքում ու դրանից դուրս հարաբերություններում:

Տեղական ինքնակառավարման մարմինները, չնայած Հանրապետությունում կազմում են ժողովրդավարական կառավարման համակարգ և իշխանության կազմակերպման ու իրականացման հիմնաքարերից մեկը, այսուամենայնիվ, չեն համարվում կառավարման պետական համակարգի կառուցվածքային ստորաբաժանումներ, իսկ պետական մարմինները՝ դրանց վերադասը: Այդուհանդերձ, ՀՀ Սահմանադրությունը հավասար իրավաբանական պարտականություն-

ներ է դնում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց վրա՝ նրանք իրավասու են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով (5-րդ հոդված): Դրա հետ մեկտեղ ինչպես պետական, այնպես էլ տեղական ինքնակառավարման մարմիններն իրականացնում են հանրային իշխանություն: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ տեղական ինքնակառավարման և պետական կառավարման մարմիններն իրենց գործունեության ոլորտներում օրենքի հիման վրա սերտորեն փոխհամագործակցում են: Տեղական ինքնակառավարման մարմինները, ունենալով իրենց բնորոշ լիազորությունները, մասնակցում են հասարակական հարաբերությունների պետահիրավական կարգավորմանը:

Միաժամանակ, տեղական ինքնակառավարումը միասնական իշխանության համակարգ է, որի տարրերից է համայնքային հանրային իշխանությունը: Համայնքային կազմավորումն իր հիմնական լիազորությունները ստանում է պետական իշխանության մարմնի կողմից, իսկ պահպանման հիմնական միջոցները՝ պետական բյուջեից: Հանրապետական գործադիր մարմինները և դրանց տարածքային ծառայություններն ու կառուցվածքային մյուս ստորաբաժանումները տարբեր հարցերով համագործակցում են տեղական ինքնակառավարման մարմինների հետ: Մասնավորապես, պետական լիազորված մարմինը և մարզպետարանը մեթոդական և խորհրդատվական օգնություն են ցույց տալիս համայնքային մարմիններին համայնքի բյուջեի նախագծի մշակման նախապատրաստման ընթացքում և վերահսկում են բյուջետային գործընթացը, իսկ բյուջեն պակասորդային լինելու դեպքում, պետական լիազորված մարմնի հետ համայնքի ղեկավարը մշակում է այն ծածկող վարկային պարտքն աստիճանաբար մարելու ծրագիրը («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 55-56-րդ հոդվածներ: Բացի այդ, պետական բյուջեից համայնքների բյուջեների համահարթեցման սկզբունքով հատկացվում են դոտացիաներ: Համայնքի բյուջեի կատարման սպասարկումն իրականացնում է ՀՀ ֆինանսների նախարարությունը, իսկ դրա կատարման կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը: Օրենքներով՝ համայնքների եկամուտների նվազեցումը և ծախսերի ավելացումը հատուցում է պետությունը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի (նշված օրենքի 58-

59-րդ, 66-67-րդ հոդվածներ): Համայնքի սեփականության և բյուջեի միջոցների օգտագործման նկատմամբ վերահսկողություն է իրականացնում նաև ՀՀ վերահսկիչ պալատը: Նշված գործառույթներն իրականացվում է ընդհանուր խնդիրները լուծելու համար՝ ժողովրդի միասնական հանրային իշխանության իրականացման նպատակով:

Տեղական ինքնակառավարումն առհասարակ և դրա մարմինների կարգավիճակի հիմնախնդիրները սերտորեն առնչվում են ինչպես սահմանադրական, այնպես էլ վարչական իրավունքի հետ: Եթե սահմանազատենք այդ հիմքով, ապա անհրաժեշտ է նշել, որ սահմանադրական իրավունքը կանոնակարգում է տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմնի՝ համայնքի ավագանու, իսկ վարչական իրավունքը՝ տեղական ինքնակառավարման գործադիր մարմնի (համայնքի ղեկավարի՝ քաղաքապետի, գյուղապետի) կարգավիճակի հիմնահարցերը: Այս առումով վարչական իրավունքի նորմերը կանոնակարգում են գործադիր իշխանության մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների վարչահրավական հարաբերությունները: Տեղական ինքնակառավարման մարմիններն օժտված են իրավասուբյեկտությամբ, այդ թվում՝ վարչական, և կարող են հանդես գալ ինչպես տարբեր, այնպես էլ վարչահրավական հարաբերություններում:

Կարծում ենք, պետք է համաձայնվել այն կարծիքի հետ, որ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների յուրահատկությունը բնութագրվում է առավելապես որպես պետական (օրինակ, իրավական ակտերի ընդունումը, դրանց պարտադիր լինելը համայնքի տարածքում գտնվող կազմակերպությունների համար՝ անկախ դրանց կազմակերպական-իրավական ձևից, Հանրապետության և այլ պետությունների համայնքների հետ համագործակցելու վերաբերյալ պայմանագրերն իր որոշմամբ վավերացնելը, վարչական պատասխանատվության ենթարկելը և այլն), որոնք պետականության անբաժան հատկանիշներն են[1]:

Իրականում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների՝ Սահմանադրությամբ և այլ օրենքներով սահմանված լիազորությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս,

[1] Алехин А.П. Кармолицкий А.А. Козлов Ю.М. նշված աշխ., էջ 171:

որ տեղական ինքնակառավարման մարմինների կարգավիճակի զգալի մասը պետահիրավական բնույթ ունի. օրինակ, կարող են իրականացնել համայնքային շահերին վերաբերող, օրենքին չհակասող ցանկացած գործունեություն, օրենքով կամ կառավարության սահմանած կարգով ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ կազմակերպում ու ղեկավարում են պետության պատվիրակած լիազորությունների իրականացումը, կանոնակարգում են հավաքների անցկացումը նախատեսված կարգով, ինչպես նաև գործադիր-կարգադրիչ այլ գործառույթների իրականացումը:

Տեղական ինքնակառավարման մարմինների իրավական ակտերը (ավագանու որոշումները և ուղերձները, համայնքի ղեկավարի՝ որոշումները և կարգադրությունները) երբեմն բովանդակում են քննարկման կամ կատարման պարտադիր տարրեր՝ պետական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց համար: Այսպես, համայնքային շահերին վերաբերող, բայց իր իրավասությունից դուրս գտնվող հարցերի կապակցությամբ մարզպետին կամ պետական այլ մարմիններ ուղարկած ավագանու ուղերձը սահմանված ժամկետում պարտադիր կարգով քննարկվում և արդյունքների մասին պաշտոնապես տեղեկացվում է ավագանուն («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդված):

Եթե Սահմանադրությամբ ամրագրված կարգով տեղական ինքնակառավարման մարմինները կարող են իրականացնել պետական իշխանության մարմինների լիազորություններ (105-րդ հոդված), ապա պետական մարմիններին և դրանց պաշտոնատար անձանց արգելվում է իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինների լիազորություններ, եթե այլ բան չի նախատեսված ՀՀ Սահմանադրությամբ և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով (70-րդ հոդված):

Պատվիրակված լիազորությունների իրականացման կապակցությամբ համայնքային մարմինների կողմից ընդունված իրավական ակտերը պետք է համապատասխանեն տվյալ պետական մարմնի իրավական ակտերին: Հակառակ դեպքում գործում են վերջինիս՝ իր իրավասության շրջանակներում ընդունված իրավական ակտերը, ուստի համայնքային իրավական ակտերը պետք է վերացվեն կա՛մ համայնքային մարմնի կողմից իր նախաձեռնությամբ, կա՛մ էլ համա-

պատասխան պետական մարմնի ներկայացմամբ՝ դատական կարգով: Անհրաժեշտ է նշել, որ գործնականում հանրապետական գործադիր իշխանության մարմինները դժվարությամբ են իրենց լիազորությունները զիջում տեղական ինքնակառավարման մարմիններին, պատճառաբանելով վերջիններիս թույլ կայացվածությունը, ապակենտրոնացման կառուցակարգերի ոչ պատշաճ օգտագործումը և այլ հանգամանքներ:

Պետական մարմինների պատվիրակած լիազորությունների իրականացման ձևի և բովանդակության վերաբերյալ ինչպես մարզպետը, այնպես էլ մասնագիտական հսկողության մարմիններն իրավունք ունեն համայանքի ղեկավարին կամ բոլոր համայնքների ղեկավարներին գրավոր ցուցումներ տալ (նշված օրենքի 77.5-րդ հոդված): Տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված լիազորությունները չեն կարող սահմանափակվել պետական մարմինների կողմից:

Ինչպես պետական մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց որոշումները, այնպես էլ գործողությունները, որոնք խախտում են համայնքի իրավունքները, տեղական ինքնակառավարման մարմինները կարող են բողոքարկել դատական կարգով: Նույն կարգով պետական լիազորված մարմինը և համապատասխան մարզպետը կարող են բողոքարկել համայնքի ղեկավարի և ավագանու որոշումները, գործողություններն ու անգործությունը:

ՀՀ Սահմանադրության 108.1-րդ հոդվածին համապատասխան ***տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ՝ իրականացվում է հսկողություն և վերահսկողություն:*** Այդ կապակցությամբ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը տարբերակում է վարչական հսկողության երեք տեսակ՝ ***իրավական, մասնագիտական*** և ***ֆինանսական:*** Իրավական հսկողությունը սահմանվում է համայնքի ղեկավարի և ավագանու լիազորությունների, մասնագիտականը՝ համայնքի ղեկավարի պետության պատվիրակած լիազորությունների, իսկ ֆինանսականը՝ համայնքի ավագանու և ղեկավարի կողմից իրականացվող բյուջետային կամ ֆինանսատնտեսական գործունեության իրականացման նկատմամբ:

Հանրապետության Նախագահի, ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների առնվազն մեկ հինգերորդի, կառավարության, ինչպես

նաև մարդու իրավունքների պաշտպանի՝ մարդու հիմնական իրավունքների ու ազատությունների վերաբերյալ, տեղական ինքնակառավարման մարմինների իրավական ակտերի ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության մասին դիմումով սահմանադրական դատարանն ընդունում է համապատասխան որոշում:

Տեղական ինքնակառավարման ինստիտուտի կայացման և անկախության կարևոր երաշխիքներ են ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված այն դրույթները, որոնց համապատասխան համայնքի ղեկավարը կարող է պաշտոնանկ արվել կառավարության դիմումի հիման վրա՝ միայն սահմանադրական դատարանի եզրակացությամբ (նշված օրենքի 100-րդ հոդվածի 8-րդ կետ և 109-րդ հոդված): Նույն օրենքի 72-րդ և 73-րդ հոդվածներն անդրադարձել են մարզպետի ներկայացմամբ կառավարության որոշման հիման վրա համայնքի ղեկավարի պաշտոնանկմանը: Տեղական ինքնակառավարման մարմինները կարող են դիմել սահմանադրական դատարան՝ իրենց սահմանադրական իրավունքները խախտող պետական մարմինների նորմատիվ ակտերի Սահմանդրությանը համապատասխանության հարցերով (նշված օրենքի 101-րդ հոդվածի 5-րդ կետ):

Պետական, հատկապես, գործադիր իշխանության մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերություններն իրավական հիմքեր են ստեղծում հանրային ծառայության երկու բաղադրամասերի՝ պետական ծառայության և համայնքային ծառայության, գործառութային կապերի և այլ հարցերի լուծման համար:

Համայնքային ծառայության հարաբերությունների օրենսդրական կարգավորման նպատակով 2004թ. դեկտեմբերի 14-ին ընդունվեց «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքը, իսկ 2006թ. դրանից բխող շուրջ 15 իրավական ատեր ընդունվեցին կառավարության և տարածքային կառավարման նախարարության կողմից: Օրենքին համապատասխան համայնքային ծառայության ղեկավարման և կազմակերպման մարմին է հանդիսանում կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը՝ տարածքային կառավարման նախարարությունը, որի աշխատակազմում, որպես կառուցվածքային ստորաբաժանում, գործում է համայնքային ծառայության հարցերի վարչությունը:

§7. Հանրային վարչարարություն իրականացնող մյուս մարմինները

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն, Հանրապետությունում վարչարարություն են իրականացնում և վարչական մարմիններ են համարվում գործադիր իշխանության հանրապետական և տարածքային կառավարման, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինները: Սակայն, օրենքը միաժամանակ սահմանում է, որ եթե նշված մարմիններից բացի վարչարարություն (վարչական գործունեություն) են իրականացնում պետական այլ մարմիններ, ապա սույն օրենքի իմաստով դրանք նույնպես համարվում են վարչական մարմիններ: Օրենքի բավականին ընդարձակ, ոչ սպառիչ հասկացությունները տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք կարող են տալ: Ընդ որում, օրենքում նշված պետական այլ մարմինների գործունեությունը պետք է ունենա արտաքին ներգործություն և եզրափակվի վարչական կամ նորմատիվ ակտի ընդունմամբ, կամ էլ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց համար ունենա փաստական հետևանքներ:

Պետք է ենթադրել, որ «պետական այլ մարմիններ» հասկացությունը հիմնականում ընդգրկում է այն կազմավորումների ցանկը, որոնք ունեն պետական մարմնին յուրահատուկ լիազորություններ և իրականացնում են վարչարարություն, օրինակ՝ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը, Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը և այլն: Միաժամանակ, այդ ցանկում կարող են ներառվել դատախազությունը, դատարանները, վերահսկիչ պալատը և այլն: Կանգ կառնենք դրանցից մի քանիսի վրա:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը հանրային ծառայությունների ոլորտում կարգավորումն իրականացնող կոլեգիալ մարմին է: Կարգավորումը, լինելով պետական քաղաքականության մի մասը, նպատակ ունի հավասարակշռել սպառողների և հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերը, վերջիններիս համար

ստեղծել գործունեության միատեսակ պայմաններ, նպաստել մրցակցային շուկաների ձևավորմանն ու զարգացմանը և խթանել ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը: Հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտն ընդգրկում է էներգետիկայի, հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) բնագավառները և ջրային համակարգը: Կարգավորման ոլորտում ծագող հարաբերությունները կարգավորվում է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքով (25.12.03), ինչպես նաև ճյուղային օրենքներով՝ ՀՀ ջրային օրենսգրքով, «Էներգետիկայի մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» և այլ օրենքներով:

Հանձնաժողովը կարգավորումն իրականացնում է որպես ինքնուրույն պետական մարմին՝ օրենքներով լիազորված իրավասության շրջանակում և իր որոշումներն ընդունում է կոլեգիալության սկզբունքով: Հանձնաժողովը կազմված է նախագահից, նրա տեղակալից և երեք անդամից, որոնց պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում Նախագահը՝ վարչապետի ներկայացմամբ: Հանձնաժողովի անդամները նշանակվում են տարեկան ռոտացիոն սկզբունքով՝ յուրաքանչյուր տարի հանձնաժողովի մեկ անդամի նշանակմամբ: Հանձնաժողովի անդամներին ներկայացվող պահանջները նախատեսված են սույն օրենքի 7-րդ հոդվածով:

Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է աշխատակազմի միջոցով, որի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը համաձայնեցնում է վարչապետի հետ, իսկ ծառայողական պարտականությունները հաստատում է հանձնաժողովը:

Հանձնաժողովի նախագահն իր իրավասության շրջանակներում ներկայացնում է հանձնաժողովը ՀՀ-ում, այլ պետություններում, միջազգային կազմակերպություններում, մասնակցում է կառավարության տնտեսական և ֆինանսական ծրագրերի մշակմանը, յուրաքանչյուր տարի ՀՀ Ազգային ժողով է ներկայացնում հաջորդ տարվա իր գործունեության ծրագիրը:

ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով): «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքը (06.11.00) նպատակ ունի պաշտպանել և խրախուսել ազատ տնտեսական մրցակցությու-

նը, ապահովել բարեխիղճ մրցակցության համար պատշաճ միջավայր, նպաստել ձեռնարկատիրության զարգացմանը և սպառողների շահերի պաշտպանությանը Հանրապետությունում: Տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտում պետական քաղաքականությունն իրականացնելու նպատակով հիշյալ օրենքին համապատասխան ստեղծվել է նշված հանձնաժողովը, որը գործում է այդ օրենքի, այլ իրավական ակտերի և իր կանոնադրության հիման վրա և ինքնուրույն է իր իրավասության շրջանակներում:

Իր խնդիրներն ու գործառույթներն իրականացնելու համար Հանձնաժողովը պաշտպանում և խրախուսում է տնտեսական մրցակցությունը և դրա պաշտպանության նկատմամբ կազմակերպում է վերահսկողություն, քննարկում է այդ օրենսդրության խախտման դեպքերը և ընդունում է որոշումներ, մասնակցում է պետական քաղաքականությունը կարգավորող իրավական ակտերի մշակմանը, իր իրավասության շրջանակներում մասնակցում է միջպետական համաձայնագրերի կնքմանը, համագործակցում է օտարերկրյա պետությունների պետական մարմինների և ոչ կառավարական կազմակերպությունների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հետ, մշակում և իրականացնում է բնագավառի օրենսդրության խախտումները կանխող միջոցառումներ և այլն (նշված օրենքի 18-րդ հոդված):

Հանձնաժողովն այլ լիազորությունների հետ միասին իրավունք ունի ընդունելու որոշումներ, վարչական վարույթ հարուցելու կամ իրականացնելու կապակցությամբ հետազոտություն, ստուգում, ուսումնասիրություն կատարելու, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից ընդունված ակտերի՝ տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենսդրությանը հակասելու դեպքում, դիմելու կառավարությանը՝ պետական մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց՝ օրենքին հակասող գործողությունները դադարեցնելու միջնորդությամբ, նշանակել տուգանքներ, կիրառելու օրենքով նախատեսված պատասխանատվության այլ միջոցներ և այլն (նույն օրենքի 19-րդ հոդված):

Հանձնաժողովն իր խնդիրներն ու գործառույթներն իրականաց-

նելիս անկախ է պետական այլ մարմիններից: Այն բաղկացած է յոթ անդամից՝ Հանձնաժողովի նախագահ, նախագահի տեղակալ և հինգ անդամ: Հանձնաժողովի անդամներին հինգ տարի ժամկետով նշանակում է Հանրապետության Նախագահը: Օրենքը մի շարք պահանջներ է ներկայացնում Հանձնաժողովի անդամներին (20-21-րդ հոդվածներ): Հանձնաժողովի նախագահը Հանձնաժողովը սահմանված կարգով ներկայացնում է ՀՀ-ում, այլ պետություններում և միջազգային կազմակերպություններում, խորհրդակցական ձայնի իրավունքով կարող է մասնակցել կառավարության նիստերին, կազմակերպում է Հանձնաժողովի որոշումների կատարումը և այլն (23-րդ հոդված):

Նախատեսված գործառույթները կատարելու համար Հանձնաժողովի պահանջով, պետական և տեղական ինքնակառավարման մարմինները (պաշտոնատար անձինք) պարտավոր են ներկայացնել փաստաթղթեր և այլ տեղեկատվություն:

Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով, և դրանք իրավազոր են, եթե 7 անդամներից մասնակցում են առնվազն 5-ը: Նիստերը գումարվում են որոշակի պարբերականությամբ կամ ըստ անհրաժեշտության: Ձայների հավասարության դեպքում Հանձնաժողովի նախագահի կամ նրան փոխարինող անձի ձայնը վճռորոշ է: Քվեարկությունից ձեռնպահ մնալը չի թույլատրվում:

Տնտեսական մրցակցության վերաբերյալ օրենքը խախտելու դեպքում տնտեսավարող սուբյեկտները, պետական և տեղական ինքնակառավարման մարմինները (պաշտոնատար անձինք) պատասխանատվություն են կրում նշված օրենքով և օրենսդրությամբ սահմանված կարգով: Ի դեպ, նշված օրենքը սահմանում է խիստ բարձր տուգանքի չափեր:

Հանձնաժողովը յուրաքանչյուր տարի Ազգային ժողովում հրապարակում է հաջորդ տարվա իր գործունեության տարեկան ծրագիրը, ինչպես նաև նախորդ տարվա իր գործունեության հաշվետվությունը:

Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) «Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի (28.12.01) համաձայն,

կարգավորող անկախ մարմին է և ապահովում է լրատվամիջոցների ազատությունը, անկախությունը և բազմազանությունը: Օրենսդրությամբ նախատեսված կարգով լիցենզավորում ու վերահսկում է հեռուստառադիոընկերությունների գործունեությունը: Գործում է ինքնուրույնության, կոլեգիալության և հրապարակայնության սկզբունքներով, կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող: Հանձնաժողովն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և ֆինանսավորվում է ՀՀ պետական բյուջեի միջոցներից:

Հանձնաժողովը կազմված է 8 անդամից, որից կեսին վեց տարի ժամկետով նշանակում է Հանրապետության Նախագահը, իսկ մյուս կեսին՝ ընտրում է ՀՀ Ազգային ժողովը: Նույն անձը չի կարող, ավելի քան երկու անգամ անընդմեջ, ընդգրկվել Հանձնաժողովի կազմում: Հանձնաժողովը բաց քվեարկությամբ իր կազմից ընտրում է նախագահ և նախագահի տեղակալ: Բացառությամբ վերջիններիս, հանձնաժողովի մյուս անդամները գործում են հասարակական հիմունքներով, սակայն իրենց գործունեության համար սահմանված կարգով ստանում են ամսական դրամական փոխհատուցում: Հանձնաժողովի նախագահի, նախագահի տեղակալի և անդամների կարգավիճակը նախատեսված է նշված օրենքի 9-19-րդ հոդվածներով:

Օրենսդրությամբ նախատեսված կարգով սահմանում և իրականացնում է հեռուստառադիոընկերությունների գործունեության լիցենզավորման և վերահսկողության քաղաքականությունը, ՀՀ-ն ներկայացնում է այլ պետություններում և միջազգային կազմակերպություններում և կարող է համագործակցել համապատասխան կառույցների հետ:

Իր լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվություն է պահանջում և ստանում իրավասու մարմիններից, կազմակերպություններից և պաշտոնատար անձանցից: Հաճախականությունների և հեռարձակման հատկացման հարցը նախապես քննարկում է կառավարության հետ, սահմանում է հեռարձակման լիցենզավորման մրցույթի անցկացման կարգը և պայմանները, հատկացնում է լիցենզիաներ, ընդունում է նորմատիվ իրավական ակտեր:

Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է նիստերի (այդ թվում արտագնա նիստերի) և աշխատանքային քննարկումների միջոցով: Նիստն իրավազոր է, եթե այն վարում է Հանձնաժողովի նախագահը կամ նրա հանձնարարությամբ՝ նախագահի տեղակալը, և եթե դրան ներկա է Հանձնաժողովի անդամների կեսից ավելին: Որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ, իսկ ձայների հավասարության դեպքում՝ Հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

Հեռուստատեսության և ռադիոյի վերաբերյալ ՀՀ օրենսդրության, ինչպես նաև լիցենզիայի պայմանների ու պահանջների խախտման համար հեռուստառադիոընկերությունները Հանձնաժողովի կողմից ենթարկվում են հետևյալ վարչական տույժերի՝ նախազգուշացում, տուգանք, լիցենզիայի գործողության կասեցում և լիցենզիայի գործողության դադարեցում:

Նախազգուշացումն արվում է իրավախախտումը հայտնաբերելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, նույն ժամանակահատվածում կիրառվում է նաև տուգանքը, իսկ շարունակվող կամ տևող իրավախախտումների համար՝ դարձյալ նույն ժամկետում: Ընդ որում, տուգանքը կիրառվում է ՀՀ-ում սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով, ելնելով իրավախախտման բնույթից (73-89-րդ հոդվածներ): Լիցենզիայի գործողության կասեցումը կիրառվում է հեռուստառադիոընկերության կամ հաղորդաշարի գործողությունը ժամանակավորապես արգելելու (90-91-րդ հոդվածներ), իսկ լիցենզիայի գործողության դադարեցումը՝ լիցենզիայի ուժը կորցրած ճանաչելու միջոցով (92-93-րդ հոդվածներ):

Հանձնաժողովը յուրաքանչյուր տարի իր գործունեության մասին հաղորդում է ներկայացնում ՀՀ Ազգային ժողով և հրապարակում մամուլում:

Հանրային վարչական գործունեություն իրականացնող մարմինների ստեղծումը և գործունեությունը Հանրապետությունում կարևոր նշանակություն ունի պետության և հանրային ծառայություններ մատուցող մարմինների փոխհարաբերություններում՝ առաջնությունը տալով հանրային ծառայություններ մատուցող կազմավորումներին:

Ունենալով պետական կառավարման մարմնին առանձնահատուկ լիազորություններ, նրանք նպաստում են հասարակության բնականոն գործունեությանը, ինչպես նաև սոցիալական պետության պատշաճ հիմքերի ստեղծմանը:

Հիմնականում, լինելով պետության քաղաքական բաղադրամասը, հանրային ծառայությունները մատուցվում են պետական կառավարման շրջանակներում և նպատակ ունեն հավասար պայմաններ ստեղծել սպառողների և կարգավորող անձանց, ինչպես նաև մրցակցային շուկաների և ձեռնարկատիրության զարգացման ու բնակչության կենսամակարդակի բարձրացման ապահովման համար:

ԳԼՈՒԽ 7.
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐ

§1. Հանրային ծառայության հասկացությունը, կառուցվածքը և տեսակները

«Հանրային ծառայության մասին» (26.05.11) ՀՀ օրենքը (այսուհետ սույն գլխում՝ Օրենք) նոր հիմնադրույթներ է սահմանում հանրային-ծառայողական հարաբերություններում՝ նորովի մեկնաբանելով հանրային ծառայության հասկացության բովանդակությունը:

Նկատի ունենալով հանրային (պետական և համայնքային) ծառայությունների անմիջական փոխկապակցվածությունը և դրանց ծառայողներին ներկայացվող հիմնական պահանջների միասնականությունը, ինչպես նաև մինչև օրենքի ընդունումը Հանրապետության օրենսդրության մեջ դրանց հասկացությունների ոչ հստակ ամրագրումը, Օրենքը անհրաժեշտ է համարել տրամաբանական-իմացաբանական առումով ավելի հստակ շարադրել այդ ծառայությունների օրենսդրական սահմանումները և էությունը: Ի դեպ, Հանրապետության օրենսդրական և մյուս իրավական ակտերում ու գործնական կյանքում մինչ «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի (04.12.01) ընդունումը, հազվադեպ է օգտագործվել «հանրային ծառայություն» և «հանրային ծառայողներ» հասկացությունները, միաժամանակ լայն շրջանառության մեջ է դրվել «պետական ծառայություն» և «պետական ծառայող» հասկացությունները: Հիշատակված հիմնահարցերը, անշուշտ, սկզբունքային նշանակություն ունեն հանրային ծառայության կազմավորման ու կատարելագործման և հանրային մարմինների ապարատը մասնագետ և ունակ կադրերով ապահովելու համար: Ընդ որում, վերոհիշյալ ծառայությունների ցանկում հանրային ծառայությունն ավելի լայն հասկացություն է, ընդգրկելով և՛ պետական ծառայության ամբողջ համակարգը, և՛ համայնքային ծառայությունը:

Հանրային ծառայությունը, օրենքի 1-ին հոդվածին համապատասխան, պետությանը ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացումն է, որն ընդգրկում է

պետական ծառայությունը, համայնքային ծառայությունը և պետական ու համայնքային պաշտոնները:

Հանրային ծառայությունը, ընդգրկելով երկու հավասարազոր իրավական ինստիտուտներ՝ պետական ծառայությունը և համայնքային ծառայությունը, բնականաբար, չի կարող տարբերակել դրանց հասկացությունները: Ինչպես հանրային ծառայությունը, այնպես էլ համայնքային ծառայությունն իրենց բովանդակությամբ ու գործառութային բնույթով համընկնում են: Մասնավորապես, Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերի համաձայն, պետական ծառայությունը (համայնքային ծառայությունը) մասնագիտական գործունեություն է, որն ուղղված է ՀՀ օրենսդրությամբ պետական մարմիններին (տեղական ինքնակառավարման մարմիններին) վերապահված խնդիրների և գործառույթների իրականացմանը: Մինչդեռ, «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի (14.12.04թ.) 3-րդ հոդվածով սահմանված համայնքային ծառայություն հասկացությունը բովանդակությամբ էապես տարբերվում է հանրային ծառայության վերաբերյալ օրենքով ամրագրված հասկացությունից. համայնքային ծառայությունը՝ քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխությունից կամ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքներից անկախ մասնագիտական գործունեություն է, որը կատարվում է համայնքների ղեկավարների աշխատակազմերում՝ (Երևանում՝ Երևանի քաղաքապետարանի (աշխատակազմում) ՀՀ օրենքներով այդ մարմիններին վերապահված խնդիրների ու գործառույթների իրականացման նպատակով:

Համայնքային ծառայության բնորոշումից, ըստ էության, չի տարբերվում «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված քաղաքացիական ծառայություն հասկացությունը. այն քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխությունից անկախ մասնագիտական գործունեություն է, որը կատարվում է գործադիր գործառույթներ իրականացնող մարմիններում՝ ՀՀ օրենսդրությամբ այդ մարմիններին վերապահված խնդիրների և գործառույթների իրականացման նպատակով: Այսուամենայնիվ, պետական ծառայությունը, որպես սոցիալ-իրավական համալիր ինստիտուտ, ի տարբերություն համայնքային ծառայության, ավելի ընդգրկուն բնույթ ունի և ներառում է քաղաքացիական, դատական, դիվա-

նագիտական ծառայությունները, ինչպես նաև հատուկ ծառայությունները՝ պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության, հարկային, մաքսային, փրկարար ծառայության հանրապետական գործադիր մարմիններում, Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայությունը, Ազգային անվտանգության խորհրդում, այդ թվում նաև օրենքներով նախատեսված այլ ծառայություններ:

Պետական ծառայության հիմնահարցը տեսական և գործնական կարևոր նշանակություն ունի, սակայն բավականին երկար ժամանակ օրենսդրորեն չի սահմանվել դրա հասկացության ստույգ բնորոշումը: Այդ առնչությամբ իրավաբանական գրականության մեջ դրան տրվել է բազմանշանակ մեկնաբանություններ, ելնելով գերատեսչական տարբեր իրավական ակտերից:

Փաստենք, որ պետական ծառայությունն անմիջականորեն կապված է պետության գործունեության հետ և, ըստ էության, արտահայտում է պետության ողջ կազմակերպական աշխատանքը: Այս կապակցությամբ պետական կառուցակարգերի ստեղծման և բնականոն գործունեության համար կարևոր նշանակություն ունի պետական ծառայության կազմակերպումը:

Տարբեր երկրների երկարամյա փորձը վկայում է, որ ելնելով պետության կառավարման կատարելագործման պահանջներից, լուրջ ուշադրություն է դարձվել պետական ծառայության կազմակերպմանը և բարեփոխմանը: Ներկայումս Հանրապետությունում իրականացվող քաղաքական ու տնտեսական բարեփոխումները պահանջում են բարեփոխել նաև պետականության անբաժանելի բաղադրամասը կազմող պետական ծառայությունը, որպեսզի պետական ապարատն ի զորու լինի կատարել իր գործառույթներն արդի պայմաններում:

Պետական ծառայության դերի ու նշանակության բարձրացումն ունի օբյեկտիվ կարևորություն, քանի որ դրան զուգահեռ կատարելագործվում և զարգանում է պետական ծառայության օրգանական մասը կազմող տարբեր ծառայությունների վերաբերյալ օրենսդրությունը, որի հենքի վրա ձևավորվում և գործում է Հանրապետության հանրային ծառայությունը: Արդի պայմաններում պետական ծառայությունը կազմակերպվում և իրականացվում է, նկատի ունենալով պետական գործունեության ոլորտի բազմազանությունը և առանձնահատկությունները:

Հանրապետությունում հանրային ծառայության հարցերը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի բովանդակությունը պայմանավորված է հանրային-ծառայողական հարաբերությունների առանձնահատկություններով: Ինչպես արդեն նշվել է, հանրային ծառայությունն ընդգրկում է օրենքներով նախատեսված պետական և համայնքային ծառայությունները: Դրանցից ամեն մեկն ունի յուրահատուկ գործառույթներ և իրականացման վարչահիրավական ձևեր ու մեթոդներ:

Հանրային ծառայության վերաբերյալ օրենսդրությունը կազմված է Սահմանադրությունից, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքից, ՀՀ միջազգային պայմանագրերից, պետական և համայնքային ծառայությունների վերաբերյալ մյուս օրենքներից, ինչպես նաև բազմաթիվ այլ նորմատիվ իրավական ակտերից:

ՀՀ Սահմանադրությունն սկզբունքային կարևոր դերակատարություն ունի հանրային ծառայության իրավական կարգավորման բնագավառում: Սահմանադրության 30.2-րդ հոդվածին համապատասխան, քաղաքացիներն օրենքով սահմանված ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության ընդունվելու իրավունք ունեն և դրա սկզբունքներն ու կազմակերպման կարգը սահմանվում են օրենքով:

Հանրային-ծառայողական հարաբերությունները կանոնակարգվում են միջազգային մի շարք փաստաթղթերով, այդ թվում՝ «Աշխատանքի և զբաղվածության բնագավառում խտրականության մասին» 1958 թ. հունիսի 25-ի, «Պետական ծառայության բնագավառում աշխատանքային հարաբերությունների մասին» 1978 թ. հունիսի 27-ի Ժնևի կոնվենցիաներով, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» 1966 թ. դեկտեմբերի 16-ի միջազգային պակտով, «Եվրոպայում հանրային ծառայությունների կարգավիճակի մասին» R(2000)6 Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի հանձնարարականով, «Կոռուպցիայի դեմ պայքարի մասին» ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 2003 թ. հոկտեմբերի 31-ի 54/4 որոշմամբ և միջազգային այլ իրավական ակտերով:

Օրենքը նպատակաուղղված է ոչ միայն միասնական համապետական հանրային ծառայության իրավական հիմքի ստեղծմանը, այլև հանրային ծառայողների պարտականությունների անխափան

կատարման երաշխավորվածության բարձրացմանը և նրանց իրավական ու սոցիալական պաշտպանվածության ապահովմանը: Բացի սույն օրենքը, Հանրապետությունում գործում են, ինչպես արդեն նշվեց, պետական ծառայության առանձնահատկությունները կարգավորող բազմաթիվ այլ օրենքներ:

Ծառայության հարցերին անդրադարձել են ***ՀՀ Նախագահը*** (օրինակ, «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքից բխող առաջնահերթ միջոցառումների մասին» 2002թ. փետրվարի 4-ի թիվ ՆԿ-1045 կարգադրությունը), ***ՀՀ կառավարության*** 2006թ. հուլիսի 13-ի «Համայնքային ծառայողի նկատմամբ ծառայողական քննություն անցկացնելու կարգը հաստատելու մասին» թիվ 1003-Ն որոշումը, 2011թ. դեկտեմբերի 15-ի «Հանրային ծառայության պաշտոնի նշանակելու դեպքում լիազորությունների իրականացմանը խոչընդոտող հիվանդությունների ցանկը հաստատելու մասին» թիվ 1801-Ն որոշումը, ***ՀՀ վարչապետի*** 1999թ. սեպտեմբերի 3-ի «ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների առաջնահերթ միջոցառումների մասին» թիվ 544 որոշումը, ինչպես նաև ***ՀՀ տարածքային կառավարման նախարարության*** 2006թ. սեպտեմբերի 11-ի «Համայնքային ծառայողի ատեստավորման կարգը սահմանելու մասին» թիվ 15-Ն հրամանը, ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի 2002թ. մայիսի 31-ի «Քաղաքացիական ծառայողի էթիկայի կանոնները հաստատելու մասին» թիվ 13-Ն որոշումը և այլ իրավական ակտեր:

Հանրային ծառայության վերաբերյալ առանձին հարցեր կարգավորվում են նաև այլ օրենքներով, օրինակ, «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենքը (03.07.02): ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ են սահմանվում հանրային ծառայողների աշխատանքային հարաբերությունները, եթե համապատասխան ծառայության վերաբերյալ օրենսդրությամբ այդ հարաբերությունները կարգավորող առանձնահատկություններ նախատեսված չեն:

Չնայած հանրային ծառայության համակարգում ներառված ծառայությունները կարգավորվում են ՀՀ տարբեր օրենքներով, այնուամենայնիվ, դրանք հիմնականում համանման իրավական վիճակ են սահմանում հանրային համապատասխան մարմինների ծառայողների համար: Այդ օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված

հանրային ծառայողների կարգավիճակը՝ պարտականությունները, իրավունքները և երաշխիքները, խրախուսումը, պատասխանատվությունը և դրանց հետ առնչվող այլ հարցեր, կազմում են հանրային ծառայության իրավական ինստիտուտը: Սակայն վերջինս ունի բավականին բարդ ու համալիր բնույթ, քանի որ այն, բացի վարչական իրավունքի նորմերից, կարգավորում է նաև իրավական համակարգի մյուս ճյուղերի՝ սահմանադրական, աշխատանքային, քաղաքացիական և այլն իրավական նորմերով: Այս կապակցությամբ հանրային ծառայությունը հանդիսանում է սոցիալ-իրավական համալիր ինստիտուտ:

Հանրապետության հանրային ծառայության համակարգում ներառված ծառայությունների տեսակները կարգավորող վարչական իրավունքի նորմերը կազմում են այդ համալիր ինստիտուտի բաղադրամասը և հանդիսանում են վարչական իրավունքի ինքնուրույն ինստիտուտ: Բնականաբար, վարչական իրավունքը, որպես կանոն, սահմանում է հանրային կառավարման ոլորտի ծառայողների՝ իբրև հանրային-ծառայողական իրավահարաբերության կողմերից մեկի, վարչաիրավական կարգավիճակը: Այս առումով հանրային-ծառայողական հարաբերությունները վարչաիրավական հարաբերության տարատեսակ են և կարգավորվում են վարչական իրավունքի նորմերով:

Հանրային ծառայության հետ առնչվող առանձնահատկությունները կարգավորող օրենքները և մյուս իրավական ակտերը, կարծում ենք, լուրջ խոչընդոտներ կստեղծեն անձեռնհաս, անբարեխիղճ ծառայողների համար, կնպաստեն կոռուպցիայի, չարաշահումների և բյուրոկրատիզմի դեմ արդյունավետ պայքարի իրավական հիմքերի ստեղծմանն ու կենսագործմանը, ինչպես նաև ըստ մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների ծառայողների ընտրությանը, նրանց նկատմամբ պահանջկոտության բարձրացմանը և ծառայողների սոցիալական ու իրավական պաշտպանվածության ապահովմանը:

Հանրապետության օրենսդրությանը բովանդակային առումով հանրային ծառայող հասկացության վերաբերյալ տարամետ կարծիքների տեղիք է տալիս: Հանրային ծառայության վերաբերյալ Օրենքի համաձայն, հանրային ծառայողը պետական և համայնքային ծառա-

յության պաշտոնների անվանացանկով նախատեսված որևէ պաշտոն զբաղեցնող կամ օրենքով սահմանված դեպքերում և կարգով հանրային ծառայության համապատասխան կադրերի ռեզերվում գտնվող անձն է (5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ): Հետևաբար, հանրային ծառայող է համարվում այն անձը, որը պաշտոն է զբաղեցնում սահմանված կարգով կամ գտնվում է օրենքով նախատեսված հանրային ծառայության համապատասխան կադրերի ռեզերվում: Կադրերի ռեզերվի վերաբերյալ նման ձևակերպումը պայմանավորված է նրանով, որ հանրային ծառայությունների մասին առանձին օրենքներ կադրերի ռեզերվում գտնվող անձանց իրավական կարգավիճակը չեն հավասարեցնում պաշտոն զբաղեցնող անձանց իրավական կարգավիճակին: Օրինակ, համայնքային ծառայության վերաբերյալ օրենքը համայնքային ծառայող է համարում այն անձին, ով համայնքի ղեկավարի աշխատակազմում համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված որևէ պաշտոն է զբաղեցնում (բացառությամբ ժամանակավոր թափուր պաշտոնի (3-րդ հոդվածի «դ» կետ), իսկ «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքը, կրկնելով համայնքային ծառայության վերաբերյալ տվյալ հասկացությունը, ավելացնում է նաև քաղաքացիական ծառայության կադրերի կարճաժամկետ ռեզերվում գտնվող անձին, անտեսելով նույն ռեզերվում երկարաժամկետ գտնվող անձին (3-րդ հոդվածի «դ» կետ):

§2. Հանրային ծառայողների վարչաիրավական կարգավիճակը և դրա իրավական հիմքերը

Հանրային ծառայողները, Հանրապետության մյուս քաղաքացիներին համահավասար, ունենալով համաքաղաքացիական իրավունքներ ու պարտականություններ, միաժամանակ օժտվում են հատուկ պարտականություններով և իրավունքներով՝ մտնելով հանրային-ծառայողական հարաբերությունների մեջ:

Հանրային ծառայողների վարչաիրավական կարգավիճակը, որպես կանոն, սահմանվում է համապատասխան մարմնի լիազորությունների շրջանակներում՝ հանրային ծառայության տվյալ պաշտո-

նին համապատասխան, ինչպես նաև ընդհանուր պարտականություններ և իրավունքներ հանրային բոլոր ծառայողների համար, որոնք նախատեսված են հանրային ծառայությունների վերաբերյալ օրենքներով և այլ իրավական ակտերով:

Զբաղեցնելով հանրային ծառայության պաշտոն, քաղաքացին դրանով իսկ քաղաքական-իրավական կապի մեջ է մտնում պետության հետ՝ ստանձնելով այդ հարաբերություններից բխող փոխադարձ իրավունքներ ու պարտականություններ:

Պետության գործառույթների կենսագործման ու խնդիրների լուծման ոլորտում հանրային ծառայողների պատշաճ արհեստավարժ (պրոֆեսիոնալ) գործունեությունը մեծապես կախված է նրանց իրավական կարգավիճակից:

Օրենքի 20-րդ հոդվածին համապատասխան, հանրային ծառայողի հիմնական իրավունքներն են՝

1) զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին ծանոթանալը,

2) իր անձնական գործի նյութերին, իր գործունեության գնահատականներին և ծառայողական գործունեության վերաբերյալ այլ փաստաթղթերին ծանոթանալը և բացատրություններ տալը,

3) ծառայողական պարտականությունների կատարման համար սահմանված կարգով անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր ստանալը,

4) սահմանված կարգով որոշումներ ընդունելը,

5) աշխատանքի համար համարժեք վարձատրություն ստանալը,

6) իր խախտված իրավունքները սահմանված կարգով բողոքարկելը,

7) աշխատանքի, առողջության պաշտպանության, անվտանգ և անհրաժեշտ աշխատանքային պայմանների ապահովվածությունը,

8) սոցիալական պաշտպանությունը և ապահովությունը,

9) իրավական պաշտպանությունը, այդ թվում քաղաքական հետապնդումներից:

Անհրաժեշտ է նշել, որ պետական ծառայության համակարգում ընդգրկված տարբեր ծառայողների հիմնական իրավունքները, որոնք սահմանված են այդ ծառայությունների վերաբերյալ օրենքներով, իրենց առանձնահատկություններով նման են Օրենքով ամրագրված

վերը թվարկված հիմնական իրավունքներին: Սակայն, ի տարբերություն մյուսների, ոստիկանության, մաքսային և հարկային ծառայողներն իրենց ծառայության վերաբերյալ օրենքներով նախատեսված դեպքերում ու կարգով իրավունք ունեն գործադրել ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և զենք:

Ինչպես ամբողջությամբ վերցրած հանրային ծառայողը, այնպես էլ այդ համակարգի մյուս ծառայողները, համապատասխան ծառայության վերաբերյալ օրենքով և մյուս իրավական ակտերով սահմանված նաև այլ իրավունքներ ունեն:

Հանրային ծառայողների կողմից ծառայողական իրավունքների իրականացումն ուղղակիորեն առնչվում է ծառայողական պարտականությունների կատարման հետ: Նկատի ունենալով նշված ծառայողների օրգանական կապը պետության, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների հետ, նրանց ներկայացվում են յուրահատուկ պահանջներ: Այդ առնչությամբ նրանց իրավունքները և պարտականությունները սահմանվում են, որպես կանոն, այն մարմնի լիազորությունների սահմաններում, որտեղ նրանք ծառայում են: Յուրաքանչյուր ծառայողի պարտականությունները բնորոշում են նրա ծառայողական գործունեության էությունը: Հաշվի առնելով հանրային ծառայողների պարտականությունների բազմազանությունը և առանձնահատկությունները, դրանք հնարավոր չէ կարգավորել մեկ իրավական ակտով: Այս առումով Օրենքը սահմանում է միայն հանրային ծառայողների հիմնական պարտականությունները և իրավունքները, իսկ մյուսներն ամրագրվում են այլ իրավական ակտերով:

Օրենքի համաձայն (21-րդ հոդված) հանրային ծառայողի հիմնական պարտականություններն են՝

1) Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները կատարելը,

2) մասնագիտական և ծառայողական պարտականությունների կատարման համար անհրաժեշտ գիտելիքներ, հմտություններ և կարողություններ ապահովելը,

3) օրենսդրությամբ իրեն վերապահված պարտականությունները ճշգրիտ ու ժամանակին կատարելը և հաշվետվություններ ներկայացնելը,

4) վերադաս մարմինների և պաշտոնատար անձանց՝ սահման-

ված կարգով տված հանձնարարականները և ընդունած որոշումները կատարելը,

5) օրենսդրությամբ սահմանված աշխատանքային կարգապահական ներքին կանոնները պահպանելը,

6) սահմանված կարգով և ժամկետներում առաջարկություններ, դիմումներ և բողոքներ քննության առնելը և դրանց ընթացք տալը,

7) պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ աշխատելու՝ օրենսդրությամբ սահմանված պահանջները պահպանելը, այդ թվում՝ ծառայությունը դադարեցնելուց հետո,

8) հանրային ծառայողի էթիկայի կանոնները պահպանելը,

9) օրենքով սահմանված դեպքերում և կարգով շահերի հայտարարագիր ներկայացնելը,

10) սահմանված կարգով և ժամկետներում ատեստավորմանը և վերապատրաստմանը մասնակցելը:

Նշված պարտականությունների հետ միասին հանրային ծառայողն ունի Օրենքով և մյուս իրավական ակտերով սահմանված նաև այլ պարտականություններ:

Հանրային ծառայողի կողմից կատարվող տեղեկացումը (զեկուցումը) առաջին անգամ է ամրագրվում ՀՀ օրենսդրության մեջ: Դրան համապատասխան, իր ծառայողական պարտականությունները կատարելիս հանրային ծառայողը պարտավոր է օրենքով սահմանված կարգով համապատասխան պաշտոնատար անձանց տեղեկացնել ծառայողների կողմից կատարված իրավախախտումների և ծառայության հետ առնչվող ցանկացած անօրինական, այդ թվում՝ կոռուպցիոն բնույթի գործողությունների մասին: Եթե նշված գործողությունների վերաբերյալ ստացած պատասխանը հանրային ծառայողին չի բավարարում, ապա կարող է այդ մասին գրավոր հայտնել համապատասխան մարմնի ղեկավարին կամ իրավասու պետական մարմիններին: Ի դեպ, իրավասու մարմինները պետք է երաշխավորեն տվյալ հանրային ծառայողի անվտանգությունը: Վերը նշված տեղեկացման և հանրային ծառայողի անվտանգության երաշխավորման կարգը սահմանում է կառավարությունը (22-րդ հոդված):

Օրենքով սահմանված իրավունքներից ու պարտականություններից բացի, հանրային ծառայողը և բարձրաստիճան պաշտոնատար

անձինք ունեն բազմատեսակ **սահմանափակումներ:** Դրանց նպատակն է ապահովել հանրային ծառայողի և բարձրաստիճան պաշտոնատար անձի պաշտոնեական լիազորությունների ազատ և առանց կողմնակի ֆիզիկական ու իրավաբանական անձանց ազդեցության անխափան կատարումը և հեռու պահել նրանց պաշտոնեական դիրքի հնարավոր չարաշահումներից: Մասնավորապես, նրանք իրավունք չունեն իրենց ծառայողական դիրքը օգտագործել կուսակցությունների, հասարակական, կրոնական միավորումների համար փաստացի առավելություններ կամ արտոնություններ ապահովելու համար, համատեղ աշխատել իրենց հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող) հետ, եթե նրանց ծառայությունը կապված է միմյանց նկատմամբ անմիջական ենթակայության կամ վերահսկողության հետ (բացառությամբ պատգամավորների): Համայնքային ծառայության պաշտոնի նշանակվելուց հետո պարտավոր է մեկ ամսվա ընթացքում օրենքով սահմանված կարգով առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում 10 և ավելի տոկոս բաժնեմաս ունենալու դեպքում այն հանձնել հավատարմագրային կառավարման և հանձնված գույքից ստանալու եկամուտ, ինչպես նաև այլ սահմանափակումներ (23-րդ հոդված):

Օրենքի 24-րդ հոդվածը հանրային ծառայողի և բարձրաստիճան պաշտոնատար անձի համար սահմանում է ***գործունեության այլ սահմանափակումներ:*** Նրանք չեն կարող անձամբ զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական, ստեղծագործական կամ ընտրական հանձնաժողովի անդամի կարգավիճակից բխող աշխատանքից: Սակայն, ելնելով ծառայողական առանձնահատկություններից, ազգային անվտանգության մարմինների ծառայողները գիտական, մանկավարժական և ստեղծագործական գործունեության հետ կարող են իրենց ծառայությունը համատեղել միայն այն դեպքում, եթե դա չի խոչընդոտում ծառայողական պարտականությունների կատարմանը. բացառությամբ այն դեպքերի, երբ դա կապված է ծառայողական անհրաժեշտության հետ («Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 8-րդ մաս):

Օրենքը ***սահմանափակումներ է նախատեսում նաև հանրային***

ծառայողին և բարձրաստիճան պաշտոնատար անձին ***հանձնարարություններ տալու հարցում:*** Մասնավորապես, նրանց հիմնական պարտականություններից է վերադաս մարմինների և պաշտոնատար անձանց սահմանված կարգով տրված հանձնարարությունները կատարելը: Սակայն հանրային ծառայողին և բարձրաստիճան պաշտոնատար անձին չեն կարող տրվել այնպիսի բանավոր կամ գրավոր հանձնարարականներ, որոնք հակասում են Սահմանադրությանը և օրենքներին կամ դուրս են հանձնարարականներ տվողի և կատարողի լիազորությունների շրջանակներից: Նման հանձնարարականներ տալու դեպքում ստացած հանձնարարականի օրինականության վերաբերյալ իր կասկածների մասին հանրային ծառայողը պարտավոր է անհապաղ գրավոր տեղեկացնել հանձնարարականը տվողին և նրա վերադասին կամ նրանց փոխարինող անձանց: Եթե դրանցից մեկը գրավոր հաստատում է տրված հանձնարարականը, ապա հանրային ծառայողը պարտավոր է դա կատարել, բացառությամբ՝ եթե դրա կատարումը կհանգեցնի ՀՀ օրենքով սահմանված քրեական կամ վարչական պատասխանատվության: Եթե հանրային ծառայողը կատարում է այդ հանձնարարականը, ապա դրա համար պատասխանատվությունը կրում է հանձնարարականը գրավոր հաստատած պաշտոնատար անձը: Ընդ որում, հանրային ծառայությունների վերաբերյալ օրենքներով կարող է սահմանվել հանձնարարականներ տալու այլ կարգ՝ հաշվի առնելով դրանց առանձնահատկությունները (25-րդ հոդված):

Առանձին սահմանափակումներ գործում են նաև հանրային ծառայության և բարձրաստիճան պաշտոնատար անձի պաշտոնից ազատվելուց հետո: Օրինակ, նրանց արգելվում է պաշտոնից ազատվելուց հետո առնվազն մեկ տարվա ընթացքում աշխատանքի ընդունվել այն գործատուի մոտ կամ դառնալ այն կազմակերպության աշխատողը, որի նկատմամբ նշված ծառայողներն անմիջական հսկողություն են իրականացրել իրենց պաշտոնավարման վերջին մեկ տարվա ընթացքում (Օրենքի 23-րդ հոդված):

Հանրային ծառայողի և բարձրաստիճան պաշտոնատար անձի կողմից իրենց պարտականությունները և իրավունքները պատշաճորեն կատարելու նպատակով, բացի իրավական երաշխիքներից սահմանվում են նաև մի շարք ***սոցիալական երաշխիքներ:*** Օրինակ, ծա-

ռայողական պարտականությունների կատարման համար անվտանգ և անհրաժեշտ աշխատանքային պայմաններ, վարձատրություն, հավելավճար և նախատեսված այլ վճարներ, ամենամյա վճարովի արձակուրդ, պարտադիր պետական սոցիալական ապահովագրություն, ինչպես նաև ծառայողական պարտականությունները կատարելիս հաշմանդամության դեպքում նրան, իսկ զոհվելու դեպքում ընտանիքի անդամներին սահմանված կարգով վճարով ապահովելը, օրենսդրությամբ նախատեսված դեպքերում ու կարգով նրա դիմումի հիման վրա ծառայողական պարտականությունների կատարման առնչությամբ նրա և նրա ընտանիքի անդամների անվտանգության ապահովումը և այլ երաշխիքներ (Օրենքի 26-րդ հոդված):

Հանրային ծառայողների և բարձրաստիճան պաշտոնատար անձանց վարձատրության հիմնական սկզբունքներն են՝ որակյալ կադրերի ներգրավման ապահովումը, համարժեք աշխատանքի և փորձառության համար համարժեք վարձատրությունը, ավելի բարձր պաշտոններ զբաղեցնելու ձգտմանը նպաստելը, նրանց ունակությունների բացահայտումը, անձնական ավանդի խթանումը և այլն: Այս առնչությամբ ՀՀ օրենսդրությամբ կարող են սահմանվել նաև այլ սոցիալական երաշխիքներ:

Օրենքի 28-րդ հոդվածը սահմանում է հանրային ծառայողի և բարձրաստիճան պաշտոնատար անձի ***էթիկայի կանոնները:*** Վերջիններս իրավական նորմերի համակարգ է, նպատակաուղղված ապահովելու նշված ծառայողների պատշաճ վարքագիծը, բացառելու հանրային և մասնավոր շահերի բախումը, ամրապնդելու հասարակության վստահությունը հանրային ինստիտուտների նկատմամբ: Սույն հոդվածով ամրագրված պահանջները վերաբերում են այդ ծառայողների լիազորությունների իրականացմանը և ամենօրյա վարքագծի կանոնակարգմանը: Էթիկայի հիմնական կանոններից են՝ հարգել օրենքը և հանրության բարոյական նորմերը, նպաստել իր զբաղեցրած պաշտոնի և ներկայացրած մարմնի նկատմամբ վստահության և հարգանքի ձևավորմանը, դրսևորել իր պաշտոնին վայել վարքագիծ, ինչպես նաև իր լիազորությունները կատարելիս հարգալից վերաբերվել մարդկանց, ձգտել նվազագույնի հասցնել շահերի բախման իրավիճակները և այլն:

Ի դեպ, մինչ սույն էթիկայի կանոնները շրջանառելը քաղաքա-

ցիական ծառայության խորհրդի 2002թ. մայիսի 31-ի թիվ 13-Ն որոշմամբ սահմանվել էին քաղաքացիական ծառայողի էթիկայի կանոնները, որոնք ծառայողների վարվելակերպի, վարքագծի և փոխհարաբերությունների առանձնահատկությունները կարգավորող նորմեր են:

Օրենքի գործողության ոլորտի մարմիններում (2-րդ հոդված) ստեղծվում են հանրային ծառայողի էթիկայի հանձնաժողովներ: Էթիկայի հանձնաժողովներ կարող են ստեղծվել նաև գլխավոր դատախազությունում՝ էթիկայի կանոնների պահպանումը ստուգելու նպատակով: Դատավորների կողմից այդ կանոնների պահպանման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են նաև ՀՀ դատական օրենսգրքով:

Համապատասխան օրենքներով են սահմանվում էթիկայի հանձնաժողովների ձևավորման, գործունեության, էթիկայի կանոնների խախտման կապակցությամբ վարույթ իրականացնելու կարգը:

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց համար ստեղծվում է էթիկայի առանձին հանձնաժողով, որի գործունեության կարգը սահմանվում է Օրենքով, իսկ աշխատակարգը՝ հանձնաժողովի որոշմամբ:

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը (այսուհետ՝ Բարձրաստիճան հանձնաժողով) կազմված է հինգ անդամից, որոնց վեց տարի ժամկետով նշանակում է Հանրապետության Նախագահը՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի, վարչապետի, սահմանադրական դատարանի նախագահի, վճռաբեկ դատարանի նախագահի, գլխավոր դատախազի ներկայացմամբ՝ մեկական անդամ սկզբունքով: Հանձնաժողովն իր կազմից ընտրում է հանձնաժողովի նախագահ և նախագահի մեկ տեղակալ:

Բարձրաստիճան հանձնաժողովի անդամներին ներկայացվում են մի շարք պահանջներ. նա պետք է լինի 30 տարեկան, ունենա բարձրագույն կրթություն, բարոյական բարձր հատկանիշներ, հասարակության կողմից ճանաչված և առնվազն 10 տարվա աշխատանքային ստաժ: Նա չի կարող լինել կուսակցության կամ ներկայացուցչական մարմնի անդամ կամ զբաղեցնել պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնում կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտամանկավարժական և ստեղծագործական աշխատանքից: Իր լիազորություններն իրականացնելիս նա ան-

կախ է և ենթարկվում է Սահմանադրությանը և օրենքներին:

Բարձրաստիճան հանձնաժողովի գործառույթներն են՝

1) այդպիսի պաշտոնատար անձանց և Օրենքով նախատեսված այլ անձանց հայտարարագրերի ռեեստրի վարումը, դրանց վերլուծությունը և հրապարակումը,

2) այդպիսի պաշտոնատար անձանց շահերի բախման բացահայտումը (բացառությամբ պատգամավորների, սահմանադրական դատարանի անդամների, դատավորների և դատախազների բախման) և էթիկայի կանոնների խախտման բացահայտումը,

3) իր իրավասության շրջանակներում բացահայտված էթիկայի կանոնների խախտումների և շահերի բախման դեպքերի, դրանց կապակցությամբ ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը,

4) նշված խախտումների վերացմանն ու կանխարգելմանն ուղղված առաջարկությունների ներկայացումը Հանրապետության Նախագահին, Ազգային ժողով, կառավարություն, իսկ Օրենքով նախատեսված դեպքերում նաև սահմանադրական դատարան ու գլխավոր դատախազին և այլ գործառույթներ (43-րդ հոդված):

Բարձրաստիճան հանձնաժողովը քննարկվող հարցերի առնչությամբ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից (պաշտոնատար անձանցից), պետական կազմակերպություններից կարող է պահանջել անհրաժեշտ նյութեր: Հանձնաժողովի անդամներն իրավասու են անարգել այցելելու ցանկացած պետական հիմնարկ կամ կազմակերպություն և ծանոթանալու քննարկվող հարցին առնչվող նյութերին:

Բարձրաստիճան հանձնաժողովը վարույթը հարուցում է սեփական նախաձեռնությամբ կամ դիմումով: Վարույթը հարուցելուց հետո 5-օրյա ժամկետում տեղեկացվում է համապատասխան անձը, որը հանձնաժողով է ներկայացնում իր առարկություններն ու բացատրությունները: Էթիկայի կանոնների խախտման վերաբերյալ հանձնաժողովի եզրակացությունն ուղարկվում է Հանրապետության Նախագահին և բարձրաստիճան պաշտոնատար անձի վերադասին: Եզրակացությունը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Յուրաքանչյուր տարի Բարձրաստիճան հանձնաժողովը զանգվածային լրատվական միջոցներով հրապարակում է շահերի բախ-

ման բացահայտված դեպքերը և դրանց առնչությամբ ձեռնարկված միջոցառումները:

Իր լիազորությունների իրականացման առնչությամբ հանրային ծառայողը կամ բարձրաստիճան պաշտոնատար ***անձը չպետք է ընդունի նվեր կամ այն հետագայում ընդունելու համաձայնություն տա,*** բացառությամբ՝ պաշտոնական միջոցառումների ժամանակ սովորաբար տրվող նվերների, պարգևների և կազմակերպվող հյուրասիրության, ծառայողական օգտագործման նպատակով անվճար տրամադրվող գրքերի, համակարգչային ծրագրերի և նմանատիպ այլ նյութերի, ինչպես նաև կրթաթոշակի, դրամաշնորհի կամ նպաստի, որ տրվել են հրապարակային մրցույթի արդյունքով՝ մյուս դիմորդների նկատմամբ կիրառված նույն պայմաններով և նույն չափանիշներով կամ թափանցիկ այլ գործընթացի արդյունքում: Օրենքի իմաստով «նվեր» հասկացությունը չի ընդգրկում կենցաղային հյուրընկալությունը, ազգականից, բարեկամից կամ ընկերոջից ստացած նվերը, եթե այն էությամբ և չափով ողջամտորեն համապատասխանում է միմյանց միջև հարաբերությունների բնույթին: Եթե նշված գույքային ոչ սպառողական նվերն իր արժեքով գերազանցում է 100 000 ՀՀ դրամը, ապա հանրային ծառայողը կամ բարձրաստիճան պաշտոնատար անձն իր վերադասի համաձայնությամբ, իսկ վերադաս չունեցողն իր նախաձեռնությամբ՝ նվերը տրամադրում է բարեգործության, կամ այն համարվում է համապատասխան մարմնի սեփականությունը: Նվերի արժեքը գնահատվում է՝ հիմք ընդունելով ողջամիտ շուկայական գինը (Օրենքի 29-րդ հոդված):

Բարձրաստիճան պաշտոնատար անձի կողմից իր կամ իրեն փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվելը նշանակում է բարձրաստիճան պաշտոնատար անձի լիազորությունների շրջանակում այնպիսի գործողություն կատարելը կամ որոշում ընդունելը (այդ թվում՝ կոլեգիալ մարմնի կազմում որոշում ընդունելուն մասնակցելը), որը թեև ինքնին օրինական է, սակայն հանգեցնում կամ նպաստում է կամ ողջամտորեն կարող է հանգեցնել կամ նպաստել նաև՝ իր կամ իր հետ փոխկապակցված անձի կամ իր անդամակցած ոչ առևտրային կազմակերպության կամ իր մասնակցությամբ առևտրային կազմակերպության՝ ա) ֆինանսական միջոցների կամ եկամուտների ավելացմանը կամ գույքային կամ իրավական դրութ-

յան այլ բարելավմանը, բ) պարտավորությունների մարմանը կամ նվազեցմանը, գ) մրցույթում հաղթելուն, դ) իր հետ փոխկապակցված անձին պաշտոնում նշանակմանը կամ կազմակերպության մասնակից դառնալուն: Նշված դրույթները չեն տարածվում պատգամավորների, սահմանադրական դատարանի անդամների, դատավորների և դատախազների վրա:

Այդպիսի բախում առաջանալու դեպքում բարձրաստիճան պաշտոնատար անձը պարտավոր է իր վերադասին գրավոր ներկայացնել այդ մասին հայտարարություն՝ շարադրելով կոնկրետ հանգամանքները: Մինչ նրանից գրավոր համաձայնություն ստանալը դիմողն իրավունք չունի հարցի վերաբերյալ գործողություն կատարելու կամ որոշում կայացնելու: Հայտարարություն ստացողն իրավունք ունի դրա լուծումը հանձնարարել այլ պաշտոնատար անձի, եթե դա արգելված չէ: Հայտարարություն տվողն իրավունք ունի Բարձրաստիճան հանձնաժողովից ստանալու պարզաբանում՝ հայտարարությամբ հանդես գալու անհրաժեշտության մասին:

Գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց մասին հայտարարագրման պարտականությունը: Սույն հարցի վերաբերյալ բարձրաստիճան պաշտոնատար անձինք նախատեսված կարգով հայտարարգիր են ներկայացնում Բարձրաստիճան հանձնաժողով: Եթե նրան պաշտոնի նշանակելը կատարվում է այլ մարմնի առաջադրմամբ, ապա հայտարարագիրը ներկայացնում է նաև առաջադրվելիս: Նշված անձի ամուսինը, համատեղ ապրող ծնողը և ընտանիքի չափահաս և չամուսնացած զավակը սահմանված դեպքերում ու կարգով այդ հանձնաժողով են ներկայացնում իրենց գույքի և եկամուտների հայտարարագիրը: Բարձրաստիճան պաշտոնատար անձը պաշտոնեական պարտականություններ ստանձնելու, դադարեցնելու օրվա դրությամբ հայտարարագիրն այդ օրերին հաջորդող 15 օրվա ընթացում ներկայացնում է նշված հանձնաժողով: Տվյալ անձը պաշտոնավարման ընթացքում հայտարարագրերը ներկայացնում է նաև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ ոչ ուշ քան հաջորդ տարվա փետրվարի 15-ը:

Գույքի վերաբերյալ հայտարարագիրը ներառում է սեփականության իրավունքով նրանց պատկանող անշարժ և շարժական գույքը, արժեթղթերը, ինչպես նաև ութ միլիոն դրամից կամ դրան համար-

ժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող ցանկացած այլ գույք (այսուհետ՝ թանկարժեք գույք), որը օտարվել կամ ձեռք է բերվել հարկային տարում, փոխառություններով, որը հայտարարատուն հանձնել է, կամ որը նրան վերադարձվել է հարկային տարում, դրամական միջոցները (այդ թվում՝ բանկում ունեցածը): Հայտարարագրին պետք է կցվի նաև ընտանիքի անդամներին սեփականության իրավունքով պատկանող վերը թվարկված անշարժ և շարժական գույքը, արժեթղթերը, փոխառությունը և թանկարժեք գույքը, որն օտարվել կամ ձեռք է բերվել հարկային տարում: Ընդ որում, հայտարարագրում պետք է նշվեն գույքի տեսակը, գտնվելու վայրի հասցեն, արժեքը և այլ տվյալներ (Օրենքի 34-րդ հոդված):

Եկամուտների վերաբերյալ հայտարարագիրը բովանդակում է բարձրաստիճան պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անդամների հարկային տարում ստացած եկամուտները և դրանց ստացման աղբյուրները, ինչպես նաև ՀՀ դրամով, արտարժույթով կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացված եկամուտները՝ աշխատանքի վարձատրությունը կամ դրան հավասարեցված այլ վճարումները, հեղինակային վարձատրությունները, ստացված փոխառությունները, շահաբաժինները, ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտները և այլն, նշելով դրա տեսակը, ստացման աղբյուրը, եկամուտի չափը և արժեքը (Օրենքի 35-րդ հոդված):

Փոխկապակցված անձանց մասին հայտարարագրում ընդգրկվում են՝ սահմանադրական դատարանի անդամի, նախարարների և նրանց տեղակալների, գլխավոր դատախազի, նրա տեղակալների, մարզերի, Երևան քաղաքի և կայազորների դատախազների, կառավարությանն առընթեր պետական մարմինների ղեկավարների և դրանց տեղակալների (ներառյալ կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներում, ինչպես նաև ենթակայությանը հանձնված կազմակերպություններում), օրենքներով ստեղծված կոլեգիալ պետական մարմինների ղեկավարների և անդամների, դատավորների համար համապատասխան համակարգերում պաշտոն զբաղեցնող փոխկապակցված անձինք (Օրենքի 36-րդ հոդված):

Օրենքի համաձայն Բարձրաստիճան հանձնաժողովը հայտարարագիրը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում այն զետեղում է հայտարարագրերի ռեեստրում: Դրանում

ընդգրկված հրապարակման (տրամադրման) ենթակա տվյալների ցանկը, բովանդակությունը և ձևը սահմանում է կառավարությունը:

§3. Հանրային ծառայության հիմնական սկզբունքները

Հանրային ծառայության հիմնական սկզբունքները բխում են Հանրապետության Սահմանադրության դրույթներից: Այդ սկզբունքների տեսակները կոնկրետացվում են «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով (6-րդ հոդված), որով ինչպես պետական ծառայության, այնպես էլ համայնքային ծառայության համակարգերի համար սահմանվել են միասնական հիմնական սկզբունքներ: Օրենքը, սահմանելով հանրայն ծառայության սկզբունքները, նպատակ ունի բարելավելու համապատասխան մարմինների գործառույթների իրականացումը և հանրային ծառայողների գործունեությունը:

Ինչպես արդարացիորեն նշվում է, այդ սկզբունքներն այնպիսի հիմնարար գաղափարներ, կարգադրագրեր են, որոնք արտահայտում են համապատասխան մարմինների իրավասության, խնդիրների ու գործառույթների, հանրային ծառայողների լիազորությունների իրականացման օբյեկտիվ օրինաչափությունները և որոշում գիտականորեն հիմնավորված ուղղությունները: Հանրային ծառայության իրավական սկզբունքների բացակայությունը կարող է հանգեցնել կամայականության, բյուրոկրատիզմի, անկազմակերպվածության, ապօրինության ու անարդարության[1]:

Չնայած Օրենքը չի բնորոշում հանրային ծառայության սկզբունքների հասկացությունը, այնուամենայնիվ, պետք է ենթադրել, որ դրանք այնպիսի հիմնարար չափանիշների, դրույթների ամբողջություն է, որի վրա խարսխվում է հանրային ծառայության ողջ համակարգը: Ծառայության հիմնական սկզբունքները փոխկապակցված են և դրանք իրականացվում են հանրային ծառայողների ամենօրյա գործունեության ընթացքում: Սակայն, Օրենքի և իրավական այլ ակտերի առանձին դրույթներ որոշ չափով անուղղակի մեկնաբանում են այդ սկզբունքները:

Օրենքը սահմանում է հանրային ծառայության հետևյալ սկզբունքները.

---

[1] Տե՛ս Старилов Ю.Н. Служебное право. Учебник. М.: 1996, էջ 201-202:

1. ***ՀՀ Սահմանադրության և օրենքների գերակայությունը:*** Նշված սկզբունքը բխում է ՀՀ Սահմանադրության 5-րդ և 6-րդ հոդվածների պահանջներից: Հիմնական օրենքի 5-րդ հոդվածը սահմանում է, որ պետական իշխանությունն իրականացվում է ՀՀ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, իսկ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Բացի այդ, ՀՀ Սահմանադրությունը (6-րդ հոդված) օժտված է բարձրագույն իրավաբանական ուժով և դրա նորմերը գործում են անմիջականորեն: Սահմանադրությունն իրավական մյուս ակտերի համեմատ օժտված է մի շարք յուրահատուկ առանձնահատկություններով և Հանրապետության իրավական համակարգում ինքնուրույն և հատուկ տեղ է գրավում: Հանրապետության օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, իսկ այլ իրավական ակտերը՝ Սահմանադրությանը և օրենքներին: Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով են ընդունվում նորմատիվ իրավական ակտերը: Հանրապետության Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը չեն կարող վավերացվել: Ի տարբերություն մյուս իրավական ակտերի, Սահմանադրությունն ընդունվել է անմիջականորեն ժողովրդի կողմից հանրաքվեի միջոցով և դրանում ամրագրված դրույթները նախահիմք են բոլոր իրավահարաբերությունների կարգավորման համար:

Օրենքների գերակայությունը պայմանավորված է նրանով, որ դրանք ՀՀ իրավունքի համակարգում հիմնական և կարևոր բաղադրամաս են: Օրենքները ենթաօրենսդրական ակտերի նկատմամբ, որոնք ընդունվում են գործադիր իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, ունեն գերակայություն. վերջիններս արձակվում են օրենքների հիման վրա և ի կատարումն դրանց: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Հանրապետության գործադիր մարմիններն ստեղծվում են օրենքներով սահմանված դրույթները կենսագործելու նպատակով: Հետևաբար, այդ մարմինների գործունեությունը և իրավական ակտերը չպետք է հակասեն օրենքներին և պետք է բխեն դրանցից:

2. ***Մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների առաջնահերթությունը:*** ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածին համապատասխան, Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին և այն իրականացվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով: Իշխանությունը ժողովրդի կամաարտահայտության բարձրագույն ձևն է, իսկ ժողովուրդն ինքնիշխանության կրողն է և իշխանության միակ աղբյուրը:

Հանրապետության Սահմանադրությունը, հաշվի առնելով մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների առանձնահատուկ նշանակությունը և տեղը, 2-րդ գլխում ամրագրել է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները: Ընդ որում, ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված այդ իրավունքները և ազատությունները չեն բացառում օրենքներով և միջազգային պայմանագրերով սահմանված այլ իրավունքներ և ազատություններ (42-րդ հոդված): ՀՀ Սահմանադրությունը, որպես սկզբունք սահմանում է մարդու և քաղաքացու իրավունքների, ազատությունների ու պարտականությունների համընդհանրությունը, հավասարությունը և անօտարելիությունը:

Մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների գերակայությունը երաշխավորվում է Սահմանադրությամբ և օրենքներով՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան (3-րդ հոդված): Հանրային ծառայողը պարտավոր է ճանաչել մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները՝ որպես բարձրագույն արժեք, պահպանել և պաշտպանել նրանց իրավունքները, ազատություններն ու օրինական շահերը և օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն կրել դրանց խախտման համար: Օրենքի 21-րդ հոդվածի 6-րդ կետն ուղղակիորեն պարտավորեցնում է հանրային ծառայողին սահմանված կարգով և ժամկետներում քննության առնել և ընթացք տալ մարդու և քաղաքացու առաջարկություններին, դիմումներին ու բողոքներին:

3. ***Հանրային ծառայության կայունությունը*** հանրային մարմինների բնականոն, արդյունավետ գործունեության կարևոր պայմաններից է: Այս սկզբունքը ենթադրում է քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխությունից անկախ հանրային ծառայության պաշ-

տոնների հարաբերական կայունությանը և անփոփոխելիությունը, որ ապահովվում է օրենքի մի շարք դրույթներով: Հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու, ծառայողների ատեստավորման, վերապատրաստման, իրավական և սոցիալական, ինչպես նաև նրանց պաշտոնից ազատելու սկզբունքները երաշխիք են, որպեսզի հանրային ծառայողը կամայականորեն չազատվի զբաղեցրած պաշտոնից:

Մասնագիտական գրականության մեջ կարծիք է հայտնվում, որ հանրային ծառայողների անփոփոխելիությունն ունի ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմեր: Մի կողմից այն ապահովում է կառավարման ապարատի աշխատանքի հաջորդականությունը և կայունությունը, նպաստում կադրերի արհեստավարժության բարձրացմանը, մյուս կողմից՝ այդ ապարատի կարծրացմանը, և բյուրոկրատացմանը:

4. ***Օրենքի առջև հանրային ծառայողների իրավահավասարության սկզբունքն*** ամրագրված է ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասով, ինչպես նաև 14.1-րդ հոդվածով, որի համաձայն, բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև: Սահմանադրական այս հիմնադրույթների հիման վրա հանրային ծառայության վերաբերյալ իրավական ակտերը հանրային ծառայողների համար սահմանել են միատեսակ հիմնական պահանջներ: Վերջիններս, նախ, պատասխանատվության հստակ հիմքեր ու պայմաններ են ստեղծում հանրային ծառայության կազմակերպման և գործունեության ընթացքում և, երկրորդ, հավասար հնարավորություններ են ապահովում ծառայողների իրավունքների ու պարտականությունների պատշաճ կատարման համար:

Այս սկզբունքը տարողունակ հասկացություն է և ընդգրկում է հանրային ծառայության կազմակերպման, թափուր պաշտոնների զբաղեցման, դասային աստիճանների, կադրերի ռեզերվի, ատեստավորման, վերապատրաստման, իրավական վիճակի, խրախուսման, կարգապահական տույժերի ենթարկելու, պաշտոնից ազատելու հիմնահարցերը: Թվարկված բնագավառներում Օրենքը հանրային ծառայողների համար սահմանում է իրավահավասար պայմաններ:

5. ***Հանրային ծառայության հրապարակայնությունը:*** Այս սկզբունքը բաղկացած է մի շարք բաղադրիչներից. հանրային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցույթ անց-

կացնելու հայտարարության հրապարակումը մամուլում և զանգվածային լրատվության այլ միջոցներով, մրցույթի, ատեստավորման անցկացման հարցաշարերի և դրանց պատասխանների, ինչպես նաև արդյունքների հրապարակումը, մրցութային ատեստավորման հանձնաժողովների գործունեությանը համապատասխան բնագավառի գիտական ու ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների մասնակցությունը, հանրային ծառայողի կողմից իր կարգավիճակը կարգավորող իրավական փաստաթղթերին, իր գործունեության գնահատականներին ու այլ նյութերին ծանոթանալը և այլն: Մրցույթին և ատեստավորմանն իրավունք ունեն, որպես դիտորդներ մասնակցելու հասարակական միավորումների ներկայացուցիչները: Օրենքով սահմանված դեպքերում հանրային ծառայության հետ կապված գործողությունները և որոշումները դատական կարգով բողոքարկելը և այլն:

6. ***Հանրային ծառայողների քաղաքական զսպվածությունը:*** Օրենքը սահմանում է, որ հանրային ծառայողն իրավունք չունի իր ծառայողական դիրքն օգտագործել հասարակական, կուսակցական, կրոնական միավորումների համար փաստացի առավելություններ կամ արտոնություններ ապահովելու համար (23-րդ հոդված), նրանց համար վերաբերմունք քարոզել, ինչպես նաև ծառայողական պարտականությունները կատարելիս իրականացնել այլ քաղաքական կամ կրոնական գործունեություն: Դրան համապատասխան, օրենքն ամրագրում է հանրային ծառայության ինքնուրույնությունը և անկախությունը, այդ միավորումների ազդեցություններից:

Հանրային ծառայողներն իրենց ծառայողական պարտականությունները կատարելիս չպետք է կաշկանդված լինեն թվարկված միավորումների որոշումներից և պարտավոր են ղեկավարվել Սահմանադրությամբ և այլ իրավական ակտերով:

ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդվածը սահմանում է, որ կուսակցություններ և արհեստակցական միավորումներ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքներն օրենքով սահմանված կարգով կարող են սահմանափակվել զինված ուժերի, ոստիկանության ազգային անվտանգության, դատախազության մարմինների ծառայողների, դատավորների և սահմանադրական դատարանի անդամի համար:

7. ***Քաղաքացիների համար հանրային ծառայության հավասար մատչելիությունը՝ իրենց մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին համապատասխան:*** Հանրապետության Սահմանադրությունն այս առնչությամբ սահմանում է, որ բոլոր մարդիկ առանց խտրականության հավասար են օրենքի առջև (14.1-րդ հոդված) և քաղաքացիներն օրենքով սահմանված ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության ընդունվելու իրավունք ունեն (30.2-րդ հոդված): Այս կապակցությամբ Օրենքի 11-րդ հոդվածը սահմանում է, որ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք ունեն տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները բավարարող և պետական ու համայնքային օրենքներով նախատեսված պահանջները բավարարող քաղաքացիները՝ անկախ ազգությունից, ռասսայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից: Միաժամանակ, Օրենքի 12-րդ հոդվածն ամրագրում է այն քաղաքացիների ցանկը, ովքեր իրավունք չունեն հավակնելու հանրային ծառայության պաշտոնի:

Վերը նշված սկզբունքն ուղղակիորեն սահմանված է քաղաքացիական և քաղաքական իրավունքների վերաբերյալ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1966թ. դեկտեմբերի 16-ի պակտով. յուրաքանչյուր քաղաքացի պետք է իր երկրում հանրային ծառայության թույլատրվի հավասարության ընդհանուր պայմաններով՝ առանց որևէ խտրականության և անհիմն սահմանափակումների:

8. ***Հանրային ծառայողների արհեստավարժությունը:*** Արհեստավարժության (պրոֆեսիոնալիզմի) հիմունքներով հանրային ծառայության իրականացումը պայմանավորված է հանրային մարմնի ամենօրյա օպերատիվ և իրավասու գործունեությամբ: Սույն սկզբունքը հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու ամենահիմնական չափանիշն է: Լայն առումով արհեստավարժությունը ենթադրում է մասնագիտական գիտելիքների ու աշխատանքային ունակությունների ամբողջություն: Վերջիններս, բացառությամբ հանրային ծառայության կրտսեր պաշտոնների, ընդգրկում են հետևյալ չափանիշները՝ բարձրագույն կրթություն, հանրային ծառայության, մասնագիտական, քաղաքական կամ հայեցողական պաշտոններում աշխատանքային փորձ, հանրային ծառայության դասային աստիճան, որոնք կարևոր

նշանակություն ունեն հանրային ծառայողների ընտրության, տեղաբաշխման և առաջխաղացման համար: Թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի նպատակն է ստուգելու թեկնածուների մասնագիտական գիտելիքներն ու աշխատանքային ունակությունները, իսկ ծառայողների պարբերական ատեստավորումը և վերապատրաստումը նպատակաուղղված է նրանց արհեստավարժության զարգացմանն ու կատարելագործմանը:

9. ***Հանրային ծառայողների իրավական և սոցիալական պաշտպանվածությունը:*** Հանրային ծառայողների կողմից իրենց պարտականությունները և իրավունքները պատշաճ կատարելու համար հիմնարար նշանակություն ունի նաև նրանց իրավական և սոցիալական պաշտպանվածությունը: Այդպիսի պաշտպանվածության երաշխիքներ են հանդիսանում նրանց իրավունքների ու պարտականությունների, ինչպես նաև կիրառվող սահմանափակումների, սոցիալական պաշտպանության և ապահովության օրենսդրական սահմանումը: Օրինակ, սահմանված կարգի խախտմամբ անցկացված մրցույթն անվավեր ճանաչելը, մրցույթի և ատեստավորման արդյունքները, կարգապահական տույժ կիրառելը, պաշտոնից ազատելը բողոքարկելը՝ այդ թվում դատական կարգով, ինչպես նաև ծառայողական քննություն պահանջելը և այլն:

Հանրային ծառայողի սոցիալական պաշտպանվածության ապահովման նպատակով օրենսդրությունը սահմանում է անվտանգ և պատշաճ աշխատանքային պայմաններ, վարձատրություն, ամենամյա վճարովի արձակուրդ, պետական սոցիալական ապահովագրություն, գործուղումների հետ կապված ծախսերի փոխհատուցում, օրենքով նախատեսված դեպքերում համայնքային ծառայողին և նրա ընտանիքի անդամներին սոցիալական ապահովություն և վճարներ, ինչպես նաև անվտանգության պաշտպանության ապահովում և այլն:

10. ***Անկողմնակալությունը:*** Հանրային ծառայության յուրաքանչյուր ծառայող ծառայողական խնդիրներն ու գործառույթներն իրականացնելիս պետք է անվերապահորեն ղեկավարվի Հանրապետության Սահմանադրությամբ, Հանրային ծառայությունների վերաբերյալ օրենքներով, էթիկայի կանոններով և այլ իրավական ակտերով ամրագրված պահանջներով: Հանրային ծառայողներն իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիա-

զորված են Հիմնական օրենքով կամ օրենքներով: Կողմնակալություն ցուցաբերելու դեպքերում հանրային ծառայողներն օրենսդրության սահմանված կարգով կարող են ենթարկվել տարբեր ներգործության միջոցների:

11. ***Ազնվությունը:*** Հանրային ծառայողը և բարձրաստիճան պաշտոնատար անձն իրենց գործունեության մեջ պարտավոր են ղեկավարվել մարդասիրության, արդարության և ազնվության սկզբունքների վրա հիմնված բարոյական նորմերով, լինել անաչառ և անկողմնակալ, խուսափել ցանկացած տեսակի հովանավորչությունից, սեփական վարքով իրեն կախվածության մեջ չդնել որևէ անձից և խուսափել անհարկի խոստումներից: Իրենց վարքով նպաստել հասարակության այն համոզմունքի և հավատի ձևավորմանը և պահպանմանը, որ հանրային ծառայության համակարգը հիմնված է ազնվության և անկողմնակալության վրա:

12. ***Հարգանքը անձի և նրա իրավունքների հանդեպ:*** Այս սկզբունքի համար ելակետային հիմք է հանդիսանում ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածը, որին համապատասխան, մարդը և նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են և պետությունը ոչ միայն սահմանափակված է այդ իրավունքներով ու ազատություններով, այլև ապահովում է դրանց պաշտպանությունը միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան: Այդ իրավունքներն ու ազատություններն անձին են պատկանում ի ծնե, անօտարելի են և կազմում են նրա անբաժանելի հատկանիշը: Հանրային ծառայողը և բարձրաստիճան պաշտոնատար անձը պարտավոր են հարգալից վերաբերմունք ցուցաբերել բոլոր այն անձանց նկատմամբ, որոնց հետ փոխհարաբերվում են իրենց լիազորություններն իրականացնելիս, հարգել օրենքը և ենթարկվել օրենքին, հարգել հանրության բարոյական նորմերը:

13. ***Պատասխանատվության զգացումը:*** Օրենքով սահմանված այս սկզբունքը հիմնարար է բոլոր հանրային ծառայողների համար, քանի որ այն առավել կարևոր նշանակություն ունի հանձնարարված բնագավառի համար նրանց անձնական պատասխանատվության ձևավորման ու բարձրացման, իրավական նորմերի պահպանման, ծառայողական և ամբողջությամբ վերցրած պետական կարգապա-

հության ամրապնդման ու պետական իշխանության համակարգի կատարելագործման համար: Պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, ինչպես նաև ծառայողական լիազորությունները գերազանցելը, աշխատանքային կարգապահության ներքին կանոնները խախտելը, ծառայողի էթիկայի կանոնները չպահպանելն առաջացնում են կարգապահական տույժեր և նախատեսված դեպքերում՝ իրավաբանական պատասխանատվության ավելի խիստ միջոցների կիրառում:

§4. Հանրային ծառայության պաշտոնի հասկացությունը

Հանրային ծառայության վերաբերյալ օրենքի 5-րդ հոդվածի բնորոշմամբ հանրային ծառայության պաշտոնը հանրային (պետական և համայնքային) ծառայության պաշտոնների անվանացանկերով նախատեսված պաշտոն է: Այդ անվանացանկը պետական և համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկերի միասնությունն է: Պաշտոնների անվանացանկերը նախատեսվում են հանրային ծառայության յուրաքանչյուր տեսակի, ինչպես նաև համայնքային ծառայության համար: Դրանք հաստատում են պետական ծառայության առանձին տեսակները, ինչպես նաև համայնքային ծառայությունը կարգավորող օրենքով սահմանված կարգով: Ի դեպ, ինչպես պետական ծառայության յուրաքանչյուր տեսակի (օրինակ, քաղաքացիական, դատական և հատուկ ծառայություններ), այնպես էլ համայնքային ծառայության համար նախատեսված ծառայության պաշտոնների անվանացանկերը համապատասխան օրենքով սահմանված կարգով հաստատված պաշտոնների ցանկերն են:

Հանրային ծառայողների ծառայողական պարտականությունների, իրավունքների և պատասխանատվության ծավալը որոշելու համար կարևոր նշանակություն ունի հանրային ծառայության պաշտոնների դասակարգումը: Պաշտոնների խմբերի և ենթախմբերի դասակարգման հետ կապված հարաբերությունները հանրային ծառայության վերաբերյալ օրենքին համապատասխան, կարգավորում են պետական ծառայության առանձին տեսակները, ինչպես նաև համայնքային ծառայությունը կարգավորող օրենքներով և այլ իրավական ակտերով:

Նկատի ունենալով հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչական լուծման պահանջները, ինչպես նաև գիտելիքների ու հմտությունների անհրաժեշտ մակարդակը, այդ պաշտոնները դասակարգվում են խմբերի:

Հանրային ծառայության վերաբերյալ օրենքի գործողությունը տարածվում է բարձրաստիճան պաշտոնատար անձանց և ՀՀ Նախագահի, ՀՀ Ազգային ժողովի, սահմանադրական դատարանի, կառավարության, նախարարությունների, գերատեսչությունների, օրենքներով ստեղծված մշտապես գործող մարմինների (հանձնաժողովների, ծառայությունների խորհուրդների), նախարարությունների, նախարարությունների կառավարման ոլորտում գործող պետական մարմինների, կենտրոնական բանկի, Ազգային անվտանգության խորհրդի, դատական, դատախազության, մարզպետարանների, Երևանի քաղաքապետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների, մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմերում հանրային ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոն զբաղեցնող անձանց վրա (Օրենքի 2-րդ հոդված):

Օրենքը չի տարածվում քաղաքական, հայեցողական և քաղաքացիական պաշտոններ զբաղեցնող անձանց վրա, բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց վրա:

Օրենքով սահմանված՝ հանրային ծառայողներին վերաբերող դրույթները տարածվում են բարձրաստիճան պաշտոնատար անձանց վրա միայն սույն օրենքով սահմանված դեպքերում:

Բարձրաստիճան պաշտոնատար անձինք են համարվում՝ Հանրապետության Նախագահը, վարչապետը, Ազգային ժողովի պատգամավորները, սահմանադրական դատարանի անդամները, դատավորները, նախարարները և նրանց տեղակալները, գլխավոր դատախազը և նրա տեղակալները, մարզերի, Երևան քաղաքի և կայազորների դատախազները, օրենքներով ստեղծված պետական մարմինների ղեկավարները, նրանց տեղակալները և այդ մարմինների անդամները, գերատեսչությունների ղեկավարները և նրանց տեղա-

կալները, ՀՀ Նախագահի, Ազգային ժողովի և կառավարության աշխատակազմերի ղեկավարները և նրանց տեղակալները, բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի անդամները, մարզպետները և Երևանի քաղաքապետն ու նրանց տեղակալները և այլոք (5-րդ հոդվածի 15-րդ կետ):

Բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձինք են՝ բարձրաստիճան պաշտոնատար անձի կամ նրա ամուսնու հետ՝ ներառյալ մինչև 2-րդ աստիճանի արյունակցական կապի մեջ գտնվող անձինք, այսինքն՝ արյունակցական կապի 1-ին աստիճանի մեջ գտնվող անձինք, ինչպես նաև վերջիններիս հետ արյունակցական կապի 1-ին աստիճանի մեջ գտնվող անձինք՝ անձի զավակները, ծնողները, քույրերը և եղբայրները (Օրենքի 5-րդ հոդվածի 16-րդ կետ):

Բարձրաստիճան պաշտոնատար անձի վերադաս անձինք են համարվում. Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարի, Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի և ՀՀ Նախագահի վերահսկողության ծառայության ղեկավարի, ՀՀ Նախագահի խորհրդականների և օգնականների համար՝ Հանրապետության Նախագահը, նախարարների, կառավարության աշխատակազմի ղեկավարի, նրա տեղակալների, գերատեսչությունների ղեկավարների, վերահսկողական ծառայության ղեկավարի, վարչապետի խորհրդականների և օգնականների համար՝ վարչապետը, Երևանի քաղաքապետի, մարզպետների տեղակալների համար՝ համապատասխանաբար՝ Երևանի քաղաքապետը և մարզպետը և այլն (Օրենքի 5-րդ հոդվածի 18-րդ կետ): Սույն կետում չթվարկված բարձրաստիճան պաշտոնատար անձինք սույն օրենքի իմաստով համարվում են վերադաս չունեցող:

«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքը քաղաքացիական ծառայության պաշտոնները բաժանում է չորս խմբերի՝ բարձրագույն, գլխավոր, առաջատար և կրտսեր (7-րդ հոդված), «Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենքը՝ տասնվեց խմբերի (17-րդ հոդված), իսկ «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքը՝ երեք խմբի. գլխավոր, առաջատար և կրտսեր (7-րդ հոդված): Քաղաքացիական ծառայության բարձրագույն պաշտոնների խումբը դասակարգվում է 1-ին և 2-րդ ենթախմբերի, իսկ գլխավոր, առաջա-

տար և կրտսեր պաշտոնների խմբերը՝ 1-ին, 2-րդ և 3-րդ ենթախմբերի: Համայնքային ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խումբ դասակարգվում է 1-ին, 2-րդ և 3-րդ ենթախմբերի: Ի դեպ, սահմանադրական դատարանի դատական ծառայության պաշտոնները նույնպես դասակարգվում են չորս խմբերի, սակայն դրանցից յուրաքանչյուրը դասակարգվում է 1-ին և 2-րդ ենթախմբերի: Նշված պաշտոնների խմբերում 1-ին ենթախումբը համապատասխան խմբի բարձրագույն ենթախումբն է: Հանրային ծառայության առանձին տեսակների պաշտոնների խմբերի համապատասխանությունը սահմանում է կառավարությունը:

Քաղաքացիական ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի և ենթախմբի ընդհանուր նկարագիրը հաստատում է քաղաքացիական ծառայության խորհուրդը, իսկ համայնքային ծառայությանը՝ կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը (ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը):

Օրենքի համաձայն հանրային ծառայության յուրաքանչյուր պաշտոնի համար նախատեսվում է պաշտոնի անձնագիր (նկարագիր), որը համապատասխան պաշտոնը զբաղեցնող հանրային ծառայողի համար օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները նկարագրող և տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար հանրային ծառայողին մասնագիտական գիտելիքների ու աշխատանքնային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող՝ օրենքով սահմանված կարգով հաստատված փաստաթուղթ է:

Պաշտոնների անձնագրերը (նկարագիրը) հաստատվում (փոփոխվում) են պետական ծառայության առանձին տեսակները սահմանող, ինչպես նաև համայնքային ծառայությունը կարգավորող օրենքներով և այլ իրավական ակտերով:

Այսպես, քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատում (փոփոխում) է քաղաքացիական ծառայության խորհուրդը՝ քաղաքացիական ծառայության վերաբերյալ օրենքի գործողության տարածման մարմինների ղեկավարների առաջարկությամբ: Սույն ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբում և ենթախմբում ընդգրկվող պաշտոնների անվանացանկը հաստատում (փոփոխում) է քաղաքացիական ծառայության խորհուրդը: Բա-

ցառությամբ Հանրապետության Նախագահի աշխատակազմի, մյուս մարմինների քաղաքացիական ծառայության պաշտոնների անձանգրերը հաստատում (փոփոխում) են վերը նշված մարմինների ղեկավարները՝ քաղաքացիական խորհրդի համաձայնությամբ: Ինչպես անվանացանկի հաստատման (փոփոխման), այնպես էլ դրանում առաջացած նոր պաշտոնների անձնագրերը քաղաքացիական ծառայության խորհուրդ համաձայնեցման են ներկայացվում միաժամանակ:

Վերը նշված կարգով պաշտոնների անձնագրերը սահմանված կարգով հաստատվում (փոփոխվում) են պաշտոնների յուրաքանչյուր խմբի ընդհանուր նկարագրի հիման վրա:

Պաշտոնների անձանգրերն ընդգրկում են նաև աշխատանքային ստաժի և փորձի մի շարք չափանիշներ, մասնավորապես, քաղաքացիական ծառայության բարձրագույն, գլխավոր և առաջատար պաշտոններ զբաղեցնելու համար՝ բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության ստաժ և համապատասխան դասային աստիճան և այլն: Քաղաքացիական ծառայության կրտսեր պաշտոններ զբաղեցնելու համար աշխատանքային ստաժ չի պահանջվում:

Քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագիրը կարող է փոփոխվել, եթե դա տվյալ պաշտոնն զբաղեցնող ծառայողի համար չի առաջացնում այնպիսի նոր պահանջներ, որոնց բավարարումը հնարավոր չէ ապահովել վերապատրաստման արդյունքում (Օրենքի 9 և 10-րդ հոդվածներ): Սույն դրույթը նախատեսված է նաև համայնքային ծառայության վերաբերյալ օրենքով:

Ի տարբերություն քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկերի և անձնագրերի վերաբերյալ սահմանված կարգի, յուրաքանչյուր համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների ընդհանուր անվանացանկը և յուրաքանչյուր խմբում և ենթախմբում ընդգրկվող պաշտոնների անվանացանկը հաստատում է կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը, իսկ պաշտոնների անձնագրերը՝ յուրաքանչյուր խմբի ընդհանուր նկարագրի հիման վրա հաստատում է համապատասխան համայնքի ղեկավարը: Համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը նույնպես ընդգրկում են աշխատանքային ստաժի և փորձի որոշակի չափանիշներ, գլխավոր և առաջատար պաշտոններ՝ բարձրագույն կրթություն համայնքային կամ քաղաքա-

ցիական ծառայության համապատասխան ստաժ և այլն, իսկ կրտսեր պաշտոններ զբաղեցնելու համար՝ միջնակարգ կրթություն, առանց աշխատանքային ստաժի և փորձի (Օրենքի 9 և 10-րդ հոդվածներ):

Ելնելով զբաղեցրած պաշտոնից, հանրային ծառայողներին շնորհվում են հանրային ծառայության դասային աստիճաններ (կոչումներ), որոնք ծառայողների մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին համապատասխան որակավորման չափանիշներ են:

Օրենքի 8-րդ հոդվածի համաձայն նշված աստիճանները (կոչումները) սահմանելու, շնորհելու, իջեցնելու, դրանցից զրկելու հետ առնչվող հարաբերությունները կարգավորվում են պետական ծառայության առանձին տեսակները և համայնքային ծառայությունը կարգավորող օրենքներով և այլ իրավական ակտերով:

Այսպես, քաղաքացիական (պետական) ծառայողներին իրենց զբաղեցրած պաշտոններին համապատասխան շնորհվում են հետևյալ դասային աստիճանները. բարձրագույն պաշտոններ զբաղեցնող ծառայողներին՝ 1-ին կամ 2-րդ դասի պետական խորհրդականի դասային աստիճաններ, իսկ գլխավոր, առաջատար և կրտսեր պաշտոններ զբաղեցնող ծառայողներին համապատասխանաբար՝ 1-ին, 2-րդ և 3-րդ դասի խորհրդականի, առաջատար, կրտսեր ծառայողի դասային աստիճաններ: Բացի այդ, ի տարբերություն բարձրագույն ծառայության 1-ին և 2-րդ դասի պետական խորհրդականի դասային աստիճան ունեցողների, մյուս խմբերի ծառայողներին շնորհվում է նաև իրենց զբաղեցրած պաշտոնի համար նախատեսված դասային աստիճանից մեկ աստիճան բարձր դասային աստիճան: Վերջինս շնորհվում է զբաղեցրած պաշտոնի համար համապատասխան դասային աստիճանը ստանալուց ոչ շուտ, քան երեք տարի հետո:

Քաղաքացիական ծառայողին համապատասխան դասային աստիճանը, բացառությամբ բարձրագույն ծառայության պաշտոնի, շնորհվում է պաշտոնի նշանակման հետ միասին, եթե նա չունի այդպիսի ծառայության պաշտոնի համար նախատեսված կամ ավելի բարձր դասային աստիճան: Առաջին անգամ պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձին համապատասխան դասային աստիճան շնորհվում է օրենքով սահմանված փորձաշրջանի ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում, բացառությամբ պետական ծառայության

բարձրագույն պաշտոնի:

Բարձրագույն՝ 1-ին և 2-րդ դասի պետական խորհրդականի դասային աստիճանները շնորհում, իջեցնում և դրանցից զրկում է Հանրապետության Նախագահը: «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի գործողության ոլորտի մյուս մարմիններում, բացառությամբ ՀՀ Նախագահի աշխատակազմի, ծառայության 1-ին, 2-րդ և 3-րդ դասի խորհրդականի դասային աստիճանները շնորհում են հիշյալ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ կետում նշված պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձինք, իսկ ՀՀ Նախագահի աշխատակազմում՝ վերջինիս ղեկավարը: Քաղաքացիական ծառայության 1-ին, 2-րդ և 3-րդ դասի առաջատար և կրտսեր ծառայողների դասային աստիճանները շնորհում է տվյալ մարմնի աշխատակազմի ղեկավարը (նշված օրենքի 8-րդ հոդված):

Սահմանադրական դատարանի դատական ծառայության բարձրագույն խմբի դասային աստիճանները շնորհում է սահմանադրական դատարանի նախագահը, իսկ մյուս խմբերինը՝ աշխատակազմի ղեկավարը:

Ի տարբերություն քաղաքացիական ծառայության պաշտոնների, համայնքային ծառայության 1-ին, 2-րդ և 3-րդ դասի խորհրդականի, ինչպես նաև 1-ին դասի առաջատար ծառայողի դասային աստիճանները շնորհում և օրենքով նախատեսված դեպքերում զրկում է տվյալ համայնքի ղեկավարը, իսկ մնացած դասային աստիճանները՝ համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարը: Նույնպիսի իրավունք է վերապահված նաև Երևանի վարչական շրջանի ղեկավարին:

Համապատասխան դասային աստիճանը շնորհելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի որոշմամբ ծառայողը զրկվում է դասային աստիճանից՝ սահմանված հիմքերով զբաղեցրած պաշտոնից ազատվելու հետ միաժամանակ (օրինակ, ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելը, օրինական ուժի մեջ մտած նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը, ատեստավորմանը երեք անգամ չներկայանալը և այլն): Բացի այդ, որպես կարգապահական տույժի միջոց ծառայության ավելի բարձր դասային աստիճանը կարող է իջեցվել մեկ աստիճանով՝ բացառությամբ բարձրագույն դասային աստիճանի:

§5. Պետական ծառայողներ հասկացությունը, տեսակները և համակարգը

Հանրային ծառայությունը պետությանը օրենսդրությամբ վերապահված լիազորությունների իրականացումն է և, բացի պետական ու համայնքային ծառայությունների, ընդգրկում է նաև պետական և համայնքային պաշտոնները:

«Պետական ծառայություն» և «պետական ծառայող» հասկացությունների վերաբերյալ վեճերը, հաշվի առնելով դրանց ինստիտուցիոնալ նշանակությունը, դեռևս շարունակվում են: Ըստ այդ կարծիքների, պետական ծառայությունը ներառում է ոչ միայն պետական մարմիններում, այլև պետական տարբեր հիմնարկներում ու կազմակերպություններում զբաղված բոլոր աշխատողներին[1]: Վարչական իրավունքի դասագրքերում ներկայումս էլ պետական ծառայությունը մեկնաբանվում է լայն և նեղ իմաստով: Լայն իմաստով այն դիտվում է որպես ծառայողական պարտականությունների կատարում պետական կառույցներում՝ պետական իշխանության մարմիններում, հիմնարկներում և այլ կազմակերպություններում, իսկ նեղ իմաստով՝ ծառայողական պարտականությունների կատարում միայն պետական մարմիններում[2]:

Տեսության մեջ սովորական պետական ծառայողները (օրինակ, բժիշկները, ուսուցիչները պետական հիմնարկներում և այլն) տարբերակվում են դասակարգված պետական ծառայողներից: Վերջիններս անվանվում են հանրային ծառայողներ կա՛մ քաղաքացիական ծառայողներ, կա՛մ էլ պետական ծառայողներ և, որպես կանոն, իրենց լիազորություններին համապատասխան ունեն դասային աստիճաններ, կարգեր, կոչումներ և հատուկ կոչումներ:

Օրինակ, Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայությունը պետական ծառայության տեսակ է և աշխատակազմում

---

[1] Տե՛ս, օրինակ, Манохин В.М. Советская государственная служба. М., 1966, էջ 20, Бахрах Д.Н. Административное право. Часть Общая. М.: 1993, էջ 97 և այլն:

[2] Տե՛ս, օրինակ, Алехин А.П. և ուրիշներ, Административное право РФ, М.: Учебник, 1999, էջ 174, Коренев А.П. Административное право. Ч. 1. М.: 1996, էջ 107:

պետական ծառայողը պետական ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված որևէ պաշտոն (բացառությամբ ժամանակավոր թափուր պաշտոնի) զբաղեցնող կամ պետական ծառայության կադրերի կարճաժամկետ ռեզերվում գտնվող անձ է (Օրենքի 3-րդ հոդված): Հանրային ծառայության վերաբերյալ օրենքը պետական ծառայությունը մեկնաբանում է որպես մասնագիտական գործունեություն, որն ուղղված է օրենսդրությամբ պետական մարմիններին վերապահված խնդիրների և գործառույթների իրականացմանը: Ընդ որում, պետական ծառայությունը բավականին ընդգրկուն է և ներառում է ծառայությունների մի շարք տեսակներ:

Ելնելով պետական ծառայության բնորոշումից, անհրաժեշտ է պետական ծառայողների շարքը դասել պետական մարմիններում ծառայողների այնպիսի մասնագիտական գործունեությունը, որն ուղղված է պետական մարմիններին վերապահված խնդիրների ու գործառույթների իրականացմանը: Հետևաբար, պետական ծառայության համակարգում ընդգրկված ծառայողները կոչված են պետության խնդիրներն ու գործառույթներն իրականացնել հանրային կառավարման նպատակով: Այդ առանձնահատկությամբ դրանք տարբերակվում են պետական կազմակերպությունների և հիմնարկների ծառայողների խնդիրներից ու գործառույթներից, որոնք պայմանավորված են արտադրական, սոցիալ-մշակութային և այլ գործունեության հետ: Այս առումով պետական ծառայող են համարվում ոչ բոլոր զինծառայողները, այլ միայն նրանք, ովքեր պաշտոններ են զբաղեցնում զինվորական կառավարման մարմիններում:

Պետական ծառայողների գործունեության մեջ արտահայտվում է պետության գործառույթների իրավական իրականացումը: Գործնականում պետական ծառայողները՝ որպես վարչական իրավունքի սուբյեկտներ, զգալի դեր են խաղում սոցիալ-տնտեսական և վարչաքաղաքական բնագավառների կառավարման, ինչպես նաև պետության և հասարակության առջև դրված մյուս խնդիրների լուծման, հանրային շահերի բավարարման համար: Նշված խնդիրների լուծումը պահանջում է նաև, որպեսզի հստակ սահմանվի պետական ծառայության և պետական ծառայողների վարչահիրավական կարգավիճակը:

Պետական ծառայողները տարբեր հիմքերով կարող են բաժանվել տեսակների: ՀՀ պետական մարմինների ստորաղասությունից ելնելով, պետական ծառայողներին կարելի է բաժանել երկու խմբի՝

1) հանրապետական պետական մարմինների ծառայողներ,

2) տարածքային պետական մարմինների ծառայողներ (մարզպետարաններ, Երևանի քաղաքապետարան):

Հանրապետական պետական մարմինների պետական ծառայության տեսակետից ելնելով պետական ծառայողները տարբերվում են՝

1) իշխանության ներկայացուցչական մարմինների (Հանրապետության Նախագահի աշխատակազմ, ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմ),

2) գործադիր իշխանության մարմինների (ՀՀ կառավարության աշխատակազմ, նախարարությունների և գերատեսչությունների աշխատակազմ, ՀՀ օրենքներով ստեղծված մշտապես գործող մարմինների (հանձնաժողովների, ծառայությունների, խորհուրդների) աշխատակազմեր, նախարարությունների կառավարման ոլորտում գործող պետական մարմինների աշխատակազմեր,

3) դատական իշխանության մարմինների (առաջին ատյանի դատարանների, վերաքննիչ դատարանների, վճռաբեկ դատարանի և սահմանադրական դատարանի աշխատակազմեր),

4) դատախազության մարմինների (ՀՀ գլխավոր դատախազության, Երևան քաղաքի դատախազության, մարզային դատախազությունների, Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազությունների, զինվորական դատախազության և զինվորական կայազորների դատախազությունների աշխատակազմեր):

Պետական ծառայության պաշտոնը պետական ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոն է, որն զբաղեցնելու առանձնահատկությունները սահմանվում են պետական ծառայության առանձին տեսակները կարգավորող օրենքներով:

Ինչպես արդեն նշվեց, Օրենքի 2-րդ հոդվածը սահմանում է, որ այն չի տարածվում քաղաքական, հայեցողական, քաղաքացիական պաշտոններ զբաղեցնող անձանց վրա, բացառությամբ այդ օրենքով սահմանված դեպքերի: Վերջին դրույթը, հիմք է հանդիսանում, որ-

պեսզի Օրենքը՝ որպես պետական պաշտոններ զբաղեցնող անձանց, սահմանի դրանց ցանկը և լիազորությունների շրջանակը:

Օրենքի 4-րդ հոդվածի համաձայն, պետական պաշտոններ են համարվում՝ ***քաղաքական*** (բացառությամբ համայնքների ղեկավարների պաշտոնների), ***հայեցողական*** (բացառությամբ համայնքների ղեկավարների տեղակալների, համայնքների ղեկավարների խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների, համայնքների ղեկավարների օգնականների պաշտոնների) ***քաղաքացիական,*** ինչպես նաև ***պետական ծառայության*** պաշտոնները:

Քաղաքական պաշտոնը՝ Սահմանադրությամբ, օրենքներով և իրավական ակտերով սահմանված կարգով ընտրովի կամ նշանակովի պաշտոն է, որը զբաղեցնող պաշտոնատար անձն օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ընդունում է քաղաքական որոշումներ և համակարգում դրանց կատարումը: Նշված պաշտոնատար անձը փոփոխվում է քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխության դեպքում, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Օրենքի իմաստով քաղաքական պաշտոններ են համարվում՝ Նախագահի, Ազգային ժողովի պատգամավորների, վարչապետի, Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի, նախարարների և համայնքների ղեկավարների պաշտոնները: Այս պաշտոնները, բացառությամբ ընտրովի քաղաքական պաշտոնների, կարող են զբաղեցնել բարձրագույն կրթություն ունեցող ՀՀ քաղաքացիները:

Նշված պաշտոնատար անձանց գործունեության սկզբունքները և կազմակերպման կարգը սահմանվում են Սահմանադրությամբ, ընտրական օրենսգրքով, օրենքներով, ՀՀ Նախագահի հարամանագրերով և այլ իրավական ակտերով:

Հայեցողական պաշտոնը նշանակովի պաշտոն է, որը զբաղեցնող պաշտոնատար անձն օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում ընդունում է որոշումներ և համակարգում դրանց կատարումը: Նշված պաշտոնատար անձը կարող է փոփոխվել քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխության դեպքում:

Սույն օրենքի իմաստով հայեցողական պաշտոններ են համար-

վում ՀՀ Նախագահի աշխատակազմի ղեկավարի, նրա առաջին տեղակալի և տեղակալներից մեկի, Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի, նրա առաջին տեղակալի և տեղակալներից մեկի, ՀՀ Նախագահի, վարչապետի վերահսկողական ծառայության ղեկավարների, նախարարների տեղակալների, գերատեսչությունների ղեկավարների ու տեղակալների, մարզպետների և նրանց տեղակալների, խորհրդականների, օգնականների, ռեֆերենտների, մամուլի քարտուղարների և այլոց պաշտոնները:

Քաղաքացիական պաշտոնը՝ Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով որոշակի ժամանակահատվածով նշանակովի կամ ընտրովի պաշտոն է, որը զբաղեցնող անձն օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում կոլեգիալ, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև անհատական հիմունքներով ընդունում է որոշումներ և համակարգում դրանց կատարումը, իր պաշտոնավարման ժամանակահատվածում չի փոփոխվում քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխության դեպքում:

Օրենքի իմաստով քաղաքացիական պաշտոններ են համարվում Սահմանադրական դատարանի նախագահի և անդամների, օրենքներով ստեղծված մշտապես գործող մարմինների (հանձնաժողովների, ծառայությունների, խորհուրդների) ղեկավարների, նրանց անդամների, վճռաբեկ դատարանի, նրա պալատների նախագահների և դատավորների, վերաքննիչ, առաջին ատյանի դատարանների նախագահների և դատավորների, գլխավոր դատախազի, նրա տեղակալների և դատախազների և մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնները: Նշված պաշտոնները կարող են զբաղեցնել բարձրագույն կրթություն ունեցող ՀՀ քաղաքացիները, եթե օրենքով այլ բան չի նախատեսված:

Պետական ծառայության պաշտոնը՝ այդ ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոն է, որն զբաղեցնելու առանձնահատկությունները սահմանվում են պետական ծառայության առանձին տեսակները կարգավորող օրենքներով:

§6. Հանրային ծառայության անցնելու կարգը, հանրային ծառայության ընթացքի վարչաիրավական կարգավորումը

Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների բնականոն գործունեությունն ապահովելու համար անհրաժեշտ է, որպեսզի դրանք ունենան հատուկ պատրաստված ծառայողական անձնակազմ: Այս հիմնահարցը լուծելու համար օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանվում են հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու կարգն ու պայմանները, հաշվի առնելով համապատասխան մարմնի կարգավիճակի առանձնահատկությունները:

Օրենքին համապատասխան, հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք ունեն տվյալ պաշտոնի անձնագրով (նկարագրով) ներկայացվող պահանջները բավարարող և պետական ծառայության առանձին տեսակները և համայնքային ծառայությունը կարգավորող օրենքներով նախատեսված պահանջները բավարարող քաղաքացիները՝ առանց խտրականության (11-րդ հոդված): Այս կապակցությամբ քաղաքացիական ծառայության վերաբերյալ օրենքը սահմանում է, որ քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք ունեն տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած ՀՀ քաղաքացիները (11-րդ հոդված), իսկ համայնքային ծառայության վերաբերյալ օրենքը՝ բացի նշվածների, այդպիսի իրավունք է վերապահում նաև փախստականի կարգավիճակ ունեցող անձանց (11-րդ հոդված):

Հանրային, ինչպես նաև քաղաքացիական ու համայնքային ծառայությունների վերաբերյալ օրենքները, չխախտելով պաշտոն զբաղեցնելու հավասար մատչելիության սկզբունքը, ամրագրում են, որ անձը իրավունք չունի այդպիսի պաշտոն զբաղեցնել, եթե՝

1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

2) դատական կարգով զրկվել է հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից,

3) տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը հանրային ծառայության տվյալ պաշտոնի նշանակվելու դեպքում կարող է խոչընդ-

դոտել լիազորությունների իրականացմանը: Այդ հիվանդությունների ցանկը հաստատում է ՀՀ կառավարությունը[1],

4) դատապարտվել է հանցագործության համար և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ,

5) օրենքի խախտմամբ չի անցել ժամկետային պարտադիր զինվորական ծառայություն:

Պետական առանձին տեսակների և համայնքային ծառայությունների օրենքներով, բացի նախատեսվածներից, կարող են սահմանվել նաև այլ պահանջներ:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն, թափուր պաշտոնները զբաղեցվում են պետական ծառայության առանձին տեսակներն ու համայնքային ծառայությունը կարգավորող օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված կարգով: Այսպես, «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքը (12.1-րդ հոդված) և «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքը (14-րդ և 14.1-րդ հոդվածներ) սահմանում են, որ թափուր պաշտոններն զբաղեցվում են ***մրցույթով կամ արտամրցութային կարգով:*** Արտամրցութային կարգով թափուր պաշտոնը զբաղեցվում է, որպես կանոն, մինչև տվյալ պաշտոնի համար մրցույթ հայտարարվելը:

Մրցույթը հանրային ծառայողների ընտրության առավել նպատակահարմար միջոց է և կոչված է ապահովելու ծառայության հավասար մատչելիության քաղաքացիների իրավունքը և հնարավորություն է ընձեռում պաշտոններ զբաղեցնել՝ ըստ մասնագիտական գիտելիքների ու աշխատանքային ունակությունների և խոչընդոտելու ձևականությանն ու հովանավորչությանը: Մրցույթն անցկացնում են մրցութային հանձնաժողովները, որոնց կազմավորման կարգը սահմանում է համապատասխան ծառայության վերաբերյալ օրենքը: Թափուր պաշտոններ առաջանալու դեպքերում դրանք, որպես կանոն, զբաղեցվում են մրցույթով: Մրցույթն անցկացնելու մասին հայտարարությունը սահմանված կարգով հրապարակում է համայնքի ղեկավարը, իսկ «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով՝ բարձրաստիճան և գլխավոր թափուր պաշտոնների համար՝ քաղաքացիական ծառայության խորհուրդը, առաջատարների համար

[1] ՀՀ ՊՏ № 70 (873), 23.12.11:

համապատասխան մարմինը մրցույթն անցկացնելուց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ զանգվածային տեղեկատվական միջոցներով: Ընդ որում, մրցույթին մասնակցող անձանց թիվը չի սահմանափակվում և այն անցկացվում է նաև այն դեպքում, երբ մասնակցելու համար դիմել է մեկ քաղաքացի:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստերը կազմվում են համակարգչում զետեղված հարցաշարերից և դրանցից պատահական ընտրված հարցերից (Սահմանադրությունից, համապատասխան ծառայության, մարմնի իրավասությունը սահմանող օրենսդրությունից, ինչպես նաև տվյալ պաշտոնում աշխատելու ունակության ստուգման մասնագիտական հարցերից): Հարցաշարը ոչ ուշ, քան մրցույթն անցկացնելուց մեկ ամիս առաջ պետք է հրապարակվի:

Թեստավորման առաջադրանքները բաղկացած են հարցերից և խնդիրներից, որոնցից յուրաքանչյուրը պետք է ունենա երեք կամ չորս ենթադրյալ պատասխան, ինչպես նաև մեկ միանշանակ ճիշտ պատասխան: Գաղտնիությունն ապահովելու նպատակով թեստավորման փուլն անցկացվում է կոդերի կիրառմամբ:

Թեստավորման առաջադրանքների առնվազն իննսուն տոկոսին ճիշտ պատասխանած մասնակիցներն իրավունք ունեն մասնակցելու մրցույթի երկրորդ՝ հարցազրույցի փուլին, որն անցկացվում է հարցատոմսերով՝ մասնակցի մասնագիտական գիտելիքներն ու ունակությունները, գործնական կարողությունները և կառավարչական հմտություններն ստուգելու նպատակով: Հարցազրույցի փուլը հաղթահարելու համար նրա ստացած միավորների տոկոսային արտահայտությունը պետք է լինի առնվազն 75 տոկոս:

Մրցույթի հաղթող են ճանաչվում հարցազրույցի փուլը հաղթահարած այն երեք մասնակիցները, որոնց թեստավորման և հարցազրույցի փուլերի արդյունքում ստացած տոկոսների հանրագումարը առավելագույնն է: Եթե այդպիսի տոկոսներ ստանալու դեպքում հնարավոր չէ պարզել երեք հաղթողներին, ապա նույն տոկոսները ստացած մասնակիցները ճանաչվում են մրցույթի հաղթողներ: Հարցազրույցի փուլը հաղթահարածների թիվը 4-ից պակաս լինելու դեպքում այդ փուլը հաղթահարածները ճանաչվում են մրցույթի հաղթողներ:

Մրցույթի արդյունքները հրապարակվում են նույն օրը և դրանք

կարող են մասնակցի կամ մրցութային հանձնաժողովի անդամի կողմից գրավոր բողոքարկվել, որը քննության է առնում պետական ծառայության առանձին տեսակները և համայնքային ծառայությունը կարգավորող օրենքներով նախատեսված մարմինները և այդ կապակցությամբ որոշումն ընդունում է դիմումն ընդունելուց հետո նույն օրը:

Արդյունքների վերաբերյալ գրավոր բողոքի բացակայության դեպքում, արդյունքների հրապարակումից անմիջապես հետո, մրցույթում հաղթող ճանաչված մասնակիցների վերաբերյալ եզրակացությունը համապատասխան աշխատակազմն ուղարկում է տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի: Եզրակացությունն ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում տվյալ պաշտոնատար անձը մրցույթում հաղթող ճանաչված մասնակիցներից մեկին նշանակում է համապատասխան պաշտոնում, իսկ նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմնի, կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմնի, մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի պաշտոնում մրցույթով հաղթող ճանաչված մասնակիցների վերաբերյալ եզրակացությունն ուղարկվում է նշված մարմինների ղեկավարներին, որոնք հաղթող ճանաչված մասնակիցներից մեկի վերաբերյալ՝ հիմնավորմամբ, երեք օրվա ընթացքում առաջարկություն են ներկայացնում տվյալ պաշտոնում նշանակելու իրավասությունն ունեցող պաշտոնատար անձին (մարմնին): Վերջինս մեկշաբաթյա ժամկետում ընդունում է համապատասխան որոշում:

Եթե մրցույթի մասնակիցներից ոչ մեկը մրցույթում հաղթող չի ճանաչվել, կամ մրցույթը համարվել է չկայացած, կամ մրցույթին մասնակցելու համար ոչ մի դիմում չի ներկայացվել, կամ անցկացված մրցույթն անվավեր է ճանաչվել դատական կարգով և այլն, ապա համապատասխանաբար անցկացվում է նոր կամ կրկնակի մրցույթ:

Կրտսեր պաշտոն զբաղեցնելու պահանջները բավարարող հավակնորդների համար առնվազն երեք ամիսը մեկ քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից ստեղծվող թեստավորման հանձնաժողովն անցկացնում է թեստավորում՝ ՀՀ Սահմանադրության և տվյալ ծառայության օրենսդրության վերաբերյալ հարցերից: Թես-

տավորման առնվազն իննսուն տոկոսին ճիշտ պատասխանած մասնակիցը ստանում է կրտսեր պաշտոն զբաղեցնելու հավաստագիր, որի ժամկետը մեկ տարի է:

ՀՀ Նախագահի և կառավարության աշխատակազմերի բարձրագույն պաշտոններում նշանակում և պաշտոնից ազատում է համապատասխանաբար՝ ՀՀ Նախագահը և վարչապետը, իսկ նույն հոդվածում (Օրենքի 15-րդ հոդված) նշված մյուս մարմնինների և մարզպետարանի աշխատակազմերում բարձրագույն, ինչպես նաև գլխավոր պաշտոնների 1-ին ենթախմբի պաշտոններում՝ այդ մարմինների ղեկավարները և մարզպետը: Նախարարության աշխատակազմի ղեկավարին պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում է կառավարությունը, նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմնի, կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմնի և մարզպետարանի աշխատակազմերի ղեկավարներին՝ վարչապետը:

Հանրապետության Նախագահի և կառավարության աշխատակազմի ղեկավարները նշանակում և պաշտոնից ազատում են աշխատակազմի գլխավոր, առաջատար և կրտսեր պաշտոններում, իսկ նույն 15-րդ հոդվածի 3-րդ կետում նշված մյուս մարմինների և մարզպետարանի աշխատակազմերում գլխավոր պաշտոնների 2-րդ և 3-րդ ենթախմբերի, առաջատար և կրտսեր պաշտոններում՝ աշխատակազմերի ղեկավարը:

Քաղաքացիական ծառայության կրտսեր թափուր պաշտոնում առանց մրցույթի նշանակվում է գործող հավաստագիր ունեցող անձը, որոնց ցանկը վարում է քաղաքացիական ծառայության խորհուրդը և դրանց տվյալները տեղադրվում է խորհրդի ինտերնետային կայքում: Առաջին անգամ քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց համար սահմանվում է մինչև վեց ամիս փորձաշրջան՝ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով:

Քաղաքացիական ծառայության և համայնքային ծառայության պաշտոնի առաջին անգամ նշանակվելիս ծառայողը երդում է տալիս այդ ծառայությունների վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Քաղաքացիական ծառայության խորհրդի համաձայնությամբ քաղաքացիական ծառայության պաշտոններ կարող են զբաղեցնել

«Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և դեպքերում գործուղված դիվանագերները (15.1-րդ հոդված):

Քաղաքացիական ծառայության և համայնքային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու՝ հղիության և ծննդաբերության արձակուրդի, պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու և օրենքով նախատեսված այլ դեպքերում պահպանվում է այդ ծառայողների պաշտոնները և դրանք ժամանակավորապես զբաղեցվում են այլ անձանց կողմից օրենքով սահմանված արտամրցութային կարգով (Օրենքի 18-րդ հոդված):

Անհրաժեշտ է նշել, որ համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի կարգն էապես չի տարբերվում քաղաքացիական ծառայողների համար անցկացվող մրցույթից: Ի դեպ, մրցույթում հաղթող ճանաչված գլխավոր խմբի և առաջատար խմբի 1-ին ենթախմբի պաշտոններում նշանակում և պաշտոններից ազատում է համայնքի ղեկավարը, իսկ առաջատար խմբի 2-րդ և 3-րդ ենթախմբի, ինչպես նաև կրտսեր խմբի պաշտոններում՝ համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարը:

Օրենքը շրջանառել է նաև ***հանրային ծառայողի ռոտացիայի*** վարչահիրավական ինստիտուտը և սահմանել, որ հանրային ծառայողների ռոտացիայի (օրենքով սահմանված դեպքերում և կարգով հանրային ծառայողին նույն մարմնում (այդ թվում՝ նույն մարմնի այլ տարածքային ստորաբաժանումում, ինչպես նաև այլ մարմին) փոխադրման հետ առնչվող հարաբերությունները կարգավորվում են սույն օրենքով, ինչպես նաև պետական ծառայության առանձին տեսակները և համայնքային ծառայությունը կարգավորող օրենքներով և այլ իրավական ակտերով:

Հանրային ծառայողն առնվազն երեք տարին մեկ հաստատված ծրագրով ենթակա է պարտադիր ***վերապատրաստման:*** Այն անցկացվում է նաև տվյալ պաշտոնի անձնագրով ծառայողի իրավունքների ու պարտականությունների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման կոնկրետ պահանջների կատարելագործման կամ այդ պահանջների փոփոխության դեպքում՝ հանրային ծառայողի կամ աշխատակազմի ղեկավարի, իսկ համայնքում՝ համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ: Վերապատ-

ռաստման ծախսերը կատարվում են բյուջեի և օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին: Բացի այդ, մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով հանրային ծառայողը գործուղվում է մինչև մեկ տարի և մեկ տարուց ավելի ժամկետներով, պահպանելով նրա պաշտոնը և ստաժը, իսկ վարձատրությունը՝ նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի (մարմնի) հայեցողությամբ:

Հանրային ծառայողի ***ատեստավորումը կամ կատարողականի գնահատումը*** կարգավորվում է պետական ծառայության տեսակների և համայնքային ծառայության վերաբերյալ օրենքներով: Օրենքի համաձայն ատեստավորումը զբաղեցրած պաշտոնին հանրային ծառայողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների համապատասխանության որոշմանն ուղղված գործընթաց է (Օրենքի 5-րդ հոդված): Յուրաքանչյուր տարի տվյալ մարմնի հանրային ծառայողների մեկ երրորդը ենթակա է ***պարտադիր ատեստավորման. հերթական ատեստավորումն*** անցկացվում է երեք տարին մեկ, ***արտահերթ ատեստավորումը***՝ հերթական ատեստավորումից առնվազն մեկ տարի հետո՝ նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի պատճառաբանված որոշման հիման վրա: Ատեստավորման ենթակա չեն՝ տվյալ պաշտոնը երեք տարուց պակաս ժամկետով զբաղեցնող (բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի), հղի և մինչև երեք տարին երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդում գտնվող, պարտադիր զինծառայությունից վերադարձած հանրային ծառայողները, եթե նրանք վերադառնալուց հետո մեկ տարուց շուտ ցանկություն չեն հայտնել ատեստավորվելու, ինչպես նաև հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը լրանալուց հետո պաշտոնավարումը երկարաձգած անձը: Ատեստավորման ենթակա, սակայն հարգելի պատճառով բացակա հանրային ծառայողները ատեստավորվում են աշխատանքի ներկայանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում: Ատեստավորման անցկացման մասին հանրային ծառայողները տեղեկացվում են ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ, իսկ դրանից առնվազն երկու շաբաթ առաջ ծառայողի անմիջական ղեկավարը ներկայացնում է ծա-

ռայողական բնութագիր: Վերջինիս հետ ծառայողը պետք է ծանոթանա ատեստավորումից առնվազն մեկ շաբաթ առաջ: Ի դեպ, սահմանված կարգով ծառայողական բնութագիր չներկայացնելը չի կարող բացասաբար ազդել ծառայողի ատեստավորման արդյունքների վրա:

Ատեստավորումն անցկացվում է ***փաստաթղթային,*** ինչպես նաև ***թեստավորման*** և ***հարցազրույցի*** միջոցով: Զբաղեցրած պաշտոնի ենթախմբի համար առավելագույն դասային աստիճան ունեցող ծառայողները ենթակա են փաստաթղթային ատեստավորման՝ ծառայողական բնութագրի հիման վրա՝ հարցազրույցի միջոցով նրա պաշտոնի անձնագրի դրույթների շրջանակում գործնական կարողություններն ստուգելու նպատակով, իսկ մյուս ծառայողները ենթակա են ատեստավորման թեստավորման և հարցազրույցի միջոցով:

Եթե արդյունքում ատեստավորման հանձնաժողովը փաստաթղթային ատեստավորվածի նկատմամբ բացասական որոշում է ընդունում, ապա նա պետք է, ինչպես մյուս ծառայողները, ատեստավորվի թեստավորման և հարցազրույցի միջոցով: Թեստավորումը և հարցազրույցն անցկացնում է ատեստավորման հանձնաժողովը՝ մրցույթի համար սահմանված կարգով: Հանձնաժողովն ատեստավորման արդյունքում ընդունում է հետևյալ երկու որոշումներից մեկը՝ համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին, կամ չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին: Հանձնաժողովի որոշումները պարտադիր են համապատասխան պաշտոնատար անձի (մարմնի) համար: Այդ որոշումները կարող է բողոքարկել հանրային ծառայողը՝ մրցույթի համար սահմանված կարգով: Ատեստավորման արդյունքները եռօրյա ժամկետում ուղարկվում է համապատասխան պաշտոնատար անձին (մարմնին), որը ծառայողի զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու որոշման դեպքում՝ նրան պաշտոնից ազատելու մասին ընդունում է որոշում:

Օրենքի 19-րդ հոդվածի համաձայն, ***հանրային ծառայության կադրերի ռեզերվի հետ*** կապված հարաբերությունները կարգավորվում են պետական ծառայության առանձին տեսակները, ինչպես նաև համայնքային ծառայությունը կարգավորող օրենքներով և այլ իրավական ակտերով: Մասնավորապես, քաղաքացիական և համայնքային ծառայությունների վերաբերյալ օրենքները կարգավորում են

կադրերի ռեզերվում գրանցելու և կադրերի ռեզերվից հանելու հարաբերությունները: Նշված օրենքների ընդհանուր բնորոշմամբ հանրային ծառայության կադրերի ռեզերվը՝ օրենքով սահմանված դեպքերում ու կարգով հանրային ծառայության պաշտոններ չզբաղեցնող հանրային ծառայողների և անձանց հանրույթ է:

Քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվը բաժանվում է երկու տեսակի՝ կադրերի կարճաժամկետ ռեզերվ և կադրերի երկարաժամկետ ռեզերվ: Նշված ռեզերվներում միանգամյա գտնվելու ժամկետը համապատասխանաբար՝ վեց ամիս և մեկ տարի է:

Կադրերի կարճաժամկետ ռեզերվում գրանցվում են՝ հաստիքների կրճատման, համապատասխան մարմնի լուծարման, սահմանված ժամկետը լրանալու հիմքով պաշտոնից ազատված աշխատակազմի ղեկավարները և համապատասխան մարմնի վերակազմակերպման և կառուցվածքային փոփոխության (անվանափոխության) հետևանքով նախատեսված դեպքերում պաշտոնում չնշանակված անձինք: Երկարաժամկետ ռեզերվում գրանցվում են՝ կադրերի կարճաժամկետ ռեզերվում միանգամյա գտնվելու վեցամսյա ժամկետը լրացած անձինք, մրցույթի հարցազրույցի փուլում առնվազն յոթանասունհինգ տոկոս ստացած, սակայն պաշտոնի չնշանակված մասնակիցները և ժամանակավոր անաշխատունակության հետևանքով մեկ տարվա ընթացքում ավելի քան վեց ամիս աշխատանքի չներկայանալու հիմքով՝ չհաշված հոլության և ծննդաբերության արձակուրդը, պաշտոնից ազատված անձինք (Օրենքի 21-րդ հոդված):

Ի տարբերություն քաղաքացիական ծառայության, համայնքային ծառայության կադրերի ռեզերվում միանգամյա գտնվելու առավելագույն ժամկետը մեկ տարի է և, բացի օրենքով նախատեսված անձանցից գրանցվում են նաև համայնքի ղեկավարի, Երևանի վարչական շրջանի ղեկավարի, տեղակալի (տեղակալների) խորհրդականի, մամուլի քարտուղարի, օգնականի, ռեֆերենտի պաշտոններ զբաղեցրած անձինք՝ պաշտոնավարման ավարտից հետո (Օրենքի 21-րդ հոդված):

Հանրային ծառայողներին խրախուսելու, կարգապահական տույժի ենթարկելու և հանրային ծառայության պաշտոնից ազատելու հարաբերությունները կարգավորվում են Օրենքի 45-47-րդ հոդվածնե-

րով: Հանրային ծառայողի նկատմամբ կարող են օրենսդրությամբ սահմանված ***խրախուսանքի միջոցներ*** կիրառվել՝ երկարամյա ծառայության, ինչպես նաև ծառայողական պարտականությունները կամ հատուկ առաջադրանքները որակյալ կատարելու համար: Խրախուսանքի տեսակները և դրանց կիրառման կարգը սահմանվում են պետական ծառայության առանձին տեսակները և համայնքային ծառայությունը կարգավորող օրենքներով և այլ իրավական ակտերով: Վերջիններս, մասնավորաբար, քաղաքացիական և համայնքային ծառայողների նկատմամբ կիրառում են բարոյական և նյութական բնույթի խրախուսման տեսակներ: Ի դեպ, խրախուսման սահմանված տեսակները սպառիչ չեն և կարող են կիրառվել խրախուսման սահմանված այլ տեսակներ: Դրանք կիրառում է ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը (օրենքների 31-րդ հոդվածներ):

Հանրային ծառայողի նկատմամբ ***կարգապահական տույժերը*** կիրառվում են ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, ծառայողական լիազորությունները վերազանցելու և աշխատանքային կարգապահական ներքին կանոնները խախտելու դեպքերում: Տույժ նշանակելուց առաջ այն կիրառելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը պետք է խախտում կատարողից գրավոր բացատրություն պահանջի: Կարգապահական յուրաքանչյուր խախտման համար կարող է նշանակվել մեկ կարգապահական տույժ (Օրենքի 46-րդ հոդված):

Կարգապահական տույժի տեսակները, այն կիրառելու կարգը և դրա հետ կապված այլ հարաբերությունները կարգավորվում են պետական ծառայության առանձին տեսակները և համայնքային ծառայությունը կարգավորող օրենքներով և այլ իրավական ակտերով: Ինչպես քաղաքացիական, այնպես էլ համայնքային ծառայությունների վերաբերյալ օրենքները, որպես կանոն, սպառիչ սահմանում են կարգապահական նույն տույժի տեսակները: Կարգապահական տույժը նշանակվում է, եթե երեք ամսից ավելի չի անցել խախտում հայտնաբերելու օրվանից՝ չհաշված հիվանդությունը կամ արձակուրդում գտնվելը: Այն նշանակվել չի կարող, եթե վեց ամսից ավելի է անցել կարգապահական խախտում կատարելու օրվանից: Եթե ծառայողը

տույժ նշանակելու օրվանից մեկ տարվա ընթացքում նոր կարգապահական տույժի չի ենթարկվել, ապա համարվում է կարգապահական տույժի չենթարկված: Որպես խրախուսման միջոց տույժը կարող է հանվել մինչև մեկ տարին լրանալը: Կարգապահական տույժերը, որպես կանոն, կիրառում է նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը, իսկ որպես կարգապահական տույժ՝ առավելագույն դասային աստիճանի իջեցում մեկ աստիճանով՝ համապատասխան առավելագույն դասային աստիիճան շնորհելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:

Կարգապահական տույժերը նշանակվում են ծառայողական քննություն անցկացնելուց հետո և այդ ժամանակահատվածում ծառայողի ծառայողական պարտականությունների կատարումը կարող է կասեցվել մինչև մեկ ամիս ժամկետով՝ նրա վարձատրության պահպանմամբ: Ծառայողական քննության արդյունքում ընդունված որոշումներն ունեն պարտադիր բնույթ: Որպես կարգապահական տույժ՝ զբաղեցրած քաղաքացիական պաշտոնից ազատում, կարող է կատարվել քաղաքացիական ծառայության խորհրդի համաձայնությամբ: Կարգապահական տույժ նշանակելու վերաբերյալ որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Նկատի ունենալով պետական և համայնքային ծառայության առանձնահատկությունները, ***հանրային ծառայության պաշտոնից ազատելու*** հիմքերը սահմանվում են այդ ծառայությունները կարգավորող օրենքներով: Նշված ծառայությունները կարող են ավարտվել ինչպես հանրային ծառայողների, այնպես էլ նրանց պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի նախաձեռնությամբ: Այսպես, քաղաքացիական և համայնքային ծառայողներին պաշտոնից ազատելու հիմքերը կարելի է բաժանել երկու խմբի, որոնցից 1-ին խումբն առնչվում է ծառայողական պարտականությունները չպահպանելու, իսկ 2-րդ խումբը չի առնչվում ծառայողական պարտականությունները չպահպանելու հետ: Առաջինի դեպքում պաշտոնից ազատելու հիմքերն են՝ պաշտոնի նշանակվելու օրենքով սահմանված կարգի խախտումը, օրենքով նախատեսված սահմանափակումները չպահպանելը, դատական կարգով հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից զրկվելը և այլն: Երկրորդի

դեպքում այդպիսի հիմքեր են համարվում՝ անձնական դիմումը, ժամկետային աշխատանքային պայմանագրի ժամկետը լրանալը, հաստիքների կրճատումը, դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ կամ անհայտ բացակայող ճանաչելը, համապատասխան մարմնի լուծարումը և այլն (օրենքների 33-րդ հոդվածներ):

Հանրային ծառայությունում պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը 65 տարին է: Սահմանված կարգով այն կարող է երկարաձգվել մինչև մեկ տարի:

Հանրային ծառայողի ծառայողական գործունեության վերաբերյալ տեղեկություններն ամփոփվում են նրա անձնական գործի մեջ, որը վարում է տվյալ մարմնի կադրային ծառայությունը:

ԳԼՈՒԽ 8.
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

§1. Կազմակերպությունների հասկացությունը և տեսակները

Կազմակերպությունների հասկացությունը: Կոլեկտիվ միավորումները, այդ թվում՝ ձեռնարկատիրության ոլորտում, ինչպես իրավունքի տեսությունում, այնպես էլ՝ օրենսդրությունում ներկայացված են տարբեր անվանումներով: Ի դեպ, կազմակերպությունների անվանումների շրջանակը հաճախ թելադրված է կոնկրետ իրավունքի ճյուղով, քանզի յուրաքանչյուր իրավունքի ճյուղին բնորոշ է իրավական եզրույթների ու տերմինների որոշակի համակարգ: Ընդ որում, եթե անգամ այդ անվանումները խմբագրական կտրվածքով համընկնում են, միևնույն է, դա ինքնըստինքյան չի նշանակում, որ խոսքը միևնույն բովանդակությամբ իրավական եզրույթների մասին է:

Ինչևէ, «կազմակերպություն» եզրույթը, որը բնորոշում է վարչաիրավական կարգավիճակ ունեցող կոլեկտիվ միավորումները, առավել ընդունված է վարչական իրավունքում: Թեպետ սա խիստ պայմանական անվանում է, քանզի նույն հաջողությամբ կարող են կիրառվել «ոչ պետական կազմակերպություններ», «ձեռնարկատիրական կազմակերպություններ» և նմանաբնույթ այլ անվանումները: Ասվածից բխում է, որ «կազմակերպություն» եզրույթը սոսկ պայմանական անվանում է, ինչը պարզապես հնարավորություն է տալիս գործնական ու իմացաբանական հարթության վրա տարանջատել ձեռնարկատիրությամբ զբաղվող կազմակերպությունների վարչաիրավական կարգավիճակը՝ իրավունքի այլ ճյուղերով կարգավորվող կազմակերպությունների կարգավիճակներից:

Հարկ է նկատել, որ վարչաիրավական իմաստով «կազմակերպություն» եզրույթը ներառում է նաև կուսակցություններին ու հասարակական միավորումներին, սակայն, հաշվի առնելով վերջիններիս խիստ էական առանձնահատկությունները, նախապատվությունը տրվել է հիշյալ եզրույթի այնպիսի բովանդակության, որը չի ներառում կուսակցություններն ու հասարակական միավորումները: Այս

կազմակերպությունների վարչաիրավական կարգավիճակը լուսաբանված է սույն ձեռնարկի հաջորդ գլխում:

Կազմակերպության կառավարման մարմինը դրա վարչակազմն է (ադմինիստրացիա): Վերջինս իր գործառույթները կարող է իրականացնել ինչպես միանձնյա ղեկավարի (ինքնուրույն կամ իր կողմից ղեկավարվող կառավարչական ապարատի՝ աշխատակազմի միջոցով), այնպես էլ միանձնյա ղեկավարի և կոլեկտիվ գործադիր մարմնի միջոցով: Միանձնյա ղեկավար կարող են լինել գլխավոր տնօրենը, կառավարիչը և այլն: Վարչակազմն այն մարմինն է, որի վրա դրված է օպերատիվ կառավարման գործառույթը: Վարչակազմի ձեռքում է գտնվում իրավական-իշխանական բնույթի բոլոր կարգադրիչ լիազորությունները, որոնք անհրաժեշտ են կառավարման համար:

Վարչակազմը կառավարչական գործառույթներ է իրականացնում ինչպես կազմակերպության ներսում, այնպես էլ հանդես է գալիս արտաքին վարչական հարաբերություններում՝ գործադիր իշխանության, տեղական ինքնակառավարման մարմինների և վարչական իրավունքի այլ սուբյեկտների հետ: Կազմակերպության ներսում կառավարչական գործառույթներ իրականացնելիս վարչակազմը կառավարման սուբյեկտ է իրեն ենթակա մարմինների և աշխատողների նկատմամբ: Կազմակերպության վարչակազմը, ի տարբերություն գործադիր իշխանության մարմինների, արտաքին կառավարում չի իրականացնում (չի կառավարում այլ կազմակերպություններ), քանի որ օժտված չէ պետաիշխանական լիազորություններով: Ընդհակառակը, արտաքին վարչական հարաբերություններում կազմակերպության վարչակազմն ինքն է հանդիսանում կառավարման օբյեկտ:

Կազմակերպությունների վարչաիրավական կարգավիճակը որոշելու համար վերջիններիս քաղաքացիաիրավական կարգավիճակն ու լիազորությունների շրջանակը չեն կարող անմիջականորեն հիմք հանդիսանալ, միաժամանակ դրանք կարող են կողմնորոշիչ նշանակություն ունենալ:

Կազմակերպություններն իրականացնում են ձեռնարկատիրական կամ շահույթ չհետապնդող այլ գործունեություն: Ոչ առևտրային կազմակերպությունները կարող են ձեռնարկատիրական գործունեություն իրականացնել միայն այն դեպքում, երբ դա ծառայում է այն նպատակների իրականացմանը, որոնց համար դրանք ստեղծվել

են և համապատասխանում է այդ նպատակներին: Ձեռնարկատիրական գործունեության իրականացման համար ոչ առևտրային կազմակերպություններն իրավունք ունեն ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել դրանց մասնակից:

Առևտրային կազմակերպությունները կարող են ունենալ օրենքով չարգելված գործունեության ցանկացած տեսակներ իրականացնելու համար անհրաժեշտ իրավունքներ և կրել պարտականություններ: Գործունեության առանձին տեսակներով, որոնց ցանկը սահմանվում է օրենքով, իրավաբանական անձը կարող է զբաղվել միայն հատուկ թույլտվության՝ լիցենզիայի հիման վրա:

Իրավաբանական անձի իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով: Վերջինս իր իրավունքների սահմանափակման կամ որևէ եղանակով խախտման մասին որոշումը կարող է բողոքարկել ինչպես վերադասության կարգով, այնպես էլ վարչական դատավարության օրենսդրությամբ սահմանված կարող է դիմել դատարան:

Կազմակերպությունների տեսակները: Անդրադառնալով տնտեսական կազմակերպությունների տեսակներին, հարկ է նկատել, որ դրա հիմքում դրված են հիմնականում դրանց գործունեության բնույթը և վարչահիրավական կարգավիճակը: Ինչպես արդեն նշվեց, կազմակերպությունների քաղաքացիահիրավական կարգավիճակը և կազմակերպահիրավական ձևերը կարող են միայն կողմնորոշիչ նշանակություն ունենալ, սակայն դրանք նույնությամբ կիրառելի չեն դրանց վարչահիրավական կարգավիճակն ընդգծելու համար:

Բոլոր դեպքերում, վարչական օրենսդրության վերլուծությունը հնարավորություն է տալիս առանձնացնելու կազմակերպությունների հետևյալ տեսակները՝

1) առևտրային կազմակերպություններ,

2) ոչ առևտրային կազմակերպություններ,

3) պետական ոչ առևտրային կազմակերպություններ,

4) զանգվածային լրատվության միջոցներ:

Նկատենք, որ այս դասակարգումը հիմնականում թելադրված է հայրենական օրենսդրությամբ, ուստի վարչական իրավունքի այլ աղբյուրներում կազմակերպությունների տեսակների վերաբերյալ այլ տեսակետները, ինչպես նաև առաջարկվող համակարգերը շատ հա-

ճախ չեն համընկնում վերը նշված համակարգին՝ հենց վարչական օրենսդրության առանձնահատկությունների հիմքով:

Տվյալ դեպքում, եթե քաղաքացիաիրավական կտրվածքով առևտրային կազմակերպությունները ևս դասակարգվում են ենթատեսակների, որոնք միմյանցից էապես տարբերվում են, ապա վարչաիրավական կտրվածքով այդ տարբերությունները նկատելի չեն, քանզի պետական կառավարման ոլորտում առևտրային կազմակերպությունների նկատմամբ իրականացվող լիազորությունների բնույթը գրեթե թելադրված չէ տվյալ առևտրային կազմակերպության կազմակերպաիրավական ձևով: Այսպես, օրինակ այդ կազմակերպություններում ստուգումներ, տեսչական գործառույթներ և վերահսկողություն իրականացնելուն առնչվող օրենսդրական ակտերում չի կոնկրետացվում, թե խոսքը հատկապես ինչպիսի կազմակերպաիրավական ձև ունեցող կազմակերպության մասին է՝ սահմանափակ պատասխանատվության ընկերության, թե՝ բաժնետիրական ընկերության:

Ոչ առևտրային կազմակերպությունների համակարգում իրենց ուրույն տեղն ունեն պետական ոչ առևտրային կազմակերպությունները (այսուհետև՝ ՊՈԱԿ), որոնց վարչաիրավական կարգավիճակի վերաբերյալ գործող օրենսդրությունում դեռևս սպառիչ կարգավորումները բացակայում են (այս կազմակերպությունների կարգավիճակի և գործունեության հարաբերությունները կարգավորված են «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով՝ 23.10.01): Այդ անորոշությունն իր հերթին թելադրված է այն հանգամանքով, որ կազմակերպության հիշյալ տեսակը չունի իր նախադեպը միջազգային փորձում, իսկ ինքնուրույն փորձերը, թերևս, բավարար չեն համալիր ու սպառիչ մոտեցում ապահովելու համար:

Այսպես, ՊՈԱԿ-ը հիշյալ օրենքով դիտվում է, որպես ոչ առևտրային կազմակերպություն, ինչից բխում է, որ վերջինս չի կարող համարվել պետական մարմին, կամ պետական մարմնի ինքնուրույն ստորաբաժանում: Ավելին, հիշյալ օրենքը բացառում է դրանց ենթակայությունը պետական մարմիններին: Մինչդեռ, մի շարք այլ օրենսդրական ակտերում առկա է ՊՈԱԿ-ների ենթակայությունն ընդգծող իրավական դրույթներ և այլն:

Զանգվածային լրատվության միջոցներին, որպես վարչաիրավական ինքնուրույն սուբյեկտ ճանաչելը թելադրված է վերջիններիս

առանձնահատուկ կարգավիճակով: Ժողովրդավարության սկզբունքներին համահունչ իրավական համակարգ ձևավորելու ուղիղ ճանապարհն անցնում է վարչաիրավական հարաբերություններում հենց զանգվածային լրատվության միջոցներին ընդգծված լիազորություններ վերապահելու, դրանց հետ փոխհարաբերություններում ինչպես վարչական մարմինների, այնպես էլ առանձին հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների համար որոշակի պարտականություններ սահմանելու միջով:

Կազմակերպությունների վարչաիրավական կարգավիճակի հիմքերն են ՀՀ Սահմանադրությունը, օրենքները, ՀՀ միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտեր: Հարկ է նկատել, որ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող տնտեսական կազմակերպությունները ՀՀ Սահմանադրության համաձայն, օգտվում են մարդու և քաղաքացու համար նախատեսված սահմանադրական իրավունքներից ու ազատություններից, ինչից բխում է, որ ֆիզիկական անձանց վարչաիրավական կարգավիճակը կիրառելի է նաև տնտեսական կազմակերպությունների պարագայում: Իհարկե, Սահմանադրությամբ միայն մի վերապահում է արված. «որքանով որ այդ իրավունքներն ու ազատություններն իրենց էությամբ կիրառելի են դրանց նկատմամբ» (42.1.-րդ հոդված):

Կազմակերպությունների կարգավիճակի առանձին դրույթներ կանոնակարգված են օրենքներով և վերջիններիս կանոնադրություններով: Մասնավորապես, այդպիսիք են «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը (23.10.01), «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքը (13.12.03), «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքը (30.05.01) և այլն:

§2. Կազմակերպությունների պետական գրանցումը: Առանձին կազմակերպությունների գրանցման առանձնահատկությունները

Կազմակերպություններն իրավունքներ են ձեռք բերում և պարտականություններ ստանձնում միայն պետական գրանցումից հետո, ինչով էլ պայմանավորված է այս ինստիտուտի իրավական արժեքն ու նշանակությունը: Պետական գրանցման կարգը սահմանվել է «Ի-

ռավաբանական անձանց պետական գրանցման մասին» 2001 թ. ապրիլի 3-ի ՀՀ օրենքով (այսուհետև՝ Օրենք): Օրենքով սահմանվեց, որ պետական գրանցումն ստեղծվող իրավաբանական անձի իրավունակության ճանաչումն է պետության կողմից: Օրենքը կարգավորում է պետական գրանցման բնագավառում առաջացող հարաբերությունները, սահմանում է պետական գրանցումն իրականացնող մարմնի լիազորությունները:

Իրավաբանական անձանց հիմնական մասը գրանցվում է ՀՀ պետական ռեգիստրի մարմիններում: ***Իրավաբանական անձն ստեղծված է համարվում դրա պետական գրանցման պահից, իսկ նրա գործունեությունը դադարում է՝ գործունեության դադարման գրանցման պահից:*** Այն կատարվում է իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում համապատասխան տեղեկությունների գրառման միջոցով:

Պետական գրանցումն ընդգրկում է՝

1) իրավաբանական անձի պետական գրանցումը, որը գրանցվող (ստեղծվող) իրավաբանական անձի մասին օրենքով սահմանված տեղեկությունների գրառումը պետական գրանցամատյանում,

2) իրավաբանական անձի կանոնադրության փոփոխությունների պետական գրանցումը, որը իրավաբանական անձի կանոնադրության փոփոխությունների ու լրացումների, նոր խմբագրությամբ կանոնադրության (այսուհետ՝ փոփոխությունների) պետական գրանցումը,

3) իրավաբանական անձի լուծարման (գործունեության դադարման) պետական գրանցումը, որը գրանցված իրավաբանական անձի գոյության դադարման մասին պետական գրանցամատյանում գրառումը:

Պետական ռեգիստրի տարածքային ստորաբաժանման կողմից իրավաբանական անձանց պետական գրանցումը կատարվում է, ըստ նրանց գտնվելու վայրի, բացառությամբ վերոնշյալ օրենքով նախատեսված դեպքերի: Առանձին կազմակերպական-իրավական ձև ունեցող իրավաբանական անձանց վերաբերյալ օրենքներով կամ այլ օրենքներով կարող են նախատեսվել պետական գրանցման համար պարտադիր ներկայացման ենթակա նաև այլ փաստաթղթեր: Պետական ռեգիստրը պահպանում է բոլոր իրավաբանական անձանց և ան-

հատ ձեռնարկատերերի գրանցման փաստաթղթերը:

Իր գործունեությունը դադարեցրած իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ արխիվային գործը ենթակա է պահպանման պետական ռեգիստրի արխիվում 5 տարի, որից հետո սահմանված կարգով հանձնվում է պետական արխիվ: Իր գործունեությունը դադարեցրած իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման վկայականը ենթակա է ոչնչացման: Պետական ռեգիստրի տարածքային ստորաբաժանումում միայն օրենքով սահմանված սահմանափակ շրջանակներով ստուգվում է ներկայացված փաստաթղթերի ամբողջականությունն ու համապատասխանությունն օրենքների պահանջներին: Ներկայացված փաստաթղթերի ստուգումից հետո պետական գրանցումը մերժելու հիմքեր չհայտնաբերելու դեպքում պետական ռեգիստրի տարածքային ստորաբաժանման ղեկավարը փոփոխությունների մասին տեղեկությունները լրացնում է քարտերում: Անհրաժեշտության դեպքում կողավորում է տեղեկությունները, ստորագրում ու կնքում քարտերը, գրառում է անհրաժեշտ տեղեկություններ պետական գրանցամատյանում ու դիմողին տալիս է պետական գրանցման վկայականի հերթական ներդիրը: Փոփոխությունների պետական գրանցումը համարվում է կատարված՝ քարտում լրացված տեղեկությունները պետական գրանցամատյանում գրառելու պահից:

Պետական գրանցման բնագավառում կան բացառություններ, մասնավորապես, դա սահմանված է բանկավարկային օրենսդրությամբ՝ բանկերի, վարկային կազմակերպությունների և այլնի առնչությամբ: Դրանք գրանցվում են ՀՀ Կենտրոնական բանկում:

ՀՀ կենտրոնական բանկին, բանկերին, վարկային կազմակերպություններին և այլ ֆինանսավարկային կազմակերպություններին գրանցելու իրավունք վերապահելը պայմանավորված է նրանով, որ ՀՀ Կենտրոնական բանկը հանդիսանում է ՀՀ բանկավարկային համակարգի բարձրագույն օղակը և պետական իշխանության միակ մարմինը, որի հիմնական նպատակներից է բանկավարկային համակարգի զարգացումը և ամրապնդումը: Այդ նպատակի իրացման համար նրանք օրենսդրությամբ օժտված են պետության ողջ բանկավարկային համակարգի բնագավառում կարգավորման լայն լիազորություններով: Իր հերթին բանկավարկային համակարգի կառավար-

ման և կարգավորման բնագավառում ունեցած լիազորություններն անհիմաստ են առանց նոր բանկերի, վարկային կազմակերպությունների և այլ ֆինանսավարկային հաստատությունների ստեղծման նկատմամբ վերահսկողության հնարավորության: Դրա համար էլ, հանդիսանալով բանկավարկային համակարգի կարգավորման ու հսկողության միակ մարմին, ՀՀ Կենտրոնական բանկին վերապահված է նոր ստեղծվող բոլոր բանկավարկային կազմակերպություններին գրանցելու իրավունք: Առևտրային բանկի գրանցումը լիցենզավորման փուլերից է և հաջորդում է նախնական հավանությանը: Այն նախորդում է լիցենզիայի տրամադրման փուլին:

ՀՀ բանկային օրենսդրությունն առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղը ՀՀ Կենտրոնական բանկի կողմից գրանցվելու համար պահանջում է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

1) գրանցման դիմում, բանկի կամ օտարերկրյա բանկի մասնակիցների ընդհանուր ժողովի կամ կառավարման իրավասու այլ մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի կանոնադրությունը հաստատելու և բանկի ղեկավարներ ընտրելու (նշանակելու) վերաբերյալ,

2) ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված ձևով՝ ստեղծվող բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի ղեկավարների գործունեության վերաբերյալ տեղեկանք,

3) բանկի կանոնադրությունը, կամ օտարերկրյա բանկի կողմից հաստատված օտարերկրյա բանկի մասնաճյուղի կանոնադրությունը,

4) բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի ղեկավարների ցուցակը, նրանց վավերացված ստորագրության նմուշները,

5) բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց համար օրենքով նախատեսված հիմքերի բացակայության մասին հայտարարություն՝ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված ձևով,

6) ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված այլ փաստաթղթեր:

Կենտրոնական բանկը վերը թվարկված բոլոր փաստաթղթերն ստանալու պահից մեկամսյա ժամկետում գրանցում է բանկը կամ օ-

տարերկրյա բանկի մասնաճյուղը կամ մերժում է դրանց գրանցումը: Կենտրոնական բանկի կողմից պահանջվող որոշակի տեղեկություններ ստանալու համար գրանցման դիմումի քննության մեկամսյա ժամկետը կարող է կասեցվել անորոշ ժամկետով: Կենտրոնական բանկի կողմից մեկամսյա ժամկետում դիմումը չմերժելու կամ մեկամսյա ժամկետը կասեցնելու մասին անձին չտեղեկացնելու դեպքում բանկը համարվում է գրանցված:

Վարկային կազմակերպությունները գրանցման համար ՀՀ Կենտրոնական բանկ պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- վարկային կազմակերպության պետական գրանցման և բանկային գործառնություններ իրականացնելու լիցենզիայի տրամադրման միջնորդության մասին դիմում,
- հիմնադիր պայմանագիր,
- կանոնադրությունը,
- կանոնադրության ընդունման և գործադիր մարմնի ղեկավարների պաշտոնների և գլխավոր հաշվապահի պաշտոնի թեկնածուների հաստատման մասին հիմնադիրների ժողովի արձանագրությունը,
- տեղեկանք պետական տուրքի վճարման մասին:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ կազմակերպությունների գրանցման ընթացակարգերի հարցում բացակայում են միասնական մոտեցումները: Մասնավորապես, որոշ երկրներում բոլոր տեսակի կազմակերպությունները, անգամ՝ բնակչությունը գրանցվում է մեկ միասնական մարմնի կողմից: Մեր երկրում նախապատվությունը տրվել է գրանցման գործառույթի ապակենտրոնացվածությանը, որի դեպքում անշարժ գույքի, կազմակերպությունների, բնակչության և գրանցման ենթակա այլ տեղեկատվության գրանցումը կատարվում է միմյանց հետ կառուցվածքային որևէ կապ չունեցող պետական մարմինների կողմից: Թերևս, միասնական գրանցման համակարգը համարվում է առավել կատարյալ, ինչին հասնելու համար անհրաժեշտ են համապատասխան իրավական, կազմակերպական և սոցիալ-հոգեբանական նախադրյալներ: Վերջիններս հնարավորություն կտան հաղթահարելու ձևավորված կարծրատիպերը և դյուրին դարձնելու կառավարման առավել արդյունավետ ինստիտուտները ներդնելու գործընթացը:

§3. Տնտեսական կազմակերպությունների գործունեության առանձին տեսակների լիցենզավորման վարչաիրավական կարգավորումը

Լիցենզավորման հասկացությունը. Տնտեսության վրա պետական կառավարման ներգործության ամենահզոր միջոցներից է լիցենզավորումը: Այն տնտեսական գործունեության կառավարման և դրա նկատմամբ պետական վերահսկողություն իրականացնելու ձևերից մեկն է, որի գլխավոր վարչաիրավական բնույթը թույլտվությունն է: «Լիցենզավորման մասին» 2001թ. մայիսի 30-ի ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) համաձայն, լիցենզավորումը՝ լիցենզիաների տրման, դրանց գործողության ժամկետի երկարաձգման, վերաձևակերպման, գործողության կասեցման և դադարեցման հետ կապված գործընթաց է: Այն իրականացվում է սպառողների իրավունքների պաշտպանությունն ապահովելու, զարգացող շուկայական հարաբերությունների կարգավորմանը նպաստելու, ապրանքների և ծառայությունների որակը բարձրացնելու, անձանց կյանքին, առողջությանը, գույքին, պետության և հասարակության շահերին, բնության, մշակութային ժառանգության պահպանությանն առավել վտանգի սպառնալիքով հղի գործունեության տեսակներով զբաղվողների նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով (Օրենքի 5-րդ հոդված):

Լիցենզավորման էությունը տնտեսական գործունեության որոշ տեսակների սահմանափակման մեջ է: Շահագրգռված սուբյեկտին լիցենզիա տրամադրելու ընթացակարգը կանոնագրելիս ամրագրվում են պահպանման ենթակա որոշ պահանջներ կամ պայմաններ, որոնք անհրաժեշտ են լիցենզավորված գործունեություն իրականացնելիս: Քանի որ լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները մեծ մասամբ առևտրային բնույթ ունեն, լիցենզավորումն ամբողջությամբ վերցրած կարելի է համարել իրականացվող տնտեսական գործունեության վրա ներգործելու միջոց:

Լիցենզավորումը տնտեսության պետական կարգավորման ամենահատկանշական վարչաիրավական մեթոդներից է: Պետությունը հանձինս իր մարմինների, թույլտվություն է տալիս կատարելու որոշակի գործողություններ, այդ թվում նաև ձեռնարկատիրական գործու-

նեության այս կամ այն տեսակով զբաղվելու համար: Լիցենզավորումը, որպես տնտեսության պետական կարգավորման վարչահիրավական մեթոդ, պատնեշում է տնտեսության մեջ անորակ ապրանքների թափանցումը և կանոնակարգում է վտանգավոր, բայց հասարակության համար կենսական նշանակություն ունեցող գործունեության իրականացումը:

Ամեն անգամ, երբ խոսքը գնում է պետական կառավարման այս կամ այն միջոցի մասին, հարց է ծագում՝ թե որո՞նք են այդ միջոցի օգտագործման նպատակները: Հնարավոր չէ ընդգծել լիցենզավարման համապարփակ ու սպառիչ նպատակը, սակայն կարելի է փաստել, որ տնտեսական գործունեության այս կամ այն տեսակի համար լիցենզավորում սահմանելը թելադրված է որոշ նպատակներով: Գործունության տեսակը լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների խմբին դասելիս, օրենսդիրը ղեկավարվում է տվյալ տեսակի նկատմամբ հանրային շահով: Այդ հետաքրքրությունը կարող է հիմնավորվել հետևյալ նպատակներով՝ ա) գործունեությունը վտանգավոր է մարդկանց ոչ սահմանափակ շրջանակի համար, որոնք չեն մասնակցում դրա իրականացմանը (այդպիսիք կարող են հանդիսանալ, օրինակ ժամկետանց դեղերի ոչնչացումը, աղտոտող նյութերի արտանետմամբ ուղեկցվող գործունեությունը և այլն), բ) գործունեության մեջ ներգրավվում են մասնակիցների անսահմանափակ շրջանակ, արտադրության մեջ ներառելով նրանց գույքը (ներդրումային հիմնադրամներ, բանկային գործունեություն), գ) գործունեությունը բավական շահութաբեր է և այդ պատճառով ենթակա է բարձր հարկման և լրացուցիչ վերահսկողության (օրինակ, ոգելից խմիչքների արտադրության, պահպանման և մեծածախ վաճառքի բնագավառի գործունեությունը) և այլն[1]:

Լիցենզիան իրենից ներկայացնում է թույլտվություն (իրավունք) լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու համար, որը տրվում է լիցենզավորող մարմնի կողմից իրավաբանական անձին կամ անհատ ձեռնարկատիրոջը: Օրենքի համաձայն, լիցենզիան իրենից ներկայացնում է լինցենզավորման ենթակա գործունեության տեսա-

[1] Տե՛ս, О.Олейник, Правовые основы лицензирования хозяйственной деятельности// Закон, 1994, N 6.

կով զբաղվելու իրավունքը հաստատող պաշտոնական թույլատվություն, ինչպես նաև այդ իրավունքը հաստատող պաշտոնական փաստաթուղթ: Լիցենզավորման ենթակա են գործունեության այն տեսակները, որոնց իրականացումը կարող է վնաս պատճառել քաղաքացիների առողջությանը, բարոյականությանը, իրավունքներին և օրինական շահերին, պետության պաշտպանությանն ու անվտանգությանը, և որոնց կարգավորումն անհնար է առանց լիցենզավորման մեթոդի կիրառման:

Լիցենզաները լինում են հետևյալ տեսակի՝

1) պարզ ընթացակարգով տրվող լիցենզիաներ (այսուհետև՝ պարզ լիցենզիա),

2) բարդ ընթացակարգով տրվող լիցենզիաներ (այսուհետ՝ բարդ լիցենզիա):

Պարզ լիցենզիան լիցենզավորող մարմնի կողմից տրված գործունեություն իրականացնելու թույլտվությունն է, որով սահմանվում են տվյալ գործունեության իրականացման համար պարտադիր պահանջներ կամ պայմաններ, և դրանց պահպանման նկատմամբ իրականացվում է օրենքով սահմանված հսկողություն: Այն տրվում է առանց լիցենզավորող հանձնաժողովի որոշման: Պարզ լիցենզիան տրվում է հայտատուի կողմից՝ քննարկվող օրենքով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելուց երեք օր հետո: Այն տրվում է անժամկետ:

Բարդ ընթացակարգով տրվող լիցենզիան լիցենզավորող մարմնի կողմից լիցենզավորման կարգերին համապատասխան տրվող գործունեություն իրականացնելու թույլտվությունն է, որով սահմանվում են նաև տվյալ գործունեության իրականացման համար պարտադիր պահանջներ կամ պայմաններ, և դրանց պահպանման նկատմամբ իրականացվում է օրենքով սահմանված կարգով հսկողություն:

Բարդ լիցենզիան տրվում է լիցենզիա ստանալու համար սույն օրենքով նախատեսված բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ 30 օրվա ընթացքում, եթե օրենքով այլ ժամկետ նախատեսված չէ: Այն տրվում է անժամկետ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ: Օրենքով նախատեսված դեպքերում բարդ լիցենզիան կարող է տրվել մրցույթով, որն իրականացվում է լիցենզավորման կարգերին համապատասխան: Բարդ լիցենզիաները տրվում են լիցենզավորող մար-

մինների կողմից ստեղծված լիցենզավորող հանձնաժողովների եզրակացությունների հիման վրա:

Լիցենզավորման միջոցով պետք է ապահովվի հանրային ու մասնավոր շահի զուգորդումը, դրանց համաչափ կիրառումը: Լիցենզավորման միջոցով հանրային շահի պաշտպանությունը պայմանավորված է նրանով, որ լիցենզավորմամբ վավերացվում է լիցենզավորվող կազմակերպությունների և գործունեության տեսակների հասարակական օգտակարությունը, որի միջոցով էլ իր հերթին որոշվում է դրանց արդյունավետությունը[1]: Լիցենզավորող մարմինների լիազորությունները բացի բուն լիցենզավորումից նաև ներառում է՝

1) լիցենզավորված սուբյեկտների կողմից լիցենզավորման պահանջների և պայմանների պահպանման վրա հսկողությունը,

2) լիցենզայի գործողության կասեցումը,

3) լիցենզիայի գործողության վերականգնումը,

4) լիցենզիայի առկայությունը հավաստող փաստաթղթերի վերաձևակերպումը,

5) լիցենզիայի գրանցամատյանի (ռեեստրի) ձևավորումը և վարումը:

Լիցենզավորման ենթակա գործունեությունն իրականացվում է միայն այն իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից, որին տրվել է լիցենզիա: Լիցենզավորված անձը Օրենքի համաձայն, իրավաբանական կամ ֆիզիկական անձը կամ անհատ ձեռնարկատերն է, ինչպես նաև պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին չհանդիսացող պետական կամ համայնքի հիմնարկը, որն օրենքով սահմանված կարգով ստացել է լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու լիցենզիա: Վերջինիս ժամկետը սահմանվում է գործունեության կոնկրետ տեսակի լիցենզավորման մասին փաստաթղթով:

Տարբեր պետություններում լիցենզիան տրվում է տարբեր ժամկետներով: Սովորաբար լիցենզիայի գործունեության ժամկետը մեկ տարուց պակաս չի լինում: Այն կարող է երկարացվել լիցենզավորվածի դիմումի հիման վրա, եթե այլ բան չի նախատեսված օրենքով: Ժամկետի երկարացումը կարող է մերժվել, եթե լիցենզիայի գործունեութ-

[1] Տե՛ս Ю,М.Тихомиров, Публичное право, М., изд-во Бек, 1995, էջ 76:

յան ընթացքում արձանագրվել են լիցենզիայի պահանջների և պայմանների խախտում: Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակն իրականացնելիս լիցենզավորվածների կողմից կատարման համար պարտադիր պահանջներից ու պայմաններից են՝ երկրի օրենսդրության պաշտպանությունը, բնապահպանական, սանիտարահամաճարակային, հիգենիկ, հակահրդեհային նորմերի ու կանոնների, ինչպես նաև լիցենզավորման ենթակա գործունեության կոնկրետ տեսակներին վերաբերող դրույթները:

Լիցենզավորման ենթակա այն տեսակների առնչությամբ, որոնց իրականացումը պահանջում է հատուկ գիտելիքներ, լիցենզիայի պահանջները և պայմանները լրացուցիչ կերպով կարող են ներառել որակավորման պահանջներ, որոնք ներկայացվում են լիցենզիայի հայտատուին կամ լիցենզավորվածին (եթե խոսքը լիցենզիայի ժամկետը երկարաձգելու մասին է): Օրենքի 13-րդ հոդվածով սահմանվել է, որ՝ ա) լիցենզավորման ենթակա գործունեության այն տեսակների համար, որոնց իրականացումը պահանջում է մասնագիտական գիտելիքներ, ՀՀ օրենսդրությամբ, ինչպես նաև լիցենզավորման կարգերով կարող են սահմանվել մասնագիտական որակավորման պահանջներ, բ) անձի մասնագիտական որակավորում ունենալու փաստը կարող է հաստատվել օրենսդրությամբ սահմանված կարգով տրված համապատասխան վկայականներով, դիպլոմներով, որակավորման դասերով կամ օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթերով: Անձի կողմից ոչ պակաս, քան 3 տարի անընդմեջ որոշակի պաշտոններում կամ որոշակի բնագավառներում աշխատանքներ կատարելու մասին աշխատանքային ստաժը նույնպես համարվում է անձի՝ տվյալ մասնագիտական որակավորում ունենալու փաստը հաստատող փաստաթուղթ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ, գ) օտարերկրյա պետությունների կողմից տրված մասնագիտական որակավորման փաստաթղթերը Հայաստանի Հանրապետությունում իրավական ուժ ունեն, եթե դա նախատեսված է օրենքով կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, դ) լիցենզիա տալու համար մասնագիտական որակավորման ստուգումներ կարող են անցկացվել միայն օրենքով նախատեսված դեպքերում՝ օրենքով կամ լիցենզավորման կարգերով նախատեսված կարգով ու պայմաններով և ե) մասնագիտական որակավորում ստանա-

լու, մասնագիտական որակավորման ստուգմանը (քննությանը) մասնակցելու կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու՝ ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով:

Հատուկ պայմաններ պահանջող լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների նկատմամբ լիցենզայի պայմանների և պահանջների մեջ լրացուցիչ կարող են ընդգրկվել հատուկ օբյեկտի համապատասխանության վերաբերյալ դրույթներ, որտեղ կամ ինչի օգնությամբ կատարվում է այդ տեսակի գործունեությունը: Հայտատուի դիմումի քննության համար սահմանվում է վճարի առավելագույն չափը: Սովորաբար լիցենզավորող մարմնի կողմից լիցենզիա տրամադրելու կամ այն մերժելու համար սահմանված ժամկետը չպետք է գերազանցի դիմումը բոլոր անհարժեշտ փաստաթղթերի հետ միասին ստանալու օրվանից հաշված 30 օրը:

Լիցենզիայի հայտատուն իրավունք ունի տվյալ երկրի օրենսդրությամբ նախատեսված կարգով բողոքարկել լիցենզավորող մարմնի մերժումը կամ անգործությունը: Լիցենզիայի պահանջների և պայմանների պահպանման վրա հսկողությունն իրականացնում են պետական վերահսկող կամ հսկող մարմիններն իրենց իրավասության շրջանակներում: Լիցենզավորող մարմինն օրենքով սահմանված դեպքերում կարող է կասեցնել կամ դադարեցնել լիցենզիայի գործողությունը:

Գործունեության այն տեսակը, որի կատարումը տվյալ պետության տարածքում պահանջում է օրենքին համապատասխան լիցենզիայի տրամադրում, համարվում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ: Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների ցանկը սահմանվում է օրենքով, և դրա ուժի մեջ մտնելու օրվանից լիցենզավորման ենթակա գործունեության այլ տեսակներ կարող են սահմանվել միայն վերը նշված ցանկում փոփոխություններ և լրացումներ կատարելու միջոցով: Լիցենզիան տրվում է լիցենզավորման ենթակա յուրաքանչյուր գործունեության համար:

Առևտրային բանկերին և վարկային կազմակերպություններին լիցենզիա է տրամադրում ՀՀ Կենտրոնական բանկը: Բանկային լիցենզիաների տրամադրման գործուն համակարգը իրենից ներկայացնում է բանկային գործունեության արդյունավետ հսկողություն ի-

ռականացնելու գործում առաջին քայլը, քանի որ հենց այդ քայլով է որոշվում շուկայում գործող բանկային կազմակերպությունների որակը[1]: Հարկ է նշել, որ բանկերի լիցենզավորման կանոնները ու մեթոդները որոշիչ դեր ունեն վերահսկողության մարմնի պարտականությունների շրջանակը սահմանելիս: Բանկերի լիցենզավորումը բանկային համակարգի կայունությունը պահպանելու ուղղությամբ տարվող աշխատանքի կարևորագույն տարրն է, քանի որ այն ֆինանսավարկային շուկա մուտք գործող նոր սուբյեկտների գործունեության նկատմամբ հսկողության հիմնական միջոցն է և դրա շնորհիվ երաշխավորվում են այն պայմաններն, որոնց համաձայն շուկայում կգործեն միայն այն անձինք, որոնք բավարարում են օրենսդրի կողմից ներկայացված պահանջներին:

Բանկերի լիցենզավորումը որպես գործընթաց ունի իր փուլերը: Այն սկսվում է լիցենզիայի նախնական հավանություն ստանալու միջնորդագիր ներկայացնելու պահից և ավարտվում է լիցենզիա տալու կամ լիցենզիա ստանալու դիմումը մերժելու պահին:

Լիցենզավորման ընթացակարգի փուլերն են.

1) լիցենզիա ստանալու նախնական հավանությունը,

2) բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի գրանցումը (որին արդեն անրադառձել ենք),

3) լիցենզիա տալը[2]:

ՀՀ Կենտրոնական բանկը լիցենզիա է տրամադրում նաև վարկային կազմակերպություններին, ներդրումային ընկերություններին և ապահովագրական ընկերություններին և այլն:

---

[1] Տե՛ս, Поллард А.М., Писсейк Ж.Г., Эллис К.Х., Дейли Ж.П., նշված աշխատությունը, էջ. 177-178:

[2] Տե՛ս ավելի մանրամասն՝ Ս. Մուրադյան, Է. Շաթիրյան, Ֆինանսական իրավունք (ուսումնական ձեռնարկ), Երևան 2010, էջ. 285-287:

ԳԼՈՒԽ 9.
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

§1. Հասարակական միավորումների վարչաիրավական կարգավիճակը

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը (28-րդ հոդված) ամրագրում է յուրաքանչյուր անձի իրավունքը՝ այլ անձանց հետ միավորումներ կազմելու և երաշխավորում է այդ միավորումների գործունեության ազատությունը:

Հասարակական միավորումների, ինչպես նաև դրանց առանձին տեսակների կազմակերպման, գործունեության և իրավական վիճակի հիմնախնդիրները կարգավորված են ՀՀ օրենսդրական ակտերով: Այդ ակտերի թվում են՝ «Հասարակական կազմակերպությունների մասին» 2001թ. դեկտեմբերի 4-ի, «Կուսակցությունների մասին» 2002թ. հուլիսի 3-ի, «Արհեստակցական միությունների մասին» 2000թ. դեկտեմբերի 5-ի, «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» 2002 թ. հունվար 4-ի ՀՀ օրենքները և այլն:

Դրա հետ մեկտեղ, պետք է նկատի ունենալ, որ Հանրապետությունում ներկայումս գործող ավելի քան չորս հազար հասարակական կազմակերպություններից ու միավորումներից[1] մեծ մասի վերաբերյալ չեն ընդունվել համապատասխան օրենքներ: Ուստի դրանց գործունեությունը, մինչև այդպիսի օրենքների ընդունումը, կարգավորվում է «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով (այսուհետև՝ Օրենք)[2]:

---

[1] Այսպես, միայն բնապահպանական հարցերով Հանրապետությունում կազմակերպվել և գործում են միջազգային, տարածաշրջանային, ազգային և տեղական մակարդակներում 77 ընկերություններ, միություններ, հիմնադրամներ, գիտահետազոտական կազմակերպություններ: Տե՛ս Окружающая среда и сообщества МПО (часть 1). Справочник неправительственных экологических организаций Азербайджана, Армении, Грузии. REC CAUCA-SUS, 2002, Էջեր 39-70:

[2] Օրենքի գործողությունը չի տարածվում կրոնական կազմակերպությունների, կուսակցությունների, արհմիությունների, հիմնադրամների, իրավաբանական անձանց միությունների, ինչպես նաև ոչ առևտրային կազմակերպությունների՝ օրենքով նախատեսված այլ ձևերի ու տեսակների վրա (1-ին հոդվածի 2-րդ կետ):

Ըստ այդ օրենքի, հասարակական կազմակերպությունը ներկայացված է որպես շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող (ոչ առևտրային) կազմակերպության՝ հասարակական միավորման տեսակ, որում իրենց շահերի ընդհանրության հիման վրա, օրենքով սահմանված կարգով, միավորվել են ֆիզիկական անձինք՝ ՀՀ քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք՝ իրենց ոչ կրոնական հոգևոր կամ ոչ նյութական այլ պահանջմունքները բավարարելու, իրենց և այլոց շահերը պաշտպանելու, հասարակությանը, նրա առանձին խմբերին նյութական և ոչ նյութական աջակցություն ապահովելու, հանրօգուտ այլ գործունեություն իրականացնելու նպատակներով (Օրենքի 3-րդ հոդված):

Բոլոր հասարակական միավորումներն ունեն միատեսակ յուրահատուկ գծեր՝

1) կազմավորված են ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից կամավորության հիմունքներով,

2) իրենց բնույթով չեն տիրապետում պետաիշխանական լիազորությունների և չեն հանդիսանում իրավաստեղծ գործունեության սուբյեկտներ: Նրանց իրավական բնույթի լիազորությունները սահմանված են միայն նորմատիվ իրավական ակտերով,

3) գործում են իրենց անունից,

4) չեն հանդիսանում առևտրային կազմակերպություններ, որոնց գործունեության նպատակը շահույթ ստանալն է:

Հասարակական միավորումների հսկայական զանգվածում կողմնորոշվելու համար ընդունված է դրանք դասակարգել ըստ որոշակի չափանիշների:

1. ***Ըստ կազմակերպաիրավական ձևերի*** տարբերվում են՝

ա) հասարակական կազմակերպություն, որը հիմնված է հասարակական միավորման անդամության վրա, և որի նպատակն է համատեղ ուժերով պաշտպանել միավորված քաղաքացիների ընդհանուր շահերը: Այդպիսի կազմակերպության անդամներ կարող են լինել, որպես կանոն, ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձինք,

բ) հասարակական շարժում, որը կազմված է միայն ֆիզիկական անձանցից (հասարակական միավորումները չեն կարող հանդես գալ

որպես նրա անդամներ), և որոնք հետապնդում են սոցիալական, քաղաքական և այլ հասարակական օգտակար նպատակներ,

գ) հասարակական հիմնադրամ, որը ոչ առևտրային հիմնադրամի տեսակ է: Դրա նպատակն է կամավոր մուծումների և այլ, օրենքով չարգելված եղանակներով միջոցների հավաքագրմամբ գույքի ձևավորումն է, որը նախատեսված է օգտագործել հասարակական-օգտակար նպատակների համար,

դ) հասարակական ինքնագործունեության մարմին, որն անդամություն չունեցող հասարակական միավորում է, որի նպատակն է ըստ բնակության վայրի աշխատանքի, կրթության ոլորտներում քաղաքացիների համար առաջացած տարբեր բնույթի սոցիալական հիմնախնդիրների համատեղ ջանքերով լուծումը: Նրանց որոշումները հաճախ ուղղված են ոչ միայն առանձին խումբ անձանց վերաբերող հիմնախնդիրների լուծմանը, այլև կարող են վերաբերել ըստ բնակության վայրի համապատասխան խնդիրներ ունեցող բոլոր քաղաքացիների շահերի պաշտպանությանը,

ե) միություններ (ասոցիացիաներ), որոնք կարող են ստեղծվել վերը նշված բոլոր հասարակական միավորումների կողմից՝ հիմնադիր պայմանագրի հիման վրա, կազմավորելով նոր հասարակական միավորում:

2. Հասարակական միավորումները սահմանազատված են նաև ***ըստ պետական գրանցում ունեցողների և այդպիսին չունեցողների***:

Գրանցված հասարակական միավորումները ձեռք են բերում իրավաբանական անձի կարգավիճակ, իսկ նրա ղեկավար մարմինը՝ ձեռք է բերում իրավունքներ և պարտականություններ իրականացնելու լիազորություն՝ իր կանոնադրությանը համապատասխան:

3. ***Ըստ տարածքային գործունեության ոլորտների*** հասարակական միավորումները լինում են՝ **համահայկական, միջմարզային, մարզային և տեղական,** որոնցից յուրաքանչյուրը գործում է համապատասխան տարածքի շրջանակներում:

Անշուշտ, հասարակական միավորումների դասակարգումը, ըստ նշված չափանիշների, չի սպառում դասակարգման ողջ համակարգը: Դրանք կարող են դասակարգվել նաև ըստ **սեռային հատկանիշի** (օրինակ կանանց հասարակական բազմապիսի ընկերություններն ու միությունները), ըստ **տարիքային հատկանիշի** (երիտասարդական

բազմատեսակ կազմակերպություններն ու միությունները, մանկապատանեկան հասարակական միավորումները), ըստ մասնագիտական չափանիշի (գրողների, արվեստագետների, իրավաբանների, բժիշկների և այլ մասնագիտությունների ներկայացուցիչների ամենատարբեր միություններն ու հասարակական այլ միավորումները) և այլն:

Հասարակական միավորումների խմբավորումն՝ ըստ նրանց բնութագրիչ հատկանիշների, հնարավորություն կտա ավելի արդյունավետ քննարկել նրանց վարչաիրավական կարգավիճակի հիմունքների բոլոր կապերն ու հարաբերությունները:

Հասարակական միավորումների վարչական իրավասուբյեկտությունը ներառում է նրանց իրավունքների և պարտականությունների ողջ համալիրը, որոնք վերջիններիս կողմից իրականացվում են գործադիր իշխանության սուբյեկտների և քաղաքացիների հետ փոխհարաբերություններում: Պետությունը, ամրագրելով հասարակական միավորումների վարչական իրավասուբյեկտությունը, դրանով իսկ սահմանում է այն վարչական իրավահարաբերությունների տեսակները, որոնց սուբյեկտների դերում կարող են հանդես գալ հասարակական միավորումները:

Հասարակական միավորումների կարգավիճակի առավել կարևոր հիմնախնդիրներն ամրագրված են «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում: Մասնավորապես, նրանում (օրենքում) սահմանվում են քաղաքացիների՝ միավորումներ կազմելու իրավունքի բովանդակությունը, այդ իրավունքի իրականացման հիմնական երաշխիքները, հասարակական միավորումների կարգավիճակը, դրանց կազմակերպման, գործունեության, վերակառուցման և լուծարման կարգը:

Ելակետային պահանջը հասարակական միավորումների կարգավիճակի սահմանման հարցում հանդիսանում է արգելքն այնպիսի միավորումների ստեղծման, որոնք կհետապնդեն հակաօրինական նպատակներ, և որոնց գործունեությունն ուղղված կլինի Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը բռնի տապալելուն, ազգային, ռասսայական, կրոնական ատելության բորբոքման, բռնություն և պատերազմ քարոզելուն (Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետ):

Հասարակական միավորման կազմակերպման և գործունեութ-

յան հիմնական փաստաթուղթը նրա կանոնադրությունն է, որի պատճառով Օրենքը լուրջ պահանջներ է ներկայացնում դրա (կանոնադրության) բովանդակությանը: Որպես կարևոր կանոնադրական սկզբունք, պետությունն իրավասու չէ ղեկավարելու հասարակական միավորումների գործունեությունը: «Արգելված է պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների ու նրանց պաշտոնատար անձանց միջամտությունը կազմակերպության գործունեությանը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի», – ամրագրված է Օրենքի 5-րդ հոդվածում (4-րդ կետ):

Դրա հետ մեկտեղ, օրենքով ամրագրված են որոշակի ոլորտներ, որոնց վերաբերյալ պետական և հասարակական միավորման մարմինները կարող են իրականացնել փոխգործունեություն: Այսպես, հասարակական միավորումներն իրենց կամ պետական մարմինների ու տեղական ինքնակառավարման մարմինների նախաձեռնությամբ կարող են պայմանագրային կամ փոխադարձ համաձայնության այլ ձևերով ամբողջությամբ իրականացնել կամ մասնակցել պետական մարմինների ու տեղական ինքնակառավարման մարմինների սոցիալական, առողջապահական, կրթական, դաստիարակչական, մշակութային, մարզական և այլ հասարակական նշանակություն ունեցող ծրագրերի, այլ միջոցառումների (Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ կետ):

Որպես կանոն, հասարակական միավորումն ինքնուրույն կերպով է իրականացնում իր կանոնադրական իրավունքներն ու ազատությունները: Մասնավորապես, հասարակական կազմակերպությունը, իր կանոնադրությամբ նախատեսված նպատակներն իրականացնելու համար, օրենքով սահմանված կարգով իրավունք ունի՝

1) կազմակերպել և անցկացնել խաղաղ, առանց զենքի ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր,

2) օրենքով սահմանված կարգով ներկայացնել ու պաշտպանել իր և իր անդամների իրավունքներն ու օրինական շահերն այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում,

3) համագործակցել ոչ առևտրային այլ կազմակերպությունների, այդ թվում՝ միջազգային և օտարերկրյա ոչ կառավարական ոչ առևտրային կազմակերպությունների հետ, ինչպես նաև համակարգված գործունեություն ծավալելու, ընդհանուր շահեր ներկայացնելու և

պաշտպանելու նպատակով այդ կազմակերպությունների հետ ստեղծել միություններ կամ անդամակցել նրանց ստեղծած միություններին՝ պահպանելով իր ինքնուրույնությունը և իրավաբանական անձի կարգավիճակը,

4) ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, հիմնարկներ, ստեղծել առևտրային կազմակերպություններ կամ մասնակից դառնալ այդպիսի կազմակերպություններին (Օրենքի 15-րդ հոդված):

Դրա հետ մեկտեղ, հարկ է նկատել, որ պետությունը, այնուամենայնիվ, որոշակի ձևերով ու եղանակներով ազդում է հասարակական միավորումների գործունեության վրա՝

1) արդարադատության նախարարությունը (լիազորված մարմինը) իրականացնում է հասարակական միավորման պետական գրանցումը,

2) հասարակական միավորմանը գրանցող պետական մարմինը վերահսկողություն է իրականացնում միավորման կողմից օրենքների պահանջների կատարման նկատմամբ, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև այլ իրավասու պետական մարմինները՝ իրենց իրավասության և ստուգումների ու ուսումնասիրությունների՝ օրենքով նախատեսված ընթացակարգերին համապատասխան,

3) հասարակական միավորման կողմից օրենքների պահանջների այնպիսի խախտումների հայտնաբերման դեպքում, որոնք կարող են վերացվել կազմակերպության ուժերով, պետական լիազորված մարմինը միավորում է ուղարկում գրավոր նախազգուշացում՝ առաջարկելով խախտումների վերացման կարգն ու ժամկետները (Օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետեր),

4) ֆինանսական մարմինները վերահսկում են միավորումների եկամուտների աղբյուրները, նրանց կողմից ստացված եկամուտների և վճարած հարկերի ծավալները,

5) պետական լիազորված մարմինը կարող է միավորումը լուծարելու պահանջով դիմել դատարան, եթե վերջինիս գործունեությունն ուղղված է սահմանադրական կարգը բռնի տապալելուն, բռնություն և պատերազմ քարոզելուն, թույլ է տվել օրենքի բազմակի կամ կոպիտ խախտումներ, կազմակերպության հիմնադրման ժամանակ թույլ է տրվել օրենքի էական խախտումներ կամ կեղծիքներ:

Հասարակական միավորումների համակարգում իր գործունեության կարևորությամբ և իրավական վիճակով առանձնանում են արհմիութենական կազմակերպությունները: Արհմիությունների կարգավիճակը սահմանված է «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքով (05.12.00):

Արհմիությունը հասարակական միավորում է, որը կամավորության սկզբունքով միավորում է աշխատողներին՝ նրանց աշխատանքային ու դրա հետ կապված սոցիալական և այլ շահերն ու իրավունքները ներկայացնելու և պաշտպանելու համար: Նրա նպատակն է պաշտպանել իր անդամների սոցիալական և աշխատանքային իրավունքները: Այդ խնդիրների իրականացման ժամանակ արհմիությունն անկախ է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, գործատուներից, այլ կազմակերպություններից և կուսակցություններից. նրանց հաշվետու չէ և նրանց կողմից վերահսկողության ենթակա չէ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի (նշված օրենքի 13-րդ հոդված):

Արհմիությունը պաշտպանում է իր անդամի աշխատանքային իրավունքները, բանակցություններ է վարում և իր ղեկավար մարմնի միջոցով գործատուի հետ կնքում է կոլեկտիվ պայմանագիր (նշված օրենքի 16-րդ հոդված), վերահսկում է դրա կատարումը: Արհմիությունը հսկում է աշխատանքային օրենսդրության պահպանությունը և պաշտպանությունը, իրավունք ունի օրենքով սահմանված կերպով կազմակերպել և անցկացնել խաղաղ, առանց զենքի ժողովներ, հանրահավաքներ, երթեր, ցույցեր, գործադուլներ, զանգվածային այլ միջոցառումներ, դրանց հետ կապված բանակցություններ վարել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, գործատուների, այլ կազմակերպությունների, նրանց պաշտոնատար անձանց հետ (նշված օրենքի 20-րդ հոդված):

Արհմիությունները տիրապետում են զգալի իրավաբանական հնարավորության ազդելու հանրապետության իրավաստեղծ գործընթացների վրա՝ աշխատողների սոցիալական և աշխատանքային իրավունքների պաշտպանության հարցերով: Մասնավորապես, արհմիությունը կարող է առաջարկություն ներկայացնել կառավարություն և ԱԺ պատգամավորներին՝ իր անդամների աշխատանքային և սոցիալական իրավունքների պաշտպանությանն ուղղված իրավական

նորմատիվ ակտեր ընդունելու, այդ ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ:

Արհմիություններն ունեն նաև հնարավորություն ազդելու (իհարկե անուղղակի կերպով) իշխանական կառույցների ձևավորման վրա: Այսպես, հաճախ խորհրդարանական ընտրությունների ժամանակ կուսակցությունների և արհմիութենական կազմակերպությունների միջև պայմանավորվածություն է ձեռք բերվում: Արհմիությունն օգնում է կուսակցությանը (համոզելով իր անդամներին քվեարկել նրա օգտին) խորհրդարանում ստանալու մեծամասնություն (կամ հնարավորինս շուտ պատգամավորական տեղեր), իսկ կուսակցությունը պարտավորվում է խորհրդարանական գործունեության ընթացքում նպաստել, որպեսզի արհմիությանը ձեռնտու տարբերակով օրինագիծ ընդունվի խորհրդարանի կողմից: Այդ ճանապարհով արհմիութենական կազմակերպություններն էական ազդեցություն են ունենում պետական իշխանության կազմակերպման և իրականացման վրա:

Օրենսդրությամբ սահմանված են արհմիությունների իրավունքների վերաբերյալ որոշակի երաշխիքներ: Մասնավորապես, նրանց (արհմիությունների) գործունեությունը կարող է կասեցվել կամ դադարեցվել միայն դատական կարգով:

§2. Կուսակցությունների վարչաիրավական կարգավիճակը

Ցանկացած ժողովրդավարական երկրի հասարակական-քաղաքական կյանքում մեծ է կուսակցությունների դերը: Դա բացատրվում է նրանով, որ միջկուսակցական պայքարի արդյունքում է ձևավորվում երկրի քաղաքական իշխանությունը: Ուստի այդ պայքարի արդյունքներից է կախված, թե տվյալ երկրում ում ձեռքում կգտնվի քաղաքական իշխանությունը, ինչ նպատակներով այն կօգտագործվի, ինչ ձևերով այն կիրականացվի, ում շահերին կծառայի: Ամբողջ խնդիրն այն է, որ խորհրդարանում մեծամասնություն ստացած կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ծրագրային դրույթները դրվում են պետության, նրա մարմինների գործունեության հիմքում:

ՀՀ Սահմանադրությունը (28-րդ հոդված) Հանրապետության քաղաքացիներին վերապահում է կուսակցություններ ստեղծելու և

դրանց անդամագրվելու իրավունք: Կուսակցությունն անհատական անդամության հիման վրա ստեղծված հասարակական միավորման տեսակ է, որի գոյության նպատակը հասարակության և պետության քաղաքական կյանքին մասնակցելն է: Այդ նպատակի իրականացման ընթացքում պետության և կուսակցությունների միջև առաջանում են երկրի համար առաջնային կարևորության մի շարք հարաբերություններ, որոնք հանգամանորեն կարգավորվում են «Կուսակցությունների մասին» 2002 թ. հուլիսի 3-ի ՀՀ օրենքով (այսուհետև՝ Օրենք):

Այդ հարաբերություններն առաջանում են կուսակցությունների ստեղծման պահից, որի գործընթացը մանրամասն կանոնակարգվում է Օրենքով, և դրան համաձայն, կուսակցության անդամներ կարող են լինել տասնութ տարին լրացած ՀՀ քաղաքացիները: Հայաստանի Հանրապետությունում ընտրական իրավունքով օժտված այլ անձինք կարող են անդամակցել կուսակցությանն առանց նրա ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմիններում ընտրվելու իրավունքի (Օրենքի 17-րդ հոդված):

Կուսակցությունն ստեղծվում է իր հիմնադիր համագումարում, որի ընթացքում որոշումներ են ընդունվում կուսակցության հիմնադրման, նրա ծրագրի ընդունման, կանոնադրության հաստատման, ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմինների կազմավորման մասին:

Կուսակցության և պետության միջև փոխհարաբերությունները իրավական բնույթ են ստանում կուսակցության՝ պետական գրանցումից հետո: Այն կատարում է պետական լիազոր մարմինը (արդարադատության նախարարությունը), որից հետո կուսակցությունը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ:

Պետական գրանցման մասին փաստը վկայող փաստաթուղթը իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում կատարված համապատասխան գրառումն է և դա հավաստող կուսակցությանը տրված՝ պետական գրանցման մասին վկայականը:

Պետական գրանցման համար կուսակցությունը, իր հիմնադիր համագումարի անցկացման օրվանից երեք ամսվա ընթացքում, լիազոր մարմնին է ներկայացնում՝ ա) քաղվածք հիմնադիր համագումարի արձանագրությունից (որը պետք է տվյալներ պարունակի կուսակցության ստեղծման, տարածքային ընդգրկման, կանոնադրության

հաստատման և ծրագրային փաստաթղթերի ընդունման, իր ղեկավար և վերահսկիչ մարմինների կազմավորման մասին), բ) կուսակցության ծրագիրը և կանոնադրությունը, գ) դիմում՝ գրանցող մարմնին, դ) պարբերական մամուլի օրինակը, որտեղ հրապարակվել է կուսակցության հիմնադիր համագումարի անցկացման մասին տվյալներ և ե) գրանցման տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը:

Նշված փաստաթղթերը ներկայացնելուց հետո պետական լիազոր մարմինը մեկամսյա ժամկետում կուսակցությանը տրամադրում է պետական գրանցման վկայական: Կուսակցության պետական գրանցումը կարող է մերժվել, եթե կանոնադրության կամ ծրագրի դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրությանը և օրենքներին, կամ չեն պահպանվել պետական գրանցման համար նշված պահանջները: Կուսակցության պետական գրանցման մերժումը կարող է վիճարկվել դատական կարգով:

Կուսացության վարչահիրավական կարգավիճակը որոշվում է վերջինիս (կուսակցության) և պետության միջև Օրենքով նախատեսված փոխադարձ իրավունքների և պարտականությունների ծավալով:

Ի տարբերություն հասարակական միավորումների, որոնք պետական իշխանության կազմակերպմանը և իրացմանն ունեն սոսկ անուղղակի մասնացություն, կուսակցությունները ՀՀ Սահմանադրության և ՀՀ օրենսդրության շրջանակներում անմիջականորեն և հրապարակայնորեն պայքարում են պետական իշխանության համար: Այդ պատճառով էլ կուսակցությունները Հանրապետության քաղաքական համակարգում իրենց խնդիրների արդյունավետ իրականացման համար օրենսդրությամբ տիրապետում են ավելի լայն իրավունքների, որպիսի հանգամանքը պայմանավորում է նրանց (կուսակցությունների) և պետական մարմինների ավելի սերտ հարաբերությունների ու փոխազդեցության առկայություն:

Այսպես, Օրենքը նրանց իրավունք է վերապահում՝ իր կանոնադրական խնդիրներին ու նպատաներին համապատասխան, ստեղծելու տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումներ, կազմակերպելու և անցկացնելու հավաքներ և հանրային միջոցառումներ, մասնակցելու պետական և տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմինների ընտրություններին, ինչպես նաև հանրաքվեների նախապատրաստմանն ու անցկացմանը, հասարակության

կյանքի տարբեր հարցերի վերաբերյալ հանդես գալու նախաձեռնություններով, առաջարկներ ներկայացնելու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ՝ հասարակության քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային կյանքի ցանկացած հարցերով և այլն (Օրենքի 20-րդ հոդված):

Նշված իրավունքներից բացի, Օրենքը կուսակցություններին օժտել է նաև որոշ բացառիկ լիազորություններով: Ըստ էության, կուսակցությունը միակ հասարակական միավորումն է, որին իրավունք է վերապահված թեկնածուներ առաջադրելու Ազգային ժողովի պատգամավորների, Հանրապետության Նախագահի, տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների և ավագանու ընտրություններում:

Կուսակցությունների կողմից իրենց այդ առաքելության արդյունավետ իրականացման համար պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններն օրենքով սահմանված կարգով նրանց ցուցաբերում են աջակցություն: Մասնավորապես, նշված մարմիններն ապահովում են իրենց հիմնադրած զանգվածային լրատվության միջոցներից կուսակցությունների օգտվելու հավասար պայմաններ, նրանց (կուսակցություններին) տրամադրում են իրենց պատկանող շինությունները, կապի միջոցները, նախընտրական քարոզչություն իրականացնելու համար կուսակցություններին և նրանց տարածքային ստորաբաժանումներին ապահովում են համապատասխան հնարավորություններով, պայմաններ են ստեղծում կուսակցությունների կողմից միջոցառումներ անցկացնելու համար (Օրենքի 26-րդ հոդված):

Կուսակցություններին պետական աջակցության կարևոր ձև է պետական բյուջեի միջոցների հաշվին նրանց ֆինանսավորումը: Կուսակցությունների ֆինանսավորման համար Հանրապետության պետական բյուջեի միջոցները տրամադրվում են առանձին հոդվածով:

Հարկ է նկատել, որ պետական բյուջեի նշված միջոցներից կատարվող հատկացումները չեն տրամադրվում բոլոր կուսակցություններին, այլ միայն նրանց, որոնց ընտրական ցուցակը ԱԺ վերջին ընտրությունների ժամանակ ստացել է քվեարկությանը մասնակցած բոլոր կուսակցությունների ընտրական ցուցակների օգտին կողմ տրված ձայների ընդհանուր թվի և անճշգրտությունների թվի գումարի

առնվազն 3 տոկոսը: Ընդ որում, կուսակցություններին պետական բյուջեից հատկացվող միջոցները վերջիններիս միջև բաշխվում են ԱԺ վերջին ընտրություններում համամասնական ընտրակարգով նրանց ստացած ձայներին համամասնորեն:

Բացի պետական բյուջեի տրամադրած միջոցներից, կուսակցությունները կարող են ունենալ նաև գույք և այլ եկամուտներ: Դրանք գոյանում են կուսակցությանն անդամագրվելու համար միանվագ կատարվող վճարումներից (մուտքի վճար), սահմանված չափով կուսակցության անդամների կողմից պարբերաբար կատարվող վճարներից (անդամավճար), նվիրատվություններից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

Օրենքն սպառիչ կերպով սահմանում է բոլոր այն սուբյեկտների շրջանակը, որոնք կարող են կուսակցություններին կատարել նվիրատվություն, նվիրատվության ձևը (գույք, դրամական միջոցներ, կատարված աշխատանքներ ու ծառայություններ), չափը, մատուցման պարբերականությունը, ինչպես նաև նվիրատվությունը բացառող հանգամանքները: Այսպես, կուսակցություններն իրավունք ունեն գույքի, այդ թվում՝ դրամական միջոցների տեսքով նվիրատվություններ ստանալու ֆիզիկական և իրավաբանական անձանցից, որի ընդհանուր չափը՝ դրամական արտահայտությամբ, մեկ տարվա ընթացքում չի կարող գերազանցել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի միլիոնապատիկը:

Դրա հետ միասին, Օրենքն արգելում է կուսակցություններին նվիրատվություններ ստանալու բարեգործական կամ կրոնական կազմակերպություններից, պետական և համայնքային բյուջեներից և (կամ արտաբյուջետային միջոցներից), պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններից և պետական ու համայնքային մասնակցությամբ առևտրային կազմակերպություններից, օտարերկրյա պետություններից, օտարերկրյա քաղաքացիներից ու իրավաբանական անձանցից, քաղաքացիություն չունեցող անձանցից և անանուն անձանցից (Օրենքի 25-րդ հոդված):

Օրենքով սահմանված չափից (դրամական արտահայտությամբ) ավելի ստացած նվիրատվությունները կուսակցությունները պարտավոր են օրենքով սահմանված ժամկետում փոխանցել պետական բյու-

ջե կամ նվիրատուին, հակառակ դեպքում կուսակցության համապատասխան պաշտոնատար անձը օրենքով սահմանված կարգով կենթարկվի պատասխանատվության:

Պետության ընդգծված հոգատարությունը կուսակցությունների նյութական ապահովության գործում պայմանավորված է նրանով, որ մեծ չափով ֆինանսավորումից է կախված կուսակցությունների գործունեության արդյունավետությունը ոչ միայն ՀՀ քաղաքական համակարգում, այլ նաև Հանրապետության ամբողջ կուսակցական համակարգում: Այդ է պատճառը, որ կուսակցությունների ֆինանսական խնդիրների առանձին կողմերն ստացել են սահմանադրական կարգավորում: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 7-րդ հոդվածի համաձայն. «Կուսակցություններն ապահովում են իրենց ֆինանսական գործունեության հրապարակայնությունը»:

Սահմանադրության այդ նորմի պահանջներին համապատասխան, Օրենքը մանրամասն կարգավորում է կուսակցությունների ֆինանսական հաշվետվությունների ներկայացման կարգը պետական մարմիններին: Այսպես, կուսակցությունը պարտավոր է յուրաքանչյուր տարի՝ հաշվետու տարվան հաջորդող մարտի 25-ից ոչ ուշ, մամուլում հրապարկել հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ստացած և ծախսած միջոցների մասին հաշվետվություն և օրենքով նախատեսված դեպքերում՝ դրա վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը, ինչպես նաև սահմանված կարգով այն տեղադրել ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում:

Հաշվետվությունը պետք է տվյալներ պարունակի կուսակցության հաշվում մուտք արված միջոցների աղբյուրների և ծավալի, այդ միջոցների ծախսման, ինչպես նաև ունեցած գույքի մասին՝ նշելով դրա արժեքը (Օրենքի 28-րդ հոդված):

Կուսակցության կողմից նախընտրական քարոզչության նախապատրաստման և իրականացման համար ծախսված միջոցների հաշվառումը կատարվում է ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված կարգով (26-27-րդ հոդվածներ)՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ողմից ձևավորված վերահսկիչ-վերստուգիչ ծառայության կողմից (28-րդ հոդված):

Կուսակցության համապատասխան պաշտոնատար անձը (ղեկավարը) պատասխանատվություն է կրում նշված հաշվետվությունները չհրապարակելու կամ չներկայացնելու կամ օրենքով սահմանված կարգին չհամապատասխանող հաշվետվություններ հրապարակելու կամ ներկայացնելու դեպքում:

Կարևորելով կուսակցությունների առանձնակի դերը քաղաքական համակարգում և նրանց վերապահելով լայն լիազորություններ երկրի հասարակական-քաղաքական կյանքում, ՀՀ Սահմանադրությունը և ընթացիկ օրենսդրությունը միաժամանակ վերջիններիս համար նախատեսում են մի շարք պարտականություններ: Այդ առնչությամբ, Հանրապետության Հիմնական օրենքը կուսակցություններին, վերապահելով ժողովրդի քաղաքական կամքի ձևավորման և արտահայտման առաքելությունը, պահանջում է, որպեսզի նրանց գործունեությունը չհակասի Սահմանադրությանը, իսկ գործելակերպը՝ ժողովրդավարության սկզբունքներին (7-րդ հոդված): Ավելին, կուսակցությունները պարտավոր են պահպանել ՀՀ Սահմանադրությունը և օրենքները, ինչպես նաև իրենց կանոնադրություններում, ծրագրերում և որոշումներում ամրագրված դրույթները:

Եթե կուսակցությունը խախտում է ՀՀ Սահմանադրությամբ, Հանրապետության օրենսդրությամբ և իր ծրագրով ու կանոնադրությամբ նախատեսված հանձնարարականները և իրականացնում է այնպիսի գործունեություն, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի և ՀՀ տարածքային ամբողջականության բռնի փոփոխությանը, զինված կազմավորումների ստեղծմանը, ազգային, ռասայական, կրոնական ատելության բորբոքմանը, բռնություն և պատերազմ քարոզելուն, ապա կուսակցության գործունեությունը կարող է արգելվել Հանրապետության Նախագահի դիմումի հիման վրա՝ ՀՀ սահմանադրական դատարանի որոշմամբ:

ՀՀ սահմանադրական դատարանի որոշմամբ կուսակցության գործունեության արգելման դեպքում կուսակցությունը ենթակա է լուծարման:

§3. Կրոնական կազմակերպությունների վարչաիրավական կարգավիճակի առանձնահատկությունները

ՀՀ Սահմանադրությունն ամրագրվում է յուրաքանչյուր անձի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը: Այդ իրավունքը ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը և դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ քարոզի, եկեղեցական արարողությունների և պաշտամունքի այլ ծիսակատարությունների միջոցով արտահայտելու ազատությունը (26-րդ հոդված):

Դրա հետ մեկտեղ, ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդվածի համաձայն, յուրաքանչյուր ոք ունի այլ անձանց հետ միավորումներ կազմելու իրավունք, որի տեսակներից է համարվում կրոնական կազմակերպությունը, որը ստեղծվում է հավատի համատեղ ղեկավարության, ինչպես նաև կրոնական այլ պահանջմունքների բավարարման նպատակով:

Այդպիսի միավորումների իրավական վիճակի հիմնական չափանիշները որոշված են «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» 1991թ. հունիսի 17-ին ընդունված ՀՀ օրենքով (այսուհետև սույն պարագրաֆում՝ Օրենք): Նրանում ամրագրված են պետության և կրոնական կազմակերպությունների փոխհարաբերությունների սկզբունքային հիմնադրույթները, ինչպես նաև այդ կազմակերպությունների իրավասուբյեկտության ծավալները:

Նշված հիմնախնդիրների օրենսդրական կարգավորումը նպատակ ունի, մի կողմից, ստեղծելու բարենպաստ պայմաններ քաղաքացիների համար իրականացնելու կրոնական դավանանքի ազատության իրենց իրավունքը, մյուս կողմից, թույլ չտալու այդ իրավունքի չարաշահումներ, ոտնձգություններ անձի, նրա իրավունքների և ազատությունների դեմ:

Հայաստանի Հանրապետությունում եղեկեցին անջատված է պետությունից: Դա նշանակում է, որ չնայած պետությունը ինքն է սահմանում խղճի և կրոնական դավանանքի ազատության իրավունքի իրականացման իրավական ռեժիմը, սակայն նա չի միջամտում եկեղեցու և կրոնական կազմակերպությունների՝ օրենքին համապատասխանող գործունեությանը և ներքին կյանքին: Հանրապետությունը

ճանաչում է Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու ինքնակառավարումը իր նվիրապետության սահմաններում: Ուստի արգելված է եկեղեցիների և կրոնական կազմակերպությունների կառուցվածքում որևէ պետական մարմնի կամ նրա հանձնարարությունները կատարող անձի գործունեությունը:

Օրենքն արգելում է նաև եկեղեցու մասնակցությունը պետական կառավարմանը, եկեղեցու և կրոնական կազմակերպությունների վրա չի դնում որևէ պետական գործառնություն (17-րդ հոդված):

Սահմանադրական բարեփոխումների (2005 թ. նոյեմբերի 27-ի) արդյունքում Հիմնական օրենքում ամրագրվեց նոր՝ 8.1-րդ հոդվածը, որով ճանաչվում է Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու, որպես ազգային եկեղեցու, բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում:

ՀՀ Սահմանադրության այդ նորմի հիման վրա 2007 թ. փետրվարի 22-ին ընդունվեց «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենք, որով կարգավորվում են ՀՀ և նրա կողմից ազգային ճանաչված եկեղեցու առանձնահատուկ հարաբերությունները (4-րդ հոդված):

Օրենքով Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցուն իրավունք վերապահվեց ՀՀ օրենսդրության շրջանակներում հիմնելու կամ հովանավորելու նախադպրոցական հաստատություններ, տարրական, միջնակարգ և ավագ դպրոցներ, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններ, մասնակցել պետական կրթական հաստատություններում «Հայ եկեղեցու պատմություն» առարկայի ուսումնական ծրագրի և դասագրքի մշակմանը, նպաստելու հասարակության հոգևոր կրթությանը կրթական հաստատություններում՝ օրենքով սահմանված կարգով և այլն (8-րդ հոդված): Ընդ որում, Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու ստեղծած ուսումնական հաստատությունները պետք է ստանան այն աջակցությունները, որը պետությունը ցուցաբերում է մասնավոր հաստատություններին:

Պետության և Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու

միջև առանձնահատուկ հարաբերություններից է նաև այն, որ Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է՝ ՀՀ կառավարության և Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու միջև ստորագրված համաձայնագրով սահմանված կարգին համապատասխան, Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ կանոնական ծեսով իրագործած ամուսնություններն ու հոչակած ամուսնալուծությունները: Բացի այդ, Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցուն իրավունք է վերապահված ունենալու մշտական հոգևոր ներկայացուցիչ՝ հիվանդանոցներում, մանկատներում, տուն-ինտերնատներում, ազատազրկման վայրերում, ներառյալ՝ քննչական մեկուսարաններում:

Օրենքն առանձին հոդված է նվիրել Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու և Հանրապետության իրավապահ մարմինների փոխհարաբերությունների կարգավորմանը: Ըստ այդ հոդվածի (12-րդ). «Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է եկեղեցական խոստովանության գաղտնիությունը: Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու հոգևորական-խոստովանահայրը՝ որպես վկա, չի կարող հարցաքննվել այն հանգամանքների մասին, որոնք նրան հայտնի են դարձել խոստովանության ժամանակ»:

Կրոնական կազմակերպությունների գործունեությունը և սեփականությունը (մյուս հասարակական միավորումների նման հավասարապես) պաշտպանվում է պետության կողմից: Միևնույն ժամանակ Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցին, որպես ազգային եկեղեցի, որը գործում է նաև Հանրապետության տարածքից դուրս, ենթակա է Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը՝ միջազգային իրավական նորմերի ընձեռած հնարավորությունների սահմաններում:

Կրոնական կազմակերպությունները գործում են իրենց կանոնադրության հիման վրա, որը տվյալներ է պարունակում կազմակերպության բնույթի և գործելու վայրի, ղավանական պատկանելության, կրոնական միավորման կառուցվածքի, գույքային դրության, ձեռնարկություններ, ուսումնական և հրատարակչական հաստատություններ հիմնելու և կազմակեպության գործունեության այլ առանձնահատկությունների մասին: ***Կառավարության աշխատակազմի կրոնական կազմակերպությունների և ազգային փոքրամասնությունների հարցե-***

ռով վարչությունում (լիազոր պետական մարմինը) գրանցվելուց հետո կրոնական կազմակերպությունը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ: Գրանցվելու համար կրոնական կազմակերպությունն այդ մարմնին ներկայացնում է իր կանոնադրությունը և Օրենքի 5-րդ հոդվածում նշված պայմանները հավաստող փաստաթղթեր:

Կրոնական կազմակերպության գրանցման կամ գրանցումը մերժելու որոշումը՝ մերժման հիմքերի նշումով, մեկամսյա ժամկետում գրավոր ձևով հանձնվում է դիմողին: Մերժման համար հիմք կարող է հանդիսանալ նրա կանոնադրության՝ ՀՀ գործող օրենսդրությանը հակասելը:

Գրանցման վերաբերյալ կրոնական կազմակերպության դիմումի մերժումը կամ որոշման կայացման վերաբերյալ օրենսդրությամբ նախատեսված ժամկետի խախտումը կարող է գանգատարկվել դատական կարգով:

Կրոնական կազմակերպությունների կանոնադրությունները գրանցող լիազոր պետական մարմինը կարգավորում է նաև պետության և կրոնական կազմակերպությունների հարաբերությունները: Լիազոր պետական մարմինը կարող է դիմել դատարան՝ օրենքը խախտող կրոնական կազմակերպությունը լուծարելու միջնորդությամբ: Նա կրոնական կազմակերպության խնդրանքով, աջակցում է նրանց առանձին հարցերի շուրջ պետական մարմինների հետ համաձայնության գալուն և անհարժեշտ օգնություն է ցույց տալիս այդ հարցերի լուծմանը՝ պետական մարմինների կողմից: Բացի այդ, լիազոր պետական մարմինը պետության անունից որպես միջնորդ մասնակցում է Հայաստանի կրոնական կազմակերպությունների միջև ծագող հարցերի և վեճերի լուծմանը:

ՀՀ Սահմանադրությամբ և օրենսդրությամբ նախատեսված բոլոր քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները տարածվում են նաև կրոնական կազմակերպությունների անդամների և պաշտամունքի ծառայողների վրա՝ այլ քաղաքացիների հետ համահավասար: Ուստի, նշված անձինք (կրոնական կազմակեպությունների անդամները և պաշտամունքի ծառայողները) այլ քաղաքացիների նման ենթակա են պատասխանատվության՝ Հանրապետության գործող օրենսդրությունը խախտելու դեպքում: Իհարկե, քաղաքացիա-

կան պարտականությունների և կրոնական համոզմունքների հակասության առանձին դեպքերում քաղաքացիական պարտականությունների կատարման հարցը կարող է լուծվել այլընտրանքային սկզբունքով՝ օրենքով նախատեսված կարգով համապատասխան պետական մարմնի և տվյալ կրոնական կազմակերպության փոխադարձ համաձայնությամբ:

Կրոնական կազմակերպության գործունեությունը կարող է դադարել հիմնադիրների ընդհանուր ժողովի կողմից, դատարանի որոշումով, եթե կրոնական կազմակերպության գործունեությունը հակասում է նրա կանոնադրությանը և Հանրապետության օրենսդրությանը:

ԲԱԺԻՆ ԵՐՐՈՐԴ
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՁԵՎԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ: ՀԱՏՈՒԿ ՎԱՐՉԱԻՐԱՎԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 10.
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՁԵՎԵՐԸ

§1. Պետական կառավարման ձևի հասկացությունը

Պետական կառավարման գործունեության ձևերը և մեթոդներն առավելապես առնչվում են այդ ոլորտում պրակտիկ գործունեության և իրականացման խնդիրների, գործառույթների ու լիազորությունների կառուցակարգերի հետ: Այս առումով պետական կառավարման արդյունավետությունը կախված է մի շարք գործոններից, այդ թվում նաև նրանից, թե ինչ չափով են զարգանում և կատարելագործվում դրա ձևերն ու մեթոդները: Բացի այդ, պետական կառավարման արդյունավետությունը պայմանավորված է նաև գործունեության բազմազան ձևերի ճիշտ օգտագործմամբ, որոնց խելամիտ գործադրումը նպաստում է գործադիր իշխանության պատշաճ արդյունավետությանը, ինչպես նաև ներքին կազմակերպական և արտաքին կապերի կատարելագործմանը: Դրա հետ մեկտեղ, կառավարման ձևերն ու մեթոդները պետք է հնարավորինս համապատասխանեն տվյալ ժամանակաշրջանի հասարակական հարաբերությունների պահանջներին:

«Պետական կառավարման ձև» եզրույթը գիտագործնական կտրվածքով օգտագործվում է, որպես նույնարժեք մի շարք այլ եզրույթների՝ «կառավարման ձև», «կառավարչական գործունեության ձև», «գործադիր իշխանության իրականացման ձև» հետ միասին: Դրանցից յուրաքանչյուրն էլ կարող է հավասարապես կիրառվել, և չարժե նախապատվությունը տալ դրանցից որևէ մեկին, քանի որ էականը տվյալ դեպքում այն բովանդակությունն է, որը նկատի է ունեցվում այս կամ այն եզրույթի ներքո, քանզի եզրույթները սոսկ պայմանական բնույթ ունեն:

Պետական կառավարման ձևերն ունեն իրավաքաղաքական էական նշանակություն, դրանց ընտրությունը չի կարող թողնվել ամբողջությամբ պետական կառավարման մարմնի հայեցողությանը, քանզի դրանք ևս անմիջականորեն առնչվում են մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության արդյունավետության հետ: Ձևերի հստակ ամրագրումը երաշխիք է, որպեսզի պետական կառավարումն իրականացվի կանխատեսելի ու հրապարակային ընթացակարգերով:

Այսպիսով, պետական կառավարման ձևի ընտրության հիմքում ընկած է հենց մարդկանց իրավունքների և ազատությունների հնարավորինս արդյունավետ պաշտպանության մեկնակետը: Այսպես, օրինակ, վարչական ակտ ձևի ընտրությունը (բանավոր կամ գրավոր) պետք է պայմանավորված լինի ոչ թե կառավարման ծախսերի կրճատման, այլ անձանց իրավունքների պաշտպանության ընթացակարգերն առավել դյուրին դարձնելու նկատառումով: Եթե պետական կառավարման ձևի որևէ տարր բավարարում է սոսկ վարչական մարմինների գործունեության արդյունավետությանը (օրինակ՝ մարդկային կամ նյութական ռեսուրսների խնայողությանը), սակայն առաջացնում է անհամաչափ բարդություններ մարդկանց համար, ապա այն չի կարող իրավաչափ համարվել:

Սահմանադրության 5-րդ հոդվածում ամրագրված իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը նպատակ ունի իշխանության թևերն ապահովել ինչպես գործառութային որոշակիությամբ, այպես էլ գործունեության կառուցակարգերով: Քանի որ պետական կառավարման համակարգի ձևը կապված է բազմազան կողմերից ու կառուցակարգերից, ուստի այն իրենից բավականին դժվարություն է ներկայացնում: Հենց դրանց իրականացումը հարաշարժուն բնույթ է հաղորդում պետական կառավարմանը, դրա բովանդակությանն ու ուղղվածությանը: Ամենօրյա պետական կառավարումն իր բնույթի և գործունեության առանձնահատուկ ուժով իրականացվում է ոչ թե ինքնաբերաբար, այլ յուրահատուկ սուբյեկտների՝ պետական կառավարման մարմինների (պաշտոնատար անձանց) կողմից:

Ըստ վարչական իրավունքի տեսաբանների, այդպես է առաջա-

նում հատուկ գիտագործնական կատեգորիան՝ պետական-կառավարչական գործունեության (կառավարման) ձևը կամ գործադիր իշխանության իրականացման ձևը: Ընդ որում, գործադիր իշխանության նկատմամբ կիրառելիս կառավարման ձևը միջոց է հանդիսանում արտահայտելու դրա պետական-իրավական բովանդակությունը[1]: Եվ պատահական չէ, որ իրավունքի տեսության մեջ կարևոր նշանակություն են տալիս պետական կառավարման կամ գործադիր իշխանության գործունեության վարչաիրավական (կամ վարչաիրավական) ձևերի բովանդակությանն ու բնույթին:

Շատ բաներ կախված են նրանից, թե ինչպես են կանոնակարգված իշխանության երեք թևերի մարմինների փոխհարաբերությունները: Իշխանության յուրաքանչյուր թև, հատկապես գործադիր իշխանության, իր բնույթով և գործունեությամբ պահանջում է առավել օպերատիվ միջոցներ, ձևեր ու մեթոդներ գործնական խնդիրների ու գործառույթների իրականացման համար: Սակայն, խոսքն անխտիր չի վերաբերվում բոլոր միջոցներին ու ձևերին, այլ միայն հատկապես որոշակի ձևերին, որոնց օգտագործման դեպքում պետական կառավարման մարմինները կոչված են ապահովելու իրենց վերապահված լիազորությունների արդյունավետ կատարումը: Նշված հիմնահարցերը պարզելու համար անհրաժեշտ է առաջին հերթին իմանալ, թե ինչ է նշանակում պետական կառավարման (գործադիր գործունեության) ձև:

Վարչաիրավական գրականության մեջ կարծիք է հայտնվել, որ պետական կառավարման ձևեր են համարվում կառավարման մարմինների գործունեության այն տեսակները, որոնք արտաքին դրսևորում ունեն: Հիմնականում ճիշտ համարելով նշված բնորոշումը, միաժամանակ գտնում են, որ այն չի բովանդակում գործադիր մարմինների ավելի կոնկրետ, տարբերակված գործունեության ձևեր: Մեկ այլ կարծիքի համաձայն, պետական կառավարչական գործունեությունն անհրաժեշտ է հասկանալ լայն իմաստով՝ որպես գործադիր մարմինների (պաշտոնատար անձանց) գործառույթի ընթացքում կատարած ամբողջական գործունեություն, ընդգրկելով նաև այնպիսինե-

[1] Տե՛ս Административное право / Под ред. Ю.М. Козлова, Л.Л. Попова), էջ 255:

ը, որոնք չեն կրում իրավաբանական ուղղակի ներգործություն[1]:

Ըստ վերը շարադրվածի, պետական կառավարման ձևը կառավարում իրականացնող մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության էության օբյեկտիվացված արտահայտությունն է: Կառավարման ձևի միջոցով գործնականում իրականացվում են կառավարման խնդիրներն ու գործառույթները: Սակայն, անհաժեշտ է նկատի ունենալ, որ մեծապես կառավարման ձևի ընտրության տեսակից է կախված ինչպես կառավարման գործունեության արդյունավետությունը, այնպես էլ գործառույթների նպատակային կատարումը:

Պետական կառավարման ձևն իր գործնական գործողություններում արտահայտում է նաև տվյալ մարմնի (պաշտոնատար անձի) լիազորությունների շրջանակը: Ընդ որում, այդ լիազորություններն իրականացնելու համար տարբեր կառավարչական հարաբերություններում օգտագործվում են տարբեր ձևեր՝ ընդհուպ մինչև իր լիազորություններով նախատեսված իրավաբանական բնույթի արտաքին ներգործության գործունեություն, որոնք ամփոփ որակվում են որպես վարչաիրավական ձևեր, հակառակ դեպքում պետական կառավարումը չի կարող հասնել իր նպատակին: Բնականաբար, վերջիններիս կատարման արդյունքների նկատմամբ պետք է իրականացվի ինչպես արտաքին (օրինակ, քաղաքացիների, ստորադաս մարմինների, պաշտոնատար անձանց), այնպես էլ ներկազմակերպական ու ներգերատեսչական (օրինակ, ներքին պարտականությունների բաժանումը, դիմումների, բողոքների և առաջարկությունների քննարկման) վերահսկողության:

Ընդհանուր գիտական մեկնաբանությամբ «ձևը» օրգանապես կապված է այդ կարգի այլ եզրույթի՝ «բովանդակության» հետ: Չև ասելով ենթադրվում է բովանդակության այս կամ այն տարբերակի արտահայտություն: Գործադիր իշխանության կտրվածքով ձևը հանդիսանում է դրա պետական-իրավական բովանդակության արտահայտման միջոց: Պետական կառավարման բովանդակությունը բացահայտվում է ոչ միայն դրա գործառույթների, այլև դրա սուբյեկտների լիազորությունների մեջ, այսինքն՝ պետական-կառավարչական գործունեություն իրականացնելիս:

---

[1] Տե՛ս Габричидзе Б.Н., Чернявский А.Г., Ким-Кимен А.Н., նշված աշխ., էջ 204:

Վարչահիրավական գրականության մեջ մասնագետների մեծամասնության կարծիքով կառավարման ձևերը կարող են հանդես գալ՝ ա) գործադիր իշխանության իրականացման ձևով և բ) պետական կառավարչական գործունեության ձևով:

Թվարկվածների մեջ առաջնությունը տրվում է գործադիր իշխանության իրականացման ձևին, քանզի այն արտահայտում է արտաքին-իրավական ներգործություն՝ իրեն վերապահված իրավաբանական-իշխանական լիազորություն, որն իրականացվում է կառավարման օբյեկտների հետ հարաբերություններում:

Պետական կառավարչական գործունեության ձևը ենթադրում է գործադիր մարմինների (պաշտոնատար անձանց) գործառույթների ընթացքում իրականացվող գործողությունների ամբողջություն, ներառելով նաև գործադիր իշխանության իրականացման ձևերը: Ընդ որում, ներկազմակերպական գործողություններն արտահայտվում են անմիջական կառավարչական ներգործության շրջանակներից դուրս:

Վերոհիշյալ դրույթները, ինչպես նաև մասնագետների կարծիքները թույլ են տալիս հաստատելու, որ կառավարման ձևը պետական կառավարման մարմնի (պաշտոնատար անձի) կողմից իր լիազորությունների շրջանակներում իրականացվող և որոշակի հետևանքներ առաջացնող արտաքուստ արտահայտված գործունեություն է:

§2. Պետական կառավարման ձևերի տեսակները

Պետական կառավարման ձևերը և մեթոդները մշտապես եղել են բազմակողմանի քննարկման առարկա: Կառավարչական գործունեությունը, լինելով վարչական իրավունքի հիմնաքարը և, նկատի ունենալով այդ համակարգում պետական կառավարման ձևերի բազմազանությունն ու նշանակությունը, վարչական իրավունքի մասնագետների կողմից դասակարգվում են որոշակի հատկանիշներով: Ընդ որում, դրանք դասակարգելիս հաշվի են առնվում տարբեր պայմանների ներգործությունը կառավարչական գործունեության նկատմամբ (օրինակ, պետական կառավարման մարմնի (պաշտոնատար անձի) լիազորությունների առանձնահատկությունները կամ տվյալ մարմնի կողմից լուծվող հարցերի յուրահատկությունները):

Այս կամ այն ձևի ընտրության հարցը կախված է բազմապիսի հանգամանքներից: Միաժամանակ, մասնագիտական գրականության մեջ կառավարման ձևերը հաճախ մեկնաբանվում են, որպես «կառավարման մարմինների գործունեության տեսակ՝ դրանց արտաքին արտահայտության տեսակետից»[1], կամ «պետական կառավարման մարմինների կողմից կատարվող արտաքին գործնական կոնկրետ գործունեության արտահայտություն»[2]: Նշված տեսակետներն ընդունվում են վարչագետների կողմից, շեշտը դնելով պետական կառավարման մարմնի գործունեության իրավական հետևանքների վրա:

Պետական կառավարման մարմինների գործունեության ձևերի դասակարգման առնչությամբ վարչագետները տարբեր կարծիքներ են հայտնել, նկատի ունենալով կառավարման գործընթացի հստակ ըմբռնման տեսական և գործնական նշանակությունը: Չնայած դրան, գիտական գրականությունը միշտ չէ, որ *կառավարչական գործունեությունից* առանձնացնում է *կառավարման գործընթացը*: Նշված դասակարգմանը համապատասխան, առանձնացվում են պետական կառավարման մարմինների կողմից իրավական ակտերի ընդունման, նյութատեխնիկական, կազմակերպական և գործունեության այլ ձևերը[3]:

Այնուամենայնիվ, մասնագետների մեծամասնության կարծիքով պետական կառավարման իրականացման ձևերը պետք է տարբերակել երկու խմբի՝ ***իրավական*** և ***ոչ իրավական:***

Իրավական ձևերը մշտապես առաջ են բերում ստույգ արտահայտված իրավաբանական հետևանքներ և, ըստ էության, համարվում են պետական կառավարման իրականացման ձևեր: Այս հենքի վրա փոխհարաբերություններ են առաջանում պետական կառավարման սուբյեկտի և օբյեկտի միջև: Պետական կառավարման իրավական ձևերը, որպես կանոն, պահանջում են որոշակի և տարբեր աստիճանի իրավաբանական կանոնակարգում:

Բնականաբար, պետական կառավարման արտաքին ներգործությունը վարչահիրավական հարաբերության մյուս կողմի (մասնակ-

---

[1] Տե՛ս Советское административное право. Учеб. для вузов. М., 1990, էջ 50:
[2] Նույն տեղում, 1985, էջ 174:
[3] Տե՛ս, օրինակ, В.С. Пронина. Централньные органы управления. М., Юрид. лит., 1971, էջ 78:

ցի) նկատմամբ, ըստ էության, հանդիսանում է գործադիր իշխանության իրականացման ձև և առաջացնում է իրավաբանական հետևանքներ: Հետևաբար, իրավական է համարվում պետական կառավարման մարմնի (պաշտոնատար անձի) անմիջականորեն որոշակի իրավական հետևանքներ առաջացնող գործողությունը (օրինակ, նորմատիվ ակտերի ընդունումը, դրանցում փոփոխություններ ու լրացումներ կատարելը, դրանց գործողությունը դադարեցնելը, անձին հանրային ծառայության պաշտոնի նշանակելու կամ պաշտոնից ազատելու վերաբերյալ իավական ակտի հարպարակումը, վարչական իրավախախտման մասին արձանագրություն կազմելը): Ի դեպ, իրենց լիազորություններով նախատեսված խնդիրները լուծելիս պետական կառավարման մարմիններն օգտվում են իրավաստեղծ և իրավակիրառ իրավական տարբեր ձևերից:

Հետևաբար, կառավարչական գործողության իրավական ձևը կարող է իրավական համարվել, եթե այդ գործողության մեջ պարզորոշ դրսևորվում է պետական կառավարմանը բնորոշ տվյալ սուբյեկտի իրավաբանական կամաարտահայտությունը:

Միաժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ բոլոր կառավարչական իրավական գործողությունները հանգուցալուծվում են իրավական ակտերի ընդունմամբ: Բացի կառավարման մարմինների (պաշտոնատար անձանց) ցայտուն արտահայտված իրավական գործողություններից՝ այսինքն, առաջին հերթին նշված սուբյեկտների իրավական ակտերից, իրավաբանական գրականության մեջ դրանց թվին են դասում նաև «իրավաբանական իմաստ ունեցող այլ գործողությունների կատարումը»: Դա պայմանավորված է նրանով, որ բացի իրավական ակտերի ընդունումից, կառավարման մարմինները (պաշտոնատար անձինք) հաճախ կատարում են նաև իրավաբանական այլ բնույթի գործողություններ (օրինակ, նշված սուբյեկտների իրավական ակտերի նախագծերի պետական իրավական փորձաքննության եզրակացությունը, նշված ակտերի պետական պարտադիր գրանցումը, տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի պաշտոնական փաստաթուղթ տրամադրելը, կառավարչական հարաբերության մասնակիցներին որոշակի գործողություններ կատարելու թույլտվությունը): Թվարկված օրինակներում բերված գործողություններն արտահայտվում են, որպես կանոն, ոչ թե անմիջականորեն, այլ միջ-

նորդավորված ձևով՝ տվյալ անձին թույլտվություն տալու վերաբերյալ արդեն իսկ ընդունված համապատասխան իրավական ակտի հիման վրա, մինչդեռ այդ գործողությունների իրավաբանական իմաստը և հետևանքներն ակնհայտ են: Այս առնչությամբ, կարծում ենք, որ կառավարչական գործողությունների իրավական ձևերին կարելի է դասել ինչպես իրավաբանական ակտերի ընդունումը, այնպես էլ դրանց հիման վրա իրավաբանական բնույթի այլ գործողությունների կատարումը:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ պետական կառավարման ոչ բոլոր գործողություններն են հանգեցնում իրավական ակտերի հրապարակման, քանի որ հաճախ պետական կառավարման մարմինները (պաշտոնատար անձինք) այդպիսի ակտերի ընդունմանը զուգահեռ կատարում են բազմազան իրավաբանական բնույթի այլ գործողություններ[1]:

Պետական կառավարման գործունեության ***ոչ իրավական*** ձևեր են համարվում կազմակերպական գործողություններն ու նյութատեխնիկական գործառնությունները: Սակայն այդպիսի գործողություններն ու գործառնությունները, ի տարբերություն իրավական ձևերի, անմիջականորեն չեն առաջացնում իրավաբանական հետևանքներ, այլ կատարում են օժանդակ դեր: Բացի այդ, կառավարման ոչ իրավական ձևերը չեն պահանջում լրիվ և օրենքով խստորեն ամրագրված իրավաբանական ձևակերպումներ և կապված չեն իրավաբանական կարևոր գործողությունների կատարման հետ: Բնականաբար, ոչ իրավական ձևերը նույնպես իրականացվում են օրենսդրության շրջանակներում, սակայն այդպիսի գործողությունն իրավական առումով ընդհանուր առմամբ է արձանագրվում:

Կազմակերպական գործողություններ են համարվում, օրինակ, խորհրդակցությունները, ստուգումներ անցկացնելը, հաշվապահական հավառումներ կատարելը, մամուլի ասուլիս կազմակերպելը և այլն:

Նյութատեխնիկական գործառնություններն առնչվում են գործավարության հետ (փաստաթղթերի գրանցումը, ձևակերպումը և դրանք

---

[1] Տե՛ս А.П. Алехин, А.Л. Кармолицкий, Ю.М. Козлов, նշված աշխատ., էջ 235-236:

հասցեատերերին ուղարկելը), ներառելով տեղեկատվության մշակումը և այլն:

Պետական կառավարման գործունեության մեջ տարբեր տեսակի ձևերի խելամիտ համակցումն էական նշանակություն ունի կառավարման մարմինների արդյունավետ գործունեության համար: Մասնավորապես, հանրահայտ է, որ գործադիր իշխանության իրականացման իրավական ձևերի մեջ առաջնային տեղ է զբաղեցնում իրավական բազմազան ակտերի (վարչական ակտերի) ընդունումը, որոնք հանդիսանում են գործադիր-կարգադրիչ գործունեության հիմնական ձևը: Սակայն, եթե այդ ակտերի գործնական իրականացումը (գործադրումը) չի ամրապնդվում կազմակերպական և նյութատեխնիկական միջոցներով, ապա դրանց սոսկ ընդունումն արժեզրկվում է:

Այսպիսով, պետական կառավարման իրավական և ոչ իրավական ձևերի միջև տարբերությունը, որպես կանոն, դրանց կողմից առաջացնող հետևանքների բնույթն է:

Եթե գործադիր իշխանության իրականացումը հնարավոր է միայն վարչաիրավական ձևով, որն անխուսափելիորեն հանգեցնում է որոշակի իրավական հետևանքների առաջացմանը և գործադիր իշխանությունն իր կամքը արտահայտում է միայն իրավական ձևերով՝ իշխանություն-ենթակայություն սկզբունքով, ապա պետական-կառավարչական գործունեությունը կարող է արտահայտվել և՛ իրավական, և՛ ոչ իրավական ձևերով:

ԳԼՈՒԽ 11.
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

§1. Պետական կառավարման մեթոդի հասկացությունը

Պետական կառավարման մեթոդը մասնագիտական գրականության մեջ ամենաբարդ և ոչ պատշաճ հետազոտված հիմնախնդիրներից է: Եվ պատահական չէ, որ կառավարման մեթոդի հարցի և հասկացության վերաբերյալ վարչագետների կողմից տարբեր, երբեմն էլ իրարամերժ կարծիքներ են հայտվում և շարունակում են հայտնվել: Չնայած դրան, պետական կառավարման (գործադիր իշխանության) իրականացման ընթացքում կարևոր նշանակություն է տրվում ինչպես կառավարման ձևերին, այնպես էլ կառավարման մեթոդներին, քանի որ դրանք սերտորեն փոխկապակցված են:

Պետական կառավարման գործընթացն ավարտվում է կառավարման սուբյեկտի կողմից համապատասխան կառավարման օբյեկտի նկատմամբ անմիջական նպատակաուղղված (կարգավորիչ) ներգործությամբ, որը շարժուն բնույթ է հաղորդում կառավարման գործառույթներին: Այս առումով վերջիններիս իրականացման կապակցությամբ և կառավարման մեթոդների հետ ստեղծվում են անմիջական կապեր:

Ամենատարբեր ձևերով, միջոցներով և եղանակներով կառավարման մեթոդների միջոցով հնարավորություն է տրվում ստանալու մի շարք հարցերի պատասխաններ, մասնավորապես՝ ինչպե՞ս է իրականացվում պետական կառավարումն ու դրա գործունեությունը և կառավարման սուբյեկտի կարգավորիչ ներգործությունը կառավարվող օբյեկտի նկատմամբ (ստորադաս մարմիններ, պաշտոնատար անձինք, միավորումներ, ոլորտներ, աշխատավորական կոլեկտիվներ, քաղաքացիներ և այլն): Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ կառավարչական ներգործության իրականացմանը ծառայում են տարբեր միջոցների շտեմարանները, որոնք օգտագործվում են կառավարչական պրակտիկայում: Ի դեպ, կառավարման սուբյեկտի և օբյեկտի փոխհարաբերության մեջ է արտահայտվում պետական կառավարման մեթոդների բնույթը: Ամեն դեպքում կառավարման մեթոդը մշտապես ունի որոշակի օբյեկտ, որը կարող է լինել և՛ անհատական, և՛ կո-

լեկտիվ:

Կառավարման մեթոդը, ամենաընդհանուր ձևով, տարբեր մասնագետների կողմից բնորոշվում է որպես տնտեսական, քաղաքական, մշակութային, իրավապահ և այլ խնդիրներ լուծելու եղանակ, միջոց ու ձև (միջոցառումների ամբողջություն): Ընդ որում, պետական-կառավարչական գործունեության ոլորտի վերաբերմամբ՝ կառավարման մեթոդը դրա նպատակների գործնական իրականացման միջոց է և, որպես նպատակաուղղված ներգործության միջոց, կառավարողի կողմից կարող է կիրառվել ինչպես կոլեկտիվի, այնպես էլ խմբի կամ անհատի նկատմամբ: Նման դեպքերում համապատասխան մեթոդի ընտրության հարցը, ամեն դեպքում, կախված է նպատակից, լուծման ենթակա խնդիրներից ու գործառույթներից:

Լինելով կառավարման գործնական միջոց, պետական կառավարման մեթոդը հանդես է գալիս վարչաիրավական տարբեր ձևերով և այս առումով այն միջոց է՝ գործնականում իրականացնելու պետական-կառավարչական գործունեության գործառույթներն ու նպատակները: Հետևաբար, առանց պետական-կառավարչական ներգործության չեն կարող լինել կառավարման մեթոդներ (օրինակ, սոցիոլոգիական, հետազոտական և կազմակերպական այլ միջոցները), քանի որ կառավարման օբյեկտի համար դրանք չեն առաջացնում արտաքին բնույթի ուղղակի իրավաբանական հետևանքներ:

Վերը շարադրվածին համապատասխան, մասնագիտական գրականության մեջ կառավարման մեթոդները երբեմն տարբերակվում (դասակարգվում) են՝ ա) կառավարչական ներգործության (օժտված են իրավաբանական-իշխանական լիազորություններով և, հետևաբար, համարվում են վարչաիրավական մեթոդներ), բ) կառավարման ապարատի աշխատանքի կազմակերպման (ունեն միայն ներապարատային նշանակություն), գ) կառավարման առանձին գործողությունների կատարման (ունեն ընթացակարգային բնույթ): Մինչդեռ, առանձին աշխատություններում հիմնավորված ձևով խոսքը, որպես կանոն, վերաբերում է ինչպես կառավարման մեթոդներին, այնպես էլ գործադիր իշխանության իրականացման մեթոդներին[1]:

---

[1] Տե՛ս Алехин А.П., Кармолицкий А.А., Козлов Ю.М. Административное право РФ, Учебник. – М.: ЗЕРЦАЛО, 1998, ¿ջ 266.

Վարչաիրավական գրականության մեջ տարբեր կարծիքներ են հայտնվել պետական կառավարման (պետական կառավարման գործունեության) մեթոդների վերաբերյալ: Առանձին հեղինակներ գտնում են, որ պետական կառավարման մեթոդը, որպես կանոն, միջոցներ կամ եղանակներ են՝ հասնելու նախատեսված նպատակներին և առաջացող խնդիրների լուծմանը: Պետական կառավարչական գործունեության մեթոդն այնպիսի միջոցներ ու եղանակներ են, որոնք գործադիր իշխանության (պաշտոնատար անձանց) ամենօրյա գործունեության ընթացքում գործնականում իրականացնում են գործադիր իշխանության խնդիրներն ու գործառույթները՝ իրենց լիազորությունների շրջանակներում[1]:

Առանձին գիտնականներ ավելի հակիրճ կարծիք են հայտնում կառավարման մեթոդի մասին, նշելով, որ մեթոդը պատասխանում է այն հարցին, թե ինչպես և ինչ եղանակով ավելի նպատակահարմար միջոցով կարելի է հասնել կառավարման նպատակներին[2]:

Երբեմն ավելի լայն մոտեցում ցուցաբերելով պետական կառավարման մեթոդների նկատմամբ, մասնագետները հիմնականում նշում են մի շարք բնորոշ հատկանիշներ, մասնավորապես՝ դրանք իրականացվում են պետական կառավարչական գործունեության ընթացքում և սերտորեն կապված են գործադիր իշխանության ճյուղի հետ: Բացի այդ, մեթոդներն օգտագործվում են նշված ճյուղի սուբյեկտների կողմից՝ իրենց լիազորություններն իրականացնելիս և արտահայտում են այդ սուբյեկտների իրավաբանական-իշխանական լիազորությունները:

Մեթոդները կարող են արտահայտվել վարքագծի (գործունեության) կանոններ սահմանելու, գործունեության ծրագիր հաստատելու և առանձին գործողություններ իրականացնելու համար ցուցում տալու, ինչպես նաև որոշակի գործողություն կատարելն արգելելու, գրանցման գործողություններ կատարելու, վերահսկողություն և հսկողություն իրականացնելու, կողմերի միջև ծագած վեճերը լուծելու, վարչական հարկադրանքի միջոցներ կիրառելու եղանակով և այլն: Ելնելով շարադրված բնորոշ առանձնահատկություններից, Յու. Կոզ-

---

[1] Տե՛ս Габричидзе Б.Н., Елисеев Б.П., նշված աշխ., էջ 248:
[2] Տե՛ս Коренев А.П., նշված աշխ., էջ 160:

լովը տալիս է կառավարման մեթոդների հետևյալ բնորոշումը՝ այն գործադիր մարմինների (պաշտոնատար անձանց) անմիջական կառավարչական ներգործություն է կառավարվող օբյեկտների (կառավարողների) նկատմամբ: Այլ կերպ ասած, կառավարման մեթոդը կոնկրետ միջոց է գործնականում լուծելու գործադիր իշխանության համապատասխան սուբյեկտի առջև դրված խնդիրները՝ հենց այդ իշխանության իրականացման միջոցով[1]:

Վերը թվարկված և բովանդակությամբ էապես չտարբերվող մեջբերումներն ու կարծիքները թույլ են տալիս եզրահանգելու, որ կառավարման մեթոդները պետական-կառավարչական գործառույթների, նպատակների գործնական իրականացման միջոցներ են, որոնք ամփոփված են պետական կառավարման ձևերի մեջ:

§2. Պետական կառավարման մեթոդների տեսակները

Պետական կառավարման (գործադիր իշխանության իրականացման) ոլորտում կարևոր նշանակություն է տրվում կառավարման մեթոդներին, որոնք յուրահատուկ դերակատարություն ունեն պետական-կառավարչական գործունեության հարաբերություններում: Նկատի ունենալով այդ մեթոդների առանձնահատկությունները, դրանք բաժանվում են ***համոզման*** և ***հարկադրանքի միջոցների:*** Նման բաժանումը կապված է նաև պետական-իշխանական ներգործության բովանդակության հետ:

Գործնականում համոզման ու հարկադրանքի միջոցներն իրար չեն հակադրվում, ընդհակառակը՝ փոխկապակցված պետական կառավարման մեթոդներ են, փոխադարձ լրացնում են միմյանց և օժանդակում պետական կարգապահության ու իրավակարգի ամրապնդմանը:

Ի դեպ, պետական կառավարման ներգործության մեթոդների նշված տեսակներն օգտագործվում են ոչ միայն պետական, այլև հասարակական ու ոչ պետական այլ կազմակերպությունների գործունեության ոլորտներում, ինչպես նաև քաղաքացիաիրավական գործարքներում և այլն: Բնականաբար, պետական կառավարման ոլոր-

[1] Տե՛ս Козлов Ю.М., Попов Л.Л., նշված աշխ., էջ 283:

տում և հասարակական գործունեության բնագավառում համոզման ու հարկադրանքի մեթոդների կիրառումն էական առանձնահատկություններ ունեն: Մասնավորաբար, հասարակական միավորումների ղեկավար մարմիններն անհրաժեշտության դեպքում կարող են հարկադրանքի միջոցներ կիրառել տվյալ միավորման անդամների նկատմամբ: Նշված պարագան պետք է հաշվի առնել վարչահիրավական մեթոդները բնորոշելիս՝ հատկապես պետական մարմինների և պաշտոնատար անձանց գործունեության վերաբերմամբ:

Համոզման մեթոդներն ազդակ են հանդիսանում պատշաճ վարքագիծ դրսևորելու պետական կառավարման գործունեության հարաբերություններում: Ժողովրդավարական պետություններում, նկատի ունենալով համոզման մեթոդի կարևորությունը, քաղաքացիներին լայնորեն ներգրավում են պետական կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը, իրավական ակտերի նախագծերի քննարկմանը և ընդունմանը, միջոցներ են ձեռնարկում նրանց գիտակցական կարգապահության և պատասխանատվության զգացման բարձրացմանն ու օրինապաշտ սովորության ամրապնդմանը: Բացի այդ, քաղաքացիների ինքնակարգավորման, ինքնավերահսկողության, պարտքի զգացման դաստիարակության ասպարեզում կարևոր դերակատարություն ունեն համոզման բազմազան ձևերը, օրինակ, ուսուցումը, քարոզչությունը, հանրահավաքները, ժողովները, մամուլի ասուլիսները և հարցազրույցները, ինչպես նաև պաշտոնատար անձանց հանդիպումները բնակչության, իրենց ընտրողներ հետ և այլն:

Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները պետք է պարբերաբար կազմակերպեն և անցկացնեն բազմատեսակ բարոյական ներգործության և դաստիարակչական բնույթի (այդ թվում՝ իրավական) ինչպես նաև բացատրական, խրախուսական և այլ միջոցառումներ: ՁԼՄ-ները նույպես լայն հնարավորություններ ունեն ներգործելու պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների (պաշտոնատար անձանց) և քաղաքացիների վարքագծի նկատմամբ:

Հարկադրանքն առհասարակ հանդիսանում է իրավակարգի պահպանման միջոց և պետական գործունեության մեթոդ: Իրավական հարկադրանքը պետք է կիրառվի իրավական նորմերի հիման վրա և դրանց խախտման կապակցությամբ: Իրավական հարկադ-

րանքը կիրառվում է, որպես կանոն, իրավունքի կոնկրետ այն սուբյեկտների նկատմամբ, որոնք խախտել են իրավունքի նորմերը: Եթե չկա ոչ իրավաչափ գործողություն՝ չկա նաև հարկադիր գործողություն: Սակայն առանձին դեպքերում, երբ հարկ է ձեռնարկել կանխարգելիչ միջոցներ, իրավական հարկադրանքի միջոցներ են կիրառվում նաև իրավախախտում թույլ չտված անձանց նկատմամբ. օրինակ, թռիչքային կանոններով նախատեսված է բոլոր ուղևորների և նրանց ուղեբեռների զննություն, ինչը բնավ թելադրված չէ ուղևորների կողմից իրավախախտում կատարելու փաստով:

Իրավական հարկադրանքի միջոցները բազմազան են և ըստ սուբյեկտների կարելի է տարբերակել ***պետական-իրավական*** և ***հասարակական-իրավական*** հարկադրանքի: Պետական-իրավական հարկադրանքն իր հերթին լինում է ***դատական*** և ***արտադատական:*** Պետական կառավարման մարմինները (պաշտոնատար անձինք) մասնակցում են տարբեր տեսակի հարկադրանքի միջոցների (կարգապահական և վարչական) իրականացմանը:

Հարկադրանքի մեթոդները՝ որպես ներգործության օժանդակ միջոցներ, կիրառվում են այն դեպքերում, երբ համոզման մեթոդները ցանկալի արդյունք չեն տալիս, իսկ վարչաիրավական նորմերի խախտման դեպքում՝ կիրառվում են կարգապահական կամ վարչական պատասխանատվության միջոցներ:

Իրավաբանական գրականության մեջ մասնագետների մեծամասնությունը վարչաիրավական մեթոդները՝ պետական-կառավարչական ներգործության բովանդակությանը համապատասխան, դասակարգում է երկու խմբի՝ **վարչական (ուղղակի)** և **տնտեսական (անուղղակի):**

Վարչական ներգործության մեթոդները, որոնք երաշխավորված են իշխանական, կառավարող վարչական հարկադրանքով, համարվում են վարչական մեթոդներ: Վերջիններս, ինչպես նշում են մասնագետները, որպես կանոն, որակվում են իբրև արտատնտեսական կամ ուղղակի կառավարչական ներգործության միջոց, պետական կառավարման գործունեության սուբյեկտի կողմից կառավարման համապատասխան օբյեկտի նկատմամբ՝ անկախ կոնկրետ հասարակական կյանքի բնագավառից: Նման դեպքում պետական կառավարման սուբյեկտն իր լիազորությունների շրջանակում ընդունում է հրա-

մայական բնույթի կառավարման ակտեր, որոնք պարտադիր են կատարման կառավարման օբյեկտի համար: Պետական կառավարման ներգործության նշված իրավական ակտերը բխում են անմիջականորեն կառավարման իշխանական բնույթից և համարվում են պետական իշխանության գործնական իրականացում:

Վարչական մեթոդը միաժամանակ ենթադրում է, որ արտատնտեսական հարաբերություններում կառավարման իրական օբյեկտ է հանդիսանում կառավարվողների գիտակցական-կամավոր վարքագիծը: Կարևորելով վերջինիս նշանակությունը՝ գործնականում զուգահեռաբար օգտագործվում են ինչպես համոզման, այնպես էլ հարկադրանքի միջոցները՝ անհրաժեշտության դեպքում առաջնությունը տալով համոզման մեթոդին: Միաժամանակ, գործնական կյանքը ցույց է տալիս, որ առանց վարչական հարկադրանքի մեթոդի օգտագործման, հնարավոր չէ հավուր պատշաճի լուծել առաջադրված խնդիրները և հասնել նախատեսված նպատակներին: Այս հարցում կարևոր դեր են խաղում պետական կառավարման գործունեության սուբյեկտները, որոնք իրականացնում են կառավարում:

Տնտեսական մեթոդները՝ ըստ մասնագետների տնտեսական միջոցներ, հնարքներ և լծակներ են, որոնք օգտագործվում են գործադիր ոլորտի (պետական կառավարման) գործունեության պատշաճ արդյունավետությունն ապահովելու նպատակով: Տնտեսական մեթոդները բնորոշվում են նաև, որպես կառավարման համապատասխան օբյեկտների նկատմամբ պետական կառավարման գործունեության սուբյեկտի կողմից տնտեսական (անուղղակի) ներգործության եղանակ կամ միջոց: Ի դեպ, դրանց օգնությամբ կառավարման սուբյեկտը կառավարվողների նյութական շահերին ներգործելու միջոցով ձգտում է հասնել նրանց պատշաճ վարքագծին (գործունեությանը)՝ առանց իշխանական ուղղակի միջոցների: Այդպիսի պայմաններում կառավարման օբյեկտն ինքն է շահագրգռված գործել պատշաճ ձևով, այլ ոչ թե կառավարման սուբյեկտի ներգործության միջոցով, քանի որ նման վարքագիծը նյութապես խրախուսվում է (օրինակ, վարկային, հարկային, գույքային կամ նյութական այլ արտոնություն տալը և այլն): Բացի այդ, կառավարման նյութական շահագրգռվածությունն ազդակ է հանդիսանում լուծելու իր առջև դրված խնդիրները:

Չնայած տնտեսական մեթոդները սահմանում են նյութական

շահագրգռման համակարգ, սակայն կառավարչական ներգործությունը, ամեն դեպքում, կազմում է այդ համակարգի լծակների բովանդակությունը, այսինքն՝ դրանց միջև սերտ կապ է ստեղծվում վերջնական նպատակին հասնելու համար: Հետևաբար, տնտեսական կառավարման ներգործության մեթոդներն իրականացվում են ոչ թե ինքաբերաբար, այլ վարչաիրավական միջոցների օգնությամբ: Այսպիսով, ինչպես ուղղակի (վարչական), այնպես էլ անուղղակի (տնտեսական) միջոցներն օգտագործվում են նշված միակ նպատակին հասնելու համար, այսինքն՝ կառավարման սուբյեկտի կառավարչական ներգործության իրականացումը կառավարման օբյեկտի վարքագծի նկատմամբ: Ի դեպ, այդ միջոցներն օգտագործվում են գործնականում պետական կառավարման նույն սուբյեկտների կողմից կառավարման նույն օբյեկտների նկատմամբ:

Վարչաիրավական (պետական կառավարման) մեթոդներն իրականացնող սուբյեկտների և օբյեկտների գործունեության արդյունավետությունը մեծամասամբ կապված է նաև պետական կառավարման բնագավառի պրոֆեսիոնալ կադրերի պատրաստման մակարդակից, ինչպես նաև օրենսդրության և վարչական իրավանորմերի վիճակից, որոնք կանոնակարգում են պետական կառավարման գործունեության սուբյեկտների և կառավարվողների միջև փոխհարաբերությունները:

Ի դեպ, պետական կառավարման վարչական և տնտեսական մեթոդների բաժանումը տրամաբանական է, քանի որ «կառավարման մեթոդների կառավարումը», անկախ դրանց բովանդակությունից, էությամբ միասնական կառավարման մեթոդներ են:

Ե՛վ վարչական, և՛ տնտեսական միջոցները պետական կառավարման մարմինների (պաշտոնատար անձանց) կողմից օգտագործվում են որպես կառավարման սուբյեկտի միակողմանի և իշխանական կամաարտահայտություն:

Վարչական և տնտեսական կառավարման ներգործության իրականացման համար, որպես կանոն, պահանջվում է միասնական իրականացման ձև: Ինչպես վարչական, այնպես էլ տնտեսական մեթոդները ճիշտ օգտագործելու դեպքում կազմում են ներգործության միջոցների միասնական համակարգ և կապված են իրար հետ: Նշված մեթոդներն առնչվում են նաև ներգործության օբյեկտների առանձնա-

հատկությունների և բազմաթիվ այլ օբյեկտիվ պայմանների հետ: Մեթոդների տեսակների ընտրությունը նույնպես պայմանավորված է լուծվող հարցերի նպատակների և վարքագծի հետ: Այս կապակցությամբ պետական կառավարման ակտերում երբեմն հանդիպում են տնտեսական բովանդակությամբ օրգանապես զուգակցված որոշումներ, որոնք ունեն վարչաիրավական ձև:

Ինչ վերաբերում է կառավարման տնտեսական մեթոդներին, ապա դրանց միջոցով ոչ միշտ է հաջողվում հասնել ցանկալի նպատակների: Միաժամանակ, գործնական կյանքը ցույց է տալիս, որ կառավարման բոլոր խնդիրների արդյունավետ լուծումը հնարավոր է միայն տնտեսական կարգավորիչների միջոցով: Բացի այդ, ՀՀ-ում իրականացվող սոցիալ-տնտեսական բարեփոխումների, տնտեսական գործունեության ազատության հետևանքով տնտեսական մեթոդների նշանակությունը պետական կառավարման ոլորտում անհամեմատ աճել է: Սակայն, այս կապակցությամբ չպետք է անտեսվեն պետական կառավարման սուբյեկտները, որոնք, ի տարբերություն կառավարման տնտեսական ոլորտների, օժտված են պետական-իշխանական լիազորություններով և հանդես են գալիս պետության անունից և նրա հանձնարարությամբ:

Ի տարբերություն տնտեսական (անուղղակի) մեթոդների, վարչական (ուղղակի) մեթոդների միջոցով մեծամասամբ ավելի շուտ են առանձին ոլորտներում հասնում արդյունքների (օրինակ, պաշտպանության, ոստիկանության համակարգերում):

Ըստ առանձին հեղինակների պետական կառավարման (գործադիր իշխանության) մեթոդների իրականացումը կարելի է բաժանել նաև գիտականի և ոչ գիտականի, ժողովրդավարականի և դիկտատորականի, ճկունի և կոշտի, ստեղծագործականի և շաբլոնայինի, պետականի և հասարակականի[1], ինչպես նաև վիճակագրականի, սոցիոլոգիականի, հոգեբանականի, տեղեկատվական-երաշխավորականի և այլն, որոնք տնտեսական մեթոդների համակարգում օժանդակ բնույթ ունեն[2]:

---

[1] Տե՛ս Бахах Д.Н. Административное право: Учебник для вузов. – М.: Изд. БЕК, 1999, էջ 186:

[2] Տե՛ս Габричидзе Б.Н., Елисеев Б.П. Նշված աշխ., էջ 251-252:

§3. Վարչական հարկադրանքի էությունը, հիմքերը և տեսակները

Վարչական (վարչաիրավական) հարկադրանքը պետական հարկադրանքի ինքնուրույն և առանձնահատուկ տեսակ է, և այդ առնչությամբ դրան ներհատուկ են պետական կառավարման բոլոր յուրահատկությունները (իրավակիրառ գործունեությունը, իրավակարգի պաշտպանության ապահովումը և այլն):

Վարչական հարկադրանքը նպատակաուղղված է հիմնականում պետական կառավարման բնագավառում առաջացող հասարակական հարաբերությունների պաշտպանությանը: Հարկադրանքի նշված միջոցներն օգտագործվում են պետական կառավարման (գործադիր իշխանության) իրականացման ընթացքում համապատասխան մարմինների (պաշտոնատար անձանց) կողմից: Այս առումով վերջիններս իրականացնում են պետական-իշխանական լիազորություններ, և դրա հետ պայմանավորված վարչական (վարչաիրավական) ներգործության միջոցներին ներհատուկ են իշխանական հարկադրանքի բնույթը, որն իրականացվում է սուբյեկտի կամքին հակառակ և անկախ նրա ցանկության:

Բովանդակությամբ վարչական հարկադրանքն արտաքուստ ներգործում է մարդկանց գիտակցության և վարքագծի վրա, որն արտահայտվում է վարչական ***սահմանափակման (զրկման) անհատական, կազմակերպական կամ գույքային բնույթի ձևերով: Անհատական սահմանափակումը*** որպես վարչական հարկադրանք կարող է արտահայտվել, օրինակ՝ քաղաքացուն տրված տրանսպորտային միջոցներ վարելու կամ որսորդության իրավունքից զրկելը, վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու նպատակով օրենսդրությամբ սահմանված կարգով իրավախախտողին ոստիկանություն բերման ենթարկելը, վարչական իրավախախտում կատարած անձի վարչական ձերբակալումը և այլն): ***Կազմակերպական սահմանափակումներ*** են հանդիսանում, օրինակ, հակահիդեհային անվտանգության կանոնները խախտելու համար հիմնարկի գործունեությունը դադարեցնելը, լիցենզիայի գործողությունը ժամանակավորապես դադարեցնելը և այլն: ***Գույքային բնույթի սահմանափա-***

կումների շարքն են դասվում, օրինակ, առարկայի բռնագրավումը և հատուցմամբ վերցնելը, տուգանքը և այլն:

Ընդհանուր առմամբ վարչական հարկադրանքի միջոցները կարևոր նշանակություն ունեն պետական կառավարման ոլորտի հասարակական հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի իրականացման համար: Հարկադրանքի նշված միջոցների կիրառման նպատակն է ստիպել սուբյեկտին կատարելու այս կամ այն գործողությունը կամ ձեռնպահ մնալ դրա կատարումից:

Վարչական հարկադրանք կարող են կիրառել միայն դրա համար ՀՀ օրենսդրական ակտերով հատկապես լիազորված բազմապիսի և զգալի թվով մարմիններ ու պաշտոնատար անձինք (ոստիկանության, պետական տեսչությունների մարմինները (պաշտոնատար անձինք) վարչական հանձնաժողովները, տեղական ինքնակառավարման մարմիններ, դատարաններ (դատավորներ) և այլն): Ի դեպ, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ցանկացած իրավախախտում վնաս է հասցնում հասարակության շահերին և երբեմն սպառնում քաղաքացիների անձնական ու գույքային անվտանգությանը, և այդ կապակցությամբ վարչական հարկադրանքի անհապաղ կիրառումը նպատակաուղղված է կարգապահական և վարչական իրավախախտման նախազգուշացմանն ու կանխմանը:

Վարչական հարկադրանքը կարգապահական հարկադրանքից տարբերվում է նրանով, որ առաջինը կիրառվում է միայն պետական կառավարման դրա համար հատկապես լիազորված մարմինների (պաշտոնատար անձանց) կողմից (ոստիկանություն, պետական տեսչություններ, հսկողական և լիազորված այլ մարմիններ ու պաշտոնատար անձինք, և կոչված է հիմնականում ապահովելու պետական կարգապահությունը, օրինականությունն ու իրավակարգը: Ընդ որում, վարչական հարկադրանքը կապված չէ ծառայողական ենթակայության հետ, իսկ կարգապահական հարկադրանքը կիրառվում է ծառայողական-աշխատանքային հարաբերությունների ոլորտում կարգապահությունն ամրապնդելու նպատակով:

Վարչական հարկադրանքի կիրառումն իրականացվում է նաև արտադատական կարգով, այսինքն՝ ինչպես արդեն նշվեց, դրա համար հատկապես լիազորված պետական կառավարման (գործադիր իշխանության) մարմինների և պաշտոնատար անձանց կողմից իրենց

վերապահված լիազորություններն իրականացնելիս՝ առանց դատարան դիմելու: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ այդպիսի իրավունքով օժտված են նաև դատարանները (դատավորները), որոնք քննում են վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրական ակտերով իրենց իրավասությանը վերապահված զգալի թվով գործեր[1] և մեղավորների նկատմամբ կիրառում են վարչական տույժի միջոցներ (օրինակ, նախազգուշացում, տուգանք և այլն):

Վարչական հարկադրանքն իրականացվում է հատուկ վարչաիրավական հարաբերությունների շրջանակում, որում ընդգրկված իրավասու պետական մարմնի և անձի նկատմամբ կիրառված վարչական հարկադրանքը կապված չէ ծառայողական ենթակայության հարաբերություններով: Նման դեպքերում ինչպես վարչական հարկադրանք կիրառող սուբյեկտը, այնպես էլ իրավախախտող անձը նույն կոլեկտիվի անդամներ չեն, վերջինս նաև անմիջական ծառայողական ենթակայության մեջ չի գտնվում առաջինի հետ: Հետևաբար, վարչական հարկադրանքը, ինչպես ցույց է տալիս գործնական կյանքը, կարող է օգտագործվել վարչական իրավունքի սուբյեկտների լայն շրջանակի վրա (ՀՀ քաղաքացիների, օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց, ինչպես նաև իրավաբանական անձանց նկատմամբ՝ հատկապես տնտեսության շուկայական հարաբերություններին անցնելու կապակցությամբ՝ հարկային, մաքսային, հողային, շինարարական օրենսդրության և այլ խախտումների համար):

Վարչական հարկադրանքի կիրառման իրավաբանական հիմքերն էապես տարբերվում են պետական կառավարման մյուս տեսակների հիմքերից: Վարչական հարկադրանքի հիմքերն ավելի լայն են, քան քրեական պատասխանատվության հիմքերն ու պայմանները: Մասնավորապես, քրեական պատիժ նշանակելու համար իրավաբանական հիմք է հանդիսանում միայն քրեական օրենսդրությամբ նախատեսված հանցագործություն կատարելը: Իսկ վարչական հարկադրանք կիրառելու հիմք են համարվում ինչպես վարչական իրավախախտում կատարելը, այնպես էլ իրավախախտման և մարդու մեղքի բացակայությունը (օրինակ, իրավական նորմերով նախատեսված

[1] Տե՛ս Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք 215-րդ և 223-րդ հոդվածները:

հատուկ պայմանների վրա հասնելը, համաճարակները, տարերային աղետները, տեխնածին վթարները և այլ արտակարգ պայմանները): Վերջիններիս դեպքում վարչական հարկադրանքի միջոցներն օգտագործվում են դրանց վտանգավոր հետևանքները նախազգուշացնելու նպատակով:

Կարծում ենք, վարչական հարկադրանքի էության հարցում պետք է համաձայնվել հայտնի վարչագետ Բ. Լազարևի հետ: Նա գտնում էր, որ վարչական հարկադրանքի ոլորտը չի հանգում վարչական պատասխանատվության միջոցների կիրառման: Տրամաբանական է տարբերակել հարկադրանքը, որպես պետական կառավարման մարմինների յուրահատուկ գործունեություն և որպես կառավարման մեթոդներից մեկը: Դրանցից առաջինը, որը ընդգրկում է նաև վարչական հարկադրանքը, կիրառվում է միայն նրանց նկատմամբ, ովքեր կամավոր չեն կատարում օրենսդրության պահանջները կամ պետական կառավարման մարմինների օրինական կարգադրագրերը: Ինչ վերաբերվում է երկրորդին՝ ներգործությունը մարդկանց կամ կազմակերպությունների վարքագծի (գործունեության) նկատմամբ, ապա այդ տարրերը լինում են բոլոր այն դեպքերում, որտեղ օգտագործվում է պետական իշխանություն[1]:

Վարչական հարկադրանքի միջոցները բազմաթիվ ու բազմազան են և տարբերվում են ըստ իրենց իրականացման նպատակների, հիմունքների և կիրառման կարգի, որոնք և նախապայման են հանդիսանում դրանց դասակարգման համար:

Վարչական իրավունքի մասնագետների մեծամասնության կողմից ընդունված է վարչական հարկադրանքի միջոցները դասակարգել երեք խմբի՝

1) վարչական նախազգուշական միջոցներ,

2) վարչական խափանիչ միջոցներ,

3) վարչական պատասխանատվության (տույժի) միջոցներ:

Առանձին հեղինակներ, վերը նշված երեք խմբին ավելացնում են նաև չորրորդը՝ վարչական վարույթային ապահովման միջոցները[2]: Պրոֆեսոր Դ. Բախրախը համաձայն չէ այն հեղինակների հետ, ով-

---

[1] Տե՛ս Советское административное право, М., 1990, էջ 173:

[2] Տե՛ս Административное право (Под ред. Ю.М. Козлова и Л.Л. Попова), էջ 300:

քեր վարչական հարկադրանքի միջոցները բովանդակային առումով բաժանում են վերը նշված երեք տեսակի: Հեղինակի կարծիքով, հաշվի առնելով դրանց կիրառման հարկադրական բնույթը, պետք է բաժանել խափանման միջոցների, վերականգնման միջոցների և վարչական տույժերի: Միաժամանակ, նշելով վարչական նախազգուշական միջոցների կարևոր նշանակությունը, գտնում է, որ այդ միջոցները չեն համարվում հարկադրական, իսկ վերականգնման սանկցիաները՝ վարչական հարկադրանքի հատուկ տեսակ է[1]:

Անհրաժեշտ է նշել, որ վարչական հարկադրանքի երեք խմբի վերը նշված միջոցները (նախազգուշական, խափանիչ և պատասխանատվության) ներառում են նաև վերականգնման միջոցները (սանկցիաները), իսկ վարչական դատավարության ապահովման միջոցները բովանդակային առումով այլ ուղղություն ունեն: Ուստի, գտնում ենք, պետք է համաձայնվել վարչական իրավունքի մասնագետների մեծամասնության կարծիքի հետ:

Վարչական հարկադրանքի միջոցները նպատակաուղղված են իրավախախտումների, ինչպես նաև անցանկալի հետևանքների առաջացման նախազգուշացմանը, իսկ իրավախախտման դեպքում դրա խափանմանը, դադարեցմանը, այնուհետև՝ օրենքով սահմանված դեպքերում իրավախախտողին պատասխանատվության ենթարկելուն: Ընդ որում, եթե վարչական նախազգուշական միջոցները կարող են կիրառվել նաև իրավախախտման բացակայության դեպքում (օրինակ, ուղևորների անձնական զննումը օդանավակայաններում, ինչպես նաև մաքսակետերում), ապա վարչական պատասխանատվության (տույժի) միջոցները կիրառվում են կատարված վարչական իրավախախտման համար:

Վարչական նախազգուշական միջոցների օգտագործումը, որպես կանոն, առնչվում է անձի վրա դրված համապարտաղիր իրավական պարտականությունները խախտելու հետ: Վերջիններս կարող են առաջանալ ոչ միայն իրավախախտումների, այլև տարբեր տեսակի աղետների բացասական և վնասակար հետևանքով, որոնք սպառնում են քաղաքացիների կյանքին և անվտանգությանը կամ պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների, հիմնարկների ու կազ-

[1] Տե՛ս Бахрах Д.Н., նշված աշխ., էջ 258:

մակերպությունների բնականոն գործունեությանը: Բնականաբար, պետությունը ստիպված դիմում է հարկադրանքի միջոցների նաև իրավանորմերի խախտման մեջ մեղք չունեցող անձանց նկատմամբ, սահմանափակելով նրանց իրավունքները:

Նշված վարչական միջոցներն արտահայտվում են ինչպես վարչական սահմանափակումների, այնպես էլ վարչական որոշակի գործողության ձևով: Վարչական նախազգուշական միջոցների հիմնական նպատակն է՝ նախազգուշացնել հասարակության կենսագործունեության համար վնասակար, վտանգավոր հետևանքները, ինչպես նաև իրավախախտումները: Հետևաբար, վարչական նախազգուշական միջոցները կապված չեն իրավախախտումների կատարման հետ, այլ միայն դրանք նախականխում են, դրանով նախորդում են վարչական իրավախախտումների կատարմանը և հանդես են գալիս որպես կանխարգելող բնույթի ուղղություն:

Պետական կառավարման մարմինները վարչական նախազգուշական միջոցներն օգտագործում են հասարակական հարաբերությունները հնարավոր ոտնձգություններից պաշտպանելու և դրանք կանխելու նպատակով:

Գործնական կյանքում հիմնականում օգտագործվում են վարչական նախազգուշական միջոցների հետևյալ տեսակները՝

1) հսկողական և վերահսկողական ստուգումներ (խոսքն այն դեպքերի մասին է, երբ դրանք իրականացվում են ծրագրավորված կարգով և կապ չունեն որևէ կոնկրետ իրավախախտման հետ,

2) կարանտին մտցնելը (օրինակ, համաճարակների, կենդանիների համաճարակների և այլ դեպքերում, որի հետևանքով սահմանվում է համապատասխան բնակավայրերը, տարածքները մտնելու և դուրս գալու հատուկ ռեժիմ),

3) անձի, իրերի և տրանսպորտային միջոցների զննումը՝ (իրականացնում են ոստիկանության, մաքսային, քաղաքացիական ավիացիայի մարմինները և դրա համար լիազորված պաշտոնատար անձինք),

4) անձի ինքնությունը հաստատող փաստաթղթերի ստուգում (օդանավակայաններում, մաքսակետերում և այլն),

5) ֆիզիկական անձանց պարտադիր բուժզննումը (օրինակ, ովքեր աշխատում են առևտրի և հասարակական սննդի ոլորտներում),

6) տրանսպորտի և հետիոտնի երթևեկության դադարեցումը (օրինակ, հասարակության անվտանգության սպառնալիքի առաջացման, վթարների, զանգվածային միջոցառումների անցկացման և այլ դեպքերում),

7) գույքը հատուցմամբ վերցնելը (օրինակ, ձերբակալման, անձնական իրերի զննության ժամանակ, զենք պահելու թույլտվություն ունեցող քաղաքացու կողմից որսորդական հրազենն ու զինամթերքը պահելու կամ փոխադրելու կանոնները խախտելու կամ դրանք իրացնելուց խուսափելու դեպքում),

8) բնակարանից վտարում (եթե այն սպառնում է փուլ գալ կամ համապատասխան բնակավայրից կամ դրա մի հատվածից ժամանակավոր վտարում, որը վտանգավոր է բնակության համար և այլն),

9) ՀՀ պետական սահմանի առանձին մասեր փակելը և այլն:

Վարչական խափանիչ միջոցները կիրառվում են որպես իրավախախտումները հարկադիր դադարեցնելու և դրանց վնասակար հետևանքները նախականխելու միջոց: Վարչական այս միջոցների էությունը կայանում է նրանում, որ դրանք հարկադիր կարգով կանխում են այն իրավախախտումները, որոնք կատարվում են ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից: Նշված հարկադիր միջոցների կիրառումը ոչ միայն կանխում է վարչական իրավախտումները և հանցավոր արարքների կատարումը, այլև հնարավորություն է ընձեռում դրանցում մեղավոր անձանց օրենսդրությամբ սահմանված կարգով ենթարկելու պատասխանատվության:

Վարչական խափանիչ միջոցները բազմաթիվ ու բազմազան են, և այդ է պատճառը, որ դրանք կոնկրետ չեն դասակարգվում: Մասնագիտական գրականության մեջ խափանիչ միջոցների դասակարգման վերաբերյալ առաջարկվում են բազմապիսի տարբերակներ: Ի մի բերելով այդ տարբերակները, կարծում ենք, կարելի է դրանք խմբավորել հետևյալ տեսակների՝

1) միջոցներ, որոնք անմիջականորեն կիրառվում են իրավախախտողի նկատմամբ (օրինակ, հակահիրավական գործողությունները դադարեցնելու պահանջը, ֆիզիկական ուժի անմիջական գործադրումը, վարչական ձերբակալումը և այլն): Ի դեպ, վարչական ձերբակալումը միաժամանակ օգտագործվում է ինչպես վարչական իրավախախտումները խափանելու, այնպես էլ վարչական վարույթն ապա-

հովելու նպատակով,

2) հատուկ կամ բացառիկ նշանակության միջոցներ (հրազեն, ռետինե մահակներ, արցունքաբեր գազ, ձեռնաշղթա, ջրանետներ գործադրելը և այլն),

3) բժշկասանիտարական բնույթի միջոցներ (վարակիչ հիվանդությամբ տառապող անձին ժամանակավորապես աշխատանքից հեռացնելը, շրջապատի համար վարակիչ հիվանդությամբ տառապող անձին բուժման համար մեկուսացնելը, հակասանիտարական սննդի օբյեկտների շահագործումը արգելելը և այլն),

4) լիցենզիայի հետ կապված միջոցներ (լիցենզիա տալը մերժելը, տրված լիցենզիան անվավեր ճանաչելը, դրա գործողությունը դադարեցնելը և այլն),

5) գույքային բնույթի միջոցներ (ողորկափող որսորդական և ակոսավոր հրազենն ու զինամթերքը վերցնելը, ինքնակամ կառուցած շինությունը քանդելը և այլն),

6) ֆինանսական բնույթի միջոցներ (վարկավորման դադարեցումը, բյուջեից ֆինանսավորման կրճատումը, ֆինանսական կարգապահության խախտման պատճառով բյուջեի օգտին գումար բռնագանձելը և այլն),

7) տեխնիկական բնույթի միջոցներ (անսարք տրանսպորտային միջոցների շահագործումն արգելելը, հրդեհային անվտանգության կանոնները խախտելու պատճառով օբյեկտի աշխատանքը դադարեցնելը, փողոցների և ճանապարհների շինվերանորոգման աշխատանքների դադարեցումը, եթե չեն պահպանվում հասարակության անվտանգության ապահովման վերաբերյալ պահանջները և այլն):

Գործնականում վարչական հարկադրանքի միջոցների կիրառումն ուժեղացվում է արտակարգ իրավիճակներում, իսկ համապատասխան կառավարման մարմիններն օժտվում են լայն լիազորություններով: Մասնավորապես, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» 1998թ. դեկտեմբերի 2-ի ՀՀ օրենքը[1] նախատեսում է բնակչության պաշտպանության կազմակերպումը, քաղաքացիների անվտանգության սպառնալիքի վերացումը և հիմնական այլ միջոցառումներ (օրինակ, բնակչության ժամանակա-

[1] Տե՛ս ՀՀՊՏ № 33 (66), 31.12.98:

վոր արտաքնակեցումը՝ բնակության համար վտանգավոր շրջաններից, տրանսպորտային միջոցների երթևեկության սահմանափակումը և այլն): Օրենքի 5-րդ հոդվածը սահմանում է կիրառվող հարկադրանքի միջոցների ցանկը աղետի գոտում՝

1) բնակչության պատսպարման, տարահանման և անհատական պաշտպանության միջոցներով ապահովման կազմակերպումը և իրականացումը,

2) շրջակա բնական միջավայրի, ջրի, սննդամթերքի վիճակի և վարակվածության դիտարկումը, զննումն ու հսկողությունը,

3) քաղաքացիների, տրանսպորտային միջոցների տեղաշարժման, բեռների ներմուծման և արտահանման կանոնակարգումը,

4) անհրաժեշտության դեպքում ոչ պետական սեփականություն համարվող գույքի տիրապետումը և օգտագործումը:

Արտակարգ իրադրության պայմաններում ոստիկանության պարտականություններին և իրավունքներին է անդրադարձել «Ոստիկանության մասին» 2001թ. ապրիլի 16-ի ՀՀ օրենքը[1]: Վերջինս սահմանել է նաև այդ մարմնի իրավունքները հանցագործություններն ու վարչական իրավախախտումները կանխելիս և բացահայտելիս (16, 19, 21 և 25-րդ հոդվածներ):

Վարչական պատասխանատվության (տույժի) միջոցների վերաբերյալ ավելի մանրամասն կխոսվի սույն ձեռնարկի 18-րդ գլխում:

[1] Տե՛ս ՀՀՊՏ № 15 (147), 31.05.01:

ԳԼՈՒԽ 12.
ՀԱՏՈՒԿ ՎԱՐՉԱԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԺԻՄՆԵՐ

§1. Հատուկ վարչաիրավական ռեժիմների հասկացությունը, իրավական հիմքերը և տեսակները

Վարչաիրավական ռեժիմը կարելի է բնորոշել, որպես պետական վարչակարգի գործունեության ընդհանուր ռեժիմ, որը սահմանված է ամենօրյա վարչական գործունեության, տիպային սոցիալ-կառավարչական իրավիճակների համար: Միաժամանակ, երբ պահանջվում է գործադիր գործունեության հատուկ միջոցների կիրառում որոշակի տարածքում՝ առանձին օբյեկտի կամ առարկայի նկատմամբ, սահմանվում են հատուկ վարչաիրավական ռեժիմներ: Ընդհանուր վարչական ռեժիմի տարրերից են պետական վարչակարգի գործունեության օրինականության ռեժիմը, անձնագրային, պետական ծառայության ռեժիմները: Սրանց հետ մեկտեղ, գոյություն ունեն հատուկ վարչաիրավական ռեժիմներ (օրինակ՝ արտակարգ և ռազմական դրությունների իրավական ռեժիմները):

Հատուկ վարչաիրավական ռեժիմները հանրային իրավունքի ոլորտում գործող հատուկ իրավական ռեժիմների տարատեսակներից են: Դրանք հիմնականում ուղղված են՝

1) պետության տարածքային ամբողջականությանն ու անվտանգությանը ներքին և արտաքին սպառնալիքների (պետության դեմ ուղղված ագրեսիա, զինված հակամարտություններ, զանգվածային անկարգություններ) առաջացման դեպքերում սահմանադրական անվտանգության ապահովմանը,

2) հասարակական բարձր վտանգավորություն և պետական կարևոր նշանակություն ունեցող օբյեկտների կենսագործունեության ապահովմանը,

3) պետաիրավական պահպանության հատուկ գոտիներ համարվող և այն տարածքներում, որտեղ անց են կացվում հատուկ բնապահպանական, սանիտարական, հակահրդեհային և այլ միջոցառումներ, իրավունքների և պարտականությունների իրացման կարգի, կենսագործունեության պայմանների որոշմանը,

4) արտակարգ իրավիճակների պայմաններում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների ապահովմանը, իրավիճակի կայունացմանը, իրավակարգի վերականգնմանը,

5) իշխանության մարմինների արդյունավետ գործունեության, դրանց կողմից վերահսկողական և հսկողական լիազորությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը:

Հատուկ վարչաիրավական ռեժիմների սահմանման համար հիմք են հանդիսանում այդպիսի ռեժիմների օբյեկտ-կրողների (օրինակ՝ պետական արգելոցի կամ պետական սահմանին անցագրային կետի) ստեղծումը, սոցիալական և բնական-տեխնոգեն բնույթի արտասովոր իրավիճակների և ռեժիմային կարգավորում պահանջող այլ գործոնների առաջացումը:

Որպես հատուկ վարչաիրավական ռեժիմների իրավական հիմք հանդես են գալիս ՀՀ Սահմանադրությունը (օրինակ՝ 55-րդ հոդվածի 13-14-րդ կետերը, 117-րդ հոդվածի 6-րդ կետը), օրենքները (օրինակ՝ «Պետական սահմանի մասին» (20.11.01), «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» (05.12.06), «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» (02.12.98), «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» (21.03.12) ՀՀ օրենքները), ՀՀ Նախագահի անհատական հրամանագրերը (օրինակ՝ «Երևան քաղաքում արտակարգ դրություն հայտարարելու մասին» ՀՀ Նախագահի 01.03.08 թվականի հրամանագիրը), կառավարության որոշումները (օրինակ՝ ՀՀ կառավարության 2005թ. նոյեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում արտակարգ իրավիճակների առաջացման մասին բնակչության ազդարարման կարգը հաստատելու մասին» թիվ 1925-Ն որոշումը) և այլ իրավական ակտեր:

Հատուկ վարչաիրավական ռեժիմներին բնորոշ են հետևյալ հիմնական հատկանիշները՝

1) դրանք սահմանվում են հանրային վարչակարգի գործունեության ոլորտում՝ պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից անվտանգության, պահպանության և պաշտպանության ապահովմանն ուղղված իրենց պարտականությունների կատարման կապակցությամբ,

2) ռեժիմային կանոնները ձևավորող կարգադրագրերը, որպես

կանոն, բաղկացած են արգելող և պարտավորեցնող վարչաիրավական նորմերից, որոնք սահմանափակում են ֆիզիկական և իրավաբանական անձանց ընդհանուր իրավասուբյեկտությունը,

3) հատուկ իրավական ռեժիմների պարտադիր սուբյեկտներն են հանրային իշխանության գործադիր մարմինները,

4) ռեժիմային կանոնների պահպանման կապակցությամբ բնակչության և հանրային վարչակարգի միջև ծագող իրավահարաբերությունները կարգավորելիս կիրառվում է վարչաիրավական ներգործության մեթոդը,

5) ռեժիմի կանոնների խախտումը հանգեցնում է կարգապահական և վարչական հարկադրանքի միջոցների կիրառմանը:

Վարչաիրավական ռեժիմները լայնորեն տարածված են հանրային կառավարման ոլորտում և արտացոլում են գործադիր իշխանության մարմինների կողմից իրականացվող խնդիրների ու գործառույթների բազմազանությունը: Որքան զարգացած է վարչաիրավական միջոցների համակարգը, որքան բազմազան են վարչական գործունեության ձևերը, այնքան կարևոր է դրանց միավորումը և տարբերակումը իրավաբանական նշանակություն ունեցող որոշակի հատկանիշներով: Հատուկ վարչաիրավական ռեժիմների դասակարգումը կոչված է օգնելու օրենսդրին համակարգված տեսքի բերելու իշխանության մարմինների տնօրինման ներքո գտնվող վարչաիրավական գործիքների կազմը, որպեսզի հնարավոր լինի ժամանակին արձագանքելու տարբեր ոչ տիպային իրավիճակների առաջացմանը, իրականացնելու հատուկ կարգավիճակ ունեցող տարածքների և օբյեկտների համարժեք և համալիր կարգավորումը:

Հատուկ վարչաիրավական ռեժիմները գրականության մեջ դասակարգվում են տարբեր տեսակների՝ ելնելով տարբեր չափանիշներից: Այսպես, ***կախված ենթակայությունից***՝ դրանք կարելի է բաժանել երեք խմբի՝

1) պետական ռեժիմներ, որոնք սահմանվում և կարգավորվում են պետական իշխանության մարմինների կողմից,

2) տարածաշրջանային ռեժիմներ, որոնք սահմանվում են պետական կառավարման տարածքային մարմինների կողմից,

3) տեղական ռեժիմներ, որոնք սահմանվում են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ մունիցիպալ կազմավորումնե-

րի տարածքում:

Ընդ որում, հատուկ վարչահիրավական ռեժիմների որոշ տեսակներ կարող են ընդգրկվել վերը նշված բոլոր խմբերում (օրինակ՝ բնական-տեխնոգեն բնույթի արտակարգ դրության ռեժիմը):

Եթե որպես տարանջատման չափանիշ ընտրենք ռեժիմի ***օբյեկտ-կրողին,*** ապա առանձնացվում են՝

1) տարածքային (օրինակ՝ արտակարգ, ռազմական դրությունների, կարանտինի, տնտեսական գոտու) ռեժիմները,

2) օբյեկտային (օրինակ՝ ատոմային էներգետիկայի օբյեկտի) ռեժիմները,

3) հասարակական բարձր վտանգավորություն կամ պետական կարևոր նշանակություն ունեցող օբյեկտների, առարկաների հետ վարվելու (օրինակ՝ զենքի, պետական գաղտնիք բովանդակող փաստաթղթերի, անձնագրային) ռեժիմները,

4) գործառութային գործունեության (օրինակ՝ արտակարգ իրավիճակների նախարարության մարմինների գործունեության, հակահրդեհային, տարհանման) ռեժիմները:

Ըստ կարգավորման առարկայի՝առանձնացվում են՝

1) բնապահպանական (օրինակ՝ արգելոցների, ազգային զբոսայգիների) ռեժիմները,

2) պետական անվտանգության ապահովման (օրինակ՝ պետական սահմանի, ռազմական օբյեկտների պաշտպանության) ռեժիմները,

3) հասարակական կարգուկանոնի պահպանության (օրինակ՝ արտակարգ դրության) ռեժիմները:

Ելնելով դրանց ***իրավաբանական հատկություններից***՝ տարբերակվում են սովորական և արտասովոր ռեժիմները: Վերջիններս կիրառվում են միայն սոցիալական կամ բնական-տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում՝ պայմանավորված, օրինակ, պետության դեմ ագրեսիայով, զանգվածային անկարգություններով, տարերային աղետներով:

Արտասովոր ռեժիմները բնակչության կենսագործունեության, տնտեսական և այլ գործունեության իրականացման, ինչպես նաև պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հատուկ իրավական ռեժիմներ են այն սահ-

մանվում տարածքում, որտեղ առաջ է եկել սպառնալիք անվտանգությանը և որը ճանաչված է արտակարգ դրության, զինված հակամարտության, ռազմական գործողությունների գոտի: Այսպիսի ռեժիմների տարբերիչ առանձնահատկություններն են՝

1) ֆիզիկական և իրավաբանական անձանց սահմանադրական իրավունքներն ու ազատությունները սահմանափակող միջոցների կիրառումը,

2) լրացուցիչ վարչաիրավական պարտականությունների և արգելքների սահմանումը,

3) ռեժիմի ապահովման համար իշխանության մարմիններին արտակարգ լիազորությունների տրամադրումը,

4) հատուկ կառավարման ձևերի կիրառումն այն տարածքում, որտեղ սահմանված է արտասովոր ռեժիմ:

Արտասովոր ռեժիմները ժամանակավոր հատուկ վարչաիրավական ռեժիմներ են, որոնք գործում են միայն արտակարգ իրավիճակի առկայության ժամանակահատվածում: Այդ ռեժիմների գործողությունը ենթակա է դադարեցման, եթե վերացել են դրանց սահմանման համար հիմք հանդիսացած հանգամանքները:

§2. Արտակարգ դրության պետական կառավարման վարչաիրավական կարգավորման առանձնահատկությունները

Արտակարգ դրությունն հատուկ իրավական ռեժիմ է, որը նախատեսում է ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված իրավունքների սահմանափակում, նրանց համար լրացուցիչ պարտականություններ, ինչպես նաև իշխանության մարմինների գործունեության հատուկ կարգ: Արտակարգ դրությունը հայտարարվում է բացառիկ դեպքերում՝ միայն այն հանգամանքների առկայության պարագայում, երբ *սահմանադրական կարգին անմիջական վտանգ է սպառնում* (ներառյալ՝ սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելու կամ տապալելու, իշխանությունը գրավելու փորձը, զինված խռովությունները, զանգվածային անկարգությունները, բռնի գործողություններով ուղեկցվող ազգային, ռասայական, կրոնական հակամարտությունները, ահաբեկ-

չական ակտերը, հատուկ նշանակության օբյեկտների գրավումը կամ շրջափակումը, անօրինական զինված խմբավորումների կազմակերպումը և գործունեությունը, արտակարգ իրավիճակները) և այդ վտանգի վերացումն անհնարին է առանց արտակարգ դրություն հայտարարելու, ֆիզիկական և իրավաբանական անձանց առանձին հիմնական իրավունքների ու ազատությունների ժամանակավոր սահմանափակումների («Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդված): Ընդ որում, արտակարգ դրություն կարող է հայտարարվել ՀՀ ամբողջ տարածքում կամ դրա որոշ տարածքներում:

Այսպես, ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 14-րդ կետի համաձայն՝ սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի դեպքում, ՀՀ Նախագահը, խորհրդակցելով Ազգային ժողովի նախագահի և վարչապետի հետ, հայտարարում է արտակարգ դրություն, իրականացնում իրավիճակից թելադրվող միջոցառումներ և այդ մասին ուղերձով դիմում է ժողովրդին: Արտակարգ դրություն հայտարարվելու դեպքում իրավունքի ուժով անհապաղ գումարվում է Ազգային ժողովի հատուկ նիստ[1]: Արտակարգ դրության իրավական ռեժիմը սահմանվում է օրենքով: Ընդ որում՝ ՀՀ Սահմանադրությունը նախատեսում է, որ օրենքով պետք է սահմանվի արտակարգ դրության միայն իրավական ռեժիմը: Մինչդեռ, արտակարգ դրություն հայտարարելու հիմքերի օրենսդրական ամրագրման անհրաժեշտության

[1] Ազգային ժողովը կարող է չեղյալ հայտարարել վերը նշված միջոցառումների իրականացումը (ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի 2-րդ մաս): Այս կապակցությամբ՝ ուշադրության են արժանի «Արտակարգ դրության պայմաններում մարդու իրավունքների մասին նորմերի Փարիզյան նվազագույն չափորոշիչները» (Paris Minimum Standards of Human Rights Norms in a State of Emergency (ILA, 1984, Vol 79 [1985] AJIL 1072): Դրանք նախատեսում են, որ յուրաքանչյուր պետության սահմանադրություն պետք է սահմանի արտակարգ դրություն հայտարարելու կարգը. ցանկացած դեպքում, երբ գործադիր իշխանությունն իրավասու է հայտարարել արտակարգ դրություն՝ այդպիսի պաշտոնական հայտարարումը միշտ պետք է ենթակա լինի հաստատման օրենսդրի կողմից՝ հնարավորինս սեղմ ժամկետներում (կետ 1-ին, (b)) (տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, ընդհ. խմբ. Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, «Իրավունք», 2010թ., էջ 639): Ռազմական դրության ժամանակ ՀՀ Ազգային ժողովն արձակվել չի կարող (ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդված):

մասին Սահմանադրության մեջ որևէ հիշատակում չկա:

ՀՀ Սահմանադրության 117-րդ հոդվածի 6-րդ կետով ամրագրված է, որ մինչև արտակարգ դրության իրավական ռեժիմի սահմանումն օրենքով սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի դեպքում Հանրապետության Նախագահը, խորհրդակցելով Ազգային ժողովի նախագահի և վարչապետի հետ, իրականացնում է իրավիճակից թելադրվող միջոցառումներ և այդ մասին ուղերձով դիմում ժողովրդին: Նման իրավիճակ առաջացավ 2008թ. մարտի 1-ին, երբ ՀՀ Նախագահը հրապարակեց հրամանագիր Երևան քաղաքում արտակարգ դրություն հայտարարելու մասին: Սույն հրամանագրով արտակարգ դրության գործողության տարածքում սահմանվեցին մի շարք ժամանակավոր սահմանափակումներ (հավաքների և այլ զանգվածային միջոցառումների իրականացման արգելում, իրավապահ մարմինների կողմից, անհրաժեշտության դեպքում, անձանց, տրանսպորտային միջոցների տեղաշարժի սահմանափակում և զննության իրականացում, ՁԼՄ-ների կողմից պետական և ներքաղաքական հարցերի առնչությամբ հրապարակումների հնարավորության նախատեսում՝ բացառապես պետական մարմինների պաշտոնական տեղեկատվության սահմաններում, առանց համապատասխան պետական մարմինների թույլտվության թռուցիկների և այլ ձևերով քաղաքական քարոզչության իրականացման արգելում, արտակարգ դրություն հայտարարելու համար հիմք ծառայող հանգամանքների վերացմանը խոչընդոտող կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների գործունեության ժամանակավոր կասեցում և այլն):

Տվյալ դեպքում ուշադրության է արժանի ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 2-րդ կետը, որտեղ հստակ ամրագրված է, որ ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակումները սահմանվում են ***բացառապես օրենքով***: ՀՀ Սահմանադրության 44-րդ հոդվածը նախատեսում է նաև արտակարգ դրության ժամանակ՝ արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում մարդու և քաղաքացու առանձին հիմնական իրավունքների և ազատությունների, բացառությամբ ՀՀ Սահմանադրության 15, 17-22 և 42-րդ հոդվածներում նշված-

ների՝ օրենքով սահմանված կարգով *ժամանակավոր սահմանափակման* հնարավորությունը: Նշվածից բխում է, որ առանձին հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման ժամկետը ոչ միայն չի կարող գերազանցել արտակարգ դրության գործողության ժամկետը, այլև՝ դրա գործողության ժամկետից պակաս լինել, եթե վերանում են այն հանգամանքները, որոնք հիմք են հանդիսացել այդ իրավունքների և ազատությունների սահմանափակման համար:

Արտակարգ դրություն հայտարարելու մասին ՀՀ Նախագահի հրամանագրում պետք է սահմանվեն նաև արտակարգ դրություն հայտարարելու համար հիմք ծառայած հանգամանքները, այսպիսի դրություն հայտարարելու անհրաժեշտության հիմնավորումը, արտակարգ դրության գործողության սահմանները, դրա իրավական ռեժիմն ապահովող միջոցառումները[3], միջոցները և ուժերը[4]: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ արտակարգ դրություն հայտարարելու իրավաչափությունը նաև չի ենթադրում, որ իրավաչափ են այն միջոցառումները, որոնք նախատեսվում են համապատասխան ակտով: Օրինակ՝ Ա.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով (A. v United Kingdom [2009] ECHR 301 paras. 181 and 190) ՄԻԵԴ-ն ընդունել է, որ պետության կողմից... արձագանքը եղել է լեգիտիմ, սակայն գտել է, որ անհա-

---

[1] Արտակարգ դրության գործողության տարածքում կարող են կիրառվել այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք են հասարակական կարգի, պետական պահպանության ենթակա օբյեկտների, ինչպես նաև բնակչության կենսապահովման օբյեկտների պահպանության ուժեղացումը, սենդամթերքի և առաջին անհրաժեշտության ապրանքների ձեռքբերման, վաճառքի և շրջանառության հատուկ կարգի սահմանումը ՀՀ կառավարության կողմից, գործադիր իշխանության հանրապետական և տարածքային կառավարման մարմինների լիազորությունների ժամանակավոր սահմանափակումը կամ կասեցումը, պարետային ժամի սահմանումը, այսինքն՝ ամբողջ օրը կամ օրվա որոշակի ժամանակահատվածում առանց անձը հաստատող փաստաթղթերի և հատուկ թույլտվությունների փողոցներում ու այլ հասարակական վայրերում գտնվելու արգելումը, տրանսպորտային միջոցների տեղաշարժման սահմանափակումը և դրանց զննման իրականացումը, անձը հաստատող փաստաթղթերի ստուգումը, անձնական առարկաների զննումը, արտակարգ դրության իրավական ռեժիմը խախտած և տվյալ տարածքում չբնակվող անձանց վտարումը՝ նրանց միջոցների հաշվին, իսկ նման միջոցներ չլինելու դեպքում՝ ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին՝ կատարված ծախսերի հետագա փոխհատուցման պայմանով և այլն:

[2] Արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովելու նպատակով կարող են օգտագործվել ոստիկանության, ազգային անվտանգության և պաշտպանության պետական լիազոր մարմինների ուժերն ու միջոցները:

մաչափ են եղել այն միջոցառումները, որոնք պետությունն իրականացրել է այդ օբյեկտիվորեն առկա արտակարգ դրության արձագանքելիս: Հենց այստեղ է գործի դրվում միջամտության թեստը: Օրինակ՝ Լոուլեսն ընդդեմ Իռլանդիայի գործով ՄԻԵԴ-ը որոշել է, որ անհրաժեշտ և օրինական ճանաչվելու համար պետք է պարզ լինի, որ մարդու իրավունքների նկատմամբ նվազ ներգործություն ունեցող այլ միջոցներով անհնարին է հասնել խնդրի լուծմանը (Lawless v. Ireland, A 3 (1961))[5]:

Քանի որ արտակարգ դրության գործողության ժամանակահատվածում կարող են ստեղծվել պետական հատուկ մարմիններ, ՀՀ Նախագահի հրամանագրում պետք է սահմանվեն նաև այդ մարմինները[6] և դրանց իրավասության շրջանակները, արտակարգ դրության պայմաններում կիրառվող միջոցառումների իրականացման համար պատասխանատու պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք, ինչպես նաև արտակարգ դրության ուժի մեջ մտնելու օրը, ամիսը, ամսաթիվը և դրա գործողության ժամկետները:

Արտակարգ դրության ժամանակ ՀՀ Նախագահն իրավունք ունի կասեցնել գործադիր իշխանության հանրապետական և տարածքային կառավարման մարմինների իրավական ակտերը:

ՀՀ ամբողջ տարածքում հայտարարվող արտակարգ դրության ժամկետը չի կարող գերազանցել *30 օրը,* իսկ Հանրապետության առանձին տարածքներում՝ *60 օրը:* Նշված ժամկետների ավարտից հետո արտակարգ դրությունը դադարում է: Իսկ եթե այդ ժամկետների ընթացքում չեն վերացել այն հանգամանքները, որոնք հիմք են հանդիսացել արտակարգ դրություն հայտարարելու համար, արտակարգ դրության ժամկետը կարող է երկարաձգվել ՀՀ Նախագահի հրամա-

---

[1] Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, ընդհ. խմբ. Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, «Իրավունք», 2010թ., էջեր 640-641:

[2] Արտակարգ դրություն հայտարարելու համար հիմք ծառայած հանգամանքների վերացման և այլ հրատապ հարցեր լուծելու նպատակով ՀՀ Նախագահի հրամանագրով կարող է ստեղծվել *արտակարգ դրության տարածքի պարետատուն,* որն իրականացնում է արտակարգ դրության տարածքում արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովող ուժերի և միջոցների միասնական ղեկավարումը: Պարետատունը ղեկավարում է պարետը, որը նշանակվում է ՀՀ Նախագահի կողմից:

նագրով՝ արտակարգ դրություն հայտարարելու համար օրենքով սահմանված կարգով և վերը նշված ժամկետները չգերազանցող ժամկետներով («Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդված):

Եթե արտակարգ դրություն հայտարարելու համար հիմք ծառայած հանգամանքները վերացել են մինչև արտակարգ դրության գործողության ժամկետի լրանալը, ապա արտակարգ դրությունը դադարեցվում է ՀՀ Նախագահի հրամանագրով, որը ենթակա է անհապաղ հրապարակման հանրային հեռուստատեսությամբ, հանրային ռադիոյով, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա զանգվածային լրատվության այլ միջոցներով: ՀՀ Նախագահի հրամանագիրն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Արտակարգ դրությունը կամ դրա որևէ միջոցառում դադարեցվում է նաև ՀՀ Ազգային ժողովի կողմից արտակարգ դրության իրավական ռեժիմի ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացումը չեղյալ հայտարարվելու դեպքում□ ՀՀ Ազգային ժողովի որոշումը հրապարակվում է վերը նշված կարգով:

Արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովելու նպատակով ընդունված և ֆիզիկական ու իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների ժամանակավոր սահմանափակման հետ կապված իրավական ակտերը կիրառվում են միայն արտակարգ դրության գործողության ժամկետի ընթացքում և ուժը կորցրած են ճանաչվում արտակարգ դրությունը դադարեցնելուց հետո՝ անհապաղ, այդ ակտերն ընդունած մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից՝ համապատասխան իրավական ակտերով:

Հայրենական իրավունքի համակարգում, ցավոք, «արտակարգ դրություն» եզրույթը համարժեք չի ընկալվել, ինչի արդյունքում էլ, սոսկ որոշակի հրապարակային քննադատությունից հետո, 2012թ. մարտի 21-ին ընդունված «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի միայն վերջնական տարբերակում հայտնվեց «արտակարգ իրավիճակ» եզրույթը, որպես արտակարգ դրություն հայտարարելու հիմք: Այսինքն, այդ օրենսդրական ակտի քննարկումների ողջ ընթացքում տեխնոծին աղետները չէին դիտարկվում որպես արտակարգ դրություն հայտարարելու հիմք:

Ինչ խոսք, վերը նշված նորամուծությունը տեսականորեն կարող էր նպաստել իրավական պատկերացումները շտկելուն, քանզի վերջապես «արտակարգ իրավիճակը» ևս ընկալվեց, որպես սահմանադրական կարգին սպառնացող վտանգ՝ դրանից բխող բոլոր իրավական հետևանքներով հանդերձ: Ի դեպ, «արտակարգ դրության» եզրույթի լայն մեկնաբանությունը բնորոշ է նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիային (15-րդ հոդված): Սակայն գործնական հարթությամբ խնդիրն այդպես էլ համալիր լուծում չստացավ:

Հարկ է նկատել, որ միայն արտակարգ դրություն հայտարարելու դեպքում կարող են ժամանակավորապես սահմանափակվել մարդկանց սահմանադրական իրավունքները, ինչը հաճախ բխում է հենց այդ անձանց շահերից: Մինչդեռ, օրենսդիրը սահմանադրական իրավունքների սահմանափակումներ է նախատեսել նաև «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքով, ինչը պարզապես հակասում է ՀՀ Սահմանադրության 44-րդ հոդվածին: Հետևաբար, իրավաչափ լուծում կարող էինք ունենալ միայն այն դեպքում, երբ «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքից հանվեին բոլոր այն իրավական նորմերը, որոնք նախատեսում են սահմանադրական իրավունքների սահմանափակման հիմքեր, մանավանդ, որ արտակարգ իրավիճակն արդեն համարվում է արտակարգ դրության հիմք:

Ի դեպ, օրենսդրական ակտի վերջնական տարբերակում արտակարգ իրավիճակի առնչությամբ լրացումը նպաստեց նաև զինված ուժերի ներգրավման մասին առավել համարժեք պատկերացումներ ունենալուն: Մինչ այդ, քննարկումներն ընթանում էին բացառապես այն կտրվածքով, թե որքանով է իրավաչափ զինված ուժերի ներգրավումը անօրինական զինված միավորումների գործունեության դադարեցման գործում: Սակայն արտակարգ իրավիճակի տեսանկյունից զինված ուժերի ներգրավումը այլևս դադարեց վիճահարույց լինելուց, քանզի յուրաքանչյուրը համամիտ է, որպեսզի բնական աղետների (երկրաշարժ, ջրհեղեղ և այլն) դեպքում ևս անհապաղ իրենց աջակցությունը ցուցաբերեն զինված ուժերը՝ գործի դնելով իրենց համապատասխան տեխնիկան:

Վերը նշվածը բնավ նորույթ չէ, այլ քաջածանոթ երևույթ է մի-

ջազգային փորձին. բոլոր աղետների դեպքում էլ առաջին ու գործուն միջամտությունն ի զորու են լինում ցուցաբերելու հենց զինված ուժերը: Պարզապես, տվյալ դեպքում զինված ուժերի գործադրումը ձեռք է բերում բոլորովին այլ նշանակություն և իմաստ, այն ուղղված է ոչ թե իրավախախտում թույլ տվող որոշ մարդկանց, այլ հանրությանը բնական աղետների հետևանքներից պաշտպանելուն: Ընդ որում, ռազմական տեխնիկան, բնականաբար, օգտագործվում է ոչ իր անմիջական նշանակությամբ. օրինակ՝ տանկերը կարող են օգտագործվել բնակչությանն անանցանելի տարածքներից տարհանելու, ստրատեգիական ճանապարհների անցողիկությունն ապահովելու համար և այլն:

§3. Ռազմական դրության պետական կառավարման վարչաիրավական կարգավորման առանձնահատկությունները

Ռազմական դրությունը ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակում, նրանց համար լրացուցիչ պարտավորություններ, ինչպես նաև իշխանության մարմինների գործունեության հատուկ կարգ նախատեսող հատուկ իրավական ռեժիմ է, որն ուղղված է պետության վրա զինված հարձակմանը դիմակայելուն կամ դրա կանխմանը նպաստող իրավական, կազմակերպական և տնտեսական պայմանների ստեղծմանը: «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի (05.12.06) 1-ին հոդվածի համաձայն՝ ռազմական դրությունը բացառապես ՀՀ վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարվելու դեպքում իրականացվող ժամանակավոր միջոցառում է, որն իրենից ներկայացնում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների գործունեության հատուկ իրավական ռեժիմ, և թույլատրում է իրավաբանական անձանց, ՀՀ քաղաքացիների և օտարերկրացիների իրավունքների և ազատությունների որոշակի սահմանափակումների և նրանց նկատմամբ լրացուցիչ պարտավորությունների սահմանում: Ընդ որում, անձի մի շարք հիմնական իրավունքներ և ազատություններ ենթակա չեն սահմանափակման անգամ ռազմական

դրության ժամանակ[1]:

ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 13-րդ կետի համաձայն՝ Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարվելու դեպքերում ՀՀ Նախագահը հայտարարում է ռազմական դրություն և կարող է հայտարարել ընդհանուր կամ մասնակի զորահավաք ու որոշում է ընդունում զինված ուժերի օգտագործման մասին: Պատերազմի ժամանակ ՀՀ Նախագահը կարող է նշանակել և ազատել զինված ուժերի գլխավոր հրամանատարին: Զինված ուժերի օգտագործման կամ ռազմական դրություն հայտարարվելու դեպքերում իրավունքի ուժով անհապաղ գումարվում է Ազգային ժողովի հատուկ նիստ[2]: ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետում ամրագրված է, որ պատերազմ հայտարարելու մասին որոշումն ընդունում է Ազգային ժողովը՝ ՀՀ Նախագահի առաջարկությամբ: Ազգային ժողովի նիստ գումարելու անհնարինության դեպքում պատերազմ հայտարարելու հարցը լուծում է ՀՀ Նախագահը[3]:

Դեռևս 1907 թվականի հոկտեմբերի 18-ին ընդունվել է Հաագայի 3-րդ կոնվենցիան պատերազմական գործողություններ սկսելու մասին, որի 1-ին հոդվածի համաձայն՝ պետությունների միջև ռազմական գործողությունները չպետք է սկսվեն առանց նախնական և ոչ երկիմաստ նախազգուշացման, ինչը պետք է ունենա կամ պատերազմ հայտարարելու պատճառաբանված ձև կամ վերջնագրի ձև՝ պատերազմի պայմանական հայտարարմամբ: Սակայն ժամանակակից միջազգային իրավունքին համապատասխան՝ ինքնին պատերազմ հայտարարելը չի կարող լինել ագրեսիայի արդարացում կամ դրա քողա-

---

[1] Մարդու և քաղաքացու առանձին հիմնական իրավունքներ ու ազատություններ, *բացառությամբ ՀՀ Սահմանադրության 15, 17-22 և 42-րդ հոդվածներում նշված-ների,* կարող են օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես սահմանափակվել նաև ռազմական դրության ժամանակ՝ արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում (ՀՀ Սահմանադրության 44-րդ հոդված):

[2] Ազգային ժողովը կարող է չեղյալ հայտարարել վերը նշված միջոցառումների իրականացումը (ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի 2-րդ մաս), ինչը լրջագույն հակակշիռ է իշխանությունների բաժանման կառուցակարգում:

[3] Նշված դրույթն իր ամրագրումն է ստացել նաև «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքում (27.11.08) (5-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետ):

ծածկույթ:

Պատերազմի հայտարարումը, անկասկած, հանգեցնում է ռազմական դրության հայտարարման, ինչն իր հետ բերում է միջազգային-իրավական մի շարք հետևանքներ՝ խաղաղ հարաբերությունների ավարտ, դիվանագիտական և հյուպատոսական հարաբերությունների խզում, պատերազմող կողմերի միջև միջազգային պայմանագրերի գործողության դադարեցում, և սկսվում է պատերազմի օրենքներն ու սովորույթները (Ժնևյան 1949թ. կոնվենցիաներ) կարգավորող համաձայնագրերի կիրառումը[4]:

ՀՀ-ում ռազմական դրություն հայտարարելու նպատակն է դիմակայել պետության վրա զինված հարձակմանը կամ կանխել դրա անմիջական վտանգը, ինչպես նաև ապահովել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների բնականոն գործունեությունն ու մարդկանց կյանքի և անվտանգության պաշտպանությունը՝ ռազմական դրության պայմաններում: Ռազմական դրություն հայտարարվում է միայն այն հանգամանքների առկայության դեպքում, որոնք անմիջականորեն սպառնում են ՀՀ ինքնիշխանությանը, անվտանգությանը, տարածքային ամբողջականությանը և դրանով պայմանավորված՝ քաղաքացիների կյանքին ու անվտանգությանը, և այդ հանգամանքների վերացումն անհնարին է առանց արտակարգ միջոցներ ձեռնարկելու: Այդ հանգամանքներն են՝

1) այլ պետության զինված ուժերի ներխուժումը ՀՀ տարածք, դրա հետևանքով ՀՀ ցանկացած տարածքի բռնազավթումը,

2) այլ պետության զինված ուժերի կողմից ՀՀ տարածք ներխուժելու անմիջական վտանգի առկայությունը,

3) այլ պետության զինված ուժերի կողմից ՀՀ տարածքի ռմբահարումը,

4) այլ պետության զինված ուժերի կողմից ՀՀ զինված ուժերի կամ այլ զորքերի վրա հարձակումը՝ անկախ վերջիններիս տեղակայման վայրից,

5) այլ պետության գործողությունները, որոնք թույլ են տալիս երրորդ պետությանը իր տարածքն օգտագործել ՀՀ նկատմամբ զինված

---

[1]Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, ընդհ. խմբ. Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, «Իրավունք», 2010թ., էջ 778:

հարձակում իրականացնելու համար,

6) այլ պետության կողմից ՀՀ տարածք ուղարկված կամ նրա անունից գործող զինված խմբերի, ապակայունացնող ուժերի կամ վարձկանների զինված ոտնձգությունները Հայաստանի Հանրապետության նկատմամբ:

Հայաստանի Հանրապետության նկատմամբ զինված հարձակում կարող են համարվել նաև այլ պետության զինված ուժերի կողմից ցանկացած այլ գործողությունները կամ դրանց նախապատրաստությունը, ինչպես նաև Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության կամ միջազգային իրավունքի համընդհանուր սկզբունքների և նորմերի խախտմամբ իրականացված այլ գործողությունները, որոնք իրական սպառնալիք են ստեղծում ՀՀ ինքնիշխանության, անվտանգության և տարածքային ամբողջականության համար, ներառյալ՝ Հայաստանի Հանրապետությանը պատերազմ հայտարարելը:

Ռազմական դրություն հայտարարելու մասին ՀՀ Նախագահի հրամանագրում պետք է սահմանվեն ռազմական դրություն հայտարարելու համար հիմք ծառայած հանգամանքները, ռազմական դրություն հայտարարելու անհրաժեշտության հիմնավորումը, այն տարածքի սահմանները, որտեղ հայտարարվում է այսպիսի դրություն, ռազմական դրության իրավական ռեժիմն ապահովող միջոցները և ուժերը[5], ՀՀ քաղաքացիների, օտարերկրացիների, կազմակերպությունների իրավունքների և ազատությունների ժամանակավոր սահմանափակումների, կիրառվող միջոցառումների, ինչպես նաև նրանց նկատմամբ լրացուցիչ պարտավորությունների ցանկը: Հրամանագրում պետք է սահմանվեն նաև ռազմական դրության ժամանակահատվածում ստեղծվող պետական հատուկ մարմինները և դրանց ի-

[1] Ռազմական դրության իրավական ռեժիմն ապահովելու նպատակով օգտագործվում են ՀՀ պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության, արդարադատության և այլ պետական լիազոր մարմինների, Հայաստանի փրկարար ծառայության ուժերն ու միջոցները: Ռազմական դրության գործողության տարածքում պատերազմական գործողություններ իրականացվելու դեպքում «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքով նախատեսված միջոցառումների իրագործումը ՀՀ Նախագահի հրամանագրով կարող է վերապահվել զինվորական կառավարման մարմիններին:

ռավասությունների շրջանակները, ռազմական դրության պայմաններում կիրառվող միջոցառումների իրականացման համար պատասխանատու պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք, քաղաքացիական պաշտպանության նախապատրաստական կամ հիմնական միջոցառումների իրականացումը, ինչպես նաև ռազմական դրության գործողությունն ուժի մեջ մտնելու ժամկետը: Ռազմական դրություն հայտարարելու մասին ՀՀ Նախագահի հրամանագիրը ենթակա է անհապաղ հրապարակման հեռուստատեսությամբ, ռադիոյով և մամուլով:

Ռազմական դրություն հայտարարվելու դեպքում դրա ամբողջ ժամկետի ընթացքում կարող են իրականացվել այնպիսի միջոցառումներ և ժամանակավոր սահմանափակումներ, ինչպիսիք են ՀՀ զինված ուժերի և այլ զորքերի փոխադրումը լիակատար մարտական պատրաստականության, ընդհանուր կամ մասնակի զորահավաքի հայտարարումը և անցկացումը, Հայաստանի փրկարար ծառայության ստորաբաժանումների համալրումը, լիակատար պատրաստականության փոխադրումը և «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքով (05.03.02) սահմանված միջոցառումների իրականացումը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտպանական, պետության ու տնտեսության կենսագործունեության համար հատուկ նշանակություն ունեցող օբյեկտների փոխադրումը ռազմական դրության աշխատանքային ռեժիմի, ռազմական դրության գործողության տարածքում տեղաշարժման ազատության սահմանափակումը, ինչպես նաև նշված տարածք մուտք գործելու և տարածքից դուրս գալու հատուկ ռեժիմի սահմանումը, հավաքների և հանրային միջոցառումների իրականացման արգելումը կամ սահմանափակումը, գործադուլների արգելումը, ռազմական դրության պայմաններում ՀՀ պաշտպանունակության ու անվտանգության դեմ ուղղված քարոզչություն և այլ գործունեություն ծավալած կուսակցությունների, հասարակական ու կրոնական կազմակերպությունների գործունեության կասեցումը՝ օրենքով սահմանված կարգով, պարետային ժամի սահմանումը, օրենքով սահմանված կարգով խոսքի ազատության սահմանափակումը և այլն:

ՀՀ տարածքում ռազմական դրություն հայտարարվելու դեպքում

Հանրապետության Նախագահի ընտրություն չի անցկացվում, իսկ Ազգային ժողովը չի կարող արձակվել: ՀՀ Նախագահը և Ազգային ժողովն իրենց լիազորություններն իրականացնում են ռազմական դրության գործողության ամբողջ ժամկետի ընթացքում: Տարածքում, որտեղ հայտարարվել է ռազմական դրություն ընտրություններ և հանրաքվեներ չեն անցկացվում՝ մինչև ռազմական դրության գործողության ժամկետի ավարտը: Այդ ընթացքում պետական կառավարման ընտրովի և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց լիազորությունների ժամկետի ավարտման դեպքում դրանք երկարաձգվում են մինչև ռազմական դրության գործողության ժամկետի ավարտը, եթե նրանց լիազորությունները չեն դադարեցվել «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով[6]:

Ռազմական դրության պայմաններում իրականացվող միջոցառումները և ֆիզիկական անձանց սահմանադրական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների փոփոխությունները, ինչպես նաև իրավաբանական անձանց առաջադրվող լրացուցիչ պարտավորությունները պետք է իրականացվեն այն սահմաններում, որոնք համարժեք են ռազմական դրություն հայտարարելու համար հիմք ծառայած հանգամանքներին, ինչպես նաև պետք է համապատասխանեն մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում ՀՀ միջազգային պարտավորություններին և բխեն ռազմական դրության պայմաններում (արտակարգ իրավիճակներում) պարտավորություններից շեղվելու վերաբերյալ միջազգային պարտավորություններից:

Ռազմական դրություն հայտարարելու համար հիմք ծառայած հանգամանքներից կամ դրանց հետևանքների վերացման գործողություններից տուժած ֆիզիկական անձանց փոխհատուցվում է կրած նյութական վնասը, և տրամադրվում է անհրաժեշտ օգնություն՝ կա-

---

[1] Ռազմական դրության պայմաններում պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները և գործունեության առանձնահատկությունները սահմանված են «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի 4-րդ գլխում:

ռավարության սահմանած կարգով[7]: Ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնց գույքն ու այլ միջոցներն օգտագործվել են ռազմական դրության հետևանքների վերացման նպատակով, իրավունք ունեն ստանալ համարժեք փոխհատուցում՝ կառավարության սահմանած կարգով[8]: Ֆիզիկական անձինք և պաշտոնատար անձինք պարտավոր են կատարել ռազմական դրության գործողության տարածքում դրա իրավական ռեժիմն ապահովող մարմինների և ուժերի պահանջները, ինչպես նաև մասնակցել և աջակցել ռազմական դրության իրավական ռեժիմի ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացմանը: Ռազմական դրության իրավական ռեժիմի պահանջները խախտած ֆիզիկական անձինք և պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով:

Ռազմական դրություն հայտարարելու համար հիմք ծառայած հանգամանքների վերացման դեպքում ռազմական դրությունը կարող է ամբողջությամբ կամ մասնակիորեն դադարեցվել ՀՀ Նախագահի հրամանագրով, որի մասին բնակչությունն իրազեկվում է ռազմական դրություն հայտարարելու մասին տեղեկացվելու կարգով: Ռազմական դրության իրավական ռեժիմն ապահովելու նպատակով ընդունված և ֆիզիկական ու իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների ժամանակավոր սահմանափակումներ նախատեսող նորմատիվ իրավական ակտերը կիրառվում են միայն ռազմական դրության գործողության ժամկետի ընթացքում և ուժը կորցրած են ճանաչվում ռազմական դրության գործողության դադարեցման հետ միաժամանակ՝ առանց այդ մասին հատուկ իրազեկելու:

---

[1] Տե՛ս ՀՀ կառավարության 2007թ. օգոստոսի 9-ի «Ռազմական դրություն հայտարարելու համար հիմք ծառայած հանգամանքներից կամ դրանց հետևանքների վերացման գործողություններից տուժած ֆիզիկական անձանց կրած նյութական վնասները փոխհատուցելու և նրանց օգնություն տրամադրելու կարգը սահմանելու մասին» թիվ 905-Ն որոշումը:

[2] Տե՛ս ՀՀ կառավարության 2007թ. հուլիսի 19-ի «Ռազմական դրության հետևանքների վերացման նպատակով ֆիզիկական և իրավաբանական անձանց գույքի ու այլ միջոցների օգտագործման դիմաց համարժեք փոխհատուցման կարգը սահմանելու մասին» թիվ 832-Ն որոշումը:

ԲԱԺԻՆ ՉՈՐՐՈՐԴ
ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 13.
ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

§1. Վարչական վարույթի հասկացությունը և կիրառման շրջանակները

Ինչպես օրենսդրությունում, այնպես էլ վարչական իրավունքի տեսությունում «***վարչական վարույթ***» հասկացությունը օգտագործվում է մի քանի իմաստով, ինչը պայմանավորված է խնդիրների ու իրականացման ընթացակարգերով էապես տարբերվող վարչական գործընթացների բազմազանությամբ:

Վարչական իրավունքում, թերևս, հիշյալ եզրույթին տրվում է առավել լայն բնորոշում. վերջինս օգտագործվում է որպես գործադիր իշխանության կողմից իրականացվող ցանկացած գործառույթի ընթացակարգ: Տվյալ դեպքում նկատի չի առնվում, թե տվյալ գործունեությունը միտված է ներքին կազմակերպչական խնդիրների լուծմանը, թե առաջացնում է իրավական որոշակի հետևանքներ արտաքին հարաբերություններում նույն այդ սուբյեկտների հետ փոխհարաբերության մեջ գտնվող այլ սուբյեկտների համար: Միաժամանակ, վարչական իրավունքում հստակ ընդգծվում է «վարչական վարույթ» եզրույթը մի քանի այլ իմաստներով օգտագործելու անհրաժեշտությունը: Մասնավորապես, վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարույթը, ինչը ևս վարչական իրավունքի ինստիտուտներից է, միանշանակ համարվում է վարույթի ինքնուրույն տեսակ և իրականացվում է առանձնահատուկ ընթացակարգերով:

Արտասահմանյան երկրների վարչական վարույթի ու դատավարության համեմատական վերլուծությունը վկայում է այն մասին, որ վարչական իրավունքում «վարչական վարույթ» եզրույթը հիմնակա-

նում օգտագործվում է դրա նեղ իմաստով: Մասնավորապես, նկատի է առնվում գործադիր իշխանության մարմինների այն գործունեությունը, որն ուղղված է արտաքին ներգործություն ունեցող վարչական ակտի ընդունմանը: Հենց այս իմաստն է ամրագրված նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում (այսուհետ այս գլխում՝ Օրենք). «Վարչական վարույթը վարչական մարմնի՝ վարչական ակտ ընդունելուն ուղղված գործունեությունն է» (19-րդ հոդված): Խոսքն այնպիսի ակտ ընդունելու մասին է, որը հանգեցնում է գործադիր իշխանությունից դուրս գտնվող իրավունքի սուբյեկտների համար իրավունքներ և պարտականություններ ծագելուն, փոփոխելուն կամ դադարեցնելուն:

Այսպիսով, ***«վարչական վարույթ» եզրույթը մեկնաբանվում է որպես վարչական մարմնի կողմից վարչական ակտ ընդունելուն ուղղված գործունեություն և այդ հիմքով ընդգրկում է բոլոր այն գործընթացները, որոնք անհրաժեշտ են այդպիսի ակտի ընդունումն ապահովելու իրավաչափ շահերին***: Ընդ որում, այդ գործընթացներն իրականացվում են առանձին փուլերով:

Օրենքը չի բացառում վարչական վարույթի առանձին տեսակների գոյությունը. «Առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և ՀՀ միջազգային պայմանագրերով» (2-րդ հոդվածի 3-րդ մաս): Գործնականում սակավաթիվ չեն վարչական վարույթի առանձին տեսակներ սահմանող օրենսդրական ակտերը, այդ թվում՝ կառավարության որոշումները: Մասնավորապես, վարչական վարույթի ինքնուրույն տեսակներ են սահմանված Վարչ. օր.-ով (06.12.1985), ՀՀ մաքսային օրենսգրքով (06.07.00), «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման ու անցկացման մասին» ՀՀ օրենքով (17.05.00) և այլն:

Առանձին վարչական վարույթների տեսակների առնչությամբ առանցքային նշանակություն ունեն հետևյալ հարցադրումները՝ ա) Օրենքի՝ վարչական վարույթին վերաբերող ընդհանուր դրույթները կիրառելի՞ են, արդյոք, վարույթի առանձին տեսակների պարագայում, բ) որքանո՞վ է արդարացի վարույթի առանձին տեսակներ սահմանելու ինստիտուտը, դա չի՞ խաթարում, արդյոք, կամայականության արգելքի սկզբունքը: Հարցերի այս հաջորդականությունն ընտրել ենք այն նկատառումով, որպեսզի առաջին հարցի կապակցությամբ դա-

տողությունները հնարավորություն տան պատկերացում կազմել նաև հաջորդ հարցի վերաբերյալ:

Ինչևէ, առաջին հարցադրման առնչությամբ հարկ է նկատել, որ հիմնականում գործող օրենսդրական ակտերը չեն բացառում վարույթի առանձին տեսակի շրջանակներում Օրենքի դրույթների կիրառման հնարավորությունը: Իսկ ինչ չափով են կիրառելի Օրենքի դրույթները, պայմանավորված է յուրաքանչյուր դեպքում իրավական կարգավորման վիճակից: Մասնավորապես, առանձին վարչական վարույթի տեսակ կարգավորող օրենքի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի միջև հակասության դեպքում նախապատվությունը տրվում է առաջինին, ինչը համահունչ է նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

Գործնականում բարդությունը պայմանավորված է հենց իրավական ակտերի գնահատման խնդրով, քանզի իրավագիտական անհրաժեշտ պատրաստվածության դեպքում է միայն հնարավոր հստակ գնահատել նույնական իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերի հակասության խնդիրը, քանզի անհամեմատ դյուրին է լուծել տարբեր իրավական ուժ ունեցող իրավական ակտերի միջև հակասության խնդիրը: Ընդ որում, միևնույն իրավական ուժ ունեցող իրավական ակտերի հակասության դեպքում հարկ է ղեկավարվել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ և 94-րդ (այս հոդվածի դրույթները կիրառելի են մինչև նշված օրենքի ուժի մեջ մտնելն ընդունված իրավական ակտերի փոխհարաբերության դեպքում) հոդվածների պահանջներով:

Ինչ վերաբերում է երկրորդ հարցին, ապա անհրաժեշտ ենք համարում նկատել, որ առանձին վարույթի տեսակներ սահմանելն ինքնին բացասական երևույթ չէ և չի հակասում կամայականության արգելքի սկզբունքին, սակայն դա չպետք է լինի ինքնանպատակ: Առանձին տեսակներ սահմանելը պետք է բացառապես թելադրված լինի վարչարարության ոլորտում անձանց իրավունքների իրականացման և պաշտպանության առավել երաշխավորված ընթացակարգեր սահմանելու անհրաժեշտությամբ: Սակայն այդ խնդրին առնչվող օրենսդրական ակտերի վերլուծությունը բերում է այն համոզման, որ հաճախ վարչական վարույթի առանձին տեսակներ սահմանելը հանգեցնում է կառավարման այս կամ այն ոլորտում սոսկ վարչական

մարմինների գործունեության համար առավել նախընտրելի պայմաններ ամրագրելուն, ինչը միշտ չէ, որ համահունչ է լինում այդ մարմինների հետ հարաբերվող իրավունքի սուբյեկտների համար: Կարծում ենք, վերը նշվածը հիմնավորելու համար բավական է թեկուզ ուսումնասիրել առանձին վարչական վարույթների համար սահմանված անհարկի երկարատև ժամկետները, վարչական վարույթ իրականացնող մարմինների և դրանց պաշտոնատար անձանց լիազորությունների շրջանակը և նմանաբնույթ այլ հարցեր:

Այժմ անդրադառնանք այն հարցին, թե Օրենքի հատկապես որ նորմերն են կիրառելի վարչական վարույթի առանձին տեսակների պարագայում: Այս հարցում բավականին հետաքրքիր մոտեցումներ կան: Անգամ այն կարծիքն է հայտնվել, որ հիշյալ օրենքով ամրագրված սկզբունքները ոչ միշտ են կիրառելի վարույթի այլ տեսակների պարագայում[1]: Տվյալ դեպքում Օրենքի այն նորմին, ըստ որի կարող են սահմանվել «առանձին տեսակի վարչական վարույթների *առանձնահատկություններ*», տրվել է անհարկի տարածական մեկնաբանություն. իրավունքի միևնույն ճյուղի շրջանակներում չեն կարող սահմանվել տարբեր սկզբունքներ, իսկ առանձնահատկությունները կարող են վերաբերել միայն կոնկրետ ընթացակարգերին:

Մասնավորապես, խիստ վիճարկելի է նշված աղբյուրի հեղինակների կողմից որպես հիմնավորում բերված այն օրինակը, որ իբր. «Եթե, օրինակ, հատուկ օրենքում ամրագրված են այնպիսի սկզբունքային դրույթներ, որոնք բացառում են վարչական մարմնի արագ գործելու պարտականությունը, բնականաբար, Օրենքի այդ սկզբունքը չի կարող կիրառվել տվյալ հարցը լուծելու համար»: Նկատենք, որ պարզապես չկան և չեն կարող լինել այնպիսի սկզբունքային դրույթներ, որոնք բացառեն վարչական մարմնի արագ գործելու պարտականությունը: Այսպես, եթե պահանջվում է իրականացնել առավել հանգամանալից ու բարդ ընթացակարգեր, դա բնավ չի բացառում դրանք արագ կատարելու անհրաժեշտությունը: Իսկ եթե պահանջվում է որոշակի ժամկետ տրամադրել վարույթի մասնակցին, ապա դա չի նշա-

[1] Տե՛ս Հարցեր և պատասխաններ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի վերաբերյալ, «Հարդ ընդ սոֆթ» հրատ., Երևան 2007, էջ 19:

նակում, որ վարչական մարմինը ազատվում է իր գործողությունները սեղմ ժամկետում կատարելու պարտականությունից:

Այսպիսով, առավել հիմնավորված ենք համարում այն մոտեցումը, ըստ որի Օրենքում ամրագրված սկզբունքները կիրառելի են վարչական վարույթի բոլոր տեսակների պարագայում: Ինչ վերաբերում է առանձնահատկություններին, ապա դրանք կարող են վերաբերել միայն այնպիսի ընթացակարգային դրույթների, որոնք հակասության մեջ չեն հիմնարար սկզբունքների հետ:

Մեկ հարցադրում ևս. եթե հատուկ օրենքում տվյալ վարչական վարույթի տեսակի առնչությամբ սահմանված են միայն առանձնահատկություններ, ապա մյուս հարաբերությունների կանոնակարգման համար հիմք են ընդունվում Օրենքի դրույթները, եթե դրանք չեն հակասում տվյալ հատուկ օրենքի ընդհանուր տրամաբանությանը: Այս վերջին իրավիճակը առավել լայն տարածում ունի, քանզի հատուկ օրենքները մեծամասամբ կանոնակարգում են սոսկ առանձին ընթացակարգային հարցեր, որպիսի պարագայում ընդհանուր օրենքի կիրառման անհրաժեշտությունը բնավ չի նվազում:

§2. Վարչարարության հասկացությունը և փոխհարաբերությունը վարչական վարույթի հետ

«***Վարչարարություն***» հասկացության բնորոշումը տրված է Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով. «***վարչարարություն՝ վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեությունը, որը եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ, ինչպես նաև գործողություն կամ անգործություն, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ***»: Այսպիսով, որպեսզի օրենքի մեկնաբանությամբ վարչական մարմնի գործունեությունը գնահատվի որպես վարչարարություն, անհրաժեշտ է, որպեսզի՝ ա) այն ունենա արտաքին ներգործություն, բ) եզրափակվի վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ, ինչպես նաև անձանց համար փաստական հետևանքներ առաջացնող գործողությամբ կամ անգործությամբ:

Այլ կերպ ասած, եթե գործադիր իշխանության որևէ մարմին իր գործունեության արդյունքում ընդունում է այնպիսի իրավական ակտ, որը բացառապես նախատեսված է տվյալ պետական համակարգի ծառայողների համար, ապա այն չի կարող Օրենքի իմաստով համարվել վարչարարություն:

«Վարչարարություն» եզրույթը վարչական իրավունքի տեսության մեջ երբեմն օգտագործվում է ավելի լայն իմաստով. վերջինիս տակ նկատի է առնվում գործադիր իշխանություն իրականացնելիս վարչական մարմնի կամ գործադիր իշխանություն իրականացնելու դեպքում ցանկացած այլ պետական մարմնի նաև այնպիսի գործունեություն, որն ուղղված է նաև ներքին համակարգային խնդիրների լուծմանը: Ի դեպ, անհրաժեշտ է նկատել, որ օրենսդիրը «վարչական մարմին» եզրույթին տվել է տարածական մեկնաբանություն: Այսպես, «վարչական մարմին» հասկացության բնորոշումը տրված է Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասով, որի համաձայն, տվյալ հասկացությունն ունի հետևյալ իմաստը.

«1) վարչական մարմիններ՝ Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական և տարածքային կառավարման, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններ՝

ա) Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական մարմիններ՝ Հայաստանի Հանրապետության նախարարություններ և Հանրապետության ողջ տարածքում վարչարարություն իրականացնող պետական այլ մարմիններ.

բ) տարածքային կառավարման մարմիններ՝ մարզպետներ.

գ) տեղական ինքնակառավարման մարմիններ՝ համայնքի ավագանի և համայնքի ղեկավար. քաղաքապետ՝ քաղաքային համայնքում, գյուղապետ՝ գյուղական համայնքում»:

Վարչարարություն իրականացնող մարմինների կարգավիճակում կարող են հանդես գալ դատախազները, դատավորները, ՀՀ Ազգային ժողովի նախագահը և այլք: Օրինակ, գլխավոր դատախազի կողմից որևէ դատախազի առնչությամբ սոցիալական ապահովության օրենսդրության դրույթների կիրառման արդյունքում վարչական ակտ ընդունելը դասական իմաստով հանդիսանում է վարչարարություն: Այդպիսի դեպքերում դատախազը հանդես է գալիս ոչ թե որպես բացառապես դատախազին վերապահված սահմանադրական լիա-

գործություններ իրականացնող, այլ օրենսդրությամբ վերապահված կարգով վարչարարություն իրականացնող պաշտոնատար անձ:

Անդրադառնալով վարչական վարույթի և վարչարարության հարաբերակցության հարցին, հարկ է նկատել, որ Օրենքի իմաստով[1] այդ ինստիտուտները փոխհարաբերվում են միմյանց այնպես, ինչպես մասը և ամբողջը, որի դեպքում վարչարարությունն առավել լայն իմաստ ունի: Վարչական վարույթը վարչարարության սոսկ այն մասն է, որն ուղղված է վարչական ակտ ընդունելուն, մինչդեռ վարչարարությունը, ինչպես արդեն ասվեց, կարող է արտահայտվել նաև այնպիսի գործողությամբ կամ անգործությամբ, որոնք անձանց համար առաջացնում են փաստական հետևանքներ:

Վարչական իրավունքի տեսությունում և վարչական իրավունքի ճյուղային օրենսդրությունում իրավամբ վարչական վարույթն օգտագործվում է ավելի լայն իմաստով, քան՝ վարչարարությունը:

§3. Վարչական վարույթի և վարչարարության հիմնարար սկզբունքները

Վարչական վարույթի և վարչարարության հիմնարար սկզբունքները համակարգված տեսքով սահմանված են Օրենքի «Վարչարարության հիմնարար սկզբունքները» վերտառությամբ 2-րդ գլխի 4-12-րդ հոդվածներով, որոնց հիմքում ընկած են ՀՀ Սահմանադրության՝ պետական կառավարմանն առնչվող հիմնադրույթները: Ինչպես արդեն նշեցինք, այս սկզբունքները կիրառելի են վարչական վարույթի յուրաքանչյուր տեսակի դեպքում, իսկ վարույթի առանձին տեսակների մասին օրենքները չեն կարող որևէ կերպ սահմանափակել դրանք:

Հաշվի առնելով, որ այս պարագրաֆն անմիջականորեն վերաբերում է սկզբունքներին, վերը նշված հիմնավորումներին հավելենք արդեն բացառապես սկզբունքների կիրառական նշանակությանը վերաբերող լրացուցիչ փաստարկներ: Նախ, իրավական սկզբունքները

[1] Տվյալ դեպքում նկատի ունենք հիշյալ օրենքի 3-րդ և 19-րդ հոդվածներում վարչարարության և վարչական վարույթի բնորոշման վերաբերյալ ամրագրված դրույթները:

բխում են Սահմանադրության հիմնադրույթներից և չեն կարող վերանայվել ընթացիկ այլ օրենսդրական ակտերով: Բուն Օրենքով հիմնարար սկզբունքները ներկայացված են առանց վերապահումների, այսինքն՝ դրանք ամրագրված չեն որպես սոսկ տվյալ օրենքի իմաստով օգտագործվող եզրույթներ: Բացի այդ, սկզբունքների ներքին տրամաբանությունն այնքան կուռ ու միաժամանակ ճկուն է, որ դրանցում արդեն իսկ նախատեսված են բոլոր հնարավոր նախապայմանները: Այսինքն, ընթացիկ օրենքներով որևէ առանձնահատկություն սահմանելը ոչ միայն իրավաչափ չէ, այլև տրամաբանական չէ: Ինչևէ, այս հարցադրմանը կանդրադառնանք կոնկրետ սկզբունքները ներկայացնելիս:

Օրենքի առավելություններից մեկն այն է, որ թերևս առաջին անգամ մեկ օրենսդրական ակտում համակարգված տեսքով ամրագրվել են վարչարարության բոլոր հիմնարար սկզբունքները: Ընդ որում, դրանք կոչվում են «հիմնարար», որովհետև իրենց իրավական ու կիրառական նշանակությամբ հիրավի հանդիսանում են վարչարարության հիմնադրույթներ և կանխորոշում են մյուս իրավական լուծումների, այդ թվում՝ սկզբունքների ներքին բովանդակությունն ու ուղղվածությունը:

Վարչարարության հիմնարար սկզբունքները ձևավորվել են երկարատև գործընթացների արդյունքում: Այդ նկատառումով դրանք մասամբ կարող են թվալ ոչ այնքան արդիական, հատկապես հաշվի առնելով այն փաստարկը, որ անձանցից պահանջվող տարաբնույթ փաստաթղթերի պահանջն աստիճանաբար նվազելու է՝ էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրմանը զուգընթաց: Սակայն, կարծում ենք, նույնիսկ այդ պարագայում ստորև ներկայացված սկզբունքների արդիականությունը չի բացառվում: Վերջին հաշվով, ֆիզիկական կամ իրավաբանական անձ և վարչական մարմին փոխհարաբերությունների շրջանակը չի սահմանափակվում միայն փաստաթղթեր կամ այլ տվյալներ ներկայացնելու շրջանակով:

Օրինականությունը. Օրինականության սկզբունքը հիրավի համարվում է սկզբունքների սկզբունք, քանի որ մյուս սկզբունքները, ամրագրված լինելով օրենքով, արդեն իսկ դառնում են օրինականության սկզբունքի բաղադրիչ մաս:

Գործող օրենսդրությունում այս սկզբունքը ամրագրված է որպես

օրենքների պահանջների կատարման պարտավորություն: Երբեմն էլ այս դրույթը լրացվում է օրենքի գերակայությունն ընդգծող որևէ դրույթով: Բացառություն չէ նաև Օրենքը, որի 4-րդ հոդվածի համաձայն.

«1. Վարչական մարմինները պարտավոր են հետևել օրենքների պահպանմանը:

2. Վարչական մարմինների լիազորությունները սահմանվում են օրենքով կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ իրավական այլ ակտերով»:

Սակայն իրավունքի տեսությունը, իրավամբ, առաջադրում է օրինականության սկզբունքի առավել ընդգրկուն բովանդակություն, մասնավորապես օրինականության սկզբունքը մեկնաբանվում է որպես նվազագույնը հետևյալ տարրերի միաժամանակյա ամբողջություն՝ ա) իրավունքի գերակայության սկզբունքին և բացառապես ժողովրդավարության չափանիշներին համահունչ օրենսդրության առկայություն, բ) հիշյալ բնույթի օրենսդրության կատարման պահանջ և գ) օրենսդրության պահանջների կատարման իրավական և կազմակերպչական երաշխիքների առկայություն:

Այլ կերպ ասած, օրինականության սկզբունքի ներքին տրամաբանությունը հիմնված է ոչ այնքան օրենքի գերակայության, ինչպես երբեմն սխալմամբ ներկայացվում է, այլ իրավունքի գերակայության վրա: Այլ կերպ ասած, առանց իրավունքի գերակայության, օրենքի գերակայությունը ոչ միայն կդառնա ինքնանպատակ, այլև կհակասի Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված իրավական պետության գաղափարին:

Հարկ է նաև անդրադառնալ վերը նշված հոդվածի 2-րդ մասով ամրագրված այն դրույթին, ըստ որի վարչական մարմինների լիազորությունները սահմանվում են օրենքով կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ իրավական այլ ակտերով: Տվյալ դեպքում անհրաժեշտ է նկատի ունենալ, որ իրավական այլ ակտերով վարչական մարմիններին օրենքով կարող են վերապահվել միայն այնպիսի լիազորություններ, որոնք չեն առնչվում Սահմանադրության 83.5-րդ հոդվածով ամրագրված հարցերին: Դրանք այն հարցերն են, որոնք բացառապես կարող են սահմանվել օրենքով: Օրինակ, վարչական մարմնին չի կարող, օրենքով նախատեսված դեպքերում անգամ, այլ իրավական ակ-

տով վերապահվել իրավաբանական անձանց, ձեռնարկատիրությամբ զբաղվող ֆիզիկական անձանց գործունեության նկատմամբ հսկողություն կամ վերահսկողություն իրականացնելու լիազորություն:

Ի դեպ, օրինականության սկզբունքի խախտում չեն կարող համարվել բոլոր այն գործողությունները (անգործությունը), որոնք կատարվում են ծայրահեղ անհրաժեշտության կամ անհրաժեշտ պաշտպանության իրավիճակում: Արտաքուստ այդ իրավիճակներում գտնվող իրավունքի սուբյեկտները կարծես խախտում են օրենսդրությունը, սակայն հենց օրենսդրությամբ են վերապահված այդպիսի իրավիճակներում համընդհանուր կանոններից շեղվելու իրավաչափ հիմքերը:

Ձևական պահանջները չարաշահելու արգելքը. Սա չափազանց կարևոր սկզբունք է և ունի կիրառական մեծ նշանակություն. գործնականում վարչարարություն իրականացնելիս ձևական պահանջների պահպանման պատրվակով հաճախ են ստեղծվում բյուրոկրատական անհարկի քաշքշուկներ: Որպես կանոն, դրանք ուղեկցվում են կոռուպցիոն ռիսկերով, քանզի անհարկի ձգձգումներով հաճախ պաշտոնյաները կաշառելու ակնարկ են անում:

Միաժամանակ այս սկզբունքը, մեր խորին համոզմամբ, անհրաժեշտ խորությամբ բացահայտված չէ, քանզի դեռևս տրված չէ այնպիսի հասկացությունների մեկնաբանությունը, ինչպիսիք են «ձևական պահանջները», «պարտականությունները բովանդակային առումով կատարված լինելը» և այլն: Ընդ որում, խոսքը Օրենքի 5 հոդվածով ամրագրված դրույթների մասին է. «Վարչարարություն իրականացնելիս վարչական մարմնին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են»:

Այսպիսով, ձևական պահանջները ոչ թե ընդհանրապես անտեսված են, այլ դրանցով առաջնորդվելն է արգելված այն դեպքում, երբ անձինք բովանդակային առումով իրենց պարտականությունները կատարած են լինում: Այլ կերպ ասած, ձևական պահանջները պարտադիր են այնչափով և այն դեպքում, որչափով և երբ դրանք հնարավորություն են տալիս արձանագրելու պարտականությունների կա-

տարման փաստը:

Ինչ վերաբերում է «ձևական պահանջ» հասկացության բովանդակությանը, ապա վերջինիս շրջանակները հստակ պատկերացնելու համար հարկ է նկատի ունենալ, որ ոչ մի պարագայում ձևական չեն կարող համարվել այն պահանջները, որոնք ներկայացվում են վարչական վարույթին ու վարչարարությանը և որոնց անտեսումը կարող է նրանց գործողությունների արդյունքները ոչ իրավաչափ ճանաչելու հիմք հանդիսանալ: Վերջին հաշվով, նկատենք, որ անձանց ներկայացվող պահանջները երբեմն նույնական են վարչական վարույթին ու վարչարարությանը ներկայացվող պահանջներին: Օրինակ՝ գրավոր վարչական ակտին ներկայացվող պահանջների մեծ մասը չի կարող կատարվել, եթե դրանում թերանան նաև այն անձինք, որոնց դիմումի հիման վրա է հարուցվել վարույթը: Այսպես, գրավոր վարչական ակտում անհրաժեշտ է ամրագրել բոլոր էական փաստական և իրավաբանական հանգամանքները, որոնք վարչական մարմնին հիմք են տալիս ընդունելու համապատասխան որոշում: Այդ փաստական հանգամանքների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնելու պարտականությունը հաճախ դրված է անձանց վրա, ուստի որևէ կերպ այդպիսի տեղեկատվության բացակայությունը կամ էական թերությունը չի կարող համարվել ձևական պահանջ, քանի որ դրա անտեսման արդյունքում վարչական ակտը կճանաչվի ոչ իրավաչափ, ինչը երբեմն կարող է ուղեկցվել հենց անձի իրավունքների ոտնահարմամբ: Այսպիսով, ձևական պահանջները չարաշահելու արգելքը պետք է բացառապես բխի անձի շահերից, ոչ թե վատթարացնի վերջինիս վիճակը:

Կարծում ենք, առավել պարզ է պարտականությունները բովանդակային առումով կատարված լինելու հարցը: Պարտականությունները բովանդակային առումով կարող են կատարված համարվել, եթե վարչարարության կամ վարչական վարույթին ներկայացվող պահանջները սպառիչ կատարված են և առկա են բավարար հիմքեր՝ որոշում կայացնելու կամ համապատասխան գործողություն իրականացնելու համար:

Ասվածը մեկ անգամ ևս հիմք է տալիս եզրահանգելու, որ սկզբունքային նշանակություն ունի նաև վարչական մարմինների կողմից ձևական պահանջների խախտմամբ ընդունված իրավական

ակտերի իրավաչափության հարցը: Ձևական պահանջները չարաշահելու արգելքը բնավ բավարար հիմք չէ, որպեսզի, օրինակ, այդ պահանջների անտեսմամբ ընդունված վարչական ակտը չճանաչվի ոչ իրավաչափ: Այլ կերպ ասած, Օրենքը բովանդակում է ներքին հակասություն. մի կողմից՝ ձևական պահանջները չարաշահելու արգելքը հարկադրում է վարչական մարմիններին անտեսելու դրանց անհրաժեշտությունը, մյուս կողմից՝ դրանց անտեսումը կարող է իրավական ակտի յուրովի մեկնաբանության արդյունքում հանգեցնել վարչական ակտը ոչ իրավաչափ ճանաչելուն:

Նկատենք նաև, որ քաղաքացիական և վարչական դատավարությունում ընդունված է բոլորովին այլ չափանիշ, մասնավորապես սոսկ ձևական պահանջների խախտմամբ, ըստ էության, ճիշտ դատական ակտը չի կարող բեկանվել: Կարծում եմ, որ նույն այս չափանիշի կիրառումը առավել տրամաբանական է հենց վարչարարության դեպքում:

Հայեցողական լիազորությունները սահմանափակելը. Ի տարբերություն մյուս սկզբունքների, այս սկզբունքի իրավական բաղադրատարրերի մեկնաբանությունը տրված է նաև օրենքով: Այսպես, Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով, նախ, տրվում է հայեցողական լիազորության բնորոշումը. «Հայեցողական լիազորությունն օրենքով վարչական մարմնին վերապահված իրավունք է ընտրելու մի քանի հնարավոր իրավաչափ լուծումներից մեկը»:

Նույն հոդվածի հաջորդ մասով օրենսդիրն արդեն ամրագրում է այն շրջանակները, որոնք սահմանափակում են հայեցողական լիազորությունները. «Հայեցողական լիազորություն իրականացնելիս վարչական մարմինը պարտավոր է առաջնորդվել մարդու և քաղաքացու՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, վարչարարության իրականացման համաչափության և կամայականության արգելքի սկզբունքներով, ինչպես նաև հետապնդել օրենքով կանխորոշված այլ նպատակներ»:

Ընդհանրապես հայեցողական լիազորությունների առնչությամբ ձևավորվել է անհարկի բացասական դիրքորոշում, ինչը, կարծում եմ, մակերեսային մոտեցման արդյունք է: Հայեցողական լիազորությունն ինքնին բացասական երևույթ չէ, ավելին՝ այն հնարավորություն է

տալիս վարչական մարմիններին գործելու առավել ճկուն ու ստեղծագործական ոճով, բացահայտելու պաշտոնյաների մասնագիտական ու գործնական ունակությունները, բարձրացնելու նրանց պատասխանատվությունը և այլն: Բացասականը տվյալ դեպքում այդ լիազորությունների չարաշահումն է, և սահմանափակումները բացառապես միտված են դրանց չեզոքացմանը:

Կամայականության արգելքը: Կամայականության սկզբունքը սերտորեն փոխկապակցված է նախորդ սկզբունքի հետ և լրացնում է այն: Կամայականության արգելքի տակ նկատի է առնվում հետևյալը. «Վարչական մարմիններին արգելվում է անհավասար մոտեցում ցուցաբերել միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ, եթե առկա չէ դրանց տարբերակման որևէ հիմք: Վարչական մարմինները պարտավոր են անհատական մոտեցում ցուցաբերել էապես տարբեր փաստական հանգամանքների նկատմամբ» (Օրենքի 7-րդ հոդված):

Կամայականության արգելքի սկզբունքը պարտավորեցնում է հայեցողական լիազորություն իրականացնել միայն այն ձևով, ինչ ձևով այն արդեն իսկ իրականացվել է նախկինում միանման դեպքերում, այսինքն՝ նախապատվությունը տրվում է միանման դեպքերում միատեսակ ձևով լիազորություն իրականացնելուն, ինչը իրավահավասարության կարևորագույն իրավական երաշխիք է: Անընդունելի և իրավաչափ չէ այնպիսի վարչարարությունը, որի դեպքում հայեցողական (և ոչ միայն) լիազորությունը բացահայտ իրականացվում է խիստ ընտրանքային սկզբունքով՝ կախված կոնկրետ անձի ինքնությունից:

Նշված կանոնից թույլատրվում է միայն մեկ բացառություն. «Վարչական մարմինն այդ սահմանափակումից կարող է հրաժարվել, եթե գերակա շահի առկայության պատճառով նա հետագայում մտադիր է մշտապես ընդունել մեկ այլ հայեցողական որոշում»: Ըստ էության, սա հարաբերական բացառություն է, քանի որ այն դարձյալ վարչական մարմնից պահանջում է իրականացնել միատեսակ վարչարարություն: Այսպիսով, օրենսդիրը կամայականությանը, որը հիմնականում լայն կիրառում է ունեցել քաղաքական և հրապարակախոսական փաստաթղթերում և աղբյուրներում, տվել է իրավական նշանակություն և բնորոշում, մասնավորապես այդպիսին է համարվում միատեսակ դեպքերում, կախված անձանց ինքնությունից, տարբե-

րակված ձևով հայեցողական լիազորություն իրականացնելը:

Վարչարարության համաչափությունը. Այս սկզբունքի օրենսդրական բնորոշումը հետևյալն է. «Վարչարարությունը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր» (Օրենքի 8-րդ հոդված):

Այս սկզբունքից բխում է, որ վարչարարություն իրականացնելիս յուրաքանչյուր միջոց պետք է ուղեկցվի բացառապես այնպիսի վերապահումներով, որոնք թելադրված կլինեն դրա պիտանիության, անհրաժեշտության և չափավորության պահանջներով: Այլ կերպ ասած, վարչարարություն իրականացնելիս վարչական մարմինը կարող է սահմանափակել անձանց իրավունքները միայն այն շրջանակներում և հիմքերով, որոնք նախատեսված են ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածով: Բացի այդ, Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված նպատակներին հասնելու համար վարչական մարմինը պարտավոր է նախապատվությունը բացառապես տալ այնպիսի միջոցների, որոնք համահունչ են տվյալ իրավիճակին, չեն հանգեցնի անհարկի բացասական հետևանքների, այդ թվում՝ անձանց իրավունքների անհիմն ոտնահարմանը և վարչական ռեսուրսների անտեղի կորստին:

Վարչարարության համաչափության սկզբունքի շրջանակներում գործելը կարող է վկայել ինչպես բարձր մասնագիտական պատրաստվածության, այնպես էլ վարչական մարմինների համակարգում անհրաժեշտ բարոյահոգեբանական մթնոլորտի առկայության մասին:

Հիշյալ սկզբունքի խախտումները գնահատելը ևս բարդ խնդիր է, քանզի յուրաքանչյուր դեպքում պետք է ցուցաբերվի անհատական մոտեցում, իրավիճակի համարժեք վերլուծություն և այլն: Հարկ է նկատել, որ խոսքը բացառապես վարչարարություն իրականացնելիս կիրառվող միջոցների համաչափության մասին է: Օրինակ, եթե վարույթ իրականացնելիս անհրաժեշտ է պարզել տվյալ կազմակերպությունում աշխատակիցների փաստացի թվաքանակը, ապա դրա համար պետք է ընտրվեն այնպիսի միջոցներ, որոնք չուղեկցվեն բազմաթիվ տեսուչների կողմից աշխատակիցներից յուրաքանչյուրից անհիմն բացատրություններ վերցնելով, խնդրի հետ անմիջական կապ չունեցող փաստաթղթերի ուսումնասիրությամբ ու փորձաքննությամբ

և այլն:

Առավելագույնի սկզբունքը: Այս սկզբունքը փոխկապակցված է վարչարարության բոլոր հոդվածների հետ և կազմում է միասնական համակարգ, սակայն վերջինիս կապը սերտ է, հատկապես, ձևական պահանջները չարաշահելու արգելքի հետ: Առավելագույնի սկզբունքը իրավունքի տեսությունում ճանաչվում է որպես իրավունքի հիմնարար սկզբունք, ինչը համահունչ է հռոմեական իրավունքում ընդունված «a majore ad minus» սկզբունքին: Օրենսդրության այդ սկզբունքը ամրագրված է հետևյալ կերպ.

«1. Վարչական մարմիններն իրավունք չունեն անձանցից պահանջել կատարելու այնպիսի գործողություններ, որոնք արդեն իսկ կատարվել են այդ անձանց կողմից այլ գործողությունների շրջանակներում կամ էլ իրենց բովանդակությամբ ներառվում են կամ կարող են ներառվել այդ շրջանակներում:

2. Եթե անձանց կողմից վարչական մարմիններ ներկայացված փաստաթղթերը (տվյալները, տեղեկությունները) իրենց մեջ բովանդակային առումով ներառում են անհրաժեշտ այլ փաստաթղթերի բովանդակություն, ապա վերջիններս այլևս չեն կարող պահանջվել լրացուցիչ կամ առանձնացված ձևով:

3. Եթե վարչական մարմինների կողմից անձանց տրված թույլտվությունները բովանդակային առումով ներառում են այլ թույլտվություններ, ապա դրանք նույնպես համարվում են տրված» (Օրենքի 9-րդ հոդված):

Նկատի ունենալով, որ օրենսդիրն այս դեպքում բավականին հանգամանալից է ամրագրել նշված սկզբունքը, հավելենք միայն, որ խոսքը բնավ չի վերաբերում կոնկրետ վարչական մարմին ուղղված փաստաթղթերին: Իրավաչափ կարող է համարվել նաև այն փաստաթուղթը, որը բովանդակային առումով ուղղված է այլ վարչական մարմնի, սակայն պարունակում է տեղեկատվություն, որը վերաբերում է նաև տվյալ վարչական մարմնի կողմից իրականացվող վարույթին:

Հավաստիության կանխավարկածը: Այս սկզբունքն առանձնանում է ակնհայտ մեծ գործնական նշանակությամբ: Ընդ որում, այդ սկզբունքի արժեքը նկատվում է բոլոր այն դեպքերում, երբ անձինք ներկայացնում են փաստաթղթեր, որոնց արժանահավատությունը

պարզելու համար վարչական մարմիններից պահանջվում է որոշակի ջանքի ներդրում: Հավաստիության սկզբունքի համաձայն, անձի կողմից ներկայացված վարչարարությանն առնչվող ցանկացած տվյալ բոլոր դեպքերում համարվում է հավաստի, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել:

Վարչական մարմինը չի կարող ներկայացված տվյալների հավաստիությունը պարզելու համար պահանջել այնպիսի փաստաթղթեր կամ լրացուցիչ տեղեկություններ, որոնք նախատեսված չեն օրենքով: Հիմնավոր կասկածի դեպքում վարչական մարմինն ինքն է պարտավոր իր միջոցներով ինքնուրույն միջոցներ ձեռնարկել տվյալների հավաստիությունը պարզելու համար:

Տնտեսավարությունը. Տնտեսավարության սկզբունքը փոխլրացնում է վարչարարության համաչափության սկզբունքին. «Վարչական մարմինն իր լիազորություններն իրականացնելիս պարտավոր է գործել այնպես, որպեսզի առանց իր լիազորությունների կատարմանը վնասելու՝ առավել սեղմ ժամկետում, առավել բարենպաստ արդյունքի հասնելու համար ապահովի իր տնօրինմանը հանձնված միջոցների առավել արդյունավետ օգտագործումը» (Օրենքի 11-րդ հոդված): Իհարկե, այս դեպքում խոսք չի գնում անձանց իրավունքների սահմանափակման մասին, սակայն չպետք է անտեսել, որ վարչական մարմինների տնտեսավար գործելաոճը անմիջականորեն շոշափում է անձանց նյութական շահերը, քանի որ վարույթի մասնակիցները սահմանված կարգով ստանձնում են վարչական ծախսերը փոխհատուցելու պարտականություն:

Այս սկզբունքը ունի գործնական մեծ նշանակություն՝ նաև կառավարման արդյունավետության տեսանկյունից. անհիմն ծախսերն ու տարաբնույթ այլ ներդրումները վկայում են այն մասին, որ առնվազն բացակայում են արդյունավետ վարչարարություն իրականացնելու ունակությունները:

Վերջում հավելենք, որ հիշյալ սկզբունքները սպառիչ չեն և չեն կարող արգելք հանդիսանալ վարչարարության այլ սկզբունքներ կիրառելու համար, որպիսի հանգամանքը նախատեսված է նաև Օրենքով (12-րդ հոդված):

§4. Գործերի ենթակայությունը, վարչական մարմինների փոխօգնությունը

Վարչական մարմիններին գործերի ենթակայությանն ու վարչական մարմինների փոխօգնությանն առնչվող հարաբերությունները կարգավորված են Օրենքի 13-18-րդ հոդվածներով:

Գործերի ենթակայությունը որոշվում է տարածքային, ինչպես նաև առարկայական հիմքերով, որոնցից յուրաքանչյուրը ևս ունի իր ենթահիմքերը (13-րդ հոդված): Մասնավորապես, տարածքային ենթակայության որոշման համար օրենսդիրը, կախված վարչարարությանն առնչվող կոնկրետ իրավահարաբերության բնույթից, իրավական նշանակություն է տալիս այնպիսի հանգամանքների, ինչպիսիք են՝ անշարժ գույքի գտնվելու վայրը, իրավաբանական անձի կամ անհատ ձեռներեցի գործունեության վայրը, անձի հաշվառման կամ մշտական բնակության վայրը և այլն:

Օրենսդիրն անդրադարձել է նաև այն իրավիճակին, երբ որևէ հարցի լուծումը միաժամանակ վերապահված է մի քանի վարչական մարմինների իրավասությանը. այս դեպքում իրավասու է համարվում այն մարմինը, որին դիմել է անձը կամ որի նախաձեռնությամբ պետք է լուծվի այդ հարցը:

Ի դեպ, չպետք է կարծել, թե նշված իրավիճակը պայմանավորված է անկատար օրենսդրությամբ, մասնավորապես միմյանց կրկնող կամ միմյանց հակասող իրավական ակտերի առկայությամբ: Վերջին հաշվով չի բացառվում, որ, զուտ փաստական հանգամանքների բերումով, միևնույն վարչական գործը միաժամանակ ենթակա լինի մի քանի վարչական մարմինների: Օրինակ, նշված 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Իրավաբանական անձին կամ անհատ ձեռնարկատիրոջը որևէ իրավունք վերապահելը կամ նրա վրա որևէ պարտականություն դնելը վերապահվում է այն վարչական մարմնի իրավասությանը, որի տարածքում իր գործունեությունն իրականացնում է իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը»: Ավելի քան ակնհայտ է, որ միևնույն իրավաբանական անձը հաճախ կարող է գործունեություն իրականացնել մի քանի վարչական մարմինների տարածքում:

Գործերի ենթակայության կանոններից շեղումներ են թույլատրվում անմիջականորեն սպառնացող վտանգի կամ վնասի առաջացման դեպքում: Մասնավորապես, այդ իրավիճակում իրավասու է համարվում այն վարչական մարմինը, որի տարածքում առաջացել է այդ իրավիճակներով պայմանավորված գործողություններ կատարելու կամ որոշումներ ընդունելու անհրաժեշտությունը, իսկ անհնարինության դեպքում իրավասու է համարվում այն վարչական մարմինը, որի տարածքին հարում է այդ տարածքը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

Վարչարարության հատուկ օրենքներով կարող են սահմանվել Օրենքով ամրագրված կանոններից տարբերվող այլ կանոններ:

Գործերի առարկայական ենթակայության հարցը Օրենքով կանոնակարգված է ընդհանուր գծերով. «Վարչական մարմիններին գործերի առարկայական ենթակայության հարցը լուծվում է այդ գործերում արծարծվող փաստական հանգամանքներին վերաբերող օրենքներով» (14-րդ հոդված): Սա նշանակում է, որ առարկայական ենթակայությանն առնչվող հարցերը կոնկրետ կարգավորվում են վարչարարության հատուկ օրենքներով:

Վարչական մարմինների փոխօգնությունը: Այս ինստիտուտի առնչությամբ օրենսդրությամբ կարգավորված են հետևյալ հարցերը՝ փոխօգնության համար դիմելու և փոխօգնություն տրամադրելու ընթացակարգը, փոխօգնություն չտրամադրելու հիմքերը, փոխօգնության կարգով ձեռնարկվող միջոցների իրավաչափությունը և այլն:

Նախ, Օրենքի 15-րդ հոդվածի համաձայն, վարչական մարմիններն իրենց լիազորություններն իրականացնելու համար պարտավոր են միմյանց տրամադրել փոխօգնություն: Խոսքը տվյալ դեպքում, բնականաբար, բացառապես այն վարչական մարմինների մասին է, որոնք միմյանց նկատմամբ ենթակայական հարաբերությունների մեջ չեն գտնվում: Վարչական ենթակայության մեջ գտնվող վարչական մարմինների փոխհարաբերության շրջանակներում միմյանց տվյալներ կամ տեղեկություններ տրամադրելը, ինչպես նաև ցանկացած այլ աջակցություն որևէ կերպ չի կարող Օրենքի իմաստով դիտարկվել որպես փոխադարձ օգնություն, քանզի դրանք իրականացվում են ոչ թե դիմումի, այլ կոնկրետ հանձնարարության հիման վրա: Ընդ որում, տարբեր են նաև հրաժարման հիմքերը. եթե փոխօգնության դեպքում

իրավական նշանակություն է տրվում ոչ միայն ձեռնարկվելիք միջոցների իրավաչափությանը, այլև արդյունավետությանը, ապա ենթակայական հարաբերությունների մեջ գտնվող վարչական մարմինների պարագայում հանձնարարությունը կատարելուց հրաժարվելու հիմք կարող է լինել միայն դրա ոչ իրավաչափ լինելը:

Նկատենք, որ Օրենքում օգտագործված «իրենց լիազորություններն իրականացնելիս» արտահայտությունը այնքան էլ հաջողված չէ: Նախ, Օրենքը բացառապես վերաբերում է վարչարարության ու վարչական վարույթի ինստիտուտների իրավական կարգավորմանը, մինչդեռ այդ ինստիտուտները միայն մասամբ են վերաբերում վարչական մարմիններին լիազորություններին: Բացի այդ, փոխօգնության ինստիտուտը հավասարապես վերաբերում է ինչպես վարչարարությանն ու վարչական վարույթին, այնպես էլ վարչական մարմնի այլ լիազորություններին: Սա մեկ անգամ ևս վկայում է այն մասին, որ «վարչարարություն» հասկացությունը գիտագործնական կտրվածքով ունի երկու իմաստ (լայն և նեղ), ինչն անտեսվել է Օրենքում: Ինչևէ, համեմատական ու համակարգային վերլուծությունը բերում է այն եզրահանգման, որ տվյալ դեպքում պետք է նկատի ունենալ վարչական մարմնի բոլոր լիազորությունները:

Փոխօգնության համար վարչական մարմինը կարող է դիմել ինչպես այն դեպքում, երբ իրավասու չէ ինքնուրույն ձեռք բերելու կոնկրետ հայցվող տվյալները կամ տեղեկատվությունը, այնպես էլ այն դեպքում, երբ օժտված է այդպիսի իրավասությամբ, սակայն փոխօգնության պարագայում մյուս վարչական մարմինն այդ տվյալները կամ տեղեկատվությունը կարող է ձեռք բերել առավել նվազ ջանքերի գործադրմամբ: Փոխօգնության ինստիտուտը բխում է, հատկապես, տնտեսավարության սկզբունքից:

Փոխօգնության համար դիմելը չպետք է որևէ կերպ դրսևորվող չարաշահումների հնարավորություն տա և հանգեցնի վարչարարության արդյունավետության ու պատասխանատվության նվազմանը: Բացի այդ, եթե փոխօգնության տրամադրումը մտնում է մի քանի վարչական մարմինների իրավասության մեջ, ապա հայտը ներկայացվում է այն մարմնին, որը դիմողի կարծիքով առավել արդյունավետ, սեղմ ժամկետում և նվազագույն ջանքերի գործադրմամբ կտրամադրի անհրաժեշտ փոխօգնություն (Օրենքի 16-րդ հոդված):

Ի դեպ, օրենսդիրն իրավամբ բավարարվել է «սեղմ ժամկետ» սահմանելով, առանց որոշակիացնելու այն: Այդ մոտեցման իրավաչափությունը պայմանավորված է վարչարարության գործընթացների բազմաբնույթ դրսևորումներով, որպիսի պարագայում պարզապես տրամաբանական չի լինի կոնկրետ ժամկետ սահմանելը: Ինչ վերաբերում է «սեղմ ժամկետ» ձևակերպմանը, ապա իրավակիրառ պրակտիկայում և իրավունքի տեսությունում այն թերևս մեկնաբանվում է որպես ողջամիտ ժամկետ, որը գնահատելիս հարկ կլինի հաշվի առնել կոնկրետ ձեռնարկվելիք միջոցի բնույթը:

Բոլոր դեպքերում ժամկետի հարցն ունի կարևոր իրավական նշանակություն, քանի որ սահմանված ժամկետների խախտմամբ իրականացված վարչարարությունը կարող է համարվել ոչ իրավաչափ՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով հանդերձ: Նման դեպքերում տրամաբանական է, որպեսզի փոխօգնություն տրամադրող վարչական մարմինը, հաշվի առնելով տվյալ վարչարարության համար նախատեսված ընդհանուր ժամկետները, փորձի օգնությունը տրամադրել այնպիսի ժամկետներում, որոնք հնարավորություն կտան դիմող վարչական մարմնին սահմանված ժամկետների շրջանակներում ավարտել վարչարարությունը: Հակառակ դեպքում վարչական մարմինը պարտավոր է իրազեկել նախատեսված ժամկետում հայցվող միջոցը կատարելու անհնարինության վերաբերյալ:

Վերջին հանգամանքն օրենսդրական կարգավորում չի ստացել, սակայն դա բխում է փոխօգնության ընդհանուր տրամաբանությունից: Օրենքով կարգավորված է մեկ այլ իրավիճակ. վարչական մարմինն իրավունք ունի չտրամադրել փոխօգնությունը, եթե այն տրամադրելու համար պետք է գործադրի ոչ համարժեք ջանքեր: Այս դեպքում վարչական մարմինը մերժում է փոխօգնության տրամադրումը և 3-օրյա ժամկետում իրազեկում դիմող վարչական մարմնին: Այս իրավիճակը տարբերվում է մեր կողմից նշված նախորդից նրանով, որ այս դեպքում խոսքը ոչ թե անհնարինության, այլ սոսկ ոչ համարժեք ջանքեր գործադրելու մասին է:

Փոխօգնության տրամադրման մերժման հիմքերը պայմանավորված են վարչարարության բնականոն ընթացքի ապահովմամբ: Վերջիններս, ըստ իրենց իրավական նշանակության, բաժանվում են եր-

կու խմբի. հիմքերի մի մասը միանշանակ բացառում է փոխօգնության տրամադրումը, իսկ մյուս մասը մերժման վերաբերյալ որոշում կայացնելը թողնում է վարչական մարմնի հայեցողությանը, քանզի դրանք առնչվում են գնահատման ոլորտին: Մասնավորապես, Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, փոխօգնություն չի կարող տրամադրվել, եթե՝ «ա) հայցվող վարչական մարմնի համար ակնհայտ է փոխօգնության կարգով ձեռնարկվելիք միջոցների ոչ իրավաչափ լինելը. բ) փոխօգնություն տրամադրելու համար անհրաժեշտ գործողությունների կատարումը չի մտնում հայցվող վարչական մարմնի իրավասության մեջ. գ) փոխօգնություն տրամադրելու համար անհրաժեշտ փաստաթղթերը (տվյալները, տեղեկությունները) դասվում են օրենքով պահպանվող գաղտնիքների շարքին, և հայցող վարչական մարմնին դրանց տրամադրելը՝ նույնիսկ տրամադրման գաղտնիությունն ապահովող եղանակով, արգելվում է օրենքով»:

Նույն հոդվածի 2-րդ մասով ամրագրված են այն հիմքերը, որոնց առկայության դեպքում վարչական մարմինն ինքն է իր հայեցողությամբ որոշում փոխօգնություն տրամադրելու հարցը. «ա) որևէ այլ վարչական մարմին, քան ինքն է, փոխօգնությունը կարող է տրամադրել էապես ավելի նվազ ջանքերի գործադրմամբ. բ) փոխօգնություն տրամադրելու համար պետք է գործադրի դրան ոչ համարժեք ջանքեր. գ) փոխօգնության տրամադրումը կարող է էապես խոչընդոտել սեփական լիազորությունների իրականացմանը»:

Ինչպես արդեն նշվեց, մերժման մասին 3-օրյա ժամկետում իրազեկվում է փոխօգնություն հայցած վարչական մարմինը: Վերջինս կարող է մերժումը վիճարկել հայցվող վարչական մարմնի վերադաս մարմնում, ինչի առնչությամբ վերադաս վարչական մարմինը պարտավոր է սեղմ ժամկետում որոշում ընդունել:

Այժմ անդրադառնանք ձեռնարկվող միջոցների իրավաչափության հարցին, որն իր իրավական կարգավորումն է ստացել Օրենքի 18-րդ հոդվածով: Նկատենք, որ խոսքը ինչպես փոխօգնության կարգով կատարվելիք գործողության, այնպես էլ փոխօգնություն ցուցաբերելու իրավաչափության մասին է: Ընդ որում, առաջին դեպքում իրավաչափությունը որոշվում է հայցող վարչական մարմնին վերաբերող իրավական ակտերին համապատասխան, իսկ երկրորդ դեպքում՝ հայցվող վարչական մարմնին վերաբերող իրավական ակտերին հա-

մապատասխան:

Փոխօգնության կարգով ձեռնարկվելիք միջոցների իրավաչափության հարցի իրավական նշանակությունը, նախ, կայանում է դրանց համար պատասխանատվության կրողների շրջանակները հստակեցնելու մեջ. «Հայցող և հայցվող վարչական մարմինների հարաբերություններում հայցող վարչական մարմինը պատասխանատվություն է կրում փոխօգնության կարգով հայցվող միջոցների իրավաչափության համար: Հայցվող վարչական մարմինը պատասխանատվություն է կրում իր՝ փոխօգնության կարգով ձեռնարկած միջոցների իրավաչափության համար» (Օրենքի 18-րդ հոդված):

Այսպիսով, փոխօգնության հարաբերություններում պատասխանատվության բեռը բաշխելիս օրենսդիրը հիմք է ընդունել յուրաքանչյուր վարչական մարմնի դեպքում բացառապես իր գործողությունների համար պատասխանատվության սկզբունքը: Սա նշանակում է, որ ոչ իրավաչափ գործողություն կատարելու ակնկալիքով դիմում ներկայացնելու դեպքում պատասխանատվություն է կրում ինչպես հայցող վարչական մարմինը, այնպես էլ հայցվող վարչական մարմինը, եթե, իհարկե, վերջինս կատարում է այդ գործողությունը:

Պատասխանատվության այսպիսի կանոնակարգման նպատակն է ոչ միայն պարզապես հստակեցնել ոչ իրավաչափ վարչարարության համար պատասխանատու վարչական մարմինների շրջանակը և պատասխանատվության հիմքերը, այլև բարձրացնել փոխօգնության ինստիտուտի՝ մասնավորապես, և վարչարարության՝ ընդհանրապես, արդյունավետությունը, քանզի յուրաքանչյուր վարչական մարմին անխուսափելիորեն ելակետ է ընդունում այն իրավական պահանջը, որ ինչպես փոխօգնություն տրամադրելու վերաբերյալ դիմումն անհիմն մերժելը, այնպես էլ, առանց այն պատշաճ քննարկելու, փոխօգնություն տրամադրելու շրջանակներում ոչ իրավաչափ գործողություններ կատարելն առաջացնում է համապատասխան իրավական պատասխանատվություն:

ԳԼՈՒԽ 14.
ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

§1. Վարչական վարույթի և վարչարարության սահմանադրական հիմնադրույթները

Վարչական վարույթի և վարչարարության սահմանադրական հիմնադրույթների հարցին անդրադառնալիս անհրաժեշտ է նկատել, որ դրանցում միշտ չէ, որ ուղղակիորեն ամրագրված են վարչական վարույթին կամ վարչարարությանն անմիջապես վերաբերող նորմեր, պարզապես դրանք բովանդակում են այդ ինստիտուտների համար առանցքային ու հիմնարար նշանակություն ունեցող իրավական նորմեր: Այսպիսի մոտեցումը միանգամայն իրավաչափ է, քանի որ յուրաքանչյուր պետության հիմնական օրենք ամրագրում է իրավական համակարգի հիմնադրույթները և խիստ անհրաժեշտ դեպքերում է միայն սահմանում կոնկրետ իրավունքի ճյուղին կամ ինստիտուտին վերաբերող հիմնադրույթներ:

ՀՀ Սահմանադրության այն հիմնադրույթները, որոնցով պայմանավորված և կանխորոշված են ողջ վարչարարությունը և վարչական վարույթը, ամրագրված են հետևյալ հոդվածներով՝

- 1-ին՝ Հայաստանի Հանրապետությունը, որպես ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետություն,
- 2-րդ՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց միջոցով ժողովրդաիշխանության իրականացումը և իշխանության յուրացման արգելքը,
- 3-րդ՝ մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են, այդ իրավունքները և ազատությունները անմիջականորեն գործող իրավունք են, որոնցով սահմանափակվում է պետության գործունեությունը,
- 4-րդ՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմա-

նադրությամբ կամ օրենքներով,

- 6-րդ՝ Սահմանադրության նորմերը գործում են անմիջականորեն, նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով,

- 14.1-րդ՝ օրենքի առջև մարդիկ հավասար են,

- 18-րդ՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների, ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք,

- 20-րդ՝ յուրաքանչյուր ոք իրավաբանական օգնություն ստանալու իրավունք ունի,

- 23-րդ՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որպեսզի հարգվի իր անձնական ու ընտանեկան կյանքը,

- 27.1-րդ՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմելու կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատասխան ստանալու իրավունքը,

- 43-րդ և 44-րդ՝ իրավունքների և ազատությունների սահմանափակման հիմքերը,

- 83.5-րդ՝ բացառապես ՀՀ օրենքներով սահմանվող հարցերը:

Թվարկված ***հիմնադրույթները բնավ սպառիչ չեն***, պարզապես ներկայացված են վարչական վարույթին ու վարչարարությանն առավել սերտորեն առնչվող սահմանադրական նորմերը: Սակայն, հասկանալի է, որ Սահմանադրության յուրաքանչյուր նորմ որոշակի չափով կողմնորոշիչ նշանակություն ունի վարչարարության ինստիտուտի համար: Բոլոր այս հիմնադրույթները կողմնորոշիչ նշանակություն ունեն ոչ միայն վարչարարության վերաբերյալ օրենսդրության ձևավորման, այլև կոնկրետ ոլորտներում վարչարարություն իրականացնելու տեսանկյունից: Ընդ որում, սա նաև ՀՀ Սահմանադրության պահանջն է, քանի որ, ինչպես արդեն նշվեց, հիմնական օրենքի 6-րդ հոդվածի համաձայն, Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն:

Վարչական մարմինները, այսպիսով, վարչարարություն իրականացնելիս չեն կարող Սահմանադրության նորմերի կիրառումը փոխկապակցել դրանց առնչվող օրենսդրական ակտերի առկայության

հետ. անկախ այն հանգամանքից, թե սահմանադրական նորմի կատարումն ապահովելու համար օրենսդրական ակտ ընդունվել է, թե ոչ, միևնույն է, վարչական մարմինը պարտավոր է անմիջականորեն ղեկավարվել այդ նորմով:

Եթե օրենսդրական նորմի բացակայության պարագայում ՀՀ Սահմանադրության նորմի կիրառման հարցը գիտագործնական տեսանկյունից վիճահարույց չէ, ապա նույնը չի կարելի ասել այն դեպքերի առնչությամբ, երբ առկա է վարչարարությանն առնչվող հարցի իրավական կարգավորմանը նվիրված օրենսդրական ակտ, սակայն այն, վարչական մարմնի կարծիքով, հակասում է ՀՀ Սահմանադրությանը: Տվյալ դեպքում առանցքային նշանակություն ունի հետևյալ հարցադրումը. սահմանադրական նորմի անմիջական գործելու հատկանիշը հի՞մք է, արդյոք, շրջանցելու այն օրենքը կամ օրենսդրական ակտը, որը, ըստ վարչական մարմնի դիրքորոշման, հակասում է ՀՀ Սահմանադրությանը:

Այս հարցադրմանը սպառիչ պատասխանելու համար պետք է ապահովել խնդրին առնչվող սահմանադրական նորմերի համալիր վերլուծություն, մասնավորապես, հարկ է նկատի ունենալ, որ խոսքը բնավ միայն իրավական ակտի սահմանադրականությանը չի վերաբերում: Իրավական էական արժեք ունի նաև իրավական ակտի սահմանադրականությունը որոշելու ընթացակարգին և իրավասուբյեկտությանն առնչվող հարցը: Վերջին հաշվով, ՀՀ Սահմանադրության նորմերն անմիջականորեն կիրառելու վերաբերյալ դրույթը չի կարող ձեռք բերել բացարձակ իմաստ, քանի որ այդ դեպքում ընդհանրապես ավելորդ կդառնա սահմանադրական վերահսկողության ինստիտուտը: Այլ կերպ ասած, ՀՀ Սահմանադրության նորմերի անմիջականորեն գործելու վերաբերյալ դրույթը բնավ չի նշանակում, որ յուրաքանչյուր վարչական մարմին իրավասու է իր հայեցողությամբ գնահատել օրենսդրական ակտերի սահմանադրականությունը և որոշելու՝ կատարել դրանք, թե՝ ոչ:

Իհարկե, հարցադրումն ունի նաև այլ, ոչ պակաս կարևոր կողմեր. օրինակ՝ ինչպե՞ս պետք է վարվի վարչական մարմինը, եթե վերջինիս հայեցողությամբ կիրառման ենթակա իրավական նորմը ոչ միայն հակասահմանադրական է, այլև ակնհայտ ոչ իրավաչափ: Այս հարցի կապակցությամբ, թերևս, առավել հիմնավորված է թվում

հետևյալ մոտեցումը. ակնհայտ ոչ իրավաչափ ակտը կատարելու համար պատասխանատու է ոչ միայն այդ ակտն ընդունող, այլև այն կատարող վարչական մարմինը: Սակայն, եթե խոսքը պարզապես իրավական ակտի սահմանադրականության է վերաբերում, ապա այդ առնչությամբ վարչական մարմնի կարծիքը հիմք չէ այն կատարելուց ձեռնպահ մնալու համար, այն պարզապես հիմք է սահմանված կարգով սահմանադրական արդարադատություն հարուցելու համար:

ՀՀ Սահմանադրության վերը նշված կոնկրետ հիմնադրույթների հանգամանալից վերլուծությանը կանդրադառնանք կոնկրետ յուրաքանչյուր հարցի քննարկման շրջանակներում: Տվյալ դեպքում էական ենք համարում միայն հետևյալ երկու հիմնադրույթներին անդրադառնալը՝ իրավունքների սահմանափակման ինստիտուտը և բացառապես միայն օրենքով սահմանվող հարցերի շրջանակը, քանզի դրանք ելակետային նշանակություն ունեն և առնչվում են վարչարարության բոլոր բաղադրիչներին:

ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքները և ազատությունները տարանջատվում են նաև ըստ սահմանափակման իրավական հնարավորության, մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածն ամրագրում է իրավունքներ և ազատություններ սահմանող այն հոդվածները, որոնք կարող են սահմանափակվել: Հավելենք, որ ՀՀ Սահմանադրության նույն 43-րդ հոդվածի համաձայն, այդ իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել *միայն օրենքով* և. «եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար»: Նշված հոդվածի համաձայն, մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել ՀՀ միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները: Այսպիսով, չսահմանափակվող իրավունքները գրեթե եռակի ավելին են, քան այն իրավունքները, որոնք կարող են սահմանափակվել:

Իրավունքները, ՀՀ Սահմանադրության 44-րդ հոդվածի համաձայն, մարդու և քաղաքացու առանձին իրավունքներ և ազատություն-

ներ, բացառությամբ Սահմանադրության 15, 17-22 և 42-րդ հոդվածներով նախատեսվածների (կյանքի իրավունք, խոշտանգումների արգելքի, իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության, խախտված իրավունքները վերականգնելու համար հրապարակային դատաքննության իրավունք, իրավաբանական օգնության իրավունք, անմեղության կանխավարկածը և օրենքով չարգելված գործողություններ կատարելու իրավունք), կարող են ժամանակավորապես սահմանափակվել նաև Հանրապետության Նախագահի հրամանագրով՝ ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ:

Ինչ վերաբերում է ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածով ամրագրված այն դրույթին, ըստ որի բացառապես օրենքով կարող են սահմանվել որոշակի հարցեր, ապա այն վարչարարության տեսանկյունից ունի կարևոր նշանակություն այն իմաստով, որ վարչական մարմինները պետք է վարչական վարույթ իրականացնելիս, մշտապես ելակետ ընդունեն այն, որ այդ հարցերը ոչ մի դեպքում չեն կարող իրենց կողմից ընդունվող ակտերով կանոնակարգման առարկա լինել:

Ի դեպ, վերը նշված կանոնակարգման տեսանկյունից ՀՀ Սահմանադրությունը եզակի է: Գրեթե բոլոր սահմանադրություններում կարելի է հանդիպել նորմերի, որոնք կոնկրետ հարաբերության կանոնակարգումը կապում են բացառապես օրենքի հետ, սակայն, նախ, դրանց շրջանակն անհամեմատ սահմանափակ է և, բացի այդ, դրանք նախատեսված են միայն կոնկրետ ինստիտուտի առնչությամբ: Այսինքն, եթե սահմանադրության տվյալ հատվածը նվիրվում է դատական համակարգին, ապա սահմանվում են նաև այդ համակարգին վերաբերող այն հարցերը, որոնք բացառապես կարող են կարգավորվել միայն օրենքով:

§2. Վարչական վարույթի և վարչարարության օրենսդրական հիմքերը

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքն առանցքային դերակատարում ունի վարչական վարույթի և վարչարարության օրենսդրական հիմքերի համակարգում, որի կանոնակարգման շրջանակներին արդեն անդրադարձել ենք: Այն

իրավամբ կարելի է համարել ***վարչական վարույթի և վարչարարության միակ կոդիֆիկացված օրենսդրական ակտը,*** որով առաջին անգամ համակարգված տեսքով իրենց ամրագրումն ստացան այդ ինստիտուտներին նվիրված իրավական նորմերը: Այն, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը, համեմատած մյուս համանման օրենսդրական ակտերի հետ, հանդիսանում է ընդհանուր և ելակետային դրույթներ է ամրագրում, որոնք կողմնորոշիչ նշանակություն ունեն այդ օրենսդրական ակտերի համար, հիմնավորվում է նշված օրենքի ինչպես կառուցվածքային, այնպես էլ բովանդակային որակներով:

Նախ, հիշյալ օրենքում են զետեղված վարչարարության հիմնարար սկզբունքները, որոնց իրավական նշանակությանն արդեն անդրադարձել ենք: Բացի այդ, նշված օրենքում տրված է այնպիսի կարևոր հասկացությունների բնորոշումը, ինչպիսիք են՝ «վարչական մարմինները», «վարչարարությունը», «վարչական վարույթը», «վարչական ակտը» և այլն:

Ինչ վերաբերում է այդ օրենքի մյուս հատվածներին, ապա դրանք ևս կարող են հիմնարար նշանակություն ունենալ վարչարարության և վարչական վարույթի ցանկացած այլ տեսակի իրավական կարգավորման համար:

Ինչպես արդեն նշել ենք, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը ամրագրել է առանձին տեսակի վարույթների առանձնահատկությունները օրենքներով և միջազգային պայմանագրերով սահմանելու դրույթ (2-րդ հոդվածի 3-րդ մաս): Այս դրույթի առնչությամբ անհրաժեշտ է նկատել, որ խոսքը բացառապես առանձին տեսակի վարույթների մասին է, այսինքն՝ իրավաչափ չի կարող համարվել վարչական վարույթի առանձնահատկություններ սահմանել, հիմք ընդունելով ոչ թե առանձին տեսակի առկայությունը, այլ սոսկ կառավարման այս կամ այն ոլորտում գործող վարչական մարմնի համար անհիմն արտոնություններ սահմանելու միտումը: Առանձնահատկություններ սահմանելու նպատակներն ու շրջանակները պետք է խիստ համահունչ լինեն վարչարարության հիմնարար սկզբունքներին:

Հատուկ օրենքների կազմը բավականին բարդ է ու բազմաբնույթ,

ինչը պայմանավորված է վարչական իրավունքին բնորոշ առանձնահատկություններով: Վերջիններս թելադրված են ոչ միայն կառավարման ոլորտներից յուրաքանչյուրին բնորոշ առանձնահատկություններով, այլև պատմականորեն ձևավորված իրավական որոշակի ավանդույթներով, որոնք էլ իրենց հերթին պայմանավորված են եղել խորհրդային իրավական համակարգին բնորոշ արհեստական գաղափարախոսությամբ:

Ինչևէ, հատուկ օրենքներից առանձնապես լայն կիրառում ունի Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը: Վարչ. օր.-ի շարքին են դասվում նաև հետևյալ օրենսդրական ակտերը՝ ՀՀ մաքսային օրենսգիրքը (06.07.00), «Հավաքների ազատության մասին» (14.04.11), «Քնակչության պետական ռեգիստրի մասին» (24.09.02), «Աշխատանքի պետական տեսչության մասին» (24.03.05), «Ագրարային պետական տեսչության մասին» (15.05.96) ՀՀ օրենքները և այլն:

Հատուկ օրենքների շրջանակը չափազանց լայն է և հասնում է մի քանի տասնյակի, ուստի նպատակահարմար է համարվել առանձնացնել իրավակիրառ տեսանկյունից առավել հաճախակի հանդիպող օրենքները: Հավելենք նաև, որ մի քանի հարյուրի է հասնում այն ենթաօրենսդրական ակտերի քանակը, որոնք ևս նվիրված են վարչական վարույթի առանձնահատկություններին: Ինչ վերաբերում է միջազգային պայմանագրերին, ապա դրանք առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկություններ են սահմանում տարաբնույթ ոլորտներում՝ սկսած անձանց մուտքի ու ելքի ընթացակարգերից մինչև համաճարակների և արտակարգ իրավիճակներում համատեղ գործողությունների շրջանակը: Այս դեպքում պարզապես անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ազգային օրենքների նկատմամբ գերակայում են բացառապես վավերացված միջազգային պայմանագրերը:

Հաճախ այդպիսի միջազգային պայմանագրերով սահմանվում է միջազգային ճանաչում ունեցող հավաստագրերի, լիցենզիաների և նմանաբնույթ այլ փաստաթղթերի կիրառման կարգը: Այսպես, օրինակ 2005թ. մայիսի 7-ին վավերացվել է 2004 թվականի ապրիլի 16-ին Չոլպոն Աթայում ստորագրված «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների տարածքներում բեռնա-

տար տրանսպորտային միջոցների կշռման միջազգային հավաստագրի կիրառման մասին» համաձայնագիրը:

Բնականաբար, իրավական ակտերի մեծ բազմազանությունը, ինչպես նաև իրավաստեղծ գործունեության դեռևս անկատար ինստիտուտները չեն բացառում հակասություններ՝ միևնույն իրավական ուժով օժտված իրավական ակտերի միջև: Այս երևույթը, ցավոք, բնորոշ է իրավունքի մյուս ճյուղերին և ենթաճյուղերին ևս, սակայն այն առավել մեծ չափով է նկատվում վարչարարության ոլորտին առնչվող օրենսդրությունում: Ինչպես և մյուս դեպքերում, այս դեպքում ևս հարկ է գործնականում ղեկավարվել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի (03.04.02) 24-րդ և 94-րդ հոդվածներով ամրագրված կանոններով:

ԳԼՈՒԽ 15.
ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

§1. Վարչական վարույթի փուլերը

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ սույն գլխում՝ Օրենք) 2-րդ բաժնում վարչական վարույթի փուլերի առնչությամբ, նախ, ամրագրված են որոշ հիմնադրույթներ (20-րդ հոդված), իսկ արդեն 5-8-րդ գլուխներում հանգամանորեն կանոնակարգված են ***վարչական վարույթի հարուցման, վարչական վարույթի ընթացիկ, ինչպես նաև եզրափակիչ փուլերը***: Ընդ որում, եզրափակիչ փուլը, թեպետ նախատեսված է Օրենքի 20-րդ հոդվածով, առանձին գլխի նորմերով կանոնակարգված չէ որպես վարչական վարույթի ինքնուրույն փուլ: Եզրափակիչ փուլին, ըստ էության, նվիրված են Օրենքի «Վարչական ակտը, դրա տեսակները և ձևերը» և «Վարչական ակտ ընդունելը, դրա մասին իրազեկելը, վարչական ակտի ուժի մեջ մտնելը» վերտառություններով գլուխները:

Վարչական վարույթի փուլերը սահմանված են Օրենքի 20-րդ հոդվածով. «Վարչական վարույթը բաղկացած է միմյանց փոխկապակցված՝ վարույթի հարուցման, ընթացիկ և եզրափակիչ փուլերից»: Նշված փուլերից պարտադիր է համարվում միայն եզրափակիչ փուլը, իսկ հարուցման և ընթացիկ փուլերով նախատեսված գործողություններին վարչական մարմինը կարող է և չդիմել, եթե առկա են նշված հոդվածի 5-րդ մասով նախատեսված հիմքերը (անմիջապես սպառնացող վտանգը կանխելու կամ արդեն իսկ առաջացած վտանգի հետևանքները վերացնելու, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքեր): Այսպիսով, Օրենքով վարչական վարույթի հարուցման և ընթացիկ փուլերը բացառող հիմքերը սպառիչ սահմանված չեն, այդպիսիք կարող են ամրագրվել նաև այլ օրենսդրական ակտերով:

Վարչական վարույթի հարուցման փուլ: Հարուցման համար հիմք է հանդիսանում անձի (անձանց) դիմումը կամ վարչական մարմնի նախաձեռնությունը, ըստ այդմ էլ, վարույթը հարուցված է համարվում դիմումը վարչական մարմնում ստանալու (բացառությամբ այն դեպ-

քերի, երբ դիմումը կամ բողոքը սահմանված կարգով վերահասցեագրվել է ըստ իրավասու վարչական մարմինների կամ վերադարձվել է դիմողին) կամ վարչական մարմնի կողմից այդ ուղղությամբ որևէ պաշտոնական միջոց ձեռնարկելու պահից (Օրենքի 30-րդ հոդված): «Պաշտոնական միջոց» հասկացության տակ կարելի է հասկանալ վարչական վարույթի բնականոն իրականացման համար անհրաժեշտ օրենսդրությամբ սահմանված ցանկացած գործողություն. օրինակ՝ տեղանքի ուսումնասիրություն, զննություն, փաստաթղթերի պահանջ և այլն:

Օրենքի 31-րդ հոդվածով կանոնակարգված են դիմումին ներկայացվող ընդհանուր պահանջները, ըստ որոնց դիմումը պետք է պարունակի այն քննարկելու համար բավարար տեղեկատվություն, իսկ անհրաժեշտության դեպքում՝ կցված լինի պետական կամ տեղական տուրքը կամ պարտադիր այլ վճարումը հավաստող փաստաթուղթ: Դիմումին հավասարեցվում է նաև անձի ընդունելության ժամանակ կազմված արձանագրությունը, եթե դրանում առկա են դիմողի անունը, ազգանունը, իրավաբանական անձին ներկայացնող անձի դեպքում՝ իրավաբանական անձի լրիվ անվանումը, դիմողի հասցեն կամ իրավաբանական անձի գտնվելու վայրի հասցեն և ներկայացվող պահանջը:

Դիմումում առկա ձևական սխալների պարագայում վարչական մարմինը մատնացույց է անում դիմողին՝ հնարավորություն տալով վերջինիս շտկել դրանք կամ ինքն է շտկում՝ նախապես կամ հետագայում դիմողին իրազեկելով այդ մասին: Օրենսդրությամբ տրված չէ «ձևական սխալ» հասկացության մեկնաբանությունը:

Օրենքի 33-րդ հոդվածով կանոնակարգված են դիմումը վերահասցեագրելու, ինչպես նաև վերադարձնելու հիմքերը և կարգը: Մասնավորապես, դիմումն այլ մարմնի վերաբերելու դեպքում, այն ստացած մարմինը պարտավոր է եռօրյա ժամկետում վերահասցեագրել դիմումն իրավասու մարմնին՝ ծանուցելով դիմողին: Եթե դիմումի առանձին հարցեր վերաբերում են այլ մարմնի իրավասությանը, ապա դիմումը միայն այդ մասով է վերահասցեագրվում իրավասու մարմնին՝ դարձյալ ծանուցելով դիմողին: Եվ, վերջապես, եթե դիմումը չի առնչվում որևէ մարմնի իրավասությանը, այն եռօրյա ժամկետում վերադարձվում է, նշելով պատճառները: Նշված կարգավորումը կոչված

է բացառելու գործնականում դեռևս հաճախ հանդիպող այն վիճակը, երբ վարչական մարմինը ոչ թե վերահասցեագրում, այլ վերադարձնում է դիմումը՝ պարզաբանելով, որ այն իր իրավասությանը չի առնչվում:

Իր նախաձեռնությամբ վարչական մարմինը վարույթ է հարուցում, երբ առկա է «վարչական ակտ ընդունելու վերաբերյալ օրենքի պահանջ, դրանից բխող անհրաժեշտությունը կամ օրենքով վարչական մարմնին վերապահված հայեցողական լիազորությունը» (Օրենքի 34-րդ հոդված): Այսպիսով, օրենքի պահանջից կարող է բխել ինչպես վարչական վարույթ հարուցելու իմպերատիվ, այնպես էլ հայեցողական հիմք: Այս դեպքում, եռօրյա ժամկետում վարչական մարմինը վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին իրազեկում է հարուցման մասին, եթե վարչական վարույթի հարուցումից մինչև վարչական ակտն ընդունելու միջև ընկած ժամանակահատվածը երեք օրից ավելի է: Միաժամանակ, վարչական մարմինն այդ անձանց, իսկ անհրաժեշտության դեպքում նաև՝ վկային, փորձագետին, թարգմանչին և այլ մարմինների ներկայացուցիչներին ծանուցում է վարույթի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների անցկացման տեղի, օրվա, ժամի և այլ պայմանների մասին: Այս դեպքում միայն մեկ բացառություն է սահմանված. ծանուցում չի իրականացվում, եթե վարչական վարույթ հարուցելուց հետո մինչև վարչական ակտն ընդունելը երեք օրից պակաս է: Այս վերապահումը թելադրված է այն տրամաբանությամբ, որ անհետաձգելի դեպքերում ծանուցումը չի կարող նպաստել արագ ու արդյունավետ գործելու խնդրին:

Վարչական վարույթի ընթացիկ փուլ: Վարչական վարույթի ընթացիկ փուլին առնչվող նորմերը զետեղված են 36-52-րդ հոդվածներով: Նախ, Օրենքի 36-րդ հոդվածը ամրագրում է սկզբունքային նշանակություն ունեցող դրույթ, որով պարտավորեցնում է վարչական մարմիններին արագ գործել և անհարկի չսպասել օրենսդրությամբ սահմանված ընդհանուր և հատուկ ժամկետների ավարտին. «Եթե վարչական վարույթ հարուցելուց հետո վարչական մարմնի տրամադրության տակ առկա են համապատասխան վարչական ակտ ընդունելու համար անհրաժեշտ փաստաթղթերը, բավարար չափով պարզաբանված և ճշգրտված են տվյալ գործի հանգամանքները, ապա

վարչական մարմինը պարտավոր է վարչական ակտ ընդունել նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո՝ ողջամիտ ժամկետում՝ չսպասելով ընդհանուր կամ հատուկ ժամկետի լրանալուն»:

Հաջորդ սկզբունքային դրույթը վերաբերում է վարչական վարույթի ընդհանուր պահանջներին. «Վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները» (Օրենքի 37-րդ հոդված): Նկատենք, որ այս պահանջները համընդհանուր են նաև այն իմաստով, որ դրանք նույնությամբ ամրագրված են քրեական դատավարության օրենսդրությամբ և համարվում են քրեական հետապնդում իրականացնելու իրավական ուղենիշ:

Նշված պահանջներից յուրաքանչյուրը միտված է ապահովելու վարչական վարույթի բնականոն ընթացքը և վերջինիս համապատասխանությանը՝ վարչարարության հիմնարար սկզբունքներին: Այսպես, «բազմակողմանիությունը» վարչական իրավունքի տեսությունում մեկնաբանվում է որպես գործի բոլոր հանգամանքների քննարկում, այսինքն, վարչական մարմինը պարտավոր է քննարկման առարկա դարձնել ինչպես դիմումի մերժման, այնպես էլ այն բավարարելու օգտին վկայող փաստական հանգամանքները: Բովանդակային կտրվածքով այս պահանջին մոտ է «լրիվ» քննարկելու պահանջը. վերջինս մեկնաբանվում է որպես յուրաքանչյուր փաստական հանգամանքն ամբողջությամբ քննարկելու պահանջ: Վերջապես, օբյեկտիվության պահանջը նույնական է գործի հանգամանքների անաչառ քննարկման ու արդյունքների գնահատման պահանջի հետ:

Վարույթի ընթացիկ փուլում վարչական մարմինն իրավասու է լսել վարույթի մասնակիցներին, նրանցից ընդունելու փաստաթղթեր և այլ ապացույցներ, նշանակել փորձագետ, զննում կատարել և այլն:

Վարչական մարմինը պարտավոր է վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին արտահայտվելու հնարավորություն տալ: Օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, լսումներ կարող են չանցկացվել, եթե՝ «ա) վարչական վարույթի արդյունքում ընդունվելու է բարենպաստ վարչական ակտ, որը չի միջամտում այլ անձանց իրավունքների իրականացմանը, կամ վարչական ակտի հասցեատերը չի պնդում, որ լսումներ անցկացվեն. բ) դիմումն ակն-

հայտ անհիմն է. գ) ընդունվում է բանավոր վարչական ակտ»: Բացի այս, Օրենքի նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն, լսումներ իմպերատիվ կարգով չեն անցկացվում, եթե անհրաժեշտ է անհապաղ վարչական ակտ ընդունել, ինչը թելադրված է հանրության համար հնարավոր վտանգի կանխմամբ, ինչպես նաև, եթե ընդունվում է այլ ձևի վարչական ակտ:

Վարչական վարույթի մասնակիցների համար վարույթի նյութերը մատչելի են. դրանք, բացառությամբ պետական, ծառայողական, ինչպես նաև օրենքով պահպանվող այլ գաղտնիքներ պարունակող նյութերի, կարող են տրամադրվել համապատասխան դիմումը ներկայացնելու օրվանից երեք օրվա ընթացքում: Բացի այդ, վարչական մարմինը պարտավոր է մասնակիցներին ցույց տալ անհրաժեշտ օգնություն՝ պարզաբանումներ տալու, ինչպես նաև նյութերին ծանոթանալու կտրվածքով:

Վարչական վարույթի շրջանակներում ոչ միայն անձանց դիմումների, այլև վարույթում առկա փաստաթղթերի առնչությամբ նույն պահանջներն են գործում. այս դեպքում դարձյալ վարչական մարմինը պարտավոր է նույն ընթացակարգով միջոցներ ձեռնարկել դրանցում առկա սխալները, ջնջումները, քերվածքները, վրիպակները հայտնաբերելու և ուղղելու համար (Օրենքի 41-րդ հոդված): Միաժամանակ, հաշվի առնելով, որ խոսքը վարչական մարմինների կողմից տրված փաստաթղթերի մասին է, օրենսդիրը սահմանել է մի շատ կարևոր վերապահում. վարույթի մասնակիցը կամ վերջինիս ներկայությամբ վարչական մարմինն իրավունք չունի շտկելու հիշյալ թերությունները, եթե այդ իրավունքը օրենքով վերապահված է այդ փաստաթղթերն ընդունած կամ տված վարչական մարմիններին:

Վարչական վարույթում ապացույցներ են բացատրությունները, ցուցմունքները, փորձագիտական եզրակացությունները, փաստաթղթերը, նյութերը, իրերը, ինչպես նաև այն հանգամանքները, որոնք իր հայեցողությամբ այդ մարմինը պիտանի և անհրաժեշտ է համարում գործի փաստական հանգամանքների բացահայտման ու գնահատման համար (Օրենքի 42-րդ հոդված):

Կարծում ենք, առանձին ապացույցների առնչությամբ Օրենքում առկա են որոշ թերություններ: Մասնավորապես, փորձագետ նշանակելու (ընդ որում, առավել ճիշտ կլիներ ամրագրել փորձաքննություն

նշանակելու լիազորությունը) դեպքում վարույթի մասնակիցներին պարզապես վերապահված է ներկա գտնվելու փորձագետի կողմից կատարվող գործողություններին, մինչդեռ, առավել հիմնավորված կլիներ, եթե վերջիններս օժտված լինեին նաև միջնորդություններ հարուցելու, ինչպես նաև լրացուցիչ հարցեր առաջադրելու իրավունքով: Ի դեպ, դա համահունչ կլիներ ապացուցման պարտականությունները բաշխելու օրենսդրական կանոններին: Ընդհանրապես Օրենքն առավել շահեկան կլիներ, եթե դրանում համակարգված ու հստակ ամրագրված լինեին վարույթի մասնակիցների իրավունքները, որպիսի կանոնակարգումը հաջողությամբ իր տեղն է գտել, օրինակ քրեական դատավարությունում:

Ապացուցման պարտականությունը բաշխելու ընդհանուր կանոնները հետևյալն են. անձի համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում ապացուցման բեռը դրվում է անձի վրա, իսկ նրա համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում՝ վարչական մարմնի վրա (Օրենքի 43 հոդված): Այս կանոնից շեղումներ թույլատրվում են հետևյալ դեպքերում: Նախ, եթե անձը կարող է իր կողմից ապացուցման ենթակա փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալներին իրազեկ դառնալ բացառապես տվյալ վարչական մարմնի միջոցով, ապա ապացուցման պարտականությունը դրվում է այդ վարչական մարմնի վրա: Բացի այդ, եթե իր հերթին վարչական մարմինը կարող է իր կողմից ապացուցման ենթակա փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալներին իրազեկ դառնալ բացառապես տվյալ անձի միջոցով, ապա ապացուցման պարտականությունը դրվում է այդ անձի վրա:

Վարչական վարույթի ժամկետը, ըստ Օրենքի 46-րդ հոդվածի, 30 օր է, սակայն հատուկ օրենքներով կարող են սահմանվել կարճ կամ ավելի երկար ժամկետներ: Այդ ժամկետը կարող է երկարաձգվել Օրենքի 47-րդ հոդվածով նախատեսված դեպքերում: Մասնավորապես, ժամկետը կարող է երկարաձգվել, եթե գործի քննության համար էական համարվող հանգամանքներ պարզելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել լրացուցիչ փաստաթղթեր կամ տեղեկություններ (մինչև 10 օր), փորձագիտական եզրակացության համար (մինչև փորձագիտական եզրակացություն ստանալը), փոխօգնության համար կամ, երբ վարչական ակտի ընդունմանը մասնակ-

ցում են մի քանի վարչական մարմիններ (մինչև 30 օր): Եթե առկա են մեկից ավելի հիմքեր, ապա վարչական մարմինը կարող է կիրառել դրանցից միայն մեկը: Վարույթի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ վարույթն իրականացնող վարչական մարմինը սահմանված կարգով պետք է ծանուցի վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին, ինչպես նաև վարույթին մասնակցող այլ անձանց:

Վարույթի ժամկետները չպահպանելը, մասնավորապես, վարչական ակտ չընդունելն առաջացնում է դիմողի համար բարենպաստ հետևանքներ: Այս դեպքում, վարչական ակտը համարվում է ընդունված, իսկ դիմողը կարող է ձեռնամուխ լինել համապատասխան իրավունքի իրականացմանը: Եթե դիմումը վերաբերում է փաստաթուղթ տրամադրելուն, ապա անձը ազատվում է այն պատասխանատվությունից կամ պարտականությունից, որոնք օրենքով սահմանվում են այդ փաստաթղթերը չունենալու համար (Օրենքի 48-րդ հոդված):

Վարչական վարույթը կասեցնելու հիմքերը նախատեսված են Օրենքի 49-րդ հոդվածով: Մասնավորապես, վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե.

«ա) անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը.

բ) վարույթին չի ներկայացել վարչական ակտի հասցեատերը, իսկ օրենքը բացառում է առանց նրա ներկայության համապատասխան վարչական ակտ ընդունելը.

գ) վարչական ակտի ընդունումը հնարավոր է միայն այդ ակտի հասցեատիրոջն ի հայտ բերելու դեպքում»:

Նույն հոդվածի 2-րդ մասով ամրագրված են այն հիմքերը, որոնց դեպքում վարչական վարույթը կասեցվում է վարչական մարմնի հայեցողությամբ.

«Վարչական մարմինը կարող է կասեցնել վարչական վարույթը, եթե՝

ա) վարչական ակտի հասցեատերը բացակայում է, և վարչական մարմինը, նախքան վարչական ակտ ընդունելը, անհրաժեշտ է համարում նրա ներկայությունը՝ վարույթին առնչվող որոշ կարևոր հանգամանքներ նրանից պարզելու համար.

բ) ընդունվելիք վարչական ակտի հասցեատեր իրավաբանական անձը վերակազմակերպվում է»:

Կասեցման հիմքերը սպառիչ չեն, և վարչական վարույթի առանձին տեսակների կարգավորմանը նվիրված մյուս օրենքներով կարող են ամրագրվել այլ կասեցման հիմքեր:

Կասեցման ժամկետը ևս սահմանափակված է օրենսդրությամբ, մասնավորապես վերը նշված հոդվածի 1-ին մասի «ա» կետով նախատեսված դեպքերում վարչական վարույթը վերսկսվում է դրա կասեցումն առաջացրած հանգամանքները վերանալուց հետո, իսկ «բ» և «գ» կետերով, ինչպես նաև 2-րդ մասով նախատեսված դեպքերում վարչական վարույթը վերսկսվում է դրա կասեցման հիմք դարձած հանգամանքները վերանալուց հետո, բայց ոչ ուշ, քան կասեցման օրվանից հետո 60 օրը լրանալը:

Վարչական վարույթը պարտադիր ***կարճվում է*** հետևյալ հիմքերի առկայության դեպքում, երբ՝

1) դիմումն առանց ստորագրության է, իսկ վարչական մարմինը, միջոցներ ձեռնարկելով դիմողին բացահայտելու ուղղությամբ, չի կարողացել պարզել, թե ով է հայցում համապատասխան վարչական ակտի ընդունումը,

2) դիմողը գրավոր ձևով հրաժարվել է դիմումից,

3) առկա է նույն անձի, նույն առարկայի վերաբերյալ և նույն հիմքերով ուժի մեջ մտած վարչական կամ դատական ակտ,

4) նույն անձանց միջև, նույն առարկայի վերաբերյալ և նույն հիմքերով առկա է դատարանի վարույթում գտնվող գործ,

5) փոխվել է դիմողի կարգավիճակը, ինչը բացառում է վարչական ակտի ընդունումը,

6) վերացել է վարչական վարույթի կասեցման առավելագույն ժամկետը, որի ընթացքում չի վերացել վարչական վարույթի կասեցման հիմք հանդիսացած հանգամանքը,

7) ակտը բողոքարկվել է վարչական և դատական կարգով միաժամանակ (Օրենքի 50-րդ հոդված):

Միաժամանակ նույն հոդվածով սահմանված են վարչական վարույթը կասեցնելու հայեցողական հիմքեր: Այդպիսիք են, օրինակ, վերացվել են խախտումները կամ պատշաճ միջոցներ են ձեռնարկվել դրանք կանխելու ուղղությամբ, փոխվել է իրավիճակը կամ օրենքով

նախատեսված հիմքով վերացել է վարչական ակտ ընդունելու անհրաժեշտությունը:

Վարչական վարույթի վերսկսման առնչությամբ հարկ է նկատել, որ վարչական մարմինը պարտավոր է վարչական վարույթի մասնակիցների դիմումի հիման վրա որոշում ընդունել բողոքարկման ոչ ենթակա վարչական ակտը փոփոխելու, անվավեր ճանաչելու վերաբերյալ, եթե իրավիճակը փոփոխվել է հօգուտ անձի, որը վարույթը վերսկսելու հարցով դիմում է ներկայացրել, առկա են դիմում ներկայացրած անձի օգտին նոր ապացույցներ, առկա են տվյալ գործի համար էական նշանակություն ունեցող նոր հանգամանքներ և առկա են օրենքով նախատեսված այլ հիմքեր (Օրենքի 51-րդ հոդված): Վարույթը վերսկսելու դիմում կարող է ներկայացվել 3 ամսվա ընթացքում այն օրից, երբ վարույթը վերսկսելու հարցով անձն իմացել է այդ հիմքի մասին:

Գործնականում սակավաթիվ չեն այն դեպքերը, երբ վարչական ակտ ընդունելու համար անհրաժեշտ է նաև վարչական այլ մարմինների թույլտվությունը կամ համաձայնությունը: Այսպիսի դեպքերում համաձայնեցումները կամ այլ լրացուցիչ փաստաթղթեր հավաքելը պարտավոր է իրականացնել վարչական վարույթ հարուցած մարմինը (Օրենքի 52-րդ հոդված): Ընդ որում, այդ թույլտվություններն ու համաձայնությունները, ըստ նույն հոդվածի, առանձին բողոքարկման ենթակա չեն, դրանք կարող են բողոքարկվել վարչական ակտի հետ միասին:

Վարչական վարույթի եզրափակիչ փուլ: Վարչական ակտի եզրափակիչ փուլում ընդունվում է վարչական ակտ, որի տեսակները, ձևերը, որին ներկայացվող պահանջները կարգավորված են Օրենքի 53-61-րդ հոդվածներով: Վարչական ակտն ընդունված համարելու ժամկետը պայմանավորված է դրա տեսակով և ձևով, այսպես՝ գրավոր վարչական ակտը համարվում է ընդունված՝ իրավասու պաշտոնատար անձի կողմից ստորագրվելու օրվանից, իսկ բանավոր կամ այլ ձևի վարչական ակտը՝ այդ ակտերը հրապարակվելու պահից (Օրենքի 58-րդ հոդված): Բանավոր վարչական ակտի պարագայում հրապարակման տակ չպետք է հասկանալ վերջինիս հրատարակումը տպագիր եղանակով, հրապարակումը սոսկ որևէ հստակ ընկալելի եղանակով հասցեատիրոջը հասանելի դարձնելն է (օրինակ, ոստիկա-

նի կողմից սահմանված կարգով արված ժեստերը, լուսացույցի համապատասխան նշանի ակտիվացումը և այլն):

Վարչական ակտի մասին իրազեկելը: Օրենքի 59-րդ հոդվածի համաձայն, վարչական ակտի ընդունման մասին իրազեկում է համարվում վարչական մարմնի կողմից վարույթի մասնակիցներին այդ հոդվածով նախատեսված կարգով այն հանձնելը կամ հրապարակելը: Գրավոր վարչական ակտը պետք է եռօրյա ժամկետում ստորագրությամբ առձեռն հանձնվի վարույթի մասնակիցներին, իսկ դրա անհնարինության դեպքում, ինչպես նաև վարույթի մասնակցի պահանջով նույն ժամկետում հանձնումը կարող է իրականացվել պատվիրված փոստով՝ ստանալու մասին ծանուցմամբ կամ օրենքով նախատեսված այլ եղանակներով: Վարչական մարմինը միաժամանակ պարտավոր է դրա հետ միասին հանձնել նաև այդ ակտի բաղկացուցիչ մաս համարվող փաստաթղթերը, սակայն դրանք ուշացումով հանձնելը հիմք չէ վարչական ակտի իրավաչափությունը վիճարկելու համար:

Հանձնման նշված կարգը տարածվում է նաև վարչական ակտում, ինչպես նաև դրա բաղկացուցիչ մաս կազմող փաստաթղթերում կատարվող փոփոխությունների վրա:

Ինչ վերաբերում է վարչական ակտի հրապարակմանը, ապա այն կատարվում է տվյալ վարչական մարմնի տեղեկագրում կամ այլ պաշտոնական տեղեկագրում կամ զանգվածային լրատվության այլ միջոցներով հրապարակելով:

Գրավոր վարչական ակտի հրապարակումը պարտադիր է, եթե վարչական մարմնին հայտնի չէ այն անձանց վերաբերյալ տեղեկությունները, որոնց շահերը ուղղակիորեն շոշափվում են այդ ակտով կամ օրենքով նախատեսված այլ դեպքերում: Գրավոր վարչական ակտը վարչական մարմնի նախաձեռնությամբ կարող է հրապարկվել, եթե վերջինիս հայեցողական որոշմամբ դա նպատակահարմար է՝ պետության և հանրության շահերի, ինչպես նաև անձանց իրավունքների արդյունավետ պահպանման անհրաժեշտությունից ելնելով:

Մամուլում, ԶԼՄ-ներում կամ տեղեկատվության տարածման այլ միջոցներում հրապարակվում է գրավոր վարչական ակտի միայն եզրափակիչ մասը, սակայն միաժամանակ պետք է նշվի, թե որտեղ է հնարավոր ծանոթանալ ամբողջ վարչական ակտին: Օրենսդրի այս

պահանջը, իհարկե, չի բացառում վարչական ակտն ամբողջությամբ հրապարակելու տարբերակը, մանավանդ, վերջինիս ոչ մեծ ծավալի դեպքում:

Բանավոր վարչական ակտը հրապարակվում է այն հասցեատիրոջը բանավոր ձևով հայտարարելու միջոցով: Այն կարող է հրապարակվել նաև հասցեատիրոջ համար հասկանալի որևէ օտար լեզվով:

Վարչական ակտի տրամադրումն օտար լեզվով: Վարչական ակտն օտար լեզվով իրազեկելու կարգն ամրագրված է Օրենքի 59-րդ հոդվածի 4-րդ մասով: Մասնավորապես, հասցեատիրոջ խնդրանքով վարչական մարմինը կարող է տրամադրել իր պաշտոնական կնիքով հաստատված օտար լեզվով թարգմանված պատճենը: Միաժամանակ, օրենսդիրն իրավաբանական ուժ է վերապահում բացառապես վարույթի իրականացման լեզվով ընդունված տեքստին, վեճ կամ բողոք ներկայացնելու դեպքում հիմք է ընդունվում միայն հայերենով ընդունված տեքստը: Օտար լեզվով թարգմանված պատճենը չի կարող հիմք լինել այդ ակտի իմաստը կամ բովանդակությունը մեկնաբանելու կամ պարզաբանելու համար:

Օտար լեզվով թարգմանված պատճենները գործնականում կարող են անհրաժեշտ լինել տարբեր նկատառումներով, օրինակ՝ ամուսնության մեջ չգտնվելու մասին թարգմանված տեղեկանքը հիմք է այլ երկրում սահմանված կարգով ամուսնություն գրանցելու համար, այլ երկրի քաղաքացիություն ձեռք բերելու համար ևս պահանջվում է ներկայացնել տարաբնույթ տեղեկանքներ և այլն: Որպես կանոն, օտար լեզվով թարգմանված պատճենների անհրաժեշտությունը չի ծագում միջազգային պայմանագրերով նախատեսված հատուկ դեպքերում:

Վարչական ակտն ուժի մեջ մտնելը և գործողության ժամկետը: Վարչական ակտի ուժի մեջ մտնելու հարցում իրավական նշանակություն ունի ակտի իրազեկման ինստիտուտը: Այսպես, Օրենքի 60 հոդվածի համաձայն, վարչական ակտն ուժի մեջ է մտնում վերը նշված կարգով *իրազեկելուն հաջորդող օրվանից*, եթե օրենքով կամ այդ ակտով այլ կարգ նախատեսված չէ: Օրենսդիրը՝ իրավական ուժի մեջ մտնելու տեսանկյունից սահմանում է նաև, այսպես կոչված, «պայմանով ակտ», որի որոշ դրույթներ կարող են ուժի մեջ մտնել միայն որոշակի պայմանների կամ հանգամանքների առաջացման

դեպքում: Ինչ վերաբերում է բանավոր և այլ ձևի վարչական ակտերին, ապա դրանք ուժի մեջ են մտնում այդ ակտերը հրապարակելու պահից:

Ի դեպ, Օրենքի՝ անհատական ակտն ուժի մեջ մտնելու վերաբերյալ դրույթները համապատասխանում են նույն հարցի իրավական կարգավորմանը նվիրված «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի (03.04.02) 60-րդ հոդվածի դրույթներին: Պարզապես հարկ է նկատել, որ հրապարակման ոչ ենթակա իրավական ակտերն ուժի մեջ մտնելու առնչությամբ արդեն հարկ է ղեկավարվել այդ օրենքի 59-րդ հոդվածի պահանջներով: Մասնավորապես, այդպիսիք են համարվում այն իրավական ակտերը կամ դրանց առանձին մասերը, որոնք պարունակում են պետական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք:

Հրապարակման ոչ ենթակա ակտերն ուժի մեջ են մտնում դրանց ընդունմանը հաջորդող օրվանից, իսկ ստորագրման կամ վավերացման կամ պետական գրանցման ենթակա իրավական ակտերը՝ դրանց ստորագրմանը կամ վավերացմանը կամ պետական գրանցմանը հաջորդող օրվանից: Հիշյալ ակտերը պարտադիր են կատարման իրավաբանական, ֆիզիկական և պաշտոնատար անձանց համար՝ նախատեսված կարգով դրանք նրանց իրազեկելու կամ ծանոթացնելու պահից, եթե այդ իրավական ակտով ավելի ուշ ժամկետ նախատեսված չէ: Նշված ակտի հերթական համարի վերջում՝ իրավական ակտի բնույթը սահմանող տառից հետո, իրավական ակտն ընդունող մարմնի կողմից դրվում են «Գ» կամ «ՀԳ» կամ «ՀԿ» տառերը:

Վարչական ակտերը գործում են անորոշ կամ որոշակի ժամկետով: Անորոշ ժամկետով ակտը գործում է այնքան ժամանակ, քանի դեռ որևէ իրավաչափ հիմքով չի կորցրել իրավական ուժը (օրինակ, փոխարինվել է այլ վարչական ակտով, անվավեր է ճանաչվել և այլն): Որոշակի ժամկետով ընդունված գրավոր վարչական ակտը գործում է մինչև այդ ակտով նախատեսված ժամկետի լրանալը, սակայն այդ ակտի ժամկետը, մինչև նշված ժամկետի լրանալը կամ լրանալուց հետո 15 օրվա ընթացքում կարող է երկարաձգվել նոր ժամկետով կամ անորոշ ժամկետով: «Պայմանով ակտ» տերմինը օրենսդիրն օգտագործում է նաև վարչական ակտի գործողության մեջ գտնվելու հիմքի տեսանկյունից: Այսպես, եթե վարչական ակտն ուժի մեջ մնալը փոխ-

կապակցվում է որոշակի պայմանի հետ, ապա դրա կատարման պահին ավարտվում է նաև վարչական ակտի գործողության մեջ գտնվելու ժամկետը:

Բանավոր ակտի դեպքում գործողության մեջ գտնվելն ավարտվում է այդ ակտի հետ կապված գործողությունների կատարմամբ կամ օրենքով նախատեսված որևէ եղանակով ակտի հասցեատիրոջը այդ մասին հայտարարելու պահից: Այլ ձևի վարչական ակտի գործողությունը դադարում է ակտի հասցեատիրոջն օրենքով նախատեսված տեսանելի, լսելի կամ որևէ այլ ձևով հասանելի եղանակով ակտի գործողությունը դադարելու մասին հայտնելու պահից:

§2. Վարչական վարույթի մասնակիցները և այլ անձինք, ներկայացուցչությունը վարչական վարույթում

Վարչական վարույթի մասնակիցները: «Վարչական վարույթի մասնակիցների» բնորոշումը տրված է Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասով.

«Վարչական վարույթի մասնակիցներն են (այսուհետ՝ վարույթի մասնակիցներ)՝

ա) վարչական ակտի հասցեատերը՝ այն անձը, ով դիմել է վարչական ակտ ընդունելու համար (դիմող), կամ այն անձը, ում նկատմամբ վարչական մարմինն իր նախաձեռնությամբ ընդունելու է վարչական ակտ.

բ) երրորդ անձինք՝ այն անձինք, որոնց իրավունքները կամ օրինական շահերը կարող են շոշափվել վարույթի արդյունքում ընդունվելիք վարչական ակտով»:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն, երրորդ անձինք վարչական վարույթում ներգրավվում են իրենց դիմումի համաձայն կամ վարչական մարմնի նախաձեռնությամբ:

Վարչական ակտի հասցեատեր լինելու, այսինքն՝ վարչական մարմնին վարչական վարույթ հարուցելու վերաբերյալ դիմում ներկայացնելու իրավունք ունեն այն անձինք, ովքեր սահմանված կարգով իրավունակ և գործունակ են՝ ակնկալվելիք վարչական ակտն ընդու-

նելու տեսանկյունից: Այս եզրահանգումը բխում է Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետում ամրագրված դրույթից, համաձայն որի անթույլատրելի դիմումը հիմք է վարույթը կարճելու համար: Այլ կերպ ասած, եթե լիցենզիա ստանալու համար դիմել է որպես ձեռնարկատեր չգրանցված անձը, ապա վերջինս չի կարող համարվել տվյալ վարչական վարույթի տեսակի համար իրավունակ անձ:

Այլ անձինք վարչական վարույթում: «Այլ անձինք» են վարչական վարույթում նրանք, ովքեր վարչական վարույթում հանդես են գալիս որպես վկաներ, փորձագետներ, թարգմանիչներ, ինչպես նաև պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ (Օրենքի 22-րդ հոդված): Այս անձինք, ի տարբերություն վարչական դատավարության, վարչական վարույթում սակավ դեպքերում են մասնակցում, ինչը պայմանավորված է ոչ այնքան նրանց անհրաժեշտության պակասով, որքան դեռևս անհրաժեշտ ավանդույթների պակասով:

Ինչ վերաբերում է վարչական վարույթում ներկայացուցչությանը, ապա վերջինիս իրավական կանոնակարգմանը նվիրված է Օրենքի 23-րդ հոդվածը: Օրենսդիրը վարչական վարույթում վարույթի մասնակիցներին վերապահում է ինքնուրույն, ինչպես նաև ներկայացուցիչների միջոցով կամ նրանց հետ միասին՝ վարույթին մասնակցելու իրավունք:

Որպես վարույթի մասնակիցների ներկայացուցիչներ, կարող են հանդես գալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով լիազորված անձինք, այդ թվում՝ փաստաբաններ: Օրենսդրական այս դրույթից բխում է, որ ներկայացուցիչներ կարող են լինել ոչ միայն փաստաբանի կարգավիճակ ունեցող անձինք, այլև պարզապես վարույթի մասնակցի կողմից լիազորված յուրաքանչյուր անձ: Պարզապես, տվյալ դեպքում անհրաժեշտ է, որպեսզի այդ անձը վարույթի մասնակցի կողմից սահմանված կարգով լիազորագիր ստացած լինի, ընդ որում, պարտադիր չէ նաև իրավաբանական կրթություն ունենալու հանգամանքը:

Առաջին հայացքից թվում է, թե ներկայացուցիչների լայն շրջանակ սահմանելով, օրենսդիրը նվազեցրել է որակյալ օգնություն ստանալու հնարավորությունը, սակայն, եթե հաշվի առնենք վարչարա-

ռության բարդ ու հաճախ նեղ մասնագիտական գիտելիքների անհրաժեշտության խնդիրը, ապա պարզ կդառնա, որ օրենսդրի դիրքորոշումը միանգամայն հիմնավորված է:

Եթե վարույթի մասնակիցներն իրենք են որոշում իրենց ներկայացուցիչներին, ապա անգործունակ մասնակիցների պարագայում վերջիններիս ներկայացնում են նրանց՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով (տվյալ դեպքում նկատի են առնվում ՀՀ քաղ. օր.-ի 23, 29-30, 34-35-րդ և այլ հոդվածներով ամրագրված նորմերը) սահմանված օրինական ներկայացուցիչները, որպիսիք կարող են լինել ծնողները, որդեգրողները, խնամակալները կամ հոգաբարձուները:

Թե լիազորված անձինք և թե օրինական ներկայացուցիչները պարտավոր են վարչական մարմնի պահանջով ներկայացնել համապատասխանաբար լիազորագիր կամ օրինական ներկայացուցիչ լինելը հավաստող փաստաթուղթ: Հավելենք, որ այս լիազորագրի համար նոտարական վավերացում չի պահանջվում: Լիազորագիրը տրվում է որոշակի ժամկետով, որի ավարտի մասին վարույթ իրականացնող մարմինն այդ մասին պետք է տեղեկացվի լիազորողի կամ լիազորված անձի միջոցով:

Վարչական վարույթում ներկայացուցիչներ չեն կարող ունենալ և անմիջականորեն են մասնակցում միայն վկան, փորձագետը և այլ մարմինների ներկայացուցիչներ (Օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մաս): Անմիջականորեն մասնակցելու պահանջը հիշյալ անձանց պարագայում միանգամայն տրամաբանական է ու իրավաչափ, քանի որ խոսքն այն սուբյեկտների մասին է, որոնք վարույթի բնականոն ընթացքի տեսանկյունից հետաքրքրություն են ներկայացնում հենց իրենց անձով: Այսպես, ըստ Օրենքի 44-րդ հոդվածի, որպես վկա կարող են հրավիրվել այն անձինք, «որոնց կարող են հայտնի լինել տվյալ գործին վերաբերող տեղեկություններ»: Բնական է, որ վկայի ցուցմունքի արժեքը պայմանավորված է հենց նրանով, որ վերջինս վարույթ իրականացնող մարմնին փոխանցում է անմիջականորեն իրեն հայտնի տվյալները:

§3. Վարչական մարմնի պաշտոնատար անձի կողմից գործը քննարկելու և լուծելու անհնարինությունը, բացարկ և ինքնաբացարկ հայտնելու հիմքերը և կարգը

Վարչական վարույթի բնականոն ընթացքն ապահովելու և վարչարարության հիմնարար սկզբունքների անբեկանելիությունն ապահովելու տեսանկյունից առանցքային նշանակություն ունեն վարչական մարմնի պաշտոնատար անձի կողմից գործը քննելու և լուծելու անհնարինության վերաբերյալ օրենսդրական պահանջները: Այս պահանջները կոչված են ապահովելու վարչական վարույթ իրականացնելու լիազորություն ունեցող պաշտոնատար անձանց անաչառությունը: Հաշվի առնելով, որ որոշ հոգեբանական գործոններ (օրինակ՝ ազգակցական կապերը վարչական վարույթի մասնակիցների հետ) կարող են կաշկանդել նշված պաշտոնատար անձանց գործունեությունը և առավել հավանական դարձնել անաչառության պահանջներին հակասող որոշումներ կայացնելը, օրենսդիրը նպատակահարմար է գտել բացառել այդպիսի իրավիճակներում պաշտոնատար անձի մասնակցությունը վարչական վարույթին: Իհարկե, գործնականում հնարավոր են դեպքեր, որ նշված գործոնները չունենան բացասական ազդեցություն վարչական վարույթի վրա: Սակայն, նախ, դրա հավանականությունը նվազ է, բացի այդ, նույնիսկ դրական ելքի դեպքում ինչ-որ տեղ անհարկի անտեսվում են պաշտոնատար անձանց անձնական շահերը, քանզի վերջինս հարկադրված է լինում խախտել զուտ բարոյական, ավանդույթի ուժ ունեցող նորմերը:

Ինչևէ, Օրենքի 24-րդ հոդվածի համաձայն, պաշտոնատար անձն իրավասու չէ քննարկելու և լուծելու վարչական գործ, եթե՝ ա) վարույթի մասնակից է, բ) վարույթի մասնակիցներից որևէ մեկի ներկայացուցիչն է, գ) աշխատում է վարույթի մասնակիցներից մեկի մոտ, դ) վարույթի մասնակիցներից որևէ մեկի կամ նրա ներկայացուցչի *ազգականն* է և ե) նախկինում մասնակցել է տվյալ գործի քննարկմանը:

Բացարկ հայտնելու հիմքերը և կարգը: Վարչական վարույթ իրականացնող վարչական մարմինների և դրանց պաշտոնատար ան-

ձանց անաչառությունն ապահովելու տեսանկյունից ընթացակարգային բնույթի երկու ինստիտուտ է նախատեսում օրենսդրությունը՝ բացարկ և ինքնաբացարկ: Օրենքի 25-րդ հոդվածի համաձայն, վարույթ իրականացնող պաշտոնատար անձին կամ կոլեգիալ կազմի ցանկացած անդամի գրավոր բացարկ կարող են հայտնել միայն վարույթի մասնակիցները: Կոլեգիալ կազմի պարագայում, այսպիսով, կարելի է բոլոր անդամներին բացարկ հայտնել, սակայն յուրաքանչյուր անձի դեպքում բերվում են առանձին, միայն այդ անձին վերաբերող փաստարկներ:

Նախ, ինչպես բացարկի, այնպես էլ ինքնաբացարկի հիմք է Օրենքի 24-րդ հոդվածում նախատեսված պայմաններից որևէ մեկը: Միաժամանակ, օրենսդիրը նախատեսում է բացարկի նաև այլ հիմքեր, ինչպես օրինակ՝ երբ մինչև գործի քննարկման ավարտը տվյալ պաշտոնատար անձը, ինչպես նաև կոլեգիալ կազմի անդամը, հրապարակայնորեն արտահայտվել է գործի ելքի մասին կամ գնահատական է տվել գործի փաստական հանգամանքներին կամ մինչև ապացույցների հետազոտումը, կանխավ գնահատական է տվել նշված հարցերին:

Այսպիսով, վարույթի ընթացիկ փուլում, երբ դեռ չի ավարտվել գործի համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների ձեռքբերումն ու հետազոտությունը, կանխակալ կարծիք հայտնելը չի համարվում իրավաչափ այն հիմքով, որ հիմնավոր կասկածի տակ է դրվում վարչական վարույթ իրականացնողի անաչառությունը. եզրակացությունը մեկն է՝ անկախ գործի հանգամանքների հետազոտման արդյունքներից, որոնք պետք է վճռորոշ նշանակություն ունենան եզրակացության համար, վարույթ իրականացնող անձն արդեն իսկ իր հայեցողությամբ որոշում է կայացրել՝ խախտելով ոչ միայն բուն ընթացակարգը, այլև՝ վարչարարության ողջ տրամաբանությունը: Այն, որ բացարկի հիմք է համարվում անգամ դեռևս չհետազոտված ապացույցին կանխավ գնահատական տալը, վկայում է այն մասին, որ անաչառության խնդիրը բավականին սուր է դրված, և նշանակություն է տրվում ոչ միայն գործի ելքին ամբողջությամբ, այլև՝ գործի ելքի վրա ազդող ցանկացած փաստական հանգամանքին:

Բացարկ հայտնելու հաջորդ հիմքերը հետևյալն են՝ վարչական վարույթ իրականացնող պաշտոնատար անձը երբևէ գործել է ի շահ

վարույթի մասնակիցներից որևէ մեկի կամ, երբ առկա են այնպիսի հանգամանքներ, որոնք կասկած են հարուցում տվյալ պաշտոնատար անձի ուղղակիորեն կամ անուղղակիորեն շահագրգռված լինելու կամ նրա անաչառության մասին:

Ի շահ վարույթի մասնակիցների գործելու շրջանակներն օրենսդիրը չի սահմանափակել միայն վարչարարությամբ, հետևաբար, այդպիսի իրավիճակ կարող է արձանագրվել բոլոր այն դեպքերում, երբ, օրինակ, ներկայացվել է անձի շահերը քաղաքացիական կամ քրեական դատավարությունում, գույքային առավելություններ են տրվել և այլն: Ինչ վերաբերում է կասկած հարուցող այլ հանգամանքներին, ապա դրանք գործնականում չափազանց բազմաբնույթ են, և նախապես հնարավոր չէ օրենսդրությամբ նախատեսել բոլոր իրավիճակները: Օրինակ, այդպիսին կարող է լինել սերտ մտերմությունը վարույթի մասնակցի հետ կամ ակնհայտ թշնամական վերաբերմունքը նրա նկատմամբ, համատեղ աշխատանքը և այլն:

Բացարկ կարող է հայտնվել մինչև վարչական վարույթի ավարտվելը: Ուշադրություն պետք է դարձնել, որ, եթե Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասում խոսվում է գործի քննարկման ավարտի մասին, ապա այս դեպքում՝ վարչական վարույթն ավարտելու մասին: Սա բնավ պատահական ձևակերպում չէ և թելադրված է հստակ նպատակով: Այսպես, եթե խոսքը վերաբերում է կանխակալ կարծիք հայտնելուն, ապա էական նշանակություն է տրվում այն փուլին, երբ դեռ չի ավարտվել քննարկումը, սակայն բացարկ հայտնելու պարագայում բուն քննարկման ավարտը դեռևս իրավական նշանակություն չունի, քանի որ բացարկի ինստիտուտն իրավաչափորեն պետք է գործի նաև եզրափակիչ փուլում, երբ ընթանում է վարչական ակտ ընդունելու գործընթացը:

Գործնականում նույն պաշտոնատար անձին կարող է մի քանի անգամ բացարկ հայտնվել, ինչը լայն տարածում ունի նաև ցանկացած տեսակի դատավարությունում: Որպեսզի այս կարևոր ինստիտուտը չվերածվի չարաշահման լծակի և խաթարի բուն այդ ինստիտուտի գաղափարը, օրենսդիրը հստակ կանոններ է սահմանում, ըստ որոնց. «Նույն պաշտոնատար անձին կրկին հայտնված բացարկը կարող է քննարկվել, եթե դրանում մատնանշված են նոր հիմքեր կամ նոր փաստեր»:

Օրենքի 25-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, բացարկի վերաբերյալ որոշումը պետք է ընդունվի ոչ ուշ, քան բացարկ հայտնելու օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվա ընթացքում: Այդ որոշումն ընդունում է տվյալ պաշտոնատար անձի անմիջական ղեկավարը, իսկ կոլեգիալ մարմնի անդամի նկատմամբ որոշումն ընդունում է համապատասխան կոլեգիալ մարմինը՝ ձայների պարզ մեծամասնությամբ (տվյալ դեպքում քվեարկությանը չի մասնակցում այն անձը, որի դեմ բացարկ է հայտնվել): Վարչական մարմնի ղեկավարի նկատմամբ հայտնված բացարկի առնչությամբ որոշում ընդունում է հենց այդ ղեկավարը, ընդ որում, բացարկը բավարարելու դեպքում վարույթն իրականացնում է իր տեղակալը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ ղեկավարին փոխարինելու լիազորություն ունեցող որևէ պաշտոնատար անձ:

Վարչական վարույթ իրականացնող անձի ինքնաբացարկի հիմքերը: Ինքնաբացարկի ինստիտուտը նախատեսված է Օրենքի 26-րդ հոդվածով: Ինքնաբացարկը ևս հայտնվում է գրավոր և նույն այն հիմքերով, որոնք ամրագրված են բացարկի համար: Այն պետք է լինի պատճառաբանված և պատշաճ ձևով ուղարկվի վարույթի մասնակիցներին՝ ի գիտություն: Վարչական մարմնի ղեկավարի կողմից ինքնաբացարկ հայտնելու դեպքում վերջինիս փոխարինում է այլ պաշտոնատար անձ այն հիմքերով, ինչ նախատեսված են բացարկը բավարարելու դեպքում: Վարույթ իրականացնող այլ պաշտոնատար անձի ինքնաբացարկի դեպքում վարչական մարմնի ղեկավարը եռօրյա ժամկետում նշանակում է նոր պաշտոնատար անձ: Կոլեգիալ մարմնի անդամի ինքնաբացարկի դեպքում կոլեգիալ մարմինը շարունակում է գործել մնացած կազմով: Հավելենք, որ ինքնաբացարկ հայտնելու ժամկետային սահմանափակումները ևս նույնական են բացարկ հայտնելու հետ:

Ինքնաբացարկ հայտնելու ինստիտուտի առանձնահատկությունն այն է, որ վարչական վարույթին իր մասնակցության հարցը լուծում է տվյալ պաշտոնատար անձը, և որևէ այլ պաշտոնատար անձ, այդ թվում՝ վերջինիս ղեկավարը իրավասու չէ ընդունել ինքնաբացարկը չընդունելու մասին որոշում: Եթե վարչական մարմնի ղեկավարը գտնում է, որ ինքնաբացարկը հայտնվել է առանց օրենսդրությամբ նախատեսված հիմքի, ապա իրավասու է չընդունելու ինքնաբացարկը և հանձնարարելու շարունակել վարույթի իրականացումը:

§4. Վարչական վարույթի լեզուն

Ըստ Օրենքի 27 հոդվածի 1-ին մասի, ***վարչական վարույթի իրականացման լեզուն հայերենն է:*** Այս դրույթի հիմքում ընկած է Սահմանադրության 12 հոդվածով ամրագրված այն հիմնադրույթը, որի համաձայն. «Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է»: Վարույթը հայերեն լեզվով իրականացնելու պահանջը վերաբերում է ինչպես վարչական վարույթ իրականացնող մարմնի կողմից կազմված փաստաթղթերին, վարույթի մասնակիցներին ուղղված գրագրություններին ու վարչական ակտին, այնպես էլ վարչական մարմիններին ուղղված դիմումներին ու այլ տվյալներին և փաստաթղթերին:

Միաժամանակ, Օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված են որոշ բացառություններ, որոնք թելադրված են մարդկանց իրավունքների և հիմնարար ազատությունների իրականացմանն ու պաշտպանությանը նվիրված միջազգային պայմանագրերով, ինչպես նաև Սահմանադրության 14.1-րդ հոդվածով ամրագրված օրենքի առջև բոլորի հավասարության և 18-րդ հոդվածով ամրագրված պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ երաշխավորելու հիմնադրույթներով:

Մասնավորապես, պետական լեզվին չտիրապետող անձի պարագայում վարույթին մասնակցելու կտրվածքով բացառություններ չանելը գործնականում կհանգեցնի այնպիսի իրավիճակի, որ լեզվի չիմացությունը վերջինիս համար կստեղծեն անհարկի լրացուցիչ բարդություններ, որոնց պայմաններում չի կարող խոսք գնալ օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքի պահպանման մասին: Բացի այդ, պետական լեզուն, լինելով սահմանադրական կարգի բաղադրիչ, ստորադասվում է մարդուն, նրա արժանապատվությանը, հիմնական իրավունքներին ու ազատություններին (Սահմանադրության 3 հոդված):

Միջազգային պայմանագրերից, թերևս, արժե հիշատակել «Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների» Եվրոպական խարտիան (ստորագրվել է 1992թ. նոյեմբերի 5-ին), որի վավե-

ռացման պահին Հայաստանի Հանրապետությունը, հիմք ընդունելով նշված խարտիայի 3-րդ հոդվածի 1-ին կետը, հայտարարել է. «Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների» Եվրոպական խարտիայի իմաստով Հայաստանի Հանրապետության փոքրամասնությունների լեզուներ են ասորերենը, հունարենը, ռուսերենը և քրդերենը»: Սակայն առավել էական է նշված խարտիայի 10 հոդվածի դրույթը, որով կողմերը պարտավորվել են իրենց տարածքներում տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով խոսող անձանց հնարավորություն տալ, որպեսզի նրանք վարչական մարմիններ բանավոր կամ գրավոր դիմեն իրենց լեզուներով:

Բացառությունը տվյալ դեպքում այն է, որ. «Հայաստանի Հանրապետությունում ազգային փոքրամասնությունների լեզուներին տիրապետող անձինք, օրենքով սահմանված կարգով կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, վարչական վարույթի իրականացման համար դիմումը և դրան կից փաստաթղթերը կարող են ներկայացնել համապատասխան փոքրամասնության լեզվով: Այդ դեպքում վարչական մարմինը կարող է պահանջել ներկայացնել փաստաթղթերի թարգմանությունները հայերենով»:

Բոլոր դեպքերում վարչական վարույթի իրականացման հետ կապված փաստաթղթերը կազմվում են, և ամբողջ գործավարությունն իրականացվում է հայերենով: Որպեսզի ապահովվի օրենսդրության այս պահանջը, նույն օրենքի 3-րդ մասով նախատեսված է, որ վարույթի մասնակիցների կողմից այլ լեզվով փաստաթղթեր ներկայացնելու դեպքում, վարչական մարմինը պահանջում է, որպեսզի ներկայացվեն նաև դրանց սահմանված կարգով կատարված հայերեն թարգմանությունները:

Մեկ այլ բացառություն ևս. ***վարույթի մասնակիցները կարող են վարույթին մասնակցել օտար լեզվով, սակայն վերջիններս պարտավոր են իրենց ներկայացրած թարգմանչի միջոցով ապահովել հայերեն թարգմանություն, եթե վարչական մարմինն այդպիսի թարգմանություն ապահովելու հնարավորություն չունի***:

Հիշյալ բացառությունը բնավ խոչընդոտ չէ, որպեսզի օտար լեզվով ներկայացված դիմումը սահմանված կարգով հիմք հանդիսանա վարույթ հարուցելու և իրականացնելու համար: Այլ կերպ ասած, եթե

դիմումը ներկայացվում է օտար լեզվով, ապա այն արդեն հիմք է վարույթ հարուցելու համար, պարզապես վարույթն իրականացնող մարմնի պահանջով վարույթի մասնակիցը պարտավոր է հետագայում ներկայացնել նաև դրա հայերեն թարգմանությունը: Նույնն է իրավիճակը նաև այլ փաստաթղթեր ներկայացնելու դեպքում. դրանք սահմանված կարգով ընդունվում են և դառնում քննարկման առարկա, սակայն վարույթի մասնակցի համար պահպանվում է սահմանված կարգով դրա հայերեն թարգմանությունը ներկայացնելու պարտականությունը:

Վարույթի իրականացման լեզվի կանոնները, այսպիսով, մի կողմից հանդիսանում են վարույթի մասնակիցների իրավունքների ու ազատությունների պաշտպանության երաշխիք, մյուս կողմից ապահովում են վարչական մարմինների բնականոն գործունեությունը:

§5. Վարչական վարույթի վերաբերյալ գործերը վարելը և հաշվառելը, վարչական վարույթում արձանագրություն կազմելը

Վարչական վարույթի վերաբերյալ գործերը վարելը և հաշվառելը. Օրենքը անդրադարձել է նաև վարույթի վերաբերյալ գործեր կազմելու, դրանք վարելու և հաշվառելու ընթացակարգերին, ինչը, ըստ էության, նորույթ է հայրենական իրավունքի համակարգում, քանզի անգամ դատավարության առանձին տեսակները կարգավորող օրենսդրական ակտերը չեն անդրադառնում այդ հարցերին: Նորույթ լինելով հանդերձ, այս վարչական վարույթի սույն հատվածը կարևոր նշանակություն ունի այն առումով, որ ապահովում է վարչարարության թափանցիկությունը և վերահսկելիությունը, առավել համակարգված ու կազմակերպված է դարձնում վարույթի ողջ գործընթացը և հնարավորություն է տալիս ինչպես դիմում ներկայացրած, այնպես էլ դիմում ներկայացնելու ակնկալիք ունեցող անձանց ուսումնասիրելու վարչական վարույթները և պատկերացում կազմելու ձևավորված պրակտիկայի առնչությամբ: Օրինակ, այդ նյութերին իրազեկվելը հնարավորություն կտա պարզելու, թե վարչական մարմիններում որքանով է պահպանվում կամայականության արգելքի սկզբունքը և այլն:

Առանձին գործ կազմելու վերաբերյալ նորմերը երաշխիք են նաև

վարչական ծախսերը հստակ հաշվարկելու և դրանք գանձելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու համար: Որոշ երկրների վարչարարության ու դատավարության փորձը ցույց է տալիս, որ վարույթ իրականացնող յուրաքանչյուր պաշտոնատար անձ պարտավոր է համապատասխան հաշվարկ կցել գործին, որում հստակ արտացոլվում են վարչական և դատական ծախսերը:

Վարչական վարույթի վերաբերյալ գործերը վարելուն և հաշվառելուն առնչվող հարաբերությունները կարգավորված են Օրենքի 28-րդ հոդվածով: Նախ, Օրենքը վարչական մարմնին պարտավորեցնում է վարչական վարույթ հարուցելու պահից կազմել առանձին գործ, որում պահվում են այդ վարույթին առնչվող բոլոր փաստաթղթերը, այդ թվում՝ վարույթի արդյունքում ընդունված վարչական ակտը (դրա հաստատված պատճենը): Գործ կազմելուց զատ, վարչական մարմինը վարում է երկու գրանցամատյան՝ վարչական գործերի ժամանակագրական և առարկայական հաշվառման գրանցամատյան և վարչական վարույթի արդյունքում ընդունված վարչական ակտերի հաշվառման գրանցամատյան:

Որպեսզի գործերը վարելու և գրանցամատյաններ կազմելու ընթացակարգերում ապահովվի անհրաժեշտ միասնականություն, ինչը երաշխավորում է դրանց մատչելիությունը, Օրենքը այդ հարցերին առնչվող ակտերն ընդունելու իրավասությունը վերապահում է վարչական մարմնին, որը պետք է ղեկավարվի ՀՀ կառավարության կողմից հաստատված օրինակելի կարգով[1]: Վարչական մարմինները պարտավոր էին մինչև Օրենքն ուժի մեջ մտնելը՝ 2005թ. հունվարի 1-ը, ընդունել համապատասխան իրավական ակտեր:

Տվյալ դեպքում լիակատար միասնականություն ապահովելու խնդիր չէր կարող լուծվել, քանի որ վարչական մարմինները միմյանցից էապես տարբերվում են ոչ միայն իրենց գործառույթների առանձնահատկությամբ, այլև կառուցվածքով, որոնք ևս կանխորոշում են հիշյալ հարցերի իրավական կանոնակարգումը:

Հիշյալ հարցի առնչությամբ հատուկ օրենքներում առանձնահա-

[1] ՀՀ կառավարությունը 2004թ. հունիսի 25-ին ընդունել է «Վարչական վարույթի վերաբերյալ գործերի, դրանց հաշվառման գրանցամատյանների և վարչական ակտերի հաշվառման գրանցամատյանների վարման կարգն ու պայմանները սահմանող օրինակելի կարգը հաստատելու մասին» թիվ 975-Ն որոշումը:

տուկ իրավական կարգավորումների առկայության դեպքում, բնականաբար, նախապատվությունը կտրվի այդ իրավական ակտերին, իսկ վարչական մարմինները պարտավոր են իրենց վերը նշված ակտերում կատարել համահունչ համապատասխանեցումներ: Նշված կարգավորումները վերաբերում են բացառապես գրավոր վարչական ակտերին, իսկ բանավորի դեպքում գործավարություն և հաշվառում չի իրականացվում, եթե առանձին օրենսդրական ակտերով այլ կարգ նախատեսված չէ:

Ինչ վերաբերում է գործերի պահպանմանը, ապա այս հարցում առանձնահատկություն չկա, այդ հարցը կարգավորվում է օրենսդրությամբ՝ ընդհանուր հիմունքներով:

Վարչական վարույթում արձանագրություն կազմելը: Վարչական վարույթում արձանագրություն կազմելը պարտադիր է համարվում միայն այն դեպքում, երբ գործի քննարկումը կատարվում է վարույթի մասնակիցների, վկաների, փորձագետի, այլ մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ (Օրենքի 29-րդ հոդված): Եթե կատարվում են մի քանի քննարկումներ, ապա դրանցից յուրաքանչյուրի վերաբերյալ կազմվում է առանձին արձանագրություն: Քննարկումներն ընդմիջումով կատարելու դեպքում արձանագրությունը ևս պետք է ներառի համապատասխան գրառում՝ ընդմիջման վերաբերյալ:

Օրենքը սահմանում է տեղեկությունների այն ցանկը, որ պարտադիր պետք է ներառվի արձանագրությամբ, որից բացի այն կարող է արդեն պարունակել այլ տեղեկություններ, ինչպես նաև դրան կարող են կցվել հավելվածներ, այդ թվում՝ գործում առկա բոլոր փաստաթղթերի ցանկը՝ ըստ դրանք ներկայացրած վարույթի մասնակիցների:

Ինչևէ, Օրենքի 29-րդ հոդվածը արձանագրության մեջ ներառվող պարտադիր տեղեկություններ է համարում հետևյալը.

«ա) վարույթն իրականացնող վարչական մարմնի անվանումը.

բ) վարույթն իրականացնելու վայրը, տարին, ամիսը և ամսաթիվը.

գ) սույն հոդվածի 1-ին մասում նշված անձանց անունը և ազգանունը՝ տվյալ գործում նրանց կարգավիճակի (դիմող, երրորդ անձ, վկա և այլն) նշմամբ.

դ) քննարկվող հարցի բովանդակությունը.

ե) վարույթի մասնակիցների և վարույթում հանդես եկող այլ անձանց ելույթների համառոտ շարադրանքը.

զ) ընդունված որոշման եզրափակիչ մասը»:

Դժվար չէ նկատել, որ օրենսդիրը արձանագրման ենթակա պարտադիր տեղեկությունների ցանկի հիմքում դրել է այն տրամաբանությունը, որի համաձայն արձանագրվում են բացառապես վարչական վարույթի համար նշանակություն ունեցող այն տվյալները, որոնք քննարկվում են վարույթի մասնակիցների և այլ անձանց մասնակցությամբ:

Ինչպես արդեն նշվեց, արձանագրությունը պարունակում է ոչ միայն զուտ տեղեկատվական տվյալներ, այլև ընդունված որոշման եզրափակիչ մասեր: Սա բնավ չի նշանակում, որ քննարկման արդյունքներով կազմված արձանագրությունը նշված մասով պետք է նույնացվի վարչական վարույթի եզրափակիչ փուլում ընդունված վարչական ակտի հետ: Տվյալ դեպքում բացառապես խոսք է գնում արձանագրված փաստական հանգամանքների մասին, որոնք որպես ապացույց գնահատելիս, վարչական մարմինը, Օրենքի 42-րդ հոդվածին համապատասխան, ղեկավարվում է իր հայեցողությամբ:

ԳԼՈՒԽ 16.
ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԸ, ԴՐԱ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՁԵՎԵՐԸ: ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ

§1. Վարչական ակտի հասկացությունը և տեսակները

Հասկացությունը: «Վարչական ակտ» հասկացության բնորոշումը տրված է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում (այսուհետ սույն գլխում՝ Օրենք). «Վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն: Վարչական ակտը կարող է ուղղված լինել նաև որոշակի անհատական չափանիշներով առանձնացված որևէ խմբի» (53-րդ հոդվածի 1-ին մաս): Տվյալ բնորոշման մեջ կարևոր նշանակություն ունի «արտաքին ներգործություն» արտահայտության պարզաբանումը: Այն, ըստ էության, իրավունքի արտասահմանյան աղբյուրներից թարգմանության արդյունք է և բովանդակությամբ հավասարազոր է պարզապես ենթակայական հարաբերությունների մեջ չգտնվող անձի նկատմամբ ներգործությանը:

Ընդ որում, տվյալ դեպքում նկատի է առնվում ոչ թե ընդհանրապես ենթակայական հարաբերությունները, այլ կոնկրետ հարաբերության շրջանակներում փոխհարաբերության բնույթը: Օրինակ, նույն վարչական մարմնի աշխատակիցը չի դիտվի ենթակայական հարաբերությունների մեջ գտնվող սուբյեկտ այն դեպքում, երբ դիմում է տվյալ վարչական մարմնին որպես մասնավոր անձ (սեփականության վկայագիր ստանալու, իր նկատմամբ կիրառված վարչական տույժը վերանայելու հարցերով և այլն): Հաջորդ կարևոր հատկանիշը «հանրային իրավունքի բնագավառին» վերաբերելու հանգամանքն է: Տվյալ դեպքում նկատի են առնվում այն հարաբերությունները, որոնք բացառապես առնչվում են իմպերատիվ նորմերով կարգա-

վորվող և քաղաքացիաիրավական ոլորտից դուրս գտնվող բնագավառի հետ: Օրինակ, այդպիսին չի կարող համարվել վարչական մարմնի և քաղաքացու միջև կնքված անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը, սակայն հենց այդպիսին կհամարվի մրցույթի արդյունքներով անշարժ գույքը այդ քաղաքացուն վարձակալության հիմունքներով հատկացնելու վերաբերյալ վարչական մարմնի որոշումը:

Վարչական ակտի տեսակները: Օրենքը կարգավորում է նաև վարչական ակտի տեսակներին նվիրված հարցերը: Մասնավորապես վերը նշված 53-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, տվյալ օրենսդրական ակտի իմաստով վարչական ակտերը լինում են՝ բարենպաստ, միջամտող և զուգորդվող: Բարենպաստ է համարվում այն ակտը, որի միջոցով վարչական մարմինների կողմից անձանց տրամադրվում են իրավունքներ կամ նրանց համար ստեղծվում են իրավական կամ փաստացի դրություն բարելավող ցանկացած այլ պայման: Բնականաբար, այդպիսի ակտեր կարող են համարվել լիցենզիաներ, թույլտվություններ, վկայագրեր տալու մասին որոշումները:

Միջամտող վարչական ակտի միջոցով վարչական մարմինը մերժում, միջամտում, ընդհուպ սահմանափակում է անձանց իրավունքների իրականացումը, որևէ պարտականություն է դնում նրանց վրա կամ ցանկացած այլ եղանակով վատթարացնում է նրանց իրավական կամ փաստացի վիճակը: Այդպիսի վարչական ակտի օրինակ կարող է լինել լիցենզիա տրամադրելը մերժելու, ինչպես նաև անձին սեփականության իրավունքով պատկանող գույքի վրա արգելանք դնելու մասին, ձեռնարկատիրության որևէ տեսակ կասեցնելու և նմանաբնույթ այլ որոշումները:

Զուգորդվող վարչական ակտը պարունակում է անձի համար ինչպես բարենպաստ, այնպես էլ միջամտող վարչական ակտերով սահմանվող դրույթներ: Այդպիսին կարող է համարվել, օրինակ, անշարժ գույքի կադաստրի կողմից վկայագիր տալու մասին որոշումը, որի հիման վրա պետական գրանցում է ստանում անշարժ գույքի օրինական հատվածը և մերժվում է ապօրինի հատվածը:

§2. Վարչական ակտի ձևերը

Վարչական ակտի ձևերը: Օրենքի 54-րդ հոդվածով սահմանված են վարչական ակտի ձևերը, որոնք լինում են՝ ա) գրավոր, բ) բանավոր և գ) լուսային, ձայնային, պատկերային, ազդանշանների, նշանների կամ օրենքով նախատեսված այլ ձևի: Վերջին խումբը, այսպիսով, ընդգրկում է տարաբնույթ ամրագրման ձևերը, որոնք սպառիչ չեն և կարող են օրենքներով լրացվել:

Անդրադառնանք այն պահանջին, ըստ որի վարչական ակտի ձևը կարող է սահմանվել միայն օրենքով: Արտաքուստ կարող է թվալ, որ օրենքով սահմանված է անհարկի խիստ կանոնակարգ, սակայն վարչական ակտին ներկայացվող պահանջները արդարացիորեն այնքան խիստ են, որ դրանց պայմաններում իրավաչափ չէր լինի վարչական ակտի ձև սահմանելու լիազորությունը վերապահել գործադիր իշխանություն իրականացնող որևէ մարմնի:

Մի կարևոր հարցադրում ևս. ի՞նչ պետք է հասկանալ «վարչական ակտի ձև սահմանելու» արտահայտության ներքո, մասնավորապես, դա բացառո՞ւմ է ենթաօրենսդրական ակտով այդ ձևին ներկայացվող պահանջները սահմանելը: Տվյալ դեպքում հարկ է նկատել, որ օրենքով վարչական ակտի ձև սահմանելու դեպքում, ենթաօրենսդրական ակտով կարող է սահմանվել կոնկրետ արդեն օրենքով սահմանված ձևին ներկայացվող պահանջները, պայմանով, որ դրանք չհակասեն Սահմանադրության 83.5-րդ հոդվածով ամրագրված նորմերին (այսինքն՝ անդրադարձ չլինի այն հարցերին, որոնք կարող են սահմանվել բացառապես օրենքներով): Օրինակ, 2005թ. հուլիսի 8-ին ընդունված «Ճանապարհային երթևեկության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով լուսացույցը նախատեսված է որպես վարչական ակտի ձև, որի հիման վրա Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. հոկտեմբերի 26-ի թիվ 1699-Ն որոշմամբ հաստատվել են ճանապարհային լուսացույցներին ներկայացվող պահանջները, դրանց կիրառման ու տեղակայման կանոնները և այլն:

Եթե վարչական վարույթը հարուցվել է դիմումի հիման վրա, ապա արդյունքում կարող է ընդունվել միայն գրավոր վարչական ակտ:

Բանավոր ակտի դեպքում, եթե դա նախատեսված է օրենքով, կամ հասցեատերն ունի արդարացված շահ, վարչական մարմինը պարտավոր է ապահովել հետագա գրավոր ձևակերպում:

«Արդարացված շահ» եզրույթի բնորոշումը տրված չէ օրենսդրությամբ, ինչը նշանակում է, որ կոնկրետ իրավիճակում այդպիսի շահի առկայությունը որոշվում է, գնահատելով այն հանգամանքները, որոնք վկայում են հասցեատիրոջ համար այդպիսի վարչական ակտի պարտադիր լինելը: Իսկ հանգամանքները կարող են տարբեր լինել. օրինակ՝ կարող է այդպիսի գրավոր ակտի առկայությունը անհրաժեշտ լինել օտարերկրյա այնպիսի պետական մարմիններ ներկայացնելու համար, որոնցում վարչարարության կանոններով նախատեսված է գրավոր վարչական ակտ ներկայացնելու պահանջ:

Ինչ վերաբերում է օրենքով նախատեսված դեպքերին, ապա արդարացի շահի առկայությունն ընդհանրապես չի քննարկվում, քանի որ տվյալ դեպքում հենց օրենքի պահանջով է տրվում գրավոր վարչական ակտ:

§3. Գրավոր վարչական ակտին ներկայացվող պահանջները, վարչական ակտի որոշակիությունը և հիմնավորումը

Գրավոր ակտին ներկայացվող պահանջները: Գրավոր վարչական ակտին ներկայացվող պահանջները բաժանվում են երկու խմբի՝ պարտադիր և ոչ պարտադիր (ֆակուլտատիվ): Պարտադիր պահանջներն են՝

ա) բովանդակությունը պետք է համապատասխանի օրենքով սահմանված պահանջներին, նշում պարունակի բոլոր այն էական փաստական և իրավաբանական հանգամանքների վերաբերյալ, որոնք ընկած են որոշման հիմքում.

բ) վարույթն իրականացրած վարչական մարմնի լրիվ անվանումը.

գ) վարչական ակտի հասցեատիրոջ անունը, ազգանունը, իրավաբանական անձի դեպքում՝ լրիվ անվանումը.

դ) ակտի լրիվ անվանումը, դրա ընդունման տարին, ամիսը,

ամսաթիվը և համարը.

ե) ակտով լուծվող հարցի նկարագրությունը (նկարագրական մաս).

զ) ակտի ընդունման հիմնավորումը (պատճառաբանական մաս).

է) ընդունված որոշման շարադրանքը (եզրափակիչ մաս).

ը) ակտի գործողության ժամկետը, եթե ակտն ընդունվում է որոշակի ժամկետով.

թ) ակտի բողոքարկման ժամկետը և մարմինը, ներառյալ՝ դատարանը, որին կարող է այդ ակտը բողոքարկվել.

ժ) ակտն ընդունող վարչական մարմնի պաշտոնատար անձի պաշտոնը, անունը և ազգանունը, նրա ստորագրությունը.

ժա) ակտն ընդունած վարչական մարմնի պաշտոնական կնիքը (Օրենքի 55-րդ հոդված):

Ոչ պարտադիր պահանջներին են վերաբերում վարչական ակտում դրա ընդունման կապակցությամբ ծախսերի և դրանք կրողների վերաբերյալ տեղեկություններ նշելը, վարչական ակտին ներդիրներ, հավելվածներ կամ լրացուցիչ այլ փաստաթղթեր կցելը, ինչպես նաև միանման հարց կարգավորող վարչական ակտի միասնական ձևաթղթի առկայությունը: Ցավոք, այս պահանջները, չնչին բացառությամբ, անտեսվում են վարչական վարույթ իրականացնող մարմինների կողմից, մինչդեռ դրանց առկայությունը կարող էր վկայել վարչարարության բարձր մշակույթի մասին:

Վարչական ակտի որոշակիությունը և հիմնավորվածությունը: Օրենքի 56-րդ հոդվածի համաձայն, վարչական ակտը պետք է ձևակերպված լինի հստակ և հասկանալի, ինչը հնարավորություն է տալիս, որպեսզի հասցեատիրոջ համար ակնառու լինի, թե իրեն ինչ իրավունք է տրամադրվում, իր որ իրավունքն է սահմանափակվում, ինքն ինչ իրավունքից է զրկվում կամ իր վրա ինչ պարտականություն է դրվում:

Հարկ է ընդգծել նաև, որ վերոհիշյալ պահանջը չկատարելը հիմք է, որպեսզի հասցեատերն ազատվի իր վրա դրված պարտականության կատարումից կամ իրավաչափ չհամարվի իր իրավունքների սահմանափակումը, ինչպես նաև պահանջի փոխհատուցում իրեն իրավունք տրամադրելու ակտի ոչ հստակության արդյունքում պատճառված վնասի համար:

Ընդհանուր պահանջներից է նաև վարչական ակտի հիմնավորումը: Օրենքի 57-րդ հոդվածի համաձայն.

«Գրավոր կամ գրավոր հաստատված վարչական ակտը պետք է պարունակի հիմնավորում, որում պետք է նշվեն համապատասխան որոշում ընդունելու բոլոր էական փաստական և իրավական հանգամանքները:

Վարչական մարմնի հայեցողական լիազորությունների իրականացման արդյունքում ընդունված վարչական ակտի հիմնավորումից պետք է պարզ լինեն այն նկատառումները, որոնց հիման վրա վարչական մարմինն ընտրել է տվյալ լուծումը»:

Ընդ որում, չի թույլատրվում հիմնավորման հիմքում դնել այնպիսի փաստարկներ, որոնք չեն առնչվում վարչական ակտ ընդունող մարմնի իրավասությանը: Այս արգելքը վերաբերում է ոչ միայն այն դեպքերին, երբ տվյալ փաստարկն ընդհանրապես նախատեսված չէ օրենսդրությամբ (օրինակ՝ նպատակահարմարությունը), այլև այն փաստարկներին, որոնց առնչությամբ գնահատական տալը վերապահված է այլ իրավասու մարմինների (օրինակ, հրապարակային միջոցառման իրազեկման առնչությամբ տեղական ինքնակառավարման մարմինը չի կարող ազգային անվտանգության կամ ոստիկանության փոխարեն գնահատել անվտանգության հարցերը):

Ըստ նույն հոդվածի, վարչական ակտի հիմնավորում չի պահանջվում հետևյալ դեպքերում՝

ա) վարչական ակտով բավարարվում է դիմումը և չի շոշափվում երրորդ անձանց իրավունքները.

բ) հասցեատերը կամ այն անձը, ում շահերը շոշափվում են վարչական ակտով, արդեն իրազեկված են փաստական կամ իրավական հետևանքների վերաբերյալ վարչական մարմնի դիրքորոշման մասին.

գ) նույնանման վարչական ակտեր հրապարակվում են մեծ քանակությամբ կամ վարչական ակտերը հրատարակվում են տեխնիկական միջոցների օգտագործմամբ, և յուրաքանչյուր առանձին դեպքում հիմնավորելու անհրաժեշտություն չկա:

Թերևս, նշված հիմքերից պարզաբանման կարիք ունի վերջինը: Այս հիմքի առնչությամբ անհրաժեշտ է նկատել, որ նույնանման վարչական ակտերի միայն մեծաքանակ լինելը բավարար փաստարկ չէ հիմնավորումը բացառելու համար, հարկ է, որպեսզի բացակայի նաև

յուրաքանչյուր առանձին դեպքում հիմնավորելու անհրաժեշտությունը: Օրինակ, տարկետման իրավունք վերապահելիս, կառավարությունը հիմք է ընդունում տվյալ օտարերկրյա բուհի բարձր վարկանիշը, սակայն չի հիմնավորում, թե ինչ փաստարկներով է վարկանիշը բարձր գնահատում: Տվյալ դեպքում, հիմնավորման անհրաժեշտությունը չկա, որովհետև մեկ այլ որոշմամբ (նորմատիվ բնույթի) կոնկրետ հիմնավորումներով հաստատված է այն բուհերի սպառիչ ցանկը, որոնք համարվում են բարձր վարկանիշ ունեցող:

Նշված օրինակը, թերևս, վկայում է այն մասին, որ գործնականում կամայականության արգելքի սկզբունքն առավել երաշխավորված կլինի, եթե հայեցողական լիազորությունների իրականացման համար ընդունվեն համապատասխան կողմնորոշիչ նորմատիվ բնույթի ակտեր:

§4. Վարչական ակտ ընդունելը, դրա մասին իրազեկելը, վարչական ակտն ուժի մեջ մտնելը

Վարչական ակտ ընդունելը: Վարչական ակտն ընդունված համարելու ժամկետը պայմանավորված է դրա տեսակով և ձևով, այսպես՝ գրավոր վարչական ակտը համարվում է ընդունված՝ իրավասու պաշտոնատար անձի կողմից ստորագրվելու օրվանից, իսկ բանավոր կամ այլ ձևի վարչական ակտը՝ այդ ակտերը հրապարակվելու պահից (Օրենքի 58-րդ հոդված):

Բանավոր վարչական ակտի պարագայում հրապարակման տակ չպետք է հասկանալ վերջինիս հրատարակումը տպագիր եղանակով, հրապարակումը սոսկ որևէ հստակ ընկալելի եղանակով հասցեատիրոջը հասանելի դարձնելն է (օրինակ, ոստիկանի կողմից սահմանված կարգով արված ժեստերը, լուսացույցի համապատասխան նշանի ակտիվացումը և այլն):

Վարչական ակտի մասին իրազեկելը: Օրենքի 59-րդ հոդվածի համաձայն, վարչական ակտի ընդունման մասին իրազեկում է համարվում վարչական մարմնի կողմից վարույթի մասնակիցներին այդ հոդվածով նախատեսված կարգով այն հանձնելը կամ հրապարակելը:

Գրավոր վարչական ակտը պետք է եռօրյա ժամկետում ստորագրությամբ առձեռն հանձնվի վարույթի մասնակիցներին, իսկ դրա անհնարինության դեպքում, ինչպես նաև վարույթի մասնակցի պահանջով նույն ժամկետում հանձնումը կարող է իրականացվել պատվիրված փոստով՝ ստանալու մասին ծանուցմամբ կամ օրենքով նախատեսված այլ եղանակներով: Վարչական մարմինը միաժամանակ պարտավոր է դրա հետ միասին հանձնել նաև այդ ակտի բաղկացուցիչ մաս համարվող փաստաթղթերը, սակայն դրանք ուշացումով հանձնելը հիմք չէ վարչական ակտի իրավաչափությունը վիճարկելու համար:

Հանձնման նշված կարգը տարածվում է նաև վարչական ակտում, ինչպես նաև դրա բաղկացուցիչ մաս կազմող փաստաթղթերում կատարվող փոփոխությունների վրա:

Ինչ վերաբերում է վարչական ակտի հրապարակմանը, ապա այն կատարվում է տվյալ վարչական մարմնի տեղեկագրում կամ այլ պաշտոնական տեղեկագրում կամ զանգվածային լրատվության այլ միջոցներով հրապարակելով:

Գրավոր վարչական ակտի հրապարակումը պարտադիր է, եթե վարչական մարմնին հայտնի չէ այն անձանց վերաբերյալ տեղեկությունները, որոնց շահերը ուղղակիորեն շոշափվում են այդ ակտով կամ օրենքով նախատեսված այլ դեպքերում: Գրավոր վարչական ակտը վարչական մարմնի նախաձեռնությամբ կարող է հրապարկվել, եթե վերջինիս հայեցողական որոշմամբ դա նպատակահարմար է՝ պետության և հանրության շահերի, ինչպես նաև անձանց իրավունքների արդյունավետ պահպանման անհրաժեշտությունից ելնելով:

Մամուլում, ԶԼՄ-ներում կամ տեղեկատվության տարածման այլ միջոցներում հրապարակվում է գրավոր վարչական ակտի միայն եզրափակիչ մասը, սակայն միաժամանակ պետք է նշվի, թե որտեղ է հնարավոր ծանոթանալ ամբողջ վարչական ակտին: Օրենսդրի այս պահանջը, իհարկե, չի բացառում վարչական ակտն ամբողջությամբ հրապարակելու տարբերակը, մանավանդ, վերջինիս ոչ մեծ ծավալի դեպքում:

Բանավոր վարչական ակտը հրապարակվում է այն հասցեատիրոջը բանավոր ձևով հայտարարելու միջոցով: Այն կարող է հրապարակվել նաև հասցեատիրոջ համար հասկանալի որևէ օտար լեզվով:

Այլ ձևի վարչական ակտի հրապարկմանն արդեն անդրադարձել ենք:

Վարչական ակտի տրամադրումն օտար լեզվով: Վարչական ակտն օտար լեզվով իրազեկելու կարգն ամրագրված է Օրենքի 59-րդ հոդվածի 4-րդ մասով: Մասնավորապես, հասցեատիրոջ խնդրանքով վարչական մարմինը կարող է տրամադրել իր պաշտոնական կնիքով հաստատված օտար լեզվով թարգմանված պատճենը: Միաժամանակ, օրենսդիրը իրավաբանական ուժ է վերապահում բացառապես վարույթի իրականացման լեզվով ընդունված տեքստին, վեճ կամ բողոք ներկայացնելու դեպքում հիմք է ընդունվում միայն հայերենով ընդունված տեքստը: Օտար լեզվով թարգմանված պատճենը չի կարող հիմք լինել այդ ակտի իմաստը կամ բովանդակությունը մեկնաբանելու կամ պարզաբանելու համար:

Օտար լեզվով թարգմանված պատճենները գործնականում կարող են անհրաժեշտ լինել տարբեր նկատառումներով, օրինակ՝ ամուսնության մեջ չգտնվելու մասին թարգմանված տեղեկանքը հիմք է այլ երկրում սահմանված կարգով ամուսնություն գրանցելու համար, այլ երկրի քաղաքացիություն ձեռք բերելու համար ևս պահանջվում է ներկայացնել տարաբնույթ տեղեկանքներ և այլն: Որպես կանոն, օտար լեզվով թարգմանված պատճենների անհրաժեշտությունը չի ծագում միջազգային պայմանագրերով նախատեսված հատուկ դեպքերում:

Վարչական ակտի ուժի մեջ մտնելը և գործողության ժամկետը: Վարչական ակտն ուժի մեջ մտնելու հարցում իրավական նշանակություն ունի ակտի իրազեկման ինստիտուտը: Այսպես, Օրենքի 60-րդ հոդվածի համաձայն, վարչական ակտն ուժի մեջ է մտնում վերը նշված կարգով *իրազեկելուն հաջորդող օրվանից*, եթե օրենքով կամ այդ ակտով այլ կարգ նախատեսված չէ: Օրենսդիրը՝ իրավական ուժի մեջ մտնելու տեսանկյունից սահմանում է նաև, այսպես կոչված, «պայմանով ակտ», որի որոշ դրույթներ կարող են ուժի մեջ մտնել միայն որոշակի պայմանների կամ հանգամանքների առաջացման դեպքում:

Ինչ վերաբերում է բանավոր և այլ ձևի վարչական ակտերին, ապա դրանք ուժի մեջ են մտնում այդ ակտերը հրապարակելու պահից:

Ի դեպ, Օրենքի՝ անհատական ակտի ուժի մեջ մտնելու վերաբերյալ դրույթները համապատասխանում են նույն հարցի իրավական

կարգավորմանը նվիրված «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60-րդ հոդվածի դրույթներին: Պարզապես հարկ է նկատել, որ հրապարակման ոչ ենթակա իրավական ակտերն ուժի մեջ մտնելու առնչությամբ արդեն հարկ է ղեկավարվել այդ օրենքի 59-րդ հոդվածի պահանջներով: Մասնավորապես, այդպիսիք են համարվում այն իրավական ակտերը կամ դրանց առանձին մասերը, որոնք պարունակում են պետական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք:

Հրապարակման ոչ ենթակա ակտերն ուժի մեջ են մտնում դրանց ընդունմանը հաջորդող օրվանից, իսկ ստորագրման կամ վավերացման կամ պետական գրանցման ենթակա իրավական ակտերը՝ դրանց ստորագրմանը կամ վավերացմանը կամ պետական գրանցմանը հաջորդող օրվանից: Հիշյալ ակտերը պարտադիր են կատարման համար իրավաբանական, ֆիզիկական և պաշտոնատար անձանց համար՝ նախատեսված կարգով դրանք նրանց իրազեկելու կամ ծանոթացնելու պահից, եթե այդ իրավական ակտով ավելի ուշ ժամկետ նախատեսված չէ: Նշված ակտի հերթական համարի վերջում՝ իրավական ակտի բնույթը սահմանող տառից հետո, իրավական ակտն ընդունող մարմնի կողմից դրվում են «Գ» կամ «ՀԳ» կամ «ՀԿ» տառերը:

Վարչական ակտերը գործում են անորոշ կամ որոշակի ժամկետով: Անորոշ ժամկետով ակտը գործում է այնքան ժամանակ, քանի դեռ որևէ իրավաչափ հիմքով չի կորցրել իրավաբանական ուժը (օրինակ, փոխարինվել է այլ վարչական ակտով, անվավեր է ճանաչվել և այլն):

Որոշակի ժամկետով ընդունված գրավոր վարչական ակտը գործում է մինչև այդ ակտով նախատեսված ժամկետը լրանալը, սակայն այդ ակտի ժամկետը, մինչև նշված ժամկետը լրանալը կամ լրանալուց հետո 15 օրվա ընթացքում կարող է երկարաձգվել նոր ժամկետով կամ անորոշ ժամկետով:

«Պայմանով ակտ» տերմինը օրենսդիրն օգտագործում է նաև վարչական ակտն գործողության մեջ գտնվելու հիմքի տեսանկյունից: Այսպես, եթե վարչական ակտի ուժի մեջ մնալը փոխկապակցվում է որոշակի պայմանի հետ, ապա այդ պայմանի կատարման ավարտի կամ վրա հասնելու պահին ավարտվում է նաև վարչական ակտի գոր-

ծողության մեջ գտնվելու ժամկետը:

Բանավոր ակտի դեպքում գործողության մեջ գտնվելն ավարտվում է այդ ակտի հետ կապված գործողությունների կատարմամբ կամ օրենքով նախատեսված որևէ եղանակով ակտի հասցեատիրոջն այդ մասին հայտարարելու պահից: Այլ ձևի վարչական ակտի գործողությունը դադարում է ակտի հասցեատիրոջն օրենքով նախատեսված տեսանելի, լսելի կամ որևէ այլ ձևով հասանելի եղանակով ակտի գործողությունը դադարելու մասին հայտնելու պահից:

§5. Առ ոչինչ վարչական ակտը, վարչական ակտն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու հիմքերը, կարգը և հետևանքները

Վարչական ակտն առ ոչինչ ճանաչելու հիմքերը: Ըստ Օրենքի 62-րդ հոդվածի, առ ոչինչ վարչական ակտն ընդունման պահից չունի իրավական ուժ և ենթակա չէ կիրառման: Այդպիսի ակտը չկատարելը որևէ պատասխանատվություն չի կարող առաջացնել: Ավելին, այդպիսի ակտի կատարումը և կիրառումը առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն: Միաժամանակ, հարկ է նկատել, որ, եթե «կիրառելու» դեպքում խնդիրը պարզ է, ապա նույնը չի կարելի ասել «կատարելու» պարագայում, օրինակ, բարեխիղճ հասցեատիրոջ կողմից այդպիսի ակտի կատարումը ևս չի կարող որևէ պատասխանատվություն առաջացնել: Այսպես, եթե քաղաքացուն ոչ իրավասու մարմնի կողմից տրվել է համայնքային ֆոնդին պատկանող բնակելի տարածք, ապա վերջինիս կողմից դրա հիման վրա բնակելի տարածքի օգտագործումը չի կարող համարվել պատասխանատվության հիմք:

Առ ոչինչ վարչական ակտ ընդունած վարչական մարմինը պարտավոր է իր նախաձեռնությամբ կամ արդարացված շահ ունեցող ցանկացած քաղաքացու դիմումի հիման վրա անհապաղ հաստատել այդ ակտի առ ոչինչ լինելը: «Արդարացված շահ» ունեցող է համարվում ինչպես վարույթի մասնակիցը, այնպես էլ յուրաքանչյուր այլ անձ, ում իրավունքներն ու շահերը փոխկապակցված են տվյալ ակտի հետ:

Վարչական ակտն առ ոչինչ է ճանաչվում հետևյալ ակնառու կո-

պիտ սխալների դեպքում՝

«ա) ակտից հստակ չի երևում կամ միանշանակ պարզ չէ, թե որ վարչական մարմինն է դա ընդունել.

բ) ակտն ընդունել է ոչ իրավասու վարչական մարմինը.

գ) ակտից պարզ չէ, թե դա որոշակիորեն ում է հասցեագրված, կամ հայտնի չէ, թե ինչ հարց է կարգավորում.

դ) ակտով դրա հասցեատիրոջ վրա դրվում է ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն, կամ նրան տրամադրվում է ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք» (Օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մաս):

Վարչական ակտն անվավեր ճանաչելու հիմքերը: Ոչ իրավաչափ ակտն անվավեր ճանաչելու հիմքերը ամրագրված են Օրենքի 63-րդ հոդվածով: Այսպես, անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է հետևյալ պայմաններում՝ օրենքի խախտմամբ (այդ թվում՝ օրենքի սխալ մեկնաբանմամբ կամ կիրառմամբ), ինչպես նաև կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա կամ այնպիսի փաստաթղթերի հիման վրա, որոնց պարագայում ակնհայտ էր այլ որոշում ընդունելը: Այս հիմքերի առկայության դեպքում վարչական ակտն անվավեր է ճանաչում այն ընդունող մարմինը, դրա վերադասը կամ դատարանը:

Օրենքի հիշյալ հոդվածը սահմանում է ոչ իրավաչափ ակտն անվավեր չճանաչելու վերապահում. եթե հասցեատերն իրավունք ունի վստահելու այդ ակտի գոյությանը, և դրա գործողության մեջ գտնվելը չի կարող վնաս պատճառել որևէ անձի, Հայաստանի Հանրապետության կամ որևէ համայնքի իրավունքներին: Ընդ որում, վարչական ակտի հասցեատերն իրավունք ունի վստահել ակտի գոյությանը, եթե դրա հիման վրա ստացածն արդեն օգտագործել կամ տնօրինել է կամ, եթե ստացածի հետ վերադարձնելը վնաս կպատճառի վարչական ակտի հասցեատիրոջը:

Վարչական ակտի գոյությանը վստահելու իրավունքը բխում է պետական մարմնի գործունեության իրավաչափության կանխավարկածից, ըստ որի որևէ անձ պարտավոր չէ կասկածի տակ առնելու պետության կամ պետության անունից հանդես եկող ցանկացած այլ իրավունքի սուբյեկտի կողմից ընդունված իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը և ըստ այդմ էլ՝ վերանայել իր վարքագիծը: Նշված դեպքում անձը ոչ թե պարտավոր է կասկածել, այլ իրա-

վունք ունի վստահելու դրանց իրավաչափությանը, իսկ կասկածելու դեպքում իրավունք ունի դրանք վիճարկելու կամ ձեռնպահ մնալու:

Վարչական ակտի գոյությանը վստահելու իրավունքը բացառվում է հետևյալ դեպքերում՝

«ա) համապատասխան վարչական ակտի ընդունմանը հասել է կաշառքի, սպառնալիքի կամ վարչական մարմնի պաշտոնատար անձին դիտավորյալ մոլորության մեջ գցելու միջոցով.

բ) համապատասխան վարչական ակտի ընդունմանը հասել է կեղծ կամ ոչ լրիվ փաստաթղթեր ներկայացնելու միջոցով.

գ) նախապես իմացել է վարչական ակտի ոչ իրավաչափ լինելու մասին կամ այդ մասին պարտավոր էր իմանալ՝ իր համար մատչելի տեղեկությունների հիման վրա» (Օրենքի 63-րդ հոդվածի 4-րդ մաս):

Այսպիսով, իրավական ակտի գոյության մասին վստահությունը բացարձակ ու անվերապահ հոգեբանական վարքագիծ չէ: Եթե անձը իր ոչ իրավաչափ վարքագծով նպաստել է ոչ իրավաչափ ակտի ընդունմանը կամ անգամ ունեցել է մատչելի տեղեկություններ այդ ակտի ոչ իրավաչափության մասին, ապա վստահության մասին խոսք լինել չի կարող:

Վարչական ակտը միայն մի մասով կարող է անվավեր ճանաչվել այն դեպքում, երբ մյուս մասը կարող է ուժի մեջ մնալ առանց անվավեր ճանաչված մասի:

Վարչական ակտն անվավեր ճանաչելու հետևանքները: Ոչ իրավաչափ վարչական ակտն իրավաբանական ուժը կորցնում է այն անվավեր ճանաչելու մասին որոշում ընդունելու, ինչպես նաև վարչական ակտն ընդունելու պահից, բացառությամբ Օրենքի 64-րդ հոդվածով նախատեսված հետևյալ դեպքերի: Նախ, Օրենքի 63-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերում, որոնց անդրադարձանք վերը, ոչ իրավաչափ վարչական ակտն անվավեր է ճանաչվում այն ընդունելու պահից, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Բացի այդ. «Բարենպաստ ոչ իրավաչափ վարչական ակտը, որի հիման վրա ծագում են միաժամանակյա կամ ընթացիկ գույքային պարտականություններ, կամ որն այդպիսի պարտականությունների համար նախադրյալ է համարվում, կարող է ուժը կորցնել միայն դրա անվավեր ճանաչվելու պահից, եթե այդ ակտով օգուտ ստացողը, վարչական ակտի նկատմամբ վստահության իրավունքի ուժով, արդեն ձեռք

է բերել տրամադրված օգուտները կամ տնօրինել է գույքը, որի հետևանքով դրանք չեն կարող վերադարձվել, կամ վերադարձվելու դեպքում կարող է էական վնաս պատճառվել օգուտ ստացողին: Այս դեպքում կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղ. օր.-ի անհիմն հարստացման վերաբերյալ դրույթները» (Օրենքի 64-րդ հոդվածի 2-րդ մաս):

Նշված դեպքում հատուցման չափը սահմանում է այն վարչական մարմինը, որն անվավեր է ճանաչել տվյալ վարչական ակտը:

Ոչ իրավաչափ վարչական ակտն անվավեր ճանաչելու ժամկետը: Խոսքը տվյալ դեպքում վարչական մարմնի նախաձեռնությամբ չբողոքարկված վարչական ակտն անվավեր ճանաչելու մասին է: Օրենքի 65-րդ հոդվածի համաձայն, նշված դեպքում վարչական մարմինը կարող է վարչական ակտն անվավեր ճանաչել 6 ամսվա ընթացքում այն օրվանից, երբ իմացել է վարչական ակտն անվավեր ճանաչելու փաստական հանգամանքների մասին:

Սակայն այս լիազորության համար ևս ընդհանուր ժամկետ է սահմանված: Մասնավորապես, իրավասու վարչական մարմինը չի կարող վարչական ակտը վերանայել, եթե այն դառնում է անվիճարկելի, այսինքն՝ այն ընդունելու օրվանից անցնում է 10 տարի: Այս կանոնից բացառություններ կարող են սահմանվել միայն օրենքով:

Իրավաչափ վարչական ակտն ուժը կորցնելու հիմքերը: Ընդհանոր առմամբ վարչական ակտերի իրավաբանական ուժը կորցնելու առավել ճկուն հիմքեր են նախատեսված, քան դատական ակտերի պարագայում, ինչը պայմանավորված է դատական ակտերի կայունության սկզբունքով: Ինչևէ, իրավաչափ վարչական ակտերի ուժը կորցնելու հիմքում դրված է դրանց տեսակը. միջամտող է, թե բարենպաստ (Օրենքի 66-րդ հոդված): Խոսքը տվյալ դեպքում մինչև տվյալ ակտի համար սահմանված ժամկետի լրանալը, վարչական ակտի ուժը կորցնելու մասին է: Այսպես, միջամտող վարչական ակտը կարող է ուժը կորցնել բացառությամբ երկու դեպքերի՝ երբ նորից պետք է ընդունվի նույն բովանդակությամբ նոր վարչական ակտ կամ եթե այդ ակտի ուժը կորցրած ճանաչելն արգելվում է օրենքով:

Միջամտող ակտն ուժը կորցրած ճանաչելու օրինակ կարող է լինել, ասենք, ձեռնարկատիրական գործունեության լիցենզիայի կասեցման մասին որոշումը ուժը կորցրած ճանաչելը: Տվյալ դեպքում,

վարչական մարմինն այդպիսի որոշումն ուժը կորցրած ճանաչելու հիմքում դնում է ոչ թե տվյալ վարչական ակտի ոչ իրավաչափ լինելը, այլ այնպիսի հանգամանքներ, որոնց առկայության դեպքում վերանում է այդպիսի ակտի անհրաժեշտությունը: Օրինակ, այդպիսի որոշում է կայացվում, երբ կասեցման որոշմամբ առաջադրված պահանջները կատարվում են:

Ինչ վերաբերում է բարենպաստ վարչական ակտին, ապա այն կարող է ուժը կորցնել միայն հետևյալ դեպքերում (Օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մաս)՝

ա) օրենքի փոփոխության պատճառով վերանում է տվյալ վարչական ակտի անհրաժեշտությունը, կամ դադարում է այդ ակտի գործողությունը: Այդպիսի վարչական ակտ կարող է կայացվել այն դեպքում, երբ արդեն օրենքի ուժով բացակայում է որևէ գործունեություն իրականացնելու համար արտոնագիր ունենալու անհրաժեշտությունը.

բ) ուժը կորցրած ճանաչելը թույլատրվում է օրենքով կամ պայմանավորված է իրավաչափ վարչական ակտում այդպիսի վերապահմամբ: Օրենքով բարենպաստ վարչական ակտն ուժը կորցրած կարող է ճանաչվել, օրինակ այն դեպքում, երբ օրենքով նախատեսված որոշակի խախտումների հիմքով ուժը կորցրած է ճանաչվում տրված արտոնագիրը.

գ) վարչական ակտի հետ կապված է օրենքով նախատեսված որևէ պարտականություն, որը պետք է կատարեր այդ ակտի հասցեատերը, սակայն չի կատարել կամ պատշաճ չի կատարել: Բարենպաստ վարչական ակտը հաճախ տրվում է որոշակի պարտականությունների կատարման պայմանով, որոնք չկատարելը հիմք է այդ ակտն անվավեր ճանաչելու համար.

դ) ակտի ընդունումից հետո՝ փաստական հանգամանքների փոփոխության հետևանքով, վարչական մարմինն իրավունք կունենար չընդունելու տվյալ վարչական ակտը, և եթե վարչական ակտն ուժը չկորցնելու դեպքում կարող է խախտվել գերակայող հանրային շահը: Այս հիմքը ներառում է երկու պայման՝ նախ, պետք է առկա լինի փաստական հանգամանքների փոփոխություն, և ապա՝ պետք է բացառվի գերակայող հանրային շահի խախտումը՝ վարչական ակտն ուժը չկորցնելու դեպքում: Փաստական հանգամանքների փոփոխութ-

յան օրինակ կարող են լինել որոշակի տարիքի հասնելը, կարգավիճակ ձեռք բերելը և այլն.

ե) նորմատիվ իրավական ակտի փոփոխության հետևանքով վարչական մարմինն իրավունք կունենար չընդունելու տվյալ վարչական ակտը, քանի դեռ այդ վարչական ակտի հասցեատերը չի օգտվել վարչական ակտով տրամադրված օգուտներից, կամ նրա նկատմամբ դեռևս չեն կատարվել այն գործողությունները, որոնք վարչական ակտով երաշխավորված են եղել, և եթե վարչական ակտն ուժը չկորցնելու դեպքում կարող է խախտվել գերակայող հանրային շահը: Հաճախ նորմատիվ ակտերով սահմանափակվում են այնպիսի իրավունքներ, որոնց վերաբերյալ նախկինում միանգամայն իրավաչափ վարչական ակտեր են ընդունվել: Ահա այս բնույթի նորմատիվ ակտերի պարագայում հիշյալ վարչական ակտերը կորցնում են իրենց ուժը, պայմանով, եթե ակտի հասցեատերը դեռևս չի օտվել այդ ակտով տրամադրված օգուտներից կամ առկա չեն եղել Օրենքով նախատեսված մյուս պայմանները.

զ) անհրաժեշտ է վերացնել այլ անձանց կյանքի, առողջության կամ սեփականության, ինչպես նաև պետության անվտանգության կամ առանձնապես կարևոր հանրային շահերի պաշտպանության համար ծանր հետևանքները կամ խուսափել դրանց առաջացումից: Իրավաչափ ակտերի կատարման ընթացքում երբեմն ի հայտ են գալիս այնպիսի հիմքեր, որոնք օրենքի ուժով հանդիսանում են արդեն իսկ տրված իրավաչափ վարչական ակտերի ուժը կորցրած ճանաչելու պայման: Օրինակ, որևէ շինարարության թույլտվությունը կարող է ուժը կորցրած ճանաչվել, եթե նոր ի հայտ եկած հանգամանքներով պարզվի, որ տվյալ շինության կառուցումը կարող է հանգեցնել շրջակա միջավայրի վատթարացմանը:

Վարչական ակտը բողոքի բացակայության դեպքում կարող է վերանայվել վերադաս վարչական մարմնի կողմից իրականացվող վերահսկողության շրջանակներում՝ վերջինիս նախաձեռնությամբ: Որոշ դեպքերում վարչական մարմիններն օրենքով նախատեսված կարգով հսկողություն են իրականացնում նաև վերադաս մարմիններ չունեցող իրավունքի սուբյեկտների՝ օրինակ տեղական ինքնակառավարման մարմինների վրա: Այս դեպքում վերջիններս կարող են սահմանված կարգով դիմել այդ մարմիններին և առաջարկել վերանայե-

լու հիշյալ վարչական ակտերը: Նշված միջնորդությունները չբավարարելու կամ ընդհանրապես քննարկման չընդունելու դեպքում իրավասու վարչական մարմինները կարող են այդ վարչական ակտերը բողոքարկել դատական կարգով: Ընդ որում, խոսքը բնավ չի վերաբերում միայն մարզպետներին, քանզի իրենց լիազորությունների շրջանակներում այդ ակտերը կարող են դատական կարգով վիճարկվել նաև այլ իրավասու վարչական մարմինների նախաձեռնությամբ:

Օրենքը կարգավորում է նաև փաստաթղթերը և իրերը վերադարձնելուն առնչվող հարաբերությունները: Մասնավորապես, Օրենքի 68-րդ հոդվածի համաձայն, ակտը անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու դեպքում, այն փաստաթղթերը և իրերը, որոնք տրվել են այդ վարչական ակտերի հիման վրա, ենթակա են վերադարձման՝ դրանք տիրապետող անձանց կողմից, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Փաստաթղթերը չվերադարձնելու դեպքում վարչական ակտն ընդունած մարմինն իրավունք ունի պաշտոնական հրապարակման միջոցով հայտարարելու տվյալ վարչական ակտի չգործելու մասին: Պաշտոնական հրապարակման իրավական նշանակությունը կայանում է նրանում, որ այդ պահից իրավական ուժ չունեցող փաստաթղթերն օգտագործելը հիմք է համապատասխան պատասխանատվության միջոցներ կիրառելու համար:

Փաստաթղթերը վերադարձնելիս, դրանց տիրապետողի ցանկությամբ, վարչական մարմինը պարտավոր է համապատասխան նշումով և իր կնիքով հաստատված վիճակում հանձնել այդ փաստաթղթի պատճենը: Օրենքը չի բացահայտում, թե կոնկրետ ինչ պատճառաբանությամբ կարող է փաստաթուղթը տիրապետողը դիմել փաստաթղթի պատճենը ստանալու հարցով, ո՞ր դեպքում տիրապետողի ցանկությունը կարող է իրավաչափ համարվել: Սա նշանակում է, որ փաստաթուղթը տիրապետողը պարտավոր չէ նշել պատճենը ստանալու ցանկության պատճառը: Իսկ գործնականում այս իրավական նորմը կարող է ունենալ էական նշանակություն: Այսպես, ձեռնարկատիրոջը կարող է այն պիտանի լինել նախկինում իր իրականացրած ձեռնարկատիրության իրավաչափությունը հիմնավորելու համար:

§6. Բողոքարկման վարույթը

Բողոք բերելու հիմքերը և կարգը: Բողոքարկման վարույթին վերաբերում է Օրենքի 4-րդ բաժինը: Բողոքարկման վարույթի նպատակը, բնականաբար, վարչարարության ոլորտում անձանց իրավունքների պաշտպանությունն է, այն բխում է Սահմանադրության 18-րդ հոդվածի պահանջներից. «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք»:

Վարչական բողոք կարող է բերել բացառապես այն անձը, ով գտնում է, որ խախտվել են կամ կարող են խախտվել իր իրավունքները, իսկ այլոց իրավունքների պաշտպանությամբ դատարան կարող են դիմել իրավասու կազմակերպություններն ու պետական մարմինները:

Ձեռնարկի այս հատվածում քննարկման առարկա կդառնա վարչական կարգով բողոքարկման ինստիտուտը, իսկ դատական կարգով բողոքարկման ինստիտուտին կանդրադառնանք ձեռնարկի հաջորդ բաժնում: Սույն Օրենքի 70-րդ հոդվածի համաձայն, վարչական կարգով բողոք կարող է բերվել կամ վարչական ակտն ընդունած վարչական մարմին, կամ դրա վերադաս վարչական մարմին:

Հայրենական օրենսդրությունը ելակետ է ընդունում սահմանադրական այն հիմնադրույթը, ըստ որի անձը դատական կարգով իր իրավունքների պաշտպանությունը պարտավոր չէ կախվածության մեջ դնել վարչական մարմնին բողոք ներկայացնելուց: Արտասահմանյան երկրների փորձը, որին կանդրադառնանք վերջին գլխում, ընթացել է այլ ուղղությամբ. որպես կանոն, դատարան դիմելու համար, նախ անհրաժեշտ է բողոք ներկայացնել վարչական վերադաս մարմին:

Ընդ որում, բողոք ներկայացնելու այլընտրանքային տարբերակը սոսկ առաջին հայացքից է թվում առավել ժողովրդավարական, մինչդեռ վարչական կարգով բողոքարկման արդյունավետ ու երաշխավորված համակարգեր ներդնելու պարագայում իրավունքների վարչական կարգով պաշտպանության փուլ նախատեսելն առավել հուսալի է դարձնում իրավունքների պաշտպանությունն՝ ընդհանրապես:

Վերջին հաշվով, վերադաս մարմինը պետք է ստանձնի հստակ պատասխանատվություն ստորադաս մարմնի թույլ տված խախտման համար և չբավարարվի «դիտորդի» կարգավիճակով: Մասնավորապես, որևէ տրամաբանության չի դիմանում այն իրավիճակը, երբ դատական ակտի հիման վրա վերադաս պաշտոնյան պատասխանատվության է ենթարկում ստորադաս պաշտոնյային: Տվյալ դեպքում հարց է ծագում. իսկ ինչո՞ւ հենց ինքը սահմանված կարգով չի վերացրել այդ նույն խախտումը, ինչո՞ւ չի փորձել ինքը գնահատական տալ վարչական ակտին: Իսկ եթե չի կողմնորոշվել կամ չի փորձել խորամուխ լինել, ապա վերջինս պետք է, ըստ էության, ենթարկվի առավել խիստ պատասխանատվության:

Որպես կանոն, բողոքն անմիջապես ակտ ընդունող մարմին չի ներկայացվում, ինչը զուտ հոգեբանական կտրվածքով է բացատրվում, քանզի տվյալ դեպքում բացակայում է անհրաժեշտ վստահությունը: Բողոքարկման այս կարգը, թերևս, օգտագործվում է այն դեպքերում, երբ թույլ տված խախտումներն ակնհայտ են կամ որևէ կերպ չեն առաջացնի տվյալ մարմնի համար լրացուցիչ խնդիրներ (օրինակ՝ պատասխանատվություն): Սակայն առավել հաճախ նույն վարչական մարմին բողոք ներկայացնելը պայմանավորված է լինում վերջինիս վերադաս վարչական մարմնի բացակայությամբ: Ընդ որում, վերջին դեպքում վարչարարարությունն առավել իրավաչափ կարող է համարվել, եթե այդ մարմիններում բողոքների քննարկման համար ձևավորվեն այնպիսի իրավասու կոլեգիալ մարմիններ, որոնց կազմում ներգրավված լինեն նաև հասարակայնության ներկայացուցիչներ: Ավելին, նպատակահարմար է, որպեսզի նրանք մեծամասնություն կազմեն:

Դատական կարգով բողոքների քննարկմանն առնչվող հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության վարչ. դատ. օր.-ով:

Այլընտրանքային իրավունքը, այնուամենայնիվ, չի հանգեցնում վարչական ակտը միաժամանակ վարչական և դատական կարգով բողոքարկելու հնարավորությանը (Օրենքի 70-րդ հոդված): Օրենքն իրավաչափորեն տվյալ իրավիճակում (նկատի ունենք միաժամանակ վարչական և դատական կարգով բողոք հարուցելը) նախապատվությունը տալիս է դատական կարգով քննարկմանը, իսկ վարչական

մարմնին պարտավորեցնում է այդպիսի դեպքում կարճել վարույթը:

Բողոքարկման համար ժամկետները սահմանված են Օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասով, ըստ որում, դրանք պայմանավորված են բողոքարկման առարկայով՝ վարչական ակտ, գործողություն և անգործություն.

«1. Վարչական բողոքը կարող է բերվել՝

ա) վարչական ակտն ուժի մեջ մտնելու օրվանից 6 ամսվա ընթացքում.

բ) վարչական մարմնի կողմից գործողություն կատարելու օրվանից մեկ ամսվա ընթացքում.

գ) վարչական մարմնի կողմից անգործություն ցուցաբերելու օրվանից 3 ամսվա ընթացքում.

դ) գրավոր վարչական ակտում դրա բողոքարկման ժամկետը նշված չլինելու դեպքում՝ վարչական ակտն ուժի մեջ մտնելու օրվանից մեկ տարվա ընթացքում»:

Նշված ժամկետները բաց թողնելու դեպքում կարող են վերականգնվել դրանք հարգելի պատճառով բաց թողնելու դեպքում: Հարգելի պատճառը վերացնելուց հետո վարույթի մասնակցին բողոք ներկայացնելու համար հատկացվում է առավելագույնը 15-օրյա ժամկետ: Բոլոր դեպքերում բողոքարկման ժամկետից մեկ տարի անցնելուց հետո այն չի կարող վերականգնվել որևէ հարգելի պատճառով, բացառությամբ անհաղթահարելի ուժի առաջացրած հետևանքների:

Գործնականում լուրջ տարաձայնություններ են առաջանում «հարգելի պատճառ» հասկացության շուրջ, և խնդիրն առավել բարդ երանգներ է ստանում այն առումով, որ այդ հասկացության մեկնաբանության առնչությամբ հայեցողական որոշում կայացնելու իրավունքը վերապահվում է վարչական մարմնին: Տեսական կտրվածքով խնդիրն առավել վիճահարույց է դառնում՝ կապված այն հարցի հետ, թե կարո՞ղ է, արդյոք, օրենքը չիմանալը ևս հարգելի պատճառ գնահատվել: Այս առնչությամբ մեր դիրքորոշումը հետևյալն է. եթե վարչական մարմինը սահմանված կարգով չի ծանուցել բողոքարկման կարգի և ժամկետների մասին, ապա օրենքը չիմանալը կարող է դիտվել որպես ժամկետը բաց թողնելու հարգելի պատճառ:

Բողոքին ներկայացվող պահանջներն ամրագրված են Օրենքի 72-րդ հոդվածում, որի վերլուծությունը ցույց է տալիս, որ բողոքը

պետք է լինի գրավոր և պարունակի վարչական մարմնի անունը, որին բողոք է ներկայացվում, բողոք ներկայացնող ֆիզիկական անձի անունը, ազգանունը, նրա հասցեն, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ իրավաբանական անձի անվանումը, գտնվելու վայրը, նրա անունից բողոք բերող անձի անունը, ազգանունը և պաշտոնը, բողոքարկման առարկան, պահանջը, բողոքին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը, բողոքը կազմելու տարին, ամիսը և ամսաթիվը, բողոք բերող անձի ստորագրությունը, իրավաբանական անձի դեպքում՝ նրա անունից բողոք բերող անձի ստորագրությունը և իրավաբանական անձի կնիքը:

Հարկ է նկատել, փաստաթղթերի ցանկի վերաբերյալ պահանջը բնավ չի նշանակում, որ բողոք բերող անձը պարտավոր է իր պահանջը հիմնավորող փաստաթղթեր ներկայացնել, ինչպես սխալմամբ երբեմն մեկնաբանվում է այդ իրավական պահանջը: Խոսքը պարզապես այն մասին է, որ փաստաթղթեր ներկայացնելու դեպքում պետք է բողոքին կցվի դրանց ցանկը:

Վարչական մարմինը բողոքը մուտքագրվելու օրը վարույթ է հարուցում: Ընդ որում, բողոքն ընդունելիս վարչական մարմինը պարտավոր է ստուգել բողոքարկման կարգի, ժամկետների և բողոքին ներկայացվող պահանջների պահպանումը: Սահմանված ժամկետը լրացած բողոքների քննարկման առնչությամբ այն թողնվում է առանց քննարկման, եթե բաց թողնված ժամկետը չի կարող հարգելի ճանաչվել:

Որպես կանոն, բողոքի հիման վրա վարույթ հարուցելիս կասեցվում է վերջինիս գործողությունը: Այդ ընդհանուր կանոնից սահմանված են երկու բացառություններ՝

«ա) օրենքով նախատեսված այն դեպքերի, երբ վարչական ակտը ենթակա է անհապաղ կատարման.

բ) այն դեպքերի, երբ անհապաղ կատարումն անհրաժեշտ է հանրային շահերից ելնելով» (Օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մաս):

Բողոքը «բ» կետի հիմքով չկասեցնելու դեպքում պետք է գրավոր պատճառաբանվի նշված հիմքի առկայությունը: Հիմնավորում չի պահանջվում, եթե «կասեցնելու հետևանքով կարող է անմիջականորեն վտանգվել անձանց կյանքը, առողջությունը կամ սեփականությունը, և այդ վտանգը կանխելու համար վարչական մարմինը հար-

կաղրված կլինի ձեռնարկել արտակարգ միջոցներ, ինչպես նաև, երբ վտանգն արդեն իսկ առաջացել է» (նույն հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերություն): Վարչական մարմինը կարող է վարչական ակտը չկասեցնելու վերաբերյալ որոշում կայացնել այն դեպքում, երբ բողոքը վերաբերում է հենց այդ ակտը կասեցնելու պահանջին:

Ցավոք, այս և նմանաբնույթ իրավական նորմերի առնչությամբ օրենսդրության ոչ պաշտոնական մեկնաբանություններում անհարկի օրինակներ են բերվում՝ հղում անելով կոմունալ-կենցաղային ոլորտում ընդունվող որոշումներին, օրինակ խոսվում է ջրամատակարարումը, էլեկտրական հոսանքի մատակարարումը դադարեցնելու վերաբերյալ որոշումների մասին և այլն[1]: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ այդ ոլորտներում որոշումներ են կայացնում ոչ թե վարչական մարմինները, այլ համապատասխան ծառայություններ մատուցող մասնավոր կազմակերպությունները: Ինչ վերաբերում է վարչական մարմիններին, ապա վերջիններս կարող են միայն օրենքով նախատեսված դեպքերում այդ կազմակերպություններին դիմել որոշակի միջնորդություններով կամ կասեցնել, ինչպես նաև դադարեցնել դրանց գործունեությունը:

Բողոքը քննարկելը և լուծելը: Վարչական բողոքը քննարկվում է Օրենքով՝ վարչական վարույթի համար սահմանված կանոններով, եթե Օրենքի վերը նշված 4-րդ բաժնով այլ առանձնահատկություններ նախատեսված չեն: Օրենքի 75-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Վարչական բողոքը քննարկվում է բողոքարկված վարչական ակտի իրավաչափության տեսանկյունից, իսկ հայեցողական լիազորության իրականացման դեպքում՝ նաև նպատակահարմարության տեսանկյունից»: Բողոքը քննարկելիս վարչական մարմինն առաջնորդվում է ինչպես գործում առկա, այնպես էլ լրացուցիչ ներկայացվող ապացույցներով:

Վարչական ակտի դեմ բողոքի քննարկման արդյունքներով վարչական մարմինը կամ որոշում է ընդունում բողոքն ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարելու (այս դեպքում ակտը անվավեր

[1] Տե՛ս Հարցեր և պատասխաններ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի վերաբերյալ, «Հարդ ընդ սոֆթ» հրատ., Երևան 2007:

կամ առ ոչինչ է ճանաչվում կամ ընդունվում է նոր ակտ), կամ մերժում է վարչական ակտը և այն թողնում անփոփոխ: Այսպիսով, օրենսդրությունը ոչ իրավաչափ ակտի պարագայում վերադաս վարչական մարմնի համար սահմանում է այլընտրանքային իրավունք՝ կամ այն անվավեր, կամ առ ոչինչ է ճանաչվում, կամ ընդունվում է նոր ակտ: Այս հարցը խիստ կարևոր գործնական ու տեսական նշանակություն ունի, սակայն օրենսդրությամբ հստակ կանոնակարգված չեն այն ընթացակարգերը, որոնք առնչվում են հիշյալ այլընտրանքային իրավունքի իրացման հետ: Մասնավորապես, հարկ էր հստակ ամրագրել այն հիմքերը, որոնց դեպքում վերադաս վարչական մարմինը պարզապես պետք է պարտավորված լիներ անմիջապես ակտ ընդունել: Խոսքը այն դեպքերի մասին է, երբ այդպիսի ակտի ընդունումը բխում է խախտված իրավունքների անհապաղ վերականգնման անհրաժեշտությունից և այլն:

Գործողության դեմ բողոքի քննարկման արդյունքներով, վարչական մարմինը բողոքը բավարարում է ամբողջությամբ կամ մասնակիորեն՝ գործողությունն ամբողջությամբ կամ մասնակիորեն ճանաչելով ոչ իրավաչափ և դադարեցնելով տվյալ գործողությունը, եթե այն բողոք ներկայացնելու պահին շարունակվել է կամ մերժում է բողոքը: Օրինակ, մաքսային վերադաս մարմինը կարող է դադարեցնել ներկրված ապրանքի զննությունը, այն ճանաչելով ամբողջությամբ ոչ իրավաչափ (այս դեպքում առկա է ոչ միայն քաղաքացիաիրավական կարգով փոխհատուցում ստանալու, այլև իրավախախտում թույլ տված անձին պատասխանատվության ենթարկելու հիմք): Մեկ այլ դեպքում մաքսային մարմինը կարող է մերժել իրավաչափ կարգով զննություն իրականացնելու դեմ բերված բողոքը և այլն:

Անգործության դեմ բերված բողոքի քննարկման արդյունքներով վարչական մարմինը բողոքը բավարարում է ամբողջությամբ կամ մասնակիորեն և կատարում հայցվող գործողությունը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն կամ մերժում բողոքը:

Վերադաս վարչական մարմինը բողոքը քննելիս ոչ միայն վերացնում է ստորադաս մարմնի որոշումը, այլև ցուցում է տալիս ընդունելու նոր ակտ կամ համապատասխանաբար կատարելու հայցվող

գործողությունը կամ դադարեցնելու կատարվող ոչ իրավաչափ գործողությունը:

Վարչական ակտի փոփոխման և բեկանման համար որպես հիմք են ծառայում հետևյալ օրենսդրական պայմանները՝

ա) վարչական ակտն առ ոչինչ կամ անվավեր ճանաչելու հիմքերը,

բ) վարչական վարույթը ոչ իրավասու պաշտոնատար անձի կողմից իրականացնելը կամ այնպիսի կոլեգիալ մարմնի կողմից իրականացնելը, որի կազմում եղել է համապատասխան իրավասություն չունեցող պաշտոնատար անձ,

գ) վարչական վարույթը այն իրականացրած անձի կողմից չստորագրելը կամ այդպիսի լիազորություն չունեցող անձի կողմից ստորագրելը:

Վերադաս մարմինը կարող է վարչական ակտը բեկանել նաև ընթացակարգային նորմերը խախտելու դեպքում, սակայն դա թույլատրվում է, եթե բողոքը քննարկող վարչական մարմինն իրավասու չէ ընդունել բողոքարկվող վարչական ակտը: Վարչական ակտը կարող է բեկանվել մասնակիորեն, եթե բեկանելուց հետո մյուս մասը կարող է ինքնուրույն գործել:

Ի դեպ, Օրենքի 77-րդ հոդվածում, որպես վարչական ակտի բեկանման կամ փոփոխման հիմքեր, նախատեսված են նույն օրենքի 63-64-րդ հոդվածները, սակայն դա, թերևս, վրիպակ է, որովհետև հիմքերն ամրագրված են 62-63-րդ հոդվածներով, իսկ 64-րդ հոդվածը, ինչպես արդեն նշվեց, վերաբերում է միայն անվավեր ճանաչելու հետևանքներին և ուժը կորցնելու պահին:

Հավելենք նաև, որ բեկանվել կարող է բացառապես ոչ իրավաչափ ակտը, իսկ օրենքով սահմանված դեպքերում իրավաչափ ակտն ուժը կորցնելն ընդհանուր ոչինչ չունի բեկանման հետ: Այս նկատառումով անհիմն են այն մեկնաբանությունները, ըստ որոնց իբր Օրենքի 77-րդ հոդվածը տարածվում է նաև 66-րդ հոդվածով նախատեսված հիմքերի վրա: Բացի վերը նշված հիմնավորումից, նկատենք նաև, որ 77-րդ հոդվածում բացարձակապես հղում չկա 66-րդ հոդվածին:

§7. Վարչական ակտի հարկադիր կատարումը և դրամական պահանջները կատարելը

Վարչական ակտի հարկադիր կատարման ինստիտուտը: Այս ինստիտուտը նախատեսված է Օրենքի «Վարչական ակտի հարկադիր կատարումը» վերտառությամբ 12-րդ գլխի նորմերով: Վարչական ակտը, որն ուղղված է որևէ գործողություն կատարելուն կամ որևէ գործողություն կատարելուց ձեռնպահ մնալուն, կարող է հարկադրաբար ի կատար ածվել Օրենքի 78-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հարկադրանքի հետևյալ միջոցների կիրառմամբ՝

«ա) գործողությունն այլ անձի կողմից կատարելը (փոխարինող գործողություն).

բ) տուգանքը.

գ) անմիջական հարկադրանքը»:

Վարչական ակտի հարկադիր կատարման վարույթի մասնակիցների շրջանակը հետևյալն է՝ պարտավոր անձ (որոշակի գործողություն կատարելու կամ որոշակի գործողություն կատարելուց ձեռնպահ մնալու վերաբերյալ վարչական ակտի հասցեատերն է) և կատարողական մարմին (վարչական ակտն ընդունած վարչական մարմինը կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ այլ մարմիններ):

Վարչական ակտի հարկադիր կատարման վարույթի վրա «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքը չի տարածվում: Էական տարբերությունն այն է, որ դատական ակտերի հարկադիր կատարման դեպքում կողմեր են պահանջատերն ու պարտապանը, իսկ բուն հարկադրանք իրականացնողը կողմ չհանդիսացող իրավասու վարչական մարմինն է, մինչդեռ վարչական ակտերի հարկադիր կատարման վարույթում կողմը միաժամանակ կատարողական մարմինն է: Սակայն չպետք է անտեսել, որ դատական ակտերի հարկադիր կատարման վարույթի վրա որոշակիորեն տարածվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթները:

Գործնականում հնարավոր է իրավիճակ, երբ վարչական ակտով նախատեսված պարտավորությունը պարտավոր անձը չի կատարում, մինչդեռ դրա կատարումը հնարավոր է մեկ այլ անձի կողմից:

Այս դեպքում կատարողական մարմինը կարող է այդ անձին հանձնարարել կատարելու վարչական ակտով նախատեսված գործողությունը՝ պարտավոր անձի հաշվին, ինչը կոչվում է «փոխարինող գործողություն»: Դարձյալ պարտավոր անձի հաշվին կատարող մարմինն ինքը կարող է կատարել այդ գործողությունը, եթե դա հնարավոր է, և եթե օրենքով այլ բան նախատեսված չէ (Օրենքի 81-րդ հոդված):

Պարտավոր անձի կողմից գործողությունը չկատարելու կամ գործողության կատարումից ձեռնպահ մնալու համար կարող է նշանակվել տուգանք՝ Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով: Տուգանք կարող է նշանակվել միայն դատարանի վճռով՝ վարչական մարմնի պահանջի հիման վրա (Օրենքի 82-րդ հոդված):

Կարծում ենք, տուգանքի նշանակման սույն կարգը խիստ վիճահարույց է: Ընդ որում, նշված կարգն ունի համընդհանուր բնույթ և դրված է ողջ իրավական համակարգի հիմքում: Տվյալ դեպքում թյուրիմացաբար այն սահմանադրական դրույթն է հիմք ընդունվում, ըստ որի՝ «Ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով օրենքով նախատեսված դեպքերի» (Սահմանադրության 31-րդ հոդված): Սակայն հարկ է նկատել, որ վարչական մարմնի որոշումը ևս կարող է հարկադիր կատարման առարկա լինել, քանի որ անձը զրկված չէ այդ որոշումը դատական կարգով բողոքարկելու իրավունքից և ցանկացած պահի կարող է այն վիճարկելու համար դիմում ներկայացնել, ինչը հիմք է հարկադիր կատարման վարույթը անհապաղ դադարեցնելու համար:

Քանի դեռ անձը չի վիճարկում վարչական ակտը, ողջամտորեն ելակետ պետք է ընդունվի այն դատողությունը, ըստ որի գույքի բռնագանձում կատարվում է անձի համաձայնությամբ: Այսինքն, եթե անձը չի վիճարկում ակտը, բայց և չի վճարում նշանակված տուգանքը, ապա տրամաբանությունն այն է, որ վերջինս չունի համապատասխան դրամական միջոցներ և բռնագանձումը կարող է իրականացվել հարկադիր կատարման ընթացակարգերով (գույքի աճուրդ և այլն):

Անմիջական հարկադրանքը կիրառվում է այն դեպքում, երբ փոխարինող գործողությունը կամ տուգանքը չի կարող հասնել իր նպատակին կամ օբյեկտիվ հանգամանքների բերմամբ կիրառելի չէ (Օ-

րենքի 83-րդ հոդված):

Օրենքը պարտավորեցնում է հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին նախազգուշացնել պարտավոր անձին, մասնավորապես, նախազգուշացման մեջ սահմանվում է պարտականությունը կատարելու ժամկետը, իսկ փոխարինվող գործողության կատարման առիթով նախազգուշացման մեջ նշվում է ծախսերի նախահաշիվը, ինչը կարող է չդառնալ վիճարկման առարկա: Տուգանք կիրառելու նախազգուշացման մեջ պետք է նշվի որոշակի տուգանքի չափ: Նախազգուշացումը կազմվում է գրավոր և հանձնվում վարչական ակտի հանձնման համար սահմանված կարգով (Օրենքի 84-րդ հոդված):

Հարկադրանքի միջոցներ կիրառվում են նախազգուշացմամբ սահմանված ժամկետում պարտավոր անձի կողմից համապատասխան պարտականությունը չկատարելու դեպքում: Օրենքի 86-րդ հոդվածի համաձայն, հարկադրանքի միջոց կիրառելու նկատմամբ դիմադրություն ցույց տալու դեպքում իրավասու մարմնի կողմից կարող է օրենքով սամանված կարգով ուժ կիրառվել:

Դրամական պահանջները կատարելը: Այս ինստիտուտը նախատեսված է Օրենքի «Դրամական պահանջները կատարելը» վերտառությամբ 13-րդ գլխի նորմերով:

Հանրային իրավական դրամական պահանջները, օրենքով սահմանված կարգով, վարչական ակտերի հիման վրա ՀՀ պետական կամ համայնքային բյուջե պարտադիր կարգով դրամական գումարներ վճարելու պահանջներ են (Օրենքի 87-րդ հոդված):

Դրամական պահանջների կատարման վրա ամբողջությամբ տարածվում է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը:

Դրամական պահանջներով նախատեսվող գումարների վճարման համար պարտականությունը կրող անձանց շրջանակը սահմանված է Օրենքի 89-րդ հոդվածով, մասնավորապես, այդ պարտականությունը կրում է այն անձը, ով պարտավոր է այդ գումարը վճարել իր համար կամ իր կողմից թույլ տրված խախտումների համար կամ մեկ այլ անձի փոխարեն:

ԳԼՈՒԽ 17.
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՄԱՐ

§1. Վարչարարությամբ պատճառված վնասի համար պատասխանատվություն կրողը, պատասխանատվության հիմքերը և կարգը

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով (այսուհետև սույն գլխում՝ Վարչարարության օրենք)[1] երկու գլխից բաղկացած ամբողջական բաժին (Բաժին VII) է նվիրված վարչարարությամբ պատճառված վնասի համար պատասխանատվության իրավական կարգավորման հարցերին: Ինչպես երևում է, խոսքը պատասխանատվության առանձին տեսակի՝ վարչարարությամբ պատճառված վնասի համար պատասխանատվության մասին է: Վարչարարությամբ պատճառված վնասի համար պատասխանատվությունը՝ որպես իրավական երևույթ, հայրենական իրավունքի համակարգում հնարավորինս ամբողջական իրավական կարգավորում է ստացել Վարչարարության օրենքի ընդունմամբ:

Վարչարարության օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված իրավասահմանող նորմի համաձայն՝ ***վարչարարությունը վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեություն է, որը եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ, ինչպես նաև գործողություն կամ անգործություն, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ***:

Նշված նորմը համադրելով Վարչարարության օրենքի 7-րդ բաժնով սահմանված նորմերին՝ կարող ենք արձանագրել, որ այդ բաժնով սահմանված նորմերը կարող են գործել, եթե հավաստվի, որ համապատասխան վարչական մարմնի կողմից վնասը պատճառվել է վարչական մարմնի՝ արտաքին ներգործություն ունեցող գործունեության շրջանակներում վարչական և (կամ) նորմատիվ ակտերի ընդուն-

[1] ՀՀՊՏ 2004.03.31/18 (317), Հոդ. 413:

մամբ, ինչպես նաև անձանց համար փաստական հետևանքներ առաջացնող գործողությամբ կամ անգործությամբ:

Վարչարարությամբ պատճառված վնասի հարցերը քաղաքացիաիրավական կարգավորման առարկայից դուրս են, քանի որ այս պարագայում խոսքը վերաբերում է վարչական մարմնի՝ իր իրավազոր հանրային իշխանական գործառույթների իրականացմամբ պատճառված վնասի հատուցմանը[1]:

Առանձնակի կարևորություն է ներկայացնում վարչարարությամբ պատճառված վնասի համար պատասխանատվություն (այսու-

---

[1] 2010 թվականի հոկտեմբերի 29-ի N ԵՔԴ/0736/02/08 որոշմամբ, անդրադառնալով վարչարարությամբ պատճառված վնասի նկատմամբ քաղաքացիաիրավական նորմերի կիրառման հարցին, ՀՀ վճռաբեկ դատարանը հայտնել է հետևյալ դիրքորոշումը. «ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ մեկ կողմի՝ մյուսի վարչական կամ այլ իշխանական ենթակայության վրա հիմնված գույքային՝ ներառյալ հարկային, ֆինանսական ու վարչական հարաբերությունների նկատմամբ քաղաքացիական օրենսդրությունը և այլ իրավական ակտերը չեն կիրառվում, եթե այլ բան նախատեսված չէ օրենսդրությամբ: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 7-րդ բաժնի 95-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինների կողմից իրականացվող վարչարարության հետևանքով անձանց պատճառված վնասը ենթակա է հատուցման՝ նույն բաժնի դրույթներին համապատասխան:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ վարչական մարմնի իրականացրած վարչարարության հետևանքով անձին պատճառված վնասի հատուցման հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են բացառապես «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 7-րդ բաժնի նորմերով: Սույն գործով Դատարանը վնասը հատուցելու պահանջի մասով պատճառաբանել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը կարգավորում է վնասների հատուցման հարցերը քաղաքացիական իրավահարաբերություններում: Մինչդեռ, տվյալ դեպքում առկա է հանրային իրավահարաբերություններից ծագած վեճ, որը կարգավորվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 7-րդ բաժնով: *Հետևաբար, նաև վարչարարության հետևանքով պատճառված վնասի հատուցման պահանջի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված հայցային վաղեմության ժամկետները կիրառելի չեն:*

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանի նշված պատճառաբանությունը հիմնավոր է, քանի որ սույն գործով Ընկերության ներկայացրած վնասի հատուցման պահանջը վերաբերում է բացառապես վարչարարության հետևանքով պատճառված վնասին, որը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 6-րդ կետի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 7-րդ բաժնի *ուժով չի կարող նույնացվել քաղաքացիաիրավական հարաբերությունների ընթացքում առաջացող վնասին*»:

հետև՝ Պատասխանատվություն) կրողի հարցը:

Ոչ իրավաչափ վարչարարության, իսկ Վարչարարության օրենքի 7-րդ բաժնով նախատեսված դեպքերում՝ նաև իրավաչափ վարչարարության հետևանքով անձանց պատճառված վնասի համար պատասխանատվությունը կրում է Հայաստանի Հանրապետությունը, եթե վնասը պատճառվել է գործադիր իշխանության հանրապետական մարմինների կամ տարածքային կառավարման մարմինների կողմից, կամ համապատասխան համայնքը՝ տեղական ինքնակառավարման մարմինների պատճառած վնասի դեպքում (Վարչարարության օրենքի 95-րդ հոդվածի 2-րդ մաս):

Համապատասխան համայնքը և Հայաստանի Հանրապետությունը անձանց պատճառված գույքային վնասը հատուցում են ամբողջ ծավալով, այդ թվում՝ բաց թողնված օգուտը: Բաց թողնված օգուտը ենթակա չէ հատուցման միայն անձի մահվան, ոչ գույքային հատուցման և իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման դեպքերում:

Հայաստանի Հանրապետությունը կամ համայնքը, որը հատուցել է պատճառված վնասը, իրավունք ունի հետադարձ պահանջներ ներկայացնելու վարչական մարմնի այն պաշտոնատար անձին, ում գործողությունները կամ անգործությունը հանգեցրել են ոչ իրավաչափ վարչարարության, և որի հետևանքով վնաս է պատճառվել անձին: Հայաստանի Հանրապետությունը կամ համայնքը այդ պաշտոնատար անձանց ներկայացված հետադարձ պահանջի շրջանակներում չեն կարող պահանջել անձանց հատուցված բաց թողնված օգուտը:

Վարչարարության օրենքով ուղղակիորեն ամրագրված է, որ վնասի հատուցում չի իրականացվում, քանի դեռ վարչական մարմնի իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը, որով անձին վնաս է հասցվել, սահմանված կարգով **ոչ իրավաչափ չի ճանաչվել**: Վնասի հատուցման այս կանոնից բացառություն են կազմում միայն իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի դեպքերը:

Նման իրավակարգավորման պարագայում կարելի է եզրակացնել, որ Վարչարարության օրենքով անուղղակի կերպով ամրագրված է վարչական մարմնի արարքների և վարչական ակտերի «իրավաչա-

փության կանխավարկածը»: Հարկ է նշել, որ իրավակիրառական պրակտիկայում նույնպես այդ կանխավարկածը ստացել է իր ամրագրումը: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանը, իրացնելով օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու իր սահմանադրաիրավական գործառույթը, մի շարք որոշումներով անդրադարձել է վարչական ակտերի իրավաչափության կանխավարկածին և հայտնել է հետևյալ դիրքորոշումը. *«Սույն քաղաքացիական գործով նշված վարչական ակտը չի վիճարկվում, չի հաստատվել դրա առոչինչ լինելը, չի ճանաչվել ոչ իրավաչափ՝ անվավեր, չի կորցրել իր ուժը, հետևաբար յուրաքանչյուր ոք, ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն, **պարտավոր է ելնել այն կանխավարկածից, որ Երևանի քաղաքապետի որոշումն ընդունվել է Սահմանադրությամբ կամ օրենքներով իր լիազորությունների շրջանակում: Դրա հետևանքով պետք է եզրակացնել, որ Երևանի քաղաքապետի որոշումը իրավաչափ է, և որևէ անձ, մասնավորապես, պետական մարմինը, չի կարող կասկածի տակ դնել այդ ակտի իրավաչափությունը»***[1]:

Վարչական մարմնի արարքների և (կամ) վարչական ակտերը կարող են ոչ իրավաչափ ճանաչվել վարչական բողոքարկման կամ նաև վարչական դատավարությամբ սահմանված կարգով համապատասխան հայցի բավարարման արդյունքում:

§2. Վնասի հատուցման եղանակները և չափերը

Վարչարարությամբ պատճառված վնասը կարող է լինել ինչպես գույքային, այնպես էլ ոչ գույքային: Վարչարարության օրենքով սահմանված են վնասի հատուցման հետևյալ եղանակները՝

1) վարչարարությամբ առաջացած հետևանքները վերացնելը,

2) դրամական միջոցներով հատուցելը:

---

[1] Տե՛ս, օրինակ, ՀՀ վճռաբեկ դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 21-ի N 3-2440 (ՎԴ), 2007 թվականի հունվարի 26-ի N 3-101 (ՎԴ), 2009 թվականի մայիսի 27-ի N ՎԴ/2068/05/08, 2010 թվականի ապրիլի 2-ի ՎԴ/0334/05/09, 2010 թվականի ապրիլի 22-ի ՎԴ/6725/05/08, 2011 թվականի հոկտեմբերի 14-ի ՎԴ5/0618/05/10 որոշումները:

Հատուցման վերոնշյալ երկու եղանակներն ունեն իրենց կիրառման հիմքերը և պայմանները: Վարչարարության օրենքի 98-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված նորմի համաձայն՝ եթե վնասը որևէ փաստացի դրության՝ ի վնաս անձի փոփոխության մեջ է, ապա պատասխանատվություն կրողը պարտավոր է վերացնել դրա առաջացրած հետևանքները՝ նախկին դրության, իսկ եթե դա անհնար կամ անարդյունավետ է, ապա դրան համարժեք այլ դրության վերականգնման միջոցով:

Նորմի տառացի մեկնաբանությունից ուղղակիորեն բխում է, որ պատասխանատու անձն ամենից առաջ պարտավոր է վերականգնել նախկին՝ մինչև անձին վնաս պատճառելու պահը եղած դրությունը: Դրան համարժեք այլ դրության վերականգնումը օրենսդրորեն թույլատրելի է, եթե մինչև անձին վնաս պատճառելու պահը եղած դրության վերականգնումը *անհնարին* կամ *անարդյունավետ* է: Օրենսդրորեն սահմանված չեն այն չափորոշիչները, որոնց հիման վրա համապատասխան վարչական մարմինը կկարողանա պարզել մինչև անձին վնաս պատճառելու պահը եղած դրության վերականգնման *անհնարին* կամ *անարդյունավետ* լինելը:

Եթե վարչական մարմինը կայացնի ակտ, որով վարչարարությամբ պատճառված վնասի հետևանքները կվերացնի մինչև անձին վնաս պատճառելու պահը եղած դրությանը համարժեք այլ դրության վերականգնման միջոցով, ապա նա (վարչական մարմինը) այդ ակտով պետք է հիմնավորի, թե ինչումն է դրսևորվել նախկին դրության վերականգնման անհնարինությունը կամ անարդյունավետությունը:

Եթե անձը համաձայն չէ վարչական ակտին, ապա կարող է այդ ակտը վիճարկել վերադասության կամ դատական կարգով:

Վարչարարության օրենքի 98-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված է, որ հետևանքները վերացնելը բացառվում է, եթե փաստացի կամ իրավական հիմքերով հնարավոր չէ նախկին դրության վերականգնումը, ինչպես նաև այն դեպքում, երբ գոյություն ունեցող դրությունը համապատասխանում է անձի համար անվիճարկելի դարձած վարչական ակտին:

Օրենսդիրը նշված նորմի ամրագրմամբ վարչական մարմնին արգելում է մինչև վարչարարությամբ պատճառված վնասը եղած

դրությունը վերականգնման եղանակի միջոցով վնասը հատուցել, եթե չի վերականգնվում անձի նախկին դրության իրավական կամ փաստական հիմքերը: Այլ կերպ ասած, եթե նախկին դրությունը վերականգնվում է առանց փաստական կամ իրավական հիմքերի վերականգնման, ապա վնասի հատուցման այս եղանակը կկրի հռչակագրային բնույթ: Վարչարարության օրենքի 98-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված նորմը, ըստ էության, երաշխիքային նորմ է անձանց համար:

Պատասխանատվություն կրողը վնասը հատուցում է դրամական միջոցներով, եթե հետևանքների վերացումը հնարավոր կամ բավարար չէ, կամ հետևանքների վերացման համար անհրաժեշտ են ավելի մեծ ծախսեր, քան պատճառված գույքային վնասը (Վարչարարության օրենքի 99-րդ հոդվածի 1-ին մաս):

Օրենսդիրը վնասի հատուցման երկու եղանակների պարագայում էլ կարևորում է հատուցում պահանջող անձի մեղքի առկայության կամ բացակայության հանգամանքը:

Եթե վարչարարությամբ առաջացած հետևանքները վերացնելու հատուցման եղանակի դեպքում անձը մեղք ունի ոչ իրավաչափ դրության առաջացման համար, ապա նա հետևանքների վերացում կարող է պահանջել, եթե ցանկանում է և ի վիճակի է կրելու հետևանքների վերացման՝ իր մեղքով առաջացած ծախսերի մասնաբաժինը: Եթե անձի մեղքով առաջացած ծախսերը գերազանցում են պատասխանատվություն կրողի մեղքով առաջացած ծախսերի չափը, ապա հետևանքների վերացման պահանջ չի կարող ներկայացվել, իսկ անձը կարող է հատուցում պահանջել Վարչարարության օրենքի 99-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներին համապատասխան:

Այդ դեպքում դրամական միջոցներով վնասի հատուցումը պահանջող անձը կրում է վնասի հետևանքների վերացման ծախսերն այն չափով, որ չափով դրանք առաջացել են իր մեղքով: Եթե անձն ի վիճակի չէ կրելու այդ ծախսերը, ապա նա պարտավոր է դրամական միջոցներով վնասի հատուցման պահանջը սահմանափակել այն ծախսերի չափով, որոնք առաջացել են պատասխանատվություն կրողի մեղքով (Վարչարարության օրենքի 99-րդ հոդվածի 2-րդ մաս):

Վարչարարության օրենքով կարգավորվում են նաև վնասի հա-

տուցման պահանջի ձևի, բովանդակության, ներկայացման ժամկետների այդ պահանջի քննարկմանն ու լուծմանն առնչվող հարաբերությունները:

Վնասի հատուցման պահանջը ներկայացվում է այն վարչական մարմին, որի վարչարարության հետևանքով պատճառվել է վնասը: Նման պարագայում անհրաժեշտություն է ծագում պարզելու, թե ո՞ւմ պետք է ներկայացվի պահանջը, եթե վնասը պատճառվել է մեկից ավելի վարչական մարմինների կողմից: Եթե վնասը պատճառել են մեկից ավելի պատասխանատվություն կրողներ, ապա վնաս կրած անձի առջև նրանք կրում են համապարտ պատասխանատվություն: Սա նշանակում է, որ վնաս կրած անձն իրավունք ունի վնասը հատուցելու պահանջ ներկայացնել ինչպես մեկ, այնպես էլ բոլոր վարչական մարմիններին համատեղ, ինչպես ամբողջ պահանջի, այնպես էլ դրա մի մասի համար:

Վնասը հատուցելու պահանջը վարչական մարմնին անհրաժեշտ է ներկայացնել գրավոր, որում պետք նշվեն՝

1) դիմողի անունը, ազգանունը, իրավաբանական անձի դեպքում՝ նրա լրիվ անվանումը,

2) դիմողի հասցեն (իրավաբանական անձի գտնվելու վայրը),

3) վարչական մարմնի անվանումը, որին ներկայացվում է դիմումը,

4) դիմումով ներկայացվող պահանջը (դիմումի առարկա),

5) դիմումին կցվող փաստաթղթերի ցանկը (եթե այդպիսիք ներկայացվում են),

6) դիմումը կազմելու տարին, ամիսը և ամսաթիվը,

7) դիմողի ստորագրությունը, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ նրա իրավասու պաշտոնատար անձի ստորագրությունը և իրավաբանական անձի կնիքը (ըստ ցանկության):

Եթե դիմումը ներկայացվում է ներկայացուցչի միջոցով, ապա պետք է ներկայացվի նաև օրենքով սահմանված կարգով տրված լիազորագիր:

Վնասի հատուցման պահանջը կարող է ներկայացվել այն պահից հետո՝ 3 տարվա ընթացքում, երբ անձն իմացել է կամ պարտավոր էր իմանալ իրեն պատճառված վնասի մասին, բայց ոչ ուշ, քան

այն գործողության կատարման կամ անգործություն թույլ տալու կամ իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից 10 տարին լրանալը, որով նրան վնաս է պատճառվել (Վարչարարության օրենքի 101-րդ հոդված):

Նշված ժամկետները իրավադադարեցնող ժամկետներ են, ինչը նշանակում է, որ այդ ժամկետների ավարտից հետո վարչական մարմին ներկայացված հատուցման պահանջները կարող են մերժվել վերոնշյալ ժամկետներն ավարտված լինելու կապակցությամբ: Հարկ է նշել, որ այդ ժամկետները հայցային վաղեմության ժամկետներ չեն, քանի որ դրանք չեն վերաբերում դատավարական գործընթացի շրջանակներում հայցով իրավունքների պաշտպանությանը:

Վարչական մարմնում վնասի հատուցման պահանջը քննարկվում և լուծվում է դիմումի քննարկման համար՝ Վարչարչարարության օրենքով սահմանված ընդհանուր կանոններին համապատասխան: Այսինքն՝ անձի կողմից վնասի հատուցման պահանջի դիմումի հիման վրա հարուցվում և իրականացվում է վարչական վարույթ, որն անպայմանորեն պետք է եզրափակվի վարչական ակտի ընդունմամբ:

Վնաս կրած անձը վարչական մարմնի կողմից հատուցման պահանջն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելու կամ դիմումը չքննարկելու դեպքում կարող է դա բողոքարկել՝ վարչական ակտը, վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը բողոքարկելու համար՝ սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով (Վարչարարության օրենքի 102-րդ հոդված):

Նշված հոդվածի լույսի ներքո անհրաժեշտ է պարզել, թե արդյոք անձը կարո՞ղ է վնասի հատուցման պահանջը առանց վարչական մարմնին դիմելու ներկայացնել վարչական դատարան, թե՞ ոչ:

Նշված հարցադրումն ինքնին տարբեր տեսաբանների մոտ տարակարծությունների տեղիք կարող է տալ, սակայն մեր կարծիքով՝ անձը վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման պահանջ կարող է ներկայացնել բացառապես վարչական մարմնին, որի՝ այդ կապակցությամբ կայացված վարչական ակտը կամ անգործությունը կարող է վիճարկել վարչադատավարական կառուցակարգով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 11-րդ գլխով սահմանված հայ-

ցատեսակի ներկայացմամբ[1]:

Վերը նշվեց, որ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասը կարող է լինել ինչպես գույքային, այնպես էլ ոչ գույքային:

Ոչ իրավաչափ վարչարարությամբ ֆիզիկական անձի ազատությունը սահմանափակելու, նրա անձեռնմխելիությունը, բնակարանի անձեռնմխելիությունը, անձնական կամ ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը խախտելու, նրա պատիվը, բարի համբավը կամ արժանապատվությունն արատավորելու միջոցով ոչ գույքային վնաս պատճառելու դեպքերում այդ անձն իրավունք ունի պահանջելու դրամական միջոցներով հատուցում կամ առաջացած հետևանքների վերացում՝ պատճառված ոչ գույքային վնասին համարժեք չափով (Վարչարարության օրենքի 104-րդ հոդվածի 1-ին մաս):

Ի տարբերություն գույքային վնասի հատուցման դեպքի, երբ հետևանքները վերացնելու և դրամական միջոցներով հատուցման եղանակների ընտրության հարցը անձի կամահայտնությամբ չի պայմանավորված, այս դեպքում անձի կամահայտնությունը կանխորոշիչ դեր ունի հատուցման եղանակների ընտրության հարցում:

Խնդիրն այն է, որ օրենսդրորեն սահմանված չէ անձի՝ հատուցման եղանակների ընտրության դեպքում համապատասխան իրավունքի իրականացման կառուցակարգը: Ինչպես Վարչարարության օրենքով, այնպես էլ ՀՀ օրենսդրության մասը կազմող որևէ նորմա-

---

[1] ՀՀ վճռաբեկ դատարանը, 2010թ. դեկտեմբերի 3-ի N ՎԴ/0277/05/09 որոշմամբ անդրադառնալով վարչական ակտը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի հետ միաժամանակ արտադատական կարգի չպահպանմամբ դատական կարգով վարչական մարմնից վնասի հատուցում պահանջելու և դրա դատավարական հետևանքների իրավական հարցերին, արձանագրել է. «...Այսինքն՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ *անձը վնասի հատուցման պահանջը պետք է ներկայացնի վնասը պատճառած պետական_մարմնին, իսկ այն հատուցելու մերժում ստանալու կամ դիմումը չքննարկելու դեպքում համապատասխան վարչական ակտը կամ անգործությունը վիճարկելու պահանջով հայց ներկայացնի դատարան*: Հաշվի առնելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի ուժով վնասի հատուցման պահանջն ընդդատյա չէ վարչական դատարանին: ...Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Քաղաքապետարանից 25.228.000 ՀՀ դրամ գումար բռնագանձելու՝ որպես ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված վնասի հատուցման պահանջի մասով վարչական գործի վարույթը ենթակա է կարճման»:

տիվ իրավական ակտով ամրագրված չէ կարգավորում առ այն, թե ինչպես է որոշվելու դրամական միջոցներով հատուցման չափը կամ առաջացած հետևանքների վերացման պարագայում պատճառված ոչ գույքային վնասին համարժեք չափը: Ավելին՝ օրենսդրորեն կարգավորված չէ նաև այն հարցը, թե առաջացած հետևանքների վերացման պարագայում պատճառված ոչ գույքային վնասին համարժեք չափը և՞ս որոշվելու է դրամական միջոցով, թե՞ ոչ: Եթե այս պարագայում վնասին համարժեք չափը նույնպես որոշվելու է դրամական միջոցներով, ապա այս դեպքում դրամական միջոցներով հատուցումը և առաջացած հետևանքների վերացումը՝ պատճառված ոչ գույքային վնասին համարժեք չափով, նույնականացվում են:

Վարչարարության օրենքի 104-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված նորմի ձևակերպման ընթացքում չեն պահպանվել օրենսդրական տեխնիկայի մի շարք կանոններ: Մասնավորապես՝ այդ նորմի կատարումը նման ձևակերպման պարագայում անհնար է, ինչպես նաև այդ նորմի չկատարման համար իրավական հետևանքներ սահմանված չեն, ինչը միանշանակ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի (03.04.02) 45-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված նորմի պահանջների խախտում է:

Այնուամենայնիվ, պետք է փաստել, որ նշված խնդիրներն առկա չեն այն դեպքերում, երբ վնասի հատուցումը վերաբերում է անձի առողջությանը պատճառված վնասին, ինչպես նաև մասնագիտական ու ընդհանուր աշխատունակության կորստին:

Վարչարարության օրենքի 104-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում ֆիզիկական անձի առողջությանը վնաս պատճառվելու դեպքերում դրամական միջոցներով հատուցման ծավալը որոշվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (05.05.98) 1078-րդ հոդվածի 1-2-րդ մասերին համապատասխան (Վարչարարության օրենքի 104-րդ հոդվածի 2-րդ մաս):

Վարչարարության օրենքի 104-րդ հոդվածի 2-3-րդ մասերով սահմանված նորմերով կարգավորվում են ոչ իրավաչափ վարչարարությամբ անձի մասնագիտական անաշխատունակության և ընդհանուր անաշխատունակության կորստի հատուցման հետ կապված հա-

ռաբերությունները[1]: Մասնավորապես՝ ֆիզիկական անձի մասնագիտական աշխատունակության լրիվ կամ մասնակի կորստի դեպքում հատուցման ենթակա գումարի չափը որոշվում է հետևյալ կերպ՝

1) մասնագիտական աշխատունակության լրիվ կորստի դեպքում ֆիզիկական անձին վճարվում է հատուցում՝ հիմնական աշխատանքի վայրում նրա վերջին մեկ տարվա աշխատավարձի առնվազն 70 տոկոսի չափով՝ մինչև տվյալ մասնագիտության համար սահմանված առավելագույն տարիքի հասնելը, իսկ եթե դա սահմանված չէ, ապա մինչև այն տարիքի հասնելը, որի դեպքում սովորաբար նրա հետ կարող են դադարեցվել տվյալ մասնագիտությամբ աշխատանքային իրավահարաբերությունները,

2) մասնագիտական աշխատունակության մասնակի կորստի դեպքում ֆիզիկական անձին վճարվում է հատուցում՝ հիմնական աշխատանքի վայրում նրա վերջին մեկ տարվա աշխատավարձի ոչ ավելի, քան 70 տոկոսի չափով՝ մասնագիտական աշխատունակության կորստի աստիճանին համապատասխան, մինչև անձի՝ նշված հոդվածի 3-րդ մասի «ա» կետում նշված տարիքի հասնելը:

Եթե անձի մասնագիտական աշխատունակությունը վերականգնվում է, ապա նրան վճարվող հատուցումը նվազեցվում է՝ մասնագիտական աշխատունակության վերականգնման աստիճանին համապատասխան:

Մասնագիտական աշխատունակության բացակայության դեպքում հատուցման ենթակա գումարի չափը որոշվում է հետևյալ կերպ՝

1) ընդհանուր աշխատունակության լրիվ կորստի դեպքում, եթե անձն աշխատել է, ապա վերջին աշխատանքի վայրում նրա տարեկան աշխատավարձի առնվազն 85 տոկոսի չափով՝ մինչև անձի կենսաթոշակային տարիքի հասնելը,

---

[1] Հայաստանի Հանրապետությունում անձի մասնագիտական անաշխատունակության և ընդհանուր անաշխատունակության կորստի չափը որոշում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Հայաստանի Հանրապետության բժշկասոցիալական փորձաքննության գործակալությունը, որը գործում ՀՀ կառավարության 2002թ. նոյեմբերի 14-ի N 1822-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության հիման վրա (ՀՀՊՏ 2002.12.11/54(229)): Բժշկասոցիալական փորձաքննության իրականացման կարգը սահմանվում է ՀՀ կառավարության 2006թ. մարտի 2-ի N 276-Ն որոշմամբ (ՀՀՊՏ 2006.03.24/16(471) Հոդ.366):

2) ընդհանուր աշխատունակության մասնակի կորստի դեպքում, եթե անձն աշխատել է, ապա ընդհանուր աշխատունակության կորստի աստիճանին համապատասխան՝ վերջին աշխատանքի վայրում նրա տարեկան աշխատավարձի ոչ ավելի, քան 85 տոկոսի չափով՝ մինչև անձի կենսաթոշակային տարիքի հասնելը,

3) ընդհանուր աշխատունակության լրիվ կորստի դեպքում, եթե անձը չի աշխատել, ապա նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով,

4) ընդհանուր աշխատունակության մասնակի կորստի դեպքում, եթե անձը չի աշխատել, ապա ընդհանուր աշխատունակության կորստի աստիճանին համապատասխան՝ նվազագույն աշխատավարձի ոչ ավելի, քան հինգհարյուրապատիկի չափով:

Անհատ ձեռնարկատիրոջ և իրավաբանական անձի գործարար համբավը արատավորելու հետևանքով նրանց պատճառված գույքային վնասը, ներառյալ՝ բաց թողնված օգուտը, ենթակա է հատուցման՝ Վարչարարության օրենքի 98-99-րդ հոդվածներին համապատասխան:

Անհատ ձեռնարկատերը կամ իրավաբանական անձը միաժամանակ կարող են դիմել դատարան իրենց գործարար համբավի պաշտպանությամբ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-3-րդ, 5-6-րդ մասերին համապատասխան:

Վարչարարության օրենքը առանձին կարգավորում է նախատեսում անձի մահվան դեպքերում վնասի հատուցման հարցերի վերաբերյալ: Ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով անձի մահվան դեպքում նրա առաջին, իսկ վերջիններիս բացակայության դեպքում՝ երկրորդ կարգի ժառանգներին վճարվում է միանվագ հատուցում՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկից ոչ պակաս չափով:

Առաջին և երկրորդ հերթի ժառանգների ցանկը սահմանված է քաղ. օր.-ի 1216-1217-րդ հոդվածներով: Մասնավորապես՝ առաջին հերթի ժառանգներն են ժառանգատուի երեխաները, ամուսինը և ծնողները: Ժառանգատուի թոռները ժառանգում են ներկայացման իրավունքով, իսկ երկրորդ հերթի ժառանգներն են ժառանգատուի հարազատ, համահայր կամ համամայր եղբայրները և քույրերը: Ժառանգատուի եղբայրների և քույրերի երեխաները ժառանգում են ներ-

կայացման իրավունքով:

Ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով անձի մահվան դեպքում նրա՝ երրորդ (ժառանգատուի ինչպես հայրական, այնպես էլ մայրական կողմի պապը և տատը) և չորրորդ (ժառանգատուի ծնողների եղբայրները և քույրերը (հորեղբայրները, հորաքույրները, քեռիները, մորաքույրները)) հերթի ժառանգներին միանվագ հատուցում չի տրվում:

Եթե ֆիզիկական անձի մահն առաջացնում է կերակրողին կորցնելու հետևանքներ, ապա այդ հիմքով վնասի հատուցում ստանալու իրավունք ունեցող անձանց շրջանակը որոշվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1081-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան, իսկ վնասը հատուցվում է նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերում նշված անձանց:

Եթե ոչ իրավաչափ վարչարարությամբ ոչ գույքային վնաս պատճառվել է անձին, ով իր հերթին օրենքի ուժով պարտականություններ է կրել այլ անձանց հանդեպ, և նրան ոչ գույքային վնաս պատճառելու հետևանքով անուղղակի վնաս է պատճառվել նաև այդ անձանց, ապա վերջիններս ունեն հետևանքները վերացնելու, իսկ դրա անհնարինության կամ բավարար չլինելու դեպքում դրամական միջոցներով հատուցում ստանալու պահանջ ներկայացնել համապատասխան վարչական մարմին: Այդ անձանց վնասը ենթակա է հատուցման նրանց պատճառված անուղղակի վնասի իրական չափով, եթե օրենքով այլ չափ սահմանված չէ (Վարչարարության օրենքի 107-րդ հոդված):

ԳԼՈՒԽ 18.
ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

§1. Վարչական պատասխանատվության հասկացությունը և իրավական հատկանիշները

Հարկադրանքը պետական կառավարման մեթոդներից է և արտահայտվում է նաև վարչական իրավախախտման համար վարչական պատասխանատվություն կիրառելու միջոցով: Վարչական պատասխանատվությունը, լինելով վարչական իրավունքի ինստիտուտ, հանդիսանում է իրավական պատասխանատվության առավել տարածված և լայն կիրառում ունեցող տարատեսակ: ***Իրավական պատասխանատվությունը կատարված իրավախախտման համար անձնական, գույքային և կազմակերպական բնույթի սահմանափակումներ առաջացնող պետական հարկադրանքի միջոցների կիրառում է:*** Գործող օրենսդրությամբ հիմնականում սահմանված են իրավական պատասխանատվության հետևյալ տեսակները՝ ա) քրեական, բ) վարչական, գ) քաղաքացիաիրավական և դ) կարգապահական: Իրավունքի տեսությանը հայտնի են նաև պատասխանատվության այլ տեսակներ՝ սահմանադրական, միջազգային (վերջինիս իրավական հիմքերը հիմնականում միջազգային իրավական փաստաթղթերն են) և այլն:

Պատասխանատվության վերը նշված տեսակը անվանվում է «վարչական», հիմք ընդունելով այն փաստարկը, որ վերջինս հիմնականում կիրառվում է վարչական մարմինների կողմից և հիմնականում իրավախախտումներն առնչվում են վարչարարության ոլորտի հետ: Նույն կերպ է բացատրվում նաև «վարչական զանցանք» տերմինը:

Վարչական պատասխանատվության բովանդակության մասին հստակ պատկերացում կազմելու համար հարկ է անդրադառնալ դրա հիմնական իրավական հատկանիշներին՝

1) այն համարվում է իրավակարգի և օրինականության ապահովման միջոց՝ ինչպես պետական կառավարման կազմակերպման, այնպես էլ օրենսդրության այլ խախտումների համար վարչական տույժեր կիրառելու եղանակով,

2) ունի առանձնահատուկ նորմատիվ իրավական հիմք և կիրառ-

ման պայմաններ,

3) վարչական պատասխանատվության հիմքը բացառապես վարչական իրավախախտումն է, որն օրենդրությամբ նախատեսված դեպքերում կարող է լինել կարգապահական պատասխանատվության հիմք,

4) ուղեկցվում է բացառապես վարչական հարկադրանքի միջոցների կիրառմամբ,

5) վարուքային կանոնները միասնական չեն և պայմանավորված են ինչպես այն կիրառող պետական իրավասու մարմնի կարգավիճակով, այնպես էլ, իրավախախտման բնույթով,

6) վարչական պատասխանատվություն կիրառվում է ինչպես վարչական մարմինների, այնպես էլ դատարանի կողմից,

7) վարչական պատասխանատվություն կիրառվում է ինչպես ֆիզիկական, այնպես էլ՝ իրավաբանական անձանց նկատմամբ,

8) վարչական պատասխանատվության միջոցի կիրառումը չի կարող հանգեցնել դատվածության կամ հիմք հանդիսանալ իրավունքների որևէ այլ կերպ սահմանափակման համար,

9) վարչական պատասխանատվության ինստիտուտին նվիրված օրենսդրական ակտերը միաժամանակ սահմանում են ինչպես վարչական իրավախախտումները և դրանց համար նախատեսված սանկցիաները, այնպես էլ՝ այդ իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության կարգը: Այլ կերպ ասած, օրենսդրությունում բացակայում է վարչական պատասխանատվության վերաբերյալ նյութական և վարուքային նորմերի հստակ տարանջատում:

Ասվածից բխում է, որ որոշ առանձնահատկություններով հանդերձ, վարչական պատասխանատվությունն օժտված է իրավական պատասխանատվությանը բնորոշ ընդհանուր գծերով: Այդ հատկանիշների մասին արդեն իսկ խոսվեց նախորդ պարագրաֆում:

Այսպիսով, ***վարչական պատասխանատվությունն իրավասու պետական մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից օրենքով սահմանված հիմքերով ու կարգով վարչական իրավախախտումների համար վարչական տույժ կիրառելն է:***

Վարչական պատասխանատվության աղբյուր է համարվում, նախ և առաջ ՀՀ Սահմանադրությունը: Դրանում ամրագրված են վարչական պատասխանատվության սկզբունքային նշանակություն

ունեցող հիմունքները, սահմանված է պետական մարմինների կարգավիճակն ու ընդհանուր լիազորությունները, պետական կառավարման ոլորտում անձանց իրավունքների պաշտպանության հիմնադրույթները և այլն:

Վարչական պատասխանատվությանն առնչվող իրավահարաբերությունների կարգավորմանը նվիրված օրենսդրական ակտերի մեջ կենտրոնական տեղ է զբաղեցնում Վարչ. օր.-ը (ընդունվել է 1985թ. դեկտեմբերի 6-ին): Այս կամ այն չափով վարչական պատասխանատվության ինստիտուտին են նվիրված նաև «Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության մասին» (05.05.98), «Տեղական ինքնակառավարման մասին» (07.05.02), «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» (05.05.98) ՀՀ օրենքները, ՀՀ մաքսային օրենսգիրքը (06.07.00), ՀՀ դատական օրենսգիրքը (21.02.07) և այլն:

Նկատի ունենալով, որ Վարչ. օր.-ն ընդունվել է դեռևս խորհրդային ժամանակաշրջանում, իսկ դրանում կատարված բազմաթիվ փոփոխությունները չեն կարող ապահովել համալիր ու համակարգված բարեփոխումներ, ներկայումս շրջանառության մեջ է դրվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նախագիծ, որը հիմնականում կոչված է լուծելու հետևյալ խնդիրները՝

1) վարչական պատասխանատվությանն առնչվող բոլոր իրավական նորմերը զետեղել բացառապես մեկ օրենսդրական ակտում, ինչը կնպաստի վարույթի միասնական կանոնների ապահովմանը, օրենսդրությունում ներքին հակասությունները բացառելուն և մատչելի ու արդյունավետ իրավակիրառ պրակտիկային,

2) վարչական տույժերի համակարգի, հիմքերի և վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթը համապատասխանեցնել Սահմանադրությանը և միջազգային իրավական չափանիշներին,

3) համապատասխանեցնել վարչական պատասխանատվության ինստիտուտի վերաբերյալ օրենսդրությունը իրավական պատասխանատվության առնչությամբ գիտագործնական արդի չափանիշներին:

Վարչական պատասխանատվության ենթակա անձինք են, ինչպես արդեն ասվեց, ֆիզիկական և իրավաբանական անձինք: Ընդ որում, վարչական պատասխանատվության որոշ առանձնահատկութ-

յուններ պայմանավորված են ֆիզիկական անձանց վարչական իրավունակությամբ ու գործունակությամբ: Ֆիզիկական անձանց և նրանց առանձին խմբերի պատասխանատվության առանձնահատկությունները նախատեսված են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 12-16-րդ հոդվածներով:

Վարչ. օր.-ի 12-րդ հոդվածի համաձայն վարչական պատասխանատվության սուբյեկտ կարող են լինել այն անձինք, որոնց 16 տարին լրացել է մինչև վարչական իրավախախտում կատարելու պահը:

Միաժամանակ վարչական պատասխանատվության առանձնահատկություններ են սահմանված քաղաքացիների որոշ խմբերի համար:

Անչափահասների պատասխանատվությունը: Նշված օրենսգրքի 13-րդ հոդվածի համաձայն 16-ից մինչև 18 տարեկան հասակում վարչական իրավախախտումներ կատարած անձանց նկատմամբ կիրառվում են Անչափահասների գործերի հանձնաժողովների կանոնադրությամբ նախատեսված միջոցները: Նկատենք սակայն, որ անչափահասների գործերի հանձնաժողովներ ներկայումս գոյություն չունեն, ինչը ևս օրենսգրքի թերություններից է: Խնդիրն այն է, որ խոսքը տվյալ դեպքում բացառապես այն հանձնաժողովների մասին է, որ ժամանակին գործել են պատգամավորների շրջանային (քաղաքային), քաղաքների շրջանային խորհուրդների գործադիր կոմիտեներին առընթեր (Վար. օր.-ի 221-րդ հոդված): Ներկայումս նման անվանումով հանձնաժողովներ ստեղծվում են որոշ համայնքներում, սակայն դրանք իրենց կարգավիճակով չեն կարող նույնացվել այն հանձնաժողովների հետ, որոնց մասին խոսք է գնում օրենսգրքում:

Պաշտոնատար անձանց պատասխանատվությունը: Նշված օրենսգրքի 14 հոդվածի համաձայն «պաշտոնատար անձինք ենթակա են վարչական պատասխանատվության այնպիսի վարչական իրավախախտումների համար, որոնք կապված են կառավարման կարգի, պետական ու հասարակական կարգի, բնության, բնակչության առողջության պահպանության ոլորտում սահմանված կանոնները և մյուս այն կանոնները չպահպանելու հետ, որոնց կատարման ապահովումը մտնում է նրանց պաշտոնեական պարտականությունների մեջ»: Առանձին դեպքերում պաշտոնատար անձանց կողմից այս կամ այն իրավախախտում կատարելը դիտվում է, որպես զանցանքը *որակյալ*

դարձնող հանգամանք:

Զինծառայողների և մյուս այն անձանց պատասխանատվությունը, որոնց վրա տարածվում են կարգապահական կանոնագրքերի գործողությունները: Նշված օրենսգրքի 15 հոդվածի համաձայն զինծառայողները և զորահավաքի կանչված զինապարտները, ինչպես նաև ներքին գործերի մարմինների շարքային կազմին և պետկազմին պատկանող անձինք վարչական իրավախախտումների համար պատասխանատվություն են կրում ըստ կարգապահական կանոնագրքերի: Նշված անձինք ընդհանուր կարգով պատասխանատվություն են կրում միայն ճանապարհային երթևեկության կանոնների, որսի, ձկնորսության և ձկան պաշարների պահպանության կանոնների խախտման և մաքսանենգության համար: Բացի այդ, նշված անձանց նկատմամբ չեն կարող կիրառվել տուգանք և ուղղիչ աշխատանքներ: Թվարկված դեպքերում այն մարմինները (պաշտոնատար անձինք), որոնց վերապահված է վարչական տույժեր նշանակելու իրավունք, կարող են տույժեր նշանակելու փոխարեն իրավախախտումների վերաբերյալ նյութերը հանձնել համապատասխան մարմիններին՝ մեղավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի լուծման համար:

Վերոհիշյալ հոդվածում նշված անձանցից բացի մյուս անձինք, որոնց վրա տարածվում է կարգապահական կանոնագրքերի կամ կարգապահության վերաբերյալ հատուկ կանոնադրությունների գործողությունը, դրանցով ուղղակիորեն նախատեսված դեպքերում վարչական իրավախախտումների համար կրում են կարգապահական, իսկ մնացած դեպքերում՝ վարչական պատասխանատվություն՝ ընդհանուր հիմունքներով:

Օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց պատասխանատվությունը: Նշված օրենսգրքի 16-րդ հոդվածի համաձայն ՀՀ տարածքում գտնվող օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք ենթակա են վարչական պատասխանատվության ՀՀ քաղաքացիների հետ ընդհանուր հիմունքներով: ՀՀ տարածքում այն օտարերկրյա քաղաքացիների կողմից կատարված վարչական իրավախախտումների պատասխանատվության հարցը, ովքեր գործող օրենքների և ՀՀ միջազգային պայմանագրերի համաձայն ՀՀ վարչական պատասխանատվության հան-

դեպ օգտվում են անձեռնմխելիության իրավունքից, լուծվում է դիվանագիտական ճանապարհով: Օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց վարչական պատասխանատվությանն առնչվող որոշ առանձնահատկություններ կարգավորված են «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքով (25.12.06): Մասնավորապես, հիշյալ անձանց արտաքսման հիմքերը և կարգը սահմանված են այդ օրենքի 31-36-րդ հոդվածներով:

Օրենսդրությունը նախատեսում է նաև ***պատասխանատվությունից ազատելու կամ դրա կիրառումը սահմանափակելու հիմքեր***: Վարչական պատասխանատվությունից ազատելու հիմքերը նախատեսված են Վարչ. օր.-ի 20-րդ և 21-րդ հոդվածներով: Մասնավորապես, 20-րդ հոդվածի համաձայն վարչական պատասխանատվությունից ազատելու հիմքեր են համարվում իրավախախտողի անձը և կատարված իրավախախտման բնույթը: Օրենսդիրը չի մեկնաբանում այդ հասկացությունները, սակայն դա բխում է վարչական պատասխանատվության ընդհանուր հիմունքներից: Բնականաբար, վարչական պատասխանատվության միջոցներ կիրառելու լիազորությամբ օժտված անձը կարող է նկատի ունենալ մեղմացուցիչ հանգամանքների առկայությունը, մեղքի ձևն ու աստիճանը և այլն:

Վարչ. օր.-ի 21-րդ հոդվածի համաձայն «եթե կատարված իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ»:

Ինչ վերաբերում է իրավաբանական անձանց վարչական պատասխանատվությանը, այն դեռևս բավարար չափով լուծված չէ ինչպես օրենսդրությամբ, այլև տեսականորեն: Իրավական ակտերում «իրավաբանական անձանց վարչական պատասխանատվություն» հասկացությունն ընդհանրապես գործածված չէ, դա բխում է կոնկրետ օրենսդրական ակտերից:

Այսպես, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի (14.04.97) 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Հարկերը ճիշտ հաշվարկելու, ժամանակին վճարելու և հարկային օրենսդրության մյուս պահանջները պահպանելու պատասխանատվությունը, հարկային օրենսդրությամբ այլ բան սահմանված չլինելու դեպքում, կրում են հարկ վճարողները և դրանց

(ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների)՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պաշտոնատար անձինք»: Ընդ որում, «հարկ վճարող» հասկացության բնորոշումը տրված է նույն օրենքի 5 հոդվածում, մասնավորապես այդպիսիք են համարվում. «ֆիզիկական և իրավաբանական անձինք (այդ թվում՝ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք, օտարերկրյա իրավաբանական անձանց հիմնարկները, օտարերկրյա իրավաբանական անձանց մասնաճյուղերը, ներկայացուցչությունները), հիմնարկները, տեղական ինքնակառավարման մարմինները»:

Կազմակերպությունների համար վարչական պատասխանատվություն սահմանող իրավական ակտերի վերլուծությունը ցույց է տալիս, որ ***հիմնականում*** վարչական պատասխանատվության կարող են ենթարկվել իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպությունները: Սակայն հայտնի են նաև առանձին բացառություններ, որոնք կրում են մասնավոր և կոնկրետ բնույթ: Առանձին օրինակներ արդեն իսկ մատնանշվեցին: Ավելացնենք նաև, որ հարկային օրենսդրության առանձին խախտումների համար վարչական պատասխանատվության կարող են ենթարկվել նաև կազմակերպությունների մասնաճյուղերը, իսկ ՀՀ քաղ. օր.-ի (ընդունվել է 1998թ. մայիսի 5-ին) 61-րդ հոդվածի համաձայն մասնաճյուղերն իրավաբանական անձինք չեն:

Ներկայումս կազմակերպությունները հանդես են գալիս որպես վարչական պատասխանատվության սուբյեկտներ՝ հիմնականում հողային, շինարարության, մաքսային, հարկային, սոցիալական ապահովագրության և բնության ու շրջակա միջավայրի պաշտպանության վերաբերյալ օրենսդրական ակտերով: Ամփոփելով իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության հիմնախնդիրները՝ կարելի է առանձնացնել պատասխանատվության այս տեսակին բնորոշ հետևյալ առանձնահատկությունները՝

1) իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու համար մեղքի առկայությունը պարտադիր պայման չէ: Շատ հաճախ սոսկ հակահիրավական արարքի փաստի առկայությունը համարվում է բավարար հիմք վարչական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելու համար,

2) տույժերի ցանկը զգալիորեն տարբերվում է ֆիզիկական ան-

ձանց նկատմամբ կիրառվող տույժերի տեսակներից: Այսպես, իրավաբանական անձանց նկատմամբ, որպես կանոն, կիրառվում են գույքային բնույթի և իրավունքների սահմանափակմանն առնչվող տույժեր՝ տուգանքը, լիցենզիայից զրկելը, կազմակերպության հարկադիր լուծարումը, գործունեության դադարեցումը, արտոնագրից զրկելը և այլն,

3) իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու վարույթը զգալիորեն պարզեցված է: Այն, որպես կանոն, ընթանում է առավել կրճատ ժամկետներով, տույժ նշանակելու մասին որոշում կայացնելու համար, որպես կանոն, հիմք է ծառայում ոչ թե իրավախախտման արձանագրությունը, այլ ստուգման ակտը և այլն,

4) Իրավաբանական անձի պատասխանատվությունը չի բացառում նույն իրավախախտման համար մեղավոր ֆիզիկական անձի (որպես կանոն, իրավասու պաշտոնատար անձի) պատասխանատվությունը և այլն:

§2. Վարչական պատասխանատվության սկզբունքները

Վարչական պատասխանատվության սկզբունքների համակարգն օրենսդրությամբ ամրագրված չէ, ինչը վերջինիս թերություններից է: Այսպես, նախ, Վարչ. օր.-ի «Ընդհանուր դրույթներ» հատվածի 6-րդ և 7-րդ հոդվածները համապատասխանաբար ամրագրում են վարչական իրավախախտումների կանխման և օրինականության սկզբունքները, իսկ արդեն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու համար լիազորված մարմինները» հատվածի առանձին հոդվածներով ամրագրված է վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը քաղաքացիների հավասարության (248-րդ հոդված), հրապարակայնության (249-րդ հոդված) սկզբունքները: Հավելենք. որ վարչական պատասխանատվությանն առնչվող այլ օրենսդրական ակտերով այդ ինստիտուտի այլ սկզբունքներ ամրագրված չեն:

Իրավահամեմատական վերլուծությունը վկայում է այն մասին,

որ վարչական պատասխանատվության սկզբունքների համակարգը, որոշ վերապահումներով հանդերձ, համապատասխանում է իրավական պատասխանատվության սկզբունքներին: Ընդ որում, քրեական պատասխանատվության պարագայում «քրեական պատասխանատվության սկզբունք» եզրույթի տակ հարկ է նկատի ունենալ ինչպես քրեական իրավունքի, այնպես էլ՝ քրեական դատավարության իրավունքի ճյուղերով ամրագրված սկզբունքների համակարգը: Նույն կերպ վարչական պատասխանատվության սկզբունքների համակարգը ներառում է վարչական պատասխանատվությանն առնչվող ինչպես նյութական, այնպես էլ վարութային իրավունքի հիմնաղբյուրները, ինչի հիման վրա նշված սկզբունքները դասակարգվում են երկու խմբի՝ ա) պատասխանատվության նյութական իրավունքի սկզբունքներ և բ) պատասխանատվության վարույթի սկզբունքներ:

Նկատենք, որ վարչական պատասխանատվության պարագայում օրենսդրությունը հենց այդ իրավակարգավորման եղանակն է հիմք ընդունել, քանզի Վարչ. օր.-ը, ի տարբերություն քրեական պատասխանատվության, որի իրավական հիմքերը համապատասխանաբար ամրագրված են ՀՀ քրեական օրենսգրքով (18.04.03) և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով (01.07.98), միաժամանակ բաղկացած է ինչպես նյութական, այնպես էլ վարութային նորմերից: Ինչպես արդեն նշել ենք, իրավակարգավորման հիշյալ եղանակն ընդհանրապես բնորոշ է վարչական իրավունքին:

Թեպետ, վարչական պատասխանատվության պարագայում օրենսդրությունը միաժամանակ ներառում է նյութական և վարութային իրավունքների ինստիտուտներ, այնուամենայնիվ, հիշյալ սկզբունքները չեն կարող միաժամանակ նույն իրավական նշանակությամբ կիրառելի լինել նշված ինստիտուտների համար: Դա վերաբերում է նաև նույնանուն սկզբունքներին, ինչպես օրինակ՝ օրինականության, իրավահասարության սկզբունքները և այլն: Ըստ այդմ էլ, սկզբունքները

Ինչևէ, վարչական պատասխանատվության սկզբունքներին՝ իրավահամեմատական վերլուծությամբ կարող են բխեցվել ինչպես վարչական օրենսդրությամբ, այնպես էլ՝ միջազգային իրավունքի նորմերով ամրագրված հիմնաղբյուրներից: Մասնավորապես, վարչական պատասխանատվության նյութական իրավունքի հատվածի հիմնական սկզբուքներն են՝

1) ***օրինականությունը***՝ արարքը, որպես վարչական իրավախախտում և դրա համար պատասխանատվություն սահմանելը որոշվում է միայն օրենքով,

2) ***օրենքի առջև հավասարությունը***՝ վարչական իրավախախտում կատարած անձինք հավասար են օրենքի առջև և ենթակա են վարչական պատասխանատվության՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելիությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից,

3) ***պատասխանատվության անխուսափելիությունը***՝ վարչական իրավախախտում կատարած յուրաքանչյուր անձ ենթակա է վարչական օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության կամ այլ վարչաիրավական ներգործության,

4) ***անձնական պատասխանատվությունը***՝ անձը ենթակա է պատասխանատվության միայն անձամբ իր կատարած վարչական իրավախախտման համար,

5) ***ըստ մեղքի պատասխանատվությունը***՝ անձը ենթակա է պատասխանատվության միայն օրենքով նախատեսված այն արարքը կատարելու համար, որի վերաբերյալ նրա մեղքը հաստատված է իրավասու վարչական մարմնի, պաշտոնատար անձի կամ դատարանի կողմից,

6) ***պատասխանատվության անհատականացումը***՝ վարչական իրավախախտում կատարած անձի նկատմամբ վարչական տույժը և վարչաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն վարչական իրավախախտման ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, արարքը կատարողի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր իրավախախտումներ կանխելու համար,

7) ***մարդասիրությունը***՝ վարչական պատասխանատվության վերաբերյալ օրենսդրությունը ծառայում է մարդու ֆիզիկական, հոգեկան, նյութական, էկոլոգիական և այլ անվտանգությունն ապահովելուն, ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ դաժան, ան-

մարդկային կամ իր արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ տույժի:

Վարչական պատասխանատվության վարույթի հիմնական սկզբունքերն են՝

1) ***օրինականությունը***՝ վարույթ իրականացնող մարմինները և անձինք պարտավոր են գործել բացառապես օրենսդրության պահանջներին համապատասխան,

2) ***անձի իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը հարգելը***՝ վարույթ իրականացնող մարմինները և անձինք պարտավոր են հարգել անձի իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը,

3) ***անձի անձեռնմխելիությունը***՝ անձը կարող է ազատությունից զրկվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով,

4) ***բնակարանի և գույքի անձեռնմխելիությունը***՝ անձի բնակարանի և գույքի նկատմամբ իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով, դրամական տույժերը և սեփականության իրավունքով պատկանող գույքը հարկադրաբար օտարելը կարող է իրականացվել միայն դատարանի որոշմամբ,

5) ***վարույթի լեզուն*** վարույթն իրականացվում է հայերեն, իսկ վարույթի մասնակիցներն օգտվում են հանդես գալ այն լեզվով, որին տիրապետում է և ծանոթանալ այդ լեզվով թարգմանված նյութերին,

6) ***վարույթի հրապարակայնությունը***՝ վարույթի հրապարակայնությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով նախատեսված այն դեպքերում, երբ նյութերն առնչվում են պետական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիքի, վարույթի մասնակցի անձնական կյանքին և նմանաբնույթ այլ տվյալների,

7) ***անմեղության կանխավարկածը***՝ անձը համարվում է անմեղ, քանի դեռ իրավասու մարմնի որոշմամբ չի ճանաչվել մեղավոր կատարված վարչական իրավախախտման մեջ,

8) ***իրավախախտման մեջ կասկածվող անձի պաշտպանության իրավունքը***՝ իրավախախտում կատարելու մեջ կասկածվող անձը սահմանված կարգով օգտվում է իրավաբանական օգնությունից,

9) ***վարչարարությամբ կամ դատական սխալներով պատճառված վնասի լիարժեք փոխհատուցումը***՝ անձին օրենքով սահմանված կարգով տրվում է փոխհատուցում՝ վարչարարությամբ կամ դատական

սխալներով պատճառված վնասի համար,

10) ***մրցակցությունը***՝ վարչական վարույթն իրականացվում է կողմերի մրցակցության ապահովմամբ:

Վարչական պատասխանատվության սկզբունքներն իրենց բովանդակությամբ համընկնում են քրեական պատասխանատվության և իրավական պատասխանավության մյուս նույնանուն սկզբունքներին, սակայն օժտված են որոշ առանձնանատկություններով: Մասնավորապես, դրանք պայմանավորված են պետական կառավարման հանրային բնույթով, վարչական իրավախախտումների հանրային ոչ մեծ վտանգավորությամբ, վարույթի պարզությամբ և այլն:

Այսպես, հրապարակայնության սկզբունքը վարչական պատասխանատվության պարագայում բացառում է քննության շահերից ելնելով վարույթի գաղտնիությունը, ինչը բնորոշ է, օրինակ՝ քրեական մինչդատական վարույթին: Հիշյալ սկզբունքը կարող է սահմանափակվել միայն դատավարության փուլում: Կամ անձի անձեռմխելիության սկզբունքը վարչական պատասխանատվության պարագայում ընդհանրապես բացառում է ազատությունից զրկելը, որպես տույժի միջոց և այլն:

Միաժամանակ, օրենսդրությամբ ամրագրված որոշ սկզբունքերի միջև առկա տարբերությունները դեռևս օրենսդրության անկատարության հետևանք են: Այսպես, իրավաբանական օգնության իրավունքի ապահովման սկզբունքը ոչ միայն քրեական դատավարության, այլև՝ վարչական պատասխանատվության վարույթի պարագայում պետք է ներառի անվճար իրավաբանական օգնության ինստիտուտը, մինչդեռ՝ գործող օրենսդրությամբ անհարկի նախապատվությունը տրվել է տարբերակված դիրքորոշմանը: Ընդհանրապես, անվճար իրավաբանական օգնության հիմքում անհրաժեշտ է դնել ոչ թե դատավարության տեսակը, կամ քննվող գործի բնույթը, այլ՝ վարույթի մասնակցի սոցիալական վիճակը, մասնավորապես վերջինիս անվճարունակ լինելը: Ընդ որում, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի բազմաթիվ նախադեպային դատական ակտերով ընդգծվում է այն մոտեցումը, որ գույքային դրությամբ պայմանավորված անվճար իրաբանական օգնություն ապահովելը հավասարապես վերաբերում է նաև իրավաբանական անձանց:

§3. Վարչական իրավախախտում (զանցանք)

Վարչական իրավախախտումը վարչական պատասխանատվության հիմքն է: Վարչական իրավախախտման բնորոշումը տրված է Վարչ. օր.-ի 9-րդ հոդվածում. «իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն: Սույն օրենսգրքով նախատեսված իրավախախտումների համար վարչական պատասխանատվություն առաջանում է, եթե այդ խախտումներն իրենց բնույթով քրեական պատասխանատվություն չեն առաջացնում գործող օրենսդրությանը համապատասխան»: Նկատենք, որ այս բնորոշումը վերաբերում է բացառապես ֆիզիկական անձանց կողմից կատարված վարչական զանցանքներին, մինչդեռ իրավաբանական անձանց կողմից կատարված վարչական զանցանքի բնորոշումը տրված չէ: Միաժամանակ, օրենսդրությամբ ամրագրված հիմնադրույթներից բխում է, որ իրավաբանական անձանց դեպքում արարքը ***մեղավորությամբ*** կատարելը պարտադիր իրավական հատկանիշ չէ:

Արարքը կարող է դրսևորվել ինչպես գործողության, այնպես էլ անգործության ձևով: Հաճախ միևնույն արարքը կարող է դրսևորվել ինչպես գործողության, այնպես էլ անգործության ձևով (օրինակ, էլեկտրական էներգիայի օգտագործման կանոնների խախտումը):

Ինչպես արդեն նշվեց վարչական իրավախախտումներ են նախատեսված նաև օրենսդրական այլ, այդ թվում օրենսդրության մյուս ճյուղերին առնչվող ակտերում. օրինակ՝ «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի (07.10.96) 18-րդ հոդվածով, ՀՀ մաքսային օրենսգրքի (06.07.00) 190-204-րդ հոդվածներով և այլն: Այսպիսով, ***վարչական իրավախախտումներ սահմանված են ինչպես վարչական, այնպես էլ իրավունքի մյուս հարակից ճյուղերի նորմերով:***

Վարչական իրավախախտման սահմանազատումը հանցագործությունից, ինչպես նաև կարգապահական զանցանքից ունի ինչպես

տեսական, այնպես էլ ընդգծված գործնական նշանակություն: ՀՀ քր. օր.-ի 18-րդ հոդվածի վերլուծությունից բխում է, որ հանցագործություններից վարչական իրավախախտումները սահմանազատելու առավել էական չափանիշը վերջիններիս *նվազ վտանգավորությունն է*:

Տարբեր են նաև նշված իրավախախտումների համար նախատեսված սանկցիաները. որպես կանոն, ***հանցագործությունների համար նախատեսված են առավել խիստ սանկցիաներ, որոնք առաջացնում են դատվածություն և դրանով պայմանավորված որոշակի իրավական հետևանքներ:***

Առանձին դեպքերում քրեական օրենսգրքի և Վարչ. օր.-ի համապատասխան հոդվածները միմյանցից տարբերվում են սահմանված դիսպոզիտիվ հատկանիշներով: Վարչական զանցանքը հանցագործություններից տարբերվում է նաև արարքի կատարման եղանակով, մեղքի ձևով, իրավախախտման շարժառիթներով, իրավական հետևանքներով և այլն:

Տարբերիչ հատկանիշ կարելի է համարել նաև պատասխանատվության համար սահմանված տարիքը. ՀՀ քր. օր.-ի 24-րդ հոդվածի համաձայն. «քրեական պատասխանատվության ենթակա է այն անձը, ում 16 տարին լրացել է նախքան հանցագործություն կատարելը», իսկ որոշ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների համար քրեական պատասխանատվության ենթակա են նաև 14-ից մինչև 16 տարեկան հասակում: Մինչդեռ Վարչ. օր.-ի 12-րդ հոդվածի համաձայն «վարչական պատասխանատվության ենթակա են այն անձինք, որոնց 16 տարին լրացել է մինչև վարչական իրավախախտում կատարելու պահը»:

Վարչական իրավախախտման և կարգապահական իրավախախտման (կարգապահական զանցանք) համար ընդհանուր գիծն այն է, որ դրանք ունեն հանրորեն նվազ վտանգավոր բնույթ: Զանցանքի այդ երկու տեսակների սահմանազատման համար նկատի պետք է ունենալ հետևյալ հատկանիշները. կարգապահական զանցանքի սուբյեկտները հիմնականում հանրային ծառայողներն են ու մասնավոր ոլորտում աշխատողները, իսկ օբյեկտն է կոնկրետ հիմնարկի, ձեռնարկության ներքին աշխատանքային կարգուկանոնը, պետական կառավարման կարգը: Տարբեր են նաև կիրառվող սանկ-

ցիաները, այդպիսիք կիրառելու իրավունք ունեցող սուբյեկտները, վարույթ հարուցելու ու քննելու կարգը և այլն:

Զանցանքի բաղկացությունը կամ զանցակազմը դա արարքը, որպես իրավախախտում որակող օրենսդրությամբ ամրագրված հատկանիշների համակարգն է:

Զանցակազմի տարրերը գտնվում են օրգանական կապի մեջ և նրանցից թեկուզև մեկի բացակայությունը բացառում է արարքն իրավախախտում որակելը: Զանցակազմի ինստիտուտն ունի նաև գործնական նշանակություն, այն հնարավորություն է տալիս առանձնացնելու իրավախախտման առավել էական հատկանիշները, սահմանազատելու այն մյուս իրավախախտումներից և ընտրելու համարժեք սանկցիաներ:

Յուրաքանչյուր նպատակաուղղված արարք հանդես է գալիս, որպես սուբյեկտիվ և օբյեկտիվ գործոնների ամբողջություն: Նրանում առանձնանում է ներգործության օբյեկտը և վերջինիս նկատմամբ որոշակի հոգեբանական վերաբերմունք դրսևորող սուբյեկտը: Զանցակազմը համանման եղանակով բաղկացած է 4 տարրերից. օբյեկտ, օբյեկտիվ կողմ, սուբյեկտ և սուբյեկտիվ կողմ:

Ըստ կառուցվածքի լինում են նյութական և ձևական զանցակազմեր: Նյութական են համարվում այն զանցակազմերը. որոնք ա) պարունակում են այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են վնասակար հետևանքների վրա հասնելը, բ) նկարագրում են պարտադիր կարգով վնասակար հետևանքների առաջացման հետ առնչվող արարքներ, որոնց մասին թեկուզև ուղղակիորեն մատնանշված չէ օրենքով (օրինակ, արածավերումը): Ձևական են (տերմինը պայմանական է) համարվում այն զանցակազմերը, որոնք չեն պարունակում վնասակար հետևանքներ առաջանալու հատկանիշներ: Իհարկե, հնարավոր են դեպքեր, երբ գույքային վնաս է պատճառվում նաև ձևական զանցակազմերով, սակայն դա իրավական արժեք չունի արարքի որակման համար, այլ նշանակություն ունի տույժի չափն ընտրելիս:

Վարչական զանցանքի օբյեկտը. Ինչպես յուրաքանչյուր իրավախախտման, այնպես էլ ***վարչական զանցանքի օբյեկտը ոտնձգության առարկա հասարակական հարաբերություններն են***: Այդ հասարակական հարաբերությունները ամրագրված են Վարչ. օր.-ի 9-րդ հոդվածում. պետական հասարակական կարգը, սեփականությունը, քաղա-

քաղաքացիների իրավունքները և ազատությունները, կառավարման սահմանված կարգը: Դժվար չէ նկատել, որ օբյեկտների ամրագրման հերթականությունը և շրջանակը (օրինակ, նշված հոդվածով այդպիսին է համարվում «սոցիալիստական» սեփականությունը) չի համապատասխանում ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված սոցիալական արժեքների փաստացի նշանակությանը: Բնականաբար, առաջնահերթ են համարվում քաղաքացիների իրավունքները, ազատությունները և օրինական շահերը:

Ըստ ընդհանրացման աստիճանի լինում են ***ընդհանուր, սեռային, տեսակային և անմիջական*** *օբյեկտներ:* Ընդհանուր օբյեկտներն օժտված են երկու հատկանիշներով. դրանք կարգավորված են իրավունքի տարբեր ճյուղերով և պաշտպանվում են վարչական իրավունքի նորմերով: Սեռային օբյեկտներն առանձնանում են իրենց բնորոշ հատկանիշներով և կազմում են ընդհանուր օբյեկտի մասը: Մասնավորապես, վարչական իրավունքի նորմերով կարող են կարգավորվել աշխատանքային, քաղաքացիական, վարչական և այլ իրավունքի ճյուղերով կարգավորված իրավահարաբերություններ: Անմիջական օբյեկտն այն հարաբերությունն է, որը նախատեսված է կոնկրետ զանցանք նախատեսող հոդվածով:

Վարչական զանցանքի օբյեկտիվ կողմը: Վարչական զանցանքի օբյեկտիվ կողմը դա արարքի արտաքին կողմը բնութագրող վարչական իրավունքի նորմերով նախատեսված հատկանիշների համակարգ է: Ինչպես հայտնի է, իրավունքի տեսությունը իրավախախտման օբյեկտիվ կողմի հատկանիշներ է համարում արարքի հասարակական վտանգավորությունը, հակաիրավականությունը, հետևանքները և պատճառական կապը: Նշված հատկանիշները մասամբ (բացառություն է կազմում հասարակական վտանգավորության հատկանիշը) կիրառելի են նաև վարչական զանցանքի համար: Օբյեկտիվ կողմի հիմնական հատկանիշը, թերևս, բուն արարքի էությունն է, մյուս հատկանիշները՝ կատարման եղանակը, ժամանակը, տեղը, վայրը և այլն, ստորադասվում են վերջինիս:

Վարչական զանցանքի սուբյեկտը: Զանցանքի սուբյեկտն այն հատկանիշներն են, որոնք բնութագրում են արարքը կատարող ֆիզիկական կամ իրավաբանական անձին: Սուբյեկտին բնութագրող հատկանիշները կարելի է բաժանել 2 խմբի՝ ընդհանուր և հատուկ:

Ընդհանուր *են համարվում այն հատկանիշները, որոնք պարտադիր են վարչական պատասխանատվության ենթակա բոլոր անձանց համար:* Ֆիզիկական անձանց պարագայում դրանք *տարիքը և մեղսունակությունն են:* Իրավաբանական անձի պարագայում այդ հատկանիշներն են իրավաբանական անձի վարչական իրավունակությունը:

Հատուկ *հատկանիշների սահմանումը հնարավորություն է տալիս առավել համարժեք իրավական գնահատական տալ արարքի հասարակական վտանգավորությանը:* Որոշակի զբաղմունքի տեր մարդկանց (օրինակ, հակահամաճարակային ծառայությունների աշխատակիցների) համար նորմատիվ ակտերով համապատասխան ոլորտներում սահմանված պարտականությունները չկատարելը, որպես կանոն, առավել վտանգավոր է համարվում, իսկ առանձին պարտականություններ պարզապես վերաբերում են միայն այդ ոլորտի աշխատակիցներին և այլն: Վարչ. օր.-ի մի շարք հոդվածներ միաժամանակ նախատեսում են 2 սանկցիա՝ մի դեպքում քաղաքացիների, մյուս դեպքում՝ պաշտոնատար անձանց համար:

Պայմանականորեն վերոհիշյալ հատկանիշներով օժտված հատուկ սուբյեկտներին կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝

1) անչափահասները,

2) հաշմանդամները,

3) մինչև 12 տարեկան երեխաներ ունեցող և հղի կանայք,

4) զինծառայողները և վարժահավաքի կանչված անձինք.

5) ոստիկանության շարքային կազմին և պետկազմին պատկանող անձինք,

6) ուսանողները և սովորողները,

7) անձինք, որոնց վրա տարածվում է կարգապահական կանոնագրքերի կամ կարգապահության վերաբերյալ հատուկ կանոնադրությունների գործողությունը,

8) պատգամավորները,

9) օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք:

Վարչական զանցանքի սուբյեկտիվ կողմը: Զանցանքի սուբյեկտիվ կողմի հիմնական տարրը մեղքն է, այսինքն անձի հոգեբանական վերաբերմունքը արարքի և դրա հետևանքների նկատմամբ: Մեղքը սուբյեկտիվ կողմի միջուկն է, որին որոշ դեպքերում կարող են առնչվել

նաև արարքի շարժառիթն ու նպատակները: Վարչ. օր.-ի 9-րդ հոդվածով մեղքը ամրագրված է որպես զանցակազմի պարտադիր տարր: Մեղքն ընդգրկում է հոգեկան վիճակի երկու ձև. դիտավորություն և անզգուշություն:

Դիտավորության օրենսդրական բնորոշումը տրված է Վարչ. օր.-ի 10-րդ հոդվածում. «*վարչական իրավախախտումը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե այն կատարող անձը գիտակցել է իր գործողության կամ անգործության հակահիրավական բնույթը, կանխատեսել է դրա վնասակար հետևանքները և ցանկացել է դրանք, կամ գիտակցաբար թույլ է տվել այդ հետևանքների առաջացումը*»: Ընդ որում, օրենքը չիմանալը վարչական իրավունքում հանդիսանում է պատասխանատվությունից ազատելու հիմք:

Որպես կանոն, այն զանցանքները, որոնք կարող են միայն դիտավորությամբ կատարվել, անհամեմատ շատ են, քան անզգուշությամբ կատարվող զանցանքները: Բացի այդ, մի շարք զանցանքներ կարող են կատարվել ինչպես դիտավորությամբ, այնպես էլ անզգուշաբար (օրինակ, սանիտարա-հիգիենիկ կանոնների խախտումները):

Վարչ. օր.-ի 11-րդ հոդվածում տրված է անզգուշության՝ որպես մեղքի ձևի, օրենսդրական բնորոշումը. «*վարչական իրավախախտումը համարվում է անզգուշությամբ կատարված, եթե այն կատարած անձը կանխատեսել է իր գործողության կամ անգործության վնասակար հետևանքների առաջացման հնարավորությունը, բայց թեթևամտորեն հույս է ունեցել կանխելու դրանք կամ չի կանխատեսել այդպիսի հետևանքներ առաջանալու հնարավորությունները, թեև պարտավոր էր և կարող էր կանխատեսել դրանք»:* Ինչպես քրեական իրավունքի, այնպես էլ վարչական իրավունքի գիտությանը հայտնի է անզգուշության երկու տեսակ. *անփութություն և ինքնավստահություն*: Առաջինի դեպքում իրավախախտը կանխատեսում է իր արարքի վնասակար հետևանքների առաջացման հնարավորությունը, բայց թեթևամտորեն հաշվարկում է կանխել դրանք: Երկրորդ դեպքում իրավախախտը չի կանխատեսում այդպիսի հետևանքների առաջանալու հնարավորությունը, թեև պարտավոր էր և կարող էր կանխատեսել դրանք: Վերոհիշյալից բխում է, որ անզգուշության մեղքի ձևը չի վերաբերում ձևական զանցակազմերին, քանզի այն առնչվում է վնասակար հետևանքների հետ:

§4. Վարչական տույժի հասկացությունը, տեսակները և նշանակման կանոնները

Վարչական տույժի օրենսդրական բնորոշումը տրված է Վարչ. օր.-ի 22-րդ հոդվածում. «վարչական տույժը համարվում է պատասխանատվության միջոց»: Նույն այդ հոդվածում ամրագրված են վարչական տույժի նպատակները՝ ա) վարչական իրավախախտում կատարած անձին դաստիարակելն օրենքները պահպանելու, համակեցության կանոնները հարգելու ոգով, բ) իրավախախտողի կողմից նոր իրավախախտումների կատարումը կանխելը, գ) այլ անձանց կողմից նոր իրավախախտումների կատարումը կանխելը:

Վարչական տույժերը որոշ չափով ընդհանուր գծեր ունեն վարչական խափանիչ միջոցների հետ: Դրանց համար ընդհանուրն այն է, որ երկուսի հիմքում էլ ընկած են վարչական իրավախախտումները և երկուսն էլ կատարում են իրավախախտումների կանխարգելման գործառույթ: Առանձին դեպքերում վարչական խափանիչ միջոցները կարող են նախորդել նաև քրեադատավարական միջոցների կիրառմանը:

Վարչական տույժերը, որպես կանոն, ներգործում են իրավախախտողի վրա նյութական կամ բարոյական առումով: Իսկ տույժերի առանձին տեսակներ միաժամանակ ներառում են թե՛ նյութական և թե՛ բարոյական ներգործության տարրեր՝ հատուկ իրավունքներից զրկելը և այլն:

Ֆիզիկական անձանց նկատմամբ վարչական տույժերի համակարգն ամրագրված է Վարչ. օր.-ի 23-րդ հոդվածում.

1) նախազգուշացում,

2) տուգանք,

3) վարչական իրավախախտում կատարելու գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի հատուցմամբ վերցնում,

4) վարչական իրավախախտում կատարելու գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի բռնագրավում,

5) քաղաքացուն տրված հատուկ իրավունքից (տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից, որսորդական իրավունքից) զրկում:

Տույժերի ցանկը Վարչ. օր.-ի 23-րդ հոդվածում սպառիչ չէ: Այդ-

պիսիք բացառիկ դեպքերում կարող են սահմանվել նաև այլ օրենսդրական ակտերով: Օրինակ, օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց նկատմամբ կարող է կիրառվել արտաքսում, որի հիմքերն ու իրականացման կարգը սահմանված է «Օտարեկրացիների մասին» ՀՀ օրենքի (25.12.06) 31-36-րդ հոդվածներով:

Հարկ է նկատել, որ օրենսդիրը տույժերը սահմանում է խիստ որոշակի կարգով՝ առավել մեղմից մինչև առավել խիստը: Այդ աստիճանական կառուցվածքը մեծ կիրառական նշանակություն է ձեռք բերում հատկապես այն դեպքերում, երբ սանկցիան կրում է այլընտրանքային բնույթ:

Վարչ. օր.-ի 24-րդ հոդվածից բխում է, որ վարչական տույժերը կարող են լինել ***հիմնական կամ լրացուցիչ:*** *Մասնավորապես, առարկաները հատուցմամբ վերցնելը, լիցենզիայից զրկելը և բռնագրավումը կարող են կիրառվել ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ վարչական տույժեր, իսկ մնացած տույժերը կարող են կիրառվել միայն, որպես հիմնական տույժեր:*

Տույժերը կարող են լինել ***միանվագ*** (բռնագրավում, նախազգուշացում, տուգանք) և **տևող** (իրավունքներից զրկելը): Տևող տույժերը նպատակահարմար է կիրառել այն դեպքերում, երբ առավել անհրաժեշտ է դաստիարակչական և խափանիչ բնույթի խնդիրների լուծումը: Այսպես, օրինակ, տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված անձը սահմանված ժամկետը լրանալուց հետո դարձյալ քննություն պետք է հանձնի և այլն: Բնականաբար այդ վիճակում գտվնող անձը խիստ սահմանափակ հնարավորություններ ունի նոր նույնաբնույթ իրավախախտումներ կատարելու համար:

Նույն հոդվածի երկրորդ մասի համաձայն ***մեկ վարչական իրավախախտման համար կարող է նշանակվել հիմնական կամ հիմնական ու լրացուցիչ տույժ***: Ընդ որում, առանձին դեպքերում օրենսդիրն ինքն է նախատեսում ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ տույժի միաժամանակյա կիրառման հնարավորություն: Վարչ. օր.-ում հատկապես տարածում ունեն տույժի միջոցների առումով այն այլընտրանքային նորմերը, որտեղ միաժամանակ նախատեսված են երկու հիմնական տույժի տեսակներ՝ նախազգուշացում կամ տուգանք և այլն: Այսպես, օրինակ, 180-րդ հոդվածով նախատեսված արարքի՝ հասարակական վայրերում լռությունը խախտելու համար

նախատեսված է նախազգուշացում կամ տուգանքի նշանակում:

Նշված դեպքերում վարչական տույժ նշանակելիս, կոնկրետ հանգամանքներից ելնելով, կարող է նշանակվել նախատեսված տույժերից միայն մեկը, մասնավորապես, 180-րդ հոդվածում նախատեսված դեպքում՝ կամ նախազգուշացում կամ տուգանք, իսկ 180[1]-րդ հոդվածով նախատեսված դեպքում՝ տուգանք:

Նախազգուշացում: Նախազգուշացումը սահմանված է Վարչ. օր.-ի 25-րդ հոդվածով և, իբրև տույժի ինքնուրույն տեսակ, կիրառվում է աննշան վարչական իրավախախտումների համար, ինչպես նաև այն անձանց նկատմամբ, ովքեր առաջին անգամ են կատարել վարչական զանցանք և դրական են բնութագրվում: Այն, ինչպես և ցանկացած տույժի միջոց, նշանակվում է գրավոր իրավական ակտի տեսքով. բանավոր արված դիտողությունը ոչ մի պարագայում չի կարող դիտվել որպես վարչական տույժ:

Հիշյալ հոդվածի համաձայն օրենսդրությամբ նախատեսված դեպքերում նախազգուշացումն արձանագրվում է այլ սահմանված եղանակներով: Ներկայիս գիտատեխնիկական զարգացման պայմաններում կարող են նախատեսվել նաև նախազգուշացումների գրանցման համակարգչային-էլեկտրոնային եղանակներ:

Նախազգուշացումը նախատեսված է սակավաթիվ նորմերով և, որպես կանոն, հանդես է գալիս, իբրև ընտրանքային տույժի տեսակ, այն հիմնականում նախատեսված է տուգանքի հետ միասին: Մասնավորապես, այն որպես հիմնական տույժի տեսակ նախատեսված է Վարչ. օր.-ի 53[1], 72, 84, 87, 93, 110, 113, 115, 116, 119, 120, 131, 135-րդ և այլ հոդվածներով: Ընդ որում, տույժի այդ տեսակը, ինչպես արդեն նշվեց, հիմնականում հանդես է գալիս որպես այլընտրանքային տույժ՝ տուգանքի հետ զուգորդված:

Տուգանք: Տուգանքը գույքային բնույթ ունեցող վարչական տույժի տեսակ է: Տույժի այս տեսակը բնութագրվում է չափերի անհամեմատ մեծ տարբերությամբ: Նախկինում Վարչ. օր.-ի 26-րդ հոդվածով ամրագրված էին վարչական իրավախախտումների համար քաղաքացիների նկատմամբ նշանակվող տուգանքի առավելագույն չափերը. «որպես կանոն, չի կարող գերազանցել սահմանված նվազագույն աշխատավարձի 20-ապատիկը, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ 30-ապատիկը»: Ներկայումս այդ հոդվածն ամբողջովին հան-

ված է, ինչը, կարծում ենք, բավարար չափով հիմնավորված չէ:

Գործնականում դա հանգեցրել է նրան, որ սահմանված տուգանքների միջև, ըստ էության, բացակայում է անհրաժեշտ համամասնությունը և, բացի այդ, ամրագրվել են ակնհայտ մեծ չափերի հասնող, վարչական զանցանքի վտանգավորության աստիճանին ոչ համապատասխան տուգանքի չափեր:

Չնայած, օրենքի նախկին խմբագրությունն էլ իրեն ամբողջովին չէր արդարացնում, քանի որ չափերը սահմանվել էին սոսկ, որպես ուղեցույց: Հետագայում, վարչական առանձին զանցանքների համար սահմանվեցին տուգանքի անհամեմատ բարձր չափեր, ինչի համար, որպես իրավական հիմք հանդիսացավ նույն հոդվածի այն դրույթը, համաձայն որի նշված չափերը պահպանվում են. «եթե վարչական խախտումների առանձին տեսակների համար պատասխանատվությունն ուժեղացնելու կապակցությամբ այլ բան չի նախատեսվում»:

Վարչ. օր.-ի հիշյալ հոդվածում ամրագրված էր նաև տուգանքի նվազագույն չափը. «վարչական իրավախախտումների համար քաղաքացիների և պաշտոնատար անձանց նկատմամբ նշանակվող տուգանքը չի կարող պակաս լինել սահմանված նվազագույն աշխատավարձի 3 տոկոսից»:

Կարծում ենք, առավել հիմնավորված կլիներ օրենսդրությամբ հստակ ու միանշանակ սահմանել տուգանքի առավելագույն չափը, տեղ չթողնելով պատասխանատվությունն ուժեղացնելու պատճառաբանությամբ պայմանավորված որևէ բացառության: Եթե անգամ նկատվում է տուգանքի առավելագույն սահմանը գերազանցելուն հանգեցնող որևէ արարքի համար պատասխանատվությունը խստացնելու անհրաժեշտություն, ապա առավել տրամաբանական է, որ տվյալ դեպքում գործ ունենք ոչ այնքան զանցանքի, որքան հանցանքի հետ, դրանից բխող բոլոր իրավական հետևանքներով հանդերձ: Նման մոտեցումը կբացառի այն ակնհայտ անընդունելի վիճակը, երբ նույնաբնույթ վարչական զանցանքի համար սահմանվում է տուգանքի ավելի մեծ չափ, քան՝ հանցագործության համար:

Տուգանքի չափերը միշտ չէ, որ ունեն կայուն բնույթ: Մի դեպքում դրա հիմքում դրվում է նվազագույն աշխատավարձի չափը, որը բնականաբար փոփոխական մեծություն է, մեկ այլ դեպքում՝ իրավախախտման առարկա հանդիսացող ապրանքի արժեքը կամ մաքսային արժեքը և այլն:

Նվազագույն աշխատավարձը ներկայումս սահմանված է 2003թ. դեկտեմբերի 17-ին ընդունված «Նվազագույն ամսեկան աշխատավարձի մասին» ՀՀ օրենքով: Մասնավորապես, նշված օրենքի 1-ին հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետությունում նվազագույն աշխատավարձը կազմում է 32.500 դրամ: Սակայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում սահմանված տուգանքի չափերի հաշվարկման հիմքում դրվում է ոչ թե այդ գումարը, այլ՝ 1000 դրամը, ինչը բխում է նույն օրենքի 3-րդ հոդվածի պահանջներից. «ՀՀ օրենսգրքերի, օրենքների, ՀՀ Նախագահի հրամանագրերի, ՀՀ կառավարության և վարչապետի որոշումների, նախարարությունների և գերատեսչությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, առանձին իրավաբանական անձանց ակտերի իմաստով որպես հաշվարկային հիմք չի կարող ընդունվել սույն օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի չափը: Նշված ակտերում որպես հաշվարկային հիմք պահպանվում է մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող 1000 դրամ նվազագույն աշխատավարձի չափը»:

Ապրանքի արժեքի, ինչպես նաև մաքսային արժեքի կամ դրա մի մասի չափով տուգանք նշանակելը նույնպես համարվում է տուգանքի տարատեսակ: Կարծում ենք, որ տուգանքի չափի հիմքում նվազագույն աշխատավարձի չափը նախատեսելն առավել հիմնավորված ու տրամաբանական մոտեցում է, քանի որ դրանով ապահովվում է համաչափություն՝ ընդհանուր գույքային դրության, զանցանքի վտանգավորության և նշանակվող տուգանքների չափերի միջև, ինչը պայմանավորված է սոցիալական արդարության հիմնարար սկզբունքով:

Վարչական իրավախախտում կատարելու գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի հատուցմամբ վերցնելը. Վարչ. օր.-ի 27-րդ հոդվածի համաձայն «վարչական իրավախախտում կատարելու գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկան հատուցմամբ վերցնելն այն է, որ առարկան հարկադիր կարգով վերցվում է և այնուհետև իրացվում, ստացված գումարը հանձնելով նախկին սեփականատիրոջը՝ վերցված առարկայի իրացման ծախսերի պահումով: Հրազենը և զինամթերքը հատուցմամբ վերցնելը չի կարող կիրառվել այն անձանց նկատմամբ, որոնց համար որսորդությունը գոյության հիմնական աղբյուրն է: Հատուցմամբ վերցնում կիրառելու

կարգը և վերցնելու ենթակա առարկաների տեսակները սահմանվում են սույն օրենսգրքով և ՀՀ այլ օրենսդրական ակտերով»:

Տույժի այս տեսակը կարող է լինել ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ: Վարչ. օր.-ի շատ քիչ հոդվածներով է այն նախատեսված, որպես վարչական տույժ և բոլոր դեպքերում էլ կրում է այլընտրանքային բնույթ:

Այսպես, օրինակ, օրենսգրքի 191-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն «զենք պահելու համար ներքին գործերի մարմինների թույլտվություն ունեցող քաղաքացիների կողմից ողորկափող որսորդական հրազենը և ակոսավոր հրազենն ու զինամթերքը պահելու կամ փոխադրելու կանոնները խախտելը՝ առաջացնում է նախազգուշացում կամ տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի 10-20 տոկոսի չափով կամ զենքի և զինամթերքի հատուցմամբ վերցնում»:

Վարչական իրավախախտում կատարելու գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի բռնագրավում: Վարչ. օր.-ի 28-րդ հոդվածի համաձայն «Վարչական իրավախախտում կատարելու գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի բռնագրավումն այն է, որ այդ առարկան հարկադիր կարգով անհատույց դարձվում է պետական սեփականություն: Բռնագրավվել կարող է միայն այն առարկան, որը խախտողի անձնական սեփականությունն է, եթե ՀՀ օրենսդրական ակտերով այլ բան չի նախատեսված»:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն հրազենի, որսի այլ գործիքների և զինամթերքի բռնագրավում չի կարող կիրառվել այն անձանց նկատմամբ, որոնց համար որսորդությունը գոյության հիմնական աղբյուրն է:

Բռնագարավումը նույնպես կարող է կիրառվել ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ տույժ: Բռնագրավում նախատեսող հոդվածները Վարչ. օր.-ում սակավաթիվ են: Այդպիսիք են, մասնավորապես, օրենսգրքի 173-րդ (հրազենից կրակելը բնակավայրերում և դրա համար չհատկացված տեղերում կամ սահմանված կարգի խախտմամբ), 190-րդ (քաղաքացիների կողմից ողորկափող որսորդական հրազեն ձեռք բերելու, պահելու, ուրիշին տալու կամ վաճառելու կարգը խախտելը) հոդվածները: Բոլոր այդ հոդվածներում բռնագրավումը նախատեսված է որպես այլընտրանքային տույժ:

Վարչ. օր.-ի 28-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն բռնագրավում կիրառելու կարգը, բռնագրավման ոչ ենթակա առարկաների ցանկը սահմանվում է ՀՀ օրենսդրությամբ: Սակայն հարկ է նկատել, որ ինչպես Վարչ. օր.-ով, այնպես էլ այլ օրենսդրական ակտերով այդ հարաբերությունները կարգավորված չեն: Այսպիսով, բռնագրավում կարող է կիրառվել միայն այն դեպքերում, երբ այն, որպես վարչական տույժ հատուկ սահմանված է վարչական իրավախախտում նախատեսող իրավանորմերի սանկցիաներում:

Քաղաքացուն տրված հատուկ իրավունքից (տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից, որսորդական իրավունքից) զրկում: Անձանց սուբյեկտիվ իրավունքների աղբյուրներ կարող են լինել ինչպես նորմատիվ, այնպես էլ անհատական իրավական ակտերը: Երկրորդ դեպքում, մասնավորապես, հատուկ անհրաժեշտ է վարչական ակտի առկայությունը: Իրավունքից զրկելը համարվում է անձի իրավասուբյեկտության սահմանափակում:

Վարչ. օր.-ի 29-րդ հոդվածի համաձայն «քաղաքացուն տրված հատուկ իրավունքից (տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից, որսորդության իրավունքից) զրկում կիրառվում է մինչև երեք տարի ժամանակով՝ այդ իրավունքից օգտվելու կարգը կոպիտ կերպով կամ սիստեմատիկորեն խախտելու համար: Այդպիսի իրավունքից զրկելու ժամկետը չի կարող 15 օրից պակաս լինել, եթե ՀՀ օրենսդրությամբ այլ բան չի սահմանված»: Նույն այդ հոդվածի համաձայն նշված իրավունքից զրկում չի կարող կիրառվել այն անձանց նկատմամբ, որոնց համար որսորդությունը գոյության հիմնական աղբյուրն է:

Նշված տույժի տեսակն ընդհանուր մի շարք գծեր ունի լիցենզիայից զրկելու հետ: Սակայն առկա են մի շարք առանձնահատկություններ.

ա) վերջինս կիրառվում է ինչպես քաղաքացիների, այնպես էլ իրավաբանական անձանց նկատմամբ,

բ) իրավունքներից զրկելը կարող է տևել մինչև 3 տարի, մինչդեռ երկրորդ դեպքում դա արվում է անժամկետ, իսկ դա նշանակում է, որ նոր լիցենզիա ստանալու համար նորից պետք է ձեռնամուխ լինել դրա համար նախատեսված պարտավորությունների կատարմանը (թեպետ առանձին դեպքերում կարող է երկրորդ դիմումը ներկայաց-

նելու համար ժամկետ սահմանվել, օրինակ, մեկ տարի հետո):

Այսպես, օրինակ, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի (ընդունվել է 2001թ. մայիսի 30-ին) 37-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն. «սույն հոդվածի առաջին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված հիմքերով լիցենզիայի գործողության դադարեցման դեպքում անձն իրավունք ունի նոր լիցենզիա ստանալու համար դիմել միայն լիցենզիայի գործողությունը դադարեցնելուց մեկ տարի հետո»:

Թերևս իրավունքից զրկելն իր իրավական հետևանքներով համեմատաբար մոտ է լիցենզիան կասեցնելուն: Կասեցնելը նույնպես կրում է ժամանակավոր բնույթ (որպես կանոն, մինչև 3 ամիս), սակայն այն կարող է ժամկետից շուտ հանվել, եթե կատարվում են խախտումները վերացնելու վերաբերյալ պահանջները:

Օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց արտաքսումը: Ինչպես արդեն նշվեց, ներկայումս օտարերկրացիների արտաքսմանն առնչվող հարաբերությունները կանոնակարգված են «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքով, մասնավորապես օրենքի 5 գլխի նորմերն ամբողջովին նվիրված են այդ հարաբերություններին:

Նախ, 2-րդ հոդվածի համաձայն, «օտարերկրացի» հասկացությունը ներառում է ՀՀ քաղաքացի չհանդիսացող այն անձանց, որոնք ունեն այլ պետության քաղաքացիություն (օտարերկրյա քաղաքացիներ) կամ չունեն որևէ պետության քաղաքացիություն (քաղաքացիություն չունեցող անձինք): Օրենքի 3-րդ հոդվածը տարբերակում է «արտաքսում» (օտարերկրացու հարկադիր հեռացումը Հայաստանի Հանրապետությունից նրա՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվելու կամ բնակվելու օրինական հիմքերի բացակայության դեպքում) և «կոլեկտիվ արտաքսում» (առնվազն երկու օտարերկրացիներից բաղկացած խմբի արտաքսումը՝ առանց խմբի յուրաքանչյուր անդամի անհատական տվյալները և առանձնահատուկ վիճակը հաշվի առնող օբյեկտիվ և ողջամիտ քննարկման հիման վրա ընդունված որոշման) հասկացությունները:

Անձի արտաքսման հիմքերը սպառիչ սահմանված են օրենքով, այդպիսիք են, մասնավորապես, պետական կամ հասարակական կարգին սպառնալը, լրացել է մուտքի վիզայի ժամկետը և այլն:

Նշված օրենքով ամրագրված է նաև արտաքսման նպատակով

օտարերկրացուն ձերբակալելու կարգ: Մասնավորապես, այդ անձը կարող է ձերբակալվել և պահվել հատուկ կացարանում, եթե բավարար հիմքեր կան կասկածելու, որ նա կարող է թաքնվել մինչև դատարանում արտաքսման մասին գործի քննությունը կամ օրինական ուժի մեջ մտած արտաքսման որոշման կատարումը (38-րդ հոդված):

Վարչական իրավախախտման համար տույժ նշանակելու ընդհանուր կանոնները. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի համաձայն վարչական իրավախախտման համար տույժ նշանակելու ընդհանուր կանոնները հանգում են հետևյալին. «Վարչական իրավախախտման համար տույժ նշանակվում է կատարված իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտով սահմանված շրջանակներում՝ սույն օրենսգրքին և վարչական իրավախախտումների վերաբերյալ մյուս ակտերին ճիշտ համապատասխան: Տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները»:

Վարչական տույժ նշանակելու, թերևս, ամենաառանցքային սկզբունքը՝ տույժի անհատականացման սկզբունքն է: Այն հիմնականում արտացոլված է վարչական իրավախախտումների համար պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքերը հաշվի առնելով:

Վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքների օրինակելի ցանկը սահմանված է Վարչ. օր.-ի 33-րդ հոդվածում.

1) մեղավորի անկեղծ զղջումը,

2) իրավախախտման վնասակար հետևանքները մեղավորի կողմից կանխելը, պատճառված վնասը կամավոր հատուցելը կամ վերացնելը,

3) իրավախախտում կատարելը հոգեկան խիստ հուզմունքի ազդեցության տակ կամ էլ անձնական կամ ընտանեկան ծանր հանգամանքների զուգադիպությամբ,

4) իրավախախտում կատարելն անչափահասի կողմից,

5) իրավախախտում կատարելը հղի կնոջ կամ մինչև մեկ տարեկան երեխա ունեցող կնոջ կողմից:

Օրենսդրությամբ կարող են նախատեսվել վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող նաև այլ հանգամանքներ: Վարչական իրավախախտման վերաբերյալ գործը լուծող մարմինը (պաշտոնատար անձը) կարող է մեղմացուցիչ համարել նաև այնպիսի հանգամանքներ, որոնք նշված չեն օրենսդրության մեջ: Այլ կերպ ասած, օրենսդրությամբ սահմանված մեղմացուցիչ հանգամանքների ցանկը սպառիչ չէ:

Գործնականում դեռևս մեղմացուցիչ հանգամանքները հաշվի առնելու պատշաճ պրակտիկա չի ձևավորվել: Իհարկե հանդիպում են դեպքեր, երբ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննող պաշտոնատար անձը կիրառում է այլընտրանքային սանկցիայով նախատեսված առավել մեղմ տույժի տեսակը, սակայն գրեթե երբեք նման որոշումը չի պատճառաբանվում, չեն մատնանշվում այն հանգամանքները, որոնք, նկատի ունենալով, ընտրվել է առավել մեղմ տույժի տեսակը: Այս մոտեցումը թերևս բացատրվում է օրենսդրության հիշյալ դրույթների կիրառման փորձի պակասությամբ, վարչական վարույթ իրականացնող պետական մարմինների ու պաշտոնատար անձանց մասնագիտական ոչ համարժեք պատրաստվածությամբ, նրանց նկատմամբ իրականացվող անբավարար վերահսկողությամբ և այլն:

Ի տարբերություն վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքների, պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքները սպառիչ են սահմանված: Վարչ. օր.-ի 34-րդ հոդվածի համաձայն վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքներն են.

1) հակահրավական վարքագիծը շարունակելը, չնայած այն դադարեցնելու մասին դրա համար լիազորված անձանց պահանջին,

2) մեկ տարվա ընթացքում կրկին անգամ նման իրավախախտում կատարելը, որի համար անձն արդեն ենթարկվել է վարչական տույժի, իրավախախտում կատարելը նախկինում հանցագործություն կատարած անձի կողմից,

3) անչափահասին իրավախախտման մեջ ներգրավելը,

4) իրավախախտումը մի խումբ անձանց կողմից կատարելը,

5) իրավախախտումը տարերային աղետի պայմաններում կամ այլ արտակարգ հանգամանքներում կատարելը,

6) իրավախախտումը հարբած վիճակում կատարելը: Վարչական տույժ նշանակող մարմինը (պաշտոնատար անձը), նայած վարչական իրավախախտման բնույթին, կարող է տվյալ հանգամանքը ծանրացուցիչ չհամարել:

Վարչական պատասխանատվություն նշանակելու կարևոր պայմաններից է նաև վարչական տույժեր նշանակելու ժամկետների հաշվարկման հանգամանքը: Վարչ. օր.-ի 36-րդ հոդվածի համաձայն հատուկ իրավունքից զրկումը՝ հաշվվում է տարիներով, ամիսներով կամ օրերով:

Վարչական տույժ նշանակելու ընդհանուր ժամկետները սահմանված են Վարչ. օր.-ի 37-րդ հոդվածով. վարչական տույժ կարող է նշանակվել իրավախախտումը կատարելու օրվանից ոչ ուշ, քան *2 ամսվա* ընթացքում, իսկ շարունակվող և տևող իրավախախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից 2 ամսվա ընթացքում: Քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական գործը կարճելու դեպքում, բայց երբ խախտողի գործողություններում առկա են վարչական իրավախախտման նշաններ, վարչական տույժը կարող է նշանակվել քրեական գործի հարուցումը մերժելու կամ այն կարճելու մասին որոշում կայացվելու օրվանից ոչ ուշ, քան *մեկ ամսվա* ընթացքում:

Ընդ որում, համաձայն օրենսգրքի 38-րդ հոդվածի, եթե վարչական տույժի ***կատարումն ավարտվելու օրվանից*** մեկ տարվա ընթացքում նոր վարչական իրավախախտում չի կատարվել, ապա այդ անձը համարվում է վարչական տույժի չենթարկված: Այս հանգամանքի վրա հատուկ ուշադրություն պետք է դարձնել, քանի որ առանձին դեպքերում հաշվարկի ճշտությունից է կախված ոչ միայն վարչական զանցանքների, այլև հանցագործությունների համարժեք որակման հարցի լուծումը:

Ժամկետի սկզբի համար սկզբնական է համարվում իրավախախտում կատարելուն հաջորդող օրը: Կարևոր նախապայման է ամրագրված նաև Վարչ. օր.-ի 40-րդ հոդվածով. «վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ»:

Իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող տույժերը: Նկատի ունենալով, որ արդեն անդրադարձել ենք իրավաբանական

անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտի հիմնադրույթներին, սույն հատվածում նպատակահարմար ենք գտնում լուսաբանել բացառապես իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող տույժերի հարցը:

Հարկ է նկատել, որ որևէ օրենսդրական ակտով սահմանված չէ բացառապես իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող վարչական տույժերի սպառիչ ցանկը, սակայն դրանց մասին կարելի է պատկերացում կազմել, դատելով իրավաբանական անձանց համար վարչական պատասխանատվություն սահմանող օրենսդրական ակտերի վերլուծությամբ:

Այսպես, ամփոփ վերլուծությունը ցույց է տալիս, որ իրավաբանական անձանց նկատմամբ կարող են կիրառվել հիմանականում հետևյալ տույժի տեսակները՝

1) նախազգուշացում,
2) տուգանք,
3) լիցենզիայի գործողության կասեցում,
4) լիցենզիայի գործողության դադարեցում,
5) գույքի բռնագրավում,
6) գործունեության կասեցում,
7) գործունեության դադարեցում:

Այս ցանկը սպառիչ չէ, այլ օրենսդրական ակտերով կարող են նախատեսվել նաև վարչական տույժի այլ տեսակներ: Ընդհանուրը, թերևս, այս տույժի տեսակների պարագայում այն է, որ դրանք ունեն գույքային բնույթ, ուղղված են իրավաբանական անձի գույքային իրավունքների սահմանափակմանը: Կարևոր է նկատել, որ միևնույն իրավախախտման համար իրավաբանական անձի պատասխանատվությունը չի բացառում համապատասխան պաշտոնատար անձի պատասխանատվությունը: Այս մոտեցումն ամրագրված է նաև այն երկրների քրեական օրենսդրությամբ, որոնք նախատեսում են իրավաբանական անձանց քրեական պատասխանատվություն:

Իրավաբանական անձանց նկատմամբ վարչական պատասխանատվությանը զուգահեռ ներկայումս մեր երկրում ձեռնարկվում են քայլեր նաև վերջիններիս համար քրեական պատասխանատվություն սահմանելու ուղղությամբ:

ԳԼՈՒԽ 19.
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐՈՎ ՎԱՐՈՒՅԹԸ

§1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարույթի հասկացությունը և իրավական հիմքերը

«Վարչական վարույթ» հասկացության բնորոշումը տրված է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածով. «Վարչական վարույթը վարչական մարմնի՝ վարչական ակտ ընդունելուն ուղղված գործունեությունն է»: Այս ընդհանուր բնորոշումը, որոշ վերապահումներով հանդերձ, տարածվում է նաև վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարույթի վրա, մասնավորապես վերջինս օժտված է նկատելի առանձնահատկություններով: Ընդ որում, հիշյալ օրենքը ևս սահմանում է, որ օրենքներով և միջազգային պայմանագրերով կարող են սահմանվել առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկություններ:

Օրենսդրական ակտերում բացակայում է «վարչական իրավախախտման վերաբերյալ գործով վարույթ» հասկացության բնորոշումը, սակայն դրանց վերլուծությունը հնարավորություն է տալիս ամփոփ տեսքով ներկայացնելու հետևյալ բնորոշումը. ***Վարչական իրավախախտման վերաբերյալ գործով վարույթը վարչական զանցանքի հիմքով հարուցվող և իրավասու վարչական մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից վարչական զանցանքի վերաբերյալ գործի քննության և արդյունքներով որոշում կայացնելու գործառույթներն են***: Ինչ վերաբերում է դատարանների կողմից վարչական իրավախախտման վերաբերյալ գործեր քննելուն, ապա այն կարգավորվում է բացառապես վարչական դատավարությամբ:

Կախված վարույթի ծավալից և բարդությունից, կարելի է առանձնացնել ***պարզեցված կամ արագացված վարույթ***, երբ, օրինակ իրավախախտը տուգանվում է անմիջապես տեղում, ինչպես նաև ***հատուկ վարույթ,*** երբ տվյալ գործի քննության ընթացակարգի համար սահ-

մանվում են առանձնահատկություններ:

Վարչ. օր.-ի 245-րդ հոդվածում վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի խնդիրները ներկայացված են հետևյալ կերպ. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի խնդիրներն են՝ յուրաքանչյուր գործի հանգամանքները ժամանակին, համակողմանիորեն, լրիվ և օբյեկտիվորեն պարզելը, գործն օրենսդրությանը ճիշտ համապատասխան լուծելը, ընդունված որոշման կատարումն ապահովելը, ինչպես նաև վարչական իրավախախտումների կատարմանը նպաստող պատճառներն ու պայմանները բացահայտելը, իրավախախտումները կանխելը, քաղաքացիներին օրենքները պահպանելու ոգով դաստիարակելը, օրինականությունն ամրապնդելը»:

Լինելով վարչական իրավունքի նորմերով կարգավորվող գործադիր-կարգադրիչ գործունեության տարատեսակ, վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթին նույնպես բնորոշ են հիշյալ գործունեության սկզբունքները:

Վարչական վարույթի խնդիրներն իրականացվում են ապացուցման միջոցով, որն իր մեջ ընդգրկում է ապացույցների բացահայտումը, վարույթային ձևակերպումը և հետազոտումը: Ապացույցներ են համարվում այն փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով սահմանված կարգով հաստատվում են գործի հանգամանքները (Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 251-րդ հոդված): Ապացույցներից պետք է տարբերել ապացույցների աղբյուրները, որոնք իրենցից ներկայացնում են փաստական տվյալներ համարվող տեղեկատվության պահպանման և հաղորդման միջոցները:

Տեղեկությունը կարող է դիտվել որպես ապացույց երկու պայմանների առկայության պարագայում՝ ***ապացույցները պետք լինեն թույլատրելի և վերաբերելի***: Ապացույցների թույլատրելիության պահանջը Վարչ. օր.-ում ուղղակիորեն սահմանված չէ, սակայն այս դեպքում հիմք պետք է ընդունել ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի երկրորդ մասով ամրագրված հետևյալ դրույթը. «արգելվում է օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործումը»: Ապացույցների վերաբերելիությունը բխում է Վարչ. օր.-ի 251-րդ հոդվածից, որին անդրադարձանք վերևում:

Գիտագործնական մեծ նշանակություն ունի ապացույցների դասակարգումն՝ ըստ համապատասխան աղբյուրների: Մասնավորապես, այդ հատկանիշի հիման վրա առանձնացվում են հետևյալ ապացույցները՝

1) վարչական պատասխանատվության ենթարկվող անձի, տուժողի, վկայի և վարույթի այլ մասնակիցների ***բացատրություններն ու ցուցմունքները***: Վարչական վարույթին բնորոշ է ոչ միայն գրավոր, այլև բանավոր կարգով բացատրություններ վերցնելը,

2) ***փորձագետի եզրակացությունը***: Համաձայն Վարչ. օր.-ի 272-րդ հոդվածի, փորձագետ նշանակում է այն մարմինը կամ պաշտոնատար անձը, որի վարույթում գտնվում է վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, այն դեպքում, երբ հատուկ գիտելիքների անհրաժեշտություն է զգացվում,

3) ***իրեղեն ապացույցները և փաստաթղթերը***: Իրեղեն ապացույցներ են հանդիսանում նյութական աշխարհի այն առարկաները, որոնք իրենց վրա կրում են իրավախախտման հետքեր (օրինակ, խազերն ավտոմեքենայի վրա, ճմրթված անձնագիր և այլն) կամ որոնք իրենց ձևով, բովանդակությամբ վկայում են խախտման առկայության մասին (թմրանյութեր, ձնորսական ցանց և այլն): Իրեղեն ապացույցները տեղեկությունը պարունակում են մաքուր, չձևափոխված վիճակում՝ բացառելով վարույթ իրականացնող անձի կողմից առանց որևէ արտաքին ներգործություն,

4) վարչական զանցանքներ քննելու իրավասությամբ օժտված անձանց ***անմիջական դիտարկումները***: Քրեական դատավարությունում այդպիսի ապացույցի տեսակ չի թույլատրվում. հանցանքին ականատես պաշտոնատար անձը հանդես է գալիս որպես վկա: Վարչական վարույթում այդպիսի ապացույցների օգտագործումն ապահովում է վարույթի օպերատիվությունը. առանց դրանց ՊԱՏ-ի, մաքսային ծառայության, որսորդիսկողության աշխատակիցների համար անհամեմատ դժվար, իսկ առանձին դեպքերում անհնարին կլիներ իրականացնել իրենց իրավապահական լիազորությունները: Պաշտոնատար անձի դիտարկումներն (բացառությամբ պարզեցված վարույթների) անմիջապես ամրագրվում են հատուկ արձանագրությամբ կամ իրավախախտման մասին արձանագրությամբ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վա-

ռույթի փուլերն են՝ ա) վարչական հետաքննություն, բ) վարչական գործերի քննություն, գ) որոշումների վերանայում և դ) որոշումների կատարում: Ժամանակագրական առումով նշված փուլերը հաջորդում են միմյանց շարադրված հերթականությամբ:

Վարչական ***հետաքննության փուլը*** հաճախ անվանվում է նաև վարչական գործ հարուցելու փուլ: Այդ անվանումը հիմնավորված է, քանի որ հենց այդ փուլով է սկսվում վարչական վարույթը: Այս փուլում պարզվում են արարքի կատարման փաստը, իրավախախտման հանգամանքները, պատասխանատվությունը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները, մեղավորին վերաբերող տվյալները և կազմվում է արձանագրություն:

Երկրորդ՝ ***վարչական գործերի քննության փուլում*** իրավասու պետական մարմինը կամ պաշտոնատար անձը քննարկում են նյութերը և ընդունում որոշումներ, որոնք երրորդ փուլում կարող են վերանայվել:

Երրորդ՝ ***որոշումների վերանայման փուլը*** համարվում է ոչ պարտադիր, այն ավարտվում է ընդունված որոշումը վերացնելու, փոփոխելու կամ ուժի մեջ թողնելու մասին որոշում կայացնելով:

Չորրորդ՝ ***որոշումների կատարման փուլը*** որոշումների կատարումը, սկսվում է այն ընդունելուց կամ բողոքարկելուց հետո այն ուժի մեջ թողնելուց, ինչպես նաև փոփոխելուց հետո:

Արագացված վարույթների առկայության պարագայում վերոհիշյալ փուլերը հստակ սահմանազծված չեն, առանձին դեպքերում դրանք նույնիսկ միաձուլված են: Այսպես, տեղում տուգանելու դեպքում միաժամանակ իրականացվում են հետաքննությունը և որոշման կատարումը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթում ներառված գործողությունների համար սահմանված են ***ժամկետներ***, որով ապահովվում է քննության օպերատիվության սկզբունքը, ինչպես նաև վարույթի մասնակիցների իրավունքների երաշխավորվածությունը: Անհարկի ձգձգումները երբեմն դժվարացնում կամ անհնարին են դարձնում իրավախախտումների բացահայտումը: Ժամկետները լինում են ***ընդհանուր և հատուկ***: Օրինակ, ընդհանուր ժամկետ է սահմանված Վարչ. օր.-ի 277-րդ հոդվածի 1-ին մասով, որի համաձայն, վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը

քննվում են վարչական իրավախախտման մասին արձանագրությունը և մյուս նյութերը գործի քննության համար լիազորված մարմնի (պաշտոնատար անձի) կողմից ստանալու օրվանից սկսած 15-օրյա ժամկետում: Նույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով ամրագրված են առանձին վարչական զանցանքների քննության համար նախատեսված հատուկ ժամկետներ՝ 1 օր, 3 օր, 5 օր, 7 օր և այլն:

Իրենց իրավական նշանակությամբ ժամկետները լինում են ***վարչական, վաղեմության և հարկադրանքի ներգործության***: Այսպես, օրինակ, *վարչական ժամկետներ* են սահմանված Վարչ. օր.-ի 277-րդ հոդվածում, որում ամրագրված են վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննելու ընդհանուր և հատուկ ժամկետները:

Վարչական ***գործերի ենթակայության*** հարցի ճիշտ լուծումը նպաստում է վարչական վարույթի արդյունավետությանը, որակյալ քննության ապահովմանը: Ենթակայությունը պայմանավորված է վարչական մարմնի իրավասությամբ: Իրավասության և ենթակայության փոխհարաբերության շուրջը տեսական գրականությունում զանազան կարծիքներ են ձևավորվել: Հեղինակների մի մասը (օրինակ, Բ.Մ. Լազարև) ենթակայությունը համարում է իրավասության բաղկացուցիչ մաս[1]: Ըստ Յու.Ստարիլովի՝ իրավասությունը պետական կամ հասարակական իշխանության սուբյեկտի իրավական հատկությունն է, մինչդեռ ենթակայությունը՝ դա այն օբյեկտների իրավական հատկությունն է, որոնց նկատմամբ իրականացվում է այդ իշխանությունը[2]: Առավել հիմնավոր է դիտվում Դ.Ն. Բախրախի տեսակետը. «Կապված լինելով իրավասության հետ, ենթակայությունն օրենսդրությամբ կարգավորված որոշակի կապ է իրավահարաբերության կողմերի միջև և իրավասության այն տարրն է, որը փոխկապակցում է իրավասու մարմինների լիազորությունը իշխանության ներգործության որոշակի օբյեկտների հետ, որոշում է նրանց առարկայական, տարածքային սահմանները»[3]: Մյուս կողմի համար ենթակայությունը ենթադրում է վերջինիս իրավական կախվածությունը գործերը քննելու լիազորությամբ օժտված մարմիններից:

---

[1] Տե՛ս, Лазарев Б.М. Государственная служба. Москва. 1993. էջ 58:
[2] Տե՛ս, Старилов Ю.Н. Служебное право. Учебник. – Москва. 1996. էջ 226.
[3] Տե՛ս, Бахрах Д. Административная ответственнсть. Учебное пособие. Москва. 1999. էջ 112:

Ենթակայությունը լինում է ընդհանուր և հատուկ: Ընդհանուր ենթակայությունը կարգավորված է վարույթի ընդհանուր իրավանորմերով, մինչդեռ հատուկը՝ վարույթի առանձնահատկություններ սահմանող իրավանորմերով: Վարչական վարույթի շրջանակներում վարչական մարմինների մի մասը վարչական գործերով լիազորված է իրականացնելու միայն հետաքննություն, մյուսները՝ քննելու և որոշումներ ընդունելու, իսկ երրորդները՝ քննելու որոշման դեմ բերված բողոքները:

Վարչական հարկադրանքի միջոցները կոչված են նպաստելու վարչական վարույթի իրականացման բնականոն ընթացքը: Դրանք նախատեսված են Վարչ. օր.-ի «Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթը» վերտառությամբ 4 հատվածի նորմերով: Ըստ կիրառման ոլորտների, լինում են ա) ***կազմակերպությունների նկատմամբ*** և բ) ***ֆիզիկական անձանց նկատմամբ*** կիրառվող հարկադրանքի միջոցներ: Ըստ իրականացվող հարկադրանքի բովանդակության ընդունված է վերջիններիս հետևյալ դասակարգումը՝ ա) ***անձնական ոչ գույքային իրավունքների սահմանափակմանն ուղղված միջոցներ***՝ բերման ենթարկելը, ձերբակալումը, անձի զննումը և այլն և բ) ***գույքային իրավունքների սահմանափակմանն ուղղված միջոցներ***՝ գույքը վերցնելը, զննելը, դրա վրա կալանք դնելը, տրանսպորտային միջոցները և այլ գույքը վերցնելը, տրանսպորտային միջոցներ վարելն արգելելը և այլն:

Վարչական հարկադրանքի կիրառման հիմքերը նախատեսված են Վարչ. օր.-ի 259-րդ հոդվածով, համաձայն որի. «Հայաստանի Հանրապետության օրենսդրական ակտերով ուղղակիորեն նախատեսված դեպքերում, վարչական իրավախախտումները կանխելու նպատակով, եթե սպառվել են ներգործության մյուս միջոցները, անձը պարզելու, վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու նպատակով, եթե տեղում այն կազմելը հնարավոր չէ և եթե արձանագրություն կազմելը պարտադիր է, գործերի ժամանակին ու ճիշտ քննումը և վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով որոշումների կատարումն ապահովելու նպատակով թույլատրվում են անձի վարչական ձերբակալում, անձնական զննում, իրերի զննում և իրերի ու փաստաթղթերի վերցնում»:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վա-

ղությի իրավական հիմքերը բազմաբնույթ են: Գործող օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ ներկայումս առկա է քննարկվող հարաբերությունների կարգավորմանը նվիրված իրավական ակտերի աճի միտում: Ի տարբերություն քրեական և քրեական դատավարության օրենսդրության, վարչական վարույթի վերաբերյալ օրենսդրությունը համարվում է վարչական իրավունքի բաղկացուցիչ մասը. վերջիններս կազմում են մեկ միասնական ամբողջություն: Վարչական իրավունքը, միաժամանակ, իրենից ներկայացնում է նյութական և վարութային իրավունքի նորմերի համակցություն: Հաճախ նորմատիվ ակտերը միաժամանակ բովանդակում են և՝ նյութական, և՝ վարութային նորմեր:

Անհրաժեշտ է նկատել, որ ֆիզիկական անձանց վարչական պատասխանատվության համար նախատեսված դրույթներն ամբողջությամբ կիրառելի չեն կազմակերպությունների վարչական պատասխանատվության վարույթի պարագայում: Վերջիններիս վարչական պատասխանատվության վարույթի առանձնահատկությունները սահմանված են առանձին օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերով:

Այսպես, օրինակ, «Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության մասին» ՀՀ օրենքով սահմանված են ինչպես քաղաքաշինության բնագավառում վարչական զանցանքները, այնպես էլ դրանց առնչությամբ վարչական գործերի քննության իրավական հիմքերը: Ընդ որում, ըստ այդ օրենքի 3-րդ հոդվածի. «օրենքի գործողությունը տարածվում է քաղաքաշինական գործունեության բնագավառում աշխատանքներ իրականացնող իրավաբանական անձանց վրա»:

Ընդհանրապես, ողջունելի է իրավաբանական անձանց կազմակերպությունների վարչական պատասխանատվության վարույթի առանձնահատկություններն օրենսդրական կարգով սահմանելը: Ցավոք, առանձին օրենսդրական ակտերով (հատկապես, հարկային օրենսդրության պահանջների խախտումների համար պատասխանատվություն սահմանող իրավական ակտերը), այս կարևոր հարցադրումն անտեսված է: Բազմաթիվ դրույթներ կարելի է մատնանշել, որտեղ կոնկրետացված չեն, թե դրանք վերաբերում են միայն ֆիզիկական անձանց, թե՝ նաև իրավաբանական անձանց: Այսպես, օրինակ,

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի (14.04.97) 26-րդ հոդվածի համաձայն «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով չգրանցված կամ լիցենզիա չունեցող անձանցից ձեռնարկատիրական կամ լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու դեպքում (ապօրինի գործունեություն) գանձվում է տուգանք՝ այդ գործունեության արդյունքում հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված իրացման շրջանառության (համախառն եկամտի) 50 տոկոսի չափով»: Արտաքուստ կարող է թվալ, թե այս դրույթը հավասարապես վերաբերում է նաև ֆիզիկական անձանց, սակայն խնդիրն այն է, որ նույնպիսի զանցանք է նախատեսում նաև բացառապես ֆիզիկական անձանց պատասխանատվությանն առնչվող Վարչ. օր.-ի 169-րդ հոդվածը:

§2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարույթի մասնակիցները

Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթը կազմված է մի շարք վարչական մարմինների, ինչպես նաև անձանց որոշակի գործողություններից: Վարույթի մասնակիցների մի մասը պաշտպանում է իր շահերը, իսկ մյուս մասը ներգրավվում է վարութային գործողություններին և օժանդակում վարույթին: Այսպիսով, վարույթի մասնակիցներն ունեն տարբեր լիազորություններ և խնդիրներ, որոնց հիման վրա և կատարվում է վերջիններիս դասակարգումը՝

1) ***իշխանության ակտեր ընդունելու և վարույթի ողղվածությունն ու ընթացքը կանխորոշող իրավական փաստաթղթեր կազմելու իրավասությամբ օժտված պետական մարմինները և պաշտոնատար անձինք***: Այդպիսիք են, մասնավորապես՝ ա) պետական մարմինները և պաշտոնատար անձինք, որոնք կարող են որոշումներ (սանկցիաներ նշանակելու, գործը կարճելու մասին և այլն) ընդունել վարչական գործի առնչությամբ, վերացնել և փոփոխել դրանք, բ) պետական և հասարակական կազմակերպություններ և նրանց լիազորված ներկայացուցիչներ, որոնք հիմքեր են ստեղծում վարութային որոշումներ ընդունելու, փոփոխելու և վերացնելու համար, մասնավորապես կազմում են իրավախախտումների մասին արձանագրություններ, նյութերն ու-

ղարկում են ըստ ենթակայության, բողոքարկում են որոշումները և այլն և գ) որոշումները կատարող մարմիններ և պաշտոնատար անձինք՝ գործադիր տնօրեններ, հաշվապահներ, հարկադիր կատարողներ և այլն,

2) գործում անձնական շահ ունեցող սուբյեկտները՝ պատասխանատվության ենթարկվող անձը, տուժողը և նրանց օրինական ներկայացուցիչները և փաստաբանները: Ի տարբերություն առաջին խմբի, այս անձինք չունեն իշխանական լիազորություններ,

3) վարույթին օժանդակող անձինք՝ վկաները, փորձագետները, մասնագետները, թարգմանիչները և ընթերականները: Վկաները և փորձագետները տվյալներ են հաղորդում իրավասու մարմիններին: Իսկ թարգմանիչները և ընթերականներն անհրաժեշտ են ապացույցներն ամրապնդելու կամ վարչական վարույթի բնականոն ընթացքն ապահովելու համար:

Վարույթի մասնակիցների լիազորությունները կարգավորված են Վարչ. օր.-ի 21-րդ գլխի նորմերով: Օրենսգրքում, մասնավորապես, սահմանված են վարչական պատասխանատվության ենթարկվող անձի (267-րդ հոդված), տուժողի (268-րդ հոդված), օրինական ներկայացուցչի (269-րդ հոդված), փաստաբանի (270-րդ հոդված), վկայի (271-րդ հոդված), փորձագետի (272-րդ հոդվածի), թարգմանի (273-րդ հոդվածի) իրավունքներն ու պարտականությունները:

Այսպես, Վարչ. օր.-ի 267-րդ հոդվածի համաձայն, վարչական ***պատասխանատվության ենթարկվող անձը*** իրավունք ունի ծանոթանալու գործի նյութերին, բացատրություններ տալու, ապացույցներ ներկայացնելու, միջնորդություններ հարուցելու, գործի քննության ընթացքում օգտվելու փաստաբանի իրավաբանական օգնությունից, ելույթ ունենալու մայրենի լեզվով և օգտվելու թարգմանի ծառայությունից, եթե չի տիրապետում այն լեզվին, որով տարվում է վարույթը: Վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննվում է վարչական պատասխանատվության ենթարկվող անձի ներկայությամբ: Գործը կարող է այդ անձի բացակայությամբ քննվել, եթե գործի քննության տեղի և ժամանակի մասին վերջինս պատշաճ ծանուցվել է և, եթե նրանից միջնորդություն չի ստացվել գործի քննությունը հետաձգելու մասին: Միաժամանակ, անհրաժեշտ է նկատել, որ ***Վարչ. օր.-ի մի շարք հոդվածներով (40[1], 40[3]-40[6], 53-րդ հոդվածներ, 147-րդ***

հոդվածի երկրորդ մաս, 172-րդ հոդված, 175-րդ հոդվածի երրորդ մաս, 182-րդ և 185-րդ հոդվածներ) նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելիս վարչական պատասխանատվության ենթարկվող անձի ներկայությունը պարտադիր է:

«Տուժող» հասկացության բնորոշումը համընկնում է քրեական դատավարության օրենսդրությամբ տրված բնորոշման հետ. մասնավորապես, այն բնորոշվում է հետևյալ կերպ. տուժող է ճանաչվում այն անձը, որին իրավախախտման հետևանքով պատճառվել է բարոյական, ֆիզիկական և գույքային վնաս: Այս դեպքում տարբերությունը դրսևորվում է միայն նրանում, որ քրեական դատավարության օրենսդրությունը տուժող է ճանաչում նաև անձին, «ում կարող էր անմիջականորեն պատճառվել բարոյական, ֆիզիկական և գույքային վնաս, եթե ավարտվեր քրեական օրենսգրքով արգելված արարք կատարելը»: Վարչական պատասխանատվության օրենսդրությունը վերջին տարբերակն ընդունելի չի կարող համարել, քանի որ վարչական զանցանքը, ի տարբերություն քրեական հանցագործության, փուլեր չունի. այլ կերպ ասած վարչական պատասխանատվություն սահմանված է բացառապես ավարտված զանցանքի համար:

Տուժողն իրավունք ունի ծանոթանալու գործի բոլոր նյութերին, միջնորդություններ հարուցելու, վարչական իրավախախտման գործով կայացված որոշման դեմ բողոք բերելու, տուժողը կարող է հարցաքննվել, որպես վկա: Այսպիսով, ի տարբերություն, քրեական դատավարության օրենսդրության, վարչական պատասխանատվության օրենսդրությունը համեմատաբար լայն իրավական հնարավորություններ է ընձեռում տուժողի համար:

Վարչական վարույթի փուլում որոշակի լիազորություններ ունեն *օրինական ներկայացուցիչները*: Նշված հոդվածի համաձայն. «վարչական պատասխանատվության ենթարկվող անձի և տուժողի շահերը, որոնք անչափահասներ են կամ այնպիսի անձինք, որոնք իրենց ֆիզիկական կամ հոգեկան պակասությունների հետևանքով անձամբ չեն կարող իրականացնել վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով իրենց իրավունքները, իրավունք ունեն ներկայացնելու նրանց օրինական ներկայացուցիչները (ծնողները, որդեգրողները, խնամակալները, հոգաբարձուները)»:

Փաստաբանի լիազորությունները վարչական վարույթում սահ-

մանված են ակնհայտ ընդհանուր ձևակերպումներով. «վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը մասնակցող փաստաբանը իրավունք ունի ծանոթանալու գործի բոլոր նյութերին. միջնորդություններ հարուցելու. իրեն հրավիրած անձի հանձնարարությամբ նրա անունից գանգատներ բերելու գործի որոշման դեմ» (270-րդ հոդված), սակայն դրանք սպառիչ չեն, քանի որ վերջինս օգտվում է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով ամրագրված լիազորություններից:

Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի ***վկա*** կարող է կանչվել այն անձը, որին կարող է հայտնի լինել տվյալ գործի պարզաբանման ենթակա որևէ հանգամանք: Վկայի պարտականություններն այս պարագայում համանման են քրեական դատավարության շրջանակներում հանդես եկող վկայի կարգավիճակին: Նկատենք, սակայն, որ քաղաքացիական և քրեական դատավարությունում վկան վերոհիշյալ պարտականությունները չկատարելու համար քրեական պատասխանատվություն է կրում (ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ և 339-րդ հոդվածներ), մինչդեռ վարչական վարույթով նախատեսված պարտականությունները չկատարելու համար որևէ պատասխանատվություն սահմանված չէ:

Հավելենք, որ ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածով ամրագրված դրույթները տարածվում են նաև վարչական վարույթի վրա. «ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ»:

Հատուկ գիտելիքների անհրաժեշտության դեպքում վարչական վարույթ իրականացնող մարմինը կամ պաշտոնատար անձը նշանակում է ***փորձաքննություն***: Փորձագետը պարտավոր է ներկայանալ կանչով և տալ անաչառ եզրակացություն՝ իրեն առաջադրված հարցերի վերաբերյալ: Փորձագետն իրավունք ունի՝ ծանոթանալու գործի՝ փորձաքննության առարկային վերաբերող նյութերին, միջնորդություն հարուցելու եզրակացություն տալու համար իրեն անհրաժեշտ լրացուցիչ նյութեր տրամադրելու մասին, այն մարմնի կամ պաշտոնատար անձի թույլտվությամբ, որի վարույթում է գտնվում վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, փորձաքննության առարկային վերաբերող հարցեր տալու պատասխանատվության ենթարկվող անձին, տուժողին, վկաներին և ներկա լինելու գործի քննությանը:

Մաքսային կանոնների խախտումների վերաբերյալ գործերով փորձաքննություն նշանակելու և կատարելու կարգը նախատեսված է ՀՀ մաքսային օրենսգրքի 216-րդ հոդվածով:

Անհրաժեշտ է նկատել, որ փորձաքննության բնականոն ընթացքն ապահովելու համար մեծ նշանակություն ունի փորձաքննության համար համապատասխան նմուշներ վերցնելու լիազորությունը: Ի դեպ, այդ գործողությունը հանգամանորեն կանոնակարգված է ՀՀ մաքսային օրենսգրքի 215-րդ հոդվածով, համաձայն որի. «մաքսային կանոնների խախտումների վերաբերյալ գործերի քննության ընթացքում մաքսային մարմինների պաշտոնատար անձինք իրավունք ունեն վերցնել պատրաստի արտադրանքի, հումքի, նյութերի, ձեռագրերի և ապրանքների հատկությունները բնութագրող նմուշներ կամ փորձանմուշներ, եթե դրանց հետազոտումն անհրաժեշտ է գործի քննության համար»: Կարծում ենք, որ նմանաբնույթ նորմ նպատակահարմար է նախատեսել նաև Վարչ. օր.-ով:

Վարույթի մյուս մասնակցին՝ ***թարգման*** նշանակում է վարչական վարույթ իրականացնող մարմինը կամ պաշտոնատար անձը: Թարգմանը պարտավոր է ներկայանալ վարչական վարույթ իրականացնող մարմնի պահանջով և լրիվ ու ճշտությամբ կատարել իրեն հանձնարարված թարգմանությունը:

Վարչ. օր.-ի 274-րդ հոդվածում կանոնակարգված է նաև տուժողներին, վկաներին, փորձագետներին և թարգմաններին վճարելու համար նախատեսված վարչական վարույթի ծախսերը կատարելու կարգը: Ըստ այդ հոդվածի. «որպես տուժողներ, վկաներ, փորձագետներ և թարգմանիչներ կանչվող անձանց աշխատավարձը սահմանված կարգով պահպանվում է ըստ նրանց աշխատանքի վայրի, այն մարմնի (պաշտոնատար անձին) ներկայանալու կապակցությամբ բացակայելու ժամանակամիջոցի համար, որի վարույթում գտնվում է վարչական իրավախախտման վերաբերյալ գործը»: Կարծում ենք, որ վարչական վարույթի ծախսերի մարման հիշյալ եղանակը հիմնավորված չէ, այն չի բխում վարույթի մասնակիցների իրական կարգավիճակից և վարչական ծախսերի վերաբերյալ իրավական հիմնադրույթներից: Թերևս, առավել հիմնավորված է թվում այդ ծախսերն ամբողջությամբ կամ մասամբ իրավախախտի վրա դնելը, ինչն ընդունված է, օրինակ, ՀՀ քր. դատ. օր.-ով (169-րդ հոդված):

Վարչ. օր.-ով քաղաքացիական հայցվորն ու քաղաքացիական պատասխանողը նախատեսված չեն, որպես վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթին մասնակցող անձինք: Սակայն դա բնավ չի նշանակում, որ վարչական իրավախախտումներից բխող հարաբերություններում մասնակցող անձինք չեն կարող առանձին հանդես գալ քաղաքացիական հայցվորի կամ քաղաքացիական պատասխանողի կարգավիճակով:

§3. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննությունը, որոշում ընդունելը, այն բողոքարկելը և կատարելը

Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի հարուցումը հանդիսանում է վարչական վարույթի սկզբնական փուլ: Այն իրենից ներկայացնում է զանցանքին առնչվող հանգամանքները պարզելուն, դրանք արձանագրելուն և արարքի որակմանն ուղղված դատավարական գործողությունների ամբողջություն: Այս փուլում ստեղծվում են նախադրյալներ՝ գործի արագ և անաչառ քննության, մեղավորի նկատմամբ օրենքով նախատեսված ներգործության միջոցներ կիրառելու համար:

Գործ հարուցելու հիմքը անձի կողմից վարչական զանցանքի հատկանիշներ պարունակող արարք կատարելն է: Վարչական գործ հարուցելուն նախորդում է զանցանքի մասին հաղորդում ստանալը կամ վարչական մարմնի կողմից իր գործառույթներն իրականացնելիս իրավախախտման փաստ արձանագրելը: Իրավախախտումն անմիջականորեն հայտնաբերելու հանգամանքը խոչընդոտ չէ տվյալ անձի կողմից գործի հետագա քննությունն իրականացնելու համար: Այս մոտեցումն էապես տարբերվում է քրեական դատավարությունում ընդունված կանոններից, համաձայն որոնց գործով վկա պաշտոնատար անձն իրավասու չէ քննություն տանել:

Վարչ. օր.-ի 247-րդ հոդվածով ամրագրված են ***վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթը բացառող հանգամանքները.***

«1) վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայությունը,

2) եթե անձը վարչական իրավախախտում կատարելու պահին չի

հասել 16 տարեկան հասակի,

3) հակահիրավական գործողություն կամ անգործություն կատարած անձի անմեղսունակությունը,

4) անձի գործողությունը ծայրահեղ անհրաժեշտության կամ անհրաժեշտ պաշպանության վիճակում,

5) համաներման ակտի հրատարակումը, եթե այն վերացնում է վարչական տույժի կիրառումը,

6) վարչական պատասխանատվություն սահմանող ակտի վերացումը,

7) վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության պահին սույն օրենսգրքի 37-րդ հոդվածով նախատեսված ժամկետները անցնելը,

8) վարչական պատասխանատվության ենթարկվող անձի նկատմամբ վարչական տույժ նշանակելու մասին իրավասու մարմնի (պաշտոնատար անձի) որոշման առկայությունը նույն փաստի վերաբերյալ, կամ ընկերական դատարանի չբեկանված որոշման առկայությունը, եթե նյութերն ընկերական դատարանին են հանձնվել տվյալ գործով վարչական տույժ նշանակելու իրավունք ունեցող մարմնի (պաշտոնատար անձի) կողմից, կամ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը կարճելու մասին չբեկանված որոշման առկայությունը, ինչպես նաև տվյալ փաստով քրեական գործի առկայությունը,

9) այն անձի մահը, որի նկատմամբ սկսված է եղել գործի վարույթը»:

Քննություն իրականացնող սուբյեկտներն օժտված են լայն իրավունքներով, նրանք կարող են քաղաքացիներից և պաշտոնատար անձանցից պահանջելու բացատրություններ, ներկայացնելու անհրաժեշտ փաստաթղթեր, իրավախախտողին բերման ենթարկելու ոստիկանություն, կիրառելու հարկադրանքի այլ միջոցներ և այլն: Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործ հարուցելու փուլում, ըստ էության, կատարվում է, այսպես կոչված, վարչական հետաքննություն:

Գործող օրենսդրությամբ վարչական հետաքննության համար ժամկետ սահմանված չէ: Ժամկետներ սահմանված են միայն վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրությունը և

մյուս նյութերը գործի քննության համար լիազորված մարմնի (պաշտոնատար անձի) կողմից ստանալու օրվանից սկսած վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության համար՝ Վարչ. օր.-ի 277-րդ հոդված): Սակայն օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ այն չի կարող գերազանցել վարչական պատասխանատվության համար սահմանված երկամսյա ժամկետը:

Գործող օրենսդրությամբ սահմանված չէ նաև վարչական գործ հարուցելու սկզբնական պահը: Ինչպես արդեն նշվեց, վարչական գործով վարույթը ոչ միշտ է սկսվում որոշակի փաստաթուղթ՝ հարուցման մասին որոշում, կազմելով: Գործը հարուցված է համարվում նաև իրավախախտման մասին արձանագրություն կազմելու կամ այդ առնչությամբ որևէ այլ փաստաթուղթ կազմելու միջոցով:

Քննության ընթացքում անհրաժեշտ է պարզել փաստական հանգամանքները, որոնք պայմանականորեն կարելի է բաժանել երկու մասի: Առաջին խմբի մեջ են մտնում այն հանգամանքերը, որոնք անմիջականորեն առնչվում են զանցակազմի առկայությունը կամ բացակայությունը պարզելու հետ: Մյուս խմբին են պատկանում այն հանգամանքները, որոնք նշանակություն ունեն պատասխանատվության անհատականացման տեսանկյունից, օրինակ՝ պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքները:

Վարչական վարույթի խնդիրներից է համարվում նաև ***իրավախախտման պատճառների ու նպաստող պայմանների հայտնաբերումը և վերացմանն ուղղված միջոցառումների անցկացումը***: Մասնավորապես, վարույթ իրականացնող մարմինը կարող է առաջարկություններ ներկայացնել օրենսդրության թերությունները վերացնելու, որոշակի ոլորտներում վերահսկողությունն առավել արդյունավետ դարձնելու ուղղությամբ և այլն:

Քննության ընթացքը պետք է արձանագրվի օրենքով սահմանված կարգով: Վարչական իրավախախտման արձանագրությանն առնչվող իրավահարաբերությունների կարգավորմանը նվիրված է Վարչ. օր.-ի 19-րդ գլխի 254-258-րդ հոդվածները: Արձանագրման ենթակա տվյալները դասակարգվում են 3 խմբի: ***Առաջին խումբը կազմում են վարչական իրավախախտման կատարման հանգամանքներին առնչվող տվյալները***: Արձանագրությունում նշվում է արարքի կատարման վայրը, տեղը և զանցանքի էությունը: ***Երկրորդ խումբն են***

կազմում այն տվյալները, որոնք առնչվում են անձի բնութագրմանը. զբաղմունքի տեսակը, նյութական վիճակը, բնակության և աշխատանքի վայրը, անձը հաստատող փաստաթուղթը և այլն: Կարևոր է արձանագրությունում անձի տարիքի մասին նշում կատարելը, որովհետև այն էական նշանակություն ունի գործի քննության ենթակայությունը որոշելու համար: ***Երրորդ խմբին դասվող տվյալները վերաբերում են արձանագրության ձևին: Արձանագրությունում նշվում է այն կազմելու ամսաթիվը և տեղը, կազմողի ազգանունը և պաշտոնը, վկաների և տուժողների ազգանունը և հասցեները*** (եթե այդպիսիք կան):

Որպես կանոն, վարչական գործի հարուցումը և հետաքննությունը կատարվում է զանցանքի կատարման վայրում: Այդ փուլում գործերը ենթակա են այն պաշտոնատար անձանց, որոնց լիազորությունները տարածվում են համապատասխան տարածքի վրա: Վարչ. օր.-ի 276-րդ հոդվածի համաձայն օրենսգրքի 123-130, 132 և 133-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը կարող են քննվել նաև՝ ըստ տրանսպորտային միջոցների հաշվառման վայրի: Իսկ օրենսգրքի 174 և175-րդ հոդվածներով նախատեսված արարքների վերաբերյալ գործերը քննվում են՝ ըստ դրանց կատարման վայրի կամ՝ ըստ խախտողի բնակության վայրի:

Ինչպես արդեն նշվել է, օրենսդրությունը նախատեսում է նաև վարչական գործերի քննության արագացված տարբերակ: Նման դեպքերում արձանագրություն չի կազմվում: Մասնավորապես, Վարչ. օր.-ի 257-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է այն դեպքերը, երբ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն չի կազմվում. «այն դեպքում, եթե անձը չի վիճարկում թույլ տված խախտումը, և նախազգուշացման կարգով նրա նկատմամբ նշանակվող վարչական տուգանքը կամ տուգանքը տաս դրամից ավելի չէ, արձանագրություն չի կազմվում: Այդպիսի դեպքերում նշանակվող տուգանքը միլիցիայի աշխատողի կողմից կարող է գանձվել խախտումը կատարելու տեղում: Տուգանքը գանձելու մասին խախտողին տրվում է սահմանված նմուշի անդորրագիր, որը ֆինանսական խիստ հաշվետվության փաստաթուղթ է: Արձանագրություն չի կազմվում նաև այն դեպքերում, երբ օրենսդրությանը համապատասխան տուգանքը նշանակվում և գանձվում է, իսկ նախազգուշացումը ձևակերպվում է իրա-

վախախտում կատարելու տեղում»: Նշված հոդվածի երկրորդ մասի համաձայն «եթե խախտողը վիճարկում է առաջին մասով նախատեսված իրավախախտումներ կատարելու համար իր նկատմամբ նշանակվող տույժը, ապա արձանագրություն է կազմվում...»:

Օրենսդրության վերոհիշյալ դրույթների վերլուծությունը ցույց է տալիս, որ հնարավորին չափով նեղացված է արձանագրություն չկազմելու դեպքերի շրջանակը, ինչը միանգամայն արդարացի է և հիմնավոր:

Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի առաջին փուլի եզրափակիչ ենթափուլը համարվում է ***հետաքննության նյութերը քննության ուղարկելը***: Բնականաբար, այս ենթափուլը տեղ ունի միայն այն դեպքերում, երբ հետաքննություն կատարած պաշտոնատար անձն ինքն իրավասու չէ քննելու գործը կամ նպատակահարմար է գտնում այն ուղարկելու այլ պետական մարմնի քննարկմանը: Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթ իրականացնող պաշտոնատար անձը, նյութերում քրեական հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու պարագայում, դրանք ուղարկում է ՀՀ դատախազություն կամ նախաքննության մարմիններ, որոնք պարտավոր են քննարկման արդյունքներով կայացված որոշումների մասին իրազեկել նյութերն ուղարկած մարմիններին:

Դրա հետ մեկտեղ, եթե քրեական գործի վարույթի կամ հանցագործության մասին հաղորդումների առնչությամբ նյութերի նախապատրաստման ընթացքում է պարզվում, որ արձանագրված արարքը պարունակում է սոսկ վարչական զանցանքի հատկանիշներ, ապա քրեական գործի վարույթը կարճելուց հետո, նյութերն ուղարկվում են համապատասխան իրավասու վարչական մարմին:

Վարչական վարույթին բնորոշ է գործեր քննելու իրավունք ունեցող մարմինների լայն շրջանակ: Այդ մարմինների ցանկը սահմանված է Վարչ. օր.-ի 219-244-րդ հոդվածներով: Ըստ լիազորությունների բնույթի վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննող մարմինները կարելի է բաժանել երկու խմբի. հատուկ այդ նպատակով ստեղծված մարմիններ և մարմիններ, որոնք հիմնական գործառույթների հետ մեկտեղ, օժտված են նաև վարչական գործեր քննելու լիազորությամբ:

Վարչական իրավունքին հայտնի է նաև ***երկակի ենթակայության սկզբունքը***. երբ վարչական իրավախախտումների վերաբերյալ գոր-

ծերը միաժամանակ կարող են քննվել տարբեր մարմինների կողմից: Այսպես, տարբեր մարզերում հարկային և մաքսային օրենսդրության խախտումների վերաբերյալ զանցանքները կարող է քննել հարկային տեղական մարմնի պետը: Երկակի ենթակայության պարագայում միևնույն գործը կարող է քննվել տարբեր իրավասու մարմինների կողմից, իսկ ***այլընտրանքային ենթակայության*** դեպքում՝ միևնույն մարմնի տարբեր ստորաբաժանումների կողմից:

Վարչական իրավախախտումների քննության ենթակայության առանձնահատկություններից է այն, որ ՀՀ տարածքից դուրս կատարված վարչական զանցանքի համար անձը չի կարող վարչական պատասխանատվության ենթարկվել ՀՀ տարածքում: Ընդ որում, իրավական համագործակցության բարելավման վերաբերյալ ՀՀ միջազգային պայմանագրերով նույնպես դեռևս նման կարգ չի նախատեսվել:

Գործը քննության նախապատրաստելու կարևոր նախապայման է համարվում ինչպես արձանագրությունը հանգամանորեն ուսումնասիրելը, այնպես էլ՝ իրավախախտում թույլ տված անձին, վկաներին, տուժողին և այլ անձանց բացատրությունները լսելը: Ընդ որում, տուժողը կարող է բացատրություն ներկայացնել, որպես վկա: Հարկ եղած դեպքում քննություն իրականացնող մարմինը պետք է հոգա նաև թարգմանչի մասնակցության հարցը: Որպես կանոն, վկաներ կանչելու հարցը լուծում է քննություն իրականացնելու լիազորություն ունեցող պաշտոնատար անձը. նա պարտավոր չէ ղեկավարվել նյութերը նախապատրաստած անձի կողմից գործի քննության համար ներկայացրած տարբերակով:

Վարչ. օր.-ի 277-րդ հոդվածով սահմանված է վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության 15-օրյա ժամկետ: Առանձին իրավախախտումների համար սահմանված են ***կրճատ ժամկետներ***՝ մինչև 7 օր: Կրճատ ժամկետների կարևորությունը թելադրված է գործերի քննության հետ կապված իրավական հետևանքները սեղմ ժամկետներում պարզելու և խախտված իրավունքները վերականգնելու անհրաժեշտությամբ: Այսպես, օրինակ, Վարչ. օր.-ի 40^1, 40^3-40^6-րդ հոդվածներով նախատեսված զանցանքները բնավ չեն առանձնանում իրենց պարզությամբ, ընդհակառակը, ընտրական օրենսդրության ցանկացած բնույթի խախտում ենթադ-

րում է բարդ ու ծավալուն աշխատանք: Սակայն այդ գործերի քննության համար ընդամենը սեղմ ժամկետ սահմանելը պայմանավորված է ընտրական գործընթացին առնչվող յուրաքանչյուր հարցադրման վերաբերյալ հնարավորինս շուտ, պարզ ու հստակ պատասխան ունենալու և այդ քաղաքական ինստիտուտի բնականոն ընթացքն ապահովելու խնդրով: Օրինակ, իրավախախտման մասին հստակ տեղեկատվություն ունենալն անհրաժեշտ է թեկնածուի գրանցման, քվեարկության արդյունքների ճանաչման և նմանաբնույթ այլ հարցերի լուծման համար:

Քննության փուլում լսում են քննության մասնակիցներին, հետազոտվում են ապացույցները և լուծվում միջնորդությունները: Վարչական պատասխանատվության ենթարկվող անձին պարզաբանվում է, որ նա կարող է ծանոթանալ գործի ողջ նյութերին, պահանջել ներկայացնելու լրացուցիչ ապացույցներ և կատարել լրացուցիչ ստուգումներ, կանչել վկաների և այլն: Հայտարարված միջնորդությունների հիման վրա գործը քննող իրավասու մարմինը պարտավոր է պատճառաբանված որոշում կայացնել՝ այն մերժելու կամ բավարարելու մասին: Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործը քննող իրավասու պետական մարմինը պարտավոր է հանգամանորեն վերլուծել գործին առնչվող բոլոր հանգամանքները: Մասնավորապես, վերջինս պարտավոր է պարզել, թե արդյո՞ք կատարված է արաքը, մեղավո՞ր է անձն այդ արարքի կատարման մեջ, ենթակա՞ է նա պատասխանատվության, պատճառվա՞ծ է նյութական վնաս, ինչպիսի՞ք են մեղմացուցիչ և ծանրացուցիչ հանգամանքները, որո՞նք են իրավախախտման պատճառներն ու դրանց կատարմանը նպաստող պայմանները, չկա՞ն, արդյոք, հիմքեր անձին վարչական պատասխանատվությունից ազատելու կամ ներգործության այլ միջոցներ կիրառելու համար:

Կատարված ողջ աշխատանքի ամփոփումը արտացոլվում է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ որոշում կայացնելով: Դրանում ներկայացվում է վարչական պատասխանատվության ենթարկվող անձի վարքագիծը, հաստատվում է նրա մեղավորությունը կամ անմեղությունը և որոշվում է ներգործության միջոցը: Ըստ քննության արդյունքների իրավասու մարմնի կողմից ընդունվում է հետևյալ որոշումներից որևէ մեկը՝ վարչական տույժ նշանակելու մա-

սին կամ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճելու մասին: Գործի որոշման մեջ պետք է լուծված լինի նաև վերցված կամ առգրավված իրերի ու փաստաթղթերի հարցը: Եթե քննության արդյունքներով պարզվում է, որ ներկայացված նյութերը բավարար չեն անձին վարչական պատասխանատվության ենթարկելու համար, իրավասու պետական մարմինը կարող է նյութերն ուղարկել լրացուցիչ նախապատրաստման:

Վարչ. օր.-ի 283-րդ հոդվածի առաջին մասի համաձայն վարչական գործի վերաբերյալ որոշումը հայտարարվում է անհապաղ՝ գործի քննությունն ավարտելուն պես: Իսկ այդ հոդվածի 2-րդ մասի համաձայն որոշման պատճենը 3 օրվա ընթացքում հանձնվում կամ ուղարկվում է այն անձին, որի վերաբերյալ այն ընդունվել է, ինչպես նաև տուժողին՝ նրա խնդրանքով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի որոշումների վերանայման փուլը[1] համարվում է օրինական և հիմնավորված վարչական տույժերի նշանակման կարևորագույն երաշխիք: *Վերանայման տակ նկատի է ունեցվում վարչական վարույթի նկատմամբ վերահսկողական լիազորություններ ունեցող մարմինների կողմից վարչական տույժերի օրինականության և հիմնավորվածության ստուգումը:* Վերանայումը գործի նոր քննությունն է այն վարչական մարմնի կողմից, որն իրավասու է վերացնել, փոփոխել կամ ուժի մեջ թողնել վարչական տույժի մասին որոշումները: Վերանայումը պետք է տարբերել գործի *կրկնակի քննությունից*. վերջինս կիրառվում է այն դեպքում, երբ նախկինում ընդունված որոշումը թերի քննության կամ այլ հիմքով վերացվում է, և գործն ուղարկվում է նոր քննության:

Վարչական վարույթի վերանայման փուլը համարվում է ոչ պարտադիր, քանի որ այն պայմանավորված է միայն այնպիսի հիմքերի առկայությամբ, որոնք կարող են և բացակայել տվյալ գործով: Ընդ որում, օրինականության ապահովման երաշխիք է համարվում նաև այն, որ կառավարման վերադաս մարմիններն իրենց նախաձեռնությամբ կարող են վերանայել ընդունված որոշումները, այսինքն՝ առանց դիմումի առկայության:

---

[1] Տվյալ դեպքում քննարկվում է բացառապես վերադասության կարգով վերանայման ինստիտուտը:

Որոշումը վերանայելու իրավասությամբ օժտված են ա) վերադաս մարմինը (պաշտոնատար անձը), բ) դատարանը և գ) որոշումն ընդունող մարմինը: Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի որոշումը բողոքարկելու վերաբերյալ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 23-րդ գլխում ամրագրված նորմերը կիրառելի են հիմնականում այդ որոշումները վերադասության կարգով բողոքարկելու պարագայում: Դատական կարգով վերանայելու հիմունքներն ամրագրված են ՀՀ վարչ. դատ. օր.-ով:

Վերադասության կարգով որոշումը վերանայելու վերաբերյալ դիմում ներկայացնելու իրավունք ունի այն անձը, որի նկատմամբ կայացվել է, այսինքն իրավախախտը, ինչպես նաև տուժողը: Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշումը վերացնելու վերաբերյալ դիմումները Վարչ. օր.-ի 288-րդ հոդվածի համաձայն կարող են ներկայացվել որոշումն ընդունելու օրվանից հետո 10 օրվա ընթացքում: Նշված ժամկետը հարգելի պատճառներով բաց թողնելու դեպքում այդ ժամկետը կարող է վերականգնվել դիմումը քննելու համար իրավազոր մարմնի (պաշտոնատար անձի) կողմից, այն անձի դիմումով, որի նկատմամբ ընդունվել է որոշում: Նույն 10-օրյա ժամկետն է սահմանված նաև որոշման վերանայման համար:

Վարչական կարգով որոշումները վերանայելիս, կատարվում են մի շարք նախապատրաստական աշխատանքներ՝ ա) ստուգվում է ստացված նյութերի լրիվությունը, հարկ եղած դեպքում պահանջվում են լրացուցիչ նյութեր, բ) եթե դիմումը տրվել է սահմանված 10-օրյա ժամկետի խախտումով, քննարկվում է ժամկետը վերականգնելու հարցը և գ) որոշվում է դիմումը քննելու տեղը և ժամը, ինչպես նաև ծանուցագրեր են ուղարկվում մասնակիցներին:

Վարչ. օր.-ի 293-րդ հոդվածի համաձայն, վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ բողոքը քննող մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ ա) որոշումը թողնում է անփոփոխ, իսկ դիմումն առանց բավարարման, բ) բեկանում է որոշումը և գործն ուղարկում նոր քննության, գ) բեկանում է որոշումը և կարճում է գործը և դ) վարչական իրավախախտման համար պատասխանատվության մասին նորմատիվ ակտերով նախատեսված շրջանակներում փոխում է նշանակված տույժի միջոցը, բայց այնպես, որ տույժը չխստացվի:

Վարչ. օր.-ի 296-րդ հոդվածի համաձայն վարչական իրավախախտման վերաբերյալ գործի կարճումով որոշումը բեկանելը հիմք է գանձված դրամական գումարների, հատուցմամբ վերցված և բռնագրավված առարկաները վերադարձնելու, ինչպես նաև այդ որոշման հետ կապված սահմանափակումները վերացնելու համար: Առարկան վերադարձնելու անհնարինության դեպքում հատուցվում է նրա արժեքը:

Վարչական տույժեր նշանակելու մասին որոշումների կատարումը վարչական իրավախախտումների վարույթի վերջին փուլն է: Կատարման փուլում վարչական իրավախախտում կատարած անձի նկատմամբ գործնականում կիրառվում են անձնական, բարոյական և նյութական բնույթի սահմանափակումներ: Այս փուլին առնչվող իրավահարաբերությունների կարգավորմանն անմիջականորեն նվիրված է Վարչ. օր.ի 5-րդ հատվածը, որը ներառում է 297-327-րդ հոդվածները:

Վարչական վարույթն ավարտուն տեսք կարող է ունենալ միայն նշանակված որոշումների հետևողական կատարմամբ: Այս առումով Վարչ. օր.-ի 297-րդ հոդվածը սահմանում է. «վարչական տույժ նշանակելու մասին որոշումը պարտադիր է կատարման պետական և հասարակական մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների, պաշտոնատար անձանց և քաղաքացիների կողմից»:

Կատարման վարույթն առանձին հատվածում ներառելը հիմնականում բացատրվում է նրանով, որ այն հիշյալ վարույթի ինքնուրույն փուլ է: Վարչ. օր.-ի 298-րդ հոդվածից բխում է, որ ***վարչական տույժ նշանակելու մասին որոշումը ենթակա է կատարման դրա կայացման պահից՝ ի տարբերություն քրեական գործերով կայացված դատավճիռների և որոշումների, որոնք օրինական ուժի մեջ են մտնում միայն վերաքննիչ բողոք բերելու համար նախատեսված ժամկետը լրանալուց հետո***: Ենթադրվում է, որ վարչական տույժ նշանակելու մասին որոշումները, լինելով վարչական ակտեր, պետք է առավել օպերատիվ կարգով կատարվեն, իսկ դրանց կատարումը կարող է կասեցվել բողոքարկման հիմքով:

Վարչական տույժ նշանակելու մասին որոշումը բողոքարկելու դեպքում որոշումը ենթակա է կատարման՝ որոշումը վիճարկելու դի-

մումն առանց բավարարման թողնելուց հետո, բացառությամբ նախազգուշացման ձևով տույժի միջոց կիրառելու մասին որոշումների, ինչպես նաև վարչական իրավախախտման համար տեղում տուգանք նշանակելու ու գանձելու դեպքերում: Տուգանքի ձևով վարչական տույժ նշանակելու մասին որոշումը ենթակա է քաղաքացիադատավարական կարգով կատարման՝ նշված օրենսգրքի 305 հոդվածի առաջին մասով կամավոր կատարման համար սահմանված 15-օրյա ժամկետն անցնելուց հետո:

Որոշումների կատարմամբ զբաղված են վարչական զանցանքների վերաբերյալ գործեր քննելու լիազորությամբ օժտված պետական մարմինները, որոնց մի մասն իրավասու է անմիջականորեն կատարելու այդ որոշումները: Այսպես, Վարչ. օր.-ի 124-րդ և 88-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկելու և որսորդության իրավունքից զրկելու մասին որոշումները համապատասխանաբար ի կատար են ածում պետավտոտեսչության մարմինները և որսի կանոնների պահպանության նկատմամբ պետական հսկողություն իրականացնող մարմինները:

Նույն օրենսգրքի 302-րդ հոդվածով սահմանված են վարչական տույժ նշանակելու մասին որոշումների կատարման վաղեմության հստակ ժամկետներ: Նշված հոդվածի համաձայն. «վարչական տույժ նշանակելու մասին որոշումը կատարման ենթակա չէ, եթե այն ի կատար չի ածվել կայացման օրվանից 3 ամսվա ընթացքում»: 3-ամսյա ժամկետի մեջ չեն մտնում այն ժամկետները, որոնք կապված են որոշումը վիճարկելու մասին դիմում բերելու առնչությամբ որոշումների կասեցման հետ:

Օրենսդրությամբ սահմանված են ինչպես որոշման կատարման ***հետաձգման, այնպես էլ դադարեցման հիմքերը***: Վարչ. օր.-ի 301-րդ հոդվածի համաձայն, որոշման կատարումը դադարեցվում է հետևյալ դեպքերում՝ ա) համաներման ակտ հրատարակվելու դեպքում, եթե այն վերացնում է վարչական տույժի կիրառումը, բ) վարչական պատասխանատվություն սահմանող ակտի վերացման դեպքում և գ) այն անձի մահվան դեպքում, որի նկատմամբ կայացվել է որոշումը:

Որոշումների կատարման գործընթացում նկատելի դեր ունի ***դատական ակտերի հարկադիր կատարման ինստիտուտը***, որպես արդա-

ռադատության իրականացմանն օժանդակող համակարգ, ինչպես կառուցվածքային, այնպես էլ բովանդակային առումով նորույթ է: Հիմնականում երկու օրենքներ են նվիրված այդ ծառայության կազմակերպմանն ու գործունեությանն առնչվող իրավահարաբերությունների կարգավորմանը՝ «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքները (ընդունվել են, համապատասխանաբար 1998թ. մայիսի 5-ին և 2004թ. փետրվարի 18-ին): Վարչական տույժ նշանակելու մասին որոշումը կամավոր չկատարելու դեպքում, իրավասու մարմինը համապատասխան հայցապահանջով դիմում է առաջին ատյանի դատարան, որի վճիռն արդեն ենթակա է հարկադիր կատարման: Ըստ էության, հարկադիր կատարման միջոցով ապահովվում է ոչ միայն դատարանի վճռի, այլև վարչական տույժ նշանակելու մասին որոշումը: Այսպիսով, վարչական վարույթն ավարտուն տեսք է ընդունում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածում ամրագրված են հարկադիր կատարման միջոցները՝

«1) պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելը՝ արգելանք դնելու և այն իրացնելու միջոցով.

2) պարտապանի աշխատավարձի, կենսաթոշակի, կրթաթոշակի և այլ տեսակի եկամուտների վրա բռնագանձում տարածելը.

3) այլ անձանց մոտ գտնվող պարտապանի դրամական միջոցների և այլ գույքի վրա բռնագանձում տարածելը.

4) կատարողական թերթում նշված որոշակի առարկաները պարտապանից առգրավելը և պահանջատիրոջը հանձնելը.

4.1) հարկադիր կատարողի որոշումները չկատարելու համար տուգանք կիրառելը.

5) կատարողական թերթի կատարումն ապահովող այլ միջոցները»:

Կատարողական վարույթի համար հիմք է ծառայում կատարողական թերթը, որը տալիս է ակտն ընդունած դատարանը՝ պահանջատիրոջ կամ դրա համար հատուկ լիազորված նրա ներկայացուցչի դիմումի հիման վրա: Կատարողական թերթը տրվում է դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից եռօրյա ժամկետում,

իսկ ՀՀ քաղ. դատ. օր.-ով նախատեսված դեպքերում՝ անհապաղ:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածով սահմանված է կատարողական թերթի բովանդակությունը, մասնավորապես, պետք է բովանդակի հետևյալ տարրերը՝

«1) կատարողական թերթ տված դատարանի անվանումը.

2) գործը, որի հիման վրա տրվել է կատարողական թերթը և դրա համարը.

3) կատարման ենթակա դատական ակտի կայացման տարին, ամիսը և ամսաթիվը.

4) պահանջատիրոջ և պարտապանի անունները (անվանումները) ու հասցեները.

5) դատական ակտի եզրափակիչ մասը.

6) դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու տարին, ամիսը և ամսաթիվը.

7) կատարողական թերթ տալու տարին, ամիսը և ամսաթիվը և այն կատարման ներկայացնելու ժամկետը»:

Կատարողական թերթը կատարման ներկայացնելու համար սահմանված է մեկ տարի՝ սկսած այն օրվանից, երբ՝ ա) օրինական ուժի մեջ է մտել դատական ակտը, բ) միջնորդ դատարանը կայացրել է վճիռ, գ) լրացել է դատական ակտի կատարումը հետաձգելու սահմանված ժամկետը և դ) դատարանը որոշում է կայացրել կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին: («Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդված):

Այսպիսով, դատական ակտերի հարկադիր կատարման վարույթը ևս հանդիսանում է վարչական վարույթի ինքնուրույն տեսակ, որի առանձնահատկությունները սահմանված են վերը նշված օրենսդրական ակտերով:

ԳԼՈՒԽ 20.
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ

§1. Պետական կառավարման ոլորտում կարգապահական վարույթի առանձնահատկությունները և իրավական հիմքերը

Պետական կառավարման ոլորտում կարգապահական վարույթի հասկացությունը: Հանրային ծառայության ոլորտում կարգապահական պատասխանատվության ինստիտուտը հանդիսանում է վարչական իրավունքի կարևորագույն բաղադրիչը, ուստի վերջինիս հիմքերին, ընթացակարգին ու առանձին տարրերին առնչվող հարաբերությունները հիմնականում կարգավորվում են վարչական իրավունքի պետական կառավարման ոլորտում կարգապահական վարույթին առնչվող իրավական նորմերով: Իրավական համակարգում, ի տարբերություն պատասխանատվության այլ ոլորտների, կարգապահական վարույթը միաժամանակ հանդիսանում է իրավունքի նաև այլ ճյուղերի, հատկապես՝ աշխատանքային իրավունքի առարկա: Քննարկվող դեպքում, առնվազն կարող է խոսք լինել մի իրավական ինստիտուտի մասին, որն ընդհանուր գծերով հանդերձ, իրավունքի տարբեր ճյուղերում հանդես է գալիս նկատելի առանձնահատկություններով, ինչը պայմանավորված է իրավունքի տվյալ ճյուղի առարկայով, կարգավորման մեթոդով, հարաբերությունների մասնակիցների կարգավիճակով և այլն: Թերևս, բացառություն կարող է կազմել զինծառայողների նկատմամբ կարգապահական վարույթը, որը կարգավորող օրենսդրությունն ամբողջովին պատկանում է վարչական իրավունքին:

Պետական կառավարման ոլորտում կարգապահական վարույթի այս երկակի բնույթն է, թերևս, առանձին հեղինակների մոտ ձևավորել այն դիրքորոշումը, ըստ որի քննարկվող ինստիտուտը զուտ վարչահրավական չէ և չի կարող ներառվել «Վարչական իրավունք» դասընթացի ծրագրում: Մինչդեռ, կարծում ենք, այդպիսի մոտեցումը հանգեցնում է մի այնպիսի իրավիճակի, երբ այս խիստ կարևոր ինստիտուտը շրջանցվում է ընդհանրապես, քանզի աշխատանքային իրա-

վունքի շրջանակներում որևէ կերպ չեն կարող ուսումնասիրության նյութ լինել այս ինստիտուտի բնորոշիչ գծերը:

Ինչպես արդեն նշվեց, պետական կառավարման ոլորտում կարգապահական պատասխանատվության ինստիտուտը ամբողջությամբ վարչական իրավունքի կարգավորման առարկան չէ: Թերևս, կարելի է գալ այն եզրահանգման, որ տվյալ դեպքում գործ ունենք իրավունքի համալիր, ըստ էության՝ միջճյուղային ինստիտուտի հետ, որի առանձին տարրեր կարգավորվում են իրավունքի մի քանի ճյուղերի կողմից: Ընդ որում, խոսքը նաև այն իրավունքի ճյուղերի մասին է, որոնք իրավունքի զարգացման արդյունքում աստիճանաբար տարանջատվել են հենց վարչական իրավունքից և պայմանականորեն ներառվում են «վարչական իրավունք» լայն իմաստով կիրառվող հասկացության մեջ (ֆինանսական իրավունք, բանկային իրավունք և այլն):

Այս ինստիտուտի միջճյուղային լինելու մասին է վկայում նաև այն, որ պետական կառավարման ոլորտում կարգապահական վարույթին առնչվող հարաբերությունները բացառապես կարգավորված չեն վարչական իրավունքով: Ընդ որում, վարչական իրավունքի աղբյուր հանդիսացող օրենսդրական ակտերում ևս կան բազմաթիվ դրույթներ, որոնք ամրագրում են հանրային ծառայությանն առնչվող հարաբերությունների (այդ թվում, բնականաբար, կարգապահական վարույթի) կարգավորման շրջանակներում՝ օրինակ աշխատանքային իրավունքի նորմերի կիրառման անհրաժեշտությունը: Այսպես, «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի (08.12.04) 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Քաղաքացիական ծառայողների աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են *Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ* (ընդգծումը մերն է), եթե քաղաքացիական ծառայության մասին օրենսդրությամբ այդ հարաբերությունները կարգավորող առանձնահատկություններ սահմանված չեն»:

Վերը նշված օրենսդրական դրույթը վկայում է նաև այն մասին, որ, այնուամենայնիվ, պետական կառավարման ոլորտում կարգապահական վարույթին առնչվող հարաբերությունները հիմնականում հանդիսանում են վարչական իրավունքի առարկա, իսկ իրավունքի մյուս ճյուղերին այս դեպքում միայն օժանդակ դեր է վերապահված:

Կարգապահական վարույթի իրավական հիմքերը: Վերջին շրջանում, կապված հանրային ծառայության իրավական հիմքերի բարելավման հետ, նկատելիորեն ընդկայնվել են կարգապահական վարույթին առնչվող հարաբերությունների կարգավորմանը նվիրված իրավական ակտերը: Նախ, քաղաքացիական ծառայողների կարգապահական վարույթի վերաբերյալ դրույթներ են ամրագրված «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով (04.12.01), հատկապես, 32-33-րդ հոդվածներով): Բացի այդ, պետական հատուկ ծառայության իրավական կարգավորմանը նվիրված յուրաքանչյուր օրենսդրական ակտում այդ հարցի կարգավորման համար ամրագրված են որոշակի օրենսդրական դրույթներ: Մասնավորապես, «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի (16.04.01) 42-43-րդ հոդվածները, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի (06.07.00) 37-րդ հոդվածը, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի (03.07.02) 25-26.1-րդ հոդվածները, «Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենքի (24.10.01) 39-40-րդ հոդվածները և այլն նվիրված են վերը նշված հարաբերությունների կարգավորմանը:

Հարկ է նկատել, որ «պետական կառավարման ոլորտում կարգապահական վարույթ» հասկացությունն ընդգրկում է նաև այն պետական մարմինների գործունեությունը, որոնք, պատկանելով իշխանության այլ ճյուղերի, ևս վարչարարություն են իրականացնում: Այսպես, դատախազությունը դասական իմաստով վարչական մարմին չէ, սակայն այդ համակարգի իրավասու մարմինը կարգապահական վարույթ իրականացնելիս պարտավոր է ղեկավարվել վարչարարության կանոններով, որոնք տվյալ դեպքում ամրագրված են ինչպես «Դատախազության մասին» ՀՀ օրենքով (22.02.07), այնպես էլ՝ այլ օրենքներով («Դատախազության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդված):

Օրենսդրության և վարչական իրավունքի տեսության հիմնադրույթների վերլուծությունը հնարավորություն է տալի առանձնացնելու կարգապահական վարույթի հետևյալ ընդհանուր գծերը՝ ա) կարգապահական վարույթ հարուցելու հիմքը կարգապահական խախտումն է (կարգապահական զանցանքը), բ) կարգապահական վարույթ հարուցելու իրավասությունը վերապահված է բացառապես պետական իրավասու մարմիններին և գ) կարգապահական վարույթը կարող է կարգավորվել ինչպես օրենքներով, այնպես էլ՝ համապատասխան

ենթաօրենսդրական ակտերով:

Պետական կառավարման ոլորտում կարգապահական վարույթի առանձնահատկությունները պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի: Առաջին խմբում կարելի է ներառել այնպիսիք, որոնք հնարավորություն են տալիս վարույթի այդ տեսակը տարանջատել բացառապես մասնավոր ձեռնարկատիրական ոլորտում աշխատանքային հարաբերությունների հետ կապված կարգապահական վարույթից, իսկ երկրորդ խմբում՝ միայն հանրային ծառայության տվյալ տեսակին բնորոշ առանձնահատկությունները:

Առաջին խմբում կարող են ներառվել հետևյալ առանձնահատկությունները՝ ա) կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող պետական մարմինը, որպես կանոն, հանդիսանում է կարգապահական զանցանք թույլ տված անձի վերադասը, մինչդեռ՝ աշխատանքային հարաբերություններում կողմերի միջև բացակայում են վարչաիրավական իմաստով ենթակայական փոխհարաբերությունները, բ) պետական կառավարման ոլորտում անհամեմատ լայն է կարգապահական վարույթ հարուցելու հիմքերի շրջանակը, այն ներառում է ոչ միայն պարտականություններ, այլև հանրային ծառայության հետ անհամատեղելի տարաբնույթ սահմանափակումներ ու արգելքներ, գ) կարգապահական վարույթի իրավական կարգավորման հիմնական աղբյուրը վարչաիրավական օրենսդրությունն է, իսկ աշխատանքային օրենսդրությանը վերապահված է միայն օժանդակ դեր և այլն:

Երկրորդ խումբ առանձնահատկությունները հիմնականում թելադրված են տվյալ հանրային ծառայողի իրավական կարգավիճակով: Այսպես, դատավորների պարագայում կարգապահական վարույթ հարուցելու և իրականացնելու լիազորություն ունեցող պետական մարմինները չեն հանդիսանում դատավորի վերադասը: Բարձրաստիճան պաշտոնատար անձանց համար կարգապահական վարույթի որոշ առանձնահատկություններ են սահմանված «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով և այլն: Ի դեպ, նշված օրենքի 44-րդ հոդվածում կիրառվում է «վարույթը բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովում» արտահայտությունը, սակայն դա չպետք է անհարկի շփոթության տեղիք տա. ըստ էության, դա հենց կարգապահական վարույթ է, որն ավարտվում է ոչ թե կար-

գապահական տույժ նշանակելով, այլ էթիկայի կանոնների խախտման վերաբերյալ եզրակացության կայացմամբ, որի հիման վրա իրավասու պետական մարմնի լիազոր անձը քննարկում է համապատասխան որոշում կայացնելու հարցը:

Հավելենք, որ կարգապահական վարույթի առկայությունը չի բացառում նույն արարքի առթիվ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ կամ քրեական գործի վարույթ հարուցելը (այդ տեսակի վարույթների հարուցումը բացառող հիմքերը սպառիչ սահմանված են՝ համապատասխանաբար ՀՀ քր. դատ. օր.-ով և Վարչ. օր.-ով), սակայն նույն արարքի առնչությամբ քրեական գործի հարուցման փաստը հիմք է կարգապահական վարույթը կարճելու համար: Ընդ որում, օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռը հիմք է անձին ծառայությունից ազատելու համար:

Հարկ է նկատել, որ օրենսդրությամբ չի բացառվում միևնույն արարքի առնչությամբ միաժամանակ կարգապահական և վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթ հարուցելը: Այսպես, «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված է. «Կարգապահական խախտման՝ ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, ծառայողական դիրքն ի չարը գործադրելու, ինչպես նաեւ ծառայողական լիազորությունների սահմանն անցնելու դեպքերում, եթե դրանք չեն պարունակում *քրեորեն պատժելի արարքի հատկանիշներ* (ընդգծումը մերն է), օրենքով սահմանված կարգով, ոստիկանության ծառայողի նկատմամբ կիրառվում են հետեւյալ կարգապահական տույժերը»: Այսինքն, կարգապահական զանցանքը չի կարող միաժամանակ պարունակել բացառապես հանցագործության հատկանիշներ, իսկ վարչական զանցանքի առնչությամբ օրենսդիրը որևէ վերապահում չի ամրագրում:

Ցավոք, օրենսդրությամբ հստակ ամրագրված չեն կարգապահական վարույթի սկզբունքները, իսկ վարչարարության ընդհանուր սկզբունքները չեն կարող համարժեք իրավական հենք հանդիսանալ այդ ոլորտում ծագող բարդ խնդիրների միատեսակ ու արդյունավետ լուծման համար: Բոլոր դեպքերում, կարծում ենք, հարկ է առաջադրել այնպիսի սկզբունքներ, որոնք միտված կլինեն կարգապահական զանցանքների համար պատասխանատվությունը անխուսափելի

դարձնելուն և, միաժամանակ, երաշխավորված կդարձնեն հանրային ծառայողների իրավունքները ու նրանց զերծ կպահեն հնարավոր կամայականություններից:

§2. Կարգապահական խախտում (զանցանք)

Կարգապահական զանցանքի բնորոշումն օրենսդրությամբ տրված չէ, ինչը ևս օրենսդրության թերություններից է, սակայն օրենսդրության և վարչական իրավունքի տեսության համալիր վերլուծությունը հնարավորություն է տալիս տեսականորեն առաջադրելու հետևյալ բնորոշումը. ***կարգապահական զանցանքը ոչ իրավաչափ, մեղավորությամբ կատարված քրեորեն պատժելի արարքի հատկանիշներ չպարունակող արարք է, որը դրսևորվում է օրենսդրությամբ ամրագրված ծառայողական պարտականությունների անհարգելի պատճառով չկատարմամբ կամ ոչ պատշաճ կատարմամբ, ինչպես նաև աշխատանքային կարգապահության ներքին կանոնների կամ վարքագծի կանոնների խախտմամբ***: Կարծում ենք, այնքան էլ հիմնավորված չեն այն բնորոշումները, ըստ որոնց կարգապահական զանցանքը ներկայացվում է սոսկ որպես *կարգապահության խախտում*[1]: Խնդիրն այն է, որ անհրաժեշտություն է ծագում «կարգապահություն» եզրույթին վերապահել անչափ ընդրկուն բովանդակություն (նկատենք, որ այդ եզրույթի առնչությամբ բացակայում են միանշանակ նույնական դիրքորոշումներ), ինչն էլ, միևնույն է, անխուսափելիորեն առաջացնում է դրա բովանդակությունը բացահայտելու կարիք: Արդյունքում այդպիսի բնորոշումները սոսկ արտաքուստ են հստակ ու լակոնիկ թվում, քանզի, միևնույն է, դրանք կարիք ունեն համակողմանի պարզաբանման:

Կարգապահական զանցանքը հանրային վտանգավորության աստիճանով զիջում է հանցագործությանը, ինչն էլ պայմանավորում է կարգապահական տույժերի բնույթն ու խստության համեմատաբար նվազ լինելը:

---

[1] Տե՛ս, օրինակ, Административное право России, А.П.Алехин, А.А.Кармолицкий, Учебник для вузов и факультетов, Изд. Зерцало, 2006, էջ 358:

Օրենսդրությամբ ոչ միայն կարգապահական պատասխանատվության վաղեմության միասնական ժամկետներ սահմանված չեն, այլև անհարկի անկատար են այդ ինստիտուտի կարգավորող դրույթները: Մասնավորապես, «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, տույժ կարող է նշանակվել մինչև 3 ամիս ժամկետում, որը հաշվարկվում է կարգապահական զանցանքի հայտնաբերման օրվանից՝ չհաշված հիվանդությունը կամ արձակուրդում գտնվելը, սակայն կարգապահական տույժ չի կարող նշանակվել, եթե զանցանքը կատարելու օրվանից անցել է 6 ամիս: ՀՀ դատական օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն, դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ կարող է հարուցվել զանցանքը հայտնաբերելու օրվանից 3 ամսվա ընթացքում, սակայն կարգապահական տույժ չի կարող նշանակվել, եթե զանցանքը կատարելու օրվանից անցել է 1 տարի: Նկատենք, որ տարբեր են նաև ոչ միայն վաղեմության ժամկետները, այլև դրանց հաշվարկման հիմքերը. մի դեպքում վաղեմության ժամկետ է նախատեսված տույժ նշանակելու, մեկ այլ դեպքում՝ վարույթ հարուցելու համար և այլն: Կարծում ենք, ժամկետների հարցը որևէ առնչություն չունի հանրային ծառայության տեսակի հետ, և առավել հիմնավորված կլիներ, եթե նախապատվությունը տրվեր միասնական դրույթների ամրագրմանը:

Նշենք, որ օրենսդրությունում բացակայում է այն արարքների հստակ շրջանակը, որոնք հանգեցնում են կարգապահական պատասխանատվության: Այսպես, «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով այդպիսիք են համարվում ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, ծառայողական լիազորությունները վերազանցելը, ինչպես նաև աշխատանքային կարգապահական ներքին կանոնները խախտելը: Մինչդեռ, ինչպես նշվեց վերևում, «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասով կարգապահական պատասխանատվության հիմք են՝ ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, ծառայողական դիրքն ի չարը գործադրելը, ինչպես նաեւ ծառայողական լիազորությունների սահմանն

անցնելը: Հավելենք, որ միմյանցից տարբերվում են նաև պետական հատուկ ծառայության իրավական հիքերին նվիրված օրենսդրական ակտերում ամրագրված դրույթները:

Կարծում ենք, նշվածը կարող է բացատրվել բացառապես օրենսդրության թերություններով, ընդ որում, բացակայում է վերը նշված տարաբնույթ օրենսդրական դրույթների հիմնավորման օգտին որևէ փաստարկ:

Հաճախ զանցանքի տեսակների շրջանակը պայմանավորված է հանրային ծառայության կոնկրետ տեսակով: Այս դեպքում միասնական օրենսդրական կարգավորման բացակայությունը չի կարող խոցելի համարվել, քանզի իրավաչափ չէ հանրային ծառայության՝ միմյանցից իրենց կարգավիճակով ու գործունեության բնույթով խիստ տարբեր տեսակների պարագայում ամրագրել կարգապահական զանցանքների միասնական համակարգ: Տվյալ դեպքում խոցելի է համարվում այն, որ միասնականությունը, ցավոք, չի պահպանվել հանրային ծառայության անգամ միևնույն տեսակի պարագայում:

Վերևում արդեն նշվեց ոստիիկանության ծառայությունում զանցանք համարվող արարքների շրջանակը, երբ դրանք համադրում են դարձյալ զինվորական ծառայությանը հավասարեցված այլ ծառայությունների պարագայում կարգապահական պատասխանատվություն առաջացնող արարքների շրջանակի հետ, ապա անհարկի տարաբնույթ մոտեցումը դառնում է ակնհայտ: Այսպես, օրինակ «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասով այդիսիք են հանդիսանում՝ ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, ծառայողական դիրքն ի չարը գործադրելը, ինչպես նաեւ ծառայողական լիազորությունները վերազանցելը: Ակնհայտ է, որ օրենսդիրը ոչ միայն չի պահպանել զանցանքների միասնական շրջանակ ամրագրելու պահանջը, ինչը բխում է հանրային ծառայողներին միասնական պահանջներ ներկայացնելու սկզբունքից, այլև միևնույն իրավական հասկացությունների առնչությամբ ամրագրել է տեքստային կտրվածքով անհարկի տարբերվող եզրույթներ, որոնք գործնականում անտեղի շփոթ են առաջացնում:

§3. Կարգապահական տույժի հասկացությունը և տեսակները

Օրենսդրությամբ ամրագրված չէ «կարգապահական տույժ» եզրույթի բնորոշումը, սակայն դարձյալ տեսականորեն կարելի է առաջադրել հետևյալ բնորոշումը. «***կարգապահական տույժը իրավասու պետական մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից նշանակվող պետական հարկադրանքի միջոց է, որը նշանակվում է կարգապահական զանցանքի համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ և արտահայտվում է այդ անձին իրավունքներից օրենքով նախատեսված կարգով զրկմամբ կամ սահմանափակմամբ***» (նկատենք, որ խոսքը ոչ թե ընդհանրապես կարգապահական տույժի, այլ բացառապես պետական կառավարման ոլորտում նշանակվող տույժի մասին է): Այսպիսով, տույժը կարգապահական պատասխանատվության միջոց է, որը հետապնդում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգում անհրաժեշտ կատարողական կարգապահություն, անհրաժեշտ վարքագիծ ապահովելու, ինչպես նաև կոռուպցիոն և տարաբնույթ այլ հանցագործություններ կանխարգելելու նպատակ:

Օրենսդիրը բավարար հետևողականություն չի դրսևորել նաև կարգապահական տույժերի ցանկը սահմանելիս: Ընդ որում, տույժերի տեսակների հարցը միայն մասամբ փոխկապակցության մեջ չի գտնվում հանրային ծառայության տեսակի հետ, ինչից բխում է, որ անհիմն տարաբնույթ տույժի տեսակներ սահմանելը գործնականում հանգեցնում է ինչպես իրավակիրառ շփոթի, այնպես էլ՝ ներքին հակասությունների: Մասնավորապես, պետական հատուկ ծառայությունների միջև առկա է պաշտոնների համադրության համակարգ, ինչը կարող է անխափան գործել միայն միասնական իրավական կարգավորումների պարագայում: Հավելենք, որ օրենսդրության այս թերությունը ևս հակասում է հանրային ծառայողներին միասնական պահանջներ ներկայացնելու սկզբունքին:

Ինչևէ, մասնավոր օրինակներով ներկայացնենք կարգապահական տույժերի տեսակներին առնչվող օրենսդրական դրույթները: «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, վարչական տույժերն են՝ ա) նախազգուշա-

ցումը, բ) նկատողությունը, գ) խիստ նկատողությունը, դ) օրենքով սահմանված կարգով աշխատավարձի իջեցումը, ե) զբաղեցրած պաշտոնից ազատումը՝ քաղաքացիական ծառայության խորհրդի համաձայնությամբ և զ) քաղաքացիական ծառայության ավելի բարձր դասային աստիճանի, բացառությամբ քաղաքացիական ծառայության բարձրագույն դասային աստիճանի, իջեցումը՝ մեկ աստիճանով: «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, վարչական տույժերն են՝ ա) նկատողությունը, բ) խիստ նկատողությունը, գ) պաշտոնի իջեցումը, դ) կոչման իջեցումը մեկ աստիճանով և ե) ծառայությունից ազատումը: «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, վարչական տույժերն են՝ ա) նկատողությունը, բ) խիստ նկատողությունը, գ) մինչև 3 ամիս ժամկետով 10-50 տոկոսով պաշտոնային դրույքաչափի իջեցումը, դ) պաշտոնին ոչ լրիվ համապատասխանության մասին զգուշացումը, ե) պաշտոնի իջեցումը մեկ աստիճանով, զ) կոչումի իջեցումը մեկ աստիճանով և է) ոստիկանությունից ազատումը: «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, վարչական տույժերն են՝ ա) դիտողությունը բ) նկատողությունը, գ) խիստ նկատողությունը, դ) դասային աստիճանի իջեցումը մեկ աստիճանով, ե) պաշտոնի իջեցումը և զ) պաշտոնից ազատումը:

Օրինակները կարելի է շարունակել, սակայն պատկերը, թերևս, պարզ է: Տվյալ դեպքում առանձնահատկություններն իրավաչափ կլինեին, եթե դրանք վերաբերեին միայն քաղաքացիական ծառայությանը, քանի որ այս դեպքում տույժի առանձին տեսակներ նշանակելու դեպքում որոշակի իրավասություն ունի քաղաքացիական ծառայության խորհուրդը: Ինչ վերաբերում է պետական հատուկ ծառայողներին, ապա այս դեպքում կարելի էր բավարարվել միայն կարգավիճակից բխող առանձնահատկություններով. օրինակ մի դեպքում շնորհվում է կոչում, մեկ այլ դեպքում՝ դասային աստիճան և այլն:

Բոլոր դեպքերում, օրենսդրությամբ ամրագրված տույժի բոլոր տեսակները կազմում են հետևյալ համակարգը՝ա) դիտողություն, բ) նախազգուշացում, գ) նկատողություն, դ) խիստ նկատողություն, ե) դասային աստիճանի (կոչման) իջեցում մեկ աստիճանով, զ) որոշակի

ժամկետով պաշտոնային դրույքաչափի կամ աշխատավարձի իջեցում, է) պաշտոնին ոչ լրիվ համապատասխանության մասին զգուշացում, ը) պաշտոնի իջեցում և թ) պաշտոնից ազատում:

Տույժը, որպես կանոն, մարվում է մեկ տարվա ժամկետում, որը հաշվարկվում է տույժ նշանակելու օրվանից: Սակայն տույժը կարելի է հանել ժամկետից շուտ՝ որպես խրախուսման միջոց, եթե ծառայողը նոր կարգապահական խախտում թույլ չի տվել և դրսևորել է իրեն որպես բարեխիղճ ծառայող:

ԲԱԺԻՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՎԱՐՉԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

ԳԼՈՒԽ 21.
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

§1. Տնտեսության պետական կառավարումը

Տնտեսության պետական կառավարման էությունն ու խնդիրները. Տնտեսության կառավարումը մինչև 1991թ., իրագործվում էր տնտեսական և սոցիալական զարգացման միասնական պետական պլանների հիման վրա: Վերջինս ենթադրում էր տնտեսության կենտրոնացված կառավարում (տնտեսավարման սահմանափակ ինքնուրույնությամբ) տարածքներում, ձեռնարկություններում և կազմակերպություններում: 1991թ. ԽՍՀՄ փլուզումից հետո հետխորհրդային երկրներում դրվեց շուկայական տնտեսության հիմքը:

Շուկայական կառուցակարգի պայմաններում տնտեսության կառավարումը պետության կարևորագույն գործառույթներից է: Պետությունը ապահովում է տնտեսության կառավարման բնագավառում ընդունվող որոշումների իրավական հիմքը, պաշտպանում է ազգային տնտեսական շահերը, վերահսկում է դրամական շրջանառության բազային չափանիշները:

Պետական կառավարումն անմիջականորեն վերաբերում է ինչպես իրավաբանական, այնպես էլ ֆիզիկական անձանց, ենթադրում է նրանց հետ փոխհարաբերվելու որոշակի սկզբունքների առկայություն: Այն վերջիններիս վրա ունի, ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն: Վերջինս, հատկապես, դրսևորվում է ոչ իրավաչափ միջամտության դեպքում:

Պլանային տնտեսության շուկայական տնտեսության վերափոխման հետ մեկտեղ տեղի է ունենում պետության և պետական կառավարման մարմինների գործառույթների վերափոխում, որը պայմա-

նավորված է շուկայական տնտեսության առանձնահատկությամբ: Պետության կողմից տնտեսության միջամտության անհրաժեշտությունը, առաջին հերթին, պայմանավորված է այն տնտեսական և սոցիալական հիմնախնդիրների սրմամբ, որոնք չեն կարող լուծվել ինքնաբերաբար, մասնավոր սեփականության հիման վրա: Միևնույն ժամանակ, գոյություն ունեն այնպիսի բնագավառներ, որոնք չեն կարող արդյունավետ գործել առանց պետության կողմից դրանց կարգավորման և աջակցման: Դա պայմանավորված այն հանգամանքով, որ կան ոլորտներ, որոնք գտնվում են շուկայական կառուցակարգի հասանելիության սահմաններից դուրս:

Պետության մասնակցությունը տնտեսության կառավարմանը պետք է հետապնդի ինչպես տնտեսավարող սուբյեկտների, այնպես էլ հանրային շահերի ներդաշնակ պաշտպանություն: Հանրային շահերը նկատելի են, օրինակ, երբ սպառման շրջանակները կրում են համեմատաբար լայն սահմաններ: Դրանք, մասնավորապես, այն ապրանքներն ու ծառայություններն են, որոնք անկախ այն բանից, թե հասարակության առանձին անդամը վճարել է դրանից օգտվելու համար, թե՝ ոչ, կարող են օգտագործվել հասարակության բոլոր անդամների կողմից[1]: Այսպիսիք են, մասնավորապես պաշտպանության և ազգային անվտանգության բնագավառը, հասարակական կարգի պաշտպանությունը, կրթությունը, առողջությունը և այլն: Շուկան ի վիճակի չէ արտադրելու «հանրային բարիքներ», քանի որ շատ դժվար է որոշել հասարակության յուրաքանչյուր անդամի կողմից սպառվող այդ բարիքների «օգտակարությունը»: Հետևաբար, հնարավոր չէ սահմանել, թե որքան պետք է «հանրային բարիքի» համար վճարի յուրաքանչյուրը: Ակնհայտ է, որ պետությունը պետք է իր վրա վերցնի դրանց արտադրության հոգսը, աջակցի և կարգավորի այն և կազմակերպի քաղաքացիների կողմից դրանց համատեղ վճարումը: Պետական կառավարման մարմինների գործառույթների վերափոխման միջոցով նեղացվել են նախկին այնպիսի գործառույթների կիրառումը, ինչպիսիք են պետական պլանավորումը, գնագոյացումը, որոնք այժմ իրականացնում են պետական մարմիններն այնքանով,

[1] Տե՛ս, Экономика: Учебник/Под ред. А.И.Архипова, А.Н.Нестеренко, А.К.Большакова. – М.: «Проспект», 1998. էջ 387:

ինչքանով դա վերաբերվում է պետական սեկտորի տնտեսական գործունեության արդյունքներին, բացառությամբ հանրային ծառայությունների ոլորտին, որտեղ սակագինը սահմանվում է հանրային ծառայությունների պետական հանձնաժողովի հետ համաձայնեցնելով:

Նոր տնտեսակարգի պայմաններում կիրառվում են հետևյալ գործառույթները *ա) տնտեսության գործառնության իրավական հիմքերի ստեղծում, բ) հակամենաշնորհային գործունեության կարգավորում, գ) մակրոտնտեսական կայունացման քաղաքականության անցկացում, դ) պաշարների (ռեսուրսների) տեղաբաշխման կարգավորում, ե) եկամուտների վերաբաշխում, զ) պետության, որպես գույքային հարաբերությունների սուբյեկտի գործունեությունը:* Նման դասակարգումը բավականին պայմանական է, քանի որ իրական կյանքում բոլոր գործառույթները փոխկապակցված են ու գործում են համալիր կերպով[1]*:*

Շուկայական հարաբերությունների արմատավորմանը զուգընթաց պետական կառավարումն օժտվեց միանգամայն նոր գործառույթներ իրականացնելու իրավասությամբ՝ 1) ոլորտի զարգացման ռազմավարության և նպատակային-համալիր ծրագրերի մշակում և իրականացում,

2) տնտեսական հարաբերությունների իրավական և նորմատիվային կարգավորում,

3) ներդրումների խթանում,

4) ոլորտում մրցակցային բարենպաստ միջավայրի ստեղծում:

Պետական կառավարման ժամանակակից չափորոշիչները և դրանց էվոլյուցիան պայմանավորված է սոցիալ-տնտեսական և քաղաքական համակարգերի փոփոխությունների բազմակողմանի գործընթացներով: Դրանք սրեցին կառավարման հարցերի նկատմամբ ուշադրությունը և առաջ բերեցին դրանց վերաբերյալ ծայրահեղ դատողություններ: Դրանցից մեկը հանգում է նրան, որ պետք է ընդհանրապես վերացնել տնտեսության բնագավառում կարգավորումը: Նման տեսակետը չի կարելի ճիշտ համարել հետևյալ պատճառներով՝

[1] Տե՛ս, Экономика: Учебник/Под ред. проф. А.С.Булатова. - М.: Юристъ, 2002. էջ 261.

1) ժամանակակից պայմաններում պետությունը կոչված է իրականացնելու տնտեսական և սոցիալ-մշակութային քաղաքականություն: Այն, ի դեպ, արտահայտում է տարբեր հասարակական շահեր, և, եթե պետությունը դուրս է բերվում վերը նշված բնագավառներից, այն չի կարող ապահովել վերը նշված շահերը,

2) անցումային բարդ ժամանակաշրջանում պետության դերը ոչ միայն չի նվազում, այլև ուժեղանում է: Դա է վկայում Գերմանիայի, Ճապոնիայի տնտեսության վերականգման փորձը՝ երկրորդ համախարհային պատերազմից հետո, երբ ուժեղացավ տնտեսության կենտրոնացված պետական կառավարումը,

3) շուկայի ինքնակարգավորումը ծնում է տարրերային գործընթացներ, որոնց վնասակար, իսկ երբեմն էլ կործանարար հետևանքները նվազագույնի կարող է հասցվել միայն պետական կառավարման միջոցով:

4) մասնավոր սեփականությունը ծնում է իր հարկադրական բնույթով ավելի հնարամիտ և կոշտ տնտեսական իշխանություն, քան ամբողջատիրությունը,

5) պետությունը չի հակադրվում շուկայական տնտեսությանը: Այն տիրապետում է տնտեսության արդյունավետ զարգացումը խթանող զգալի կարողությունների,

6) պետությունը կոչված է կանխելու մենաշնորհի բացասական հետևանքները, հատկապես, բնական մենաշնորհի, ինչպես նաև այլ անհրաժեշտ դեպքերում մտցնելու այս կամ այն սահմանափակումը, սահմանելու համապատասխան ռեժիմ,

7) պետությունն իրականացնում է սեփական տնտեսվարողների և ներքին շուկայի շահերի պաշտպանությունն արտաքին նվաճողական հարձակումներից, ինչը նույն հաջողությամբ չեն կարող անել տնտեսավարող սուբյեկտները:

Պետական կառավարման կառուցակարգը վերլուծելիս, ելնելով դրա ճյուղային և միջճյուղային կառուցվածքից, ոմանք հաճախ իրար են հակադրում երկու հիմնարար հասկացություններ՝ «***կառավարում***» և «***կարգավորում***»:

Պետական կառավարումը կամ գործադիր իշխանության գործնական իրացումն իր իրավաբանական բնույթով կարգավորիչ բնույթ ունի: Պետական կառավարման վարչաիրավական կարգավորումը

պետք է դիտարկել ազատության և կարգուկանոնի, օրինականության և ստեղծագործության, սուբյեկտիվության և օբյեկտիվության, նպատակահարմարության և արդյունավետվության համակցման տեսանկյունից[1]:

Կարգավորումը կառավարման գործընթացի համալիր գործողությունների վառ արտահայտությունն է: Այն հանդիսանում է կառավարման բաղկացուցիչ մաս[2]:

Պետք է նշել, որ պետական կարգավորվորումը կարելի է դիտարկել լայն և նեղ առումով: Լայն առումով այն դրսևորվում է պետության կողմից տնտեսության բնագավառի հասարակական հարաբերությունների իրավական կարգավորմամբ: Այս տեսանկյունից դրա սուբյեկտներն են պետական իշխանության օրենսդիր և գործադիր մարմինները: Պետական կարգավորման իրավական ավանդական ձևերն են օրենքները, ենթաօրենսդրական ակտերը, իսկ որոշ վերապահումներով՝ նաև դատական նախադեպը:

Գործադիր իշխանության իրացման ոլորտի կարևորագույն ասպեկտների պետական կարգավորումը վերապահված է օրենսդիր իշխանությանը:

Նեղ առումով պետական կարգավորումը պետական կառավարման գործառույթներից մեկն է: Ներկայումս տվյալ գործառույթը կարևոր նշանակություն ունի նաև սոցիալ-մշակութային բնագավառում:

Գործադիր իշխանության յուրաքանչյուր մարմին իրականացնում է պետական կառավարում, որի կառուցակարգում շատ թե քիչ չափով ներկայացված են պետական կարգավորման տարրեր: Այս առումով պետական կառավարումն ավելի լայն հասկացություն է քան պետական կարգավորումը[3]:

Տնտեսության պետական կառավարման բնագավառում կառավարման կայուն համակարգ ձևավորելու համար մեծ նշանակություն

---

[1] Տե՛ս Административное право, учебник, под, редакцией, Г.В. Атаманчука. М., 2003. էջ 519:

[2] Տե՛ս Административное право, учебник, под, редакцией, Ю.М. Козлова и Л.Л. Попова, М,. 1999 էջ,64-65:

[3] Տե՛ս Административное право, учебник, под, редакцией, Г.В. Атаманчука. М., 2003. էջ 527:

ունի իրավական հիմքերի ձևավորումը: Տնտեսության կառավարմանն առնչվող հարաբերությունների կարգավորմանն են նվիրված բազմաթիվ օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր, որոնց համակարգում ուրույն տեղ ունեն, հատկապես՝ ՀՀ մաքսային օրենսգիրքը (06.07.00), «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքը (31.05.01), «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքը (11.10.07), «Հարկերի մասին» ՀՀ օրենքը (14.04.97) և այլն:

Տնտեսության կառավարման բնագավառի կարևորագույն տարրերից է վերահսկողությունը: Այն կազմում է կառավարման համակարգի անքակտելի մասը, որի նպատակն է բացահայտել սահմանված չափանիշներից շեղումները և օրինականության խախտումները: Պետական վերահսկողությունը նպատակ է հետապնդում առավել կարևոր փուլերում վերահսկելու տնտեսական և ֆինանսական գործունեության արդյունավետությունը և նյութական ռեսուրսների տնտեսման ուղիները: Դա հնարավորություն է ընձեռում ձեռնարկել ուղղորդող միջոցներ, անհրաժեշտության դեպքում մեղավորներին ենթարկելու պատասխանատվության, փոխհատուցում ստանալու պատճառված վնասի համար, ինչպես նաև միջոցառումներ ձեռնարկել՝ կանխելու կամ կրճատելու նման խախտումները:

Ֆինանսական վերահսկողությունը կոչված է ապահովելու հարկման, արժութային գործառնությունների, արտաքին տնտեսական գործունեության և այլնի վերաբերյալ գործող օրենսդրության կիրառումը: Վերահսկողության գործուն բնույթը սերտորեն կապված է ֆինանսական կարգապահության խախտման համար կիրառվող պատասխանատվության հետ, որը նախատեսում է վարչական և նյութական ներգործության այլ միջոցներ: Այս առումով կարևոր նշանակություն ունի «ՀՀ տարածքում գործող կազմակերպություններում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» 2000 թ. մայիսի17-ի օրենքը[1]:

Կառավարման հաջորդ բաղադրիչը տնտեսության բնագավառի կառուցվածքային քաղաքականության գերակայությունների որոշումն ու համակարգումն է: ՀՀ կառավարության նախաձեռնությամբ ընդունվեց «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակ-

[1] ՀՀ ՊՏ 2000/ 14, 10, էջ 3:

ցության մասին», ՀՀ օրենքը (05.12.00), որը սահմանում է այս բնագավառում պետական քաղաքականության իրականացման սկզբունքները, փոքր և միջին ձեռարկատիրական գործունեություն իրականացնող սուբյեկտների դասակարգումը, աջակցման հիմնական ուղղությունները և այլն:

Այս բնագավառում կառավարության իրավասության մեջ է մտնում իրավական հիմքերի ձևավորումը, զարգացման քաղաքականության և ռազմավարության մշակումը: Փոքր և միջին ձեռնարկատիրության աջակցությունն իրականացվում է տարեկան ծրագրերով, որի մշակման և հաստատման իրավասությունը վերապահված է Հայաստանի Հանրապետության կառավարությանը: Իսկ ծրագրի ֆինանսավորման համար կառավարությունը պետական բյուջեում նախատեսում է առանձին տող: Ծրագիրը մշակվում է օրենքով սահմանված հիմնական ուղղություններին համապատասխան՝ ելնելով տվյալ ժամանակահատվածում զարգացման գերակայություններից: Այդ ծրագիրն իրականացվում է կառավարության կողմից սահմանված կարգով:

Հարկերի և տուրքերի գանձում: Տնտեսության կառավարման կարևոր ոլորտներից է հարկային քաղաքականությունը: Հարկերն օգտագործվում են որպես ազգային եկամտի երկրորդական բաշխման և վերաբաշխման իրավական ձև: Հարկերի միջոցով կազմակերպությունների, ինչպես նաև քաղաքացիների եկամուտների մի մասը մոբիլիզացվում է՝ պետության պահանջների, նրա ներքին և արտաքին խնդիրների լուծման համար:

Այս ոլորտում պետական մարմինների և դրանց կողմից իրականացվող գործառույթների շրջանակը կարգավորված է մի շարք օրենսդրական ակտերով. ՀՀ մաքսային օրենսգիրքը (06.07.00), «Մաքսային ծառայության մասին« ՀՀ օրենքը (03.07.02), «Հարկերի մասին» (14.04.97), «Գույքահարկի մասին» (26.12.02), «Ավելացված արժեքի մասին» (14.05.97), «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքները (30.09.97) և այլն:

Ստանդարտացում և սերտիֆիկացում: Ստանդարտացման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքով (09.11.99), որը սահմանում է ստանդարտացման ինստիտուտը և կանոնակարգում դրան առնչվող կառավար-

չական հարաբերությունները: Ըստ այդ օրենքի, ստանդարտացումը տնտեսությունում գոյություն ունեցող կամ հնարավոր խնդիրների վերաբերյալ համընդհանուր և բազմակի կիրառման համար դրույթների սահմանման միջոցով որոշակի բնագավառում կարգավորվածության լավագույն աստիճանին հասնելու ուղղված գործունեություն է: Ստանդարտացումը, ըստ էության, համապատասխան ստանդարտների սահմանման և արտադրանքը, աշխատանքները, ծառայությունները դրանց համապատասխանեցնելուն ուղղված գործունեություն է, որը նպատակ է հետապնդում ապահովելու սպառողների շահերը, արտադրանքի համապատասխանությունը սանիտարահիգիենիկ նորմերին ու կանոններին, ծառայությունների մատուցման, աշխատանքների իրականացման անվտանգությունը:

Տնտեսության բնագավառը կարգավորող մարմինները մեծաքանակ են և տնտեսական հարաբերությունները կարգավորելու համար օժտված են բավական ընդարձակ լիազորություններով: Այդ մարմինները լինում են ընդհանուր իրավասության և ճյուղային իրավասության:

Հայաստանի Հանրապետության կառավարության, որպես ընդհանուր իրավասության մարմնի լիազորությունները հիշյալ բնագավառում, հիմնականում հանգում են հետևյալին՝

1) ապահովում է տնտեսական գործունեության ազատությունը, արտադրանքի, ծառայությունների և ֆինանսական միջոցների ազատ տեղաշարժը,

2) մշակում է ներդրումային քաղաքականությունը և միջոցներ է ձեռք առնում դրա իրականացման ուղղությամբ,

3) իրականացնում է պետական սեփականության կառավարումը,

4) իրականացնում է մաքսային գործի ընդհանուր կառավարումը,

5) մշակում և իրականացնում է պետական քաղաքականությունը միջազգային տնտեսական, ֆինանսական և ներդրումային համագործակցության բնագավառում,

6) միջոցներ է ձեռնարկում հայրենական արտադրողների աշխատանքների և ծառայություններ մատուցողների շահերի պաշտպանության նկատմամբ,

7) ապահովում է երկրում միասնական ֆինանսական, դրամա-

վարկային քաղաքականության մշակումը և իրականացումը,

8) օրենքների և ՀՀ Նախագահի հրամանագրերի հիման վրա իրականացնում է գործադիր իշխանության մարմինների գործունեության նորմատիվային կարգավորումը և դրանց կառավարումը,

9) իրականացնում է միջոցառումներ ուղղված գիտության և տեխնիկայի զարգացմանը, բնական ռեսուրսների պահպանմանը և բանական օգտագործմանը,

10) համակարգում է բնապահպանական միջոցառումներ իրականացնող գործադիր իշխանության մարմինների գործունեությունը,

11) իրականացնում է կառավարում ներքին առևտրի, ներտնտեսական այլ գործունեության բնագավառներում և այլն:

Այս բնագավառում կարևոր դերակատարություն ունի ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը: Այն հատուկ իրավասության գործադիր իշխանության մարմին է, որը մշակում է ՀՀ կառավարության տնտեսական քաղաքականությունը, այդ թվում նաև արդյունաբերության բնագավառում: Նախարարությունն ստեղծվում, վերակազմակերպվում և նրա գործունեությունը դադարեցվում է ՀՀ նախագահի հրամանագրով: Նախարարության լիազորությունները սահմանվում են օրենքներով, ՀՀ նախագահի հրամանագրերով, կարգադրություններով և ՀՀ կառավարության որոշումներով, ինչպես նաև ՀՀ միջազգային պայմանագրերով:

Նախարարությունը կազմված նախարարից և նախարարության աշխատակազմից: Նախարարության համակարգում ընդգրկում են նախարարության ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպությունները և հիմնարկները:

Տնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունների մշակման բնագավառում հիշյալ նախարարության խնդիրներն են՝

1) գիտելիքների տնտեսության ձևավորումը և նորարության խթանումը,

2) մրցակցային տնտեսության զարգացման պայմանների ապահովումը, սպառողների շահերի պաշտպանության համակարգի զարգացումը,

3) տարածքային զարգացման անհամաչափությունների նվազեցումը,

4) արդյունաբերության գլոբալ մրցակցության բարձրացումը, տուրիզմի և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը,

5) գործարարության, ներդրումների և արտահանման խթանումը, գործարարության համար բարենպաստ և միջազգային մակարդակով մրցունակ միջավայրի ապահովումը, բարձրարժեք ծառայություն մատուցող ոլորտների զարգացումը,

6) տեղեկատվական հասարակության ձևավորումը,

7) «առավելագույն արժեք փողի դիմաց» սկզբունքի ձևավորումը և նախարարության կողմից բարձրորակ ծառայությունների ապահովումը:

Էկոնոմիկայի նախարարությունը նշված նպատակի և խնդիրների իրականացման համար օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է մի շարք գործառույթներ, որոնք վերաբերում են տնտեսության զրագացումն ապահովող տարբեր ոլորտների՝ *տնտեսական քաղաքականության և ռազմավարության ոլորտ, տնտեսության համաչափ զարգացման ոլորտ, գիտելիքի, տնտեսության, նորամուծության և ձեռներեցության ոլորտ, արդյունավետ շուկաների ոլորտ, գործարար միջավայրի բարելավման և տեղեկատվական հասարակության ոլորտ*: Ստորև ներկայացված են նախարարության գործառույթները նշված ոլորտներում:

Տնտեսական քաղաքականության և ռազմավարության ոլորտում

1) հետազոտում և վերլուծում է տնտեսությունը, բացահայտում և նախանշում է տնտեսության զարգացման հիմնական ոլորտները և ուղղությունները,

2) մշակում է պետության սոցիալ-տնտեսական զարգացման (ՍԶԳ) և տնտեսական աճի երկարաժամկետ քաղաքականությունը և իրականացնում դրա դիտանցում (մոնիթորինգ),

3) մշակում է միկրոտնտեսական քաղաքականությունը և իրականացնում դրա դիտանցում, առաջարկություններ է ներկայացնում մակրոտնտեսական քաղաքականության վերաբերյալ՝ կարճաժամկետ տնտեսական աճի կանխատեսման և դրա ապահովմանն ուղղված ծրագրերի մասով,

4) գնահատում է տնտեսական քաղաքականության իրականացման արդյունքները և ազդեցությունը տնտեսության և հասարակութ-

յան վրա, նախապատրաստում տնտեսության վիճակի մասին հաշվետվությունները,

5) իրականացնում է տնտեսության զարգացման պետական և մասնավոր երկարաժամկետ ներդրումային ծրագրերի ընթացքի դիտանցումը և արդյունքների գնահատումը,

6) առաջարկություններ է ներկայացնում մաքսային, հարկային և ոչ հարկային եկամուտների քաղաքականության վերաբերյալ՝ երկարաժամկետ տնտեսական աճի մարտահրավերների տեսակետից,

7) առաջարկություններ է ներկայացնում սոցիալական, ֆինանսական, բյուջետային, դրամավարկային և սակագնային քաղաքականության վերաբերյալ,

8) մշակում է արտաքին տնտեսական քաղաքականությունը և իրականացնում է դրա դիտանցում,

9) դիտանցում է միջազգային ֆինանսական կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների հետ համատեղ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերը՝ կառավարության մակրոտնտեսական և բյուջետային ծախսերի քաղաքականությանը համապատասխան,

10) դիտանցում է ՀՀ և Եվրոպական միության միջև կնքված «Գործընկերության և համագործակցության մասին» համաձայնագրի և Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում «Հայաստան-Եվրոպական միություն» գործողությունների ծրագրի իրականացումը, և այդ ծրագրերի մասով իրականացնում է Եվրոպական միության կառույցների հետ տարվող աշխատանքները,

11) դիտանցում է Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո իրականացվող ծրագրերը,

12) իրականցնում է օտարերկրյա պետությունների և միջազգային կառույցների հետ առևտրատնտեսական և գիտատեխնիկական համագործակցության աշխատանքները,

13) դիտանցում է Առևտրի համաշխարհային կազմակերպությունում ՀՀ առևտրական և մշտական ներկայացուցիչների գործունեությունը,

14) մշակում է օտարերկրյա պետությունների հետ կնքվող համաձայնագրերի և միջկառավարական պայմանագրերի նախագծեր այլն:

Տնտեսության համաչափ զարգացման ոլորտում

1) մշակում է տնտեսության մրցունակության բարձրացման քաղաքականությունը,

2) առաջարկություններ է ներկայացնում տարածքային տնտեսական քաղաքականության մշակման և իրականացման վերաբերյալ, նախաձեռնում տարածքային տնտեսական զարգացմանն ուղղված նպատակային ծրագեր և իրականացնում դրանց դիտանցումը,

3) մշակում է զբոսաշրջիկության պետական քաղաքականությունը և դիտանցում զբոսաշրջիկության զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացումը,

4) մշակում է բարձր և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման քաղաքականությունը և դիտանցում դրա իրականացումը,

5) մշակում է գլոբալ մարտահրավերներին համապատասխան երկարաժամկետ ոլորտային զարգացման ծրագրերը,

6) ներկայացնում է կարծիքներ ռազմարդյունաբերության քաղաքականության մշակման և իրականացման վերաբերյալ,

7) մշակում է տնտեսության զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի կազմակերպման պետական քաղաքականությունը, մշակում և դիտանցում է զորահավաքային նախապատրաստության աշխատանքները, մշակում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքը, ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրման մեթոդաբանական հիմքերը և այլն:

Գիտելիքի տնտեսության, նորամուծության և ձեռներեցության ոլորտում

1) մշակում է գիտելիքի տնտեսության ենթակառույցների ձևավորման քաղաքականությունը,

2) մշակում է նորամուծության խթանման քաղաքականությունը,

3) մշակում է գիտելիքների տնտեսության և նորամուծության նպատակային ծրագրերը և դիտանցում դրանց իրականացումը,

4) մշակում է կազմակերպությունների և ձեռնարկատիրության պետական աջակցության քաղաքականությունը,

5) մշակում և շահագրգիռ այլ մարմինների հետ համատեղ իրականացնում է «գիտություն-համալսարաններ» կապերի ընդլայնման

քաղաքականությունը և այլն:

Արդյունավետ շուկաների ոլորտում

1) ուսումնասիրում է ներքին շուկաները, բացահայտում առկա խոչընդոտները, մշակում է ներքին շուկայի պաշտպանության և հակագնագցման միջոցների կիրառման քաղաքականությունը և իրականացում դիտանցում,

2) մշակում և ներդնում է սպառողների անվտանգության ապահովման գործուն մեխանիզմներ, կատարելագործում սպառողների իրավունքների և շահերի պաշտպանության պետական վերահսկողության համակարգը, իրականացնում սպառողների իրավունքների և շահերի պաշտպանության միջոցառումների վերաբերյալ հանրության իրազեկման ծրագրերը,

3) մշակում է միջոցառումներ՝ բարենպաստ առևտրային ռեժիմների ձևավորման և արտաքին շուկաների մուտք գործելու խոչընդոտները վերացնելու ուղղությամբ, դիտանցում է Եվրոպական միության, Առևտրի համաշխարհային կազմակերպության և այլ միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունից և (կամ) անդամակցությունից բխող առևտրատնտեսական պարտավորությունների կատարումը,

4) ներդնում է որակի արդյունավետ համակարգ (ստանդարտացում, չափագիտություն, սերտիֆիկացում և հավատարմագրում), մշակում է տվյալ ոլորտի քաղաքականությունը և իրականացնում դիտանցում,

5) մշակում է տնտեսական մրցակցության պաշտպանության քաղաքականությունը և այլն:

Գործարար միջավայրի բարելավման և տեղեկատվության հասանելիության ոլորտում

1) մշակում է գործարար և ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված քաղաքականությունը, իրականացնում է ՀՀ-ն որպես «Գործարարությամբ զբաղվելու գերազանցության կենտրոն» ծրագրի դիտանցում,

2) ձևավորում է ՀՀ՝ որպես գործարարության իրականացման համար բարենպաստ երկրի նկարագիրը և առաջարկություններ ներկայացնում դրա գովազդման ուղղությամբ,

3) մշակում է ներդրումների և ներդրողների պաշտպանության քաղաքականությունը և իրականացնում դիտանցում,

4) բացահայտում է գործարար միջավայրի խոչընդոտները և առաջարկություններ ներկայացնում դրանց վերացման ուղղությամբ, ձևավորում է կազմակերպությունների ստեղծման, կտրուկ աճին նպաստող գործարար միջավայր,

5) ուսումնասիրում է ներմուծման և արտահանման վարչարարական ընթացակարգերը և առաջարկություններ ներկայացնում դրանց պարզեցման ուղղությամբ և այլն:

Թանկարժեք մետաղների ոլորտում

1) մշակում և իրականացնում է թանկարժեք մետաղների բնագավառում քաղաքականությունը,

2) իրականացնում է թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգդրոշմման լիցենզավորումը և գործունեության պահանջների ու պայմանների պահպանման նկատմամբ հսկողությունը,

3) իրականացնում է թանկարժեք մետաղների, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մասնագիտացված, այդ թվում՝ մանրածախ առուվաճառքի նկատմամբ հսկողությունը,

4) կազմակերպում է թանկարժեք մետաղների հարգորոշողների և հարգդրոշմողների որակավորման քննություններ և այլն:

Նախարարն իրականացնում է նախարարությանը վերապահված խնդիրները և գործառույթները, պատասխանատու է լիազորված բնագավառում: Նա հաշվետու է ՀՀ նախագահին, կառավարությանը և վարչապետին:

Արդյունաբերության պետական կառավարման գործառույթներն ու իրավասու մարմինների լիազորությունները: Արդյունաբերությունը հանդիսանում է պետության տնտեսական շահերի կարևորագույն ոլորտը, քանի որ կոչված է ապահովելու տվյալ արտադրանքի նկատմամբ հասարակական և անհատական պահանջարկը: Այդ առումով ներկա ժամանակաշրջանում՝ պետական սեփականության զանգվածային սեփականաշնորհման գործընթացից հետո պետության խնդիրն է դարձել տնտեսության և արդյունաբերության բնագավառում հախուռն ձևով առաջացած կազմակերպությունների գործունեության համակարգումը և արդյունաբերության բնագավառում առաջացող հարաբերությունների կարգավորումը: Պետությունը մաս-

նակցում է առավել արդյունավետ ներդրումային նախագծերի իրականացմանը, նպաստում է բարձր տեխնոլոգիաների զարգացմանը:

Արդյունաբերության բնագավառում արդյունաբերական գործունեության կարևորագույն բաղադրիչներն են արդյունաբերական գործունեություն իրականացնող կազմակերպությունները, որոնց որպես չափանիշ ընդունելիս արդյունաբերության բնագավառում պետության արդյունաբերական քաղաքականությունը բաժանվում է երեք ուղղությունների՝ 1) քաղաքականություն այն կազմակերպությունների առնչությամբ, որոնք ունեն արտահանման ուղղվածություն, կայուն ֆինանսավորում՝ իրենց սեփական ֆինանսական միջոցներից և կարիք չունեն պետության աջակցության, 2) այն ճյուղերը, որոնք ունեն բարձր գիտատեխնիկական ներուժ և ունակ են կարճ ժամանակում ստեղծել մրցունակ արտադրանք: Սա իրական բարձր տեխնոլոգիաների ոլորտն է, որտեղ պետությունը իրականացնում է աջակցություն, նպաստում է այս ճյուղերի զարգացմանը՝ պետպատվերների, ներդրումների, սուբսիդիաների միջոցով, ընդ որում, գերակայություն են ստանում այն նախագծերը, որոնց պետությունը մասնակցում է բաժնային հիմունքներով մասնավոր անձանց հետ միասին և 3) քաղաքականություն, որն իրականացվում է ծայրահեղ տեխնիկական հետամնացությամբ ճյուղերի կտրվածքով: Այսպիսի ճյուղերի կազմակերպությունները պետք է ինքնուրույն գտնեն իրենց տեղը շուկայում, սակայն պետությունը կարող է այս կազմակերպություններին հատկացնել վարկեր դրանց օգտագործման նկատմամբ պետության խիստ հսկողության ներքո: Պետությունը կարող է նպաստել դրանց գործունեության զարգացմանը ներմուծվող արտադրանքի նկատմամբ իրականացվող տարիֆային քաղաքականությամբ:

Արդյունաբերության ճյուղերը բազմազան են՝ գունավոր մետալուրգիա, սննդի, տեքստիլ արդյունաբերություն: Արդյունաբերական քաղաքականության իրականացնողներ են հանդիսանում տարբեր պետական մարմիններ: Կառավարությունն իր կարգավիճակին համապատասխան իրականացնում է ընդհանուր կառավարման և ուղղորդման խնդիրներ, կառավարում է պետական սեփականությունը, հաստատում է տարբեր ժամկետայնություն ունեցող զարգացման նպատակային ծրագեր: Վերջինիս իրավասության ներքո է գտնվում

արդյունաբերական շուկայի գործունեության համար անհրաժեշտ միասնական իրավական հիմքերի սահմանումը, ատոմային էներգետիկան և պաշտպանական արդյունաբերությունը:

Տնտեսության ոլորտում կառավարման գործառույթների իրականացումը կազմակերպելու համար էկոնոմիկայի նախարարության աշխատակազմում գործում են համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներ, ինչպես նաև առանձնացված ստորաբաժանումներ՝ մտավոր սեփականության գործակալություն, լիցենզավորման և թույլտվությունների գործակալություն, հավատարմագրման գործակալություն, շուկայի և սպառողների շահերի պաշտպանության պետական տեսչություն:

Էներգետիկայի պետական կառավարման առանձնահատկությունները: Էներգետիկայի կառավարման ոլորտը հանդիսանում է տնտեսության կառավարման հարաբերականորեն ինքնուրույն ճյուղ, ինչն էլ հիմք ընդունելով Հանրապետությունում այդ ոլորտի կառավարման համար ստեղծվել է առանձին պետական մարմին՝ հանձինս՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության:

Տնտեսության կառավարման վերը նշված ձևերն ու մեթոդները կիրառելի են նաև էներգետիկայի պետական կառավարմանը, միաժամանակ, հաշվի առնելով այս ոլորտի որոշ առանձնանատկությունները, ՀՀ կառավարությունը, հաստատելով ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կանոնադրությունը, արտացոլել է դրանք վերջինիս կողմից իրականացվող գործառույթներում: Հարկ է նկատել, որ ոլորտին առնչվող վարչահիրավական հարաբերությունների գերակշիռ մասը կարգավորված է «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքով (07.03.01):

Նշված կանոնադրության 1-ին կետի համաձայն, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը (այսուհետև՝ Նախարարություն) լիազորված է էներգետիկայի բնագավառում իրականացնելու պետական քաղաքականություն: Նույն կանոնադրության 2-րդ կետի համաձայն ***Նախարարության նպատակներն ու խնդիրներն են՝***

1) էլեկտրական եւ ջերմային էներգիայի հուսալի, անվտանգ եւ արդյունավետ արտադրության, հաղորդման (փոխադրման) եւ բաշխ-

ման, ինչպես նաեւ բնական գազի արդյունահանման, փոխադրման եւ բաշխման ապահովումը,

2) անցումային շրջանում էներգետիկայի բնագավառի անհրաժեշտ կառուցվածքային և այլ բարեփոխումների համալիր միջոցառումների իրականացումը,

3) մրցակցային միջավայրի զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը,

4) իր ենթակայության պետական ձեռնարկությունների գործունեության տնտեսական արդյունավետության եւ դրանց հեռանկարային զարգացմանը նպատակամղված սեփականաշնորհման ու ապապետականացման խթանումը,

5) իր իրավասության սահմաններում էներգետիկայի բնագավառի և էներգասպառող սարքավորումների անվտանգության, շահագործման ու տեխնիկական սպասարկման, ինչպես նաեւ էներգախնայողության ասպարեզի գերատեսչական նորմատիվ ակտերի և նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի սահմանված կարգով հաստատումը,

6) իր իրավասության սահմաններում բնագավառի հարցերի վերաբերյալ ՀՀ միջազգային պայմանագրերի նախագծերի նախապատրաստմանն ու կնքմանը մասնակցությունը,

7) այլ պետությունների, օտարերկրյա իրավաբանական անձանց, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հետ բնագավառի տնտեսական, ֆինանսական, գիտատեխնիկական եւ համագործակցության այլ ձևերի զարգացմանն ուղղված միջոցառումների սահմանված կարգով իրականացումը,

8) ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ խնդիրների և գործառույթների իրականացումը:

Էներգետիկայի պետական կառավարման առանձնահատկություններով է պայմանավորված նաև հանրային ծառայությունները կարգավորող մարմնի ստեղծումը, որը գործում է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի (25.12.03) հիման վրա: Կառավարման այս բնույթի հարցադրումները հանգամանորեն լուսաբանված են սույն ձեռնարկի 24-րդ գլխում:

§2. Ֆինանսների պետական կառավարումը

Ֆինանսները՝ որպես իրավական կարգավորման և պետական կառավարման օբյեկտ, իրենցից ներկայացնում են պետության խնդիրների և գործառույթների ֆինանսական ապահովման համար նախատեսված դրամական միջոցների գործելիության իրավական ռեժիմի կապակցությամբ գոյություն ունեցող հասարակական հարաբերությունների համակարգ:

Ֆինանսական ապահովումն օրենսդրությամբ որոշված եղանակների և միջոցների համակցություն է, որոնք ուղղված են որոշակի նպատակների հասնելու համար ֆինանսական հիմքի ստեղծմանը: Ֆինանսները մշտապես առաջատար դերակատարություն են ունեցել պետության գործունեության ոլորտում, քանզի դա քաղաքական, տնտեսական և սոցիալական շահերի հատման ոլորտն է. ուստի՝ ֆինանսների կառավարման կազմակերպումը պետք է ապահովի այդ շահերի միավորումը՝ հասարակությունում կայունության և համաձայնության մթնոլորտի ապահովման նպատակով: Իշխանության ոչ մի ճյուղ, ոչ մի պետական մարմին չունի իրական իշխանություն՝ առանց իր գործունեության համապատասխան ֆինանսական ապահովման: Հասարակության բնականոն կենսագործունեության, իսկապես իրավական, ժողովրդավարական և սոցիալական պետության ձևավորման գործընթացի իրական ապահովման համար անհրաժեշտ է, որպեսզի ֆինանսների ոլորտում համապատասխան լիազորություններով օժտված պետական յուրաքանչյուր մարմնի գործունեությունը վերահսկվի իշխանության այլ մարմինների կողմից: Միայն այդպես է հնարավոր կանխել պետական միջոցների օգտագործումը՝ ելնելով այս կամ այն քաղաքական ուժի մասնավոր շահերից:

Ֆինանսների պետական կառավարման ոլորտում էական դերակատարություն ունեն մի շարք մարմիններ: Դրանց շարքում, առաջին հերթին, պետք է մատնանշել ՀՀ *ֆինանսների նախարարությունը*՝ որպես գործադիր իշխանության հանրապետական մարմին, որը մշակում և իրականացնում է պետության եկամուտների ձևավորման, պետական ֆինանսների կառավարման բնագավառներում ՀՀ կառավարության քաղաքականությունը: Նախարարությունը ստեղծվում, վե-

րակազմակերպվում և դրա գործունեությունը դադարեցվում է ՀՀ Նախագահի հրամանագրով:

Նախարարության *նպատակներից և խնդիրներից են՝*

1) բյուջետային գործընթացի կազմակերպումը՝ ՀՀ օրենսդրությամբ իրեն վերա պահված իրավասության շրջանակներում,

2) միջազգային ֆինանսական համագործակցության, ֆինանսատնտեսական, վարկային, հարկաբյուջետային, ֆինանսական շուկայի միասնական քաղաքականության մշակման և իրականացմանն ուղղված աշխատանքների կատարման ապահովումը,

3) աուդիտորական, վիճակախաղերի, խաղատների և շահումով խաղերի, թանկարժեք մետաղների ոլորտում գործունեության կարգավորման վերաբերյալ իրավական ակտերի մշակումը, ինչպես նաև օրենքով կամ այլ իրավական ակտերով համապատասխան լիազորությունների տրամադրման դեպքում այդպիսի գործունեություն իրականացնող անձանց լիցենզավորումը և լիցենզիայի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունը,

4) աուդիտի, հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվությունների մեթոդաբանության մշակումը,

5) ՀՀ պետական և համայնքային բյուջեների եկամուտների ձևավորման քաղաքականության մշակումը,

6) պետական մարմինների կողմից ՀՀ պետական բյուջեի կատարման[1] նկատմամբ ՀՀ կառավարության հսկողության[2] իրականացումը,

---

[1] *Բյուջեների կատարումը* պետական և տեղական ինքնակառավարման մարմինների՝ համապատասխանաբար պետական և համայնքների բյուջեների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեությունն է. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի (24.06.97) 15-րդ հոդվածի 1-ին մաս:

[2] ՀՀ պետական բյուջեի կատարման նկատմամբ հսկողությունն իրականացվում է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքին համապատասխան՝ ստուգումների կատարման միջոցով՝ հսկողության տարեկան ծրագրի հիման վրա, որը հաստատում է ՀՀ վարչապետը՝ ՀՀ ֆինանսների նախարարի ներկայացմամբ (ՀՀ կառավարության 2002թ. հուլիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման հսկողության կարգը սահմանելու մասին» թիվ 1112-Ն որոշման հավելվածի 5-րդ կետ):

7) ստուգումների միջոցով պետական կառավարչական հիմնարկների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների, համայնքների ֆինանսատնտեսական գործունեության վերստուգման (աուդիտի) կազմակերպումը և իրականացումը,

8) իր իրավասության սահմաններում պետության գույքային շահերի պաշտպանությունը,

9) պետական պարտքի[1] կառավարումը[2]:

Ֆինանսների կառավարման ոլորտում նախարարությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է մի շարք *գործառույթներ:* Դրանցից են՝

1) պետական պարտքի գնահատումը,

2) մակրոտնտեսական և բյուջետային ծախսային քաղաքականությունների տեսանկյունից միջազգային ֆինանսատնտեսական հաստատությունների հետ համագործակցությունը,

3) հարկային, մաքսային և այլ եկամուտների ընթացիկ քաղաքականության և դրա կիրարկման վերլուծությունը,

4) միջազգային հարկային և մաքսային համագործակցության ուսումնասիրությունը և քաղաքականության մշակումը,

5) առաջիկա տարվա բյուջետային գործընթացի աշխատանքների կազմակերպումը,

6) առաջիկա տարվա՝ ՀՀ պետական բյուջեի մասին օրենքի նախագծի մշակումը (պետական բյուջեի նախագիծը կազմելիս ՀՀ ֆինանսների նախարարությունը խորհրդակցում է ՀՀ կենտրոնական բանկի հետ՝ պետբյուջեի նախագծին առնչվող հարցերի շուրջ, այդ թվում՝ նախատեսվող ներքին և արտաքին պետական փոխառություն-

---

[1] *Պետական պարտքը* ՀՀ անունից և ՀՀ կենտրոնական բանկի անունից (բացառությամբ ռեզիդենտների հանդեպ ՀՀ կենտրոնական բանկի առկա պարտքային պարտավորությունների) ստանձնված և որոշակի պահի դրությամբ առկա պարտքային պարտավորությունների հանրագումարն է, որի բաղադրիչներն են ներքին պետական պարտքը, արտաքին պետական պարտքը և պետական երաշխիքները. «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի (26.05.08) 2-րդ հոդվածի 2-րդ կետ, 6-րդ հոդվածի 1-ին կետ:

[2] ՀՀ կառավարության 2008թ. մայիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրությունն ու աշխատակազմի կառուցվածքը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. հուլիսի 11-ի N 1460-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 503-Ն որոշումը:

ների, դրանց աղբյուրների, ծավալների, ժամկետների և պայմանների, ինչպես նաև փոխառու միջոցների օգտագործման ուղղությունների և նպատակների վերաբերյալ[1]),

7) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պետական և համայնքների բյուջեների կատարման կազմակերպումը[2],

8) ՀՀ ներքին և արտաքին պետական պարտքի կառավարումն ու սպասարկումը[3],

9) գնումներին[4] վերաբերող իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքների համակարգումը և ընդունումը կամ դրանք հաստատման ներկայացնելը և այլն:

Նախարարը՝

1) նախարարությանը վերապահված լիազորությունների սահմաններում ընդունում է գերատեսչական իրավական ակտեր,

2) ղեկավարում է նախարարության ընթացիկ գործունեությունը և պատասխանատու է նախարարության առջև դրված խնդիրների ու գործառույթների իրականացման համար,

3) օրենքով, այլ իրավական ակտերով և նախարարության կանոնադրությամբ նախատեսված գործունեության բնագավառին, նպատակներին և խնդիրներին համապատասխան առաջարկություններ է ներկայացնում կառավարություն,

---

[1] «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի (30.06.96) 31-րդ հոդված:

[2] ՀՀ ֆինանսների նախարարությունը պետական և համայնքների բյուջեների կատարման կազմակերպումն ապահովում է գանձապետարանի միջոցով. «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքի (27.01.07) 13-րդ հոդված, իսկ բյուջեների կատարման կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը:

[3] Պարտքի *սպասարկումը* փոխառության կամ վարկային պայմանագրով նախատեսված տոկոսագումարի, կոմիսիոն վճարի, տուժանքի և այլ վճարի կատարումն է («Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 10-րդ կետ):

[4] *Գնումը* պատվիրատուի հատուցմամբ նյութական և ոչ նյութական ակտիվների (արժեքների)՝ բոլոր տեսակի ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումն է («Գնումների մասին» ՀՀ օրենքի (22.12.10) 2-րդ հոդվածի 3-րդ կետ): Սույն օրենքի իմաստով *պատվիրատուներն են* պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, պետության կամ համայնքների հիմնարկները, ՀՀ կենտրոնական բանկը, պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները և այլ սուբյեկտներ (2-րդ հոդվածի 1-ին կետ):

4) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ և տալիս ցուցումներ,

5) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է նախարարության քաղաքացիական ծառայության բարձրագույն և գլխավոր պաշտոններում, ինչպես նաև նրանց նկատմամբ կիրառում է խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցներ,

6) պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում է իր խորհրդականներին, մամուլի քարտուղարին ու օգնականներին,

7) օրենքով սահմանված դեպքերում և կարգով շնորհում է ՀՀ քաղաքացիական ծառայության 1-ին, 2-րդ և 3-րդ դասի խորհրդականի դասային աստիճանները, ինչպես նաև իջեցնում է դասային աստիճանը և զրկում դասային աստիճանից,

8) օրենքին և նախարարության կանոնադրությանը համապատասխան սահմանում է նախարարության աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների իրավասության սահմանները,

9) սահմանում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև,

10) օրենքով և նախարարության կանոնադրությամբ նախատեսված իր լիազորությունների սահմաններում կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում նախարարության աշխատակազմի ղեկավարի, նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումների ղեկավարների, ինչպես նաև նախարարության ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների՝ ՀՀ օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, հանձնարարագրերը, կարգադրությունները և ցուցումները,

11) կառավարության հաստատմանն է ներկայացնում նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը,

12) վարչապետի հանձնարարությամբ Ազգային ժողովում ներկայացնում է ՀՀ պետական բյուջեի մասին, բյուջեի կատարման տարեկան հաշվետվության մասին օրենքների նախագծերը և բյուջեի կամ բյուջեի կատարման հաշվետվության հաստատման առնչությամբ կարող է դնել ՀՀ կառավարության վստահության հարցը և այլն:

Նախարարի *տեղակալներին* պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում է ՀՀ վարչապետը՝ խորհրդակցելով նախարարի հետ:

Նախարարի բացակայության դեպքում նրա պարտականությունները կատարում է նախարարի առաջին տեղակալը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ նախարարի հանձնարարությամբ նրա տեղակալներից մեկը[1]:

Նախարարության *աշխատակազմն* իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող պետական կառավարչական հիմնարկ է, որի կառուցվածքում ներառվում են դրա կառուցվածքային (վարչություններ, բաժիններ, քարտուղարություն) և առանձնացված ստորաբաժանումները (գործակալություններ, տեսչություններ)[2]:

Ֆինանսների պետական կառավարման ոլորտում էական դերակատարություն ունի ՀՀ *կենտրոնական բանկը,* որի հիմնական խնդիրը հանրապետությունում գների կայունությունն ապահովելն է: Այս խնդիրն իրագործելու նպատակով Կենտրոնական բանկը մշակում, հաստատում և իրականացնում է դրամավարկային քաղաքականության ծրագրերը[3], որոնք ներառում են գնաճի կանխատեսումները, դրամավարկային քաղաքականության ուղղությունները, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված խնդիրների[4] իրականացման համար Կենտրոնական բանկի խորհրդի սահմանած անհրաժեշտ այլ դրույթներ (ՀՀ Սահմանադրության 83.3 հոդվածի, Օրենքի 4-րդ և 6-րդ հոդվածներ): Դրամավարկային քաղաքականության

---

[1] Գլխավոր գանձապետն ի պաշտոնե հանդիսանում է նախարարի տեղակալ և իրականացնում է «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքով նախատեսված լիազորություններ:

[2] Օրինակ՝ Լիցենզավորման գործակալությունը, Աուդիտորական գործունեության հսկողության տեսչությունը, Ֆինանսական վերահսկողության տեսչությունը:

[3] Եռամսյակը մեկ անգամ Կենտրոնական բանկը հաջորդ 12 ամիսների համար հրապարակում է դրամավարկային քաղաքականության ծրագիր, որը կրում է ուղեցուցային բնույթ:

[4] Կենտրոնական բանկի խնդիրներից են ՀՀ ֆինանսական համակարգի կայունության և բնականոն գործունեության ապահովումը, գործուն վճարահաշվարկային համակարգ ստեղծելն ու զարգացնելը, ՀՀ արժույթի թողարկումը, դրամաշրջանառության կազմակերպումը և կարգավորումը, փողերի լվացման ևահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կազմակերպումն ու կարգավորումը, ֆինանսական համակարգում սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար անհրաժեշտ պայմանների ապահովումը («Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մաս):

ծրագրի մշակման ընթացքում Կենտրոնական բանկը խորհրդակցում է ՀՀ կառավարության հետ:

Կենտրոնական բանկը յուրաքանչյուր տարի՝ մինչև մայիսի 1-ը, ՀՀ Ազգային ժողով է ուղարկում և «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքով սահմանված կարգով ու ժամկետում ՀՀ Ազգային ժողովի նիստում ներկայացնում է ընթացիկ տարվա առաջին եռամսյակում հաստատված դրամավարկային քաղաքականության ծրագիրը:

Կենտրոնական բանկը պետական բյուջեի նախագծի և պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության վերաբերյալ պաշտոնական եզրակացություններ է ներկայացնում կառավարությանը, որոնք համապատասխանաբար՝ պետական բյուջեի նախագծին և պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությանը կից ներկայացվում են ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը:

ՀՀ տարածքում օրինական վճարամիջոց հանդիսացող թղթադրամ և մետաղադրամ (այդ թվում՝ հուշադրամ) թողարկելը և շրջանառությունից հետ կանչելն ու հանելը Կենտրոնական բանկի բացառիկ իրավասությունն է: Կենտրոնական բանկը կազմակերպում և ապահովում է թղթադրամի տպագրումը և մետաղադրամի (այդ թվում՝ հուշադրամի) հատումը, Կենտրոնական բանկում դրանց անվտանգ պահպանումը, ինչպես նաև օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված դեպքում դրանց ոչնչացումը:

Կենտրոնական բանկը կարող է տիրապետել, օգտագործել և տնօրինել՝ ա) ոսկուց և այլ թանկարժեք մետաղներից պատրաստված մետաղադրամներ (այդ թվում՝ հուշադրամներ) և ստանդարտացված ձուլակտորներ, բ) արտարժույթ և գ) այլ պետությունների, կենտրոնական և այլ առաջնակարգ բանկերի, միջազգային ֆինանսական կազմակերպությունների, ինչպես նաև օտարերկրյա առաջնակարգ բանկերի թողարկած կամ երաշխավորած արժեթղթեր:

Կենտրոնական բանկը յուրաքանչյուր եռամսյակը մեկ կառավարությանն է ներկայացնում միջազգային պահուստների վիճակի և կազմի մասին տեղեկատվություն և հրապարակում է այն: Եթե ՀՀ միջազգային պահուստների մակարդակը նվազում է, կամ ըստ Կենտրոնական բանկի, առկա է դրա նվազման այնպիսի միտում, ինչի հետևանքով կարող է վտանգվել դրամավարկային քաղաքականության

իրականացումը կամ ՀՀ միջազգային պարտավորությունների անարգել կատարումը, ապա Կենտրոնական բանկն արտահերթ տեղեկատվություն է ներկայացնում կառավարությանը միջազգային պահուստների վիճակի, դրանց մակարդակի նվազման կամ հնարավոր նվազման պատճառների, ինչպես նաև ստեղծված իրավիճակը շտկելու համար անհրաժեշտ միջոցառումների վերաբերյալ և այդ մասին տեղյակ է պահում ՀՀ Նախագահին և Ազգային ժողովին:

Բյուջետային միջոցների ծախսման արդյունավետության նկատմամբ վերահսկողության, պետական և համայնքային միջոցների կառավարման ոլորտում թափանցիկության բարձրացման պահանջով է պայմանավորված պետական ֆինանսական վերահսկողության ոլորտում նոր սկզբունքների և մոտեցումների կիրառումը և համապատասխանաբար՝ օրենսդրական նոր հիմքի և ինստիտուցիոնալ կառույցների ձևավորումը: Այսպիսի կառույց է հանդիսանում *ՀՀ վերահսկիչ պալատը*՝ որպես բյուջետային միջոցների և պետական ու համայնքային սեփականության օգտագործման նկատմամբ արտաքին պետական վերահսկողություն իրականացնող անկախ պետական մարմին (ՀՀ Սահմանադրության 83.4-րդ հոդված)[1], որը 1998 թվականից անդամակցում է Ֆինանսական վերահսկողության գերագույն ատյանների միջազգային կազմակերպությանը (INTOSAI):

ՀՀ վերահսկիչ պալատի գործունեության սկզբունքներն են՝ անկախությունը, օրինականությունը, անաչառությունը և հրապարակայնությունը, իսկ այս մարմնի հիմնական խնդիրը ՀՀ Սահմանադրությամբ և «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքով (25.12.06) ամրագրված իրավասության շրջանակներում վերահսկողական գործա-

[1] Բարձրագույն վերահսկիչ մարմինը՝ արտաքին ստուգող մարմինն է, որը կարող է իրականացնել իր առջև դրված խնդիրներն օբյեկտիվ և արդյունավետ միայն այն դեպքում, երբ անկախ է վերջինիս կողմից ստուգվող կազմակերպություններից և պաշտպանված կողմնակի ազդեցությունից: Բարձրագույն վերահսկիչ մարմնի հիմնումը և անկախության անհրաժեշտ մակարդակը պետք է ամրագրվեն Սահմանադրությամբ, իսկ մանրամասները կարող են սահմանվել համապատասխան օրենքով (Վերահսկողության ղեկավար սկզբունքների Լիմայի Հռչակագրի 3-րդ և 5-րդ հոդվածներ (ընդունվել է 1977թ. Ֆինանսական վերահսկողության գերագույն ատյանների միջազգային կազմակերպության (INTOSAI) 9-րդ Համաժողովում): Տե՛ս նաև Ֆինանսական վերահսկողության գերագույն ատյանների անկախության Մեքսիկայի Հռչակագիրը (ընդ. 2007թ. INTOSAI 19-րդ Համաժողովում):

ռույթների իրականացումն է:

ՀՀ վերահսկիչ պալատի *գործառույթներից են*՝

1) բյուջետային ելքերի, պետական արտաբյուջետային միջոցների օգտագործման, պետական պարտքի կառավարման նկատմամբ վերահսկողության իրականացումը,

2) ՀՀ պետական բյուջեի և մասնավորեցման ծրագրի կատարման մասին ՀՀ կառավարության և Կենտրոնական բանկի տարեկան հաշվետվությունների վերաբերյալ եզրակացությունների կազմումը և տրամադրումը,

3) ՀՀ պետական բյուջեի և պետական պարտքի սպասարկման մասով Կենտրոնական բանկի գործունեության նկատմամբ ֆինանսական, կատարողական և համապատասխանության վերահսկողության իրականացումը, ինչպես նաև պայմանագրային հիմունքներով պետական բյուջեն և պետական պարտքը սպասարկող առևտրային բանկերի սպասարկման գործունեության նկատմամբ ֆինանսական և համապատասխանության վերահսկողության իրականացումը,

4) համայնքների բյուջեի ելքերի նկատմամբ վերահսկողության, ինչպես նաև համայնքային բյուջեի մուտքերն ապահովող մարմինների գործառույթների կատարման նկատմամբ համապատասխանության ու կատարողական վերահսկողության իրականացումը և այլն:

Բյուջետային ելքերի և պետական ու համայնքային սեփականության օգտագործման վերահսկողության նպատակով ՀՀ վերահսկիչ պալատը վերահսկողություն է իրականացնում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, ներառյալ՝ դրանց աշխատակազմերը, դրանց ենթակա հիմնարկները, ինչպես նաև գնահատում է դրանց ներքին վերահսկողության համակարգը:

Վերահսկիչ պալատը վերահսկողությունն իրականացնում է դիտարկումների, ստուգումների և վերլուծությունների ձևով: *Դիտարկումն* իրականացվում է առանց վերահսկվող սուբյեկտ մուտք գործելու՝ վերջինիս մասին նախնական պատկերացում կազմելու համար տեղեկատվության հավաքման միջոցով: *Ստուգումն* իրականացվում է վերահսկվող սուբյեկտում՝ վերջինիս գործունեության վիճակը փաստացի արձանագրելու նպատակով, իսկ *վերլուծությունը*՝ դիտարկումների և ստուգումների արդյունքների ամփոփման միջոցով կամ առանց դրա՝ հիմնված մասնագիտական հետազոտման, համադրման և

եզրակացության վրա:

Վերահսկիչ պալատն իրականացնում է վերահսկողության հետևյալ տեսակները՝

1) *ֆինանսական,* որի միջոցով որոշվում է բյուջետային միջոցների և պետական ու համայնքային սեփականության օգտագործման ընթացքում ֆինանսատնտեսական փաստաթղթերի վարման և արդյունքում ներկայացվող հաշվետվությունների արժանահավատությունը,

2) *համապատասխանության,* որի միջոցով որոշվում է բյուջետային միջոցների և պետական ու համայնքային սեփականության օգտագործման համապատասխանությունն իրավական ակտերով սահմանված պահանջներին,

3) *արդյունավետության (կատարողական),* որի միջոցով որոշվում է բյուջետային միջոցների և պետական ու համայնքային սեփականության օգտագործման, ինչպես նաև առաջադրված նպատակին հասնելու արդյունավետությունը,

4) *բնապահպանական,* որի միջոցով որոշվում է բյուջետային միջոցների և պետական սեփականության օգտագործման համապատասխանությունը բնապահպանության ոլորտի օրենսդրական ակտերի պահանջներին՝ շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունը գնահատելու նպատակով:

Վերահսկիչ պալատի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը հաշվետվությունները, ինչպես նաև եզրակացություններն իր գործունեությունը համակարգող Վերահսկիչ պալատի խորհրդի համապատասխան անդամի կողմից նշագրվելուց հետո ներկայացնում է Վերահսկիչ պալատի խորհրդին՝ հաստատման նպատակով, որը վերահսկողության արդյունքների վերլուծության հիման վրա քննարկում է հայտնաբերված բացթողումների և խախտումների պատճառներն ու հետևանքները, ինչի արդյունքում պետական մարմիններին կարող է ներկայացնել առաջարկություններ, այդ թվում՝ իրավական ակտերի կատարելագործման վերաբերյալ:

§3. Գյուղատնտեսության պետական կառավարումը

Գյուղատնտեսությունը հանրապետության տնտեսության գերակա ոլորտներից է: Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսության ոլորտում ծագող տարաբնույթ հարաբերությունների կանոնակարգմանն են ուղղված մի շարք օրենքներ. «Գյուղատնտեսական համատարած հաշվառման մասին» ՀՀ օրենքը (27.11.08), «Օրգանական գյուղատնտեսության մասին» ՀՀ օրենքը (08.04.08), «Բուսասանիտարիայի մասին» ՀՀ օրենքը (27.11.06), «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքը (24.10.05), նույն ժամանակահատվածում ընդունված ՀՀ անտառային օրենսգիրքը, «Գյուղատնտեսական հողերի մելիորացիայի[1] մասին», «Սերմերի մասին» ՀՀ օրենքները (20.05.05), «Սելեկցիոն նվաճումների[2] պահպանության մասին» ՀՀ օրենքը (23.11.99), ՀՀ անտառային օրենսգիրքը (24.10.05) և մի շարք այլ օրենսդրական ակտեր:

Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսության ոլորտում տնտեսվարողների, սույն ոլորտի պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների միջև ծագող մի շարք իրավահարաբերություններ առ այսօր օրենսդրորեն կանոնակարգված չեն: Մասնավորապես՝ սահմանված չեն գյուղատնտեսության ոլորտում պետական քաղաքականության սկզբունքները, նպատակները, ուղղությունները, ինչպես նաև գյուղատնտեսական արտադրանքի, հումքի և սննդամթերքի շուկայի պետական կարգավորման կառուցակարգերը: Բացի այդ, օրենսդրորեն սահմանված չեն ոլորտին առնչվող մի շարք հասկացություններ (գյուղատնտեսություն, գյուղատն-

---

[1] *Մելիորացիան* ջրային, օդային ու ջերմային անբարենպաստ ռեժիմներ, անբավարար քիմիական և ֆիզիկական հատկանիշներ ունեցող հողերի բարելավումն է՝ հիդրոտեխնիկական, կուլտուրտեխնիկական, քիմիական, ագրոտեխնիկական և այլ մելիորատիվ միջոցառումներ իրականացնելու միջոցով՝ այդ հողերը գյուղատնտեսական շրջանառության մեջ ներառելու նպատակով («Գյուղատնտեսական հողերի մելիորացիայի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդված):

[2] *Սելեկցիոն նվաճումը* բուսաբուծությունում՝ արհեստական ճանապարհով կամ ընտրության միջոցով ստացված և գոյություն ունեցող բույսերի սորտերից մեկ կամ մի քանի տարբերակիչ տնտեսական հատկանիշներ ունեցող բույսի սորտն է, իսկ անասնաբուծությունում՝ ընդհանուր ծագում ունեցող կենդանիների բազմանդամ խումբը («Սելեկցիոն նվաճումների պահպանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի «բ» կետ):

տեսական արտադրություն և այլն): Նշված խնդիրների օրենսդրական կարգավորման հրամայականով է պայմանավորված «Գյուղատնտեսության մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակումը:

Ներկայումս մշակվել և պաշտոնապես շրջանառության մեջ է դրվել «Գյուղատնտեսության մասին» ՀՀ օրենքի նախագիծը (այսուհետ՝ նախագիծ)[3]: Ըստ այդմ՝ *գյուղատնտեսությունը* տնտեսության իրական հատվածի ոլորտ է՝ հիմնված գյուղատնտեսական արտադրության վրա, որը բուսական և կենդանական ծագման հումքի և մթերքի արտադրությանը, մշակմանը, վերամշակմանը և իրացմանը նպատակաուղղված գործունեության տեսակ է: Գյուղատնտեսության պետական միասնական քաղաքականության մշակումն ապահովում են պետական կառավարման լիազորված մարմինները՝ ռազմավարությունների, հայեցակարգերի, նպատակային ծրագրերի և այլ ծրագրային փաստաթղթերի նախագծերի մշակման միջոցով, որոնք հաստատվում են ՀՀ կառավարության կողմից (նախագծի 4-րդ հոդված):

Գյուղատնտեսության քաղաքականությունն իրականացնում են ՀՀ կառավարությունը՝ պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների միջոցով, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինները՝ օրենքով սահմանված կարգով:

Գյուղատնտեսության քաղաքականության իրականացման բնագավառում *ՀՀ կառավարությունը*՝

1) ձևավորում է խորհրդատվական մարմիններ՝ պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական կազմակերպությունների ներգրավմամբ,

2) համակարգում է գյուղատնտեսական արտադրության խթանման բնագավառում իրագործվող քաղաքականությունը,

3) սահմանում է իր կողմից լիազորված մարմինների նպատակները, խնդիրները և գործառույթները՝ սննդամթերքի արտադրությունից մինչև սպառումն ապրանքային շարժի բոլոր փուլերում,

4) ապահովում է տեղեկատվության հավաքագրումը, վերլուծությունը և իրավիճակի կանխատեսումները,

---

[3] Տե՛ս Պ-1242-23.09.2011-ԳԲ-010/0:

5) իրականացնում է այլ լիազորություններ (նախագծի 8-րդ հոդված):

Գյուղատնտեսության պետական կառավարման ոլորտում, որպես գործադիր իշխանության հանրապետական մարմին, լուրջ դերակատարություն ունի ՀՀ *գյուղատնտեսության նախարարությունը*, որը մշակում և իրականացնում է գյուղատնտեսության և անտառային տնտեսության բնագավառում ՀՀ կառավարության քաղաքականությունը:

Նախարարության նպատակներից և խնդիրներից են՝

1) ագրոպարենային ոլորտում ՀՀ կառավարության տնտեսական քաղաքականության մշակումը և իրականացումը,

2) ՀՀ գյուղատնտեսության ներուժի առավելագույնս օգտագործման միջոցով գյուղատնտեսության զարգացման, գյուղատնտեսական գործունեության արդյունավետության բարձրացման ապահովումը,

3) ագրոպարենային ոլորտում կատարվող գործընթացների համալիր վերլուծությունների, համապատասխան կանխատեսումների հիման վրա ագրարային և ներդրումային քաղաքականության հիմնադրույթների, հայեցակարգերի, ծրագրերի մշակումն ու իրականացումը,

4) ՀՀ անտառների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառում պետական քաղաքականության մշակումը և իրականացումը,

5) սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառներում պետական քաղաքականության մշակումը և իրականացումը և այլն[4]:

Նախարարությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է մի շարք *գործառույթներ՝*

[4] ՀՀ կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 5-ի ««Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 1516-Ն որոշումը:

1) ՀՀ ագրարային ու պարենային ապահովության, գյուղատնտեսության բնագավառում միջպետական համագործակցության ծրագրերի մշակումը և դրանց իրականացման մոնիթորինգը,

2) անտառների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառում զարգացման, ինչպես նաև անտառային պաշարների արդյունավետ օգտագործման ծրագրերի մշակումը և իրականացման մոնիթորինգը,

3) անտառային հողերում հրդեհային անվտանգության, ինչպես նաև վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումների ծրագրերի մշակումը և իրականացման մոնիթորինգը,

4) գյուղատնտեսության բնագավառին առնչվող հարցերի վերաբերյալ միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի) մշակման ու քննարկման գործընթացներին՝ սահմանված կարգով մասնակցությունը,

5) բնագավառին առնչվող օրենսդրական ակտերի նախագծերի մշակումը, օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ բնագավառը կարգավորող իրավական ակտերի մշակումը և հաստատումը և այլն:

Նախարարությունը կառավարում է նախարարը, որը հաշվետու է ՀՀ Նախագահին, կառավարությանը և վարչապետին:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության կառավարման ոլորտում գործող մարմին է նաև *Սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը*[5]*:*

---

[5] «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքով (27.11.2006) կարգավորվում են սննդամթերքի, սննդամթերքի հետ շփվող նյութերի և սննդային հավելումների ներմուծման, արտահանման, արտադրության, մշակման, վերամշակման, փաթեթավորման, մակնշման, փոխադրման, պահման, իրացման, ինչպես նաև առևտրի և հանրային սննդի ոլորտում ծառայությունների մատուցման փուլերում անվտանգության հետ առնչվող հարաբերությունները:
Սննդամթերքի անվտանգության նկատմամբ պետական վերահսկողությունն իրականացվում է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով (17.05.2000) սահմանված կարգով: Սույն օրենքում ստուգումներ իրականացնող մարմինների շարքում նախատեսված է նաև ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը:

§ 4.Տրանսպորտի և կապի պետական կառավարումը

Տրանսպորտը հանդիսանում է երկրի համար կարևոր բնագավառներից, այն երկրի տարբեր տարածաշրջանները և արդյունաբերության ճյուղերը միմյանց կապող հաղորդակցության բարդ համալիր է, որն ընդգրկում է տրանսպորտային միջոցների և ուղիների տեխնոլոգիական շաղկապված համակարգ՝ անկախ դրանց տարրերի սեփականության ձևից: Տրանսպորտային համակարգն ընդգրկում է օդանավակայանները, ճոպանուղիները, երկաթուղու և մետրոպոլիտենի կայարանները, ավտոկայարանները, ենթակարգավարական կետերը, տրանսպորտային միջոցների հավաքակայանները, նավակայանները, կամուրջները, թունելները, նորոգման և օժանդակ այլ օբյեկտները, որոնք անհրաժեշտ են բեռնման-բեռնաթափման աշխատանքների, ուղևորների սպասարկման, տրանսպորտային միջոցների և հաղորդակցության ուղիների շահագործման համար՝ «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 1-ին հոդվածի 3-րդ մաս:

Տրանսպորտային հարաբերությունների կարգավորման բնագավառում առանցքային տեղ ունի Օրենքը, այն սահմանում է տրանսպորտային համակարգը, տրանսպորտային տարածքի դասակարգումը, որոշ տրանսպորտային տեսակների գործունեությամբ զբաղվելու համար մրցույթ անցկացնելու անհրաժեշտությունը, այս բնագավառում գործադիր իշխանության մարմինների լիազորությունները: Պետությունն իրականացնում է տրանսպորտային գործունեության պետական կարգավորում, որն իրականացվում է՝ իրավական պաշտպանության, լիցենզավորման, հարկման, ֆինանսավորման, սակագների ձևավորման, ներդրումների իրականացման, տրանսպորտային օրենսդրության կատարման նկատմամբ վերահսկողության ձևերով: Օրենքը սահմանում է տրանսպորտային գործունեություն իրականացնողների կազմակերպահիրավական ինքնուրույնությունը՝ արգելելով պետական կարգավորում իրականացնող իրավասու մարմիններին միջամտելու տրանսպորտային գործունեությամբ զբաղվող սուբյեկտների տնտեսական գործունեությանը, օգտագործելու դրանք շահագործող անձնակազմին:

Կառավարության՝ որպես ընդհանուր իրավասության մարմնի լիազորությունները, կարելի է բաժանել երկու մասի՝ լիազորություններ, որոնք կառավարությունը իրականացնում է անմիջապես տրանսպորտային գործունեության ընթացքում և լիազորություններ, որոնք իրականացնում է կապի և հեռահաղորդակցության բնագավառում:

Տրանսպորտային գործունեության կարգավորման բնագավառում կառավարության առաջին խումբ լիազորությունների շարքում անհրաժեշտ է նշել այն, ըստ որի կառավարությունն իրականացնում է տրանսպորտային որոշ գործունեության տեսակների լիցենզավորում. այսինքն՝ այդպիսի գործունեություն կարող է իրականացվել միայն համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում, ընդ որում, կառավարության իրավասության մեջ է մտնում այդպիսի գործունեության տեսակների ցանկի սահմանումը: Լիցենզավորումը տրանսպորտային հարաբերությունների բնագավառում ինքնանպատակ չէ, այն ի նկատի ունենալով որոշ տրանսպորտային միջոցների առանձնահատկությունը և դրանց շահագործման բարձր վարպետության պահանջի առկայությունը, նպատակ է հետապնդում ապահովելու այդպիսի գործունեության միջոցով մատուցվող ծառայությունների որակը և անվտանգությունը: Ներկայումս կառավարությունն ընդունել է «Չվացուցակի ենթակա և չվացուցակի չենթարկվող օդային տրանսպորտի գործունեության տեսակների լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին», «Հայաստանի Հանրապետությունում երկաթուղային գործունեության տեսակների լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևերը հաստատելու մասին» որոշումները: Բացի այդ, գործում են նաև կառավարության կողմից լիազորված մի շարք մարմինների կողմից ընդունված լիցենզավորման կարգեր, որոնցով գրեթե ամբողջովին կարգավորվում են տրանսպորտային գործունեության բնագավառում առաջացող լիցենզավորման հարաբերությունները:

Կառավարությունը սահմանում է նաև անվճար, զեղչ գներով ուղևորափոխադրումներ իրականացնող տնտեսավարող սուբյեկտների կրած վնասների փոխհատուցման կարգը և սակագները, որոնց հիման վրա պետական բյուջեից իրականացվում է միջոցների հատկացումը:

Օրենքի համաձայն, ընդհանուր օգտագործման տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնում են միայն մրցութային եղանակով ընտրված կազմակերպությունները, օրենքի մեկ այլ դրույթի համաձայն, մրցույթի անցկացման կարգը սահմանում է կառավարությունը: Մրցույթի անցկացումը, նկատի ունենալով ուղևորների անվտանգությունը, նպատակ է հետապնդում ապահովելու ծառայությունների մատուցումը՝ առավել բարենպաստ տեխնիկական պայմաններ ունեցող կազմակերպությունների կողմից: Կառավարությունն արդեն իսկ 2001թ. օգոստոսի 16-ին ընդունել է «Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման կարգը հաստատելու մասին» թիվ 762 որոշումը, որը սահմանում է մրցույթի անցկացման պայմանները, մրցույթի արդյունքների հրապարակման և բողոքարկման կարգը, մրցույթը կազմակերպող մարմնի կազմավորմանը և գործունեությանը ներկայացվող պահանջները: Մրցույթների կազմակերպումն իրականացնում է կառավարության կողմից լիազորված մարմնի կողմից ձևավորված հանձնաժողովը:

Կառավարությունը սահմանում է տրանսպորտային միջոցը վարելու համար վարորդներին ներկայացվող որակավորման պահանջները, ճանապարհային երթևեկության կանոնները, առավել վտանգավոր գոտիներում, այն է՝ կայարաններում, օդանավակայաններում, երկաթուղային տրանսպորտի օբյեկտներում, աշխատանքների իրականացման կարգը, տալիս է բնական պաշարների հանքավայրերում տրանսպորտային օբյեկտների կառուցման թույլտվություն, հաստատում է պայթյունավտանգ, արագ բռնկվող, ռադիոակտիվ, թունավոր և այլ վտանգավոր բեռների փոխադրման կարգը:

Կառավարությունն իրականացնում է նաև լիազորություններ՝ կապի հեռահաղորդակցության բնագավառում:

Հեռահաղորդակցության բնագավառում գործում է «Հեռահաղորդակցության մասին» ՀՀ օրենքը, որը սահմանում է ՀՀ տարածքում հեռահաղորդակցության բնագավառում գործունեության իրականացման իրավական հիմքերը, դրա մասնակիցների իրավասությունը և պատասխանատվությունը, ինչպես նաև հեռահաղորդակցության ծառայություններից օգտվողների իրավունքների պաշտպանության նոր-

մերը: Պետք է նշել, որ հիշյալ օրենքը չի տարածվում ռադիո և հեռուստատեսության հեռարձակման բնագավառում ծագող հարաբերությունների վրա: Նշված բնագավառները կարգավորվում են առանձին օրենքներով:

Օրենքը տալիս է հեռահաղորդակցության հասկացությունը, ըստ որի հեռահաղորդակցությունը ձայնի, նշանի (նիշի), ազդանշանի, գրավոր տեքստի, պատկերի հաղորդումը և ընդունումն է լարային, մալուխային, օպտիկական, մագնիսական, ռադիո և այլ էլեկտրամագնիսական համակարգերով: Օրենքը տալիս է նաև հեռահաղորդակցության ցանցի հասկացությունը և հեռահաղորդակցության ցանցերի տեսակները: Ըստ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի, հեռահաղորդակցության ցանցը տեխնիկական միջոցների համակարգ է, որով իրականացվում է հեռահաղորդակցությունը, իսկ օրենքի 5-րդ և 6-րդ հոդվածների համաձայն, հեռահաղորդակցության ցանցերը լինում են՝ հանրային համակցված և այլ հանրային հեռահաղորդակցության ցանցեր, գերատեսչական և ներարտաղրական հեռահաղորդակցության ցանցեր:

Կառավարությունը կապի և հեռահաղորդակցության բնագավառում օժտված է համապատասխան լիազորություններով, մասնավորապես վերը նշված գերատեսչական՝ այսինքն պետական կառավարման և ազգային անվտանգության մարմինների հեռահաղորդակցության ցանցերը, տնօրինվում և շահագործման են հանձնվում կառավարության կողմից:

Կառավարությունն է սահմանում էլեկտրամագնիսական ճառագայթման աղբյուր հանդիսացող հեռահաղորդակցության միջոցների գրանցման կարգը, պետական կառավարման և ազգային անվտանգության ապահովման նպատակով ռադիոհաճախությունների հատկացման և փոփոխման կարգը:

Նշված ոլորտում պետական կառավարման հիմնական մարմինը Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությունն է: Նա իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) շահագրգիռ պետական կառավարման մարմինների մասնակցությամբ մշակում է տրանսպորտային ցանցերի զարգացման և դրանց կառավարման սխեմաները,

2) շահագրգիռ պետական կառավարման մարմինների

մասնակցությամբ մշակում է տրանսպորտային ցանցերի զարգացման ու դրանց կառավարման սխեմաները,

3) «Հայաստանի Հանրապետության պետական գույքի մասնավորեցման ծրագրին» համապատասխան, ապահովում է սեփականաշնորհման և ապապետականացման գործընթացը,

4) իրականացնում է իր կողմից տրված լիցենզիաների հաշվառումը և դրանց պայմանների կատարման նկատմամբ վերահսկողությունը,

5) իրականացնում է օրենսդրությամբ սահմանված այլ գործառույթներ:

Հիշյալ գործառույթների բնականոն իրականացման համար նշված նախարարությունն օրենսդրությամբ ժտված է համարժք լիազորություններով:

Միաժամանակ, նկատի ունենալով տրանսպորտի առանձին տեսակների կառավարման առանձնահատկությունները, գործում են կառավարման այլ պետական մարմիններ: Մասնավորապես, ավիացիայի կառավարման ոլորտում գործում է կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը: Այն ստեղծվել և գործում է ՀՀ կառավարության 2003թ. փետրվարի 13-ի N 202-Ն որոշմամբ: Կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը՝ գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում և իրականացնում է ավիացիայի բնագավառում պետական քաղաքականությունը, ավիացիոն ծառայությունների և ՀՀ-ում գործող ավիացիոն ենթակառուցվածքների կառավարումն ու վերահսկողությունը: Գլխավոր վարչությունը հանդիսանում է ավիացիայի (բացառությամբ ռազմական ավիացիայի) բնագավառի պետական կառավարումն իրականացնող լիազոր մարմին: Դրա լիազորությունները սահմանվում են «Ավիացիայի մասին» ՀՀ օրենքով (22.02.07) և այլ օրենքներով ու ենթաօրենսդրական ակտերով և ՀՀ միջազգային պայմանագրով:

Գլխավոր վարչության նպատակներն ու խնդիրներն են՝

1) քաղաքացիական ավիացիայի բնագավառում, իր իրավասության սահմաններում, թռիչքային անվտանգության և արդյունավետության, օդային տարածքի օգտագործման պետական քաղաքականության հիմնադրույթների, միջազգային օդային հաղորդակցություն-

ներին վերաբերող միջազգային համաձայնագրերի նախապատրաստումը, քննարկումը և սահմանված կարգով ՀՀ կառավարությանը ներկայացնելը,

2) քաղաքացիական ավիացիայի բնագավառի պետական կառավարման իրականացումը, քաղաքացիական ավիացիայի և ոչ ռազմական պետական ավիացիայի գործունեության, օդային երթևեկության սպասարկման, ավիացիոն անվտանգության, ինչպես նաև ավիացիայի բնագավառում շահագործվող վերգետնյա միջոցների և մատուցվող ծառայությունների ապահովության ու անվտանգության կանոնակարգումն ու վերահսկողությունը՝ ՀՀ օրենսդրության և ՀՀ միջազգային պայմանագրերին նրանց համապատասխանությունն ապահովելու համար և օդանավակայանների շահագործման, օդային երթևեկության կառավարման, օդերևութաբանական, աերոնավիգացիոն տեղեկատվական, տեխնիկական և այլ վերգետնյա ծառայություններ մատուցող մարմինների գործունեության վերահսկումը՝ քաղաքացիական ավիացիայում թռիչքային անվտանգության ապահովման համար,

3) քաղաքացիական ավիացիայում մանրամասն ու համապարփակ կանոնակարգերի հաստատումը և ներդրումը, ընթացակարգերի կանոնակարգումը, ՀՀ օդային տարածքի օգտագործման սահմանափակումների ու արգելքների սահմանումը՝ ռազմական ավիացիային առնչվող մասով՝ դրանք համաձայնեցնելով ՀՀ պաշտպանության նախարարության հետ,

4) քաղաքացիական ավիացիայի համակարգում գործունեություն իրականացնող բոլոր շահագործող քաղաքացիական ավիացիայի կազմակերպությունների ու ընկերությունների շարունակական վերահսկողությունը և դրանց կողմից կատարվող աշխատանքների որակի վերահսկողության տեսչական ստուգումների անցկացումը՝ միջազգային չափանիշներին և կանոնակարգերին համապատասխանության ապահովման նպատակով,

5) տրված թույլտվության՝ ՀՀ միջազգային պայմանագրերով (համաձայնագրերով) իրականացվող օդային հաղորդակցությունների, պայմանների սահմանումը, ինչպես նաև կիրառվող սակագների ու չվերթների ծրագրերի հաստատումը, համաձայնագրերով կամ տրված թույլտվությամբ նախատեսված ծավալով և այլն:

Գլխավոր վարչության նպատակների ու խնդիրների իրականացման համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպություններում ՀՀ շահերը ներկայացնելը,

2) օդանավերի թռիչքային պիտանության սերտիֆիկատներ տալու (ճանաչելու), սերտիֆիկատների գործողության ժամկետները երկարաձգելու, կասեցնելու կամ դադարեցնելու նպատակով օդանավի թռիչքատեխնիկական և ռեսուրսային վիճակի ուսումնասիրումը՝ դրանց պիտանիությունը որոշելու համար,

3) թռիչքատեխնիկական ուսումնասիրությունների և փորձարկումների կատարումը՝ օդանավին հատուկ թռիչքի թույլտվություն տալու նպատակով, երբ օդանավին թռիչքային պիտանիության սերտիֆիկատ չի կարող տրվել,

4) օրենքներով և այլ իրավական ակտերով և Կանոնադրությամբ սահմանված այլ գործառույթներ, որոնք անհրաժեշտ են գլխավոր վարչության նպատակներն ու խնդիրների իրականացման համար և այլն:

Գլխավոր վարչության կազմում գործում են՝ ավիացիոն անվտանգության վարչությունը, թռիչքային պիտանիության վարչությունը, թռիչքային գործունեության վարչությունը, օդանավակայանների սերտիֆիկացման և օդային երթևեկության կազմակերպման վարչությունը, օդային փոխադրումների կարգավորման վարչությունը, անձնակազմի կառավարման բաժինը, իրավաբանական բաժինը և այլն:

Որոշակի առանձնահատկություններ կան նաև երկաթուղային տրանսպորտի կառավարման ոլորտում: Ներկայումս ՀՀ երկաթուղային տրնսպորտը տրվել է հավատարմագրային կառավարման «Ռուսաստանյան երկաթուղիներ» ընկերությանը:

§5. Քաղաքաշինության պետական կառավարումը

Տնտեսության ոլորտի կարևոր հատվածներից է քաղաքաշինությունը, որի պետական կառավարման համակարգն առանձնանում է որոշակի առանձնահատկություններով, հատկապես տնտեսական

գործունեության այդ տեսակին վերաբերող ստանդարտներ սահմանելու և պետական արդյունավետ վերահսկողություն ապահովելու նկատառումով: Ընդ որում, այդ առանձնահատկությունները պայմանավորված են ինչպես տնտեսության տվյալ ոլորտի սոցիալական մեծ նշանակությամբ ու հանրային շահերի հետ անմիջական առնչությամբ, այնպես էլ՝ վտանգավորության որոշակի աստիճանով: Մասնավորապես, վատորակ, ստանդարտներին չհամապատասխանող կառույցները որոշակի սպառնալիք են ստեղծում ինչպես դրանցից օգտվողների, այնպես էլ այլոց համար:

Քաղաքաշինության ոլորտի կառավարման անմիջական պատասխանատուն քաղաքաշինության նախարարությունն է, միաժամանակ, այս ոլորտում լիազորություններ ունեն նաև կառավարությունը, տեղական ինքնակառավարման մարմինները, մարզպետները և այլն:

«Քաղաքաշինություն» եզրույթի բնորոշումը տրված է «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի (05.05.98) 3-րդ հոդվածով. «Քաղաքաշինությունը Հայաստանի Հանրապետությունում կենսագործունեության համար բարենպաստ տարածական միջավայրի ստեղծման կամ փոփոխման նպատակով պետության, ֆիզիկական, իրավաբանական անձանց եւ դրանց միավորումների գործողությունների համախումբ է, որն ընդգրկում է՝

ա) Հայաստանի Հանրապետության, նրա վարչատարածքային միավորների եւ դրանց

բաղկացուցիչ մասերի սոցիալ-տնտեսական զարգացման համալիր ծրագրերի, տարաբնակեցման համակարգերի ձեւավորման, տարածքների կայուն զարգացման եւ դրանց նպատակային օգտագործման ուղղությունների եւ գերակայությունների, արտադրական կարողությունների տեղաբաշխման, ինժեներատրանսպորտային եւ այլ ենթակառուցվածքների կազմակերպման, կանխատեսման, ծրագրման եւ նախագծման բոլոր տեսակները.

բ) շենքերի, շինությունների նախագծման եւ շինարարության, վերակառուցման (ներառյալ՝ քանդման), վերականգնման, ուժեղացման, արդիականացման, ինչպես նաև տարածքների բարեկարգման բոլոր տեսակները.

գ) շենքերի, շինությունների շահագործումը՝ իրավական ակտե-

րի, քաղաքաշինական և նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան»:

Քաղաքաշինությունը, այսպիսով, խիստ բազմաբնույթ կառավարման ոլորտ է, ուստի կազմում է կառավարման տարբեր մեթոդներով ու ձևերով իրականացվող գործունեության համակարգ: Նպատակահարմար է առանձնացնել կառավարման այդ ոլորտում քաղաքականություն մշակող և իրականացնող պետական մարմնի՝ քաղաքաշինության նախարարության, հիմնական խնդիրները, լիազորությունները և գործունեության մեթոդները:

Տվյալ դեպքում, հարկ է նկատել, որ յուրաքանչյուր պետական մարմնի խնդիրներն ածանցվում են կառավարման ոլորտում առաջադրված նպատակներով, որոնք, ըստ հիշյալ նախարարության կանոնադրության 7-րդ կետի, հանգում են հետևյալին. «Նախարարության գործունեության նպատակը ներկա եւ գալիք սերունդների կենսագործունեության բարենպաստ միջավայրի ձեւավորման ու քաղաքաշինական միջոցներով բնակչության կյանքի որակի հետեւողական բարելավման, ինչպես նաև քաղաքաշինական համակարգերի անվտանգության ապահովման համար պայմանների ստեղծումն է՝ քաղաքաշինության քաղաքականության մշակման, իրականացման, համակարգման եւ արդյունքների գնահատման միջոցով» (ՀՀ քաղաքաշինության նախարարության կանոնադրությունը հաստատվել է ՀՀ կառավարության 2002թ. օգոստոսի 30-ի թիվ 1294-Ն որոշմամբ):

Ըստ քաղաքաշինության նախարարության կանոնադրության 8-րդ կետի, ՀՀ քաղաքաշինության քաղաքականության հիմնական ուղղությունների մշակման բնագավառում ***նախարարության խնդիրներն են՝***

1) երկրի տարաբնակեցման համակարգի հավասարակշռման, տարածաշրջանային զարգացման անհամամասնությունների հաղթահարման, բազմակենտրոն տարածական զարգացման պայմանների ապահովումը,

2) քաղաքաշինական համակարգերի անվտանգության եւ հարատև զարգացման ապահովումը՝ ներառյալ ներդաշնակ կենսատարածքի ձեւավորումը եւ բնակչության տարածքային համաչափ բաշխվածության համար նախադրյալների ստեղծումը,

3) անկառավարելի ուրբանիզացման հնարավոր սպառնալիքնե-

րի չեզոքացումը,

4) «կանաչ քաղաքաշինության» սկզբունքի ձեւավորումը, բնական եւ մշակութային լանդշաֆտների ներդաշնակ փոխլրացնող զարգացման ապահովումը,

5) ազգային ճարտարապետության հոգևոր ու մշակութային ավանդույթների պահպանումը, դրանց վերարտադրության ու զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը,

6) հողային պաշարների պետական կառավարումը՝ բնակավայրերի, ինչպես նաև կառուցապատման համար նախատեսված այլ հողերի՝ սահմանված կարգով օգտագործման մասով,

7) բնակարանային պայմանների բարելավման սահմանադրական իրավունքի իրագործման, բազմաբնակարան շենքերի պահպանման, անվտանգ շահագործման և կառավարման մարմինների կարողությունների հզորացման, ինչպես նաև կոմունալ ենթակառուցվածքների զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը,

8) ոլորտում ծառայությունների որակի բարձրացման, սպառողների իրավունքների պաշտպանության նպատակով քաղաքաշինական գործունեության առանձին տեսակների լիցենզավորումը,

9) քաղաքաշինական տեղեկատվական համակարգի ձեւավորումը, ՀՀ տարածքի քաղաքաշինական կադաստրի վարումն ու կադաստրային տվյալների ամփոփումը և այլն:

Հիշյալ խնդիրների բարեհաջող իրականացման նպատակով քաղաքաշինության ***նախարարությունն օժտված է համարժեք լիազորություններով***, որոնցից առանձնացնենք առավել էականները՝

1) պետական քաղաքաշինական քաղաքականության հիմնադրույթների, տարածական զարգացման ծրագրերի մշակում եւ դրանց իրականացման մոնիթորինգ,

2) քաղաքաշինության ոլորտի զարգացումն ապահովող ու գործունեությունը կարգավորող օրենքների եւ այլ իրավական ակտերի նախագծերի մշակում եւ Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը ներկայացնելը, նախարարության գործունեությանն առնչվող իրավական ակտերի կիրառման պրակտիկայի ընդհանրացում, դրանց կատարելագործման վերաբերյալ սահմանված կարգով առաջարկություններ ներկայացնելը,

3) համայնքների գլխավոր հատակագծերի եւ գոտեւորման նա-

խագծերի մշակման աշխատանքների համակարգում, տարածքների եւ բնակավայրերի կայուն քաղաքաշինական զարգացման ռազմավարության մշակում,

4) կառուցապատման համար նախատեսված հողերի քաղաքաշինական սահմանափակումների և նորմերի սահմանում,

5) քաղաքաշինական նպատակով հողամասերի հատկացումների վերաբերյալ առաջարկությունների, ճարտարապետահատակագծային առաջադրանքների ու ճարտարապետաշինարարական նախագծերի՝ սահմանված կարգով համաձայնեցում,

6) ճարտարապետության ոլորտի պետական քաղաքականության ու զարգացման ծրագրերի մշակում եւ դրանց մոնիթորինգի իրականացում,

7) շենքերի անձնագրավորման, սեյսմակայունության ուղղությամբ իրականացվող հետազննական, ինչպես նաեւ գիտահետազոտական եւ փորձարարակոնստրուկտորական աշխատանքների կազմակերպում եւ համակարգում, շինարարությունում դրանց արդյունքների ներդրում:

Քաղաքաշինության ոլորտում որոշակի լիազորություններ ունեն նաև տեղական ինքնակառավարման մարմինները, մասնավորապես, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի (07.05.02) 16-րդ հոդվածի 27-րդ կետով՝ ավագանու լիազորությունների առնչությամբ ամրագրված է. «Որոշում է ընդունում համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը, դրանց փոփոխությունները, ինչպես նաեւ նախագծման առաջադրանքները հաստատելու մասին՝ «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով», իսկ 28-րդ կետի համաձայն. «Հաստատում է համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը, ինչպես նաև սույն օրենքի 37-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետով սահմանված քաղաքաշինական այն փաստաթղթերը, որոնց պատվիրատուն է համայնքը»:

Ինչպես պետական, այնպես էլ տեղական ինքնակառավարման մարմիններն օժտված են քաղաքաշինության ոլորտում վերահսկողական լայն լիազորություններով: Միաժամանակ, տարբեր մարմիններին վերահսկողական նույնաբնույթ լիազորություններ վերապահելը գործնականում առաջացնում է անհարկի շփոթ և գործառույթների ի-

ռականացման այլ խոչընդոտներ: Վերահսկողության մասին արդեն իսկ հանգամանորեն խոսվել է սույն ձեռնարկի 3-րդ բաժնում:

§6. Պետական գույքի կառավարումը

Պետական գույքի կառավարումը Հանրապետությունում իրականացնում է ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը, որի կանոնադրությունը հաստատվել է ՀՀ կառավարության 2003 թ. հունիսի 26-ի N 822-Ն որոշմամբ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը գործադիր իշխանության հանրապետական մարմին է: Այն մշակում և իրականացնում է ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման, մասնավորեցման և պետական մասնակցությամբ ընկերությունների լուծարման բնագավառներում ՀՀ կառավարության քաղաքականությունը: Վարչությունը գործում է ՀՀ օրենսդրությանը և միջազգային պայմանագրերին համապատասխան:

Վարչության նպատակները և խնդիրներն են

1) պետական գույքի կառավարման (այդ թվում մասնավորեցման) արդյունավետության բարձրացումը,

2) Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության պետական գույքի հաշվառման, պահպանման, արդյունավետ կառավարման, տնօրինման ու օգտագործման պետական միասնական քաղաքականության հիմնադրույթների մշակումը և դրանց իրականացման կազմակերպումը,

3) սեփականության տարբեր ձևերի օպտիմալ համամասնությունների ձևավորման աշխատանքներին աջակցելը և նպաստելը,

4) իր իրավասության սահմաններում տնտեսության պետական սեփականության արդյունավետ օգտագործման քաղաքականության հիմնադրույթների մշակումը և այդ ոլորտին վերաբերող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների կատարման աշխատանքների կազմակերպումը,

5) իր իրավասության սահմաններում արժեթղթերի շուկայի զարգացման, ներդրումների ներգրավմանն աջակցելը,

6) պետական գույքի արդյունավետ կառավարման միջոցով պետական եկամուտների ավելացմանը նպաստելը,

7) պետության կողմից ձեռնարկատիրական զարգացման նպատակով իրականացվող օգտագործման միասնական քաղաքականության հիմնադրույթների մշակմանը և իր ոլորտում իրականացմանը-մասնակցությունը,

8) պետական գույքի կառավարման (այդ թվում մասնավորեցման) գիտամեթոդական ապահովումը և Հայաստանի Հանրապետության օրենսդրության կատարելագործմանը մասնակցությունը:

Պետական գույքի կառավարման վարչությունն իր նպատակների իրականացման համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է հետևյալ գործառույթները՝ ա) պետական գույքի կառավարման ոլորտում՝ իր իրավասության սահմաններում՝ իրականացնում է օրենքներով, ՀՀ կառավարության որոշումներով վարչության տնօրինությանը, տիրապետմանը և օգտագործմանը հանձնված (ամրացված) պետական գույքի կառավարումը,

Վարչությունը ՀՀ կառավարությանը ներկայացնում է առաջարկություններ պետական գույքի կառավարման (այդ թվում՝ մասնավորեցման), ինչպես նաև օտարերկրյա պետությունում ՀՀ սեփականություն հանդիսացող գույքի սեփականության իրավունքի ճանաչման և արդյունավետ օգտագործման և սպասարկման վերաբերյալ, մասնավորապես՝

1) համակարգում է պետական գույքի հաշվառման աշխատանքները և վարում է պետական գույքի հաշվառման ռեեստրը,

2) աջակցում է պետական սեփականության հանդիսացող հողի, ընդերքի, անտառների, ջրային և այլ բնական ռեսուրսների տնօրինման, և օգտագործման պետական քաղաքականության հիմնադրույթների մշակմանը,

3) համագործակցում է միջազգային ֆինանսատեխնիկական կազմակերպությունների և օտարերկրյա ներդրողների հետ,

4) ՀՀ կառավարություն է ներկայացնում պետական գույքի օգտագործումից ու մասնավորեցումից ստացվելիք միջոցների վերաբերյալ կանխատեսումներ և իրականացնում միջոցառումներ դրաց իրականացման համար,

5) իրականացնում է պետական գույքի կառավարման ոլորտում

ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

Վարչությունը որոշակի գործառույթներ է իրականացնում նաև մասնավորեցման ոլորտում՝

1) իր իրավասության սահմաններում՝ մշակում է պետական գույքի մասնավորեցման ծրագրերը, ինչպես նաև ծրագրում առաջարկվող լրացումների և փոփոխումների նախագծերը և դրանք ներկայացնում ՀՀ կառավարության քննարկմանը,

2) իրականացնում է պետական գույքի մասնավորեցումը,

3) պետական գույքի մասնավորեցման ժամանակ իրականացնում է պետության սեփականությունը հանդիսացող համապատասխան հողամասերի՝ սահմանված կարգով օտարումը,

4) մշակում է պետական գույքի մասնավորեցման գործընթացը կանոնակարգող իրավական ակտերի նախագծեր և դրանք ներկայացնում ՀՀ կառավարության քննարկմանը,

5) ՀՀ անունից կնքում է մասնավորեցման գործարքներ, իրականացնում է վերահսկողություն իր կողմից կնքված պայմանագրով մյուս կողմի համար նախատեսված պարտավորությունների կատարման նկատմամբ,

6) իրականացնում է պետական գույքի մասնավորեցման, տնօրինման, ինչպես նաև հաշվառման գործընթացների վերլուծությունը և ամփոփում է դրանց վերաբերյալ առաջարկությունները,

7) իրականացնում է մասնավորեցման ոլորտում ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

Վարչությունը պետական մասնակցությամբ ընկերությունների լուծարման և ֆինանսական առողջացման ոլորտներում

1) մշակում է և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացնում մասնավորեցման ծրագրերում ընգրկված պետական մասնակցությամբ ընկերությունների լուծարման վերաբերյալ առաջարկությունները,

2) իրականացնում է պետական մասնակցությամբ ընկերությունների ֆինանսատնտեսական վիճակի վերլուծություն և ՀՀ կառավարություն է ներկայացնում առաջարկություններ դրանց ֆինանսական առողջացման, ինչպես նաև պարտքերի վերակառուցման վերաբերյալ,

3) իրականացնում է պետական մասնակցությամբ ընկերություն-

ների լուծարման և ֆինանսական առողջացման ոլորտում ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

Վարչությունը կազմված է վարչության պետից և վարչության աշխատակազմից: Վարչության համակարգում ընդգրկվում են վարչության ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպությունները և հիմնարկները: Վարչությունը ղեկավարում է վարչության պետը, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ՀՀ վարչապետը: Վարչության պետն ունի տեղակալներ, որոնց պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ՀՀ վարչապետը՝ խորհրդակցելով վարչության պետի հետ:

Վարչության պետը կազմակերպում և վերահսկում է վարչությանը վերապահված խնդիրների ու գործառույթների իրականացումը և պատասխանատու է լիազորված բնագավառներում քաղաքականության մշակման ու իրականացման, տիրող իրավիճակի և հեռանկարային զարգացման ապահովման համար: Նա պատասխանատու է ՀՀ Նախագահին, կառավարությանը և վարչապետին:

ԳԼՈՒԽ 22.
ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

§1. Բնապահպանության պետական կառավարումը

ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածի համաձայն. *«Պետությունն ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը»*: Շրջակա միջավայրի և բնական պաշարների պաշտպանությունը բնապահպան գիտնականների հավաստմամբ, առաջիկա մի քանի տասնամյակների ընթացքում դառնալու է ողջ մարդկության կարևորագույն հիմնախնդիրներից մեկը: Ճգնաժամային բնապահպանական դրության հիմնական պատճառներն են երկրագնդի աճող բնակչության անսպառ պահանջմունքների և բնության սահմանափակ ռեսուրսների միջև անհամապատասխանությունը, բիոսֆերայի կայունության անկումը, մարդկային գենոֆոնդի վատթարացումը և ջերմոցային էֆեկտը:

Հայաստանի Հանրապետությունը սահմանափակ բնական պաշարներ ունի: Ուստի պետությունն այս ոլորտում երկու խնդիր ունի.

1) մի կողմից բնական պաշարները, որպես ազգային հարստություն, ողջամիտ օգտագործել, քանի որ վճռական նշանակություն ունեն ժողովրդի բարեկեցիկ կյանքի ապահովման և տնտեսության զարգացման համար: Բնությունն ու նրա պաշարները ժողովրդի կայուն սոցիալ-տնտեսական զարգացման և բարեկեցության բնական հիմքն են:

Ընդհանրապես պետության արդյունաբերական, էներգետիկ, պարենային և բնապահպանական անվտանգությունը պայմանավորված են բնական ռեսուրսների (ընդերք, անտառային ֆոնդ, ջրային ռեսուրսներ, շրջակա միջավայր) վիճակով: Այդ իսկ պատճառով պետությունը մեծ ուշադրություն է դարձնում բնապահպանության, բնօգտագործման և շրջակա միջավայրի ոլորտների իրավական կարգավորմանը, բնապահպանական փորձաքննության, լիցենզավորման, հաշվառման և վերահսկողության հիմնախնդիրներին՝ նյութական

հումքային բազայի վերարտադրության ապահովման, ինչպես նաև չվերականգնվող օգտակար հանածոների առավել ողջամիտ օգտագործման նպատակով,

2) մյուս կողմից բնական պաշարների օգտագործումը չպետք է հանգեցնի մարդու և նրա կենսագործունեության համար անբարենպաստ միջավայրի ձևավորման: Միայն առողջ կենսոլորտն է նպաստում մարդու գոյությանն ու առողջությանը, հակառակ դեպքում իմաստազրկվում են մարդու բոլոր իրավունքները: 2005թ. Սահմանադրական բարեփոխումների արդյունքում ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածով սահմանվում է. *«Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքներն ու ազատությունները բարձրագույն արժեքներ են»*: Պատահական չէ նաև, որ նույն բարեփոխումների համատեքստում, մի շարք միջազգային իրավական ակտերում ամրագրված ընդհանուր մոտեցումներին համահունչ, ՀՀ Սահմանադրությունը լրացվեց նոր՝ 33.2-րդ հոդվածով, որն ամրագրում է. *«Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը և բարենկեցությանը նպաստող շրջակա միջավայրում, պարտավոր է անձամբ և այլոց հետ համատեղ պահպանել և բարելավել շրջակա միջավայրը»*: Ավելին, ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածով (10-րդ կետ) ամրագրվեց. *«Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության հիմնական խնդիրներն են՝ … 10) իրականացնել ներկա ու ապագա սերունդների բնապահպանական անվտանգությունն ապահովող քաղաքականություն…»*:

Ինչպես տեսնում ենք, ՀՀ Սահմանադրությունն ուղղակի պարտականություն է սահմանում պետության համար, այն գիտակցումով, որ բնապահպանությունն ազգային անվտանգության հիմնարար ուղղություններից է: ՀՀ Նախագահի 2007թ. փետրվարի 7-ի թիվ ՆՀ-37-Ն հրամանագրով հաստատված ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության 2-րդ կետը սահմանում է, որ ազգային անվտանգության հիմնարար արժեքներին ծառայող գործոն է ներկա և գալիք սերունդների կենսագործունեության բարենպաստ միջավայրի ձևավորումը:

ՀՀ Սահմանադրության 89-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն կառավարությունը պետական քաղաքականություն է մշակում և իրականացնում բնապահպանության բնագավառներում:

Խորհրդային Հայաստանում շրջակա միջավայրի պահպանության խնդիրներին, ըստ էության, ուշադրություն է դարձվել 1961 թվականից, երբ ՀՍՍՀ Մինիստրների Սովետին առընթեր ստեղծվել է Մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության վարչությունը: Սակայն, շրջակա միջավայրի պահպանությունը պետական կարևորության խնդիր է ճանաչվել միայն 1986 թվականից, երբ ՀՍՍՀ Մինիստրների Սովետն իր 26 փետրվարի թիվ 119 որոշմամբ վերոնշյալ կոմիտեն վերակազմավորեց ՀՍՍՀ շրջակա միջավայրի պահպանության պետական կոմիտեի: Հետագայում, 1989 թվականի հունվարի 8-ին, ՀԽՍՀ Մինիստրների Խորհրդի որոշմամբ այն վերանվանվել է Բնության պահպանության պետական կոմիտեի: 1991 թվականի դեկտեմբերի 5-ին Հանրապետության Գերագույն Խորհրդի նախագահության հրամանագրով Կոմիտեն վերակազմավորվել է Բնության և շրջակա միջավայրի պահպանության նախարարության: 1995թ. օգոստոսի 4-ին ՀՀ կառավարության որոշմամբ նախարարությունը վերանվանվել է Բնության պահպանության և ընդերքի նախարարության: Ներկայիս անվանումը՝ ՀՀ բնապահպանության նախարարություն (այսուհետ՝ Նախարարություն), այն կրում է 1996 թվականի նոյեմբերի 8-ից: 2000թ. կարճ ժամանակով Նախարարությունը լուծարվել է և ներառվել գյուղատնտեսության և բնօգտագործման նախարարության կազմի մեջ:

Անկախությունից ի վեր ընդունվել են մի շարք օրենքներ, որոնք պայմանականորեն կարելի է բաժանել երկու ուղղությունների՝ բնապահպանական և բնառեսուրսային: Բնապահպանական օրենքներն են՝ «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքները:

Բնապահպանական և բնական պաշարներին առնչվող հարաբերությունները կարգավորվում են՝ ՀՀ հողային, ՀՀ ջրային, ՀՀ ընդերքի մասին և ՀՀ անտառային օրենսգրքերով, ինչպես նաև «Սևանա լճի մասին», «Կենդանական աշխարհի մասին», «Բուսական աշխարհի մասին», «Մթնոլորտային օդի պահպանության մասին», «Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին», «Թափոնների մասին», «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին», «Ջրի ազգային ծրագրի մասին», «Ընդերքն օգտակար հանածոների շահագործ-

ման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (կոնցեսիայի) մասին», «Բնօգտագործման եւ բնապահպանության վճարների մասին» և «Գյուղատնտեսական հողերի մելիորացիայի մասին» ՀՀ օրենքներով[1]: Ելնելով նշված օրենքների պահանջներից՝ ՀՀ կառավարությունը, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքին համապատասխան, ընդունել է մի շարք նորմատիվ իրավական ակտեր:

Բնապահպանության պետական կառավարման ոլորտում ներկայումս գոյություն ունեն պետական կառավարման երկու կազմակերպական-իրավական ձևեր՝ բնական պաշարների կառավարման համակարգ՝ ի դեմս ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության և դրանց պահպանության համակարգը՝ ի դեմս ՀՀ բնապահպանության նախարարության:

ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն: «Հայաստանի Հանրապետության կառավարության կառուցվածքի մասին» ՀՀ օրենքի (17.06.08) հիման վրա, ՀՀ կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի N 654-Ն որոշմամբ ՀՀ էներգետիկայի նախարարությունը վերանվանվեց ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) և նույն որոշմամբ հաստատված հավելվածներում կատարված կառուցվածքային, գործառութային փոփոխությունների արդյունքում ՀՀ բնապահպանության նախարարության իրավասության մեջ գտնվող լիազորությունները (միայն օգտակար հանածոների պաշարների մասով) փոխանցվեցին Նախարարությանը: Նախարարության կանոնադրության[2] համաձայն հիշյալ բնագավառում ***Նախարարության նպատակները և խնդիրներն են՝***

1) էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլոր-

---

[1] Ավելի մանրամասն տես www.arlis.am կամ ՀՀՊՏ 2006.12.25/66(521), ՀՀԱԺՏ 1995/9, ՀՀՊՏ 2001.06.15/17(149), ՀՀՊՏ 2002.07.10/24(199), ՀՀՊՏ 2002.12.11/54(229), ՀՀՊՏ 2005.12.07/75(447), ՀՀՊՏ 2001.07.04/19(151), ՀՊՏ 2000.05.12/9(107), ՀՀՊՏ 1999.12.27/31(97), ՀՀԳԽՏ 1994/21, ՀՀՊՏ 2006.12.25/66(521), ՀՀՊՏ 2004.12.28/72(371), ՀՊՏ 2005.06.15/37(409), ՀՀՊՏ 2006.12.25/66(521), ՀՀՊՏ 2002.11.29/52(227), ՀՊՏ 2005.06.24/40(412):

[2] Ավելի մանրամասն տես ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կանոնադրությունը և կառուցվածքը՝ հաստատված ՀՀ կառավարության 2008թ. մայիսի 15-ի N 654-Ն որոշման 1-2 հավելվածներով:

տի քաղաքականության մշակման ու իրականացման ապահովումը,

2) տեղական էներգետիկական պաշարների, էներգիայի այլընտրանքային աղբյուրների արդյունավետ օգտագործման ապահովումը,

3) ատոմային էներգիայի՝ խաղաղ նպատակներով օգտագործման պետական քաղաքականության մշակման և իրականացման ապահովումը,

4) ընդերքօգտագործման ոլորտում պետական քաղաքականության մշակման ու իրականացման ապահովումը,

5) ընդերքի օգտագործման տրամադրման ապահովումը,

6) օգտակար հանածոների ողջամիտ օգտագործման, ուսումնասիրման և հանքարդյունահանման արդյունավետ իրականացմանը նպաստելը,

7) ընդերքի օգտագործման և պահպանության բնագավառում պետական վերահսկողության ապահովումը,

8) ընդերքի մասին երկրաբանական և այլ տեղեկատվության պետական ընդերքաբանական փորձաքննության ապահովումը,

9) ընդերքի մասին երկրաբանական և այլ տեղեկատվության միասնական համակարգի ապահովումը:

Նախարարության գործառույթները: Նախարարությունն իր նպատակների և խնդիրների իրականացման համար՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտի պետական ծրագրերի մշակում և դրանց իրականացման մոնիթորինգ,

2) էներգակիրների արդյունավետ օգտագործման ուղղությամբ պետական ծրագրերով իրականացվող աշխատանքների մոնիթորինգ,

3) սեփական վերականգնվող էներգետիկ ռեսուրսների առաջնահերթ ու արդյունավետ օգտագործման խթանման տնտեսական ու իրավական մեխանիզմների մշակում,

4) էներգետիկայի բնագավառի օբյեկտների և դրանց անվտանգության գոտիների հողերի օգտագործման նորմերի ու սահմանափակումների սահմանում,

5) միջուկային նյութերի ներմուծման կամ արտահանման լիցեն-

զիայի տրամադրման նախապատրաստական աշխատանքների իրականացում և ՀՀ կառավարություն առաջարկություն ներկայացնելը,

6) ՀՀ-ում ռադիոակտիվ թափոնների կառավարման ռազմավարության, նպատակային ծրագրի մշակում և դրանց իրականացման մոնիթորինգ,

7) ատոմային էլեկտրակայանի անվտանգ շահագործման և շահագործումից հանման ծրագրերի ու միջոցառումների մշակում և դրանց իրականացման մոնիթորինգ,

8) ներկայացված հայտի հիման վրա՝ օգտակար հանածոների հանքավայրերի հայտնաբերող ճանաչելու փաստի հաստատում և այլն:

ՀՀ բնապահպանության նախարարություն: ՀՀ բնապահպանության նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում և իրականացնում է ՀՀ շրջակա միջավայրի պահպանության ու բնական ռեսուրսների բանական օգտագործման բնագավառներում պետական քաղաքականությունը: Նախարարության կանոնադրության[1] համաձայն՝ ***Նախարարության նպատակներից և խնդիրներից են՝***

1) շրջակա միջավայրի՝ ընդերքի, հողերի, ջրերի, մթնոլորտի, կենդանական ու բուսական աշխարհի, այդ թվում՝ բնության հատուկ պահպանվող տարածքների վրա վնասակար ներգործությունների կանխարգելման կամ նվազեցման, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության, բնական ռեսուրսների (բացառությամբ օգտակար հանածոների պաշարների) ողջամիտ օգտագործման և վերարտադրության պետական կառավարման ապահովումը,

2) ՀՀ բնապահպանական օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության ապահովումը,

3) բնապահպանության ոլորտում պետական պատվերի ձևավոր-

---

[1] Ավելի մասնարմասն տե՛ս ՀՀ կառավարության 08.08.02թ. «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կանոնադրությունն ու աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» թիվ 1237-Ն որոշումը:

ման ու տեղադրման ապահովումը,

4) ՀՀ տարածքում արտադրվող և օգտագործվող վտանգավոր քիմիական նյութերի ու թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարման պայմանների ապահովումը,

5) էկոլոգիական գիտության, կրթության և իրազեկման միասնական քաղաքականության ապահովումը և այլն:

Նախարարության գործառույթներից են՝

1) ՀՀ շրջակա միջավայրի՝ ընդերքի, հողերի, ջրերի, մթնոլորտի, կենդանական ու բուսական աշխարհի, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության և բնական ռեսուրսների (բացառությամբ օգտակար հանածոների պաշարների) ողջամիտ օգտագործման ու վերարտադրության բնագավառի պետական քաղաքականության ծրագրերի ու ռազմավարությունների մշակում և դրանց իրականացման մոնիթորինգ,

2) ՀՀ սոցիալ-տնտեսական ծրագրերի՝ բնապահպանության ոլորտին վերաբերող բաժինների մշակում, բնապահպանության ոլորտին վերաբերող իրավական ակտերի, ստանդարտների, տեխնիկական կանոնակարգերի մշակում,

3) շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների (բացառությամբ օգտակար հանածոների պաշարների) ողջամիտ օգտագործման և վերականգնման տնտեսական մեխանիզմների, այդ թվում՝ բնապահպանական և բնօգտագործման վճարների դրույքաչափերի մշակում,

4) կրթության և գիտության բնագավառի լիազոր մարմնի հետ համատեղ էկոլոգիական գիտության, կրթության և իրազեկման ռազմավարության հիմնական ուղղությունների մշակում,

5) բնական ռեսուրսների (բացառությամբ օգտակար հանածոների պաշարների) կառավարման և շրջակա բնական միջավայրի պահպանության բնագավառում պետական ծրագրերի մշակում և պետական պատվերի՝ սահմանված կարգով ձևավորում,

6) շրջակա միջավայրի վիճակի, այդ թվում՝ նաև թափոնների հեռացման վայրերի պետական դիտանցի (մոնիթորինգ) իրականացման կարգերի և չափորոշիչների մշակում,

7) թափոնների պետական հաշվառում, պետական կադաստրի,

թափոնների գոյացման, վերամշակման ու օգտահանման օբյեկտների և հեռացման վայրերի ռեեստրների ստեղծում, վարման կարգերի սահմանում և այլն:

§2. Կրթության և գիտության ոլորտների պետական կառավարումը

Կրթությունն ու գիտությունը միմյանց շատ մոտ, բայց և որոշակի առանձնահատկություններ ունեցող ոլորտներ են: Այդուհանդերձ, Հայաստանի Հանրապետությունում նախընտրել են այս ոլորտների միասնական պետական կառավարումը՝ հաշվի առնելով դրանց առավել սերտ կապն ու ընդհանրությունները: Միաժամանակ, ստեղծվել են առանձին պետական մարմիններ, որոնք պատասխանատու են կոնկրետ ոլորտի կառավարման համար:

Կրթությունն անձի, հասարակության, պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց է: Այն վճռական դեր ունի հասարակության, որպես սոցիալական ինստիտուտի, զարգացման, մարդկության մշակութային ժառանգության և հոգևոր արժեքների պահպանման, հետագա սերունդներին փոխանցման, ինչպես նաև անհատի ինտելեկտուալ մակարդակի հետագա կատարելագործման գործում: Կրթվելն անհատի զարգացման գործընթացն է՝ ուղղված գիտելիքների, հմտությունների, ստեղծագործության տիրապետմանը, աշխարհի նկատմամբ արժեքային վերաբերմունքի ձևավորմանը: Կրթության հիմնական ուղիներն են ուսուցումը և ինքնակրթությունը:

Կրթությունն ուսուցման միջոցով մի գործընթաց է, որով հասարակությունը, գիտակցված կերպով, իր կողմից կուտակված գիտելիքները, նվաճումները, հմտությունները և արժեքները մի սերնդից մյուսին փոխանցում է կրթական հաստատությունների միջոցով: Կրթությունը երկրի առաջադիմության, սոցիալ-տնտեսական զարգացման, մշակույթի պահպանման, զարգացման անհրաժեշտ պայմանն է: Կրթության նպատակն է անձի և քաղաքացու մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացումը: Կրթական մակարդակը կարևոր է նաև ամեն մի մարդու կյանքում, նրա հասարակական դիրքի և նվաճումների համար: Ելնելով այդ կարևորությունից՝ ՀՀ Սահմանադ-

ության 39-րդ հոդվածն ամրագրել է՝ «Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք»:

Գիտությունը ճանաչողական գործունեության առանձնահատուկ տեսակ է, որն ուղղված է բնության, հասարակության և մտածողության մասին օբյեկտիվ, համակարգված-կանոնակարգված և հիմնավորված գիտելիքների ձեռքբերմանը, ճշգրտմանը և տարածմանը: Այդ գործունեության հիմքում ընկած է գիտական փաստերի հավաքումը, դրանց մշտական թարմացումը և համակարգումը, քննական վերլուծությունը և, դրա հիման վրա՝ նոր գիտական գիտելիքների կամ ընդհանրացումների սինթեզը, որոնք ոչ միայն նկարագրում են ուսումնասիրվող բնության կամ հասարակական երևույթները, այլև հնարավորություն են տալիս պատճառահետևանքային կապեր կառուցել և, որպես արդյունք՝ կանխատեսել: Փորձերով և փաստերով հիմնավորված տեսություններն ու վարկածները ձևակերպվում են որպես բնության կամ հասարակության օրենքներ:

ՀՀ Սահմանադրության 40-րդ հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի գրական, գեղարվեստական, գիտական և տեխնիկական ստեղծագործության ազատության, գիտության նվաճումներից օգտվելու և հասարակության մշակութային կյանքին մասնակցելու իրավունք»:

Կրթության և գիտության բացառիկ կարևորության գիտակցումով ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածով սահմանվեց, որ սոցիալական և մշակութային ոլորտներում պետության կարևորագույն խնդիրներից են՝ նպաստել անվճար բարձրագույն և այլ մասնագիտական կրթության, ինչպես նաև գիտության զարգացմանը, ազգային և համամարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը (8, 9 և 11-րդ կետեր):

Կրթության և գիտության ոլորտները Հայաստանի Հանրապետությունում կարգավորվում են նաև մի քանի օրենքներով. «Նախադպրոցական կրթության մասին» (15.11.05), «Հանրակրթության մասին» (10.07.09) «Կրթության մասին» (14.04.09), «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» (25.05.05), «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» (08.07.05), «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մա-

սին» (14.12.04), «Կրթության պետական տեսչության մասին» (15.11.05), «ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի մասին» (14.04.11), «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» (05.12.00) և ՀՀ այլ օրենքներն ու իրավական ակտերը:

Նշված սահմանադրական նորմերի և օրենքների կատարումն ապահովելու պարտականությունը դրված է ՀՀ կառավարության վրա. ՀՀ Սահմանադրության 89-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն «ՀՀ կառավարությունը իրականացնում է պետական քաղաքականությունը ***գիտության, կրթության,*** մշակույթի, առողջապահության, սոցիալական ապահովության և բնության պահպանության բնագավառներում»:

ՀՀ կրթության և գիտության նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում և իրականացնում է կրթության և գիտության բնագավառներում ՀՀ կառավարության քաղաքականությունը: ***Նախարարության նպատակներից և խնդիրներից են՝***

1) հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդումը, ազգային և համամարդկային արժեքների պահպանումը և զարգացումը, կրթության և գիտության համակարգի բնականոն գործունեության ապահովումը,

2) կրթության և գիտության բնագավառների պահպանման ու զարգացման ապահովումը՝ որպես տնտեսության զարգացման, երկրի անվտանգության, մրցունակության ապահովման, կրթության, մշակույթի և հասարակական առաջընթացի բացառիկ կարևոր գործոն,

3) կրթական և գիտական համակարգերի գործունեության որակի ու արդյունավետության գնահատման, «Լեզվի մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարման ապահովումը,

4) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման ապահովումը և այլն:

Նախարարությունն իր նպատակների և խնդիրների իրականացման համար՝ իրականացնում է մի շարք գործառույթներ՝

1) կրթության և գիտության բնագավառների վերաբերյալ իրավական ակտերի նախագծերի և պետական քաղաքականության մշակում,

2) հանրակրթության պետական չափորոշչի մշակում, հանրակրթական պետական ծրագրերի, օրինակելի ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի մշակում և հաստատում,

3) բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների և որակավորումների բնութագրերի մշակում ու հաստատում՝ ըստ մասնագիտությունների և կրթական աստիճանների,

4) արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման ռազմավարության մշակում, ըստ մասնագիտությունների ու կրթական աստիճանների՝ պետական կրթական չափորոշիչների և որակավորումների բնութագրերի, ինչպես նաև մասնագիտությունների մասնագիտացումների ցանկերի հաստատում,

5) նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերով պետության կողմից ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) ուսուցման տեղերի՝ ըստ մասնագիտությունների մշակում,

6) ուսումնական հաստատությունների ղեկավար, մանկավարժական և պրոֆեսորադասախոսական անձնակազմերին ներկայացվող պահանջների սահմանում,

7) գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի և գիտական կոչումներ շնորհելու կարգի մշակում,

8) ատենախոսությունների թեմաների հաստատման և ատենախոսության պաշտպանության համար անհրաժեշտ որակավորման քննությունների հանձնման կարգի սահմանում և այլն:

Նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմիններից է ***Գիտության պետական կոմիտեն*** (այսուհետ՝ ԳՊԿ): Նախարարության գիտության պետական կոմիտեն ստեղծվել է ՀՀ նախագահի 2007թ. հոկտեմբերի 1-ի թիվ ՆՀ 231-Ն հրամանագրով՝ որպես նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմին: ԳՊԿ-ի կանոնադրությունն ու կառուցվածքը հաստատվել է ՀՀ կառավարության 2007թ. հոկտեմբերի 18-ի թիվ 1269-Ն որոշմամբ: ԳՊԿ-ն մշակում և իրականացնում է գիտության ոլորտում ՀՀ կառավարության քաղաքականությունը:

Կոմիտեի նպատակներն ու խնդիրներն են՝

1) հանրապետության գիտական և գիտատեխնիկական ներուժի զարգացումը, դրա ռացիոնալ տեղաբաշխումը և պահպանումը, գիտական և գիտատեխնիկական կադրերի պատրաստման արդյունավետ համակարգի ձևավորումը, հասարակության մտավոր ներուժի վերարտադրմանը նպաստելը,

2) գիտության ոլորտի զարգացման ու բնականոն գործունեության ապահովումը՝ որպես տնտեսության զարգացման, երկրի անվտանգության ապահովման, կրթության, մշակույթի և հասարակական առաջընթացի բացառիկ կարևոր գործոն,

3) գիտական և գիտատեխնիկական քաղաքականության մշակումն ու իրականացումը,

4) նորամուծական (ինովացիոն) քաղաքականության մշակմանն ու իրականացմանը մասնակցելը, հանրապետությունում հիմնարար ու կիրառական գիտության և գիտատեխնիկական արդյունքի ու բարձր տեխնոլոգիաների ներդրմանն աջակցելը:

ԳՊԿ-ի գործառույթներն են՝

1) գիտության ոլորտում ՀՀ պետական քաղաքականության մշակում,

2) գիտության զարգացման հեռանկարային ու նպատակային գիտատեխնիկական ծրագրերի մշակումը ու դրանց իրականացման կազմակերպում,

3) նպաստել միջազգային կապերի զարգացմանը,

4) գիտության, կրթության և արտադրության ինտեգրմանը, սոցիալական խնդիրների լուծմանն ու մարդու, հասարակության և պետության անվտանգության ապահովմանն ուղղված գիտական և գիտատեխնիկական գործունեության իրականացման կազմակերպում,

5) գիտության ոլորտի գիտական փորձաքննության անկախ համակարգի ստեղծում և այլն:

Կոմիտեի կառավարումը: Կոմիտեն կազմված է Նախագահից և աշխատակազմից: Կոմիտեի ենթակայության տակ կարող են գործել ՊՈԱԿ-ներ և հիմնարկներ: Կոմիտեն կառավարում է կոմիտեի նախագահը, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ՀՀ վարչապետը՝ ՀՀ ԿԳ նախարարի ներկայացմամբ:

§3. Մշակույթի պետական կառավարումը

«Մշակույթ» եզրույթը սերվում է լատիներեն «cultura» բառից, որը Հին Հռոմում մի քանի իմաստներով է օգտագործվել (հողագործություն, դաստիարակություն, հարգանք)՝ առավելապես նկատի ունենալով ինչ որ բանի կատարելագործումը (օրինակ՝ «agri cultura» բառացի՝ դաշտ + մշակել, կատարելագործել): Ժամանակակից իմաստով, «մշակույթ» եզրույթն սկսել են օգտագործել 17-18-րդ դարերում: Սակայն մինչ օրս միասնական մոտեցում չի ձևավորվել այս եզրույթի փիլիսոփայական, գիտական սահմանման տեսանկյունից:

Հիմնականում «մշակույթ» եզրույթն ընկալվում է որպես մարդկային գործունեության այնպիսի ոլորտներ, որոնք կապված են մարդու ինքնարտահայտման հետ (կրոնական պաշտամունք, նմանակում և այլն), նրա սուբյեկտիվության դրսևորման հետ (բնավորություն, հմտություններ, կարողություններ և գիտելիքներ): Երբեմն մշակույթը ներկայացվում է իբրև «համամարդկային և հոգևոր արժեքների գործնական իրագործում» կամ իբրև «մարդու արտակենսաբանական դրսևորումների ողջ համակցություն»:

ՀՀ Սահմանադրության 40-րդ հոդվածի համաձայն. *«Յուրաքանչյուր ոք ունի գրական, գեղարվեստական, գիտական և տեխնիկական ստեղծագործության ազատության, գիտության նվաճումներից օգտվելու և հասարակության մշակութային կյանքին մասնակցելու իրավունք»*: ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածով սահմանվեց, որ մշակութային ոլորտում պետության կարևորագույն խնդիրներից է՝ նպաստել մշակույթի զարգացմանը, ազգային և համամարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը (9-րդ և 11-րդ կետեր):

Այլ կերպ ասած՝ պետությունը պարտավոր է նպատակային գործունեություն իրականացնել՝ ուղղված ազգային մշակույթի ավանդական արժեհամակարգերի պահպանմանը, ներկայացմանը, տարածմանը, մարդու համար մշակութային միջավայրի ձևավորմանը և մշակութային անվտանգության ապահովմանը:

Սահմանադրական այս նորմերի հիման վրա և ի կատարումն դրանց, ընդունվել են մի շարք օրենքներ և այլ իրավական ակտեր:

Դրանք են. «Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին» (06.12.04), «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» (20.11.02), «ՀՀ պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների մասին» (11.04.03), «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» (11.11.98), «Ոչ նյութական մշակութային ժառանգության մասին» (07.10.09) ՀՀ օրենքները և այլ իրավական ակտերը:

Նշված սահմանադրական նորմերի և օրենքների կատարումն ապահովելու պարտականությունը դրված է ՀՀ կառավարության վրա. ՀՀ Սահմանադրության 89-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն. *«ՀՀ կառավարությունը իրականացնում է պետական քաղաքականությունը գիտության, կրթության, **մշակույթի**, առողջապահության, սոցիալական ապահովության և բնության պահպանության բնագավառներում»*:

Մշակույթի ոլորտի պետական քաղաքականության իրականացման պետական լիազոր մարմինը ՀՀ մշակույթի նախարարությունն է (այսուհետ՝ Նախարարություն), որի կանոնադրությունն ու կառուցվածքը հաստատվել են ՀՀ կառավարության 2007թ. դեկտեմբերի 27-ի թիվ 1581-Ն որոշմամբ: Նախարարությունը մշակում ու իրականացնում է ՀՀ կառավարության քաղաքականությունը մշակույթի և տեղեկատվության բնագավառում:

Նախարարության նպատակները և խնդիրներն են՝

1) մշակույթի զարգացմանը նպաստելը,

2) հասարակության կողմից մշակույթի՝ որպես զարգացման միջոցի գիտակցումը, նոր արժեքների և նոր գաղափարների ներդրումը,

3) մշակույթի բնագավառում միջազգային (ներառյալ սփյուռքը) մշակութային համագործակցության և փոխանակումների զարգացումը,

4) մշակութային ժառանգության ստեղծմանը, պահպանությանը, պաշտպանությանը, ուսումնասիրությանը, օգտագործմանը, հանրահռչակմանն ու ծառայությունների մատուցմանը նպաստելը,

5) միջազգային նորմերի շրջանակներում այլ պետությունների տարածքներում գտնվող ազգային մշակութային արժեքների պահ-

պանությանը նպաստելը և այլն:

Նախարարությունն իր նպատակների և խնդիրների իրականացման համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է մի շարք ***գործառույթներ՝***

1) մշակում է իրավական ակտերի նախագծեր, ընդհանրացնում իրավական ակտերի գործնական կիրառումն ու ներկայացնում առաջարկություններ մշակույթի բնագավառներում ՀՀ օրենսդրության կատարելագործման վերաբերյալ,

2) մշակում է մշակույթի բնագավառում ՀՀ կառավարության ծրագրերը,

3) մշակում է ՀՀ պատմամշակութային ժառանգության հաշվառման, պահպանության, օգտագործման ու համալրման սկզբունքները, կանոնները, չափանիշները (նորմատիվներ) և չափորոշիչները,

4) ներկայացնում է առաջարկություններ ՀՀ կառավարություն ու ՄԱԿ-ի կրթական, գիտական և մշակութային կազմակերպություն (ՅՈՒՆԵՍԿՕ) ՀՀ պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններն ու հատուկ պահպանվող պատմամշակութային տարածքները համապատասխան-աբար՝ ՀՀ պատմության և մշակույթի հուշարձանների պետական ցուցակում և ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային մշակութային ժառանգության ցանկերում ընդգրկելու վերաբերյալ,

5) մշակում ու իրականացնում է մշակութային արժեքների ապօրինի արտահանումն ու ապօրինի ներմուծումը, ինչպես նաև մշակութային արժեքների նկատմամբ սեփականության իրավունքի ապօրինի փոխանցումը կանխող և կանխարգելող միջոցառումներ՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան,

6) իրականացնում է պետական սեփականություն համարվող մշակութային արժեքների, թանգարանային, գրադարանային հավաքածուների կառավարումը, պետության անունից գնման նախապատվության իրավունքը,

7) նպաստում է ՀՀ տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների մշակութային ինքնության պահպանմանն ու զարգացմանը, պետական աջակցություն ցուցաբերում նրանց մշակութային կենտրոններին ու հայրենակցական միություններին,

8) համագործակցում և մասնակցում է միջազգային (նաև սփյուռ-

քի) մշակութային կազմակերպությունների աշխատանքներին,

9) պետական կառավարման տարածքային մարմինների հետ համատեղ ապահովում է պետական մշակութային տարածքային քաղաքականության իրականացումը և այլն:

§4. Սպորտի և երիտասարդության պետական կառավարումը

Երիտասարդությունը հատուկ սոցիալ-տարիքային խումբ է, որը հասարակության մեջ առանձնանում է իր տարիքային սահմաններով և կարգավիճակով, երբ տեղի է ունենում անցում մանկությունից և դեռահասությունից դեպի հասուն կյանք՝ սոցիալական պատասխանատվություն (կախված տարածաշրջանից սովորաբար երիտասարդ են համարվում 14-16 կամ 25-35 տարեկանները): Երիտասարդությունն այն մարդկանց խումբն է, որին հասարակությունը սոցիալական կայացման հնարավորություն է տալիս՝ որոշակի արտոնությունների տրամադրելու, միաժամանակ՝ հասարակական-քաղաքական կյանքի որոշ ոլորտներին ակտիվ մասնակցության հնարավորության սահմանափակման միջոցով:

Երիտասարդությունն է հիմնականում հանդիսանում հասարակության առավել շարժուն, ինտելեկտուալ և ակտիվ մասը, որով այն շահեկանորեն տարբերվում է հասարակության մյուս մասերից: Միևնույն ժամանակ յուրաքանչյուր հասարակության կարևորագույն խնդիրն է նվազագույնի հասցնել այն կորուստներն ու վնասները, որը պետությունը կրում է երիտասարդների սոցիալականացման և տնտեսական, քաղաքական և սոցիոմշակութային միասնական միջավայրին ինտեգրվելու գործընթացում:

Հայտնի գերմանացի սոցիոլոգ Կառլ Մանհեյմի (1893-1947թթ.) դիպուկ բնորոշմամբ երիտասարդությունը մի յուրահատուկ պահուստ է, որն առաջնային պլան է մղվում, երբ այդպիսի աշխուժացումն անհրաժեշտ է դառնում արագ փոփոխվող և որակապես նոր հանգամանքներին հարմարվելու համար: Դինամիկ (հարաշարժուն) հասարակությունները վաղ թե՝ ուշ, պետք է ակտիվացնեն և նույնիսկ կազմակերպեն նրանց (սրանք այն ռեսուրսներն են, որոնք ավանդական

հասարակության մեջ չեն մոբիլիզացվում և չեն ինտեգրվում, այլ հաճախ ճնշվում են): Կ.Մանհեյմի կարծիքով, «երիտասարդությունը սոցիալական կյանքի աշխուժացման միջնորդի դեր է կատարում[1]»:

Հաշվի առնելով երիտասարդության բացառիկ դերը՝ ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածով սահմանվեց, որ սոցիալական ոլորտում պետության կարևորագույն խնդիրներից է՝ նպաստել երիտասարդության մասնակցությանը երկրի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքին, խթանել ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացումը (5-6-րդ կետեր): Այլ կերպ ասած՝ պետությունը պարտավոր է նպատակային գործունեություն իրականացնել՝ ուղղված հասարակական կյանքի բոլոր ոլորտներում երիտասարդության ակտիվ ներգրավմանը:

Սահմանադրական այս նորմերի հիման վրա և ի կատարումն դրանց, ընդունվել են մի շարք օրենքներ և այլ իրավական ակտեր. «Մանկապատանեկան սպորտի մասին» (11.06.04), «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» (26.06.01) ՀՀ օրենքները, ՀՀ կառավարության 1998թ. դեկտեմբերի 14-ի «Պետական երիտասարդական հայեցակարգի մասին» թիվ 798 որոշումը, ՀՀ կառավարության 2008թ. սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության 2002-2012թթ. ռազմավարությանը հավանություն տալու մասին» թիվ 39 արձանագրային որոշումը և այլն:

Երիտասարդության և սպորտի ոլորտների պետական քաղաքականության իրականացման պետական լիազոր մարմինը ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունն է (այսուհետ՝ Նախարարություն), որի կանոնադրությունն ու կառուցվածքը հաստատվել են ՀՀ կառավարության 2007թ. հուլիսի 12-ի թիվ 825-Ն որոշմամբ: Նախարարությունը մշակում և իրականացնում է օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ իր իրավասությանը վերապահված բնագավառներում ՀՀ կառավարության քաղաքականությունը:

Նախարարության նպատակներն ու խնդիրներն են՝

---

[1] Տե՛ս Карл Мангейм. Диагноз нашего времени. Авторский сборник, Изд.: Юристъ; 1994 г.

1) սպորտի և երիտասարդական պետական քաղաքականության նպատակների և առաջնային ուղղությունների սահմանումն ու իրականացումը,

2) բնակչության առողջացման, ֆիզիկական դաստիարակության գիտականորեն հիմնավորված համակարգի ստեղծումը,

3) բնակչության ֆիզիկական դաստիարակության և մարզիկների պատրաստման գիտականորեն հիմնավորված համակարգ մշակելը և գործնականում ներդնելը, հաշմանդամների՝ ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար նպաստավոր պայմանների ստեղծումը,

4) սպորտային և երիտասարդական քաղաքականության քարոզչության՝ զանգվածային լրատվության միջոցներով ապահովումը:

Նախարարությունն իր նպատակների և խնդիրների իրականացման համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է մի շարք ***գործառույթներ***՝

1) մշակում և իրականացնում է օրենսդրական և այլ նորմատիվ իրավական ակտերի նախագծեր, հայեցակարգեր ու պետական նպատակային ծրագրեր սպորտի և երիտասարդության հարցերի բնագավառներում,

2) իրականացնում է հանրապետությունում բնակչության ֆիզիկական դաստիարակության գործի կազմակերպման և մարզիկների պատրաստման աշխատանքների մեթոդական ղեկավարումը,

3) բնագավառի վաստակաշատ անձանց ներկայացնում է պետական պարգևների, մրցանակների և պատվավոր կոչումների,

4) համագործակցում և մասնակցում է միջազգային սպորտային և երիտասարդական կազմակերպությունների աշխատանքներին,

5) վերլուծում, ուսումնասիրում և կանխատեսում է սոցիալական գործընթացները երիտասարդության միջավայրում, դրանց ազդեցությունը պետության քաղաքական և սոցիալ-տնտեսական վիճակի վրա,

6) մշակում է քաղաքականության ռազմավարությունը, հայեցակարգերն ու նպատակային ծրագրերը և իրականացնում դրանց մոնիթորինգ և այլն:

§5. Սոցիալական ապահովության պետական կառավարումը

Սոցիալական ապահովության ոլորտի պետական կառավարման պատմությունը հասնում է մինչև Հայաստանի առաջին հանրապետություն, որի երկրորդ կառավարության կազմում 1918թ. նոյեմբերին, ստեղծվել է «Հանրային խնամատարության» անվանումով նախարարություն: Հայաստանի խորհրդայնացումից հետո նախարարությունը կազմակերպվել է որպես «Խնամատարության և վերաշինության» կոմիսարիատ, այնուհետև՝ սոցիալական ապահովության ժողկոմատ: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո այն վերակազմվել է ՀՍՍՀ սոցիալական ապահովության մինիստրության:

Հետխորհրդային շրջանում, 1990թ., ՀՀ սոցիալական ապահովության մինիստրությունը վերակազմավորվեց ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարության: 2003թ. դեկտեմբերի 25-ին ՀՀ Նախագահի հրամանագրով նախարարությունը վերանվանվեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով Հայաստանի Հանրապետությունը բնութագրվում է որպես սոցիալական պետություն: Պետության այդ կարևորագույն սահմանադրական բնութագրից բխում են նրա մի շարք պարտավորություններ, այդ թվում՝ կարիքավոր անձանց սոցիալական աջակցություն ցուցաբերելու նկատառումով: Ինչ խոսք, յուրաքանչյուր ոք ինքն է պարտավոր իր և իր ընտանիքի անդամների համար բավարար կենսապայմաններ ապահովելու, որը հիմնականում իրականացվում է աշխատանքով վաստակելու միջոցով: Սակայն մարդը տարիքի, առողջական վիճակի կամ բազմաթիվ այլ պատճառներով երբեմն ի վիճակի չէ դա անել: Պետության հիմնարար խնդիրներից է իրականացնել այնպիսի սոցիալական քաղաքականություն, որը հասարակության բոլոր անդամների համար կապահովի բավարար կենսամակարդակ՝ հատկապես այն բոլոր դեպքերում, երբ անձն իրենից անկախ պատճառներով անկարող է աշխատել կամ բավարար միջոցներ վաստակել:

ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածի համաձայն, յուրաքանչյուր ոք ունի ծերության, հաշմանդամության, հիվանդության, կերակրողին կորցնելու, գործազրկության և օրենքով նախատեսված այլ

դեպքերում սոցիալական ապահովության իրավունք: Սահմանադրական այս իրավունքին համապատասխանում է պետության պարտականությունն՝ ապահովելու դրա իրականացումը: ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածով սահմանվեց, որ սոցիալական ոլորտում պետության կարևորագույն խնդիրներն են՝ պաշտպանել և հովանավորել ընտանիքը, մայրությունը և մանկությունը, նպաստել բնակչության զբաղվածությանը և աշխատանքի պայմանների բարելավմանը, իրականացնել հաշմանդամության կանխարգելման և բուժման ծրագրեր, խթանել հաշմանդամների մասնակցությունը հասարակական կյանքին, ապահովել տարեց մարդկանց արժանապատիվ կենսամակարդակը (1, 2, 7 և 12-րդ կետեր):

Սահմանադրական այս նորմերի հիման վրա և ի կատարումն դրանց, ընդունվել են մի քանի տասնյակ օրենքներ և այլ իրավական ակտեր: Դրանցից առավել հիշարժան են՝ «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» (06.12.97), «Սոցիալական ապահովության քարտերի մասին» (24.09.03), «Անհատական տվյալների մասին» (08.10.02), «Ժամանակավոր անաշխատունակության դեպքերից պարտադիր սոցիալական ապահովագրության մասին» (24.10.05), «Պետական կենսաթոշակների մասին» (19.11.02), «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» (27.10.98), «Պետական նպաստների մասին» (24.10.05), «Սոցիալական աջակցության մասին» (24.10.05), «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» (24.10.05), «Բռնադատվածների մասին» (14.06.94), «Երեխայի իրավունքների մասին» (29.05.96), «Աշխատանքի պետական տեսչության մասին» (24.03.05), «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» (17.12.03), «Գործատուների միությունների մասին» (27.02.07), «Արհեստակցական միությունների մասին» (05.12.00), «Կենսաապահովման նվազագույն զամբյուղի և կենսաապահովման նվազագույն բյուջեի մասին» (16.03.04), «Բարեգործության մասին» (08.10.02) ՀՀ օրենքները, ՀՀ Նախագահի 1996թ. մարտի 26-ի «Մայրության և մանկության պաշտպանության մասին» թիվ ՆՀ-590 հրամանգիրը և այլն:

Նշված սահմանադրական նորմերի և օրենքների կատարումն ապահովելու պարտականությունը դրված է ՀՀ կառավարության վրա.

ՀՀ Սահմանադրության 89-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն. «ՀՀ կառավարությունը իրականացնում է պետական քաղաքականությունը գիտության, կրթության, մշակույթի, առողջապահության, ***սոցիալական ապահովության*** և բնության պահպանության բնագավառներում»:

Սոցիալական ապահովության և աշխատանքի ոլորտների պետական քաղաքականության իրականացման պետական լիազոր մարմինը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն է (այսուհետ՝ Նախարարություն), որի կանոնադրությունն ու կառուցվածքը հաստատվել են ՀՀ կառավարության 2002թ. նոյեմբերի 14-ի թիվ 1821-Ն որոշմամբ: Նախարարությունը գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում ու իրականացնում է աշխատանքի և սոցիալական պաշտպանության բնագավառներում ՀՀ կառավարության քաղաքականությունը:

Նախարարության նպատակներից և խնդիրներից են՝

1) սոցիալական պաշտպանության բնագավառում պետական քաղաքականության հիմնական և գերակա ուղղությունների մշակումն ու իրականացումը,

2) աշխատանքի պետական կարգավորման և աշխատանքի վարձատրության քաղաքականության մշակումը ու դրա իրականացումը,

3) բնակչության զբաղվածության քաղաքականության մշակումը և դրա իրականացումը,

4) պետական կենսաթոշակային ապահովության քաղաքականության մշակումն ու դրա իրականացումը,

5) հաշմանդամների և տարեցների սոցիալական պաշտպանության քաղաքականության մշակումն ու դրա իրականացումը,

6) ընտանիքի, կանանց և երեխաների սոցիալական պաշտպանության քաղաքականության մշակումն ու դրա իրականացումը և այլն:

Նշված նպատակների ու խնդիրների իրականացման համար Նախարարությանն են վերապահվել մի շարք ***գործառույթներ***: Այսպես՝

1) սոցիալական գործընկերության համակարգի հանրապետական մակարդակում ՀՀ կառավարության լիազոր մարմնի գործա-

ռույթների իրականացում,

2) պետական կենսաթոշակների և պետական նպաստների նշանակման, վերահաշվարկման և վճարման մեթոդական ղեկավարում և դրանց նկատմամբ մոնիթորինգ,

3) սոցիալական աջակցության բնագավառին վերաբերող օրենսդրության կատարելագործման նպատակով առաջարկությունների մշակում,

4) ընտանիքի, կանանց, երեխաների հիմնահարցերի ուսումնասիրություն, դրանք կարգավորող օրենսդրության կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների մշակում,

5) կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների սոցիալական պաշտպանության պետական ծրագրերի մշակում և դրանց իրականացման ապահովում, ինչպես նաև տարածքային կառավարման մարմինների հետ համատեղ այդպիսի ծրագրերի իրականացում և մոնիթորինգ,

6) հաշմանդամների բժշկական, մասնագիտական և սոցիալական վերականգնողական ծրագրերի մշակում և դրանց իրականացման մոնիթորինգ,

7) հաշմանդամների և տարեցների սոցիալական պաշտպանության բնագավառի օրենսդրության կատարելագործման նպատակով առաջարկությունների մշակում,

8) անօթևան, մուրացիկ և թափառաշրջիկ անձանց, այդ թվում՝ երեխաների համար սոցիալական աջակցության պետական ծրագրերի մշակում և դրանց իրականացման մոնիթորինգ,

9) որդեգրման ենթակա և որդեգրված երեխաների ու որդեգրողների թեկնածուների կենտրոնացված հաշվառում և այլն:

§6. Առողջապահության պետական կառավարումը

Առողջապահության համաշխարհային կազմակերպության կանոնադրության Նախաբանում[1] *ամրագրված են առողջապահական չորս հիմնադրությային կանխա-դրույթներ, այն է՝*

[1] Տե՛ս Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության կանոնադրությունը՝ www.who.int:

1) առողջությունը մարդու ֆիզիկական, հոգեկան և սոցիալական բարեկեցիկ վիճակն է. այն չի կարող դիտվել միայն որպես հիվանդության կամ ֆիզիկական արատների բացակայություն,

2) առողջության առավելագույն հասանելի մակարդակի տիրապետումը համարվում է յուրաքանչյուր մարդու հիմնական իրավունքներից մեկը՝ անկախ ռասայական և կրոնական պատկանելությունից, քաղաքական համոզմունքից, տնտեսական և սոցիալական վիճակից,

3) առողջության պահպանության բնագավառում ամենաարդիական բարձրագույն նվաճումներից օգտվելը համարվում է յուրաքանչյուր մարդու հիմնարար իրավունքներից մեկը,

4) պետությունները պատասխանատվություն են կրում իրենց ժողովուրդների առողջության համար և պարտավոր են այդ ուղղությամբ ձեռնարկել անհրաժեշտ սոցիալական, իրավական և բժշկասանիտարական միջոցառումներ:

Մարդու առողջության պահպանման իրավունքը, որպես սոցիալական բարձրագույն արժեք, ամրագրվածէ ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածում, որի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի օրենքով սահմանված եղանակներով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի անվճար հիմնական բժշկական ծառայություններ ստանալու իրավունք: Դրանց ցանկը և մատուցման կարգը սահմանվում են օրենքով»: Առողջության պահպանման սահմանադրական իրավունքը ենթադրում է պետության անմիջական պարտականությունն՝ ապահովել այն:

Առողջության պահպանման բացառիկ կարևորության գիտակցումով էլ ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածով սահմանվեց, որ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության կարևորագույն խնդիրներից են՝ իրականացնել բնակչության առողջության պահպանման ծրագրեր, նպաստել արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծմանը (5-րդ կետ): Սահմանադրական այս նորմերի հիման վրա և ի կատարումն դրանց, ընդունվել են մի շարք օրենքներ և այլ իրավական ակտեր. «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» (04.03.96), «Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» (16.11.92), «Դեղերի մասին» (27.10.98), «Մարդու

օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» (16.04.02), «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» (11.12.02) և այլ ՀՀ օրենքները:

Նշված սահմանադրական նորմերի և օրենքների կատարումն ապահովելու պարտականությունը դրված է ՀՀ կառավարության վրա. ՀՀ Սահմանադրության 89-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն «ՀՀ կառավարությունը իրականացնում է պետական քաղաքականությունը գիտության, կրթության, մշակույթի, ***առողջապահության,*** սոցիալական ապահովության և բնության պահպանության բնագավառներում»:

Առողջապահության ոլորտի պետական քաղաքականության իրականացման պետական լիազոր մարմինը ՀՀ առողջապահության նախարարությունն է:

ՀՀ առողջապահության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կանոնադրությունն ու կառուցվածքը հաստատվել են ՀՀ կառավարության 2002թ. օգոստոսի 30-ի թիվ 1300-Ն որոշմամբ: Նախարարությունը մշակում և իրականացնում է առողջապահության բնագավառում ՀՀ կառավարության քաղաքականությունը:

Նախարարության նպատակներից ու խնդիրներից են՝

1) մարդու և հանրության առողջության պահպանումը, բնակչության առողջության բարելավումը, հիվանդությունների կանխարգելումը, հաշմանդամության և մահացության ցուցանիշների նվազեցումը,

2) առողջապահության համակարգի արդյունավետ գործունեության, կազմակերպման, կառավարման և տնտեսավարման ժամանակակից մեխանիզմների ներդրումը, կայուն ֆինանսավորման ապահովումը,

3) մոր և մանկական առողջության պահպանումը,

4) հանրային առողջության և բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովումը,

5) հանրապետությունում արտադրվող և հանրապետություն ներմուծվող դեղերի տեսակների ու որակի նկատմամբ պետական վերահսկողության և դեղերի պետական գրանցման իրականացումը և այլն:

Նախարարությունն իր նպատակների և խնդիրների իրականացման համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականաց-

նում է մի շարք ***գործառույթներ՝***

1) բժշկական օգնության կազմակերպման և բուժօգնության որակի գնահատման չափորոշիչների ու չափանիշների մշակումը, դրանց իրականացման դիտարկումը,

2) առողջապահության բնագավառի առանձին ոլորտների զարգացման հայեցակարգերի, ռազմավարության, քաղաքականության մշակումն ու դրանց իրականացման նկատմամբ դիտարկումը,

3) առողջապահության զարգացման քաղաքականության, պետական նպատակային ծրագրերի, բնակչության առողջության բարելավման, հիվանդությունների կանխարգելման և բուժման, հաշմանդամության և մահացության նվազեցմանն ուղղված ծրագրերի մշակումն ու իրականացման դիտարկումը, բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովմանն ուղղված պետական քաղաքականության և նպատակային ծրագրերի մշակումը և դրանց իրականացման դիտարկումը,

4) ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման տարեկան և հեռանկարային ծրագրերի առողջապահական բաղադրիչի մշակումը,

5) պետական պատվերի շրջանակներում իրականացվող դեղերի, բժշկական նշանակության ապրանքների և ծառայությունների կենտրոնացված գնումների իրականացումը, գնումների դիմաց ֆինանսական միջոցների հատկացումը,

6) դեղային պետական քաղաքականության ծրագրերի մշակումը և դրա իրականացման դիտարկումը և այլն:

ԳԼՈՒԽ 23.
ՎԱՐՉԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

§1. Պաշտպանության պետական կառավարումը

Պաշտպանությունը ցանկացած պետության կարևորագույն գործառույթներից է: Ընդհանրապես պետությունների առաջացման հիմնական պատճառներից մեկն էլ հենց մարդկանց միավորումն է արտաքին հարձակումների դեմ:

Հայոց բանակի ստեղծումն ու պատմությունը նույնպես անխզելիորեն կապված են ՀՀ պետականության ստեղծման պատմական իրողության հետ: Երկուսի դեպքում էլ մեկնարկը տրվեց 1988թ. փետրվարին՝ կապված Արցախի համար պայքարի, անկախ պետականության վերականգնման ու Ազգային բանակի ստեղծման հետ: Հայոց բանակն իր կայացման ճանապարհին (ինչպեսև հայոց պետականությունը) անցել է մի քանի դժվարին ու առանցքային փուլեր: Դրանցից առավել նշանակալից է հայկական բանակի և դրա կառավարման համակարգի իրավական հիմքերի ստեղծումը: 1992թ. հունվարի 28-ին ՀՀ կառավարությունն ընդունեց «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության մասին» պատմական որոշումը՝ դրանով իսկ իրավականորեն ազդարարելով Հայոց Ազգային բանակի ստեղծման հիմքը:

Նորաստեղծ նախարարության ենթակայությանը հանձնվեցին ներքին գործերի նախարարության միլիցիայի պարեկապահակային գունդը, հատուկ նշանակության օպերատիվ գունդը, քաղաքացիական պաշտպանության գունդը և հանրապետական զինվորական կոմիսարիատը: Քիչ ավելի ուշ հիմնվեց պաշտպանության նախարարության կենտրոնական ապարատը՝ գլխավոր շտաբը, վարչություններն ու առանձին բաժինները: 1992թ. մայիսին պաշտպանության նախարարությունը սկսեց առաջին զորակոչը հանրապետության տարածքում՝ հիմք դնելով բանակը ժամկետային զինծառայողներով համալրելու ինստիտուտին:

Անցած երկու տասնամյակների ընթացքում պաշտպանության ո-

լորտում ձևավորված վարչահիրավական նորմերով երկրի պաշտպանունակության համակարգը, պաշտպանությանն առնչվող հասարակական հարաբերությունները պատշաճ իրավական կարգավորում են ստացել: Պաշտպանության ոլորտի պետական կառավարման հիմնական իրավական աղբյուրներն են՝ «Պաշտպանության մասին» (18.12.08), «Զինապարտության մասին» (16.09.98), «Զինծառայողների նյութական պատասխանատվության մասին» (17.12.03), «Զինվորական ծառայության անցնելու մասին» (03.07.02), «Զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մասին» (03.03.99), «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» (05.12.06) և մի շարք այլ ՀՀ օրենքները և իրավական ակտերը:

«Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով «պաշտպանությունը» ներկայացվում է իբրև *«ՀՀ ռազմական անվտանգության համակարգը, ՀՀ տարածքը, հասարակությունն ու տնտեսությունը պաշտպանության նախապատրաստելու և ՀՀ անկախությունը, տարածքային ամբողջականությունը, պետական սահմանի անձեռնխեղելիությունն ու անվտանգությունը պաշտպանելու՝ ռազմական, քաղաքական, տնտեսական, տեղեկատվական, սոցիալական, իրավական և այլ միջոցների ու միջոցառումների, ինչպես նաև ռազմական անվտանգության միջազգային երաշխիքների ապահովման մեխանիզմների կիրառման համալիր գործունեության համակարգ»*: Պաշտպանության նպատակով ստեղծվում են զինված ուժեր և սահմանվում է ՀՀ քաղաքացիների զինապարտությունը: ՀՀ պաշտպանությունը կազմակերպվում և իրականացվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակության և քաղաքացիների ընդգրկվածության, օրինականության, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հարգման, զինված ուժերի գործունեության նկատմամբ քաղաքացիական վերահսկողության սկզբունքների հիման վրա: Օրենքով սահմանվում են նաև ՀՀ Նախագահի, գործադիր իշխանության հանրապետական և տարածքային մարմինների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների պարտականությունները պաշտպանության ոլորտում:

Պաշտպանության ոլորտի պետական կառավարման գործընթացում ՀՀ Նախագահի ինստիտուտը վճռական դերակատարություն ու-

նի: Այսպես, ՀՀ Սահմանադրության 55 հոդվածի համաձայն. *«12) Հանրապետության Նախագահը զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարն է, համակարգում է պետական մարմինների գործունեությունը պաշտպանության բնագավառում, նշանակում և ազատում է զինված ուժերի և այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմը», «13) Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարվելու դեպքերում հայտարարում է ռազմական դրություն և կարող է հայտարարել ընդհանուր կամ մասնակի զորահավաք և որոշում է ընդունում զինված ուժերի օգտագործման մասին»*: Նշված լիազորությունները ՀՀ Նախագահին վերապահելու հանգամանքը միանգամայն տրամաբանական է, բխում է այդ ինստիտուտի էությունից և պայմանավորված է ՀՀ Սահմանադրության 49-րդ հոդվածով Հանրապետության Նախագահի, որպես պետության գլխի՝ համար սահմանված կարգավիճակով: Նույն հոդվածով ՀՀ Նախագահի առջև են դրված երկրի համար կենսական կարևորության այնպիսի արժեքների երաշխավորման խնդիրները, ինչպիսիք են՝ ՀՀ անկախությունը, տարածքային ամբողջականությունը և անվտանգությունը: Սահմանադրական այս առաքելության իրականացմանն ու առավել մանրամասն կարգավորմանն է ուղղված «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքը, ինչպես նաև «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, որի 5-րդ հոդվածով սահմանվում են Հանրապետության Նախագահի լիազորությունները պաշտպանության ոլորտում:

Օրենքի 12-րդ հոդվածով նախատեսվում է զինված ուժերի ղեկավարման երեք մակարդակ՝ ընդհանուր ղեկավարում, անմիջական ղեկավարում և կառավարում, որոնք համապատասխանաբար իրականացվում են՝ ՀՀ Նախագահի, որպես զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարի, պաշտպանության նախարարի և գլխավոր շտաբի պետի կողմից: Երկրի պաշտպանությունն իրականացնելու համար ստեղծվում են «զինված ուժեր», որն, ըստ Օրենքի 3-րդ հոդվածի, իրենից ներկայացնում է *«ՀՀ ռազմական անվտանգության հիմքը կազմող պետական ռազմական կառույց, որն ապահովում է ՀՀ անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության* ***զինված պաշտպանությունը»*** (ընդգծումը մերն է):

ՀՀ Սահմանադրության 89-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն.

«ՀՀ կառավարությունը ապահովում է Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության և արտաքին քաղաքականության իրականացումը»: Նշված գործառույթը ՀՀ կառավարությունն իրականացնում է ՀՀ պաշտպանության նախարարության միջոցով:

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) մշակում և իրականացնում է պաշտպանության բնագավառում կառավարության քաղաքականությունը: Նախարարությունը պատասխանատու է ՀՀ պաշտպանության ապահովման, ՀՀ զինված ուժերի (այսուհետ՝ զինված ուժեր) զարգացման և մարտական պատրաստականության համար:

Նախարարության համակարգը կազմված է ՀՀ պաշտպանության նախարարից, նախարարի տեղակալներից, խորհրդականներից, մամուլի քարտուղարից, օգնականներից և ռեֆերենտներից, նախարարության աշխատակազմից, նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմնից՝ զինված ուժերի գլխավոր շտաբից, Նախարարության աշխատակազմից դուրս՝ կառուցվածքային ստորաբաժանումներից, առանձնացված ստորաբաժանումներից, ինչպես նաև նախարարության ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպություններից[1]:

Նախարարության նպատակներն ու խնդիրներն են՝

1) ՀՀ անկախության, տարածքային ամբողջականության, պետական սահմանի անձեռնմխելիության ու անվտանգության պաշտպանության ապահովումը,

---

[1] Ավելի մանրամասն տե՛ս ՀՀ կառավարության 2008թ. դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամանտի և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության քննչական ծառայության կանոնադրություններն ու կառուցվածքները հաստատելու, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտ և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության քննչական ծառայություն ստեղծելու մասին» թիվ 1554-Ն որոշմամբ:

2) անհրաժեշտ կառուցվածքով և թվաքանակով, ժամանակակից սպառազինությամբ ու ռազմական տեխնիկայով հագեցած զինված ուժերի զարգացման և բարձր մարտունակության ապահովումը,

3) պաշտպանական և ռազմական քաղաքականության հիմնական ուղղությունների իրականացման ապահովումը,

4) օրենքով սահմանված կարգով ռազմաքաղաքական իրադրության, տարածաշրջանային իրավիճակի, ՀՀ ռազմավարական և ռազմական շահերին առնչվող հիմնախնդիրների ու գործընթացների, ռազմական սպառնալիքների և վտանգների, պաշտպանվածության աստիճանի ուսումնասիրումը, գնահատումն ու անհրաժեշտ միջոցառումների իրականացման ապահովումը,

5) ռազմաարդյունաբերական համալիրի, սպառազինության և ռազմական տեխնիկայի, ռազմական ուսուցման և ռազմական գիտության զարգացման ապահովումը,

6) զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների, ինչպես նաև զինծառայողներին հավասարեցված անձանց սոցիալական պաշտպանության ապահովումը,

7) նախարարության համակարգում պետական և ծառայողական գաղտնիքի պահպանման ապահովումը,

8) զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված, ինչպես նաև զորամասի տարածքում կամ զինծառայողների կողմից կատարված հանցագործությունների նախաքննության և հետաքննության իրականացման ապահովումը,

9) ՀՀ և նրա պաշտպանական համակարգի դեմ ուղղված տեղեկատվական քարոզչության կանխարգելման ու հակաքարոզչական միջոցառումների իրականացման ապահովումը:

Նախարարությունն իր նպատակներին և խնդիրներին համապատասխան իրականացնում է մի շարք *գործառույթներ՝*

1) ռազմական քաղաքականության հիմնական ուղղությունների վերաբերյալ (ներառյալ ազգային անվտանգության ռազմավարության և ռազմական դոկտրինի կատարելագործումը) առաջարկությունների մշակում,

2) պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների աշխատանքը ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրելու պլանի, պետական և զորահավաքա-

յին պահուստի նյութական արժեքների կուտակման, ապաամրագրման, թարմացման և փոխարինման ծրագրերի մշակմանը մասնակցություն,

3) ռազմաարդյունաբերական համալիրի, սպառազինության և ռազմական տեխնիկայի զարգացման պետական ծրագրերի վերաբերյալ առաջարկությունների մշակում,

4) պաշտպանության բնագավառի ընթացիկ ու ծրագրավորվող գործունեության վերաբերյալ հասարակության տեղեկացվածության, պաշտպանական քաղաքականության թափանցիկության, բանակ-հասարակություն փոխվստահության ամրապնդման աշխատանքների համակարգում,

5) զինված ուժերի մարտական պատրաստության, մարտական և զորահավաքային պատրաստականության, զորահավաքային ռեսուրսների հաշվառման և հավաքագրման ապահովում և դրանց նկատմամբ վերահսկողության իրականացում,

6) զինված ուժերի համար սպառազինության և ռազմական տեխնիկայի, պարենային, իրային և այլ գույքի, ինչպես նաև նյութական պաշարների արտադրության ու գնումների պատվիրում և ֆինանսավորում, ֆինանսական միջոցների ծախսման ու նյութատեխնիկական միջոցների և ունեցվածքի օգտագործման նկատմամբ հսկողության իրականացում,

7) ռազմական, ռազմաքաղաքական և ռազմատեխնիկական բնագավառում ՀՀ և օտարերկրյա պետությունների ու միջազգային կազմակերպությունների միջև համագործակցության կազմակերպում,

8) ռազմաքաղաքական ու պաշտպանական ոլորտներում հետախուզական գործունեության կազմակերպում և ապահովում,

9) ռազմական ուսուցման ու ռազմական գիտության զարգացման գործընթացների կազմակերպում և իրականացնում,

10) զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների կանխարգելում, կանխում և խափանում, ինչպես նաև զորամասի տարածքում կամ զինծառայողների կողմից կատարված հանցագործությունների նախաքննության և հետաքննության իրականացում:

Նախարարությունը կառավարում է նախարարը, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ՀՀ Նախագահը՝ ՀՀ վարչապե-

տի առաջարկությամբ: Նախարարն ունի առաջին տեղակալ և տեղակալներ, որոնց պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ՀՀ Նախագահը[1]:

Նախարարն ապահովում է նախարարության խնդիրներից բխող գործառույթների իրականացումը և պատասխանատու է պաշտպանության բնագավառում քաղաքականության մշակման ու իրականացման, տիրող իրավիճակի և հեռանկարային զարգացման ապահովման համար[2]:

Նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմին է՝ ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբը (այսուհետ՝ գլխավոր շտաբ), որը Նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմին է, մշակում և իրականացնում է պաշտպանության՝ իրեն հանձնարարված բնագավառում ՀՀ կառավարության քաղաքականությունը: Գլխավոր շտաբը ՀՀ զինված ուժերի (այսուհետ՝ զինված ուժեր) զինվորական կառավարման կենտրոնական մարմինն է, որն անմիջականորեն պատասխանատու է զինված ուժերի գործառույթների իրականացման համար: Գլխավոր շտաբի համակարգը կազմված է գլխավոր շտաբի պետից, գլխավոր շտաբի պետի տեղակալներից, խորհրդականներից, մամուլի քարտուղարից և օգնականներից, տարածքային և այլ ստորաբաժանումներից, ինչպես նաև գլխավոր շտաբի ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպություններից:

Գլխավոր շտաբի նպատակներից և խնդիրներից են՝

1) ազգային անվտանգության հիմնարար արժեքների պաշտպանությունը,

2) ռազմական սպառնալիքների բացահայտումը և դրանց դիմակայումը,

---

[1] Նկատենք, որ մյուս բոլոր նախարարություններում նախարարի տեղակալներին նշանակում է ՀՀ վարչապետը՝ խորհրդակցելով համապատասխան նախարարի հետ կամ նրանց առաջարկությամբ:

[2] Նախարարի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, ռեֆերենտների և մամուլի քարտուղարի լիրազորությունները, ըստ էության, կրկնում են մյուս նախարարությունների համապատասխան պաշտոններ զբաղեցնող անձանց լիազորությունները: Ուստի, ավելորդ կրկնություններից խուսափելու համար ստորև դրանց չենք անդրադառնա:

3) զինված ուժերի մարտական պատրաստության, մարտական և զորահավաքային բարձր պատրաստականության ապահովումը, զինվորական կարգապահության ամրապնդումը,

4) զինված ուժերի անձնակազմի բարոյահոգեբանական բարձր մակարդակի և հայրենասիրական դաստիարակության ապահովումը,

5) պաշտպանական ոլորտում գիտական, գյուտարարական և նորարարական գործընթացների զարգացման ապահովումը,

6) զինված ուժերում պետական և ծառայողական գաղտնիքի պահպանման և տեղեկատվական անվտանգության ապահովումը:

Գլխավոր շտաբի կանոնադրությամբ սահմանվող ***գործառույթներն*** ուղղված են Նախարարության խնդիրների և գործառույթների պատշաճ իրականացման ապահովմանը:

Գլխավոր շտաբը կառավարում է գլխավոր շտաբի պետը, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ՀՀ Նախագահը: Գլխավոր շտաբի պետն ունի տեղակալներ, որոնց պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ՀՀ Նախագահը: Գլխավոր շտաբի պետն իր գործունեությունն իրականացնում է միանձնյա ղեկավարման սկզբունքով, ապահովում է գլխավոր շտաբի խնդիրներից բխող գործառույթների իրականացումը և պատասխանատու է պաշտպանության՝ իրեն հանձնարարված բնագավառում քաղաքականության մշակման ու իրականացման, տիրող իրավիճակի և հեռանկարային զարգացման ապահովման համար: Գլխավոր շտաբի պետն ի պաշտոնե զինված ուժերի զինվորական ամենաբարձր պաշտոնատար անձն է: Գլխավոր շտաբի պետը հաշվետու է ՀՀ պաշտպանության նախարարին:

Նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտն օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում իրականացնում է ՀՀ զինված ուժերի նյութատեխնիկական ապահովման, նախարարության գնումների գործընթացի, ռազմարդյունաբերական ոլորտի կազմակերպման ու վերահսկողության գործառույթներ՝ հանդես գալով ՀՀ անունից:

Դեպարտամենտի կառավարումն իրականացնում է նախարարը: Դեպարտամենտի անմիջական կառավարումն իրականացնում է դեպարտամենտի պետը: Դեպարտամենտի պետը նախարարի տեղակալն է, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ՀՀ Նախագահը:

Նախարարության քննչական ծառայությունը Նախարարության աշխատակազմից դուրս առանձնացված ստորաբաժանում է, որն իր լիազորությունների սահմաններում նախաքննություն է իրականացնում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով, օրենքով սահմանված միջոցներ է ձեռնարկում գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելն ստուգելու համար, ապահովում և իրականացնում է նախաքննության ոլորտում պետական քաղաքականության մշակման և իրականացման գծով նախարարության գործառույթները, ՀՀ օրենսդրության անշեղ կիրառումը քրեադատավարական ընթացակարգում, գլխավորում և ղեկավարում է քննչական ծառայության համակարգի ստորաբաժանումների գործունեությունը:

§2. Ազգային անվտանգության պետական կառավարումը

«Ազգային անվտանգության» եզրույթը ժամանակակից հասարակագիտության տարբեր ուղղություններում և տարբեր մասնագետների կողմից խիստ բազմազան սահմանումներ և բնորոշումներ է ստացել: Ներկայումս ազգային անվտանգության կառուցվածքի մեջ են ընդգրկվում պետական, հասարակական, քաղաքական, տնտեսական, սոցիալական, ռազմական, տեխնոգեն, էկոլոգիական, տեղեկատվական և անհատի անվտանգությունը: Առավել ընդհանուր բնորոշմամբ ազգային անվտանգությունը կյանքի տարբեր ոլորտներում անհատի, հասարակության և պետության կենսական կարևոր շահերի պաշտպանվածությունն է ներքին և արտաքին սպառնալիքներից, որն ապահովում է երկրի կայուն զարգացումը:

Մեկ այլ սահմանման համաձայն, ազգային անվտանգությունն ազգի ունակությունն է տվյալ պահին առկա հիմնարար արժեքների համար նվազագույն ռիսկով բավարարելու իր բոլոր պահանջմունքները, որոնք անհրաժեշտ են ինքնապահպանության, ինքնավերարտադրության և ինքնակատարելագործման համար: «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն. «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությունը

պետության և հասարակության այնպիսի կացությունն է, երբ ապահովված է անձի, հասարակության և պետության անվտանգությունը, երկրի տարածքային ամբողջականությունը, ինքնիշխանությունը, սահմանադրական կարգը, տնտեսության բնականոն զարգացումը, հասարակության նյութական և հոգևոր արժեքների, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, շրջակա միջավայրի պաշտպանությունը ներքին ու արտաքին սպառնալիքներից»:

Պատմական Հայաստանի զարգացման տարբեր ժամանակաշրջաններում անվտանգության ապահովման ուղղությամբ խնդիրների իրագործումը վստահված է եղել ինչպես առանձին պետական պաշտոնյաներին՝ իրենց ենթականերով, այնպես էլ՝ ամբողջական նախարարական տներին: Պետականության կորստով պայմանավորվեց նաև դրանց վերացումը: Հայաստանի առաջին հանրապետության գոյության կարճ ժամանակահատվածում, չնայած երկրի ծանր վիճակին, այնուամենայնիվ, ռազմական նախարարության գլխավոր շտաբում գործել է հետախուզական բաժանմունքը:

1920 թ. դեկտեմբերի 6-ին, Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց օրեր անց Հանրապետության Հեղկոմի դեկրետով ստեղծվում է ՀԽԱՀ արտակարգ հանձնաժողովը (ԱՀ): Նույն դեկրետով Հայաստանի Կարմիր բանակում հակահեղափոխական հանցագործությունների դեմ պայքարելու նպատակով ստեղծվում է ԱՀ-ին կից Հատուկ Բաժինը: 1941թ. ստեղծվեց ԽՍՀՄ պետական անվտանգության Ժողովրդական կոմիսարիատը (ՊԱԺԿ), որն ավելի ուշ վերանվանվեց պետական անվտանգության կոմիտե (ՊԱԿ):

Հայաստանի ազգային անվտանգության մարմինների նորագույն պատմության սկիզբը դրվեց 1991թ. սեպտեմբերի 21-ից: 1991թ. դեկտեմբերի 4-ին ընդունված «ՀՀ կառավարության կառուցվածքի և կազմի մասին» ՀՀ օրենքով ՊԱԿ-ը վերանվանվեց ՀՀ Ազգային անվտանգության պետական վարչության: 1995թ. ՀՀ ԱԱՊՎ-ը վերանվանվեց Ազգային անվտանգության նախարարության: 1996թ. նոյեմբերի 8-ին ՆԳՆ-ն և ԱԱՆ-ն միավորվեցին մեկ կառույցում՝ ստեղծելով ՆԳ և ԱԱ նախարարություն: ՆԳ և ԱԱ նախարարությունը 1999թ. նոյեմբերի 13-ին կրկին տարանջատվեց ՆԳՆ-ի և ԱԱՆ-ի: ՀՀ նախագահի հրամանագրով 2002 թ. դեկտեմբերի 17-ին ՀՀ ԱԱՆ-ը վերա-

կազմավորվեց ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության:

Ազգային անվտանգության ոլորտի հիմնական վարչաիրավական նորմերն ամրագրված են ՀՀ Սահմանադրությամբ, «Ազգային անվտանգության մարմինների մասին» (28.12.01), «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» (11.04.03), «Պետական սահմանի մասին» (20.11.01) և «Սահմանապահ զորքերի մասին» (20.11.01) ՀՀ օրենքներով:

«Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն, ՀՀ ազգային անվտանգության մարմինների միասնական համակարգը կազմված է ազգային անվտանգության ծառայությունից (այսուհետ՝ Ծառայություն), դրան ենթակա մարզային մարմիններից, սահմանապահ զորքերից, ուսումնական կենտրոններից, հատուկ նշանակության և այլ ստորաբաժանումներից: Նույն օրենքի 4-րդ հոդվածի համաձայն, Ծառայության գործունեության ընդհանուր ղեկավարումը, իրենց իրավասության սահմաններում, իրականացնում են ՀՀ Նախագահը, կառավարությունը և վարչապետը:

Ծառայության համակարգում սահմանված կարգով գործում են հետախուզական, հակահետախուզական և ռազմական հակահետախուզության մարմիններ: Ծառայությունը ՀՀ տարածքում իրականացնում է ազգային անվտանգության խնդիրներին առնչվող հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների և ստորաբաժանումների աշխատանքի օպերատիվ ղեկավարումը:

Ծառայության կանոնադրությունն ու կառուցվածքը հաստատվել են ՀՀ կառավարության 2003թ. ապրիլի 17-ի թիվ 433-Ն որոշմամբ: Ծառայությունը մշակում և իրականացնում է ազգային անվտանգության բնագավառում ՀՀ կառավարության քաղաքականությունը, ինչպես նաև ազգային անվտանգության մարմինների կառավարումը: Ծառայությունն ստեղծվում, վերակազմակերպվում է, և նրա գործունեությունը դադարեցվում է ՀՀ Նախագահի հրամանագրերով: Ծառայության գործունեության ընդհանուր ղեկավարումն իրենց իրավասությունների սահմաններում իրականացնում են ՀՀ Նախագահը, կառավարությունը և վարչապետը:

Ծառայությունը պատասխանատու է ՀՀ ազգային անվտանգության ապահովման՝ իր իրավասությանը վերապահված խնդիրների լուծման համար, որոշում է համակարգի մարմինների գործունեության առաջնային ուղղությունները, ռազմավարությունը, գործելակերպը, մշակում և իրագործում է աշխատանքի կատարելագործման համալիր ծրագրերը:

Ծառայությունն իրականացնում է ՀՀ տարածքում ազգային անվտանգության խնդիրներին առնչվող՝ հետախուզական գործունեություն ծավալող բոլոր պետական մարմինների և ստորաբաժանումների աշխատանքի օպերատիվ ղեկավարումը: Ծառայությունը հանրապետական գաղտնագրային և ծածկագրային կենտրոնական մարմին է: Ծառայությունն իր իրավասության սահմաններում հանդիսանում է հատուկ նշանակության հողերի պետական կառավարման լիազոր մարմին:

Ծառայության կառուցվածքը: Ծառայությունը միասնական կենտրոնացված համակարգ է, որի մեջ մտնում են ՀՀ ազգային անվտանգության մարմինները, ազգային անվտանգության մարմինների առջև դրված խնդիրների ու գործառույթների իրականացման նպատակով ստեղծված հատուկ նշանակության և այլ ստորաբաժանումներ, կազմակերպություններ: Ծառայության համակարգում են գտնվում սահմանապահ զորքերը: Ծառայության կառուցվածքը հաստատում է ՀՀ կառավարությունը: Ծառայությունը գլխավորում է *տնօրենը*, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ՀՀ Նախագահը՝ վարչապետի առաջարկությամբ: Տնօրենն ունի մեկ առաջին տեղակալ և տեղակալներ: Նրանց պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ՀՀ Նախագահը:

Տնօրենն իրականացնում է ծառայությանը վերապահված խնդիրներն ու գործառույթները և պատասխանատու է լիազորված բնագավառներում քաղաքականության մշակման ու իրականացման համար: Տնօրենը հաշվետու է ՀՀ Նախագահին, կառավարությանը և վարչապետին:

Ծառայության նպատակներից և խնդիրներից են՝

1) իր իրավասության սահմաններում ՀՀ ինքնիշխանության, պետական սահմանների անձեռնմխելիության, տարածքային ամբողջա-

կանության, սահմանադրական կարգի, քաղաքացիների իրավունքների, ազատությունների և օրինական շահերի ապահովումը, Հանրապետության պաշտպանունակության ամրապնդումը,

2) ՀՀ անվտանգության ապահովման ու ամրապնդման, տնտեսական, գիտատեխնիկական և պաշտպանական ներուժի հզորացման նպատակով հետախուզական տեղեկությունների հավաքումը,

3) ռազմաարդյունաբերական համալիրի, ատոմային էներգետիկայի, տրանսպորտի, կապի, էկոնոմիկայի, ֆինանսների և արդյունաբերության, ռազմավարական օբյեկտների, ինչպես նաև առաջնային նշանակության գիտական մշակումների ոլորտում անվտանգության ապահովումը,

4) ՀՀ անվտանգության դեմ ուղղված օտարերկրյա պետությունների հատուկ ծառայությունների ու կազմակերպությունների, ինչպես նաև առանձին անձանց հետախուզական և այլ քայքայիչ գործունեության բացահայտումը, կանխումն ու խափանումը,

5) ՀՀ Նախագահին, կառավարությանը և վարչապետին ՀՀ անվտանգությանն սպառնացող վտանգի մասին իրազեկումը, օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների, օտարերկրյա պետությունների դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների գործունեության անվտանգության ապահովումը,

6) ՀՀ օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան՝ ՀՀ պետական սահմանի պահպանության միջոցառումների իրականացումը,

7) այլ պետական մարմինների հետ համագործակցելով՝ կազմակերպված հանցագործության, կոռուպցիայի, օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմիններում առանձնապես խոշոր չափերի կաշառակերության, օտարերկրյա պետությունների հետ զենքի ու թմրանյութերի անօրինական շրջանառության, մաքսանենգության, անօրինական զինված կազմավորումների, հանցավոր խմբերի, ՀՀ սահմանադրական կարգը բռնությամբ տապալելու և փոխելու նպատակ հետապնդող առանձին անձանց ու կազմակերպությունների դեմ պայքարի միջոցառումների մշակումը և իրականացումը,

8) ահաբեկչական գործողությունների բացահայտումը, կանխումը և խափանումը,

9) մասնակցությունը պետական և ծառայողական գաղտնիք հանդիսացող տեղեկությունների պահպանության միջոցառումների մշակմանն ու իրականացմանը, պետական մարմիններում, կազմակերպություններում այդ տեղեկությունների պահպանության ապահովման նկատմամբ վերահսկողության իրականացումը և դրանց առնչվելու թույլտվություն տալու հետ կապված միջոցառումների՝ սահմանված կարգով իրականացումը,

10) հաղորդող ռադիոէլեկտրոնային միջոցների ռադիոտվյալների և ռադիոառաքումների գրանցման ու կենտրոնացված հաշվառման իրականացումը, ռադիոհսկողության միջոցով՝ ՀՀ տարածքում հաղորդող ռադիոէլեկտրոնային միջոցների, ռադիոսարքավորումների բացահայտումը,

11) սահմանված կարգով ՀՀ Նախագահին, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, կազմակերպություններին կառավարական կապով և հատուկ կապի այլ տեսակներով ապահովումը, ինչպես նաև ՀՀ-ում ու օտարերկրյա պետություններում ՀՀ ներկայացուցչություններում գաղտնագրային և ծածկագրային կապի կրիպտոգրաֆիկական ու տեխնիկական անվտանգության կազմակերպումը,

12) ՀՀ Նախագահի, Ազգային ժողովի, կառավարության, վարչապետի, նախարարությունների, այլ պետական մարմինների, ինչպես նաև ՀՀ-ում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների, օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների փոստատարային օպերատիվ կապի ապահովումը (բացառությամբ դիվանագիտական փոստի),

13) պետական և դիվանագիտական մարմինների հատուկ կարևորության, հույժ գաղտնի, գաղտնի ու այլ ծառայողական թղթակցությունների փոխադրումը և դրանց պահպանման ապահովումը:

Ծառայության գործառույթներից են՝

1) հակահետախուզական գործունեության կազմակերպում ու իրականացում, հակահետախուզական միջոցառումների անցկացման և դրանք իրականացնելիս գաղտնի մեթոդների ու միջոցների օգտագործման կարգի որոշում, ինչպես նաև ազգային անվտանգության

մարմինների կողմից օտարերկրյա պետությունների հատուկ ծառայություններ և կազմակերպություններ ներթափանցման կարգի սահմանում,

2) ՀՀ զինված ուժերի և այլ զինվորական կազմավորումների, ինչպես նաև դրանց կառավարման մարմինների մարտունակության և մարտական պատրաստության պահպանմանն ու ամրապնդմանն աջակցություն,

3) ազգային անվտանգության մարմինների առջև դրված խնդիրների լուծման նպատակով դրա համար համաձայնություն տված անձանց հետ գաղտնի հիմունքներով համագործակցություն,

4) իր իրավասության սահմաններում ՀՀ անվտանգությանն սպառնացող վտանգի մասին տեղեկատվության ստացում, մշակում, վերլուծում և իրացում, այդ վտանգի կանխատեսում,

5) այլ պետական մարմինների հետ համատեղ՝ հասարակական-քաղաքական, կրոնական և այլ զանգվածային միջոցառումների անվտանգության ապահովում,

6) ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու և քաղաքացիությունը դադարեցնելու, ՀՀ քաղաքացիների, օտարերկրացիների՝ ՀՀ տարածք մուտք գործելու և նրա սահմաններից դուրս գալու, ինչպես նաև օտարերկրացիների՝ ՀՀ տարածքում գտնվելու ռեժիմին վերաբերող հարցերի լուծմանն աջակցություն,

7) ՀՀ ազգային անվտանգության մարմինների մոբիլիզացիոն պատրաստվածության ապահովում,

8) ռազմական դրության ժամանակ իրականացվող միջոցառումներին մասնակցություն,

9) Ծառայության մարմինների գործունեության համակարգման և արդյունքների ամփոփման համար կապի, տեղեկատվական և տվյալների փոխանցման համակարգերի, տեղեկատվության պաշտպանության միջոցների (այդ թվում՝ նաև կրիպտոգրաֆիկական պաշտպանության միջոցներ) ստեղծում, Ծառայության գործունեությանը վերաբերող օպերատիվ, արխիվային և այլ նյութերի հաշվառման, պահպանման ու օգտագործման կարգի սահմանում,

10) տեղեկատվության անվտանգության ոլորտում պետական վերահսկողության իրականացում, ինչպես նաև օրենսդրությամբ

պաշտպանվող տեղեկատվության գաղտնագրային, ծածկագրային և տեխնիկական պաշտպանության միջոցների մշակմանը, արտադրմանը, իրացմանը, շահագործմանը, ներմուծմանն ու արտահանմանն ուղղված գործունեության համակարգում, ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում և ՀՀ ներկայացուցչություններում տեխնիկական հետախուզությունների հակազդման հատուկ միջոցառումների կազմակերպում, իրականացում և վերահսկում,

11) օտարերկրյա պետությունների հատուկ ծառայությունների և կազմակերպությունների քայքայիչ գործունեության հակազդման հիմնահարցերին վերաբերող գիտական հետազոտությունների կազմակերպում և իրականացում,

12) ՀՀ անվտանգության ապահովման պետական ծրագրերի մշակմանն ու իրացմանը մասնակցություն, երկրում ներքաղաքական, սոցիալ-տնտեսական և քրեածին իրավիճակի զարգացման կանխագուշակումների հիման վրա ՀՀ անվտանգությանն սպառնացող վտանգի կանխման ու չեզոքացման վերաբերյալ առաջարկությունների մշակում,

13) սպառազինության և հատուկ տեխնիկայի, ստեղծվող սպառազինությանն ու հատուկ տեխնիկային ներկայացվող տեխնիկական պահանջների մշակմանը մասնակցություն, սպառազինության և հատուկ տեխնիկայի կուտակման, պահպանման ու վերանորոգման, ինչպես նաև դրանց մատակարարման և վերանորոգման պատվերների տեղաբաշխման իրականացում:

§3. Ոստիկանության պետական կառավարումը

ՀՀ Սահմանադրության 89-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն. «ՀՀ կառավարությունն ապահովում է հասարակական կարգի պահպանությունը, միջոցներ է ձեռնարկում օրինականության ամրապնդման, քաղաքացիների իրավունքների և ազատությունների ապահովման ուղղությամբ»: ՀՀ Կառավարությունը սահմանադրական այս հիմնարար գործառույթը հիմնականում իրականացնում է առընթեր պետական կառավարման մարմնի՝ ՀՀ ոստիկանության, միջոցով: ՀՀ ոստիկանության պատմության ակունքները սկիզբ են առնում դեռևս Հայաստանի առաջին Հանրապետությունից (առաջին նախարարն էր

հայտնի պետական-քաղաքական գործիչ Արամ Մանուկյանը): Հայաստանի խորհրդայնացումից հետո նախարարությունը վերանվանվեց ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի, այնուհետև՝ ՆԳ մինիստրության, ՀՀ անկախացումից հետո՝ ՀՀ ներքին գործերի նախարարություն, ներկայումս՝ ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն:

Թեև անցած մի քանի տասնամյակներին «ներքին գործեր» անվանումը ավանդաբար պահպանվում էր, սակայն պետության գործունեության այս ոլորտի բովանդակությունը պատմականորեն փոփոխվում էր:

Անկախությունից հետո ձևավորված նոր սահմանադրական կարգի պայմաններում արմատական փոփոխություններ կատարվեցին ՀՀ քաղաքական համակարգում, վերաիմաստավորվեց պետության դերը, նշանակությունը հասարակության քաղաքական, տնտեսական և սոցիալ-մշակութային կյանքում: Սա տրամաբանորեն փոխեց նաև ոստիկանության սոցիալական նշանակությունը, խնդիրներն ու գործառույթները: Եվ, եթե խորհրդային ամբողջատիրության տարիներին ՆԳ համակարգի բուն նպատակը իշխող քաղաքական ռեժիմի սպասարկումն էր «սոցիալիստական հասարակարգ և օրինականություն» կարգախոսի քողի ներքո, ապա ներկայումս ***ոստիկանության խնդիրներն էականորեն վերանայվել են՝***

1) մարդու անվտանգությունը՝ օրենքով նախատեսված դեպքերում,

2) հանցագործությունների ու վարչական իրավախախտումների նախականխումը, կանխումը և խափանումը,

3) հանցագործությունների հայտնաբերումը և բացահայտումը, քրեական գործով նախնական քննությունը,

4) հասարակական կարգի պահպանությունը և հասարակական անվտանգությունը,

5) սեփականության բոլոր ձևերի հավասար պաշտպանությունը,

6) օրենքով նախատեսված սահմաններում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրենց իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելիս օգնություն ցույց տալը և այլն:

ՀՀ ոստիկանության կանոնադրությունը հաստատվել է ՀՀ կա-

ռավարության 2004թ. հունիսի 9-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 806-Ն որոշմամբ:

ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությունը (այսուհետ՝ ՀՀ ոստիկանություն) հանցավորության և այլ հակաիրավական ոտնձգությունների դեմ պայքարի, հասարակական կարգի ու անվտանգության ապահովման ոլորտում իր լիազորությունների սահմաններում մշակում և իրականացնում է ՀՀ կառավարության քաղաքականությունը:

Կանոնադրության 6-րդ կետով սահմանվում է ՀՀ ոստիկանության կառուցվածքը՝ բաղկացած է կենտրոնական ապարատից, դրա անմիջական ենթակայության ստորաբաժանումներից և տարածքային մարմիններից: ՀՀ ոստիկանության համակարգի մեջ մտնում են նաև ոստիկանության զորքերը, ոստիկանության կազմում ստեղծված պետական ոչ առևտրային կազմակերպությունները և հիմնարկները:

ՀՀ ոստիկանության կենտրոնական ապարատը ՀՀ ոստիկանության համակարգի գլխադասային կառույցն է, որը կազմված է ՀՀ ոստիկանության պետից, նրա տեղակալներից, խորհրդականներից և ճյուղային ծառայություններից (գլխավոր վարչություններից, վարչություններից ու բաժիններից):

ՀՀ ոստիկանության տարածքային մարմիններն են ոստիկանության Երևան քաղաքի ու մարզային վարչությունները, դրանց ենթակա ոստիկանության բաժինները:

ՀՀ ոստիկանության նպատակներից և խնդիրներից են՝

1) հանցավոր և այլ հակաիրավական ոտնձգություններից անձի կյանքի և առողջության, իրավունքների, ազատությունների ու օրինական շահերի պաշտպանության ապահովումը,

2) հասարակության և պետության շահերի պաշտպանության ապահովումը,

3) հանցագործությունների ու վարչական իրավախախտումների նախականխման, կանխման և խափանման աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը,

4) իր իրավասության սահմաններում հանցագործությունների և վարչական իրավախախտումների հայտնաբերման, բացահայտման աշխատանքների, հետաքննության, նախաքննության կազմակերպումն ու իրականացումը,

5) հասարակական կարգի պահպանության և հասարակական անվտանգության ապահովումը,

6) սեփականության բոլոր ձևերի պաշտպանության ապահովումը:

ՀՀ ոստիկանության համակարգում օրինականության ամրապնդումը, կաղրերի հետ իրականացվող աշխատանքների կատարելագործումը, նրանց մասնագիտական պատրաստականության բարձրացումը, ոստիկանության ծառայողների ու ոստիկանության զորքերի զինծառայողների իրավական և սոցիալական պաշտպանվածության ապահովումը:

ՀՀ ոստիկանությունն իր նպատակների և խնդիրների իրականացման համար՝ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է մի շարք ***գործառույթներ***՝

1) մարդու իրավունքների և ազատությունների, սեփականության բոլոր ձևերի պաշտպանության, հասարակական կարգի ու հասարակական անվտանգության ապահովման ուղղությամբ ՀՀ ոստիկանության համակարգի գործունեության հիմնական ուղղությունների որոշում, հանցավորության դեմ պայքարի բնագավառում պետական ծրագրերի մշակմանն ու իրագործմանը մասնակցություն,

2) հանցավորության վիճակի վերլուծության իրականացում, քրեածին իրավիճակի զարգացման երկարաժամկետ և օպերատիվ կանխատեսումների մշակում, ինչի հիման վրա իրավասու պետական մարմիններին է ներկայացնում առաջարկություններ օրինականության ամրապնդման, հասարակական կարգի ու հասարակական անվտանգության ապահովման, հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման վերաբերյալ,

3) հանցագործությունների և այլ իրավախախտումների գրանցման ու հաշվառման կազմակերպում ու իրականացում, ՀՀ ոստիկանության համակարգի ծառայություններում և մարմիններում այդ աշխատանքների նկատմամբ վերահսկողության իրականացում, վեր-

ջիններիս օպերատիվ-ծառայողական գործունեության արդյունքների վերլուծություն և այն աշխատանքների արդյունավետության բարձրացման գործում օգտագործելը,

4) հանցագործությունների դեմ պայքարի, հասարակական կարգի ու հասարակական անվտանգության ապահովման գործում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման, այդ թվում՝ իրավապահ մարմինների, կազմակերպությունների, ինչպես նաև ֆիզիկական անձանց հետ համագործակցություն,

5) օպերատիվ-հետախուզական և փորձաքրեագիտական գործունեության, հետաքննության, նախաքննության կազմակերպում ու իրականացում, ինչպես նաև հանցագործությունների հայտնաբերման և բացահայտման համար անհրաժեշտ միջոցների ձեռնարկման ապահովում,

6) թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի կազմակերպում և համակարգում, թմրամիջոցների, հոգեմետ, խիստ ներգործող և թունավոր նյութերի, օրինական շրջանառության նկատմամբ հսկողության իրականացում,

7) միջազգային հանցավորության դեմ պայքարի ոլորտում, իր լիազորությունների իրականացման հետ մեկտեղ, ՀՀ իրավապահ մարմիններին աջակցելը, քրեական ոստիկանության միջազգային կազմակերպության՝ Ինտերպոլի հետ համագործակցելը,

8) ճանապարհային ոստիկանության ղեկավարում, ճանապարհատրանսպորտ-ային պատահարների պետական հաշվառում, ճանապարհային երթևեկության կանոնների, տեխնիկական նորմերի և այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության, ճանապարհային երթևեկության կարգավորում, ճանապարհապարեկային ծառայության իրականացում, վարորդների տեսական ու գործնական գիտելիքների ստուգում և տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի ազգային և միջազգային վկայականների տրամադրում,

9) ՀՀ քաղաքացիների անձնագրավորման, հաշվառման, բնակչության պետական ռեգիստրի և ընտրողների ռեգիստրի վարման, օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց Հանրապետության մուտքի արտոնագրեր, կացության կարգավիճակ-

ներ տալու, նրանց կողմից ՀՀ տարածք մուտք գործելու, տարանցիկ տեղաշարժվելու, տարածքից դուրս գալու՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանոնների պահպանման ուղղությամբ իրավասու մարմինների գործունեության կազմակերպում և դրանց նկատմամբ հսկողության իրականացում,

10) տեխնածին և տարերային աղետների, խոշոր վթարների ու հրդեհների, զանգվածային անկարգությունների, այլ արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման, ինչպես նաև միջտարածքային, այլ հատուկ միջոցառումների ժամանակ բնակչության փրկության, առանց հսկողության մնացած գույքի պահպանության և հասարակական կարգի ապահովման աշխատանքներում ՀՀ ոստիկանության համակարգի ծառայողների ու զինծառայողների ներգրավում,

11) ՀՀ պաշտպանությանը ՀՀ ոստիկանության զորքերի մասնակցություն՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում և այլն:

ՀՀ ոստիկանության կառավարումը: ՀՀ ոստիկանության գործունեությունն իրականացվում է միանձնյա և կենտրոնացված կառավարման միջոցով: ՀՀ ոստիկանությունը գլխավորում է ՀՀ ոստիկանության պետը, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ՀՀ Նախագահը՝ ՀՀ վարչապետի առաջարկությամբ: ՀՀ ոստիկանության պետն ունի մեկ առաջին տեղակալ և տեղակալներ, որոնց պաշտոնի նշանակում ու պաշտոնից ազատում է ՀՀ Նախագահը՝ ՀՀ ոստիկանության պետի առաջարկությամբ: ՀՀ ոստիկանության զորքերի հրամանատարին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ՀՀ Նախագահը: ՀՀ ոստիկանության զորքերի հրամանատարն ի պաշտոնե ՀՀ ոստիկանության պետի տեղակալն է:

ՀՀ ոստիկանության պետի լիազորությունները հիմնականում կրկնում են մյուս ՀԳՄ-ների ղեկավարների համար սահմանված լիազորությունները: Բացի այդ ***ՀՀ ոստիկանապետը՝***

1) ՀՀ ոստիկանության համակարգի գործունեությանը վերաբերող կարևորագույն հարցերի քննարկման, առանձին բնագավառներում առկա խնդիրների լուծման նպատակով կարող է ստեղծել խորհրդակցական մարմիններ, հանձնաժողովներ, աշխատանքային

խմբեր և այլն, որոշում է դրանց անհատական կազմերը, գործունեության շրջանակներն ու իրավասությունների սահմանները,

2) ոստիկանության բնագավառում պետական քաղաքականության հիմնական ուղղությունների մշակմանը հասարակական միավորումներին և մտավորականներին մասնակից դարձնելու, ոստիկանության գործունեության նկատմամբ հասարակական վստահության պատշաճ մակարդակ ապահովելու նկատառումներով ոստիկանությանը կից ստեղծում է հասարակական վերահսկողության խորհրդատվական մարմին՝ հասարակական խորհուրդ, հաստատում է խորհրդի կազմը և աշխատակարգը,

3) նախագահում է ՀՀ ոստիկանության խորհրդակցական մարմնի նիստերը, վարում է իր մոտ հրավիրված օպերատիվ խորհրդակցությունները,

4) միջազգային հանցավորության դեմ պայքարի ոլորտում առկա հիմնախնդիրների լուծման նպատակով այլ պետությունների ոստիկանական կառույցների ղեկավարների հետ համատեղ կարող է ստեղծել կոլեգիալ կառավարման մարմիններ, ապահովում է ՀՀ ոստիկանության մասնակցությունը նշված մարմինների աշխատանքներին,

5) շնորհում է ոստիկանության և զինվորական կոչումներ, ՀՀ Նախագահին միջնորդություն է ներկայացնում ոստիկանության և զինվորական բարձրագույն կոչումներ շնորհելու վերաբերյալ,

6) իրավասու է ՀՀ ոստիկանության ծառայողներին, զինծառայողներին, քաղաքացիական ծառայողներին, տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց ու քաղաքացիներին պարգևատրելու հրազենով և սառը զենքով,

7) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնում է առաջարկություններ ՀՀ ոստիկանության ծառայողներին, զինծառայողներին, քաղաքացիական ծառայողներին ու տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց ՀՀ պետական պարգևներով պարգևատրելու և պատվավոր կոչումներ շնորհելու վերաբերյալ,

8) հիմնում է ՀՀ ոստիկանության մեդալներ, կրծքանշաններ, պատվոգիր և «ՀՀ ոստիկանության պատվավոր ծառայող» կոչում և այլն:

Ոստիկանության համակարգում գործող ***քննչական գլխավոր վարչությունը***, թերևս, ամենամեծաքանակ նախաքննության մարմինն է, քանի որ քրեական գործերի մեծ մասի քննությունը քրեական դատավարության օրենսդրությամբ վերապահված է հենց այս ստորաբաժանման քննիչներին:

§4. Արդարադատության պետական կառավարումը

«Արդարադատություն» եզրույթը, որպես լատիներեն «iustitia» բառի թարգմանություն, ստուգաբանվում է որպես արդար(ադատ)ություն կամ դատական հաստատությունների համակարգ[1]: Ինչպես հայտնի է՝ ՀՀ իրավունքի համակարգում դատական իշխանության մարմիններն անկախ են և չեն ընդգրկվում գործադիր իշխանության համակարգի կառավարման օբյեկտների մեջ: ՀՀ դատական համակարգը պետական իշխանության ինքնուրույն ճյուղ է: Այդուհանդերձ, դատական համակարգի բնականոն գործունեության համար անհրաժեշտ է որոշակի կազմակերպական-տեխնիկական աջակցություն, և այդ առաքելությունն ավանդաբար դրվել է արդարադատության նախարարության վրա՝ անկախ տարբեր ժամանակներում դրա անվանումներից: Այլ կերպ ասած՝ եթե օրենսդիր իշխանության մարմնի իրավական ակտերը գործադրվում են գործադիր իշխանության մարմինների ամբողջ համակարգի միջոցով, ապա դատական իշխանության մարմիններն ավանդաբար առավել սերտ կապված են եղել միայն արդարադատության ոլորտի պետական կառավարման մարմինների հետ: Սակայն 2005թ. սահմանադրական և դրա հիման վրա՝ օրենսդրական բարեփոխումների արդյունքում ՀՀ արդարադատության նախարարության ազդեցությունն պետության արդարադատական գործառույթի իրականացման ոլորտում հասցվել է նվազագույնի:

ՀՀ արդարադատության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կանոնադրությունն ու աշխատակազմի կառուցվածքը հաստատվել են ՀՀ կառավարության 2002թ. նոյեմբերի 28-ի թիվ

[1] Տե՛ս՝ Российский энциклопедический словарь: В 2 кн. / Гл. ред. А.М. Прохоров. М., 2001. էջ 1869.

1917-Ն որոշմամբ: Նախարարությունը մշակում և իրականացնում է օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ իր իրավասությանը վերապահված բնագավառներում ՀՀ կառավարության քաղաքականությունը:

Նախարարության նպատակներից և խնդիրներից են՝

1) ՀՀ օրենսդրության կատարելագործման ու համակարգման ապահովումը,

2) իրավական ակտերի պետական իրավական փորձաքննության և պետական գրանցման ապահովումը,

3) իրավական ակտերի պաշտոնական թարգմանության, հրատարակման և վերահրատարակման ապահովումը,

4) օրենսդրական, գերատեսչական կամ տեղական ինքնակառավարման մարմինների իրավական ակտերի պաշտոնական ինկորպորացիայի, հաշվառման և դասակարգման ապահովումը,

5) ՀՀ քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման գործունեության ապահովումը,

6) նոտարական գործունեության ապահովումը,

7) ՀՀ տարածքում ստեղծվող իրավաբանական անձանց՝ (բացառությամբ բանկերի և վարկային կազմակերպությունների), իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների, անհատ ձեռնարկատերերի, հասարակական միավորումների և օրենքով նախատեսված այլ կազմակերպությունների պետական գրանցման ու հաշվառման ապահովումը,

8) հասարակական միավորումների և օրենքով նախատեսված այլ կազմակերպությունների, ինչպես նաև ՁԼՄ-ների հաշվառման նկատմամբ վերահսկողության ապահովումը՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով,

9) սնանկության գործերով կառավարիչների որակավորման կազմակերպում և իրականացում,

10) ՀՀ միջազգային պայմանագրերի գործունեության ու միջազգային կապերի իրավական ապահովումը, միջպետական հարաբերություններում ՀՀ շահերի իրավական պաշտպանության աշխատանքներին մասնակցությունը, ինչպես նաև ՀՀ կառավարության շահերը Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ներկայացնելը,

11) ՀՀ քրեակատարողական օրենսդրությամբ, ինչպես նաև «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքով իրեն վերապահված իրավասությունների ապահովումը,

12) ՀՀ դատարանների դատական ակտերի, ինչպես նաև միջնորդ դատարանների վճիռների և օտարերկրյա արբիտրաժային որոշումների հարկադիր կատարման ապահովումը,

13) դատական փորձաքննությունների ապահովումը,

14) «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան՝ վարչական վարույթի ապահովումը,

15) քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության, քրեակատարողական ծառայության և իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության գործունեության օրինականության նկատմամբ վերահսկողության ապահովումը,

16) դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու օրենքով նախատեսված լիազորության իրականացման ապահովումը:

Նախարարության գործառույթներից են՝

1) ՀՀ օրենսդրության կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների ու իրավական ակտերի նախագծերի մշակում,

2) օրենքով սահմանված կարգով իրավական ակտերի, այդ թվում՝ ՀՀ և օտարերկրյա անձանց միջև կնքված պայմանագրերի պաշտոնական օրինակների հաշվառում, համակարգում և պահպանում,

3) նոտարների կողմից իրականացվող նոտարական կամ այլ գործողությունների կատարման նկատմամբ վերահսկողություն, նոտարական գործողությունների կատարման վերաբերյալ հրահանգների հաստատում, նոտարական պալատի կանոնադրության գրանցում, նոտարին ՀՀ զինանշանի պատկերով կնիքի տրամադրում, նոտարների թեկնածուների որակավորման ստուգման կազմակերպում և իրականացում, նոտարական գործողություններին մասնակցող թարգմանչի որակավորման ստուգման կազմակերպում և որակավորման վկայականի տրամադրում,

4) քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման քաղաքականության, մեթոդոլոգիայի, հրահանգների մշակում և հաստատում,

5) դատական ակտերի հարկադիր կատարման քաղաքականության մշակում և մեթոդական ղեկավարում,

6) քրեակատարողական ծառայության գործունեության քաղաքականության մշակում և մեթոդական ղեկավարում,

7) ՀՀ տարածքում ստեղծվող իրավաբանական անձանց (բացառությամբ բանկերի և վարկային կազմակերպությունների), անհատ ձեռնարկատերերի պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցների հաշվառման վերաբերյալ հրահանգների հաստատում,

8) Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում նախարարության իրավասությանը վերապահված բնագավառներին առնչվող միջոցառումների իրականացման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը,

9) իրավական և մասնագիտական վերահսկողության ամենամյա աշխատանքային ծրագրերի հաստատում,

10) ֆիզիկական և իրավաբանական անձանց գրավոր առաջարկությունների ու դիմումների՝ օրենքով սահմանված կարգով քննարկում, ինչպես նաև քաղաքացիների նամակներում հաղորդվող՝ նախարարության համակարգի հիմնարկների և կազմակերպությունների գործունեության մեջ տեղ գտած թերությունների վերացման համար միջոցների ձեռնարկում,

11) ՀՀ և այլ պետությունների միջև կնքված իրավական օգնության մասին պայմանագրերի պահանջներին համապատասխան՝ դատական հանձնարարությունների կատարման վերաբերյալ միջնորդություն ներկայացնելը,

12) օրենքով սահմանված կարգով միջազգային, միջպետական կամ միջկառավարական պայմանագրի վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը, օրենքով սահմանված կարգով՝ միջազգային պայմանագրի դրույթների և ՀՀ օրենսդրության միջև հակասության կամ դրա բացակայության մասին կարծիք ներկայացնելը,

13) ՀՀ կառավարությանը պարտավորեցնող՝ դատարանի որոշումների իրականացման ընթացքի վերահսկում:

§5. Արտաքին գործերի պետական կառավարումը: Սփյուռքի գործերով պետական կառավարումը

1918թ. Հայաստանը պետականության վերականգնմանը զուգընթաց ձեռք էր բերում ճանաչում և հաստատում դիվանագիտական կապեր:

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո 1920թ. դեկտեմբերին ստեղծվեց ՀԽՍՀ արտաքին գործերի Ժողովրդական կոմիսարիատը: Սակայն ԽՍՀՄ-ը վարում էր ընդհանուր արտաքին քաղաքականություն և, ըստ այդմ, միութենական հանրապետություններն արտաքին քաղաքականություն վարելու գործառույթը պատվիրակված էր ԽՍՀՄ-ին: Հայրենական Մեծ պատերազմի ավարտական փուլում ԽՍՀՄ ղեկավարությունը որոշում է ընդլայնել միութենական հանրապետությունների լիազորությունները երկրի արտաքին քաղաքականության ոլորտում՝ մասնավորապես, նախատեսվում էր հանրապետություններին իրավունք տալ դիվանագիտական և հյուպատոսական հարաբերություններ հաստատել արտերկրի պետությունների հետ, և նույնիսկ դրանց դարձնել ՄԱԿ-ի անդամ:

Հետպատերազմական տարիներին ՀԽՍՀ արտգործնախարարությունը գործում էր ՀԽՍՀ կառավարության և ԽՍՀՄ արտգործնախարարության ղեկավարությամբ: Նախարարությունն ուներ քաղաքական տեղեկատվության և արարողակարգային-հյուպատոսական բաժիններ. նրա գործառույթներն էին քաղաքական տեղեկատվության առաքումը ՀԿԿ կենտկոմին ու ՀԽՍՀ կառավարությանը՝ հանրապետությանը վերաբերող արտերկրի ու միջազգային անցուդարձի վերաբերյալ արտասահմանյան պետությունների հետ Հանրապետության առևտրատնտեսական, գիտական, մշակութային և այլ կապերի հյուպատոսական ապահովումը, քաղաքացիության հարցերի, քաղաքացիների արտերկիր մեկնելու համար անձնագրերի, մուտքի և ելքի արտոնագրերի (վիզաների) տրամադրում, փաստաթղթերի օրի-

նականացում (լեգալիզացիա) և պահանջում, նամակագրությունը, ՀԽՍՀ իշխանության մարմինների նամակագրությունը ԽՍՀՄ ԱԳՆ արտասահմանյան հաստատությունների հետ:

Հայաստանի անկախության հռչակմամբ Հանրապետության արտգործնախարարության գործունեությունը ենթարկվեց արմատական փոփոխությունների, հաշվի առնելով ՀՀ նոր կարգավիճակը միջազգային հարաբերություններում, նախարարության կառուցվածքն ու աշխատակազմի քանակը համապատասխանեցվեց անկախ պետության արտաքին քաղաքականություն իրականացնելու պահանջներին: Հայաստանը 2010թ. օգոստոսի 1-ի դրությամբ դիվանագիտական հարաբերություններ է հաստատել 156 երկրների հետ: ՀՀ դարձավ Միավորված Ազգերի կազմակերպության (ՄԱԿ, 1992թ.), մի շարք այլ միջազգային կազմակերպությունների (ԵԱՀԿ, ԱՊՀ, ՀԱՊԿ, Եվրոպայի Խորհուրդ, ՍԾՏՀԿ) անդամ, ՀՀ դեսպանություններ ու գլխավոր հյուպատոսություններ բացվեցին մի շարք երկրներում, ՀՀ մշտական ներկայացուցչություններ հիմնվեցին մի շարք միջազգային կազմակերպություններում և այլն:

ՀՀ արտաքին քաղաքականությունն ուղղված է երկրի արտաքին անվտանգության ամրապնդմանը, պետության զարգացման արտաքին բարենպաստ պայմանների ապահովմանը, միջազգային ասպարեզում Հայաստանի դիրքորոշումների ներկայացմանը, արտերկրում Հանրապետության և նրա քաղաքացիների շահերի պաշտպանության արդյունավետության բարձրացմանը, միջազգային կազմակերպություններում և գործընթացներում ներգրավվածության խորացմանը, բարեկամ և գործընկեր երկրների հետ համագործակցության առավել ամրապնդմանը, ինչպես նաև՝ տարածաշրջանային խնդիրների կարգավորմանն ու համագործակցային մթնոլորտի ձևավորմանը:

ՀՀ արտաքին քաղաքականության նպատակներից է միջազգային հանրության կողմից Հայաստանի դիրքորոշումների ընկալման ապահովումն ու դրանց աջակցության ցուցաբերումը:

Արտաքին քաղաքականության հիմնական խնդիրներից է Արցախի ժողովրդի ինքնորոշման հիման վրա ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ և արդարացի լուծումը:

ՀՀ Սահմանադրության 9-րդ հոդվածի համաձայն. «Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունն իրականաց-

վում է միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխան՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ հաստատելու նպատակով»:

ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը կառավարությունը մշակում և իրականացնում է Հանրապետության Նախագահի հետ համատեղ»: Հենց դրանով էլ պայմանավորված է այն հանգամանքը, որ ՀՀ Նախագահը պետական կառավարման քննարկվող ոլորտում ընդարձակ սահմանադրական լիազորություններ ունի:

Նշված սահմանադրական նորմերի հիման վրա ընդունվել են «Դիվանագիտական ծառայության մասին» (24.10.01), «Հյուպատոսական ծառայության մասին» (29.05.96), «Միջազգային պայմանագրերի մասին» (12.04.07) ՀՀ օրենքները, ԱԳՆ համակարգը կարգավորող ՀՀ Նախագահի և ՀՀ կառավարության մի շարք իրավական ակտեր, մասնավորապես, ՀՀ նախագահի 2000թ. մարտի 31-ի «Հայաստանի Հանրապետության միասնական արտաքին քաղաքականության վարման գործում Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության մարմինների գործունեությունը համակարգելու մասին» ՆՀ-541 հրամանագրով և 2000թ. ապրիլի 22-ի «ՀՀ գործադիր իշխանության մարմինների կողմից միջազգային գործունեության և միջազգային կապեր իրականացնելու կարգը հաստատելու մասին» ՆԳ-557 կարգադրությամբ ՀՀ ԱԳՆ-ին վերապահված է արտաքին քաղաքական ոլորտի համակարգող դեր:

Ելնելով անկախ պետականության պահանջներից՝ ձևավորվեց ՀՀ պետական արարողակարգը.1991թ.՝ ԱԳՆ վարչություն, այնուհետև՝ 1998 թ. ԱԳՆ կազմում գործող ՀՀ պետական արարողակարգի ծառայություն, որը 2002 թ. վերակազմավորվեց ՀՀ ԱԳՆ «Պետական արարողակարգի ծառայություն» գործակալության՝ հիմնարկի առանձնացված ստորաբաժանման կարգավիճակով: Պետական արարողակարգի կայացման գործում մեծ նշանակություն ունեցավ ՀՀ պետական արարողակարգի հիմնադրույթները հաստատող ՀՀ նախագահի 2002թ. մարտի 16-ի հրամանագիրը:

Սկսած 1999թ.՝ գումարվում են արտերկրում ՀՀ դեսպանների ամենամյա խորհրդաժողովներ: Մի քանի անգամ անց են կացվել ՀՀ

դեսպանների տարածաշրջանային հավաքներ: 2010թ. ՀՀ ԱԳՆ-ին կից գործում է դիվանագիտական դպրոց:

ՀՀ արտաքին գործերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կանոնադրությունն ու կառուցվածքը հաստատվել են ՀՀ կառավարության 2002թ. օգոստոսի 22-ի թիվ 1245-Ն որոշմամբ: Նախարարությունը ՀՀ Նախագահի ընդհանուր ղեկավարությամբ մշակում և իրականացնում է արտաքին գործերի բնագավառում ՀՀ կառավարության քաղաքականությունը, ինչպես նաև կազմակերպում և ղեկավարում է դիվանագիտական ծառայությունը՝ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում: Նախարարությունն ստեղծվում, վերակազմակերպվում և նրա գործունեությունը դադարեցվում է ՀՀ Նախագահի հրամանագրով: Նախարարությունն իր գործունեությունն իրականացնում է՝ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ միջազգային պայմանագրերով, «Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենքով, միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերով, իր կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

Նախարարությունը կազմված է նախարարից և նախարարության աշխատակազմից: Նախարարության համակարգը ներառում է՝ նախարարության աշխատակազմը, աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումները, օտարերկրյա պետություններում գործող կառուցվածքային ստորաբաժանումները (օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմինները)՝ ՀՀ դեսպանությունները, միջազգային կազմակերպություններում ՀՀ մշտական ներկայացուցչությունները, բացառությամբ մասնագիտացված միջազգային կազմակերպություններում ՀՀ ներկայացուցիչների և ներկայացուցչությունների, ՀՀ հյուպատոսական հիմնարկները:

Նախարարության ***նպատակներից և խնդիրներից են***

1) ՀՀ արտաքին քաղաքականության հայեցակարգի և ուղղությունների մշակմանը մասնակցելը և ՀՀ Նախագահին և ՀՀ կառավարություն համապատասխան առաջարկություններ ներկայացնելն ու ՀՀ արտաքին քաղաքականություն իրականացնելը,

2) միջազգային հարաբերություններում ՀՀ շահերը և իրավունքները պատշաճ և հետևողականորեն ներկայացնելը,

3) ՀՀ քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը,

4) օտարերկրյա պետությունների ու միջազգային կազմակերպությունների հետ դիվանագիտական և (կամ) հյուպատոսական հարաբերությունների իրականացումը,

5) աշխարհի քաղաքական և տնտեսական դրության, օտարերկրյա պետությունների արտաքին ու ներքին քաղաքականության, միջազգային կազմակերպությունների գործունեության ուսումնասիրության հիման վրա ՀՀ Նախագահին և ՀՀ կառավարություն համապատասխան առաջարկություններ ներկայացնելը,

6) ՀՀ դերի բարձրացումը համաշխարհային և տարածաշրջանային հիմնախնդիրների լուծման գործում,

7) պետական լիազոր մարմնի[1] հետ համատեղ սփյուռքահայության հետ հարաբերությունների համակարգումը,

8) ՀՀ պետական արարողակարգի ապահովումը,

9) պետական մարմիններն արտաքին և ներքին քաղաքականության իրականացման համար անհրաժեշտ տեղեկությամբ ապահովելը:

Նախարարության գործառույթներից են՝

1) ՀՀ-ն օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ հարաբերություններում ներկայացնելը,

2) ՀՀ միջազգային արտաքին քաղաքականության ռազմավարության իրագործումը,

3) միջազգային հարաբերությունների և կապերի ոլորտում գործադիր իշխանության հանրապետական ու տարածքային մարմինների գործունեության համակարգումը,

4) «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքով նախարարությանը վերապահված գործառույթների իրականացումը:

ՀՀ միջազգային պայմանագրերի կնքման հետ կապված գործառույթների կազմակերպումը և այդ բնագավառում գործադիր իշխանության այլ մարմինների գործունեության համակարգումը: Կառավարման այս ոլորտում իրականացվում են հետևյալ գործառույթները՝

---

[1] ՀՀ կառավարության 2008թ. սեպտեմբերի 11-ի թիվ 1049-Ն որոշման հիման վրա ստեղծվել է ՀՀ սփյուռքի նախարարությունը, հաստատվել են դրա աշխատակազմի կանոնադրությունն ու կառուցվածքը:

1) ՀՀ միջազգային պայմանագրերի պետական գրանցման միասնական գրանցամատյանի վարումը,

2) ՀՀ ուժի մեջ մտած միջազգային պայմանագրերը գրանցման ներկայացնելը,

3) ՀՀ ուժի մեջ մտած միջազգային պայմանագրերի հրապարակումը,

4) ՀՀ կնքած միջազգային պայմանագրերի ավանդապահի գործառույթների իրականացումը,

5) ՀՀ միջազգային պայմանագրերի կատարման նկատմամբ ընդհանուր հսկողություն իրականացնելը և անհրաժեշտության դեպքում ՀՀ Նախագահին, ՀՀ կառավարություն կամ ՀՀ վարչապետին համապատասխան առաջարկություններ ներկայացնելը,

6) ՀՀ գործունեության և միջազգային կազմակերպություններում, կոնֆերանսներում, խորհրդակցություններում և այլ հավաքներում մասնակցության ապահովումը,

7) ՀՀ արտաքին և ներքին քաղաքականության, սոցիալ-տնտեսական, մշակութային և հոգևոր կյանքի վերաբերյալ օտարերկրյա պետություններում պաշտոնական տեղեկությունների տարածմանն աջակցելը,

8) ՀՀ արտաքին քաղաքականությանն առնչվող հիմնահարցերի լուսաբանումը,

9) միջազգային հարաբերությունների բնագավառում ՀՀ օրենսդրության կատարելագործման և ՀՀ օրենսդրությունը ՀՀ միջազգային պարտավորություններին համապատասխանեցնելու ուղղությամբ առաջարկություններ պատրաստելը,

10) ՀՀ միջազգային պարտավորությունների կատարման նկատմամբ ընդհանուր վերահսկողության իրականացումը,

11) ՀՀ հավատարմագրված օտարերկրյա պետությունների դիվանագիտական ներկայացուցչությունների և միջազգային կազմակերպությունների հետ պաշտոնական կապի իրականացումը և նրանց գործունեությանն աջակցելը,

12) օտարերկրյա պետություններում ՀՀ քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության իրականացումը,

13) հյուպատոսական գործունեության իրականացումը՝ համաձայն ՀՀ օրենքների, միջազգային պայմանագրերի և այլ իրավական ակտերի,

14) դիվանագիտական ու հյուպատոսական փոստի առաքման և ստացման իրականացումը,

15) ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց և պաշտոնական պատվիրակությունների արտասահման մեկնելուն և օտարերկրյա պետությունների ու միջազգային կազմակերպությունների բարձրաստիճան պաշտոնատար անձանց ու պատվիրակությունների ՀՀ-ն նախատեսվող այցելություններին աջակցելը և անհրաժեշտության դեպքում դրանք կազմակերպելը,

16) դիվանագիտական կադրերի պատրաստման և վերապատրաստման, նախարարության համակարգի աշխատողների մասնագիտական որակավորման բարձրացման աշխատանքների կազմակերպումը, ատեստավորման անցկացումը, աշխատողների և ղեկավար կադրերի ընտրության ու տեղաբաշխման աշխատանքների կազմակերպումը և այլն:

Նախարարությունը կառավարում է ՀՀ արտաքին գործերի նախարարը, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ՀՀ Նախագահը՝ ՀՀ վարչապետի ներկայացմամբ: Նախարարն իրականացնում է նախարարությանը վերապահված խնդիրներն ու գործառույթները և պատասխանատու է լիազորված բնագավառներում քաղաքականության մշակման ու իրականացման, տիրող իրավիճակի և հեռանկարային զարգացման ապահովման համար:

Արտաքին գործերի կառավարման ոլորտում ***նախարարը***՝

1) հաստատում է դիվանագիտական ծառայության մարմինների հաստիքացուցակները և պաշտոնների նկարագրերը, օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների, միջազգային կազմակերպություններում ՀՀ մշտական ներկայացուցչությունների կառուցվածքը, նախարարության աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները,

2) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում գլխավոր քարտուղարի, նախարարության համակարգի դիվանագիտական ծառայության մարմինների ղեկավարների՝ ՀՀ օրենսդրությանը հակասող հրա-

մանները, հրահանգները, հանձնարարագրերը, կարգադրությունները և ցուցումները,

3) հանդես է գալիս ՀՀ արտաքին քաղաքականության և միջազգային դրության մասին հաշվետվություններով ու հաղորդումներով,

4) վարում է բանակցություններ և ստորագրում ՀՀ միջազգային պայմանագրերը,

5) ղեկավարում է օտարերկրյա պետություններում ՀՀ դեսպանությունների և միջազգային կազմակերպություններում ՀՀ մշտական ներկայացուցչությունների աշխատանքները,

6) իր ստորագրությամբ ամրագրում է ՀՀ Նախագահի կողմից ստորագրվող օտարերկրյա պետություններում ՀՀ դեսպանների, միջազգային կազմակերպություններում ՀՀ ներկայացուցիչների հավատարմագրերը, հետկանչագրերը, միջազգային պայմանագրերի վավերագրերը և հայտարարագրերը,

7) ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններում աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է գործերի հավատարմատարներին,

8) օտարերկրյա պետություններում նշանակում է հյուպատոսներ և պատվավոր հյուպատոսներ ու նրանց տալիս հյուպատոսական արտոնագրեր,

9) իրականացնում է օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված այլ լիազորություններ:

Սփյուռքի գործերով պետական կառավարումը, որպես կառավարման նոր ոլորտ, ըստ էության, ձևավորվել է անկախության ձեռք բերման հենքով, ինչը բնական է պետականություն վերականգնած և աշխարհասփյուռ հայազգի անձանց իրավունքների ու շահերի պաշտպանության ձգտող քաղաքականության տեսանկյունից: Չունենալով հատուկ այդ ոլորտի համար պատասխանատու պետական մարմին, նախապատվությունը տրվել է գրեթե բոլոր պետական մարմինների կողմից, իրենց իրավասության սահմաններում, սփյուռքի գործերի կառավարման գործառույթներ իրականացնելու տարբերակին: Ըստ էության, ներկայումս էլ հիշյալ պետական մարմինները չեն դադարել հանդես գալ, որպես սփյուռքի գործերով կառավարության բաղադրիչ, սակայն հանձինս ՀՀ սփյուռքի նախարարության, գործում է անմիջականորեն այդ ոլորտի կառավարման համար պատաս-

խանատու մարմին, միաժամանակ, համագործակցելով նույն այդ պետական մարմինների հետ:

Այս ոլորտը սերտորեն փոխկապացված է արտաքին գործերի հետ (թերևս, այդ հանգամանքը հիմք ընդունելով է, որ սկզբնական շրջանում Սփյուռքի հետ կապերի ստորաբաժանումները ձևավորվել են հենց արտաքին գործերի նախարարության կազմում)[1], սակայն այն առաձնանում է որոշակի հատկություններով, կներկայացվեն ստորև:

ՀՀ սփյուռքի նախարարությունը կազմավորվել է «Կառավարության կառուցվածքի մասին» ՀՀ օրենքի (17.06.08) հիման վրա, և վերջինիս կանոնադրությունը հաստատվել է ՀՀ կառավարության 2008թ. սեպտեմբերի 11-ի թիվ N1049-Ն որոշմամբ: Կանոնադրության 1-ին կետով ամփոփ ամրագրված է այդ նախարարության հիմնական կարգավիճակը. «ՀՀ սփյուռքի նախարարությունը գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը, ՀՀ Նախագահի ընդհանուր ղեկավարությամբ, մշակում եւ ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով իրականացնում է ՀՀ կառավարության քաղաքականությունը՝ Հայաստանի եւ հայկական սփյուռքի (օտարերկրյա պետություններում գործող բոլոր հայկական մշակութային, բարեգործական, հայրենակցական, երիտասարդական, կրթական, գիտական, արհեստակցական, գաղափարական, կոմիտեական կազմակերպություններ, տարբեր հոգեւոր միաբանություններ, հաստատություններ, կառույցներ, միություններ, հիմնադրամներ կամ միավորումներ, զանգվածային լրատվության միջոցներ և այլ մարմիններ, անհատներ) միջեւ կապերի ամրապնդման, դրանց գործակցության զարգացման, հայապահպանության, ներգաղթի կազմակերպման եւ իր իրավասությանը վերապահված այլ բնագավառներում՝ Հայաստան-

[1] Այսպես, ՀՀ կառավարության 2000թ. հունիսի 23-ի թիվ 432 որոշմամբ արտաքին գործերի նախարարության համակարգում ստեղծվեց սփյուռքի հետ կապերի գործադիր քարտուղարությունը՝ գերատեսչության կարգավիճակով: ՀՀ կառավարության 2002թ. հուլիսի 25-ի թիվ 1057-Ն որոշմամբ հիշյալ քարտուղարությունը վերակազմակերպվել է արտաքին գործերի նախարարության կազմում գործող սփյուռքի հետ կապերի գործակալության: Մինչև սփյուռքի նախարարության ստեղծումը, հիշյալ ոլորտում կառավարման պատասխանատուն արտաքին գործերի նախարարության սփյուռքի հետ կապերի պետական կոմիտեն է եղել, որն ստեղծվել է ՀՀ կառավարության 2008թ. մայիսի 22-ի թիվ 567-Ն որոշմամբ:

սփյուռք հարաբերությունների շրջանակներում համագործակցելով դիվանագիտական ծառայությունների հետ:

Ըստ հիշյալ կանոնադրության 8-րդ կետի՝ ***Հայաստան-սփյուռք գործակցության զարգացման քաղաքականության հիմնական ուղղությունների մշակման բնագավառում նախարարության խնդիրներն են***

1) Հայաստանի Հանրապետության եւ հայկական սփյուռքի գործակցության զարգացման հայեցակարգի մշակումը, ՀՀ Նախագահին և ՀՀ կառավարություն Հայաստանի Հանրապետության և հայկական սփյուռքի գործակցության վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը,

2) հայկական համայնքներում ազգային ինքնության արմատավորման ու պահպանման նպատակով սփյուռքի կազմակերպությունների հետ համատեղ ուծացումը կանխելու, լեզվամշակութային ծրագրեր իրականացնելու համար միջոցներ ձեռնարկելը,

3) բնակության կամ քաղաքացիության երկրի հասարակական, քաղաքական և տնտեսական կյանքին հայ մարդու լիարժեք ինտեգրմանն աջակցելը,

4) այլալեզու և այլադավան հայերի շրջանում հայկական ազգային ինքնության հաստատմանն ու արմատավորմանը նպաստելը,

5) համահայկական միասնական տեղեկատվական դաշտի ձեւավորմանն ու զարգացմանը, յուրաքանչյուր հայի համար Հայաստանի մասին տեղեկատվության մատչելիության ապահովմանը, ինչպես նաեւ հայկական սփյուռքի եւ Հայաստանի Հանրապետությունում գործող զանգվածային լրատվամիջոցների համագործակցության զարգացմանը նպաստելը,

6) բոլոր երկրներում հայապահպանության եւ հայ համայնքների զարգացման համար բարենպաստ միջավայրի ձեւավորմանն ու զարգացմանը, համահայկական ծրագրերի մշակմանն ու իրականացմանն աջակցելը,

7) հայկական ինքնության շուրջ սփյուռքի համայնքների ինքնակազմակերպման կառույցների ստեղծմանը եւ ՀՀ հետ այդ կառույցների կապերի ամրապնդմանն ու զարգացման ծրագրերի իրականացմանն աջակցելը,

8) հայկական սփյուռքի համայնքային շահերն առանձին պետությունների հետ ՀՀ երկկողմ, միջպետական հարաբերությունների հաստատման ու զարգացման գործընթացում ներառմանը նպաստելը,

9) հայրենադարձությունը խթանող ծրագրերի մշակումը, դեպի Հայաստան սփյուռքի երիտասարդների ուխտագնացությանն աջակցելը եւ անհրաժեշտ պայմանների ստեղծումը՝ հայոց պետականության ամրապնդման, ժողովրդագրության բարելավման և համազգային խնդիրների լուծման գործում սփյուռքահայերի մասնակցությունն ապահովելու համար,

10) տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով գաղթօջախների մասին տվյալների էլեկտրոնային շտեմարանի կազմմանը, կրթական, գիտական, տնտեսական, մշակութային և այլ ոլորտներում առկա ներուժի հաշվառման կառուցակարգերի եւ տվյալների միասնական բազայի ստեղծմանը, մասնագիտական հանձնախմբերի ձեւավորմանը, կրթական համակարգերի ներդրմանը, հայագիտության բնագավառում հեռավար ուսուցմանն աջակցելը,

11) Հայաստան-սփյուռք գործակցության մասնագիտական կազմակերպակառուցվածքային համակարգի մշակման ու ներդրման միջոցների, ձեւերի ընտրության եւ իրականացման գործընթացի համակարգումը, Հայաստան-սփյուռք համահայկական համակարգող մարմնի կազմակերպմանն օգնելը, որը կսահմանի Հայաստան-սփյուռք գործակցության առաջնահերթությունները, կքննարկի համահայկական հիմնահարցերը, կառաջարկի լուծումներ եւ կտա երաշխավորություններ,

12) հայկական պետականության ամրապնդմանն ու համազգային խնդիրների լուծմանը սփյուռքահայերի արդյունավետ մասնակցությանը, նրանց ներուժի օգտագործման համար նպաստավոր քաղաքական, տնտեսական, մշակութային եւ հոգեւոր միջավայրի ձեւավորմանն աջակցելը,

13) Հայաստանի ներքին խնդիրների լուծման համար սփյուռքի ներուժի ներգրավման կայուն եւ արդյունավետ մեխանիզմների մշակումը,

14) համազգային նշանակության խնդիրների ձեւակերպմանն ու լուծմանն ուղղված ՀՀ եւ հայկական սփյուռքի քաղաքական, տնտեսական, մտավոր, գիտակրթական, հոգեւոր-մշակութային կառողությունների ու ջանքերի համախմբումը,

15) ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ժողովածուների, տեղեկագրերի, պարբերականների հրատարակումների ծրագրավորումը,

16) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ խնդիրների իրականացումը:

Նշված կանոնադրության 9-րդ կետով ամրագրված են ***ՀՀ սփյուռքի նախարարության գործառույթները՝***

1) Հայաստան-սփյուռք գործակցության իրավիճակի ու միտումների հետազոտում և վերլուծություն, Հայաստան-սփյուռք գործակցության զարգացման հիմնական ոլորտների և ուղղությունների բացահայտում ու նախանշում,

2) Հայաստան-սփյուռք գործակցության զարգացման պետական քաղաքականության մշակում եւ դրա վերաբերյալ ՀՀ Նախագահին, ՀՀ կառավարություն և ՀՀ վարչապետին առաջարկություններ ներկայացնելը,

3) Հայաստան-սփյուռք գործակցության զարգացման իրավական հիմքերի կատարելագործում, նախարարության գործունեության ոլորտին առնչվող իրավական ակտերի կիրառման պրակտիկայի ընդհանրացում, սփյուռքահայերի կացության իրավունքի, երկքաղաքացիության, քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման, հաղորդակցության հնարավորությունների վերաբերյալ իրավական ակտերի նախագծերի մշակում,

4) Հայաստանի Հանրապետությունում եւ հայկական սփյուռքում Հայաստան-սփյուռք գործակցության զարգացման, Հայաստանի, հայ ժողովրդի վարկանիշն ամրապնդող նպատակային համահայկական, մշակութային, կրթական, գիտական, հոգեւոր, տնտեսական, մարզական և այլ ոլորտներում հավաքների, գիտաժողովների, խորհրդաժողովների, փառատոների, համատեղ միջոցառումների կազմակերպման ծրագրերի մշակում և իրականացման մոնիթորինգ, ինչպես նաեւ այդ ոլորտներում պետական լիազոր մարմինների ու տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցություն,

5) սփյուռքի կրթական, գիտական, մշակութային, երիտասարդական, մարզական և այլ կազմակերպությունների, այդ ոլորտներում գործող առանձին անհատների ու ՀՀ համապատասխան կազմակերպությունների եւ անհատների միջեւ կապերի հաստատմանն ու զարգացմանը նպաստելը, մասնագետների գործուղման, ինչպես նաեւ ՀՀ կողմից ձեռնարկվող պետական և հասարակական նախաձեռնութ-

յուններին, համապետական եւ համահայկական նշանակություն ունեցող հարցերի վերաբերյալ քննարկումներին, միջոցառումներին եւ ծրագրերին սփյուռքի կրթամշակութային գործիչների, գիտնականների, ձեռներեցների, կանանց, երիտասարդների ընդգրկմանը միտված ծրագրերի մշակում և իրականացման մոնիթորինգ,

6) սփյուռքի մշակույթի զարգացման ռազմավարության մշակմանը մասնակցություն, սփյուռքում հայապահպան գործունեությանը, հայ մշակութային ժառանգության պահպանմանը, զարգացմանն ու տարածմանն աջակցություն, սփյուռքի կազմակերպությունների, հասարակական եւ հոգեւոր կառույցների ու անհատների հետ սփյուռքում հայկական ունեցվածքի պահպանման եւ ուսումնասիրման ծրագրերի մշակում և իրականացման մոնիթորինգ,

7) հայեցի կրթության եւ դաստիարակության ռազմավարության մշակմանը մասնակցություն, համահայկական կրթական ծրագրերի իրականացմանը, համապատասխան ծրագրերի ու դասագրքերի մշակմանը եւ հրատարակմանը ՀՀ կառույցների եւ սփյուռքի մասնագետների մասնակցության ապահովում, մասնագետների վերապատրաստման դասընթացների կազմակերպման, սփյուռքի կրթամշակութային հաստատություններն անհրաժեշտ դասագրքերով եւ մեթոդական ձեռնարկներով ապահովելուն ուղղված աշխատանքների համակարգում, համապատասխան լիազոր մարմնի հետ համատեղ՝ ՀՀ բարձրագույն եւ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում հայագիտական մասնագիտությունների գծով սփյուռքահայերի ուսումնառության հնարավորությունների ընդլայնմանն ուղղված ծրագրերի մշակում եւ իրականացման մոնիթորինգ,

8) սփյուռքի համար տարածաշրջանների պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստման կարիքների գնահատում եւ ծրագրերի մշակում, սփյուռքի պատմության և հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտությունների իրականացման ծրագրերի մշակում ու իրականացման մոնիթորինգ,

9) այլալեզու եւ այլադավան հայերի վերահնտեգրմանն ուղղված հայադարձության ծրագրերի մշակում եւ իրականացման մոնիթորինգ,

10) աջակցելը ՀՀ տնտեսական ծրագրերին սփյուռքի ձեռներեցների մասնակցությանը՝ ՀՀ տնտեսական զարգացման, տարածաշր-

ջանային եւ միջազգային մրցունակության ամրապնդման, ինչպես նաև ՀՀ եւ սփյուռքի միջեւ զբոսաշրջության զարգացման գործում սփյուռքի գործարարների ջանքերին եւ նրանց կողմից իրականացվող միջոցառումների համակարգմանը,

11) Հայաստանի և սփյուռքի տեղեկատվության փոխանակման քաղաքականության մշակում՝ համահայկական միասնական տեղեկատվական համակարգերի միջոցով: Հեռուստակամուրջների, տեսահամաժողովների, համահայկական խորհրդաժողովների անցկացման ծրագրերի մշակում, առանձին երկրների հայկական համայնքների մասին լիարժեք, ամբողջական պատմական, վիճակագրական, քաղաքական, կրթամշակութային, հոգեւոր, գիտական, տնտեսական եւ այլ տեղեկությունների հավաքագրման, հայկական համայնքների մասին համապարփակ տեղեկատվական շտեմարանների ստեղծման ծրագրերի մշակման աշխատանքների համակարգում,

12) հակահայկական քարոզչության, հայատյացության արտահայտման, հայոց պատմության կեղծարարների դեմ պայքարի արդյունավետ ու հստակ կառուցակարգերի ձեւավորմանը եւ դրանց հակազդեցությանը մասնակցություն,

13) ծրագրերի մշակում՝ սփյուռքի չկազմակերպված հատվածների ինքնակազմակերպմանը, համահայկական մասնագիտական հանձնախմբերի, միավորումների ստեղծմանն ու գործունեությանը նպաստելու համար,

14) ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված իրավասության շրջանակներում Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպայի միության միջեւ կնքված «Գործընկերության եւ համագործակցության մասին» համաձայնագրի եւ «Եվրոպական նոր հարեւանություն» ծրագրի շրջանակներում Հայաստան-Եվրամիություն գործողությունների ծրագրի իրականացմանը մասնակցություն,

15) ՀՀ օրենսդրության հիման վրա սփյուռքահայերին ՀՀ քաղաքացիության ձեռքբերման հարցում աջակցելը,

16) իր իրավասությանը վերապահված հարցերով Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու, ինչպես նաեւ այլ հոգեւոր կառույցների հետ սերտ համագործակցության ապահովում, «հայ», «հայություն», «Հայաստան» մնայուն արժեքների, համազգային առաջ-

նահերթ խնդիրների շուրջ Հայաստանի Հանրապետության եւ հայկական սփյուռքի հայկական կազմակերպությունների համախմբում,

17) ՀՀ և հայկական սփյուռքի գործակցության մասնագիտական կազմակերպակառուցվածքային համակարգի մշակման ու ներդրման միջոցների, ձեւերի եւ դրանց իրականացման հիմնարար քայլերի ձեռնարկման աշխատանքների համակարգում՝ համահայկական համակարգող մարմին ձեւավորելու եւ դրա միջոցով համագործակցության առաջնահերթությունները որոշելու, համահայկական հիմնախնդիրներին լուծումներ եւ երաշխավորություններ տալու համար,

18) իր իրավասության սահմաններում՝ ՀՀ Նախագահին, ՀՀ կառավարություն, ՀՀ վարչապետին համապատասխան իրավական ակտեր ընդունելու կամ իրավական ակտ ընդունելու ընթացակարգը նախաձեռնելու, ՀՀ և օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների միջև միջազգային իրավական ակտեր ընդունելու գործընթաց նախաձեռնելու վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը,

19) սփյուռքում ՀՀ պետական քաղաքականության հիմնադրույթները ներկայացնելը՝ դրանց իրագործումն ապահովելու համար,

20) ըստ համայնքների՝ մասնագիտական հանձնախմբերի ձեւավորում, միջոցառումների կազմակերպում, հայկական ներուժի հաշվառում՝ ՀՀ արտաքին գործերի նախարարության աջակցությամբ եւ ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների հետ համագործակցությամբ և այլն:

ԳԼՈՒԽ 24.
ՄԻՋՃՅՈՒՂԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

§1. Հանրային ծառայությունների պետական կառավարումը

Վերջին տարիներին վարչական իրավունքի գիտության և օրենսդրության մեջ «հանրային ծառայություն» եզրույթի ի հայտ գալն արտացոլում է պետության և անձի միջև հարաբերությունների բնույթի փոփոխությունը և ընդգծում, որ պետությունը կարող է գործել ոչ միայն հարկադրանք կիրառելու, այլև՝ հանրային ծառայությունների մատուցման միջոցով: Ժամանակակից սոցիալական, իրավական պետությունում նախապատվությունը տրվում է, այսպես կոչված, պոզիտիվ պետական կառավարմանը, որի նպատակը հասարակության բնականոն կենսագործունեության համար անհրաժեշտ պայմանների ապահովումն է, ինչպես նաև դրանց բարելավումը: Նշված նպատակին հնարավոր է հասնել նաև հանրային ծառայությունների մատուցման միջոցով:

Հանրային ծառայությունների մատուցման պետական կառավարման բնութագրման հիմքում ընկած է պետական կառավարման երկու տեսակների՝ նեգատիվ (միջամտող, սահմանափակող) և պոզիտիվ (հանրային ծառայություններ մատուցող), սահմանազատման վերաբերյալ դրույթը: Դրանցից յուրաքանչյուրին համապատասխանում են սեփական նպատակները, իրավական կարգավորման և կառավարող ներգործության մեթոդները, կառավարման իրականացման կազմակերպա-իրավական ձևերը, իրացման իրավական ձևերը: Այնուամենայնիվ, նեգատիվ և պոզիտիվ կառավարման միջև սահմանագիծը «կոշտ» չէ. հանրային ծառայություններ մատուցելիս հրամայական մեթոդի օգտագործման հնարավորությունը չի բացառվում:

Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ «հանրային ծառայություն» եզրույթի բովանդակությունը բացահայտված չէ: Հարկ է նշել, որ հանրային ծառայությունն ավելի շուտ կառավարչական, քան իրավական հասկացություն է: Նման եզրահանգման հիմք են տալիս դրա հետևյալ հատկանիշները՝

1) հանրային ծառայություններ մատուցող սուբյեկտի առկայությունը (որպես այդպիսին կարող է հանդես գալ ինչպես պետական

մարմինը, այնպես էլ մասնավոր իրավունքի սուբյեկտը),

2) հանրային ծառայությունները մատուցվում են պետա-իշխանական սուբյեկտներ չհանդիսացող անձանց, այսինքն՝ քաղաքացիներին և իրավաբանական անձանց,

3) հանրային ծառայությունները մատուցվում են հանրային կառավարման սուբյեկտի կողմից՝ պոզիտիվ պետական կառավարման իրականացման շրջանակներում, որն իրավասու է ընտրություն կատարել հանրային ծառայության մատուցման հանրային-իրավական և մասնավոր-իրավական կազմակերպական ձևերի միջև.

4) պետության կողմից հանրային ծառայությունների մատուցման արդյունքը քաղաքացիների արժանավայել կենսամակարդակի ապահովումն է և, վերջնարդյունքում, պետությունն, իր բնույթով, դառնում է սոցիալական:

Ներկայումս տեղի է ունենում հանրային ծառայությունների մատուցման պետական գործառույթի «մասնատում»՝ հանրային ծառայությունների անմիջական մատուցման գործառույթը փոխանցվում է մասնավոր իրավունքի սուբյեկտներին, իսկ իրավական կարգավորման և վերահսկողության գործառույթը պահպանում են պետական մարմինները:

Հանրային ծառայությունների ոլորտում կարգավորումը պետական քաղաքականության մի մասն է, որի նպատակն է կարգավորող մարմնի կողմից օրենքներով սահմանված իր իրավունքների և պարտականությունների իրականացմամբ հավասարակշռել սպառողների և հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերը, կարգավորվող անձանց համար ստեղծել գործունեության միատեսակ պայմաններ, նպաստել մրցակցային շուկաների ձևավորմանն ու զարգացմանը և խթանել ռեսուրսների արդյունավետ օգտագործումը:

Հանրային ծառայությունների ոլորտը ներառում է՝

1) *էներգետիկայի բնագավառը,* որն, իր հերթին, ներառում է էլեկտրաէներգետիկական, ջերմամատակարարման, գազամատակարարման համակարգերը,

2) *ջրային համակարգը,* որն, իր հերթին, ներառում է խմելու, ոռոգման, արդյունաբերական ջրի մատակարարումը, ջրահեռացումը և կեղտաջրերի մաքրումը,

3) *հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) բնագավառը,*

4) *փոստային կապի բնագավառը,*

5) *երկաթուղային տրանսպորտի բնագավառը*՝ենթակառուցվածքի օգտագործման վճարների հաշվարկման մեթոդաբանության, օգտագործման վճարի հաշվարկի իրականացման և օգտագործման վճարի հաստատման մասով,

6) *տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման բնագավառը*՝միայն սակագների մասով:

Հանրային ծառայությունների ոլորտում ծագող հարաբերությունները կարգավորվում են «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքով (25.12.03), ՀՀ ջրային օրենսգրքով (04.06.02), «Էներգետիկայի մասին» (07.03.01), «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» (08.07.05), «Փոստային կապի մասին» (14.12.04) ՀՀ օրենքներով, այլ օրենքներով և իրավական ակտերով:

Հանրային ծառայությունների ոլորտում կարգավորումն իրականացնում է *ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը,* որն ունի 5 անդամ՝ նախագահ, նախագահի տեղակալ և երեք անդամ: Հանձնաժողովի անդամներին նշանակում է ՀՀ Նախագահը՝ վարչապետի ներկայացմամբ՝ տարեկան ռոտացիոն սկզբունքով (յուրաքանչյուր տարի հանձնաժողովի մեկ անդամի նշանակմամբ), 5 տարի պաշտոնավարման ժամկետով: Հանձնաժողովի նախագահը և նրա տեղակալը նշանակվում են Հանրապետության Նախագահի կողմից՝ վարչապետի ներկայացմամբ: Ընդ որում՝ հանձնաժողովի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում, նոր անդամը նշանակվում է սահմանված ժամկետի մնացած ժամանակահատվածի համար: Եթե պաշտոնավարման մնացած ժամկետը պակաս է 1 տարուց, ապա հանձնաժողովի նոր անդամի պաշտոնավարման ժամկետը սահմանվում է 5 տարի՝ գումարած մնացած ժամանակահատվածը:

Հանձնաժողովի անդամ կարող են նշանակվել բարձրագույն կրթություն, կառավարման ոլորտում աշխատանքային փորձ ունեցող ՀՀ քաղաքացիները, որոնք իրենց մասնագիտական կարողություններով ի վիճակի են ապահովել օրենքներով և իրավական այլ ակտերով սահմանված պարտականությունների կատարումը: Հանձնաժողովի

անդամի պաշտոնավարման առավելագույն տարիքը 65 տարին է:

Հանձնաժողովի նախագահը համակարգում և ապահովում է հանձնաժողովի ու դրա աշխատակազմի աշխատանքը, հրավիրում և նախագահում է հանձնաժողովի նիստերը, ստորագրում է հանձնաժողովի որոշումներն ու նիստերի արձանագրությունները, իր իրավասությունների շրջանակում արձակում հրամաններ և ներկայացնում հանձնաժողովը Հայաստանի Հանրապետությունում, այլ պետություններում, միջազգային կազմակերպություններում, հանձնաժողովի անունից ստորագրում է փաստաթղթեր: Հանձնաժողովի նախագահի բացակայության կամ պաշտոնեական պարտականությունները կատարելու անհնարինության դեպքում նրան փոխարինում է հանձնաժողովի նախագահի տեղակալը, իսկ վերջինիս բացակայության կամ պաշտոնեական պարտականությունները կատարելու անհնարինության դեպքում՝ հանձնաժողովի այն անդամը, ով ավելի երկար է աշխատում այդ պաշտոնում:

Հանձնաժողովի իրավասության մեջ են մտնում՝

1) գործունեության լիցենզավորումը, լիցենզիայի պայմանների սահմանումը և դրանց վերահսկումը,

2) կարգավորող մարմին հաշվետվություն ներկայացնելու նպատակով լիցենզիա ստացած անձանց համար հաշիվների, ենթահաշիվների ներդրումը,

3) կարգավորվող սակագների սահմանումը,

4) գործունեության լիցենզիա ունեցող անձանց միջև էներգիայի և (կամ) բնական գազի մատակարարման (ծառայությունների մատուցման), ինչպես նաև սպառողների հետ կնքվող էներգիայի և (կամ) բնական գազի մատակարարման (առուվաճառքի) պայմանագրերի օրինակելի ձևերի կամ պարտադիր պայմանների սահմանումը, գործունեության լիցենզիա ունեցող անձանց միջև կնքված պայմանագրերի գրանցումը,

5) շուկայի կանոնների և կարգերի սահմանումը,

6) սույն ոլորտին վերաբերող իրավական ակտերի ընդունումը և դրանց կատարման վերահսկողությունը,

7) սպասարկման որակի նկատմամբ պահանջների սահմանումը,

8) գործունեության լիցենզիա ունեցող անձանց կողմից ներկայացվող զարգացման ներդրումային ծրագրերի ուսումնասիրումը՝ ա-

պագա սակագներում ներդրումների (լրիվ կամ մասնակի) ներառման կամ մերժման նպատակով:

Հանձնաժողովն իր իրավասության շրջանակում ընդունում է որոշումներ՝ բաց քվեարկությամբ: Որոշումներն ընդունվում են նիստերի միջոցով, որոնք դռնբաց են, բացառությամբ այն դեպքերի, երբ քննարկվում են պետական կամ ծառայողական գաղտնիք պարունակող կամ հանձնաժողովի ներքին կանոնակարգային հարցեր: Հանձնաժողովի նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան ամիսը 1 անգամ: Հանձնաժողովն իր սահմանած կարգի համաձայն հայտարարում է նիստերի անցկացման տեղը և ժամանակը, հնարավորություն է ընձեռում շահագրգիռ անձանց և հասարակության ներկայացուցիչներին մասնակցելու նիստերին, ստանալու օրակարգը և քննարկվող նյութերը, ներկայացնելու տեղեկություններ և հանդես գալու ելույթներով: Եթե հանձնաժողովի նիստում քննարկվում են սպառողների համար սահմանվող սակագները, դրանց հաշվարկման մեթոդիկաները, սպառողների սպասարկման որակին և պայմաններին վերաբերող հարցեր, ապա հանձնաժողովն այդ մասին ողջամիտ ժամկետներում իրազեկում է ՀՀ կառավարությանը և սպառողների շահերը պաշտպանող կազմակերպություններին՝ հնարավորություն ընձեռելով նրանց ներկայացուցիչներին մասնակցել նիստերին, հանդես գալ ելույթներով և առաջարկություններով:

Հանձնաժողովի իրավական ակտերը կարող են *բողոքարկվել* դատական կարգով: Հանձնաժողովի սահմանած սակագնի մեծությունը դատական կարգով կարող է բողոքարկվել սակագնի մեծությունը սահմանող հանձնաժողովի իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից՝ 7-օրյա ժամկետում: Դատական կարգով բողոքարկումը չի կասեցնում սակագնի մեծությունը սահմանող հանձնաժողովի իրավական ակտի գործողությունը: Սակագնի մեծությունը դատական կարգով բողոքարկվելու դեպքում դատարանը ստուգում է դրա համապատասխանությունն օրենքներին: Օրենքների խախտման փաստի առկայության դեպքում դատարանն ընդունում է հանձնաժողովի կողմից սակագնի սահմանման մասին նոր որոշում ընդունելու առաջարկության վերաբերյալ վճիռ՝ մատնանշելով հանձնաժողովի իրավական ակտի օրենքների պահանջներին համապատասխանեցնելու անհրաժեշտությունը՝ իրավակարգավորման այնպիսի միջոցների

միաժամանակյա գործադրմամբ, որոնք հանձնաժողովին հնարավորություն կտան ողջամիտ ժամկետում ընդունելու սակագնի սահմանման մասին նոր որոշում: Հանձնաժողովը, քննարկելով դատարանի վճիռը, ընդունում է համապատասխան որոշում: Ընդ որում՝ հանձնաժողովի սահմանած սակագների մեծությունները դատական կարգով փոփոխման ենթակա չեն:

§2. Տնտեսական մրցակցության պետական կառավարումը

Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են տնտեսական գործունեության ազատությունն ու ազատ տնտեսական մրցակցությունը (ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի 2-րդ մաս), որոնք նախադրյալ և պայման են ազատ քաղաքացիական հասարակության կայուն գոյության համար, մարդու ազատության տնտեսական հիմքն են:

Շուկայական տնտեսությունում ապրանքների և ծառայությունների գները որոշվում են ազատ՝ արտադրողների առաջարկի և սպառողների պահանջարկի հիման վրա: Տնտեսական օրինաչափությունները պահանջում են, որ սեփականատերերը լինեն ազատ ու ինքնուրույն և առանց պետական միջամտության որոշեն, թե ինչ են արտադրելու, ինչ քանակով ու ինչ գներով են իրացնելու շուկայում: Սակայն շուկայական տնտեսությունը երբեմն կարող է վերածվել քաոսի: Այստեղ արդեն կարևորվում է պետության դերը, որը, պահպանելով շուկայական տնտեսության հիմունքները, ստանձնում է տնտեսության կարգավորման գործառույթը: Պետությունը սահմանում է տնտեսական կյանքը կարգավորող իրավական նորմերը՝ մի կողմից ամրագրելով և երաշխավորելով շուկայական տնտեսության համակարգի հիմունքները, իսկ մյուս կողմից՝ որոշելով «խաղի կանոնները» տնտեսվարող առանձին սուբյեկտների համար:

Ձեռնարկատիրոջ ազատությունը չպետք է ծնի կամայականություն: Ուստի պետությունը պետք է պաշտպանի սպառողների շահերը[1], ընդունի օրենքներ, որոնք կոչված են կանխելու հնարավոր չարա-

[1] Պետությունը պաշտպանում է սպառողների շահերը, իրականացնում օրենքով նախատեսված միջոցառումներ՝ ապրանքների, ծառայությունների և աշխատանքների որակի վերահսկողության ուղղությամբ (ՀՀ Սահմ. 31.1 հոդված):

շահումները ձեռներեցների կողմից, իր ձեռքում պահի անհրաժեշտ կարգավորիչ տնտեսական լծակները:

Այն միջավայրը, որտեղ իրականացվում է ձեռնարկատիրական գործունեություն, շուկայում տնտեսական հարաբերություններն են, որոնց պարտադիր պայմաններից է ազատ մրցակցությունը: Պետությունը պետք է ապահովի ազատ մրցակցություն, թույլ չտա որևէ ապրանքի արտադրության կամ ծառայության մատուցման մենաշնորհ[1]: Մրցակցության միջոցով արդյունավետորեն ներդաշնակվում է ձեռնարկատերերի անհատական գործունեությունը՝ առանց հարկադրանքի և իշխանությունների միջամտության[2]:

Տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտի հարաբերությունները կարգավորվում են ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» (06.11.00), «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» (26.06.01) ՀՀ օրենքներով, այլ օրենքներով և իրավական ակտերով:

Տնտեսական մրցակցություն կամ մրցակցություն է ապրանքների իրացման կամ ձեռքբերման առավել նպաստավոր պայմանների ապահովմանն ուղղված տնտեսական գործունեությունը, որի արդյունքում օբյեկտիվորեն սահմանափակվում են տվյալ ապրանքային շուկայում ապրանքների շրջանառության ընդհանուր պայմանների վրա մրցակիցներից յուրաքանչյուրի միակողմանի ազդելու հնարավորությունները[3]:

Հայաստանի Հանրապետությունում տնտեսական մրցակցութ-

---

[1] Շուկայում մենաշնորհի կամ գերիշխող դիրքի չարաշահումը և անբարեխիղճ մրցակցությունն արգելվում են: Մրցակցության սահմանափակումը, մենաշնորհի հնարավոր տեսակները և դրանց թույլատրելի չափերը կարող են սահմանվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է հանրության շահերի պաշտպանության համար (ՀՀ Սահմանադրության 33.1-րդ հոդված):

[2] Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, ընդհ. խմբ. Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, «Իրավունք», 2010թ., էջեր 121-122:

[3] «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը: Օրենքի նպատակն է պաշտպանել և խրախուսել ազատ տնտեսական մրցակցությունը, ապահովել բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր, նպաստել ձեռնարկատիրության զարգացմանը և սպառողների շահերի պաշտպանությանը Հայաստանի Հանրապետությունում:

յան պաշտպանության բնագավառում պետական քաղաքականության իրականացման նպատակով գործում է ***տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը, որի խնդիրներն են՝***

1) ձեռնարկատիրության զարգացման և սպառողների շահերի պաշտպանության նպատակով տնտեսական մրցակցության պաշտպանումն ու խրախուսումը,

2) բարեխիղճ և ազատ մրցակցության համար անհրաժեշտ միջավայրի ապահովումը,

3) հակամրցակցային գործունեության կանխարգելումը, սահմանափակումը և նախազգուշացումը,

4) տնտեսական մրցակցության պաշտպանության նկատմամբ վերահսկողությունը:

Վերը նշված խնդիրներն իրականացնելու համար Հանձնաժողովը կատարում է մի շարք ***գործառույթներ,*** որոնցից են՝

1) տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացումը,

2) տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտման դեպքերի քննարկումը և որոշումների ընդունումը,

3) տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտման դեպքերի կապակցությամբ դատարան դիմելը,

4) սույն բնագավառում պետական քաղաքականությունը կարգավորող իրավական ակտերի մշակմանը մասնակցությունը,

5) մասնակցությունն իր իրավասությանը վերաբերող հարցերի շուրջ միջպետական համաձայնագրերի կնքմանը,

6) տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտումները կանխող միջոցառումների մշակումը և իրականացումը,

7) տնտեսական մրցակցությանն առնչվող հարցերի, այդ թվում՝ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի դրույթներին հանրությանն իրազեկելու ուղղությամբ միջոցառումների իրականացումը:

Իր խնդիրներն ու գործառույթներն իրականացնելիս Հանձնաժողովն անկախ է պետական այլ մարմիններից:

Հանձնաժողովը, մասնավորապես, ***իրավունք է՝***

1) ընդունելու որոշումներ և իրականացնելու վերահսկողություն դրանց կատարման (պահպանման) նկատմամբ,

2) տնտեսվարող սուբյեկտի կողմից ներկայացված տեղեկատվության արժանահավատության, տնտեսվարող սուբյեկտի փաստացի գործունեության բացահայտման կամ Հանձնաժողովի որոշման կատարման նկատմամբ վերահսկողության նպատակով իրականացնելու ստուգում, ուսումնասիրություն և (կամ) դիտանցում[1],

3) դիմելու դատարան «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի խախտումների վերաբերյալ, այդ թվում՝ պետական մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց ընդունած ակտերը, տնտեսվարող սուբյեկտների՝ օրենքի խախտմամբ կնքված պայմանագրերը լրիվ կամ մասնակի անվավեր ճանաչելու, ինչպես նաև այդ պայմանագրերի փոփոխման կամ լուծման պահանջով,

4) դիմելու ՀՀ կառավարությանը՝ պետական մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց՝ վերը նշված օրենքին հակասող գործողությունները կամ վարքագիծը դադարեցնելու միջնորդությամբ,

5) տալու նախազգուշացում՝ խախտումները շտկելու և (կամ) հետագայում բացառելու հանձնարարությամբ, նշանակել տուգանք՝ խախտումները շտկելու և (կամ) հետագայում բացառելու և տուգանքը վճարելու հանձնարարությամբ՝ սահմանելով հանձնարարության կատարման ժամկետ,

6) տալու պարզաբանումներ տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենսդրության կիրառման հետ կապված հարցերի վերաբերյալ:

Հանձնաժողովի կազմում ընդգրկված են հանձնաժողովի նախագահը, նրա տեղակալը և 5 անդամներ, որոնց նշանակում է ՀՀ Նախագահը՝ 5 տարի ժամկետով:

Հանձնաժողովի անդամի լիազորությունների վաղաժամկետ դա-

---

[1] *Դիտանցումը* տնտեսվարող սուբյեկտի կողմից իրացվող կամ ձեռքբերվող ապրանքի գնի, որակի, քանակի, այլ բնութագրերի, տնտեսվարող սուբյեկտի փաստացի գործողությունների կամ վարքագծի բացահայտման նպատակով տնտեսվարող սուբյեկտի գործունեության վայրում (այդ թվում՝ առևտրի օբյեկտում) իրականացվող դիտարկումն է:

դարեցման դեպքում ՀՀ Նախագահը 10 օրվա ընթացքում նշանակում է նոր անդամ՝ 5 տարի ժամկետով: Հանձնաժողովի անդամի լիազորությունների ժամկետը լրանալուց հետո նա կարող է կրկին նշանակվել որպես Հանձնաժողովի անդամ:

Հանձնաժողովի նախագահն իր իրավասության շրջանակներում ներկայացնում է Հանձնաժողովը Հայաստանի Հանրապետությունում, այլ պետություններում և միջազգային կազմակերպություններում, ղեկավարում և համակարգում է Հանձնաժողովի բնականոն գործունեությունը, խորհրդակցական ձայնի իրավունքով կարող է մասնակցել ՀՀ կառավարության նիստերին և քննարկվող հարցերի վերաբերյալ հայտնել գրավոր կարծիք, որը ներառվում է նիստի արձանագրության մեջ, հրավիրում և նախագահում է Հանձնաժողովի նիստերը, հաստատում նիստի օրակարգը, ստորագրում է Հանձնաժողովի որոշումները և նիստերի արձանագրությունները, դատարանում հանդես է գալիս Հանձնաժողովի անունից, տալիս է Հանձնաժողովի անունից հանդես գալու լիազորագրեր, ընդունում է հրամաններ, իրականացնում վերը նշված օրենքով, այլ իրավական ակտերով և Հանձնաժողովի կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

Հանձնաժողովն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի միջոցով: Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում են անդամներից առնվազն հինգը: Հանձնաժողովի նիստում որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ: Ձայների հավասար բաշխման դեպքում Հանձնաժողովի նախագահի կամ նրան փոխարինող անձի ձայնը որոշիչ է:

Հանձնաժողովի որոշումը տնտեսվարող սուբյեկտների, պետական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց կողմից ենթակա է կատարման՝ որոշման մեջ նշված ժամկետում: Հանձնաժողովն իր որոշման չկատարման դեպքում իրավասու է հայցով դիմել դատարան: Հանձնաժողովի որոշման բողոքարկումը չի կասեցնում դրա գործողությունը (կատարումը):

§3. Անշարժ գույքի կադաստրի պետական կառավարումը

Անշարժ գույքի պետական միասնական կադաստրը Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքի համար վարվող և կադաստրային քարտեզներում (հատակագծերում) անշարժ գույքի միավորների[1] սահմանների նկարագրության վրա հիմնված անշարժ գույքի մասին տեղեկությունների համակարգված միասնական պետական ռեեստրն է:

Սույն ոլորտում ծագող հարաբերությունները կարգավորվում են ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին»[2], «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» (04.10.05), «Գույքահարկի մասին» (26.12.02), «Հողի հարկի մասին» (27.04.94) ՀՀ օրենքներով, ՀՀ հողային օրենսգրքով (02.05.01), «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» (10.06.08), «Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» (02.05.01) ՀՀ օրենքներով, այլ օրենքներով և իրավական ակտերով:

Մասնավորապես՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված են գույքի նկատմամբ իրավունքների, դրանց սահմանափակումների պետական գրանցման, գույքի, դրա նկատմամբ իրավունքների, սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման, գրանցում իրականացնող մարմնի իրավունքների և պարտականությունների իրավական հիմքերը, գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման վարույթի առանձնահատկությունները, ինչպես նաև կարգավորված են շարժական գույքի գրավի իրավունքի, լիզինգի պայմանագրով վարձակալության իրա-

---

[1] *Անշարժ գույքի միավորը* միասնական տարածական ամբողջություն կազմող գույքի մասն է, որը հանդիսանում է մեկ, իսկ ընդհանուր սեփականության դեպքում՝ մեկից ավելի անձանց սեփականության կամ այլ գույքային իրավունքների օբյեկտ («Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» (14.04.99) ՀՀ օրենքի 2-րդ հոդված):

[2] ««Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» 23.06.2011թ. ՀՀ օրենքով 14.04.1999թ. ՀՕ-295 օրենքը շարադրվել է նոր խմբագրությամբ:

վունքի պետական գրանցման հետ կապված իրավահարաբերությունները:

Գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցումը, գույքի և դրա նկատմամբ իրավունքների և սահմանափակումների մասին տեղեկատվության տրամադրումն իրականացնում է ՀՀ կառավարության կողմից լիազորված անշարժ գույքի պետական միասնական կադաստր վարող պետական կառավարման հանրապետական մարմինը՝ *անշարժ գույքի պետական ռեգիստրը*՝ իր առանձնացված (տարածքային) ստորաբաժանումների միջոցով[3]: Ռեգիստրը մշակում և իրականացնում է ՀՀ տարածքում անշարժ գույքի շուկայի բնագավառում ընդհանուր քաղաքականությունը, գույքի վերաբերյալ տեղեկատվական համակարգի ստեղծումը, համակարգի գործունեության կառավարումն ու վերահսկումը, իրականացնում օրենսդրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

ՀՀ անշարժ գույքի պետական ռեգիստրի ղեկավարին պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում է ՀՀ Նախագահը՝ վարչապետի առաջարկությամբ:

Գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների՝ դրանց ծագման, դադարման, փոխանցման կամ փոփոխման պետական գրանցման, ինչպես նաև անշարժ գույքի միասնական կադաստրի տեղեկատվության տրամադրման համար մատուցվող ծառայությունների համար պետական բյուջե է գանձվում վճար՝ օրենքով սահ-

---

[3] *Տարածքային ստորաբաժանումները* ստեղծվում են անշարժ գույքի պետական ռեգիստրի ղեկավարի կողմից և վերջինիս կողմից սահմանված տարածքում իրականացնում են գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման, անշարժ գույքի պետական միասնական կադաստրի տեղեկատվության տրամադրման, անշարժ գույքի պետական ռեգիստրի գործառույթների իրականացման դիմումների ընդունման, այդ գործառույթների արդյունքում կազմված փաստաթղթերի տրամադրման, ինչպես նաև օրենսդրությամբ նախատեսված այլ գործառույթներ (Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մաս):
Տարածքային ստորաբաժանումներում պետական գրանցումն իրականացնում են ի պաշտոնե պետական գրանցում կատարելու լիազորություն ունեցող պաշտոնատար անձինք: Այդ պաշտոնների ցանկը սահմանում է անշարժ գույքի պետական ռեգիստրի ղեկավարը: Պետական գրանցում կատարելու լիազորություն ունեցող պաշտոնատար անձանց արգելվում է գրանցել իրենց կամ իրենց մերձավոր ազգականների (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր) անվամբ գույքի նկատմամբ իրավունքները (Օրենքի 23-րդ հոդված):

մանված չափերով՝ գանձապետարանում բացված համապատասխան հաշվին (Օրենքի 71, 73-րդ հոդվածներ)[4]:

Անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարման բնագավառում ՀՀ կառավարության քաղաքականությունը մշակում և իրականացնում է *ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն*՝ որպես գործադիր իշխանության հանրապետական մարմին: Կոմիտեն ստեղծվում, վերակազմակերպվում և դրա գործունեությունը դադարեցվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ ՀՀ Նախագահի հրամանագրի հիման վրա:

Կոմիտեի ***նպատակներից և խնդիրներից են***՝

1) ՀՀ օրենսդրությանը համապատասխան՝ անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարումն ու կադաստրի համակարգի գործունեության ապահովումը,

2) պետության կողմից գույքի նկատմամբ իրավունքների ճանաչումը, երաշխավորումը և պաշտպանությունը,

3) անշարժ գույքի շուկայի կայացմանն աջակցությունը,

4) գույքի և դրա նկատմամբ իրավունքների ու սահմանափակումների, գեոդեզիայի և քարտեզագրության մասին տեղեկատվական համակարգերի ստեղծումն ու ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկատվության կառավարումը, տվյալների մատչելիության, օբյեկտիվության և անընդհատության ապահովումը,

5) իր իրավասության սահմաններում հողային քաղաքականության, հողային ռեսուրսների կառավարման սկզբունքների մշակումը, հողօգտագործման բնագավառում պետական տեսչական վերահսկողության իրականացումը:

Կոմիտեի իրականացրած ***գործառույթներից են***՝

1) գույքի նկատմամբ իրավունքների, սահմանափակումների և օգտագործման նկատմամբ սահմանափակումների պետական գրանցման իրականացումը,

2) օրենսդրությանը համապատասխան՝ անշարժ գույքի պետական հաշվառումը, օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ հողային ֆոնդի հողային հաշվեկշռի կազմումը,

---

[4] Պետական գրանցման և տեղեկատվության տրամադրման վճարների մասով արտոնությունները սահմանված են Օրենքի 75-րդ հոդվածում:

3) օրենսդրությանը համապատասխան՝ անշարժ գույքի կադաստրային գնահատումը, հողի հարկի, գույքահարկի բազայի ստեղծումը, բազմաբնույթ կադաստրների վարման նպատակով անշարժ գույքի՝ հողերի, շենքերի, շինությունների գնահատման մեթոդիկայի մշակմանը մասնակցությունը,

4) անշարժ գույքի պետական համակարգված դիտարկումների (մոնիտորինգի) կազմակերպումը և իրականացումը, անշարժ գույքի շուկայի վերլուծությունը և տեղեկատվության հրապարակումը,

5) անշարժ գույքի և դրա նկատմամբ իրավունքների, սահմանափակումների մասին տեղեկատվական բանկի ստեղծումը և կառավարումը, կադաստրային գործերի և պետական գրանցման փաստաթղթերի պահպանումը,

6) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի կազմման համար անշարժ գույքի մասին տեղեկատվության տրամադրումը, կազմված նախագծերի և դրանց ճարտարապետահատակագծային առաջադրանքների մասին, ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում, եզրակացությունների տրամադրումը,

7) բնագավառի գործունեությունը կարգավորող օրենսդրական և այլ իրավական ակտերի նախագծերի, նորմատիվ փաստաթղթերի (պետական ստանդարտներ, հրահանգներ, մեթոդական ցուցումներ և այլն) մշակումը,

8) իր իրավասության սահմաններում օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության ապահովումը, անշարժ գույքի կադաստրի ծրագրերի իրականացումը,

9) իր իրավասության սահմաններում ՀՀ վարչատարածքային միավորների և պետական սահմանի սահմանագծման (դելիմիտացիա) ու սահմանազատման (դեմարկացիա) աշխատանքներին մասնակցությունը[5]:

---

[5] ««Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը, գույքի կազմը և չափը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի N 1930-Ն որոշումը:

Կոմիտեն կառավարում է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահը, որին պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում է ՀՀ Նախագահը՝ վարչապետի առաջարկությամբ: Կոմիտեի նախագահը հաշվետու է ՀՀ Նախագահին, կառավարությանը և վարչապետին:

Կոմիտեի նախագահը՝

1) ղեկավարում է կոմիտեի ընթացիկ գործունեությունը և պատասխանատու է կոմիտեի առջև դրված խնդիրների ու գործառույթների իրականացման համար,

2) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ և տալիս ցուցումներ, առանց լիազորագրի հանդես է գալիս ՀՀ կամ կոմիտեի անունից, ինչպես նաև տալիս է ՀՀ կամ կոմիտեի անունից հանդես գալու լիազորագրեր,

3) օրենքով սահմանված կարգով նշանակումներ է կատարում կոմիտեի քաղաքացիական ծառայության բարձրագույն պաշտոններում, գլխավոր պաշտոնների 1-ին ենթախմբի պաշտոններում, ինչպես նաև այդ պաշտոնները զբաղեցնող քաղաքացիական ծառայողների նկատմամբ կիրառում է խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցներ,

4) պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է իր խորհրդականներին, մամուլի քարտուղարին ու օգնականներին, տարածքային (առանձնացված) ստորաբաժանումների ղեկավարներին, որոնց միջև սահմանում է պարտականությունների բաշխումը,

5) սահմանում է տարածքային (առանձնացված) ստորաբաժանումների կողմից սպասարկվող տարածքները,

6) իր լիազորությունների սահմաններում կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում կոմիտեի աշխատակազմի ղեկավարի, աշխատակազմի տարածքային (առանձնացված) ստորաբաժանումների ղեկավարների՝ ՀՀ օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, հանձնարարագրերը, կարգադրություններն ու ցուցումները,

7) ՀՀ կառավարության հաստատմանն է ներկայացնում կոմիտեի կանոնադրությունն ու աշխատակազմի կառուցվածքը,

8) իրականացնում է այլ լիազորություններ:

Անշարժ գույքի պետական ռեգիստրի առանձնացված ստորա-

բաժանումներ են *սպասարկման գրասենյակները*, որոնք իրականացնում են անշարժ գույքի պետական ռեգիստրի գործառույթների իրականացման համար դիմումների ընդունումը և այդ գործառույթների արդյունքում կազմված փաստաթղթերի տրամադրումը:

§4. Ազգային վիճակագրության պետական կառավարումը

Պետական վիճակագրությունը պետական վիճակագրություն իրականացնող մարմնի՝ Ազգային վիճակագրական ծառայության և դրա տարածքային ու գործառնական ստորաբաժանումների կողմից վարվող գործունեությունն է՝ պետական վիճակագրական աշխատանքների եռամյա[1] և տարեկան ծրագրերին համապատասխան:

Պետական վիճակագրությանը ներկայացվող պահանջներն են՝

1) վիճակագրության օբյեկտիվությունը, հիմնավորվածությունը, անաչառությունը,

2) վիճակագրական տվյալների արժանահավատությունը, ճշտությունը, համադրելիությունը ժամանակի և տարածության մեջ, անանունությունը,

3) վիճակագրական տեղեկատվության արդիականությունը, կայունությունը և ամբողջականությունը,

4) միջազգայնորեն ընդունված վիճակագրական չափանիշների և նորմերի հետ համադրելիությունը,

5) միջազգայնորեն ընդունված ազգային հաշիվներին վիճակագրական ցուցանիշների համապատասխանությունը,

6) վիճակագրական ամփոփ տվյալների պարբերական հրապարակումը,

7) վիճակագրական տեղեկատվության մատչելիությունը, հրապարակայնությունը[2]:

Հայաստանի Հանրապետությունում պետական վիճակագրության ոլորտին առնչվող հարաբերությունները կարգավորվում են «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք),

---

[1] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության 2010-2012 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագիրը հաստատելու մասին» 17.11.2009թ. ՀՀ օրենքը:

[2] «Պետական վիճակագրության մասին» 04.04.2000թ. ՀՀ օրենքի 5-րդ հոդված:

«Մարդահամարի մասին» ՀՀ օրենքով (12.10.99), այլ օրենքներով և իրավական ակտերով:

Պետական վիճակագրություն իրականացնող մարմինը հանրային շահին ուղղված գործառույթներ իրականացնող մարմին է, որն իր խնդիրներն իրականացնելիս անկախ է ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից:

Ազգային վիճակագրական ծառայությունն իրականացնում է պետական վիճակագրական աշխատանքը և համակարգում է այն ՀՀ տարածքում: ***Ծառայության խնդիրներից են՝***

1) տնտեսական և հասարակական գործընթացների ու դրանց արդյունքների վերաբերյալ վիճակագրական տեղեկատվության համակարգի կազմակերպումը, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, իրավաբանական անձանց, հիմնարկներին ու միջազգային կազմակերպություններին, ինչպես նաև հանրությանը սահմանված կարգով տեղեկատվությամբ ապահովումը,

2) միջազգային կազմակերպությունների կողմից ընդունված չափանիշներին համապատասխան վիճակագրության միասնական մեթոդաբանության ապահովումը,

3) պետական վիճակագրական ռեգիստրի վարումը,

4) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև պետական վիճակագրական աշխատանքների ծրագրում նշված կազմակերպություններին՝ վիճակագրական տեղեկատվության սեփական բազաներ ստեղծելուն աջակցությունը,

5) պետական ամփոփ վիճակագրական տեղեկատվության մատչելիության ապահովումը,

6) օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով՝ մարդահամարների անցկացումը[3]:

Ծառայությունն, իր խնդիրներին համապատասխան, իրականացնում է մի շարք *գործառույթներ.* մասնավորապես՝

---

[3] ««Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2002թ. հուլիսի 26-ի N 110-Ն որոշումը:

1) կատարում է պետական վիճակագրական աշխատանքներ՝ պետական վիճակագրական աշխատանքների ծրագրերին համապատասխան,

2) իրականացնում է վիճակագրական դիտարկումներ,

3) ՀՀ վիճակագրության պետական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) կողմից սահմանված ձևի փաստաթղթերի միջոցով հավաքագրում է վիճակագրական տեղեկատվություն,

4) ստանում է վիճակագրական տվյալներ վիճակագրական տեղեկություններ տրամադրողներից՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով,

5) կարող է պատրաստել և ներկայացնել համապատասխան եզրակացություններ և առաջարկություններ սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական գործընթացների վերլուծության հիման վրա,

6) իրականացնում է ստուգումներ, խախտումների հայտնաբերման դեպքում դրանց վերացման նպատակով տալիս անհրաժեշտ հրահանգներ և կատարում համապատասխան ուղղումներ սկզբնական և ամփոփ վիճակագրական տվյալներում,

7) կնքում է համագործակցության պայմանագրեր այլ պետությունների վիճակագրություն իրականացնող մարմինների և միջազգային վիճակագրական կազմակերպությունների հետ,

8) անվճար ապահովում է պետական վիճակագրական տեղեկություններ տրամադրողներին վիճակագրական հաշվետվությունների ձևերով և դրանց լրացման հրահանգներով, նրանց տեղյակ պահում վիճակագրական հաշվետվությունների ներկայացման ժամկետների պարբերականության և ներկայացվող պահանջների մասին:

Պետական վիճակագրություն իրականացնող մարմինը վարում է վիճակագրական տեղեկություններ տրամադրողների վիճակագրական *ներքին ռեգիստրներ:* Ծառայությունը ստեղծում և վարում է *բիզնես (ձեռնարկատիրական) - ռեգիստր*[4], ինչն իրականացվում է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի հիման վրա:

Ծառայության տարածքային ստորաբաժանումները ստեղծվում

[4] Այն Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձանց իրական գտնվելու վայրի, գործունեության հիմնական և ոչ հիմնական տեսակների, աշխատողների թվաքանակի և Խորհրդի կողմից սահմանված լրացուցիչ այլ ցուցանիշների մասին մշտական արդիականացման ենթակա տվյալների բազա է:

են ՀՀ մարզային բաժանմանը համապատասխան: Առանձին գործառնությունների իրականացման համար Խորհրդի որոշմամբ կարող են ստեղծվել գործառնական ստորաբաժանումներ, առանձին գործառնական լիազորություններ վերապահվել Ծառայության տարածքային ստորաբաժանումներին: Ծառայության տարածքային և գործառնական ստորաբաժանումների ղեկավարներին նշանակում և ազատում է Ծառայության նախագահը, իսկ աշխատակիցներին՝ ստորաբաժանումների ղեկավարները:

Ծառայությունը ղեկավարում է դրա *նախագահը,* որը պաշտոնի է նշանակվում և պաշտոնից ազատվում է ՀՀ Նախագահի կողմից՝ 6 տարի ժամկետով: Նա խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է ՀՀ կառավարության նիստերին և կարող է կարծիք հայտնել քննարկվող հարցերի վերաբերյալ: Նա է կազմակերպում պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի կատարումը, ներկայացնում Ծառայությունը ներքին և արտաքին հարաբերություններում, իրականացնում օրենքով սահմանված այլ լիազորություններ:

Ազգային վիճակագրական ծառայության նախագահը միաժամանակ հանդիսանում է Խորհրդի նախագահը: *Խորհուրդը* Ծառայության և դրա ստորաբաժանումների կառավարման բարձրագույն մարմինն է, որը, մասնավորապես, իրականացնում է պետական վիճակագրության բնագավառում քաղաքականության մշակումը, երկարաժամկետ միջոցառումների նախագծումը, կարգավորումը, կազմակերպումը, պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի իրագործման նկատմամբ վերահսկողությունը: Խորհուրդն ունի 7 անդամ, որոնք նշանակվում և ազատվում են ՀՀ Նախագահի կողմից՝ 6 տարի ժամկետով: Խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու դեպքում նոր նշանակումը կատարվում է ազատված անդամի պաշտոնավարման չլրացած ժամկետով:

Խորհրդի նիստերը գումարվում են Խորհրդի նախագահի կողմից՝ առնվազն ամիսը մեկ անգամ: Խորհրդի արտահերթ նիստ կարող է հրավիրվել դրա առնվազն 4 անդամի պահանջով: Խորհուրդն իրավասու է որոշումներ ընդունել, եթե նիստին ներկա են դրա անդամներից առնվազն 5-ը: Խորհրդի որոշումը համարվում է ընդունված, եթե դրան կողմ են քվեարկել Խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Խորհրդի որոշումները ստորագրվում են Խորհրդի նախագահի կողմից:

ՀՀ տարածքում պետական վիճակագրության իրագործման հիմքը պետական վիճակագրական աշխատանքների *ծրագիրն է:* Պետական վիճակագրական գործունեության ուղղությունները սահմանելու համար մշակվում է *եռամյա* ծրագիր, իսկ այդ ուղղությունների իրագործումն ապահովող միջոցառումների որոշման համար՝ *տարեկան* ծրագիր: Եռամյա ծրագիրը ներառում է պետական վիճակագրական գործունեության հիմնական ուղղություններն ըստ երկրի տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական և բնապահպանական բնագավառների, իսկ տարեկան ծրագիրը՝ մասնավորապես՝ վիճակագրական աշխատանքների ցանկը, դրանց կատարման ժամկետները, վիճակագրական ցուցանիշների տրամադրման պարբերականությունը, Ծառայության կողմից իրականացման ենթակա հետազոտությունների, հրատարակվելիք վիճակագրական ժողովածուների, տեղեկագրերի և այլ հրապարակումների ցանկն ու պարբերականությունը, վիճակագրական տեղեկատվության սպառողների ցանկը, անվճար տրամադրվող տեղեկատվության կազմն ու տրամադրման կարգը:

Եռամյա ծրագիրը հաստատում է Ազգային ժողովը՝ ՀՀ կառավարության ներկայացմամբ, իսկ տարեկան ծրագիրը՝ Խորհուրդը՝ Ծառայության նախագահի ներկայացմամբ: Եռամյա ծրագրի կատարման հաշվետվությունը Ազգային ժողով է ներկայացվում Խորհրդի կողմից՝ մինչև հաջորդ տարվա մայիսի 1-ը:

ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, այդ թվում՝ ՀՀ կենտրոնական բանկը՝ *որպես վարչական վիճակագրություն իրականացնող մարմիններ,* իրականացնում են ճյուղային (գերատեսչական) և տեղական (համայնքային) հաշվառում (վիճակագրություն)՝ *վարչական ռեգիստրների* վարման միջոցով, որոնք պետք է ներառեն առնվազն հետևյալ բաղադրիչները՝

1) պետական վիճակագրական աշխատանքների ծրագրում ընդգրկված՝ վիճակագրական տեղեկություններ տրամադրողների կողմից Ծառայությանը ներկայացվող անհրաժեշտ ցուցանիշները,

2) համայնքների անձնագրերի վարումը, ինչը ներառում է բնակչության թվաքանակի, սեռատարիքային և սոցիալական կազմի, համայնքում տեղաբաշխված մշակութային, կրթական և մարզական համալիրների (կառույցների), առողջապահության, բնակարանային կոմունալ տնտեսության, արտադրական ենթակառուցվածքների, հա-

մայնքի բյուջեի և այլ անհրաժեշտ տեղեկությունների վերաբերյալ մշտապես կուտակվող և պահպանվող ցուցանիշների համակարգը:

Պետական վիճակագրական աշխատանքների ծրագրով նախատեսված վարչական տեղեկատվության հավաքագրման մեթոդաբանությունը և փաստաթղթերի ձևերը սահմանվում են Խորհրդի կողմից:

Պետական վիճակագրական և վարչական դիտարկումների միջոցով հավաքագրված տեղեկությունների (տվյալների) ամբողջությունը կազմում է ՀՀ պետական վիճակագրական տեղեկատվության միասնական համակարգը (օրենքի 13-րդ հոդված):

Վարչական վիճակագրություն իրականացնող մարմիններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով *իրավունք ունեն* ստանալ վարչական ռեգիստրների վարման համար անհրաժեշտ տվյալներ և տեղեկություններ իրավաբանական անձանցից, պետական հիմնարկներից և անհատ ձեռնարկատերերից, ինչպես նաև հրապարակել իրենց կողմից իրականացված տեղեկատվական գործառույթների (վարչական բնույթի դիտարկումների) արդյունքները, այդ թվում՝ սկզբնական տվյալների տեսքով՝ նշելով սկզբնաղբյուրը: Միաժամանակ, վարչական վիճակագրություն իրականացնող մարմինները *պարտավոր են* դիտարկումների և այլ աշխատանքների իրականացման ժամանակ պահպանել ՀՀ օրենսդրության պահանջները:

Պետական վիճակագրության մասին օրենսդրության խախտումը վիճակագրական տեղեկություններ տրամադրողների, ինչպես նաև պետական վիճակագրություն իրականացնող մարմնի պաշտոնատար անձանց համար առաջացնում է վարչական կամ քրեական պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

§5. Պետական եկամուտների կառավարումը

Իր խնդիրների և գործառույթների իրականացման համար պետությանն անհրաժեշտ են դրամական միջոցներ, որոնք ապահովում են պետական գործունեության ֆինանսավորումը: Ուստի՝ պետության տնօրինմանն է անցնում երկրի ազգային եկամտի մի մասը՝ իրենց իրավաբանական բնույթով տարբեր մուտքերի տեսքով, որոնց հաշվին էլ ձևավորվում են պետական եկամուտները: Պետության ա-

պահովվածությունը ֆինանսական ռեսուրսներով պետական իշխանության համակարգի արդյունավետ գործելու և, որպես հետևանք, պետության կողմից իր խնդիրների և գործառույթների արդյունավետ իրականացման անհրաժեշտ պայմաններից է:

Հայաստանի Հանրապետությունում պետական եկամուտների ոլորտում ծագող հարաբերությունների կարգավորմանն են նպատակաուղղված մի շարք իրավական ակտեր: Դրանցից են «Հարկերի մասին» ՀՀ օրենքը (14.04.97), առանձին հարկատեսակների մասին օրենքները, «Դրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենքը (26.12.02), ՀՀ մաքսային օրենսգիրքը (06.07.00), «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքը (17.05.00), այլ օրենքներ և իրավական ակտեր:

Սույն ոլորտում՝ որպես հանրապետական գործադիր մարմին, հանդես է գալիս *ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն,* որը «Հարկային ծառայության մասին» և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքներով (03.07.02) նախատեսված հարկային և մաքսային մարմին է: Կոմիտեն ստեղծվում, վերակազմակերպվում և դրա գործունեությունը դադարեցվում է ՀՀ Նախագահի հրամանագրով:

Կոմիտեն իրավապահ մարմին է: Դրա պաշտոնատար անձինք իրավունք ունեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կրելու և օգտագործելու հաշվեցուցակային զենք[1]:

Կոմիտեի նպատակներից և խնդիրներից են՝

1. հարկային ծառայության մասով՝

1) ՀՀ հարկային օրենսդրության և հարկային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերի պահանջների կատարման ու կիրառման նկատմամբ օրենքով սահմանված կարգով հսկողության իրականացումը,

[1] «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2008թ. սեպտեմբերի 4-ի N 1005-Ն որոշումը:

2) հարկային օրենսդրության պահանջների խախտումների (հարկային հանցագործությունների) կանխումը, խափանումը, այդ խախտումների բացահայտումը,

3) հարկային օրենսդրությամբ սահմանված պարտավորությունների չկատարման հետևանքով ՀՀ պետական և համայնքների բյուջեների նկատմամբ առաջացած պարտավորությունների մարման գծով աշխատանքների իրականացումը,

4) օտարերկրյա պետությունների հարկային և այլ իրավասու մարմինների, միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը,

5) ծառայության իրավասության սահմաններում պետական տուրքի, ոչ հարկային եկամուտների և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ վճարների վճարման նկատմամբ հսկողության իրականացումը,

6) օրենսդրությամբ նախատեսված այլ խնդիրների իրականացումը:

2. մաքսային ծառայության մասով՝

1) իր իրավասության սահմաններում՝ համակարգի միջոցով ՀՀ տնտեսական ինքնիշխանության, տնտեսական անվտանգության, տնտեսական շահերի պաշտպանվածության ապահովումը,

2) մաքսային օրենսդրության դրույթների կիրառման ապահովումը և մաքսային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացումը,

3) մաքսային վճարների գանձման և դրանք ժամանակին ՀՀ պետական բյուջե փոխանցման ապահովումը, մաքսային օրենսդրությամբ սահմանված պարտավորությունների չկատարման հետևանքով ՀՀ պետական բյուջեի նկատմամբ առաջացած պարտավորությունների մարման գծով աշխատանքների ապահովումը,

4) մաքսային օրենսդրության խախտումների կանխարգելումը, կանխումը, քննումը և բացահայտումը,

5) մաքսային հսկողության և մաքսային ձևակերպումների իրականացման ապահովումը,

6) մաքսանենգության դեմ պայքարը, միջազգային ահաբեկչության դեմ պայքարին աջակցելը, ՀՀ մաքսային սահմանով թմրամիջոց-

ների, զենքի, մշակութային, պատմական ու հնագիտական նշանակություն ունեցող առարկաների, մտավոր սեփականության օբյեկտների, ոչնչացման վտանգի տակ գտնվող կենդանատեսակների ու բուսատեսակների և այլ ապրանքների ապօրինի տեղափոխման կանխարգելումը,

7) սպառողների շահերի պաշտպանության նպատակով՝ ներմուծվող ապրանքների որակի ապահովման միջոցառումներին աջակցելը,

8) օտարերկրյա պետությունների մաքսային և այլ իրավասու մարմինների, մաքսային գործին վերաբերող հարցերով զբաղվող միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը,

9) ՀՀ մաքսային վիճակագրության վարումը,

10)օրենսդրությամբ սահմանված այլ խնդիրների և նպատակների իրականացումը:

Կոմիտեն իր նպատակների և խնդիրների իրականացման համար՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է մի շարք գործառույթներ: Դրանցից են՝

1. հարկային ծառայության մասով՝

1) հարկ վճարողների սպասարկումը (հարկ վճարողներին իրազեկումը, հարկային հաշվարկների, հայտարարագրերի, հաշվետվությունների, տեղեկանքների և օրենքով սահմանված այլ փաստաթղթերի ընդունումը, օրենքով նախատեսված դեպքերում՝ հարկերի հաշվարկումը),

2) հարկ վճարողների հաշվառումը,

3) հարկերի և այլ պարտադիր վճարների հավաքման կազմակերպումը,

4) հարկային օրենսդրության, հարկային հարաբերությունները կարգավորող մյուս իրավական ակտերի՝ հարկային պարտավորությունների գծով պահանջների խախտման համար օրենքով սահմանված պատասխանատվության կիրառումը,

5) հարկ վճարողների բողոքների քննարկումը և որոշումների ընդունումը,

6) ՀՀ քր. դատ. օր.-ով սահմանված կարգով իրեն վերապահված գործերով հետաքննության և նախաքննության կատարումը,

7) Վարչ. օր.-ին համապատասխան վարչական իրավախախտումների վերաբերյալ իրեն վերապահված գործերով վարույթի իրականացումը,

8) հարկային իրավախախտումների բացահայտման ուղղությամբ անհրաժեշտ օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացումը՝ օրենքով սահմանված կարգով,

9) հարկային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով հարկային մարմնի կողմից տնտեսվարող սուբյեկտների մոտ օրենքով սահմանված կարգով ստուգումների անցկացումը:

2. մաքսային ծառայության մասով՝

1) մաքսային օրենսդրությամբ նախատեսված դեպքերում ֆիզիկական անձանց, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների (այսուհետ՝ անձինք) մասին տեղեկությունների (այդ թվում՝ անձանց կողմից իրականացված և իրականացման ենթակա մաքսային վճարումների) հավաքագրումը,

2) իր իրավասության սահմաններում անձանց կողմից օրենսդրությամբ սահմանված հարկերի, մաքսատուրքի, պետական տուրքի, այլ պարտադիր վճարների հաշվարկման, գանձման և ժամանակին ՀՀ պետական բյուջե փոխանցման նկատմամբ հսկողության իրականացումը,

3) մաքսային հսկողության և ձևակերպումների կազմակերպումը,

4) մաքսային քաղաքականության մշակմանը մասնակցությունը,

5) ՀՀ օրենսդրությամբ սահմանված մաքսային մեխանիզմների կատարելագործումը.

6) օտարերկրյա պետությունների մաքսային և այլ իրավասու մարմինների, միջազգային կազմակերպությունների հետ հանդիպումների և քննարկումների կազմակերպումը, համատեղ համաձայնագրերի, պայմանագրերի, հուշագրերի և այլ նախագծերի պատրաստումը,

7) մաքսային վիճակագրության վարման նպատակով տեղեկությունների հավաքագրումը,

8) մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործերի վարույթների իրականացումը,

9) առանձին իրավախախտումների բացահայտման համար անհրաժեշտ օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացումը,

10) ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում ու կարգով ՀՀ օրենսդրության և այլ իրավական ակտերի փոփոխությունների մասին անձանց իրազեկման ապահովումը:

Կոմիտեն կառավարում է կոմիտեի նախագահը, որին պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում է ՀՀ Նախագահը՝ վարչապետի առաջարկությամբ: Կոմիտեի նախագահը հաշվետու է ՀՀ Նախագահին, կառավարությանը և վարչապետին:

Կոմիտեի նախագահը ղեկավարում է կոմիտեի ընթացիկ գործունեությունը, իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ և տալիս ցուցումներ, կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև, լսում և ՀՀ կառավարության հաստատմանն է ներկայացնում կոմիտեի աշխատակազմի գործունեության մասին տարեկան հաշվետվությունները, իրականացնում այլ լիազորություններ:

§6. Տարածքային պետական կառավարումը

Միջճյուղային պետական կառավարումը բնորոշ է նաև տարածքային պետական կառավարմանը, որի ներազդեցության գոտում են գտնվում ոչ միայն տեղական ինքնակառավարման մարմիններն ու տարածքային կառավարման մարմինները (մարզպետարանները), այլև մի շարք միջճյուղային համակարգեր:

Ի տարբերություն մյուս ոլորտների, տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ պետական կառավարմանը բնորոշ են առավելապես այնպիսի մեթոդներ ու լիազորություններ, որոնք չեն առնչվում անմիջական ենթակայական հարաբերությունների հետ, քանզի, ինչպես արդեն նշվել է սույն ձեռնարկում, տեղական ինքնակառավարման մարմինները չեն համարվում պետական մարմիններ և չեն կարող գտնվել որևէ պետական մարմնի անմիջական ենթակայության ներքո: Տվյալ դեպքում կառավարման դասական մեթոդներին բնորոշ եղանակներով պետական կառավարում իրականացվում է

միայն պատվիրակված լիազորությունների շրջանակներում (Վերահսկողության առանձնահատկությունների մասին հանգամանալից անդրադաձ կա սույն ձեռնարկի 6-րդ գլխում):

Այս ոլորտի կառավարման, մասնավորապես քաղաքականության մշակման և իրականացման հիմնական պատասխանատուն տարածքային կառավարման նախարարությունն է, որի կանոնադրությունը հաստատվել է ՀՀ կառավարության 2005թ. հունիսի 6-ի թիվ 633-Ն որոշմամբ:

Ըստ տարածքային կառավարման նախարարության կանոնադրության 7-րդ կետի, հիշյալ նախարարության նպատակներն ու խնդիրներն ունեն հետևյալ համակարգը՝

1) Հայաստանի Հանրապետության տարածքային քաղաքականության մշակումը եւ դրանց իրագործման ապահովումը,

2) Հայաստանի Հանրապետության տարածքային զարգացման համամասնությունների ապահովումը,

3) Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման մարմինների կողմից Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի իրագործման ապահովումը,

4) Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման մարմինների գործունեության արդյունավետության բարձրացումը,

5) Երեւանում տարածքային կառավարման իրականացման ապահովումը,

6) ոլորտի միասնական տեղեկատվական համակարգի (ՄՏՀ) կազմակերպման, դրա ընդհանրական շահագործմանն ու զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացման ապահովումը,

7) Եվրոպական հարեւանության քաղաքականության շրջանակներում նախարարության իրավասությանը վերապահված բնագավառներին առնչվող առաջարկությունների ներկայացումը եւ միջոցառումների իրականացման ապահովումը,

8) պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների միջեւ փոխհարաբերությունների ապահովումը,

9) պետական սեփականություն հանդիսացող ջրային համակարգերի կառավարման եւ անվտանգ օգտագործման ապահովումը,

10) ջրային համակարգերի կառավարման քաղաքականության մշակման եւ իրականացման ապահովումը,

11) միգրացիոն քաղաքականության գործընթացների պետական կարգավորման ապահովումը,

12) Հայաստանի Հանրապետությունում համայնքային ծառայության համակարգի ներդրման ու հետագա կատարելագործման ապահովումը,

13) Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի պահպանության, համալրման, հաշվառման եւ օգտագործման ապահովումը:

Պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունների, ինչպես նաև տարածքային կառավարման ոլորտը կազմող համակարգերի նկատմամբ կառավարման բնույթն ու սահմանները հստակ պատկերացնելու համար հարկ է անդրադառնալ տարածքային կառավարման նախարարության գործառույթներին, որոնք ամրագրված են նշված կանոնադրության 8-րդ կետով՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության տարածքային քաղաքականության մշակում եւ դրա իրականացման ընթացքի դիտարկում,

2) նախարարության իրավասությանը վերապահված բնագավառների իրավական կարգավորման նպատակով օրենքների ու այլ իրավական ակտերի նախագծերի մշակում և սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության ու վարչապետի քննարկմանը ներկայացնելը,

3) «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին եւ այլ իրավական ակտերին համապատասխան վարչական վարույթի իրականացում,

4) սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության տարածքային քաղաքականությանը վերաբերող անհրաժեշտ տեղեկատվության ստացում Հայաստանի Հանրապետության հանրապետական գործադիր մարմիններից, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից,

5) Հայաստանի Հանրապետության կառավարությանը և վարչա-

պետին՝ Հայաստանի Հանրապետության մարզերի սոցիալ-տնտեսական վիճակին վերաբերող անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովում,

6) Հայաստանի Հանրապետության մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի քննարկում եւ Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնելը,

7) Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման, Հայաստանի Հանրապետության մարզային եւ համայնքային նպատակային ծրագրերի, միջազգային պայմանագրերի նախագծերի մշակում եւ սահմանված կարգով միջազգային պայմանագրեր ստորագրելու կամ դրանց միանալու վերաբերյալ առաջարկության ներկայացում,

8) Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությանը վերաբերող՝ քաղաքացիների նամակների (դիմումների եւ բողոքների) քննարկում,

9) համայնքային ծառայության բնագավառում պետական քաղաքականության մշակում,

10) համայնքների ղեկավարների աշխատակազմերի կադրային գործի վարման մեթոդական ղեկավարում եւ վերահսկում, սահմանված կարգով եւ դեպքերում ծառայողական քննության, համայնքային ծառայության կադրերի ռեզերվի և համայնքային ծառայողների գրանցամատյանի վարում, համայնքային ծառայողների վերապատրաստման ընթացքի դիտարկում, համայնքային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող գործողության եւ (կամ) անգործության բողոքարկում դատարան,

11) մարզպետների կողմից իրականացվող իրավական եւ մասնագիտական հսկողության ամենամյա աշխատանքային ծրագրերի հաստատում, ինչպես նաեւ տալ համաձայնություն այդ ծրագրերում չընդգրկված միջոցառումներին,

12) համայնքի ղեկավարի սեփական եւ պետության պատվիրակված լիազորությունների ու համայնքի ավագանու լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողության իրականացում,

13) մասնագիտական հսկողության բարձրագույն մարմինների կողմից իրականացվող մասնագիտական եւ իրավական հսկողությանը գրավոր համաձայնություն տալը,

14) Հայաստանի Հանրապետության համայնքային բյուջեների ձեւավորման և կատարման ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված լիազորությունների իրականացում,

15) Հայաստանի Հանրապետության համայնքային բյուջեների կատարման ընթացքի դիտարկում,

16) տեղական ինքնակառավարման մարմինների պահանջով սեփական և պատվիրակված լիազորությունների հետ կապված պաշտոնական պարզաբանումներ և խորհրդատվություններ սահմանված կարգով տալը,

17) մարզպետների ընդունած որոշումների նկատմամբ իրավական հսկողության իրականացում եւ, անհրաժեշտության դեպքում, դրանք ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության վարչապետին առաջարկությունների ներկայացում,

18) մարզպետների գործունեության արդյունքների գնահատման գործընթացում նախարարության իրավասությանը վերապահված չափորոշիչների գնահատում, հանրապետական գործադիր մարմինների իրավասությանը վերապահված չափորոշիչների գնահատականների ամփոփում եւ վերջնական գնահատականի հրապարակում,

19) օրենքով եւ այլ իրավական ակտերով Հայաստանի Հանրապետության մարզպետներին վերապահված լիազորությունների իրականացում Երեւանում,

20) նախարարության տեղեկատվական քաղաքականության եւ հասարակայնության հետ կապերի կազմակերպում ու իրականացում,

21) նախարարության իրավասությանը վերապահված բնագավառներում այլ պետությունների եւ միջազգային կազմակերպությունների հետ սահմանված կարգով համագործակցելը,

22) արխիվային գործի պետական քաղաքականության մշակում, արխիվային գործի սկզբունքների, կանոնների, չափանիշների (նորմատիվների) եւ չափորոշիչների սահմանում, դրանց նկատմամբ դիտարկումների իրականացում,

23) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախա-

տեսված այլ գործառույթներ:

Վերոհիշյալ բազմաբնույթ կառավարման ոլորտներում կառավարման գործառույթների արդյունավետ ու համալիր իրականացման նպատակակով ստեղծվել և նշված նախարարության ենթակայության ներքո գործում են մի շարք պետական կառավարչական հիմնարկներ՝ տարածքային կառավարման նախարարության «Միգրացիոն պետական ծառայությունը» (կանոնադրությունը հաստատվել է ՀՀ կառավարության 2009թ. դեկտեմբերի 17-ի թիվ 1515-Ն որոշմամբ), տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե (կանոնադրությունը հաստատվել է 2002թ. սեպտեմբերի 5-ի թիվ 1400-Ն որոշմամբ) և այլն:

ԲԱԺԻՆ ՎԵՑԵՐՈՐԴ
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

ԳԼՈՒԽ 25.
ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄԱԻՐԱՎԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ

§1. Վարչական իրավունքի ծագման ու ձևավորման պատմաիրավական նախադրյալները

Վարչական իրավունքի ծագման պատմաիրավական նախադրյալները հիմնականում առնչվում են արևմտյան Եվրոպայի երկրներում, այսպես կոչված, արդյունաբերական հեղափոխությունների հետ, որոնց արդյունքում պետության և անհատի, ինչպես նաև անձանց տարաբնույթ միավորումների միջև ձևավորվեցին միանգամայն նոր հարաբերություններ: Մասնավորապես, դրանցում ի հայտ եկան այնպիսի տարրեր, ինչպիսիք են պետական իշխանության մարմինների իրավական ակտերի, գործողությունների ու անգործության դեմ վերադասության կարգով բողոք բերելու, դրանց մի մասը դատական կարգով վիճարկելու իրավունքը, պետական քաղաքականության ոլորտում բոլոր քաղաքացիների որոշակի ներգրավվածության ինստիտուտները և այլն:

Հենց այս պատմական իրադարձությունների ներազդեցության արդյունքում է, որ վարչական իրավունքի հայրենիքը, ըստ էության, դարձավ Ֆրանսիան: Այս երկրում առավել վաղ շրջանում վարչական իրավունքի, որպես իրավունքի ինքնուրույն ճյուղի ձևավորմանը նպաստեց այն գաղափարական մեկնակետը, ըստ որի գործադիր իշխանությունը պետք է գործի դատական իշխանությունից տարանջատված և իրականացվի հստակ ամրագրված հատուկ ընթացակարգերով: Հեղափոխությամբ իշխանության եկած քաղաքական ուժերը

ակնհայտորեն չէին վստահում միապետի կողմից ուղղորդվող դատական իշխանությանը, ուստի փորձում էին, արտաքուստ չխախտելով դատավորների անփոխարինելիության սկզբունքը (այն ևս դիտարկում էին, որպես ժողովրդաիշխանության կարևոր տարր), դատական իշխանության ներազդեցությունը նվազեցնել՝ գործադիր իշխանությունը տարանջատելու, վերջինիս դեմ բերված վարչական բողոքները բացառապես նորաստեղծ և այդ պատմական փուլում դեռևս վերահսկելի պետական խորհուրդներում քննելու և նմանաբնույթ այլ միջոցներով:

Այսպիով, պետական խորհուրդները, լինելով վարչական արդարադատության սաղմեր, պատմականորեն ձևավորվել են ոչ այնքան գործադիր իշխանության նկատմամբ դատական վերահսկողություն սահմանելու, որքան գործող դատական համակարգից գործադիր իշխանությունն առավել պաշտպանված դարձնելու նկատառումով: Սակայն, հետագա զարգացումներն անխուսափելիորեն հանգեցրին նրան, որ հենց վարչական արդարադատությունը հանդիսացավ հզոր երաշխիք՝ գործադիր իշխանության կամայականությունները կանխարգելելու տեսանկյունից: Ընդհանրապես իրավաքաղաքական համակարգի զարգացման պատմական փորձը հարուստ է վերոհիշյալ բնույթի օրինակներով, երբ այս կամ այն ինստիտուտի ձևավորման ակունքներում ընկած են բոլորովին այլ գործոններ ու նպատակներ, քան հետագայում հետապնդում են նույն այդ ինստիտուտները:

Հիշյալ պատմական նախադրյալների ներազդեցությամբ պայմանավորված *մայրցամաքային իրավական համակարգին պատկանող երկրներում հիմնականում ձևավորվեց բովանդակությամբ առավել լայն վարչական իրավունք*, այն կոչված էր կանոնակարգելու ոչ միայն պետական կառավարում իրականացնող մարմինների և քաղաքացիների փոխհարաբերությունները, այլև՝ պետական կառավարման մարմինների կառուցվածքը, ձևավորման ընթացակարգերը, դրանց փոխհարաբերությունները և իրավական կարգավիճակը: Այլ կերպ ասած, վարչական իրավունքը առավել լայն բովանդակությամբ կիրառելը դարձավ հեղափոխությունների արդյունքում ձեռք բերված իշխանության պահպանման հուսալի երաշխիք:

Պատմականորեն այլ նախադրյալներ ձևավորվեցին *անգլոսաք-*

սոնական իրավական համակարգի երկրներում, որտեղ նախապատվությունը տրվեց առավել նեղ բովանդակությամբ վարչական իրավունքի ձևավորմանը. վերջինս բացառապես կանոնակարգում է վարչական մարմինների և անձանց միջև փոխհարաբերությունները, այդ մարմինների հնարավոր կամայականություններից ու այլ չարաշահումներից վերջիններիս պաշտպանության հիմքերն ու ընթացակարգերը: Մասնավորապես, Մեծ Բրիտանիայի ու ԱՄՆ-ի վարչական օրենսդրությունը չի կարգավորում պետական կառավարման մարմինների կառուցվածքը, սակայն հանգամանորեն ամրագրում է կառավարման համակարգում անձանց իրավունքների պաշտպանության ընթացակարգային երաշխիքները: Լավագույն դեպքում այս իրավական համակարգին պատկանող երկրներում վարչական իրավունքը կարգավորում է վարչական մարմինների գործունեությունը միայն այն մասով, որքանով այն առնչվում է անձանց իրավունքների ու պարտականությունների պաշտպանության ու իրականացման գործընթացին:

Պատահական չէ, որ այս երկրների վարչական իրավունքը մեծամասամբ նվիրված է գործադիր իշխանության մարմինների նկատմամբ դատական վերահսկողության կարգավորմանը: Այս առումով ամերիկացի ճանաչված իրավագետ Է.Ֆրոյնդը դեռևս 1928թ. նկատել է. «Վարչական իրավունքը բացառապես վարչական մարմինների նկատմամբ վերահսկողության իրավունքն է[1]»: Թերևս, կարելի է արձանագրել, որ *նշված իրավական համակարգում վարչական իրավունքն առավելապես վարութային է:*

Անգլոսաքսոնական համակարգի երկրներում վարչական իրավունքի բովանդակային կտրվածքով այդպիսի նեղ բնորոշումը պայմանավորված է նշված երկրներում իրավունքի այդ ճյուղի ձևավորման իրավաքաղաքական ուսմունքներով ու դրա ժամանակագրությամբ. ըստ էության, հետագայում ձևավորված պատմաքաղաքական իրավիճակը թելադրում էր սոցիալ-քաղաքական ցնցումներից խուսափելու նկատառումով նախապատվությունը տալ ոչ այնքան գործադիր իշխանությունը պահպանելու, որքան այն հնարավորինս քաղա-

[1] Տե՛ս Freund E. Cases on Administration Law. - St. Paul, 1928. P. I.

քակիրթ ու ժողովրդավարական մեթոդներով իրականացնելու խնդրին:

Նշված երկրներում վարչական իրավունքի ձևավորման փորձեր կատարելու ժամանակաշրջանում ժողովրդավարության ինստիտուտներն իրենց կայացվածությամբ ու խորությամբ էապես տարբերվում էին նախկինում հեղափոխությունների արդյունքում ձևավորված իրավաքաղաքական համակարգերում հապճեպ ստեղծված ինստիտուտներից: Իսկ այդ փորձերն անհամեմատ ավելու ուշ նախաձեռնելն իր հերթին թելադրված էր այն իրավաքաղաքական տեսությամբ, ըստ որի իրավակարգավորման եղանակով պետության միջամտությունը խրախուսելի չէ (ընդ որում, այդ մոտեցումը գերիշխել է մինչև 19-րդ դարի վերջը): Բնականաբար, այդպիսի հայեցակարգի գերակայությունն իր հերթին թելադրված էր սովորույթի նորմերի կիրառական մեծ նշանակությամբ:

Ընդ որում, անգլոսաքսոնական իրավական համակարգի երկրներում վարչական իրավունքի աղբյուրների կազմում առանցքային նշանակություն է տրվում նախադեպային իրավունքին: Այս համակարգի ներկայացուցիչները կարծում են, որ վարչական իրավունքի, և ընդհանրապես վարչարարության խնդիրների լավագույն լուծումները, որպես կանոն, բացահայտվում են հենց դատական պրակտիկայում: Հավելենք, որ պետական կառավարման մարմինների կառուցվածքին ու գործունեության ներքին ոլորտին առնչվող հարաբերությունները հանգամանալից իրավական կարգավորման առարկա են դարձել, պարզապես դրանք նշված համակարգի երկրներում չեն հանդիսանում վարչական իրավունքի նորմեր:

Եվ, վերջապես, հիշյալ նախադրյալներով պայմանավորված նշված համակարգի երկրներում վարչական արդարադատությունը ձեռք է բերել այնպիսի շրջանակներ, որն ընդգրկում է դասական իմաստով սահմանադրական վերահսկողության ինստիտուտները: Բայց, ինչպես հաճախ է լինում, պատմաքաղաքական նախադրյալներն այնքան կենսունակ գտնվեցին, որ հետագայում, թեպետ երկու իրավական համակարգերում էլ ձևավորվեցին գրեթե միասնական իրավական սկզբունքներ ու չափանիշներ, վարչական իրավունքի բնորոշումները, մասնակի փոփոխություններով հանդերձ, ավանդաբար

շարունակեցին պահպանվել:

Ինչ խոսք, համընդհանուր գլոբալացման միտումներն աստիճանաբար մեղմում են ինչպես այդ, այնպես էլ իրավունքի տարաբնույթ ինստիտուտներին վերաբերող տարբեր, երբեմն իրարամերժ մոտեցումները, սակայն, կարծում ենք, կոնկրետ սոցիալ-տնտեսական, քաղաքական ու ազգային գործոններով պայմանավորված առանձնահատկությունները գոյության իրավունք ունեն, խիստ անհրաժեշտ են իրավունքի համընդհանուր զարգացման և յուրաքանչյուր իրավական խնդրի լուծման համար լավագույն եղանակ ընտրելու տեսանկյունից:

Այսպիսով, պայմանականորեն կարելի է արձանագրել, որ ի տարբերություն մայրցամաքային իրավական համակարգի երկրների, անգլոսաքսոնական իրավական համակարգի երկրներում նախապատվությունը տրվել է վարչական իրավունքի միայն արտաքին ազդեցությանն առնչվող հարաբերությունների կարգավորմանը:

Բնականաբար, ինչպես և այլ իրավունքի ճյուղի պարագայում, վարչական իրավունքի ձևավորման նախադրյալները, ինչպես նաև դրանց հիմնական համակարգերը բնավ չեն սահմանափակվում մայրցամաքային և անգլոսաքսոնական իրավական համակարգերով, ուստի սույն գլխում հատուկ ուսումնասիրության նյութ են դարձել նաև այն երկրները, որոնցում առկա են որոշակի խումբ պետություններին բնորոշ առանձնահատկություններ:

Միաժամանակ, հարկ է նկատել, որ բազմաթիվ այլ իրավական համակարգերին պատկանող երկրներում վարչական իրավունքը հիմնականում ձևավորվել է կամ անգլոսաքսոնական կամ մայրցամաքային իրավական համակարգերի ազդեցության ներքո: Այսպես, օրինակ, Ճապոնիան ներկայումս առանձնանում է վարչական իրավունքի և, հատկապես, կառավարման գիտական հիմունքների մշակվածության բարձր մակարդակով, սակայն այս երկրում վարչական իրավունքը ձևավորվել է ընդամենը 1945-52թթ. իրավական բարեփոխումների արդյունքում: Ընդ որում, բարեփոխումների հիմքում դրվել են արդեն հայտնի իրավական համակարգերը: Մինչ այդ ամբողջ իշխանությունը պարզապես պատկանել է միապետին, որպիսի պարագայում վարչական իրավունքը որևէ դերակատարում ունենալ չէր կարող:

§2. Արտասահմանյան երկրների վարչական իրավունքի հիմնական համակարգերը

Վարչական իրավունքի հիմնական համակարգերը հնարավորինս ամբողջական ներկայացնելու համար սույն պարագրաֆում ընտրված են ինչպես անգլոսաքսոնական և մայրցամաքային իրավական համակարգերին պատկանող, այնպես էլ այն երկրները, որոնցում վարչական իրավունքն առանձնանում է նկատելի այնպիսի առանձնահատկություններով, որոնք բնորոշ են իրավաքաղաքական ընդհանուր մշակույթ ունեցող որոշակի խումբ երկրների և դրանց լուսաբանումը կարող է բավարար նյութ լինել նշված համակարգերի մասին համարժեք պատկերացում կազմելու համար: Մասնավորապես, հենց այդ նկատառումով են ընտրված Բուլղարիան, Ճապոնիան, Չինաստանը և Եգիպտոսը:

Ինչ վերաբերում է նախկին խորհրդային երկրներին, ապա դրանք, բացառությամբ Վրաստանի և մասամբ Ուկրաինայի, առավելապես հարում են մայրցամաքային իրավական համակարգին բնորոշ վարչական իրավունքին: Վրաստանի վարչական իրավունքը գրեթե ամբողջությամբ ներառել է ԱՄՆ-ի վարչական իրավունքին բնորոշ բաղադրիչները: Ուկրաինայի վարչական իրավունքն իր զարգացման միտումներով հիմնականում հարում է անգլոսաքսոնական իրավական համակարգին, ինչի մասին են վկայում պաշտոնական շրջանառության մեջ դրված հայեցակարգերը: Ադրբեջանի վարչական իրավունքի զարգացման միտումներն առավել համահունչ են արաբական մուսուլմանական երկրների վարչական իրավունքին, որոնց համար նպաստավոր պայմաններ ստեղծվեցին հատկապես սահմանադրական այն փոփոխություններով, որոնք հանեցին պետության նախագահի ընտրության սահմանափակումները (նախագահը կարող է վերընտրվել անսահմանափակ քանակով), ամրագրեցին նախագահի աննախադեպ լայն վարչարարական լիազորություններ և այլն:

Յուրաքանչյուր պետության վարչական իրավունքին բնորոշ գծերն ու առանձնահատկությունները ներկայացնելիս միաժամանակ, առանձացված են այն տարրերը, որոնք բնորոշ են վարչական իրավունքի այս կամ համակարգին և նպաստում են դրանք առավել համալիր ամբողջական ներկայացնելուն:

ԱՄՆ[1]: Ամերիկյան վարչական իրավունքը կարգավորում է միայն վարչական մարմինների գործունեության կարգն ու դրա նկատմամբ դատական վերահսկողությանն առնչվող հարաբերությունները. վարչական մարմինների կառուցվածքն ու կազմը վարչական իրավունքի առարկան չեն: Ըստ այդմ էլ վարչական իրավունքի առարկան կազմված է երեք հիմնական հատվածներից՝ վարչական մարմինների իրավաստեղծ գործունեությունը, վարչական կվազիդատարանների գործունեությունը և վարչական մարմինների նկատմամբ դատական վերահսկողությունը:

ԱՄՆ-ի վարչական իրավունքի ձևավորման գործում զգալի դեր ունեն դատարանները, որոնց նախադեպային դատական ակտերը (վերջիններս նվրված են Սահմանադրության ու ընթացիկ օրենսդրության մեկնաբանություններին) համարվում են ամենամեծ իրավական արժեք ու հեղինակություն ունեցող իրավունքի աղբյուրներ: Վարչական մարմինները ևս ընդունում են վարչաիրավական հարաբերություններ կարգավորող իրավական ակտեր (հիմնականում հրամանների տեսքով), որոնք հրապարակվում են պաշտոնական տեղեկագրերում (օրինակ՝ Դաշնային տեղեկագրում): Ի դեպ, այդ տեղեկագրերում դրանք ոչ թե հրապարակվում են սոսկ ժամանակագրական կտրվածքով, այլ նախապես դասակարգվում են՝ ըստ կարգավորման ոլորտների, ինչն առավել մատչելի է դարձնում դրանց կիրառումը: Ընդ որում, պարբերաբար հրապարակվում են կոնկրետ այս կամ այն կառավարման ոլորտը կարգավորող իրավական ակտերի ժողովածուներ:

Վարչական իրավունքի իրավական ակտերը տարանջատվում են երկու խմբի՝ պայմանական (սրանցով սոսկ ապահովվում է օրենքների կատարումը) և լրացնող (սրանք լրացնում են օրենսդրական ակտերը):

Դաշնության մակարդակով գործադիր իշխանությունը կազմված է նախագահից, թվով 14 դեպարտամենտներից (բացի ռազմական[2]),

---

[1] ԱՄՆ-ի վարչական իրավունքն առավել հանգամանալից հետազոտված է՝ «Правительство, министерства и ведомства в зарубежных странах. - М., 1994.» աշխատությունում:

[2] Ընդհանրապես ԱՄՆ-ում *պաշտպանության և արտաքին գործերի ոլորտում* գործադիր իշխանություն իրականացնող մարմինները չեն համարվում վարչական մարմիններ, քանի որ դրանք անմիջականորեն չեն առնչվում անձանց մասնակցությամբ վարչարարության հետ:

մոտ 100 անկախ գործակալություններից, վարչական հիմնարկներից և այլ միջճյուղային պետական մարմիններից: Այս մարմինների ղեկավարներին նշանակում է նախագահը, որն օժտված է նաև վարչարարության ոլորտում անձանց համար իրավունքներ ու պարտականություններ սահմանելու իրավասությամբ: Բացառությամբ անկախ գործակալությունների, բոլոր մյուս վարչական մարմիններն անմիջականորեն ենթարկվում են նախագահին: Անկախ գործակալությունների ինքնուրույնության հարցում մեծ հետևողականություն է դրսևորում ԱՄՆ-ի Գերագույն դատարանը, որն իր բազմաթիվ նախադեպային դատական ակտերով երաշխավորում է դրանց որոշակի ինքնուրույնությունը. վերջիններս առավելապես ենթարկվում են Կոնգրեսին: Բոլոր այս վարչական մարմիններն այս կամ այն չափով օժտված են վարչարարության ոլորտում անձանց համար իրավունքներ ու պարտականություններ սահմանելու իրավասությամբ:

Անկախ գործակալությունների գերակշիռ մասն օժտված չէ վարչարարության լայն լիազորություններով. վերջիններս հանդիսանում են հետազոտական, խորհրդատվական և համակարգման գործառույթ իրականացնող մարմիններ:

Գործադիր իշխանության ոլորտում լայն լիազորություններով և ընդգրկուն գործառույթներ իրականացնելու իրավասությամբ են օժտված վարչական հիմնարկները: Վերջիններս հիմնականում ապահովում են օրենքների կատարումը:

ԱՄՆ-ի վարչական մարմինների համակարգին բնորոշ է խիստ ապակենտրոնացվածությունը: Ընդ որում, դա նկատվում է նաև նահանգների կառավարման կտրվածքով: Տեղական ինքնակառավարման մարմինները գործում են լայն ինքնավարության սկզբունքով, ունեն իրենց բյուջեն և լիարժեք լիազորություն՝ տեղական նշանակության հարցերի լուծման ոլորտում:

Նահանգներում գործադիր իշխանությունը կազմված է նահանգապետից, որոշ նահանգային պաշտոնյաներից, դեպարտամենտներից, անկախ գործակալություններից (ընդ որում, սրանք նահանգներում հայտնվել են ավելի վաղ, քան՝ դաշնության մակարդակով), վարչական հիմնարկներից և այլ կառույցներից: Ի տարբերություն նախագահի, նահանգապետի լիազորությունները նկատելիորեն սահմանափակ են, քանի որ այս պաշտոնյային զուգահեռ գործում են

լայն լիազորություններով օժտված այլ նահանգային պաշտոնյաներ՝ նահանգի քարտուղարը, գանձապահը, աուդիտորը, վերահսկիչը և այլն:

ԱՄՆ-ի տեղական ինքնակառավարման մարմինների կառուցվածքը կայուն չէ, քանի որ սոցիալ-տնտեսական ներկայիս արագ զարգացումները հանգեցնում են աննախադեպ մեծ համայնքների ձևավորմանը (առանձին քաղաքներ արդեն տեղակայված են նույնիսկ մի քանի նահանգների տարածքների վրա), որպիսի իրավիճակում նախապատվությունը տրվում է համայնքային միավորումների ձևավորմանը:

Քաղաքացիական ծառայության ինստիտուտի իրավական կարգավորման սկզբնական աղբյուրը համարվում է 1883թ. «Քաղաքացիական ծառայության մասին» Դաշնային օրենքը: Մինչ այդ, նշված ինստիտուտը կարգավորվել է բացառապես նահանգային օրենսդրությամբ: ԱՄՆ-ում քաղաքացիական ծառայողները կազմում են 60 տոկոս, իսկ հանրային ծառայողների մյուս հատվածը կազմում են քաղաքական ու հայեցողական պաշտոնյաները:

Ներկայումս նկատվում է Կոնգրեսի կողմից իր լիազորությունները վարչական մարմիններին վերալիազորելու գործընթացի շրջանակների ընդլայնում, ինչն առավել ազդեցիկ է դարձնում վարչական մարմինների կողմից իրականացվող վարչարարությունը: Ընդ որում, Սահմանադրությունն ուղղակիորեն չի ամրագրում վերալիազորման իրավական ինստիտուտ, պարզապես դա բխեցվում է այն ընդհանուր իրավասությունից, ըստ որի Կոնգրեսը կարող է ընդունել ցանկացած այլ օրենք: ԱՄՆ-ի Գերագույն դատարանը դեմ չէ վերալիազորման ինստիտուտին, սակայն առանձին դեպքերում, երբ կոնկրետ այդ հարցի կարգավորումն անմիջականորեն վերապահված է հենց Կոնգրեսին, վերալիազորման վերաբերյալ օրենքները ճանաչվում են Սահմանադրությանը հակասող:

Վարչական պատասխանատվության վերաբերյալ վարչական ակտերը ստորաբաժանվում են երկու խմբի՝ ա) իրավական ուժ են ստանում միայն վարչական մարմնի հայցի հիման վրա դատարանի կայացրած որոշմամբ և բ) առանց դատարանի լրացուցիչ ակտի, անմիջականորեն իրավական ուժ են ձեռք բերում, սակայն չեն կարող հարկադրաբար կատարվել՝ առանց համապատասխան դատական ակտի:

ԱՄՆ-ի վարչական իրավունքին բնորոշ է գործադիր իշխանության նկատմամբ անհամեմատ ուժեղ դատական վերահսկողությունը. դատարանին է վերապահված բոլոր առանցքային խոշոր վիճելի հարցերով վերջնական որոշում կայացնելու իրավասությունը: Վարչական ակտերը կարող են բողոքարկվել ինչպես վարչական, այնպես էլ դատական կարգով: Որպես կանոն, վարչական վերադաս մարմինն օգտվում է սկզբնական բողոքը քննելու լիազորությամբ, սակայն դատարանը կարող է կասեցնել այդ քննարկումը և բողոքն ընդունել իր վարույթ: Միաժամանակ, անձը կարող է անմիջապես դիմել դատարան, եթե ապացուցում է, որ բոլոր ատյաններին դիմելը կարող է հանգեցնել ծանր ու անուղղելի հետևանքների: Դատարանները կարող են բողոքն անմիջապես վարույթ ընդունել նաև այն դեպքում, երբ իրենց արդեն հայտնի է վերադաս վարչական մարմինների դիրքորոշումը՝ համանման այլ գործերից:

Մեծ Բրիտանիա[1]: Տևական ժամանակ Մեծ Բրիտանիայում վարչական իրավունքը չէր համարվում իրավունքի ինքնուրույն ճյուղ, սակայն պետության միջամտության ակտիվացման, ինչպես նաև հանրային ծառայողների քանակի նկատելի աճը թելադրեցին համակարգված վարչական իրավունքի նորմեր ձևավորելու անհրաժեշտությունը, ինչը իրողություն դարձավ միայն 20-րդ դարի սկզբներին:

Մեծ Բրիտանիայում վարչական իրավունքի բովանդակությունը մեծ չափով կանխորոշված է հետևյալ գործոններով՝ խորհրդարանի անհամեմատ մեծ քաղաքական կշռով, նախարարների հիմնականում քաղաքական պատասխանատվությամբ և իրավունքի գերակայությամբ: Դատարանն այս երկրում իրավասու չէ խորհրդարանի օրենքները ճանաչել հակասահմանադրական, մանավանդ, որ գրված սահմանադրություն գոյություն չունի: Եթե դատարանը գտնում է, որ խորհրդարանը շեղվել է իրավունքի ընդհանուր սզբունքներից, ապա իր մեկնաբանություններով փորձում է շտկել իրավիճակը և ուղղորդել խորհրդարանի կողմից իրականացվող իրավաստեղծ աշխատանքը:

Այս երկրի վարչական իրավունքում ելակետ է ընդունվում այն,

---

[1] Մեծ Բրիտանիայի վարչական իրավունքն առավել հանգամանալից հետազոտված է՝ «ГарнерД. Великобритания: центральное и местное самоуправление. - М., 1994.» աշխատությունում:

որ նախարարները խորհրդարանի առջև կրում են հիմնականում քաղաքական, իսկ դատարանի առջև՝ իրավական պատասխանատվություն: Մեծ Բրիտանիայի վարչական իրավունքի խնդիրը գործադիր իշխանության սահմանափակումն է այն չափանիշներով, որոնք կանխորոշում են մարդու իրավունքների և ազատությունների համակողմանի պաշտպանությունը:

Վարչական իրավունքի աղբյուրներ են սահմանադրական և սովորական օրենքները, սովորույթը, կոնկրետ գործերով դատարանների ակտերը և վարչական մարմինների իրավական ակտերը: Ընդ որում, սահմանադրական օրենքների մի մասն ընդունվել է դեռևս 1679թ.: Սովորույթի նորմերից է, օրինակ, կառավարման ոլորտում բոլոր վիճելի հարցերով միայն դատարանին վերջնական որոշում կայացնելու լիազորություն վերապահելը: Ի դեպ, հենց սովորույթի ուժով են թագուհուն (թագակրին) վերապահվում գործադիր իշխանության լիազորություններ: Այս դրույթն ամրագրված չէ որևէ օրենսդրական ակտով, սակայն գործում է սովորույթի ուժով: Ինչ վերաբերում է դատական ակտերին, ապա, վերջին շրջանում նկատվում է դրանցում արտացոլված դրույթներն օրենսդրական ակտերում ամրագրելու միտում:

Կենտրոնացված գործադիր իշխանության կազմի մեջ են մտնում թագուհին (թագակիրը), վարչապետը, կաբինետը և կառավարությունը: Պրեմիեր-մինիստրը հանդիսանում Թագավորության գլխավոր խորհրդականը. վերջինիս պաշտոնը հիմնադրվել է 1721թ., սակայն օրենսդրական ամրագրում այն ստացել է միայն 1917թ.: Վարչապետը հանդիսանում է խորհրդարանի մեծամասնություն կազմող կուսակցության ղեկավարը, կառավարության գլուխը, ղեկավարում է կաբինետի, նախարարությունների ու կենտրոնական գերատեսչությունների գործունեությունը: Նա որոշում է նախարարությունների կազմը, նշանակում է նախարարներին և կենտրոնական գերատեսչությունների ղեկավարներին, վերադաս դատական ատյանի դատավորներին, բարձրագույն հրամանատարական կազմին և այլ պաշտոնատար անձանց:

Կաբինետը ներառում է միայն առանցքային նշանակություն ունեցող նախարարներին: Ներկայումս այն կազմված է 20 անդամից, մասնավորապես պրեմիեր-մինիստրից, լորդ-կանցլերից (լորդերի

պալատի նախագահից), ֆինանսների, ներքին գործերի, արտաքին գործերի, պաշտպանության և այլ նախարարներից: Կարևոր հարցերով կաբինետը իր կայացրած որոշումների հիման վրա կազմում է օրինագծեր և ներկայացնում խորհրդարան:

Կառավարության կազմը չի կարող ավել լինել 95 անդամից, իսկ վերջին շրջանում անդամների թիվը տատանվում է 75-ից 80: Լրիվ կազմով կառավարությունը երբեք չի հավաքվում և որոշում չի ընդունում, պարզապես այդ մարմինը քաղաքական պատասխանատվություն է կրում գործադիր իշխանության իրականացման համար:

Ի տարբերություն կառավարության, Գաղտնի խորհուրդը (բաղկացած է 300 անդամից) ընդունում է պետական կառավարման կարևոր որոշումները: Այս մարմնի կազմում ներգրավված են բոլոր նախարարները, արքեպիսկոպոսները, վճռաբեկ դատարանի բոլոր դատավորները և երկրում ճանաչում ունեցող այլ պատվավոր անձինք:

Ինչպես և ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում տեղական ինքնակառավարման մարմինները պատմականորեն օժտված են անհամեմատ լայն ինքնավարությամբ, համայնքային մարմինները հանդիսանում են իրավաբանական անձինք, ունեն ինքնուրույն պետական բյուջե, տեղական հարկեր նշանակելու լիազորություն և այլն: Ընդ որում, Մեծ Բրիտանիայի կազմի մեջ մտնող բաղկացուցիչ մասերին (Անգլիա, Ուելս, Շոտլանդիա, և Հյուսիսային Իռլանդիա) բնորոշ է կառավարման ոչ միատեսակ համակարգ: Հանրային ծառայության ինստիտուտը ձևավորվել է 1850-70թթ.:

Քաղաքացիական ծառայողները պետք է լինեն լիարժեք ապաքաղաքական, ինչին խստորեն հետևում է Քաղաքացիական ծառայության խորհուրդը: Այս մարմինը հանդիսանում է քաղաքացիական ծառայությունը համակարգող մարմինը և օժտված է վերահսկողական, ինչպես նաև ոլորտը կանոնակարգող լայն լիազորություններով: Քաղաքացիական ծառայության անցնելու համար ստեղծված է մրցութային բարդ համակարգ:

Բոլոր քաղաքացիական ծառայողները դասակարգվում են խմբերի և դասերի, որոնք պայմանավորում են ծառայողի կարգավիճակը, վարձատրությունը, սոցիալական ապահովությունը և այլն: Ընդ որում, գործում է վարձատրության սկզբունք, համաձայն որի ծառայողի

վարձատրությունը պետք է համարժեք լինի մասնավոր ոլորտում վարձատրության չափին: Քաղաքացիական ծառայողները կարող են զբաղվել ձեռնարկատիրության միայն որոշակի տեսակներով:

Վարչական գործունեությունն իրականացվում է հիմնականում երկու եղանակով՝ ա) նորմաստեղծ գործունեություն և բ) վարչական արդարադատություն: Նորմաստեղծ գործունեության իրավաչափության նկատմամբ վերահսկողություն են իրականացնում խորհրդարանը և դատարանները: Ընդ որում, եթե դատարանները վերահսկողություն են իրականացնում բացառապես օրինականության չափանիշներով, ապա խորհրդարանը իրավական ակտերը գնահատում է հիմնականում նպատակահարմարության տեսանկյունից, ինչը բնորոշ է քաղաքական վերահսկողության ինստիտուտին:

Վարչական արդարադատությունն իրականացվում է ինչպես վերադաս վարչական մարմինների (օրինակ, նախարարությունների կողմից իրականացվող հետաքննությունները), այնպես էլ վարչական դատարանների կողմից: Վարչական արդարադատությանն առնչվող հարաբերությունները կանոնակարգված են 1971թ. «Տրիբունաների և հետաքննության մասին» օրենքով: Նախարարությունների կողմից իրականացվող հետաքննությունների թիվը տարեկան հասնում է մի քանի հազարի: Ընդ որում, հետաքննություն իրականացնող տեսուչները կայացնում են հիմնականում խորհրդատվական բնույթի եզրակացություններ, իսկ վերջնական որոշումներ կայացնելու լիազորությունը վերապահված է վերադաս վարչական մարմիներին: Վարչական արդարադատություն իրականացնելու լիազորությամբ օժտված են նաև օմբուդսմանները:

Վարչական դատարանները գործերը քննում են բացառապես կոլեգիալ՝ նախագահողի և երկու դատավորների կազմով: Վարչական դատարան կարող են դիմել այն անձինք, որոնց իրավունքներն ու ազատությունները խախտվել կամ կարող էին խախտվել վարչական մարմինների գործունեության արդյունքում: Դատարանները բողոքներն ընդունում են «ultra vires» սկզբունքի հիման վրա, ըստ որի բողոքը ենթակա է ընդունման, եթե վարչական մարմինը գերազանցել է իր իրավասությունը: Մինչև դատարան դիմելը, անձը պարտավոր է դիմել համապատասխան վերադաս վարչական մարմին, սակայն դատարանները կարող են նաև անմիջապես ընդունել բողոքները, եթե

գտնում են, որ ձգձգումները կհանգեցնեն անդառնալի հետևանքների կամ, եթե դատարաններին հայտնի է վերադաս վարչական մարմինների դիրքորոշումը:

Վարչական դատարանները միաժամանակ ընդունում են, այսպես կոչված, խառը հայցեր, որոնք վերաբերում են ինչպես վարչական ակտը, գործողությունը կամ անգործությունը վիճարկելուն, այնպես էլ դրանց հետևանքով պատճառված վնասի հատուցմանը: Ի տարբերություն ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայում վարչական դատավարության կանոնները հանգամանորեն ամրագրված չեն օրենսդրությամբ, դրանք սահմանված են ակնհայտ ընդհանուր դրույթներով, ինչը հնարավորություն է տալիս դատարաններին գործելու սեփական հայեցողությամբ:

Ֆրանսիա[1]: Վարչական իրավունքն ունի մոտ երկհարյուրամյա պատմություն, վերջինիս բնորոշ են վարչական արդարադատության ազդեցիկ ինստիտուտը, վարչական մարմինների խիստ պատասխանատվությունը և վարչաիրավական ինստիտուտների ակնհայտ հանգամանալից ու հնարավորինս հստակ կարգավորվածությունը:

Վարչական իրավունքը կարգավորում է ոչ միայն վարչարարության ոլորտում անձանց իրավունքների իրականացման ու պաշտպանության կարգը, այլև հանրային ծառայությանը, ինչպես նաև վարչական մարմինների ձևավորմանն ու կարգավիճակին առնչվող հարաբերությունները:

Վարչական իրավունքի աղբյուրներն են Սահմանադրությունը, օրենքները, իրավական ակտերն ու դատարանների (հատկապես՝ վարչական դատարանների) դատական ակտերը: Ներկայումս գործող Սահմանադրությունն էապես նվազեցրել է խորհրդարանի օրինաստեղծ լիազորությունները, իսկ նախագահին օժտել է ոչ միայն օրենքների ուժ ունեցող իրավական ակտեր, այլև՝ խորհրդարանի կողմից ընդունված առանձին օրենքների ուժը կորցրած ճանաչելու, ինչպես նաև դրանցում փոփոխություններ կատարելու լիազորությամբ:

Սահմանադրությունը պարունակում է դրույթներ վարչաիրավա-

---

[1] Ֆրանսիայի վարչական իրավունքն առավել հանգամանալից հետազոտված է՝ «Общие сведения об административном праве Франции. - М., 1993.» աշխատությունում:

կան այնպիսի ինստիտուտների մասին, ինչպիսիք են նախարարները, Տնտեսական և սոցիալական խորհուրդը, վարչական դատարանները և այլն: Սահմանադրության հիմքում, ինչպես հայտնի է, դրված է 1789թ. Մարդու և քաղաքացու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, որին էլ համապատասխան յուրաքանչյուր անձի վերապահված է պետական կառավարմանը մասնակցելու իրավունք:

Պետական կառավարումը ավանդաբար իրականացվել է խիստ կենտրոնացված կարգով, սակայն անցյալ դարի 80-ականներին ընդունված մի քանի օրենսդրական ակտերով նախապատվությունը տրվել է ապակենտրոնացվածությանը: Ի տարբերություն իրավունքի մյուս ճյուղերի, վարչական իրավունքը ներկայացված չէ կոնկրետ օրենսգրքով. գործում են թվով 30 օրենսդրական ժողովածուներ, որոնք վերաբերում են կառավարման կոնկրետ ոլորտներին:

Պետական կառավարման կենտրոնական մարմիններն են Հանրապետության Նախագահը, պրեմիեր-մինիստրը, նախարարների խորհուրդը, նախարարները և այլ հանրային հիմնարկներ: Սահմանադրությունը հստակ չի տարանջատում Նախագահի և պրեմիեր-մինիստրի լիազորությունները, ինչի արդյունքում գործնականում հաճախակի են հանդիպում տարաձայնություններ ու շփոթ:

Ի տարբերություն նախարարների, հանրային կառավարման մարմինները ստեղծվում են որոշ գործառույթների իրականացումը հնարավորինս պետական միջամտությունից զերծ պահելու նկատառումով, ինչի արդյունքում այս մարմինների նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս նախապատվությունը տրվում է խորհրդարանական վերահսկողության լծակներին:

Տարածքային կառավարումն իրականացվում է պրեֆեկտների միջոցով, որոնց կողմից իրականացվող կառավարման ոլորտում ներառված չեն միայն պաշտպանության, ֆինանսների, արդարադատության, կրթության և աշխատանքի կառավարման գործառույթները: Կառավարման որոշակի ճյուղերում անհրաժեշտ արդյունավետություն ապահովելու նկատառումով տարածքային կառավարման առանձին գործառույթներ իրականացնում են տարածքային ծառայությունները, որոնք անմիջականորեն հաշվետու են նախարարներին:

Տարածքային ինքնակառավարման մարմինները լինում են ընդհանուր և հատուկ (վերջիններիս թվին են դասվում Փարիզի, Մարսելի, Լիոնի քաղաքային համայնքային միավորումները և այլն), որոնց կարգավիճակը և գործունեության կարգը կարգավորված են բացառապես օրենքներով: Փարիզը, որպես մայրաքաղաք, բաղկացած է 20 օկրուգներից (Մարսելը՝ 16, Լիոնը՝ 9), որոնց ղեկավարում են օկրուգային խորհուրդները, իսկ մայրաքաղաքային խորհուրդը ղեկավարում է համապատասխան ինքնակառավարման խորհուրդը:

Ֆրանսիայում հանրային ծառայությունն ընդգրկում է բոլոր պետական մարմինների ծառայողներին, այդ թվում՝ պատգամավորներին և դատավորներին: Պետական ծառայության ինստիտուտը կարգավորված է 1983-86թթ. ընդունված օրենքներով, իսկ ինչ վերաբերում է համայնքային ծառայությանը, ապա այն կարգավորված է 1984թ. համայնքային ծառայության մասին օրենքով: Բոլոր դեպքերում վարչական մարմինների հաստիքային ծառայողներին բնորոշ է կայունությունը, նրանք չեն կարող փոփոխվել քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխության արդյունքում:

Հանրային ծառայողները տարանջատված են 4 խմբի, որոնցից 1-ին խմբի հանրային ծառայողներին վերապահված է քաղաքականություն մշակելու լիազորություն, 2-րդ խմբին՝ այդ քաղաքական որոշումների կատարումն ապահովելու լիազորություն, 3-րդ խմբին դասվում են մասնագետները, իսկ 4-րդ խմբին՝ օժանդակ կազմը: Բացի խմբերից, հանրային ծառայողները տարանջատվում են դասերի և այլն, ինչը հնարավորություն է տալիս ցուցաբերելու տարբերակված մոտեցում վերջիններիս վարձատրությունը որոշելիս և այլ սոցիալական խնդիրներ լուծելիս:

Ֆրանսիայում, ինչպես և Մեծ Բրիտանիայում, գործում է հանրային ծառայության անցնելու, մեկ խմբից մեկ այլ խումբ տեղափոխվելու բարդ համակարգ, մրցութային եղանակը չի գործում միայն հանրային ծառայության բարձրագույն և ստորադաս դասերի համար: Ընդ որում, մրցույթում հաղթող յուրաքանչյուր անձ պարտադիր պետք է անցնի աշխատանքի. պարզապես հնարավոր է մի որոշ կարճ ժամանակ վերջինիս ներգրավեն ռեզերվում: Այլ կերպ ասած, հանրային ծառայության նշանակելու ու առաջխաղացման համակարգերը հնարավորինս երաշխավորված են:

Հանրային ծառայողների վարձատրության չափի վրա մեծ ազդեցություն ունի աշխատանքային ստաժը, ինչը համարվում է կայունության լրացուցիչ երաշխիք: Սոցիալական երաշխիքները ևս նպաստում են ծառայության կայունությանը և մասնավոր ոլորտի համեմատությամբ այն դարձնում հնարավորինս մրցունակ:

Կարգապահական տույժեր նշանակում է վերադաս վարչական մարմինը, որի որոշումը կարող է բողոքարկվել դատարան՝ միայն լիազորությունների չարաշահման հիմքով: Որոշ դեպքերում, միևնույն անձի նկատմամբ միաժամանակ կարող է հարուցվել կարգապահական և քրեական վարույթ: Ընդ որում, արդարացնող հիմքով քրեական գործի վարույթի կարճումն ինքնին հիմք չէ կարգապահական վարույթը կարճելու համար, քանի որ անձը կարգապահական պատասխանատվության կարող է ենթարկվել նաև հիմնավոր կասկածի դեպքում:

Հանրային ծառայողների սոցիալական իրավունքների շրջանակն աստիճանաբար ընդլայնվում է, օրինակ՝ մինչև 1946թ. վերջիններս զրկված էին գործադուլի իրավունքից: Միաժամանակ, առավել խստացվում են վարչարարության կանոնները: Այսպես, մինչև 1979թ. վարչական մարմինները և դրանց պաշտոնատար անձինք պարտավոր չէին հիմնավորելու իրենց վարչական ակտերը:

Ֆրանսիայում վարչական դատարաններն անկախ են վարչական մարմիններից և, միաժամանակ, չեն մտնում որևէ դատական համակարգի մեջ: Վարչական դատարանների ստեղծումը փոխկապակցվում է Նապոլեոնի կողմից 1799թ. Պետական խորհրդի հիմնադրման հետ: Մեկ տարի անց ստեղծվեցին պրեֆեկտուրաների խորհուրդներ (դրանք համարվում էին Պետական խորհրդի տարածքային օղակներ), որոնց որոշումները պարտադիր էին վարչական մարմինների համար: Արդեն 1872թ. հիշյալ խորհուրդներին վերապահվեցին դատական լիազորություններ:

Վարչական մարմինների և վարչական դատարանների միջև անհարկի հակասությունները բացառելու նկատառումով գործում է այդ մարմինների պաշտոնյաների համար պաշտոնափոխման կարգ: Սա, թեպետ հակասում է դատավորների անփոխարինելիության սկզբունքին, սակայն համարվում է կոռուպցիոն ռիսկերը հնարավորինս բացառելու և պաշտոնյաների համար առավել շրջահայաց գործելու գրավական:

Վարչական արդարադատությանն առավելապես բնորոշ է դռնփակ ու գրավոր դատաքննությունը, քանի որ դրանք համարվում են պետական գաղտնիքը պաշտպանված դարձնելու անհրաժեշտ գործոններ: Վարչական արդարադատության մատչելիության նկատառումով դիմողներն ազատված են պետական տուրքից:

Գերմանիա[1]: Վարչական իրավունքը, որպես Գերմանիայի իրավական համակարգի ինուրույն ճյուղ, ձևավորվել է 19-րդ դարի սկզբներին: Ներկայումս իրավունքի այդ ճյուղի նշանակությունը անչափ մեծացել է, վերջինս կարգավորում է սոցիալ-տնտեսական կյանքի կառավարման բոլոր ոլորտները: Վարչական իրավունքի բնորոշմանը հատուկ է կարգավորման առարկայի առանձին տարրերի բացառումը: Այսպես, վարչական իրավունքը բնորոշվում է, որպես հանրային իրավունքի ճյուղ, որը չի պարունակում սահմանադրության և դատավարության դրույթները:

Վարչական իրավունքի աղբյուրներ են համարվում Սահմանադրությունը, օրենքները, գործադիր իշխանության մարմինների իրավական ակտերը, ինչպես նաև Դաշնային վարչական դատարանի դատական ակտերը:

Գործադիր իշխանության կենտրոնական մարմիններ են հանդիսանում նախագահը, կանցլերը, դաշնային կառավարությունը, նախարարությունները և այլ կառավարչական հիմնարկները: Կառավարության գործունեության կարգը սահմանում է հենց կառավարությունը, սակայն այն իրավական ուժ է ստանում միայն դաշնային նախագահի կողմից հաստատվելուց հետո:

Դաշնային կանցլերը նշանակվում է խորհրդարանի պալատի (բունդեստագի) կողմից՝ դաշնային նախագահի ներկայացմամբ: Նախարարները նշանակվում են նախագահի կողմից՝ կանցլերի ներկայացմամբ:

Հողերի (դրանք 16-ն են) նախարարները նշանակվում են տվյալ հողի պրեմիեր-մինիստրի կողմից: Հողերի կառավարության կազմը պայմանավորված է տվյալ հողի կարիքներով և սկզբունքորեն նման է

[1] Գերմանիայի վարչական իրավունքն առավել հանգամանալից հետազոտված է՝ «Местное самоуправление в Германии (Германский Фонд международного правового сотрудничества). - М., 1996.» աշխատությունում:

դաշնային կառավարության կազմին. բացակայում է միայն արտաքին գործերի նախարարությունը: Հողերը բաժանված են թվով 50 օկրուգների (բեցիրկների), որոնցում գործում են տարածքային կառավարման մարմիններ: Պետական կառավարման վարչա-տարածքային ստորին միավորները շրջաններն են (կրայս կամ լանդկրայս), որոնց ղեկավարներն ընտրվում են կամ անմիջապես բնակչության, կամ շրջանային ժողովների կողմից:

Համայնքների բնակչությունը, որպես կանոն, փոքրաթիվ է, այն չի գերազանցում 30 հազարը: Սակավ են ավելի մեծաքանակ բնակչություն ունեցող համայնքները: Համայնքների ղեկավարների՝ բուրգոմիստրների, ընտրությունը ևս միատեսակ չէ, դրանց մի մասն ընտրվում է անմիջապես բնակչության, մյուս մասը՝ ներկայացուցչական մարմինների կողմից: Ընդ որում, ընտրության տարբեր եղանակները թելադրված են որոշակի ավանդույթներով:

Համայնքների հիմնական մարմինը դրանց մունիցիպալ խորհուրդներն են, որոնք օժտված են տեղական գրեթե բոլոր հիմնահարցերի առնչությամբ որոշումներ կայացնելու լիազորությամբ (լիազորությունների մի մասը վերապահված են բուրգոմիստրներին): Ընդ որում, համայնքներն իրենց բնակչության կազմով հիմնականում քաղաքային են. գյուղական համայնքների բնակչությունը կազմում է 10 տոկոս:

Ի տարբերություն ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի, Գերմանիայում հստակ սահմանազատված չեն պետական կառավարման մարմինների և համայնքների լիազորությունները բնակչության կոմունալ սպասարկման կառավարման ոլորտում:

Համայնքային մարմինների նկատմամբ իրավական հսկողություն իրականացնելու լիազորությունը վերապահված է դաշնային ներքին գործերի նախարարությանը: Իրավական հսկողության ընթացքում բացահայտված ապօրինի իրավական ակտերը կարող են բողոքարկվել, ընդ որում, իրավական ակտի բողոքարկումը կասեցնում է դրա գործողությունը:

Հանրային ծառայությունը Գերմանիայում նույնպես հանդիսանում է վարչական իրավունքի ինստիտուտ: Թերևս, առանձնահատկությունը տվյալ դեպքում այն է, որ հանրային ծառայողներին բնորոշելու համար օրենսդրությունն օգտագործում է «պաշտոնյա» եզրույ-

թը, իսկ «ծառայող» եզրույթն օգտագործվում է վարձու աշխատակիցների պարագայում: Հանրային ծառայության իրավական հիմքն է հանդիսանում «Պաշտոնյաների մասին» 1953թ. դաշնային օրենքը, որում էական փոփոխություններ ու լրացումներ են կատարվել 1985թ.: Հողերում գործում են հանրային ծառայության մասին առանձին օրենքներ, որոնք բովանդակում են էական առանձնահատկություններ. խնդիրն այն է, որ 1953թ. օրենքի դրույթների մեծ մասը հողերի համար ունի սոսկ խորհրդատվական նշանակություն:

Գերմանիայի հանրային ծառայության թերություններից է համարվում այն, որ վերջինս ակնհայտ փակ համակարգ է, յուրաքանչյուր պաշտոնյայի նկատմամբ քաղաքական, մասնագիտական և իրավական վերահսկողությունն ամբողջ ծավալով իրականացվում է վերադաս վարչական մարմնի կամ պաշտոնյայի կողմից: Նույն կերպ հանրային ծառայողների կողմից թույլ տրված խախտումների առնչությամբ վարույթ իրականացնում են բացառապես վերադաս վարչական մարմինները: Վերջին տարիներին ձեռնարկվել են լուրջ քայլեր՝ ստեղծված համակարգն արմատապես վերանայելու նկատառումով, սակայն ձևավորված ավանդական մոտեցումները տվյալ դեպքում դեռևս հնարավորություն չեն տալիս ներդնելու առաջադրված բարեփոխումները:

Հանրային ծառայողներին ներկայացվող պահանջները հիմնականում համընդհանուր են, սակայն կան նաև նկատելի առանձնահատկություններ: Օրինակ, ծառայության անցնելու պարտադիր պահանջներից է համարվում ազգությամբ գերմանացի լինելը, կայուն նյութական վիճակը և այլն: Հանրային ծառայողները բաժանվում են 4 խմբի: Այս դեպքում դարձյալ հաշվի են առնվում լիազորությունների բնույթը, ծավալը, մասնագիտացումը, փորձը և այլն: Առանձնահատկություններից է նաև հանրային ծառայողների պաշտպանության ամուր համակարգի առկայությունը: Մասնավորապես, քրեական օրենսդրությունը անհամեմատ խիստ պատասխանատվություն է սահմանել պաշտոնյաների նկատմամբ ոտնձգությունների, նրանց զրպարտելու ու վիրավորելու համար:

1976թ. «Վարչական վարույթի մասին» դաշնային օրենքի համաձայն, կառավարման գործունեությունն իրականացվում է վարչական ակտեր և նորմատիվ ակտեր ընդունելու եղանակով: Այդ օրենքը, ըստ

էության, դրվել է հայրենական վարչական օրենսդրության, մասնավորապես «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի հիմքում, ուստի այդ ակտում վարչական ակտին կամ նորմատիվ ակտին տրված բնորոշումները նույնական են վերը նշված օրենքում տրված բնորոշումներին:

Միաժամանակ, առկա են որոշ առանձնահատկություններ, որոնք բխում են սահմանադրական դրույթներից: Օրինակ, Գերմանիայում վարչական ակտն սկզբնապես կարող է բողոքարկվել միայն վերադասության կարգով, վերադաս մարմնի կողմից սահմանված ժամկետում բողոքի առնչությամբ որոշում չկայացնելը գնահատվում է ոչ թե որպես դիմումի բավարարում, այլ մերժման մասին որոշման կայացում և այլն:

Կարևոր առանձնահատկություն է նաև այն, որ պետական կառավարման բոլոր մարմինների գործունեությունը բաժանվում է փաստացիի և իրավականի: Փաստացի է համարվում օրենսդրությամբ չնախատեսված այն գործունեությունը, որը չի առաջացնում անմիջական իրավական հետևանք: Իրավական գործունեության դեպքում պետական կառավարման մարմինը կատարում է օրենքով սահմանված և վերջինիս հանրային պարտականությունների կատարմանն ուղղված գործողություններ: Ընդ որում, կառավարման գործունեություն չի համարվում այն ակտերի ընդունումը, որոնք ոչ թե ուղղակիորեն կարգավորում են որևէ հարաբերություն, այլ արձանագրում են կոնրետ փաստը: Օրինակ, վթարի առնչությամբ հետաքննություն նշանակելու մասին իրավական ակտը չի համարվում կառավարման գործունեություն:

Վարչական մարմինների նկատմամբ դատական վերահսկողությունը վերապահված է դաշնային վարչական արդարադատության մարմիններին, որոնց վերադաս դատական ատյանը համարվում է Դաշնային վարչական դատարանը: Առաջին և երկրորդ ատյանի դատարանները գտնվում են հողերի իրավազորության ներքո: Որպես կանոն, Դաշնային վարչական դատարանը հանդիսանում է վճռաբեկ, և միայն առանձին դեպքերում է գործերը քննում ըստ էության: Վարչական ակտերի բողոքարկումը, որպես կանոն, կասեցնում է այդ ակտերի գործողությունը:

Վերոհիշյալը միանշանակ վկայում է այն մասին, որ Գերմանիա-

յի վարչական իրավունքն էապես տարբերվում է ոչ միայն մայրցամաքային իրավական համակարգից, այլև մեր երկրի վարչական իրավունքից և, հատկապես, դրա շրջանակներում ավանդաբար ձևավորված ինստիտուներից ու տեսական մոտեցումներից, ինչն այնքան էլ շահեկան չի դարձնում հայրենական իրավական համակարգում դրա անվերապահ ու անհաշվենկատ կիրառման շրջանակների ընդլայնումը:

Իտալիա[1]: Վարչական իրավունքն այս երկրում, ինչպես և մայրցամաքային իրավական համակարգի մյուս երկրներում, կազմում է իրավունքի ինքնուրույն ճյուղ և առանձնանում է բավականին ինքնատիպ ու պատմական մեծ փորձով հարուստ ինստիտուտներով: Իտալիայի վարչական իրավունքին բնորոշ առանձնահատկություններից մեկն այն է, որ գրեթե անհնարին է հստակ ուրվագծել հանրային կառավարում իրականացնող մարմինների համակարգը: Նախ, այն հեմամատաբար արագ է փոփոխության ենթարկվում, և բացի այդ, լայն է այն մարմինների շրջանակը, որոնք իրավասու են ձևավորելու հանրային կառավարման գործառույթ իրականացնելու լիազորություն ունեցող մարմիններ:

Մինչև 1947թ. իրավական բարեփոխումները, իտալիայի վարչական իրավունքում նախապատվությունը տրվել է խիստ կենտրոնացվածությանը: Ընդ որում, կառավարման կենտրոնական մարմիններն օժտված են եղել նաև համայնքային մարմիններին բնորոշ լիազորություններով: Նշված իրավական բարեփոխումների արդյունքում հիշյալ համակարգը ձերբազատվել է համայնքային մարմիններին բնորոշ լիազորություններից և, բնականաբար, կրել համապատասխան արմատական կառուցվածքային փոփոխություններ: Ընդ որում, տեղական ինքնակառավարման ինստիտուտի բարելավման նկատառումով ձևավորվել են 20 մարզեր, որոնցում համայնքային մարմիններն օժտված են լայն լիազորություններով:

Հաջորդ առանձնահատկությունն այն է, որ Իտալիայում գործում է իրավական ակտերի ստորադասությունը հստակ սահմանող օրենք

[1] Իտալիայի վարչական իրավունքն առավել հանգամանալից հետազոտված է՝ «Моргунова А.Ж. Некоторые проблемы административного права Италии // Актуальные проблемы буржуазного административного права. - М., 1984.» աշխատությունում:

(այն իր լուծումներով համահունչ է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքին): Ընդ որում, կառավարությունն օժտված է վարչական իրավունքի աղբյուր հանդիսացող օրենքի ուժ ունեցող որոշումներ (դրանք կոչվում են օրենսդրական դեկրետներ) ընդունելու լիազորությամբ: Օրենքներ ընդունելու լիազորությամբ օժտված են նաև մարզային մարմինները, սակայն դրանք իրենց իրավական ուժով և կարգավորման ենթակա հարցերի շրջանակով զիջում են երկրի խորհրդարանի կողմից ընդունված օրենքներին:

Վարչական իրավունքի կարևոր առանձնահատկություններից է նաև այն, որ անձանց իրավունքներին առնչվող իրավական ակտեր ընդունելիս կառավարությունը և մյուս վարչական մարմինները պարտադիր կազմակերպում են հանրային լսումներ:

Սովորույթը ևս համարվում է վարչական իրավունքի աղբյուր, սակայն վերջինս, ի տարբերություն այլ երկրների, վերաբերում է կարգավորման ենթակա հարաբերությունների անհամեմատ նեղ շրջանակի:

Իտալիան հանդիսանում է խորհրդարանական հանրապետություն, ուստի կառավարության կազմը հաստատվում է խորհրդարանի կողմից: Ընդ որում, ի տարբերություն մյուս երկրների, հաստատվում է ոչ միայն նախարարների խորհրդի նախագահի, այլև բոլոր նախարարների թեկնածությունները: Նախարարների խորհրդի նախագահին նշանակում է երկրի նախագահը, որն էլ վերջինիս ներկայացմամբ նշանակում է նաև նախարարներին:

Նախարարների խորհուրդը որոշում է ողջ կառավարության գործունեության ուղղությունները և կարգը: Այս մարմնի կազմի մեջ են մտնում խորհրդի նախագահը, նախագահի տեղակալները, նախարարները, նախարարների խորհրդի բյուրոյի նախագահը և որոշ նախարարների տեղակալներ: Նշենք նաև, որ Սահմանադրության 93-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, նշված խորհրդի կազմի մեջ են մտնում միայն նախագահը և նախարարները, սակայն գործնականում այդ դրույթը տարածական մեկնաբանության առարկա է դարձել: Միաժամանակ, հանդիպել են դեպքեր, երբ նախարարներից մեկը միաժամանակ նշանակվել է, որպես նախարարների խորհրդի նախագահ:

Բացի նախարարություններից, գործադիր իշխանության գոր-

ծառայթներ են իրականացում միջնախարարական կոմիտեները և այլ պետական հիմնարկները: Կառավարման լայն լիազորություններ ունի նաև նախարարների խորհրդի բյուրոն, որն, ըստ էության, հանդիսանում է կառավարության աշխատակազմը: Ինչպես արդեն ասվեց, Իտալիայի վարչական մարմինների համակարգին բնորոշ է եղել խիստ կենտրոնացվածությունը: Թերևս, ավանդույթի ուժով այս սկզբունքի տարրեր կարելի է հանդիպել նաև մեր օրերում: Այսպես, բոլոր նախարարությունների համար գործում է մեկ միասնական հաշվապահություն: Բացի այդ, նույնասեռ կառավարման ոլորտներ սպասարկող առանձին նախարարությունների գործունեությունը համակարգելու համար գործում են միջնախարարական կոմիտեներ և այլն:

Վերջապես, Իտալիայում նույնպես նկատվել է գործադիր իշխանությունից անկախ կառավարման մարմիններ ստեղծելու գործընթաց: Այս մարմինները բացառապես հաշվետու և պատասխանատու են խորհրդարանին: Սակայն վերջին 5 տարների ընթացքում այս երկրում նկատվում է արդեն հակառակ միտումը. աստիճանաբար կրճատվում են անկախ կառավարման մարմինները: Այս երևույթը բացատրվում է այդ մարմինների ոչ այնքան արդյունավետ աշխատանքով: Մասնավորապես, գերիշխում է այն դիրքորոշումը, ըստ որի հիշյալ մարմինների նկատմամբ սահմանված խորհրդարանական վերահսկողությունը ունակ չէ արդյունավետ փոխարինելու վարչական կարգով իրականացվող վերահսկողությանը:

Հանրային ծառայության առանձնահատկություններից է այն, որ մրցույթից զատ, հանրային ծառայողներ նշանակելու լայն հայեցողությամբ է օժտված վարչական մարմնի ղեկավարը: 1992-93թթ. էապես կրճատվեց հաստիքային հանրային ծառայողների ընդհանուր թվաքանակը, ինչի արդյունքում տարածում ստացավ պայմանագրային հիմունքներով ծառայության ընդունելու պրատիկան:

Իտալիայում գործում է կառավարման եռաստիճան համակարգ: Ընդ որում, բացակայում է այդ մարմինների լիազորությունները և գործունեության կարգը սահմանող միասնական օրենսդրական ակտ: Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության առանձնահատկություններից է այդ մարմինների ղեկավարներին անհամեմատ լայն լիազորություններով օժտելը, ինչը հավանաբար ևս

թելադրված է կառավարման խիստ կենտրոնացվածության ավանդույթներով:

Վարչական մարմինների գործունեության նկատմամբ հսկողություն և վերահսկողություն իրականացնող մարմինների կազմը և կառուցվածքը խիստ լայն է ու բարդ: Էական դեր է վերապահված Հաշվիչ պալատին և Պետական խորհրդին, որոնք գործում են կառավարությունից անկախ: Հաշվիչ պալատը ձևավորվել է դեռևս 1862թ., որի ներկայիս կարգավիճակը ամրագրված է 1934թ. հուլիսի 12-ի թիվ 1214 օրենքով (դրանում էական փոփոխություններ են կատարվել 1994թ. հունվարի 14-ի թիվ 1920 օրենքով): Հաշվիչ պալատը իրականացնում է ինչպես նախնական, այնպես էլ՝ ընթացիկ վերահսկողություն: Պետական խորհուրդը հիմնադրվել է 1859թ. հոկտեմբերի 30-ի թիվ 3707 օրենքով, որն էապես վերանայվել է 1924թ. հունիսի 26-ի թիվ 1054 օրենքով:

Վերահսկողության առանձնահատկություններից է այն, որ վարչական ակտերը և գործողությունները (անգործությունը) կարող են վիճարկվել ինչպես հատուկ վարչական արդարադատություն իրականացնող վարչական մարմինների կողմից, այնպես էլ՝ ընդհանուր իրավասության դատարաններում:

Բուլղարիա[1]: Վարչական իրավունքը Բուլղարիայում, ինչպես և արևմտյան Եվրոպայի նախկին սոցիալիստական երկրներում, հանդիսանում է անցյալ դարի 80-ականների վերջերին և 90-ականների սկզբներին արմատապես վերանայված իրավական համակարգի բաղկացուցիչ մաս: 1990թ. հունվարի 15-ին ընդունված օրենքով Սահմանադրության մեջ կատարվեցին էական փոփոխություններ, մասնավորապես, բացառվեց Կոմունիստական կուսակցության ղեկավար և ուղղություն տվող քաղաքական ուժի կարգավիճակը: Իսկ արդեն նույն թվականի ապրիլի 3-ի օրենքով ամրագրվեց իշխանությունների տարանջատման սկզբունքը:

Բոլոր դեպքերում ներկայիս վարչական իրավունքի հիմնադրույթներն իրենց ամրագրումն ստացան 1991թ. հուլիսի 12-ին ընդուն-

[1] Բուլղարիայի վարչական իրավունքն առավել հանգամանալից հետազոտված է՝ «Жданов А.А. Административное право буржуазных государств. Учебное пособие. -ML, 1997.» աշխատությունում:

ված Սահմանադրությամբ: Վարչական իրավունքի աղբյուրներ են համարվում նաև ընթացիկ օրենքները, կառավարության և գործադիր իշխանության այլ մարմինների իրավական ակտերը: Բուլղարիայում սովորույթը և դատական ակտերը իրավունքի աղբյուր չեն համարվում:

Գործադիր իշխանության մարմիններն են երկրի նախագահը, նախարարների խորհուրդը, նախարարները, մարզային կառավարիչները և կմետները: Երկրի նախագահը խորհրդարանի հաստատմանն է ներկայացնում նախարարների խորհրդի նախագահի թեկնածությունը՝ նախապես նրան սահմանված կարգով հանձնարարելով կազմավորել կառավարություն: Եթե վերջինիս հաջողվում է 7-օրյա ժամկետում կազմավորել կառավարություն, ապա այդ անձի թեկնածությունը ներկայացվում է խորհրդարանի հաստատմանը: Նախագահը, որպես գերագույն հրամանատար, նշանակում է բարձրագույն հրամանատարական կազմին:

Գործադիր իշխանության որոշ գործառույթներ է իրականացնում Ազգային անվտանգության խորհուրդը, որի կազմի մեջ են մտնում Ժողովրդական ժողովի նախագահը, նախարարների խորհրդի նախագահը, պաշտպանության նախարարը, արտաքին գործերի նախարարը, ներքին գործերի նախարարը, բանակի գլխավոր շտաբի պետը և խորհրդարանական յուրաքանչյուր խմբակցությունից մեկական անդամ: Դժվար չէ նկատել, որ նույնաբնույթ մարմինների հիմնադրման պրակտիկան բնորոշ է նաև նախկին խորհրդային պետություններին: Այս դեպքում պարզապես առանձնահատկությունն այն է, որ հիշյալ խորհուրդը սոսկ խորհրդատվական մարմին չէ և հանդիսանում է դասական իմաստով գործադիր իշխանության մարմին:

Նախարարների խորհուրդը բաղկացած է այդ խորհրդի նախագահից, նրա տեղակալներից և նախարարներից, որոնց թիվը Ժողովրդական ժողովի որաշմամբ կազմում է 14: Նախարարություններում գործում են խորհրդատվական մարմիններ՝ կոլեգիաներ: Բացի նախարարություններից, գործադիր իշխանություն են իրականացնում նաև Նախարարների խորհրդի անմիջական ղեկավարության տակ գործող կոմիտեները և այլ պետական մարմինները:

Հանրային ծառայությունը Բուլղարիայում ներկայացվում է «պետական ծառայություն եզրույթով», ինչը ավանդաբար ներառում է

բացառապես պետական մարմիններում պաշտոնավարող անձանց: Այս եզրույթը օրենսդրությունում օգտագործվում է ինչպես նեղ (երբ ներառում է միայն քաղաքացիական ծառայությունը, բացառելով հայեցողական ու քաղաքական պաշտոնները), այնպես էլ՝ լայն իմաստով (այս դեպքում ներառում է նաև հատուկ ծառայությունները՝ զինվորական, ոստիկանության և այլն): Այսինքն, նույնիսկ լայն իմաստով հիշյալ եզրույթը չի ներառում հայեցողական և քաղաքական պաշտոնները:

Բուլղարիայում արմատապես վերանայվել է նաև վարչատարածքային միավորումներում կառավարման համակարգը: Նախ, տեղական իշխանության մարմինները փոխարինվել են տեղական ինքնակառավարման մարմիններով: Բացի այդ, պետական իշխանության մարմինները հարաբերվում են այդ մարմինների հետ բացառապես օրենքով ամրագրված կանոններով և օժտված են ներազդելու խիստ սահմանափակ լիազորություններով: Մասնավորապես, դրանք սահմանափակվում են վերահսկողական գործառույթներով:

Բուլղարիայում տարածքային կառավարման համար տարածքը բաժանված է 8 մարզերի, իսկ տեղական ինքնակառավարման համար՝ 252 համայնքների: Մարզի ղեկավարը նշանակվում է կառավարության կողմից և պարտավոր է ապահովել կառավարության քաղաքականությունը տեղերում:

Տեղական ինքնակառավարման մարմինները տեղերում համայնքային խորհուրդներն են, որոնք ընտրվում են 4 տարի ժամկետով: Համայնքային խորհուրդների ղեկավարները՝ կմետները, ևս ընտրվում են 4 տարի ժամկետով կամ բնակչության, կամ համայնքային խորհրդի կողմից: Կմետը ղեկավարվում է հանրապետական օրենսդրությամբ, համայնքային խորհրդի, ինչպես նաև համայնքի բնակչության կողմից կայացված որոշումներով:

Պետական կառավարումը հիմնականում իրականացվում է իրավական և կազմակերպական գործունեության միջոցով: Իրավական գործունեության տակ հասկացվում է իրավական ակտեր ընդունելը: Ընդ որում, իրավական ակտերի անվանումները և դրանց կարգավորման առարկան՝ խորհրդային իրավական համակարգի համեմատությամբ գրեթե էական փոփոխության չի ենթարկվել: Այսպես, նախարարների խորհուրդն ընդունում է որոշումներ (դրանց մեծ մասը նոր-

մատիվ են), կանոնակարգեր, կարգադրություններ և հրամաններ[1]:

Վարչական մարմինների նկատմամբ իրականացվում է ինչպես վարչական, այնպես էլ՝ դատական հսկողություն: Ցանկացած վարչական ակտ կարող է բողոքարկման առարկա լինել: Գերագույն վճռաբեկ դատարանն օժտված է բոլոր դատավորների կողմից օրենքների ճշգրիտ և միատեսակ կատարման նկատմամբ հսկողության լիազորությամբ: Ինչ վերաբերում է գերագույն վարչական դատարանին, ապա վերջինս օժտված է գերագույն վճռաբեկ դատարանին վերապահված նշված լիազորությամբ, սակայն այն սահմանափակվում է բացառապես վարչաիրավական օրենսդրությամբ:

Վարչական մարմինների ակտերը, գործողությունը (անգործությունը) կարող են վիճարկվել ինչպես դատական, այնպես էլ՝ վարչական կարգով:

Դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ իրականացնելու լիազորությունը վերապահված է բարձրագույն դատական խորհրդին, որի կազմի մեջ, ի պաշտոնե, մտնում են վերը նշված գերագույն դատարանների նախագահները և երկրի գլխավոր դատախազը: Ընդհանուր առմամբ խորհուրդը բաղկացած է 25 անդամից:

Ճապոնիա[2]: Ընդհանուր իրավական համակարգում վարչական իրավունքը վերջին 50 տարիների ընթացքում արմատապես բարեփոխվել է, ձեռք բերելով իրավունքի կայացած ինքնուրույն ճյուղի նշանակություն: Մինչև 1945-52թթ. բարեփոխումները, վարչական իրավունքը զուտ պայմանականորեն կարող էր համարվել իրավունքի ինքնուրույն ճյուղ. 1889թ. Սահմանադրությունը պետական իշխանությունը ամբողջովին վերապահել էր միապետին, որն էլ միանձնյա իրավասու էր կարգավորելու կառավարման հարաբերությունները: Մինչդեռ, 1946թ. ընդունված և 1947թ. ուժի մեջ մտած Սահմանադրությունը հստակ ամրագրեց իշխանությունների տարանջատման

---

[1] Տվյալ դեպքում, հաշվի առնելով դրանց բովանդակությունը և իրավական արժեքը, փորձել ենք նշել այդ իրավական ակտերի անվանումների համարժեքը: Իսկ իրականում դրանք ունեն այլ անվանումներ: Օրինակ կարգադրությունները անվանվում են «ներեղբաներ»:

[2] Ճապոնիայի վարչական իրավունքն առավել հանգամանալից հետազոտված է՝ «Макаров А.Л. Политическая власть в Японии. Механизм функционирования на современном этапе. - М., 1989.» աշխատությունում:

սկզբունքը և հիմք հանդիսացավ ժողովրդավարության ինստիտուտների կայացման ու զարգացման համար:

Իրավական համակարգի զարգացման համար, որպես ելակետ մշտապես ընդունվել է մայրցամաքային իրավական համակարգը, հատկապես 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին մեծ նշանակություն է տրվել գերմանական վարչական իրավունքին: Սակայն Ճապոնիայի իրավական համակարգը ամբողջովին չգտնվեց մայրցամաքային իրավական համակարգի ազդեցության տակ. աստիճանաբար, հատկապես 2-րդ համաշխարհային պատերազմից հետո, նախապատվությունը տրվեց անգլոսաքսոնական իրավական համակարգին բնորոշ ինստիտուտներին և իրավական սկզբունքներին:

Իրավական հայտնի համակարգերի ազդեցությունը, այնուամենայնիվ, չի խոչընդոտել, որպեսզի այս երկրում ձևավորվեն բացառապես ճապոնական մշակույթի նրբություններով պայմանավորված իրավական ինքնատիպ ինստիտուտներ, եզրույթներ ու գաղափարներ: Այսպես, վարչական իրավունքը բնորոշելիս հստակ ընդգծվում է պետական իշխանության գերակայությունը և ժողովրդի ենթակայությունը պետական իշխանությանը: Այլ կերպ ասած, Ճապոնիայի իրավական համակարգը միանշանակ չի համարում ժողովրդաիշխանության գաղափարը:

Լուրջ հաջողությունների են հասել Ճապոնիայում պետական կառավարման մեթոդների ու սոցիալ-հոգեբանական հիմքերի կատարելագործման կտրվածքով: Ներկայումս առավել գերիշխող է այն տեսակետը, ըստ որի ձևավորվել է ճապոնական կառավարման ինքնատիպ ու խիստ շահեկան ինստիտուտ, որը համակողմանի ուսումնասիրվում է աշխարհի առաջատար ուսումնական հաստատություններում ու գիտահետազոտական հիմնարկներում: Ընդ որում, կառավարման հիշյալ համակարգը հագեցած է ասիական տարածաշրջանում տարածված կրոնական ուսմունքներով և փիլիսոփայական գաղափարներով: Այսպես, օրինակ այդ ուսմունքներին համապատասխան, կառավարման մեթոդաբանությունը բացառում է այնպիսի քննադատությունը, որը կարող է խաթարել պաշտոնյայի ինքնասիրությունը և նվազեցնել ինքնավստահությունը: Կառավարման մարմնի անձնակազմը, ինչպես և ողջ հասարակությունը, պարտավոր է ելակետ ընդունել այն գաղափարը, որ իրենք անխուսափելիորեն օժտ-

ված են ներքին հոգեկան ներդաշնակությամբ և այլն:

Վարչական իրավունքի առանձնահատկություններից է նաև վարչական մարմիններին և դրանց պաշտոնյաներին հայեցողական լայն լիազորությամբ օժտելը, ինչը բխում է պետական իշխանության գերակայության սկզբունքից: Այսպես, օրինակ ճապոնական ոստիկանությունը իրավասու է ինքնուրույն սահմանելու հանրային մեծ վտանգավորություն չունեցող արարքների համար պատասխանատվության տեսակը և չափը:

Պետական կառավարման ոլորտներից, թերևս, միայն տնտեսության կառավարման դեպքում է որոշակիորեն սահմանափակվում հայեցողական լիազորությունների շրջանակը: Հիմք է ընդունվում այն մոտեցումը, ըստ որի տնտեսության կառավարման ոլորտում մեծ են կոռուպցիոն ռիսկերը: Թերևս, այդ նկատառումով են պարբերաբար իրականացվում պաշտոնյաների փոխատեղումներ, վերջիններս կենսաթոշակի են անցնում համեմատաբար վաղ տարիքում (55 տարեկան հասակում) և այլն:

Վարչական իրավունքի աղբյուրներ են հանդիսանում Սահմանադրությունը, օրենքները և ենթաօրենսդրական ակտերը: Ընդ որում, օրենքների 1/3-դը վերաբերում է բացառապես վարչական իրավունքին: Ի տարբերություն օրենսդրության մյուս ճյուղերի, վարչական օրենսդրությունը դեռևս կոդիֆիկացված չէ: Ինչ վերաբերում է միջազգային պայմանագրերին, ապա դրանք գործում են անմիջականորեն և լրացուցիչ օրենսդրական ամրագրման կարիք չունեն:

1947թ. Սահմանադրության ընդունմամբ Ճապոնիան դուալիստական միապետությունից վերածվեց սահմանադրական միապետության: Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն, միապետը հանդիսանում է պետության և ժողովրդի միասնության խորհրդանիշը, նրան է պատկանում ինքնիշխանությունը: Սահմանադրությամբ վերացվեցին Գաղտնի խորհուրդը և Միապետի պալատական նախարարությունը, որոնք համարվում էին խորհրդարանի և կառավարության վերադասը: Ներկայումս Ճապոնիայի միապետը գործնականում գրեթե օժտված չէ կառավարման լիազորություններով, ուստի ընդունված է ասել. «ղեկավարում է, բայց չի կառավարում»: Վերջինս խորհրդարանի որոշմամբ նշանակում է երկրի պրեմիեր-մինիստրին, հաստատում է պետական նախարարների և այլ բարձրաստիճան

պաշտոնյաների նշանակումն ու ազատումը: Ընդ որում, այդ լիազորություններն իրականացնելիս միապետը զրկված է անձնական իշխանությունից, նա պարտավոր է ղեկավարվել նախարարների կաբինետի խորհուրդներով: Միաժամանակ, Ճապոնիայում իշխող է այն տեսակետը, որ գործնականում միապետն ունի նկատելի քաղաքական կշիռ, իսկ Սահմանադրությունում ամրագրված «քնած» դրույթները կարող են արտակարգ դեպքերում լուրջ լծակ լինել կառավարության դեմ:

Գործադիր կենտրոնական իշխանությունը Ճապոնիայում պատկանում է նախարարների կաբինետին, որը բաղկացած է պրեմիեր-մինիստրից, պետական նախարարներից, նախարարների կաբինետի գլխավոր քարտուղարից և նախարարների կաբինետի օրենսդրական բյուրոյի պետից: Պետական նախարարների առնվազն կեսը պետք է լինեն խորհրդարանի պատգամավորներ: Ընդ որում, պետական նախարարներ չեն կարող լինել այն անձինք, որոնք երբևէ գտնվել են զինվորական ծառայության մեջ: Կենտրոնական կառավարման մարմիններից են նաև կոմիտեները, վարչությունները և պետական գրասենյակները: Կառավարությանը կից գործում են մի քանի խորհրդատվական մարմիններ, որոնցից կարևորագույնն է համարվում ազգային պաշտպանության խորհուրդը:

Պետական ծառայությունն ընդգրկում է ոչ միայն կառավարման ոլորտի պաշտոնյաներին, այդ թվում՝ դիվանագետներին, այլև՝ դատավորներին: Ընդհանրապես, «պետական ծառայող» եզրույթն այս երկրում ունի չափազանց ընդգրկուն բովանդակություն: Պետական ծառայողներ են համարվում ոչ միայն պետական մարմիններում աշխատող անձինք, այլև նրանք, ովքեր աշխատում են հանրային հեռուստատեսությունում, հանրային սպասարկման այլ կառույցներում և այլն: Այս ինստիտուտի իրավական հիմքը 1947թ. ընդունված և բազմակի փոփոխությունների ենթարկված «Պետական ծառայողների մասին» օրենքն է: Ինչ վերաբերում է տեղական ինքնակառավարման ծառայողներին, ապա վերջիններիս կարգավիճակը ամրագրված է 1950թ. ընդունված «Տեղական ծառայողների մասին» օրենքով: Պետական ծառայողները բաժանված են 15 խմբի, ինչը հիմք է պետական ծառայողի լիազորությունների շրջանակը, վարձատրության չափը և, ընդհանրապես վերջինիս կարգավիճակը որոշելու համար:

Պետական ծառայության ոլորտում վերահսկողությունն իրականացնում է պետական նախարարների կաբինետին կից անձնակազմի հարցերով խորհուրդը: Վերջինս համարվում է խորհրդատվական մարմին և քննության արդյունքներով եզրակացություններ է ներկայացնում խորհրդարանին, կառավարությանը և առանձին պետական նախարարների:

Պետական ծառայության ինստիտուտի առանձնահատկություններից է անձի վարքագծին և բարոյական հատկանիշներին անհեմամատ մեծ նշանակություն տալը: Այն իր դրսևորումն է ստանում տարաբնույթ իրավական կարգավորումներում: Այս առանձնահատկությունը, հատկապես բարձր է գնահատվում ամերիկյան գիտնականների կողմից: Այսպես, Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Է.Վոգելը «Ճապոնիան առաջին տեղում է: Դասեր Ամերիկայի համար» մենագրությունում նկատել է, որ Ճապոնիայի պետական ծառայողներն օժտված են ոչ միայն բարձր արհեստավարժությամբ, այլև պատասխանատվության անհրաժեշտ զգացումով և բարոյական հուսալի հատկանիշներով[1]:

Միաժամանակ, հարկ է նկատել, որ պետական ծառայողները զրկված են բազմաթիվ աշխատանքային երաշխիքներից և արտոնություններից: Բացի այդ, պետական ծառայողների համար սահմանված է քաղաքական զսպվածության ընդգրկուն ինստիտուտ. վերջիններս կարող են լինել քաղաքական կուսակցությունների անդամ, սակայն չեն կարող դրանցում զբաղեցնել պաշտոններ և լինել խորհրդականներ: Վերջին շրջանում, հաշվի առնելով նրանց ծանր աշխատանքը, ընդունվել են օրենսդրական ակտեր, որոնք կոչված են ապահովելու համարժեք փոխհատուցում՝ առողջությանը պատճառված վնասի դիմաց:

Տեղական ինքնակառավարման իրավական հիմքը 1947թ. «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքն է, որն ամրագրում է ինքնավարության հետևյալ սկզբունքների համակարգը՝ տեղական ինքնավարություն, տեղական համայնքի ինքնավարություն և բնակչության ինքնավարություն: Տեղական ինքնակառավարման մարմին-

[1] E.Yogel: Japan as Number One. Lessons for American. - Cambridge, Harward Univ., 1979, էջ 65, 70-71:

ների գործունեությունը համակարգելու, ինչպես նաև նրանց միջև անհրաժեշտ փոխհարաբերություններ ձևավորելու նկատառումով 1960թ. ստեղծվել է ինքնակառավարման հարցերով նախարարություն:

Ճապոնիայում գործում է տեղական ինքնակառավարման մարմինների երկաստիճան համակարգ՝ պրեֆեկտուրաներ և մունիցիպալիտետներ: Սրանք տեղական ինքնակառավարման ընդհանուր մարմիններ են, որոնց շրջանակներում կարող են ստեղծվել հատուկ տեղական ինքնակառավարման մարմիններ:

Գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողությունը հանդես է գալիս հետևյալ ձևերով՝ քաղաքական, ֆինանսական և իրավական: Քաղաքական վերահսկողուսթյուն իրականացնելու իրավասությունը վերապահված է խորհրդարանին: Ֆինանսական վերահսկողությունն իրականացնում է Վերահսկիչ պալատը: Իրավական հսկողությունն արդարադատության կանոններով իրականացնելու իրավասությունը վերապահված է վարչական դատարաններին. Սահմանադրությամբ արգելված է վարչական արդարադատության իրականացումը գործադիր իշխանության կողմից: Մինչև 1962թ. (այդ թվին ընդունվեց «Վարչական գործեր քննելու ընթացակարգի մասին» օրենքը) վարչական դատավարության ինքնուրույն օրենսդրական ակտ չի եղել, իսկ այդ ինստիտուտին առնչվող դրույթներն իրենց ամրագրումն են ստացել քաղաքացիական դատավարությունում:

Չինաստան[1]: Չինաստանի ոչ միայն վարչական, այլև ողջ իրավական համակարգը՝ վերջին շրջանում կատարված բարեփոխումներով հանդերձ, կարծում ենք, համակողմանի ուսումնասիրության կարիք ունի: Սոցիալ-տնտասական աննախադեպ զարգացումներին այս երկրում նպաստել են նաև կիրառման մեջ դրված իրավական համարժեք գաղափարները: Դեռևս Խորհրդային միության տարիներին Չինաստանի Սահմանադրությունում տեղ են գտել այնպիսի արմատական ու խորը գաղափարական նորամուծություններ, որոնք անխուսափելիորեն հանգեցնելու էին համարժեք ձեռքբերումների նաև սո-

[1] Չինաստանի վարչական իրավունքն առավել հանգամանալից հետազոտված է՝ «Гудошныкош Л.М. Формирование в КНР системы государственной службы // Проблемы Дальнего Востока. 1995. № 4.» աշխատությունում:

ցիալ-տնտեսական կյանքում:

Ինչևէ, իրավական բարեփոխումները դեռևս ընթացքի մեջ են, առայժմ չեն ձևավորվել բավարար չափով գերիշխող տեսակետներ բազմաթիվ իրավական հիմնախնդիրների առնչությամբ: Նկատենք, որ վարչական իրավունքի բնորոշման հարցում ևս բացակայում է միասնական մոտեցում: Այն համարվում է համեմատաբար երիտասարդ իրավունքի ինքնուրույն ճյուղ (որպես այդպիսին, այն դասավանդվում է բուհերում 1983 թվականից): Թերևս, գեիշխող է այն տեսակետը, ըստ որի վարչական իրավունքը կարգավորում է պետական կառավարման հարաբերությունները: Որոշակի տարածում ունի նաև այն տեսակետը, ըստ որի վարչական իրավունքը միաժամանակ կարգավորում է գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողությանն առնչվող հարաբերությունները:

Վարչական իրավունքի հիմնական աղբյուրներն են 1982թ. Սահմանադրությունը և օրգանական օրենքները: Իրավական մեծ ուժով են օժտված նաև կառավարության և կոմկուսի ղեկավար մարմնի ու հասարակական կազմակերպությունների ղեկավար մարմինների կողմից համատեղ ընդունված որոշումները: Սահմանադրությունը ամրագրում է գործադիր իշխանության ձևավորման ու գործունեության կարգը, պետական մարմինների միջև փոխհարաբերության սկզբունքները և այլն: Օրգանական օրենքներից կարելի է առանձնացնել, հատկապես, 1982թ. «Պետական խորհրդի կազմակերպման մասին» օրենքը և 1995թ. «Ժողովրդական ներկայացուցչությունների տեղական ժողովների և տեղական ժողովրդավարական կառավարությունների մասին» օրենքը:

Վարչահիրավական նորմեր են բովանդակում Ժողովրդական ներկայացուցիչների համաչինական ժողովի և դրա Մշտական կոմիտեի կողմից ընդունված օրենքները: Դրանք դրված են ենթաօրենսդրական ակտերի հիմքում: Մասնավորապես, այդ օրենքներին համապատասխան վարչահիրավական նորմեր պարունակող իրավական ակտեր են (հրամաններ, հրահանգներ, կարգադրություններ և այլն) ընդունում կառավարությունը, նախարարները և գործադիր իշխանության այլ կենտրոնական մարմինները: Նորմատիվ իրավական ակտեր են ընդունում նաև ժողովրդական ներկայացուցիչների տեղական ժողովները:

Կառավարման մարմինների հենքն են կազմում խորհրդային իրավական համակարգին բնորոշ ներկայացուցչական մարմինները՝ ժողովներն ու դրանց գործադիր կոմիտեները: Այսպես, բարձրագույն ներկայացուցչական մարմինը՝ Ժողովրդական ներկայացուցիչների համաչինական ժողովը կազմավորում է Կենտրոնական ժողովրդավարական կառավարությունը՝ Պետական խորհուրդը, որը հանդիսանում է ընդհանուր իրավասության գործադիր իշխանության բարձրագույն մարմինը:

Երկրում անցյալ դարի 70-ականների վերջերին սկիզբ առած բարեփոխումների[1] արդյունքում աստիճանաբար սահմանափակվել են Պետական խորհրդի և, ընդհանրապես կենտրոնական կառավարման մարմինների լիազորությունները, ինչի հաշվին զգալիորեն ընդլայնվել են տեղական ներկայացուցչական մարմինների և դրանց կողմից կազմավորվող գործադիր մարմինների լիազորությունները: Այդ փուլում դեռևս բացակայում էին շուկայական ազատ հարաբերությունների գերակայությանը նվիրված միանշանակ գաղափարներ, սակայն արդեն 1992թ. հոկտեմբերին Կոմկուսի Կենտկոմն իր 13-րդ համագումարում հստակ արձանագրեց «սոցիալիստական շուկայական տնտեսության» անցնելու անհրաժեշտությունը: Բնականաբար, սա դասական իմաստով տնտեսության ազատականացում չէր նշանակում և չէր հանգեցնելու պետական միջամտության արմատական վերանայումների, սակայն բարեփոխումների արդյունքում, այնուամենայնիվ, տնտեսության կառավարման ոլորտում էապես նվազեցվեց պետական միջամտությունը: Պետական կառավարման բարեփոխումներն ուղեկցվեցին բազմաթիվ նախարարությունների վերացմամբ, այլ նախարարությունների լիազորությունների սահմանափակմամբ և այլն:

Պետական կառավարման բարեփոխումների կարևորագույն ձեռքբերումներից կարելի է համարել պետական ծառայության ինստիտուտի ձևավորումը և իրավական հիմքերի բարելավումը: Այս ինստիտուտի հիմնադրման համար էական նշանակություն ունեցավ Պե-

[1] Բարեփոխումների մեկնարկը փոխկապակցվում է 1978թ. դեկտեմբերին կայացած Կոմկուսի Կենտկոմի 11-րդ գումարման 3-րդ պլենումի կողմից ընդունված որոշման հետ:

տական խորհրդի մշտական կոմիտեի 1993թ. հոկտեմբերի 1-ի «Պետական ծառայողների մասին» ժամանակավոր կանոնադրությունը: Հիշյալ կանոնադրությամբ, որպես պետական ծառայության անցնելու հիմնական եղանակ ճանաչվեց մասնագիտական քննությունը: Միաժամանակ, սահմանվեցին հստակ կանոններ՝ կապված ծառայողներին ներկայացվող պահանջների, ատեստացիաների և նմանաբնույթ այլ ինստիտուտների հետ: Պետական ծառայողներ են համարվում վարչական մարմինների բոլոր աշխատակիցները, բացառությամբ օժանդակ կազմի:

Պետական ծառայության ինստիտուտը, այսպիսով, իր բովանդակությամբ բավականին մոտեցավ հանրային ծառայությանը ներկայացվող միջազգային չափանիշներին: Ընդ որում, այս ինստիտուտի ներդրումը ևս բխում է պետական կառավարման կենտրոնացվածության սկզբունքից որոշակիորեն նահանջելու գաղափարից, քանզի նախկինում պաշտոնյաների նշանակումը բացառապես իրականացվել է կենտրոնացված համակարգով:

Պետական ծառայության առանձնահատկություններից կարելի է համարել այն, որ ծառայողական առաջխաղացման գործընթացում էական նշանակություն է տրվում նաև համապատասխան ենթակա աշխատակիցների կարծիքին. նախապես ուսումնասիրվում է տվյալ թեկնածուին ղեկավար պաշտոնում նշանակելու առնչությամբ ենթակաների դիրքորոշումը: Առանձնահատկություններից է նաև այն, որ տարածքային կառավարման մարմիններում նախապատվությունը տրվում է ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց:

Տեղերում կառավարումն իրականացվում է ժողովրդական ներկայացուցիչների տեղական ժողովների կողմից ընտրվող կառավարությունների կողմից: Տվյալ դեպքում այդպիսի մարմիններ են ստեղծվում հետևյալ վարչատարածքային միավորումներում՝ մարզերում, կենտրոնական ենթակայության քաղաքներում և ինքնավար շրջաններում: Այս մարմիններին բնորոշ է երկակի ենթակայությունը. դրանք միաժամանակ հաշվետու են ինչպես ժողովրդական ներկայացուցիչների տեղական ժողովներին, այնպես էլ՝ վերադաս գործադիր իշխանության մարմնին: Տեղական կառավարման մարմինները հանդիսանում են ընդհանուր իրավասության և օժտված են որոշակի ինքնավարությամբ:

Տեղական կառավարման մարմինների համակարգը ևս հայտնվել է բարեփոխումների տեսադաշտում, սակայն այն զերծ է մնացել արմատական ու համակարգային բարելավումներից, քանի որ դեռևս նախապատվությունը չի տրվող տեղական ինքնակառավարման համակարգին:

Չինաստանում բացակայում են վարչական արդարադատության հատուկ մարմիններ: Վարչական մարմինների առանձին[1] ակտեր, գործողություններ և անգործություն կարող է բողոքարկվել ինչպես վերադաս վարչական մարմին, այնպես էլ՝ ընդհանուր իրավասության դատարան: Մինչև վարչական դատավարության օրենսգրքի ընդունումը (1989թ.), հիշյալ վարչական դատավարությանն առնչվող նորմերն իրենց տեղն են գտել քաղաքացիական դատավարության օրենսգրքում:

Եգիպտոս[2]: Եգիպտոսում և հյուսիսային Աֆրիկայի երկրներում վարչական իրավունքը հիմնականում կրում է Ֆրանսիայի վարչական իրավունքի ակնհայտ ազդեցությունը: Միաժամանակ, առկա են որոշ առանձնահատկություններ, որոնց կանդրադառնանք ստորև: Նախ, դեռևս եգիպտական իրավաբանները չունեն միասնական տեսակետ վարչական իրավունքի առարկայի առնչությամբ. մի մասը գտնում է, որ վարչական իրավունքը պետք է կարգավորի բացառապես գործադիր իշխանության մարմինների գործունեությունը, իսկ մյուս մասը՝ այդ մարմինների կառուցվածքն ու գործունեության սկզբունքները: Բոլոր դեպքերում գործող օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ գործնականում այս կամ այն չափով երկու տեսակետներն էլ գործում են:

Վարչական իրավունքը Եգիպտոսում համարվում է երիտասարդ իրավունքի ճյուղ, այն վերջնականապես որպես այդպիսին է ճանաչվել միայն 1975թ.: Մասնավորապես, ընդունված է վարչական իրավունքի ձևավորման սկիզբ համարել, այսպես կոչված, խառը դատարանների ստեղծումը, որոնց վերապահվեց քննելու պետական կառավարման մարմինների դեմ բերված օտարերկրացիների բողոքները:

---

[1] Օրինակ, դատական կարգով չեն կարող վիճարկվել պետական ծառայողներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին իրավական ակտերը. դրանք վիճարկվում են բացառապես վերադասության կարգով:

[2] Եգիպտոսի վարչական իրավունքն առավել հանգամանալից հետազոտված է՝ Сюкыяйнен Л.Р. Государственный строй. Судебная система // Арабская Республика Египет. Справочник. - М. 1990.» աշխատությունում:

Սակայն մինչ այդ, արդեն իսկ ընդունվել էին օրենսդրական ակտեր, որոնք մեծ դեր են ունեցել վարչական իրավունքի ձևավորման գործընթացում: Այսպես, վարչական իրավունքի կարևորագույն աղբյուր կարող է համարվել 1946թ. «Պետական խորհրդի մասին» թիվ 112 օրենքը, որը, ըստ էության, դրեց վարչական արդարադատության կազմավորման սկիզբը:

Եգիպտոսում վարչական իրավունքի աղբյուրներ են համարվում նորմատիվ իրավական ակտերը, վարչական իրավունքին վերաբերող սովորութային նորմերը և դատական նախադեպային ակտերը:

Գործադիր իշխանությունը բաղկացած է հանրապետության նախագահից, կառավարությունից, նախարարներից և տեղական ինքնակառավարման մարմիններից: Նախագահը միաժամանակ համարվում է պետության գլուխը: Հանրապետության նախագահը կառավարման որոշ ոլորտներում կառավարության հետ համատեղ անմիջականորեն մասնակցում է քաղաքականության մշակմանը: Նախագահն օժտված է գործադիր իշխանության պաշտոնյաներ նշանակելու լայն լիազորություններով:

Կառավարությունն իրականացնում է վարչարարություն և վերահսկողություն օրենքների կատարման նկատմամբ: Վերջինս պատասխանատու է քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանության համար: Կառավարությունը պատասխանատու է ինչպես խորհրդարանի, այնպես էլ՝ նախագահի առջև:

Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը իրականացվում է միաժամանակ կենտրոնացվածության և ապակենտրոնացվածության սկզբունքների համակցությամբ: Մասնավորապես, այս դեպքում միաժամանակ իրականացվում է ինչպես տարածքային կառավարում, այնպես էլ՝ տեղական ինքնակառավարում: Այսպես, նահանգապետերը, որոնք իրականացնում են տարածքային կառավարում, միաժամանակ օժտված են որոշակի վարչահիրավական լիազորություններով տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ:

Հանրային ծառայության իրավական կարգավորումը առնչվում է 1978 «Հանրային ծառայության մասին» թիվ 47 օրենքի հետ: Օրենքով հանրային ծառայողներին ներկայացվում են որոշակի պահանջներ. վերջիններս պետք է լինեն Եգիպտոսի կամ այնպիսի արաբական պետության քաղաքացիներ, որտեղ նույնպես թույլատրվում է ե-

գիպտացիներին զբաղեցնելու հանրային ծառայություն, չունենան ազատազրկմամբ դատվածություն, չլինեն վարկաբեկված, ունենան համապատասխան առողջական վիճակ, հանձնած լինեն սահմանված մասնագիտական քննությունները և այլն: Ընդհանրապես հանրային ծառայության անցնելու համար մասնագիտական քննություններն առանձնանում են իրենց բարդությամբ, որոնք հաջողությամբ հանձնելու համար անձինք, որպես կանոն, անցնում են խիստ մասնագիտական պատրաստվածություն:

Վարչական արդարադատությանն առնչվող հարաբերությունները կանոնակարգված են 1972թ. «Պետական խորհրդի մասին» թիվ 47 օրենքով: Պետական խորհուրդը օժտված է ոչ միայն վարչական արդարադատություն իրականացնելու, այլև խորհրդատվություն մատուցելու լիազորությամբ: Պետական խորհուրդը ներառում է ինչպես վարչական, այնպես էլ կարգապահական դատարաններ: Եթե վարչական դատարանները քննում են վարչական մարմինների անօրինական իրավական ակտերի, գործողությունների ու անգործության դեմ բերված բողոքները, ապա կարգապահական դատարանները՝ պաշտոնյաների կողմից ֆինանսական և վարչական խախտումներ թույլ տալու վերաբերյալ գործերը:

Պետական խորհրդի խորհրդատվական գործառույթների մեջ առանցքային դեր ունի կառավարության կողմից մշակված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ մասնագիտական եզրակացություններ տալ: Այս գործառույթը, թերևս, վկայում է այն մասին, որ պետական խորհուրդը տվյալ երկրում օժտված է նաև օրենքների սահմանադրականության հարցերով նախնական վերահսկողություն իրականացնելու լիազորությամբ:

Այսպիսով, արտասահմանյան երկրների վարչական իրավունքի համակարգված վերլուծությունը ցույց է տալիս, որ ներկայիս իրավական համակարգերում իրավունքի այս ճյուղին վերապահվում է մեծ դեր, այն համարվում է ոչ միայն պետական կառավարման, այլև ողջ պետական իշխանության արդյունավետ իրականացման, ինչպես նաև համալիր բարեփոխումների համատեսքտում առանցքային նշանակություն ունեցող իրավական գործոն ու երաշխիք:

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ
Ուսումնական ձեռնարկ

АДМИНИСТРАТИВНОЕ ПРАВО
РЕСПУБЛИКИ АРМЕНИИ
Учебное пособие

Համակարգչային ձևավորումը՝ Ա. Պետրոսյան

Չափը 60×84 1/16: Թուղթը օֆսեթ:
44 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 700:

Երևանի պետական համալսարանի հրատարակչություն
ՀՀ, Երևան - 0025, Ալեք Մանուկյան 1

ԱՍՈՂԻԿ

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:
Ք. Երևան, Սայաթ-Նովա 24, (գրասենյակ)
Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)
Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63
Էլ. փոստ՝ info@asoghik.am